



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



ԳԵՐԱ. ՇԱՄԲԵՐՅԱՆ

ԵՐԵՒ ՉՈՐՏՈՑ



ԵՐԵՎԱՆ
«ԱՐԵՎԻԿ»
1987

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Եղիշե Զարենցի կյանքի ու գործի մասին շատերն են գրում և շատ են գրում: Արդեն ստեղծվել է բավական հարուստ գրականություն: Դեռ վերջերս, ծննդյան 80-ամյակի առթիվ, համամիտութենական հասարակական-գրական ուժերի մասնակցությամբ բացվեց մեծ խոսակցություն բանաստեղծի անցած ուղու և պոեզիայի գրական-հասարակական հարստության շորջ: Երևանի պետական համալսարանի սովետահայ գրականության ամբիոնը պարբերաբար կազմակերպում է «Զարենցյան ընթերցումներ» և արդեն լույս է ընծայել ուսումնասիրությունների 4-րդ գիրքը: Նորերս լույս տեսավ Սուրեն Սղաբրյանի «Եղիշե Զարենց» մենագրությունը և ըստ արժանիվոյն նվաճեց հանրապետության պետական գրական մրցանակը: Կարելի է նշել որիշ մի շարք ուսումնասիրություններ, որոնք լուրջ ներդրում են չարենցագիտության ասպարեզում: Եվ սակայն այս ամենը սուկ միջքը են չարենցագիտության համար:

Զարենցի ստեղծագործությունը մի նոր դարաշրջան է հայ գեղարվեստական մտքի ասպարեզում, որն առանձնահատուկ տեղ է գրավում նաև սովետական գրականության մեջ: Հանճարեղ գրողի ստեղծագործությունը ունի շատ երակներ, որոնք ուրույն իմաստ և հնչեղություն են ստանում լուրաբանչուր նոր առնչության դեպքում: Մենք դեռ լիովին չենք թափանցել այդ օարմանակի հարուստ, բազմազան, առեղծվածային աշխարհը: Ըստ երևույթին դա գրականագիտական սերունդներից կապահանջ տեղագին աշխատանք և լարում: Եվ նույնիսկ այդ դեպքում, ինչպես միշտ, հանճարեղ գրողի ստեղծագործությունը ամեն նոր սերունդի համար կապահանջ ուրույն հնայք և թաքուն հարստություն: Տողերիս հեղինակը ևս շորջ բաս տարի զբաղվել է Ե. Զարենցի կյանքի և գործի հերքին շերտերի ուսումնասիրությամբ, ամեն անգամ զգացել է նյութի և

ԹԱՄՐԱՁՅԱՆ Հ. Ս.

2282 թ. Եղիշե Զարենց: Ուսումնասիրություն: [Պատաճեկության համար] Եր.: Արևիկ, 1987.— 480 էջ.

Հեղինակը ներկայացնում է Ե. Զարենցի կյանքի ու ստեղծագործությունների կարևոր դրվագները, վերլուծում դրանց հետ կապված առավել ուժեղ և ազդեցիկ երկերը, որոնք նոր սկիզբ են զարգել մայրենի գրականության զարգացման ճանապարհին և ազգեր հասարակական մտքի շարժման վրա:

4808010200 (41)

87 «Տ»
707 (01) 87

ԳՄԴ 88.8 Հ7

© «ԱՐԵՎԻԿ» ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ, 1987, ՎԵՐԱՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

դժարությունը, և հարստությունը, որի հաղթահարումը վեր է ոչ միայն մի անհատի, ալև մի ամբողջ սերունդի ուժերից: Եվ, այնուամենայինիվ, մեր սերունդը պարտավոր է մոտենալ ճշմարտությանը, իր ուժերի հնարավորություններով և գեղագիտական հայացքով բացել Զարենցի մեծ աշխարհը:

Այս գրքում ամփոփված են Զարենցին նվիրված ուսումնամիտություններ, որոնք, եթե բացառություն անենք մի քանի համար, տարիների ընթացքում մշակվել են, լրացվել և ամրագցածել: Մենք փորձել ենք զրքին տալ ուրուն կառուցվածք, ուսումնամիտությունների համար ընտրել ենք Զարենցի կյանքի ու ստեղծագործության նշանակալից: և շիկացած կետերը, կյանքի կարևոր դրվագներն ու անցքերը, սուսավել ուժեղ և ազդեցիկ երկերը, որոնք նոր սկիզբ են դարձել մայրենի գրականության զարգացման ճանապարհին և ազդել նաև հասարակական մտքի շարժման վրա: Թեև դրանք առանձին ուսումնամիտություններ են, այնուամենայինիվ ներքնակես կարուցված են միմյանց, ցույց են տալիս կյանքի և գրական մտածողության անցումներն ու զարգացումը՝ վաղ շրջանից մինչև վերջին սկազբությունները:

Ամեն դեպքում մենք ձգտել ենք Զարենցի գեղարվեստական զարգացման ընթացքը դիտել պատմական դարաշրջանի լուսի տակ, կյանքի լուսի տակ: Համենայն դեպք, դա եղել է մեր ցանկությունը և բուն նպատակը: Եվ եթե ինչ-որ չափով ընթերցողը այս գրքի մեջ գտնի հանճարեղ գրողի կյանքի ու գործի իրական պատկերը, և մենք կարողանանք փոքր-ինչ օգնել նրան՝ մոտենալու Զարենցի բարդ աշխարհին և հզոր տարերքին, մեզ բավարարված կօգտնիք: Եվ սակայն, հենց այս տողերը գրելիս հեղինակը զգում է իր հոլոցերի և հնարավորությունների միջև եղած հեռավորությունը, քանի որ նրա առջև բարձրանում է դարերից եկող և դարեր գնացրդ հնաճարի վաստակը:

20. 07. 80

Հ. Գ. Վերահրատարակության մեջ կատարված են ոճական փոքրիկ փոփոխություններ և ավելացված է «Զարենցի վերջին երազանքը» ենթագլուխը:

22. 01. 87

ԲԱՆԱՍԵՂԾԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Միշտ, երբ գալիս է գարունը, Ղարսն է հիշում իմ հոգին, իմ մանկությունն ու այգին հին,— իմ հայրենին ու նախրյանը... Լաց է լինում մեղմ հոգին իմ,— դարձն է տանում մորմորի: Ղարսն է հիշում հեռավոր, ա՛ն, երբ գալիս է գարունը:

Ե. Զարենց

Բնությունը շուայլ էր նրա նկատմամբ, բախտը... Ժլատությունը նրան օժտել էր բացում շնորհներով, բախտը չէր սահմանել երջանկություն: Նա այն արտասովոր բախտի ու մեծության բանաստեղծներից էր, որոնք, Ս. Եսենինի խոսքով ասած, աշխարհ են գալիս մահվան կնիքը ճակատին: Նման մարդիկ ծնվում և ստեղծում են այլոց երջանկության համար և նրանց ուղին լուսավորում անձնական կյանքի հրդեհով... Ճակատագիրը զեմ է ենում բնությանը, աններդաշնակությունը կրծատում է անհատի կյանքը և գրական ուղին: Բայց դարձյալ բնությունը ինչ-որ ձևով ժամանելու է կորուսարը... բախտի հարվածները ավելի խորունկ, գերիսիտ և բորբոքուն են զարձնում այդ կարծ ընթացքը:

Այսպես ներհակ, այսպես տենդագին է ընթացել Եղիշե Զարենցի կարծ ուղին:

Մարդիկ անմահ բանաստեղծների կյանքի բոլոր մանրամասների մեջ փնտրում են ինչ-որ արտասովոր բան, որով նրանք տարբերվում են մահկանացուներից: Դա բնական է, քանի որ բանաստեղծի ծնունդն ու ծիրքն ինքնին արտասովոր երևույթ է, որը՝ մշտապես շարժել է հետաքրքրություն, զարմանք, երբեմն էլ նախանձ: Եվ սակայն անմահներն էլ ծնվում ու մեծանում են բոլորի հետ, բոլորի պես, միայն ժամանակի ընթացքում է աննկատելի ծեավորվում նրանց արտասովոր աշխարհն ու խառնվածքը:

Եղիշե Զարենցը (Եղիշե Աբգարի Սողոմոնյան) ծնվել է հայկական ավանդական մի գերդաստանում: Ծնողները՝ Հայրը և մայրը, բնիկ պարսկահայեր էին, Մակու քաղաքից: 1883 թ. նրանք տեղափոխվել են էրզրում քաղաք: Այստեղ ապրել են մինչև 1895 թ., ապա՝ հայկական կոտորածների պատճառով, 1896 թ. տեղափոխվել են Կարս: Հենց այստեղ, մի տարի հետո, 1897 թ. ծնվել է ապագա բանաստեղծը: Բայց, բայց երեսութիւն, նրանք չեն կտրել իրենց կապերը Մակու քաղաքի հետ, քանի որ բանաստեղծը երբեք չի մոռացել այդ քաղաքը և մինչև անգամ երբեմն համարել է իր ծննդավայրը.

Ես ծնվել եմ Մակու քաղաքում,
Աբգի տակ ուսկեղեն, հասուն,
Շոգ շնչի տակ Օրմուզդի թիւ...

«Աբգար աղան,— պատմում է հարեանը,— հագնված էր պարսկական տարազ, ամրակազմ մարդ էր: Նրա կինը՝ Թելին, սպիտակագեմ, խելոք բնավորությամբ անձնավորություն էր»:

Ծնողների մասին շատ տպավորիշ է գրել ինքը՝ բանաստեղծը:

Ահա հայրս՝ հագին կապա...
Նրա զեմքը՝ արծաթե ափսե,
Վրան քիթը՝ կեռ մի զանակ:
Թափել է ժամանակն անսեր
Մազերին ճերմակ նիրվանա

Ահա մայրս՝ զնում է զրի,
Գլխին՝ թեհրանի լաշակ...
Սոլում է քամին նաիրի—
Ուզում եմ բարձր ճշակ:
... Իսկ երբ մայրս մազերին իր ձյուն
Դնում է ոսկեմուգ հինա—
Թվում է՝ մազերի միջով
Ես կարող եմ թեհրան զնալ...
... Մանկություն..., ոսկեթև՝ թռչուն...
Դեղնավուն ոսկի՝ հինայի...

Հեռավոր կարոտի ու սիրո այս աշխարհը բնում է, եւել է հավերժական, ինչպես հողը, երկինքը, երկիրը, հայրենիքը: Աբգար աղան՝ ուժեղ, ամուր, ականդապահ մի մարդ,

ստեղծել էր մի մեծ ընտանիք, որն ապրում էր նահապետական խստաշունչ օրենքներով:

Գերդաստանը բազմամարդ էր: Աբգար աղան ուներ երեք աղջիկ՝ Աննան, Մարիամը և Աշխենը ու չորս տղա՝ Սերոբը, Սողոմոնը, Եղիշեն և Գեղամը: Ծնուանիքը ապրում էր մի վարձու տան մեջ, որը գտնվում էր Ալեքսանդրովսկի փողոցի վրա, Սուլավիի (ջրի դուռ) թաղամասում, իսկ մեծ աղջիկ՝ Աննան, ամուսնացած էր Երևանում և ամառները երեխաների հետ հանգստանում էր Կարսում: Գերդաստանը վարում էր զուապ, շահավոր, պարզ կյանք՝ ենթարկվելով Աբգար աղայի ծանր հսկողությանը: Սողոմոնյանները նյութակես ապահոված էին, Աբգար աղան լոռիս Մելիքյան փողոցի վրա ուներ սեփական խանութ, ուր վաճառվում էին գորգեր, փուշիներ (շալեր), դանակներ: Դա թերևս Պետրոս Մասիսյանցի խանութին մոտեցող մի բան էր, ուր հոր հետ միասին առևտուր էր անում նաև մեծ տղան՝ Սերոբը: Խրստապահանց հայրը, սակայն, ուշադիր էր ընտանիքի առօրյա հոգսերի ու կարիքների նկատմամբ: Ամեն ինչ կարծես իր տեղն էր: Բայց Սողոմոնյաններն ունեին մշտապես ճնշող մի վիշտ: Աբգար աղայի նախապաշտրված մայրը արգելել էր ծաղիկ հիվանդության դեմ պատվաստել երեխաներին, որի պատճառով փոքրիկ Աշխենը կուրացել էր երկու աշքից:

Խիստ բարքեր, ավանդությի ուժ, զսպված սեր, շափ ու կշիռ, կրոնական աղետալի շերմեռանդություն,— ահա այս մինուրտում է հասակ առել բանաստեղծը: Թերևս այդ պատճառով, ողջ կյանքում, եթե բացառություն անենք մահից առաջ գրած մի քանի սկագիր բեկորների համար, Զարենցը մանկությունը հիշելիս առանձին ոգեսրություն չի ապրել: Նա հիշում էր մի մոխրագույն, ձանձրալի, փոշոտ քաղաք և խստաբարո, անգամ «բարբարոս» հորը:

Բայց, իհարկե, նա բնավ էլ չի եղել ծերացած մի մանուկ, ապրել է մանկության ու խենթ շահելության տեղագին օրեր, տարիներ:

Բանաստեղծություններից կարելի է որսալ նրա մանկական ոգեսրությունների, հրապուցրների և երազների պահերը, երբ փոքրիկ դեպքերը մեծ ծավալ ու պայծառ գույն են ստանում: Նահապետական ընտանիքի երեխային ի՞նչ

շողողուն ուրախություն է բերում մոր հազրած գեղեցիկ,
«իսկական իր շափի շապիկը».

Զեղանից ո՞վ արդյոք չի զգացել բերկրանք,
Երբ առաջին անգամ նոր զգեստ է հագել,
Երբ աշխարհը ամբողջ քեզ թվում է ներկած,
Ուկեզօծած ինչպես զարնանային կրոկես,
Ո՞ր երեխան արյոյք շարաթներով երկար
Չի երազել այդ օրը և սիրող չի թագել,
Երբ առաջին անգամ՝ իսկական իր շափին
Հազրել է նրան մայրը մի նոր շապիկ։

Նա երեխա էր, ինչպես բոլոր երեխաները: Դեռ փոքրուց
իր հասակակիցներից թերեւ տարբերվում էր միայն խիստ
անհանգիստ բնավորությամբ և «շարություններով»:

Ահա մի բեկոր նղիշեի մանկությունից. «Եղայրների
մեջ բնավորությամբ անհանգիստը և սրամիտը նղիշեն էր:
Նա ձեռքին միշտ բռնած ուներ մտրակ կամ փայտ, որով
խփում էր խաղընկերներին: Թաղի կանայք, դժոն նրանից,
միշտ անվանում էին լարա¹: Հայրը չէր հանդուրժում այդ
շարությունները և, առհասարակ, խիստ և պահանջկոտ էր
դեպի երեխաները, մասնավորապես դեպի նղիշեն, վերա-
բերմունք, որ հետո ավելի է ընդգծվում: Որքան հոգեպես
հասունանում էր նղիշեն, այնքան անբացատրելի հանելուկ
էր դառնում հոր համար: Անհասկանալի, մութ, առեղծվածա-
յին:

Նա դուրս եկավ տեսից: Կեսօր էր:
Թիշ հետո հայրը երեխ գալու էր ճաշիուս
Նա չէր սիրում հորը:
Իսկ հոր համար տղան զարձել էր հանելուկ:
Հայրը— Հղից զայրացած:— Նա երեկ,
Երբ ինքը կես զիշերին վերազարձավ տուն—
Գագաղեց ու համոզեց երկար:— Հետո պայման դրեց՝
Կամ տուն լզաւ այլես, կամ կրկին պատրաստվել քննության:

Այդպիսին էր տունը, ընտանիքը: Իսկ դրսի աշխար-
հը, քաղաքը, միշավա՞յրը: Իր երկերում Զարենցը ստեղծել

¹ «Հիշողություններ Ե. Զարենցի մասին, Ե. Կուզյան, ԳԱԹ, Զարեն-
ցի ֆոնդ, № 22, 2-րդ բաժին».

է նաև քաղաքի պատշաճերը՝ կյանքի շարժման ուրույն ուժմեա-
րով:

Քաղաքը, ուր տեղափոխվել էր Աբգար աղայի ընտանի-
քը, շատ հին էր, բայց հարուստ կյանք շուներ: Կարսր ուու-
սական կայսրության հարավային սահմանի բերդաքաղաք-
ներից մեկն էր, մոտ 35000 բնակչությամբ: Հայերի հետ
միասին ապրում էին նաև ուռւներ, հույներ և մոտ 15 հազար
կայսրությաններ: Դարասկզբին որոշ առաջնապացում էր
սկսվել մշակութային կյանքում, բացվել էին աղջիկների
գիմնազիա և ուսական դպրոց, հաճախ հյուրախաղերի էին
դալիս հայկական թատերախմբերը, (մեկ-մեկ էլ այցի էին
գալիս նշանավոր գրողներ): Բայց սա միայն սկիզբն էր,
քաղաքը նոր էր մտնում մեծ կյանքի հորձանուտը: Նրա
տարերի մեջ դեռևս ընդգծվում էր արեւելյան քաղաքների
կյանքի հատկանիշը՝ ծույզ ընթացքը: «Նաիրյան այդ հնամ-
յա քաղաքն ամեն ինչով նման էր նաիրյան բոլոր հին ու
նոր քաղաքներին— փոքր էր, ոչ բազմամարդ, խարիսով և
փոշոտ, ժամանակակից լեզվով այսպիսի քաղաքներին
ասում են զավառական հետամնաց քաղաք», — գրում էր
Զարենցը «Երկիր նաիրի» վեպում:

Արևելյան փոշոտ ու գեղին մի քաղաք, լուս ու անկյանք
փողոցներ, բերդ, Վարդանի կամուրջ, Առաքելոց եկեղեցի,
Երկաթուղի և հինգ հարկանի պաշտոնական մի շենք,—
ահա գավառական քաղաքի «Հրաշալիքները»... Տներն այս
քաղաքում ցածրիկ էին, միհարկանի, տափակ կտուրներով:
Այդ համակ տափակության մեջ, հին ու նոր «Հրաշալիք-
ներից» բացի, երեսում էին նաև մի քանի տներ՝ 20-րդ դարի
«փայլով»: «Այդ նոր տներից ու խանութներից մի քանիսը
նույնիսկ թիթեղե կարմիր կամ կանաչագույն կտուրներ
ունեին, մի հանգամանք, որ քսաներորդ դարից է դալիս, — և,
որպես այդպիսին, նոր է և միանգամայն ուշագրավ: Քաղաքի
դեղին տների ու խանութների միօրինակ ծովում թիթեղե այդ
կտուրները աշքի էին զարնում, ինչպես աշքի կղարներ կա-
նացի եկրոպական փետրազարդ զլիարկը արևելյան գյու-
ղում», — շարունակում է Զարենցը:

Հինավուրց Կարսր ապրում էր անգույն կյանքավի: Քաղա-
քը նման էր մանր կենցաղային հոգսերի մեջ թաղված խու-

մի ընտանիքի, որը շուտ քնում էր, շուտ էլ արթնանում՝ կրկին մտնելով հազարամյա հնություն ունեցող կենցաղի մեջ: Թույլ, շատ թույլ էր խփում հոգեոր կյանքի ոփմը, դեռ շկային նկատելի լարումներ, շարժում, անհանգստություն: Ամեն ինչ միօրինակ, տափակ, խուզված, ձանձրալի... Քաղաքի կենտրոնով ձգվում էր լոռիս Մելիքյան երկու կիլոմետրանոց փողոցը, որի երկու կողմերում շարված էին փոքրիկ խանութներ, ուր իրենց գործն էին ծավալում մանրավաճառները, գորգագործները, գինեվաճառներն ու բոլոր արհեստավորները: Այստեղ էր մշակվում քաղաքի «հասարակական կյանքը», ավելի շուտ՝ ծավալվում քաղաքնի, անգույն և անրովանդակ զրույցը: Լուս ու մութին այս փողոցվ էր անցնում սալերի, նախիրների ու գյուղացիների խուռներամ հոսանքը: Սույլ ընթացքով անցնում էր օրը: Մութն ընկնելուն պես՝ քաղաքն ամայանում էր. «Մութն էլ անդեմ ու անխորհուրդ, ծույլ, հորանջող մի պառավի նման, իշնում է ու նստում փողոցների վրա և տեղ-տեղ տարտամ, վախկոտի աշքերի պես թարթող կրակներն են միայն ենթադրել տալիս, որ այդտեղ դարերից ի վեր ապրում է ու զգարծանում նախրյան մի քաղաք»: Չարենցը երկար ժամանակ դառնությամբ է հիշել այդ «անկյանք կյանքը»: տաղտկալի շրջապատը, որն ավելի խաղաղ էր, «քան շարունակ քնող մարդն է լինում» («Մանկություն»): Դա ավելի շուտ հարաբերական իմաստով կյանք էր, որի ընթացքը նման էր թույլ շնչառության և բնավ լարված սբուտի տեր մարդու ծույլ երթին:

Այսպիսին էր դարասկզբի գավառական քաղաքը: Բայց անարդար բան կլինի, եթե մենք ոչ մի դրական կապ չտեսնենք հայկական տարերքի և ձևավորվող բանաստեղծի միջև: Բոլոր գեպերում, այս քաղաքը նաև ինչ-որ դրական, թաքուն չիցքեր էր տալիս բանաստեղծ որդուն:

Երբեմն անցնում էին մայթից մարդկե, Գանդաղ, անցնում էին ու մտնում տունեւ Ու կրկին ամայանում էր ժայթը: Շոգ: Փոշի: Խաղաղություն:— Կամ մի տնից երբեմն, մի պատուհանից Դուրս էր նայում մի պահ մի կանացի գլուխ: Կանչում էր դիմացի հարեանին— Ու կրկին փողոցը ննջում էր լոռու:

Այս տիսուր ու ձանձրալի աշխարհը նրան տվել է ինչ-որ հարազատ բան:

Թափել է արեն իրանի
Եմ հոգում Շիրազի զարդեր...
Բայց տիսուր նախրյան քամին
Եմ սրտում թախիծն է բարդել:

Բանաստեղծը այս մթնոլորտի հետ է կապում իր խառնը կամ ձևավորումը: Մանկությունից ու վաղ պատանեկությունից նրա հոգում բույն է դրել մշտապես տանջող, հինավուրց նախրյան թախիծը, որը սկզբից ենթ եղել է նրա տրամադրությունների շաղախը, իսկ հետագայում, կյանքի շարժման ճանապարհին վերածելով, դարձել խորապես ողբերգական զգացում: Սա հենց դարերում խտացած ազգային խառնվածքի աննկատելի, բայց անխուսափելի ազգեցությունն է բանաստեղծական աշխարհի վրա, որը ժամանակի ընթացքում դառնում է ստեղծագործական հոգեբանության բաղադրիչներից մեկը.

Եվ հենց նա էր, թախիծը հեամյա,
Որ ծածկած արև ու երան,
Մի ծերուկ ուսուցչի նման,
Ինձ մի օր գարժարան տարավ...
Նա շնչով կարծես մի հրե—
Ուղեղիս կտավի վրա
Փորփրեց հնամյա գրեր...

Այս էր Չարենցի ստացած ժառանգությունը՝ հայրենի դարավոր թախիծը և հնամյա գրերը: Թախիծը նրան տվել է նրբություն և երազներ, գրերը նրա առջև բացել են ուրիշ երկինքներ: Գավառական քաղաքում, երազկոտ ու ծույլ տարերքի մեջ, մանուկ հոգին սնվել է միայն այս աղբյուրներից, չստանալով ուրիշ լիցքեր՝ մեծ կյանք մտնելու համար:

Իմ խաղաղ, կապույտ մանկություն,
Դու նման ես լճակն ընկած
Արծաթի լուսինի դիմին:
Դու կայիր ու շկաս հրմա գու,
Արեկ դեմ զու թույլ հանգար—
Բայց արդյոք կայի՞ր գու իսկի...

Զարենցը խոր է զղացել ապրած աշխարհի և հարազատ շրջանի տեսական նշանակությունը իր խառնվածքի և ստեղծադրժական հոգեբանության ձեավորման մեջ ինչ-որ բան ստանալով հարազատ տարերքից, ավելի ճիշտ՝ բնականորեն ժառանգելով թախիծն ու հոգեոր որոշ հատկանիշներ, բանաստեղծը ժամանակի ընթացքում թաքուն, անտեսանելի հակասության մեջ է մտնում միջավայրի հետ, քանի որ ձեղչածք կար այդ շրջանի և իր հոգեոր մղումների միջև, քանի որ խառնվածքի ներքին թելադրանքով պատանին տարեայնորեն արդեն ստեղծում էր մի ուրույն հակադիր աշխարհ, մտնում էր մի զարմանալի շքեղ, հարուստ եզերք։ Սկսվում է հոգեոր վերելքի և դիմադրության շրջանը։ Նա անցնում է մի ուրիշ «հրաշք աշխարհ» միջով։

ՀՊԳԵՎՈՐ ԼԻՑՔԵՐԸ, ԴՊՐՈՑՔ ԵՎ ԳՐԹԵՐԸ

Օ՛, գրեք աշխարհը տիեզերք է անեզր...
Ե. Զարենց

Սկզբնական կրթությունը նա ստացել է հայկական մասնավոր դպրոցներում։ Մի քանի տարի հայերեն սովորելուց հետո, 1907 թ. նա տեղափոխվել է ոռուսական ռեալական դպրոցը, որը բացվել էր մի տարի առաջ, հոկտեմբեր ամսին։ Նրա մուտքը ռեալական դպրոց արտահայտիլ է պատկերել դասընկերը։ 1907 թվականի աշնան մի օր ռեալական դպրոցի երկրորդ դասարան է մտնում 10—11 տարեկան մի երեխա՝ վերակացովի ուղեկցությամբ։ «Նա ուներ պարզ հագուստ՝ լինելու ժաղաքի և ծովավոր գոտի։ Կարճահասակ էր, արծվաքիթ ու գանգրահեր, նոր աշակերտը եղիշե Սոլոմոնյանն էր, նա տարտամ քայլերով մոտեցավ, նստեց կողքիս ու, դառնալով ինձ, ոռուսերեն հարցրեց։

- Ուրեմն հայ ես։
- Իհարկե, բա ինչ էիր կարծում։
- Ինձ թվաց, թե ոռու ես, մազերդ շեկ են։
- Իսկական հայր ես եմ, մենք առաջ շեկ ենք եղել։¹

¹ «ՀՀՀՀՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե. Զարենցի մասին», Աշուա Փալանջյան, «Դպրոցական տարիներին», էջ 44։ Գ. Անանյանը կասկած է հայտնում այս տեղեկության նկատմամբ։ Դպրոցական արիթլում Զարենցը աշակերտ է

Զարենցը մտնում է մի նոր աշխարհ, ոեալական դպրոցը, որը իրոք, թե՛ աշակերտական բազմազգ կազմով, թե՛ հմուտ ուսուցիչներով շատ բան է տալիս երեխային։ Ուսուցումը լուրջ հիմքերի վրա էր դրված, առանձին ուշադրություն էր դարձվում նաև հայոց լեզվի և պատմության դասավանդմանը։

Եղիշեի առջև բացվում են գիտության և գեղեցկի դրոները, նա ընկնում է գրքերի կախարդական աշխարհ։

Նա այն գրողներից մեկն էր, որոնց համար գրքերը փոխարինել են «անկյանք կյանքին», եղել են հոգեոր ակունք, բացել են լայն հորիզոն և մեծ ճանապարհ դեպի աշխարհ։ Դորկին իր ստացած տպավորությունների և իմացական պաշարների շուրջ խոսելիս՝ նշել է երկու աղբյուր։ անմիջական կյանքը և գրքերը։ Նա մի առանձին ուժով ընդգծել է կենսական փաստերի և գրականության ամբողջական միաձուլման երևույթը իր մեջ։ «Կիրքը կյանքի նույնպիսի երեւույթ է, ինչպես մարդը, գրքը նույնպես կենդանի, խոսուն փաստ է»¹։ Բայց կարելի է ասել՝ սկզբնապես Զարենցի համար գիրքը ավելի մեծ երևույթ էր, թերևս միակ հոգեոր հենարանը և հոգեոր լիցքը, քանի որ մինչև 1914—15 թթ. կարսեցի պատանուն գավառական քաղաքի կյանքը շեր բերում շոշափելի տպավորություններ։ Զարենցի համար գիրքը և՛ կենդանի խոսուն փաստ էր, և՛ կենդանի մարդ-

գրանցված 1908 թ., ընդ որում՝ ուրիշ, գուգահեռ զատարանում։ Այստեղ, ըստ երեւույթին, կա ինչ-որ թյուրիմացություն։ Թերես առաջին տարին շեն հայվել, քանի որ Զարենցը ուշ է հաճախել դպրոց։ Մի քան, սակայն, անկասկած է Աշուա Փալանջյանը սովորել է Զարենցի հետ նույն դասարանում, նույն նստարանին։ Մինչև հուշերը գրելն էլ այդ փաստը լայնորեն հայտնի էր գրական շրջանում։ Այդ մասին են խոսում նաև դպրոցական մյուս ընկերների հուշերն ու զրույները։ Բացի այդ, Աշուա Փալանջյանը (Աշֆաւը) գրել է թերես ամենահավաստի հուշերը, այնպիսի բնական մանրամասներով, որոնք չեն կարող հորինվել։ Հանգուցյալ գրողը սրբազն սիրով էր տոգորված դեպի իր հանձարեղ զասընկերը։ Այս գեպքում պետք է հավատալ մարդուն, ոչ թե դպրոցական գրագրությանը, որն, ի գեպ, համախ է խճում փաստը, թերես նաև Զարենցի անհանդիսական պատմապով։

¹ М. Горький, Собрание сочинений, т. 24, стр. 488. «О том как я учился писать».

կանց շրջան, և աշխարհ։ Այդ արտասովոր սերը նրա մեջ խոր արմատ է ձգել ու շարունակվել նաև հետո, երբ նա արդեն հազար նյարդով կապված էր մեծ կյանքին և իր ուսերի վրա տանում էր աշխարհի բեռք։

Օ՛, գրքերի աշխարհը—տիեզերք է անեզր—
Արևների նման բազմապիսի,
Եվ աստղերի նման, և շողերի—
Ես սիրում եմ գրքերը, որ աշխարհի մասին
Բարքառում են անձուկ ու մտերիմ։
Տարփանքով, ինչպես պատանին,
Որ սիրում է իր լույս ընկերութուն փարզել—
Ես սիրում եմ գրքերը թե նոր, թե հին,
Թե արքեստով գրպած, թե անարվեստ։

Զարենցի համար բազմապիսի գրքերը եղան մեծ աշխարհ տանող արահետ և գեղեցկության թաքուն աշխարհի վրա բացվող պատուհան։ Կյանքի կարոտն է նրան մղում գրքերի աշխարհը, ուր ծաղկում են նրա երազները։ «Հոմօ Սարιեն» (բանական մարդ) շափածո նովելը մեզ օգնում է թափանցելու պատանի Զարենցի ներաշխարհի ձուլարանը։

Քաղաքային «բուլվարում» մի պատանի, աշխարհից վերացած, խորասուզված կարդում է Պշիբիշևսկու «Հոմօ Սարιեն» վեպը։ Կարդում է մի ուրիշ ձևով, գրքից փորձում է քամել ողջ կենսահյութը և որսալ հեռավոր տեսիլներ։ Դա սովորական ընթերցանություն չէ, գրքամոլի կլանում, գրքի հերոսների ապրումին մասնակցում է նաև ընթերցողը, յուրովի վերածելով և սեփականացնելով ուրիշի ստեղծած աշխարհը, իր հոգեկան կնիքը դնելով գրքի ամեն էջին։ Սա տաղանդի յուրօրինակ ինքնահաստատման և ինքնահարստացման մի բարդ ընթացք էր, որն անկասկած ուներ և յուրացման բնույթ, և ստեղծագործական երանգ։ Գավառական միջավայրում փոքրացած մարդուն, բնականարար, գերում է ուժեղ մարդու, զորեղ, բանական անհատի իգեալը, այս գրքում նա գտնում էր ինչ-որ բան, որ նրան հեռացնում էր կյանքի տաղտուկից, նույնիսկ մղում ներքին հակդրության։

Եվ որոշեց, որ ինքը գառնալու է կյանքում...
Մի հանճարեղ պոետ—

Գրքերից թե առած պատանին ձգտում է կտրել իր կապերը միջավայրից, բայց ոգու թոփշքն անհնարին էր, քանի որ միջավայրը նրան կրկին քաշում է իր ռմարմանդ ճահճը»։ Այսպիսի մենության և գրքային էքստազի մեջ էր պատանի Զարենցը... Թվում էր՝ հավերժական է լինելու այս ընթացքը, երազի ու իրականության այս լուր բախումը։

Բայց շատ արագ վրա է հասնում անխուսափելին, սկրսվում է վերին շնորհով օժտված պատանու և միջավայրի բաժանումը։ Արտաքուստ ամեն ինչով նա նման էր շրջապատի երեխաներին։ Նույն եռուցեռը, անհանգստությունը, կրքոտ խաղերը, նույն շարաձճիռությունները և սովորական գպրոցական առօրյան, նույն հավերժական բախումը ուսուցիչների ու երեխաների միջև։ Միայն թե այս բոլորը Զարենցի նկարագրի մեջ դրսմորվում էր ավելի ցայտում ու կրքու: Ժամանակակիցները հիշում են դեպքեր նրա դպրոցական շարություններից։ Մի անգամ, օրինակ, նա գինու շիշ էր դրել կրոնի սւասցիչ Փորսուղյանի գրպանում և խիստ պատիժ ստացել։ Գրում էր շափածո էպիգրամներ՝ շսիրած սւասցիչների մասին։ Բնավորությամբ անհանգիստ էր և հանդուզն։ Փոքրուց նա շատ աշխույժ էր, առողջ ու կենսասեր, հակում ուներ գեղի սուր իրավիճակները և անհանգիստ տարերքը։ Նա շատ էր սիրում լողալ. լավ լողում էր գետում, երբեմն էլ իր նավակով հարձակվում էր հասակակից գիմնազիստների նավակների վրա։ Զմունը միշտ լինում էր այզու սառցաղաշտում, հրաշալի սահում էր շմուշկներով, իր հետ պտտելով նաև ծերունիներին ու երեխաներին, թեև նրանք վախենում էին հանդուզն պատանու խենթություններից։ Նա սիրում էր ձմռանը նստել ձիասահնակ։ Ընկերների հետ ցրտին սահնակ էր քշում և տուն էր գալիս ուշ երեկոյան։ Բայց ամենից ավելի նրան գրավում էր հեծելավագքը, սիրում էր ձին թոցնել Կաղզվան տանող խճուղիով, ապրում էր թփիքի կախարդիլ տարերքով։ «Հիշում եմ,— պատմում է ընկերը, — ինչպես մի տոն օր Խոսիք Ապրեսյանի հետ միասին գնացինք վարձու ձիեր վերցնելու, կառապանը նեղացած էր, բարկացած ասաց՝ ձի շկա—նայելով գոմը՝ ասացի. «Քեռի, այստեղ երկու ձի կա...»։ Գիտեմ, օր կա, —

խուզա կտրեց նա, — նորեն եկիք, բեզրած են, Մեկել երկու ձին տարել են, վախտն անցել է, հրլ չեն բերել, — նորից բարկացավ, — ականջներդ կտեսնեք, էլ ձի շեք տեսնի: Հըլ մի և՛իք, փիլիսիք, — սպառնաց դեռ չվերադարձած տղաներին և վո՞վ են, քեռի»: «Ձեր ուսանու տղերքը, վո՞վ, մեկը էն Արդար աղի սկ պլաստան, սատանի նման պղդի մանչն էր, մեկը ուսում (հույն) Խարիտովը: Վերջապես երևաց ուսումները լայնացած, քրտնած ու ցեխուոված ձին, որի սանձը բըռնած գալիս էր Եղիշեն, հտկից՝ Խարիտովը»¹:

Կենսախինդ, կրօտ, ընկերական շրջանի հետ այնքան կապված պատանին այս բնական, մանկական փոքր-ինչ սըրված կենսական լիցքերի հետ միասին, ուներ նաև իր թաքուն աշխարհը: Նա և՛ միշավայրի հետ էր, և՛ ինքն իր հետո Եվ երկու դեպքում էլ երեսում է իրեն ցայտուն բնավորություն՝ անվերտապահ նվիրումով: Պատանի բանաստեղծը ապրում էր կենտրոնացման ու մտասեեռումի տևական պահերւ Ներքնապես առանձնանում էր, ապրում տեսիլների ու մտորումների մեջ, ուրիշ աշքով նայում աշխարհին, անգամ քաղաքի սովորական տեսարաններին, փողոցներին, «վազող կամուրջին», գիշերային պատկերներին, քաղաքային այգուն: Դա բնության շնորհն էր, տաղանդը, որն այնքան անհասկանալի էր հասակակիցներին և ժամանակակիցներին, այնքան զարմանալի...

Քաղաքային այգին, «բուլվարը» դառնում է Զարենցի մենության ու երազների մշտական վայրը: Այդ գեղեցիկ անկյունը քաղաքացիներն անվանում էին նաև կղզի, որովհետև նրա արևելյան ափը ողղովում էր Կարուց գետի ջրով, իսկ արևմտյան կողմից լցվում էր նույն գետի ջրով: Այգում կային բազմատեսակ ծառեր ու բազմերանգ ծաղկներ, բուրավետ ու փարթամ մի վարդաստան: Ամառային ամիսներին այգին դառնում էր երիտասարդների սիրած վայրը: Երկար ու բարեկարգ ծառուղիները, որոնք զուգահեռաբար ձգվում էին հյուսիսից հարավ, լցվում էին մարդկանցով. դա

¹ Արտաշես Ալիքսանդրյան, «Խմ դասընկեր Եղիշեն», «Երևակի համարանա թերթ, 1972 թ., 25 մարտի:

մի տեսակ հավաքատեղի էր, երիտասարդության մտավոր կյանքի և ասովիսների կենտրոնը²:

Սյս այգում պատանի Զարենցը ընթերցում, ավելի ճիշտ նվաճում էր գրերը, նրանց խառնելով և իր երևակայությունը, և որոնող միտքը. այստեղ նաև իր հետ էր և մի մեծ, հեռու աշխարհի հետ: Նա մինչև անգամ ուներ իր անկյունը, իր սիրած ծառը, իր «մենաստանը», ուր գնում էր ընթերցելու ամեն օր՝ վաղ առավոտից սկսած: Ահա ինչ է պատմում Զարենցի դասընկերը. «Այդ հանդիպման ժամանակ մեզ հետ էր նաև այգեպան Հակոբը (Կաղզվանցի), որն իր երկու բանվորների հետ հսկում և նախանձելի բարեկարգ վիճակում էր պահում քաղաքային այդ մեծ այգին: Մենք հարգում էինք Հակոբին, որովհետև նա բարեկիրթ և ընկերասեր մեր ավագ ընկերներից էր: Եվ ահա, Եղիշեի հետ հենց այդ օրվա հանդիպումից հետո, երբ մենք նստեցինք նավակ՝ գետի վրա զբոսնելու նպատակով, Հակոբը բացեց Եղիշեի հետ կապված մի գաղտնիք ևս: «Դու ճանալո՞ւմ ես նրան», — հարցրեց Հակոբը: «Ինչպես չէ, չէ՞ որ մենք դասընկերներ ենք, միասին ենք սովորում, մի դպրոցում», — պատասխանեցի ևս: «Բայց դու ևս գիտե՞ս, որ նա մեր այգում ունի իր սիրած ծառը»:

Երբ մենք դուրս եկանք մակույյից, ես խնդրեցի ցույց տալ ինձ այդ ծառը: Այգու ծառուղու ձախ կողմում (դեպի արևմուտք) կային քառանկյուն ներսախորշեր, մեջտեղում՝ հաստաբուն ծառով: Այդ ներսախորշից մեկն էլ Եղիշեի սիրած «Մենաստանն» էր, ուր նա ամեն առավոտ վաղ ծամերին գալիս էր այգի և սիրած ծառի տակ կարդում էր (խոսքը լեռնիդ Անդրեսի գրվածքների մասին էր, որ «Նեա» հանդեսը որպես հավելված առարում էր իր բաժանորդներին):² Այս ծառը իր շափածո նովելի մեջ հիշում է նաև բանաստեղծը:

Նա կարդում էր երկար, նստած ալեյում,
Այն նիբ կազմու ներքեզ, որի բնին

¹ Հ. Հակոբյան, Խմ հուշերը Եղիշե Զարենցի մասին, (Ճեռագիր), ԳԱԹ, Զարենցի ֆոնդ:

² Խույն տեղում:

Անցյալ տարի ամառը մի տաքզուխ
Դանակով փորագրել էր՝ «Արքենիկ»:

Զարենցը այստեղ էր սկսում իր օրը և տում էր դառնում միայն ուշ երեկոյան՝ լցված նոր տպավորություններով և մտումներով։ Հենց այս այգում էլ ծնվում է բանաստեղծը, այսինքն՝ ծավալվում են երազն ու երևակայությունը, յուրովի ձևավորվում է հոգու պատմությունը, տագնապներից ու երազներից ծայր է առնում ջահելության մեղեդին։

Ես նստում էի անմարդ բուլվարում՝
Աշնան արևի համբուլինի գերին
Խնում էր հոգիս երկնքի հեռուն,
Հսում էր հոգիս երգը զանգերին
Ու աեթա՞րթ, անթա՞րթ նայում էի ես
Անսահման, անծիր երկնքի հեռուն
Ու թաց աշքերով տեսնում էի քազ—
Հավիտենության կապույտ դաշտերում:
Եվ երբ երեկոն մեռնում էր բոցում
Ու իշխում էր պարզ, աստղագարդ զիշեր—
Կապույտ շրերի հեռու զնդոցամ
Ես լսում էի քո շշուկը դեռ...

Անմարդ պուրակ, աշնան արև, միայնակ պատանի երազների հետ, հավիտենական գաղտնիքների հետ, տագնապներով, սիրով, կարուտով, թաց աշքերով։ Ահա դարձյալ մի ուրիշ տեղ՝ նույն հարազատ անկյունը՝ պուրակը, աշնան անհրապույր ցրտի զգացողությամբ։

Անցնում էիր գու անմարդ պուրակում
Եվ ընկնում էին քո ոտքերի տակ
Տերենոր, թերթեր՝ ղեղին, ոսկեգույն,
Մոռացված միզում, որպես հիշատակ
Լուր ընկնում էին տերեները վար,
Ու ծածկում էին ճանապարհը, քեզ
Ու ցորտ պուրակում, մենակ, հոգեվար
Մեռնում էր հոգին, ու լուս էի ես...

Նրա հոգում որպես սրբազն հուշ մնում է Կարսի այգու պատկերը, ուր անցել էին նրա կյանքի լավագույն պահերը, ուր վայելել էր առաջին համբուլը, ուր ծաղկել էին նրա երազները, ծնվել առաջին բանաստեղծություններն ու տիրազին «Երեք երգը»։ Այս գիրքը նվիրված էր Աստղիկ Ղոն-

դաղյանին։ Գուցե նա այն աղջիկն էր, որի մասին «ՀոմօՍարιենս»-ում գրել էր՝ «Զվերցրեց անգամ նրա վարդը...»։ Այստեղ 1914 թ. նա մտերմանում է Կարինե Քոթանչյանի հետ։

Զարենցն օրն անց էր կացնում այգում, կարդում էր կամ լուռ մտորում, երբեմն էլ պառկում նստարանի վրա, անտարբեր դեպի շրջապատը, երբեմն էլ խեթ ու շարացած նայում գիմնազիստներին, առավելապես գիմնազիստունեներին։ Թերեւ դրա մեջ կար նաև հակադրության միտումնավոր ձգտում, հետեւթյուն «բանական մարդու» սկզբունքին։ Արտաքինով էլ նա բավական տարբերվում էր հասակակիցներից։ «Երբեմն հագնում էր կիսավերարկու, կրում էր ցիլինդր և ձեռնափայտ, այգում ցիլինդրը դնում էր ձեռնափայտի ծայրին, նստում կամ պառկում նստարանին»։ Պատանի բանաստեղծն արդեն զանազանվում էր, երեւում հեռվից, գրավում մարդկանց ուշագրությունը։ Նա դառնում էր անհատականություն։ Մի օր, ընկերներից լսելով, որ այդ տարօրինակ արտաքինի ու վարվելածեկի տեր պատանին բանաստեղծ է (նա արդեն տպագրել էր իր առաջին գիրքը, 6 էջանոց «Երեք երգը...»), Կարինեն քաղաքային այգում ծանոթանում է նրա հետ։ «Քիվ նստեցի կողքը և բարեկցի։ Սանոթանանք, ասացի։ Կասկածնվ խեթ նայեց, ոտքի կանգնեց, գլխարկը հանելով՝ բարեկց։ Էությամբ շատ անմիջական ու բարի պատանին մոռանում է «թշնամանքը» և մտերմանում «օտարների», Կարինեի ու մի քանի ուրիշ խելահաս երիտասարդների հետ, որոնք ապրում էին հասարակական կյանքով, գրականությամբ և արվեստով։ Պատանի օրերի այս տպավորությունների արձագանքները կարելի է որսալ բանաստեղծություններից։

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ բարով, Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով եվ Կարինե Քոթանչյանին անգամ շատած մնաս բարով։ Անց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով։

Նա թույիլ է գետեկերքի տնից դեպի Կարսի այգին գնացող պատանի բանաստեղծի, եթե կարելի է ասել, ինքնանը կարը, ֆիզիկական հատկանիշների, զգեստների, հայացքի,

քաւզի շատ թանկագին նկարագրությունը. քայլում է տասնվեցամյա գանգրահեր պատանին՝ ուշական դպրոցի անհնագանդ աշակերտը, «ձիու պես անտարբեր» գեղի շրջապատը, ինքն իր հետ, վերացած, նախրյան բաղաքի փոշոտ փողոցներով դանդաղ գնում է գեղի քաղաքային այգի.

Վափառ էր: Միջահասակ Ռևերը նեղի
Դանգուր մազեր ուներ, զունատ ձակատ:
Հազին սև շապիկ սատինի՝
Խունացած, առնվազը երեք ամառ հագած:
Դեղին երկաներով դպրոցական զինարկը
Դանգուր, խիտ մազերին նստել էր ձիու:

Այս պատանին արդեն ուրիշ հայացքով էր նայում շըրջապատին, անսովոր հայացքով: Նրա աշբին ընդգծվում են որոշ կետեր, որոնց վրա բեկովում է միտրը: Քաղաքային առօրյայի մեջ նա սկսում է որսալ բանաստեղծականը և ստեղծել իր «հրաշք աշխարհը».

Երգում է քարաքին իր երկն առօրյա,
Իսկ ես մտածեու, տրտում ու լոին—
Կանգնել եմ ահա կամուրջի վրա
Եվ նայում եմ հորդ, հեռացող շրին
Նայում եմ տարված, մոռացված, անթարթ:
Վազում են, վազում շրերը անվերջ
Փրփուրի միջից ահա մի նայադ
Ինձ ձեռովով արավ և իր մոտ կանչեց:
Որպես մանկական կապույտ երազում—
Խառնվեց ահա ճերմակ փրփուրին.
Եվ թզում է, թե կամուրջն է վազում,
Որ հասնի անդարձ հեռացող շրին...

Նման խոռներ են արթնացնում անգամ Կարսի անհրապույր փողոցները, պատանին ամենուր որոնում է թաքուն իմաստ, ինչ-որ առեղծվածային բան, որսում կամ ստեղծում է գեղեցիկը՝ հնագույն առօրյայի մթնոլորտում:

Փողոցների մեջ կա մի անանուն,
Անմըրնեմի կարոտի ճախրում:
Լսում ես, զգում, բայց չես հասկանում
Եվ չես ըմբռնում կարոտը ճախրուն,
Կառքերի վազում, դեմքերում օտար,
Անհասկանալի հայացքում կանանց—

Թվում է հանկարծ, թե ահա գտար
Հավերժականի ուրվականն անանց:

Այսպես ահա, առաջին ոտանավորների մեջ տեսանելի ԵՇ վաղ շրջանի կյանքի, Կարսի միջավայրի որոշ գծեր: Պատանեկան տպավորությունները ստանում են մինչև անգամ առարկայական շրջափելիություն: Նրանց մեջ ընդգծվում է նաև պատանի հոգու ձգտումը գեղի առեղծվածը, հրաշքը, տիեզերքը, գեղի իրերի խորքը և ուրիշ գրավիլ եղերքներ:

Գրքերն ու ներքին մաքառումը նրան հանում են ստեղծագործական մտքի արահետ, տեղի է ունենում անդուլ, անդադար լարում, տանջալի տպավորությունների ու կասկածների մեջ թրծվում է միտքը, անորոշ ցավերի մեջ՝ նրբանում հոգին: Այսպես, ահա, փոքրիկ, սև, նյարդային պատանին՝ Աբգար աղայի որդին, բարձրանում է իր շրջանի ըմբռնումներից, դառնալով առեղծված անգամ յուրայինների համար.

Իսկ հոր համար տղան դարձել էր հանելուկ...

Պատանին կարդում էր անվերջ ու անհագ, զարմացնելով բոլորին: Կարդում էր անկարգ, բայց լուրջ: «Լավ տիրապետելով ոռւսաց լեզվին, մենք ագահաբար կլանում էինք գիրք գրքի հետևից, կարդում անսիստեմ, բայց համար հետևողականությամբ: Եղիշեն շատ էր սիրում ընթերցանություն: Հայրը ինձ մի օր զանգատվեց, թե՝ «Էս մեր փիլիսոփան ճաշի ժամանակ էլ մի ձեռքով գիրք է բռնում, մյուսով թանապուրի գտալը...»— հիշում է դպրոցական ընկերը: Հայրը դժվար էր հասկանում որդուն և խեթ նայում նրա գրական մղումներին: Այնինչ Զարենցն արդեն ամբողջովին գրքերի մեջ էր, մի տեսակ բաժանված ընտանեկան մթնոլորտից և հոգսերից:

Հենց այս շրջանից սկիզբ է առնում նրա արտասովոր պաշտամոնքը գեղի գրքերը: Նա արդին ուներ հարուստ գրադարան, ձեռքն ընկած փողը տալիս էր գրքերի, հավաքելով գեղարվեստական, գիտական և փիլիսոփայական գրականություն: Շատ խոսուն է հոր և որդու վեճը, որը երգիծական երանգով պատմում է ականատեսը. «Աբգար աղան փող էր տվել, որ Եղիշեն կոշիկ առնի, իսկ որդին առանց

երկար ու բարակ մտածելու, այդ գումարով գրքեր առած եկավ տուն:

— Տո դու խելքդ հացի հետ ես կերել,— զայրացավ Հայրը: — Բոբիկ պիտի ման գաս:

Եղիշեն ձայն շնանեց, բայց հետո, երբ դուրս եկանք ու գնում էինք մեր տուն, ճանապարհին ասաց.

— Էավ է ոտքից բոբիկ լինել, քան թե խելքից:

Նա, ինարկե, ոտքից էլ բոբիկ չմնաց»:

Ուսումնարանում էլ Զարենցը առանձնանում էր իր ձիրով, վայելելով «մի տեսակ հարգանք»: Առաջադեմ և օժտութած աշակերտների մի խումբ հրատարակում է «Գարուն» ծեռագիր ժողովածուն, որի մեջ զետեղվում են Եղիշեի թոթովանքները և դպրոցական առօրյային նվիրված երգիծական բանաստեղծությունները:

Փամանակին շատ տարածված էր ալբոմ պահելու սովորությունը: Զարենցն էլ էր պահում: Ալբիշների ալբոմներում նա գրում էր միայն շափածո, իր ալբոմում ևս ընկերներից պահանջում էր գրել միայն շափածո: Շուտով նրա շուրջը հավաքվում են աշակերտ «բանաստեղծներ»: շատ շատերը սկսում են գրել բանաստեղծություններ: Եղիշեն բոլորին գերազանցում էր և ձիրքով, և հին ու նոր գրականության իմացությամբ, նա ուներ լայն մտահորիզոն, արդեն շատ առաջ էր անցել ընկերներից: «Մենք սովորաբար սահմանափակվում էինք գասավանդվող առարկայի շրջանակներում, իսկ Եղիշեն ուսումնասիրում էր օճանդակ աղբյուրներ, կարդում ուստերեն և հայերեն լույս տեսած երկերը, լինեին դրանք զուտ գեղարվեստական, թե դիտափիլիսոփայական աշխատություններ»¹:

Նա խորանում էր գարերի մեջ, հիանում 15-րդ դարի ֆրանսիացի բանաստեղծ Ֆրանսուա Վիյոնի ոտանավորներով և ուշագիր ընթերցում նորագույն սիմվոլիստ Ալբեր Սամենին: Մասնավորապես Ֆրանսուա Վիյոնը՝ իր դժբախտ և արկածալից կյանքով, դժվար ճանապարհով և մեծ տառապանքով գերել էր Եղիշեին. «Նիկոլայ Պոլյակովի գրադարա-

¹ «Հիշողություններ Եղիշե Զարենցի մասին», Աշխատ Փալանչյան, Դպրոցական տարիներին, էջ 45:

նում կար 15-րդ դարի ֆրանսիական բանաստեղծ Ֆրանսուա Վիյոնի ժողովածուն՝ ուստերեն թարգմանված: Մենք հափշտակությամբ կարդում էինք նրա բանաստեղծությունները, մի քանիսը նույնիսկ անգիր գիտեինք: Հրաշալի գիտեր ուսուական դասական գրականությունը և նորագույն սիմվոլիստական դպրոցի բոլոր ներկայացուցիչներին: Ընթերցում էր Ստենդալին և մոդեռնիստ Պշիբիշևսկուն: Հովհաննես Թումանյանի, Ավետիք Խսահակյանի, Վահան Տերյանի երկերի հետ միասին ունալական դպրոցի աշակերտին մատչելի եւ դառնում ոչ միայն և. Անդրեսի, Մ. Գորկու, Բրյուսովի, Բլուկի, Անդրեյ Բելու, Մերեթկովսկու և ժամանակակից ուսուալ գրողների, այլև՝ արևմտաեվրոպական ժամանակակից «մոդեռնի տենդենցների»՝ գ'Աննունցիոյի, Տետմայերի, Պշիբիշևսկու և այլոց գրվածքները¹: պատմում է նրա վաղ պատանության գրական ընկերը:

Պատանին ապրում էր գրքերի մեջ և մեծ աշխարհի մասին ուներ գեղ մշուշոտ ու միջնորդավորված պատկերացում: Նա կարդում էր բազում գրքեր, գրում էր ոտանավորներ, տպագրել էր արդեն «Մաղիկները հեզ...» ոտանավորը, իսկ 1914 թ. հաջողվում է մի կերպ, սեփական ծախքով, Կարսում հրատարակել «Երեք երգ տիրադալուկ աղջկան» գրքույիր: Նրա շուրջն արդեն հավաքվում էին պատանիներ: Կարսու հյուսում էր ուրույն լեզենդ իր պատանի տաղանդի շուրջ: Կարսում էլ նա հորինում է իր գրական ազգանունը՝ Զարենց: Ի՞նչ դրդումով է ընտրել այս անունը սարքել է Պուշկինի «Անշարը» բանաստեղծության վերնագրից: «Որտեղից ես ճարել այս անունը, հարցրի ես մի անգամ: Եվ ահա թե Զարենցը ինչ պատմեց ինձ մի օր: Երբ իր առաջին գործը՝ «Երեք երգը» տպարան էր տարել շարել տալու և զեր չէր որոշել, թե ինչ անունով է հրատարակ գալու, հանկարծ աշքին է ընկել Պուշկինի բանաստեղծությունների գիրքը, վերցրել է և բացել այն, Պատահմամբ բացված էշի վրա տեսել է «Անշար» վերնագրով ոտանավորը... Եվ, ով անքնին գու-

¹ Գեղող Արով. Մի քանի համառոտ գրվագեր, «Հիշողություններ...», էջ 99:

գաղթաբռնիքուն... անշատը դարձել է Զարենց...»: Գուրգեն Մահարին ուրիշ կերպ է բացատրում. Զարենցը պատահաբար կարս եկած բժիշկներից մեկի դռանը կարդում է Զարենց ազգանունը և սեփականացնում: Ո՞րն է ճշմարիտը: Դժվար է ասել: Թերևս առաջինը, գրքային ծագումը: Կամ գուցե այս ազգանունը նա ընտրել է միտումնավոր, այսպես ասած՝ միշտավայրին հակագրվելու համար: Մանավանդ մանուկ հասակից նրան մշտապես հնտապնդել է Հենց այդ բառը: Կենսագրական ուրիշ փաստերի պես սա ևս մի առեղծված է:

Այսպես ամեն ինչով, ձեռվ և էությամբ նրա կյանքն արդեն պատկանում էր բանաստեղծությանը: Բայց այս բոլորը գեռնես միայն ցուց են տալիս օժտված մարդու հակումները գեղեցիկի նկատմամբ: Նրա ոտանավորներում գեռնես թուզ էր սեփական կենսափորձից և կող կենարար ալիքը: Նա ուշ ապրում էր անորոշ տեսիլների ու երազների մինոլորտում... Երբեմն գեղեցիկի բուն մղումով մտնում էր ուրիշների աշխարհը, նյութ առնում այլոց հարստությունից ու երազներից երբեմն էլ ինքն իր հոգում, իր շրջապատում, գեռնես աղքատ կենսական տպավորությունների մինոլորտում, նա հյուսում էր պատանեկան հոգու երգն ու տեսիլը, հայտնագործում իր սերնդի գեռ ամպոտ, բայց անաղարտ ապրումները, դրանորելով արդեն զգալի շափով հղկված բանաստեղծական ձիրք:

ԴԱՆԹԵԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՄՀԻՆ

Շուտով մի զորեղ հարվածով հեղաշրջվում է կյանքի ընթացքը: Սև ստվեր է իջնում Զարենցի տեսիլների ու երազների վրա: 1914 թ. օգոստոսին սկսվում է համաշխարհային պատերազմը: Պատանին ընկնում է մեծ դեպքերի և արյունալի աղետների հորձանուտը:

Հակառակ հոր ճնշմանը, նա 1913 թ. արդեն թողել էր ուսումը: Խսկ 1915 թ., երբ ուելական դպրոցը տեղա-

1. Գ. Անանյանը «Եղիշե Զարենց» գրքույին մեջ գրում է, որ 1912—13 թթ. Զարենցն այլևս ուսական գարոցի աշակերտ չէր, բանի որ ցուցակներում նրա անունը չի հրչվում: Նույն տեղում նա նշում է, որ ընկերների

փոխվել էր Թիֆլիս, նա արդեն պատերազմի դաշտում էր: 1915 թ. ամռանը Քահաքեռում ձևավորվում են հայկական կամավորական 6-րդ և 7-րդ բանակները, որոնք շուտով միանում են իրար:

Տանութամյա Զարենցը մտնում է այդ բանակի շարքերը, սկզբում որպես սանիտարական վիորիկ անձնակազմի ղեկավար, ապա դառնում է երկրորդ վաշտի զինվոր: Նույն բանակի մեջ էր նաև մի ուրիշ, արդեն գրքերի հեղինակ երիտասարդ գրող: Դա խարբերդցի Վահան Թոթովյանցն էր, շքեղ նկարագրի տեր մի մարդ, որը մի խումբ երիտասարդների հետ Ամերիկայից շտապել էր Կովկաս՝ մասնակցելու հայրենական կորիներին:

Կամավորական բանակը սեպտեմբեր ամսին մտնում է Արևմտյան Հայաստան: Հայ պոեղիայի հազարամյա ճանապարհին հենց նրան՝ կարսեցի պատանուն է վիճակվում ամենամեծ դժբախտությունը՝ հայրենիքի մահը տեսնելու սարսափը և այդ մահը պատկերելու անհուն ծանրությունը: Թողնելով իր հարազատ անկյունը՝ Կարսի այգին, նա բըռնում է մի անուվոր ճանապարհ, մտնում արյան աշխարհը.

Ես ինքս էլ լավ միտ

Զբերի—

Թե ո՞նց Կարսի այգուց—

Տանհինգ թվի վերշերին—

Արթնացա գորքերի շարքում:

Կամավոր:

Հայկական բանակ:

Վեյությամբ, 1912 թ. մայիսին Զարենցը գեռնես աշակերտ էր Թվում է, ավելի հավանական է հենց իր եր Զարենցի շափած վկայությունը («Homo Sapiens»):

Տասներեք թվի ամառը, եռենիսին,

Նսիրյան քաղաքի մի փողոցով խաղաղ

Անցնում էր, հոգու երեսին,

Տասնվեց տարեկան մի տղա:

Այսակ էլ նա հիշում է հոր պայմանը՝ կամ տուն չգալ այլնս, կամ կրկին պատրաստվել ընծության: Ամեն ինչից երեսում է, որ Զարենցը վերջում մշտապես վեճի մեջ էր դպրոցի հետ, հաճախ էր զուրս մնում և ընդունվում, և, ինչպես վկայում են ընկերները, նա ստացել է այսուես կոչված աՅՕԿԱԿ վկայական, որը նշանակում է, թե սովորել է ուելական դպրոցում, բայց չի ավարտել:

Զարենցի մասին խոսելիս մենք երբեմն հաշվի չենք նստում նրա տեսածի ու ապրածի հետ, չենք խոսում գրողի անձնական հակումների ու ճակատագրի մասին։ Այնինչ հայտնի է, որ այս ամենը բացառիկ դեր են խաղում ստեղծագործական հոգեբանության մեջ, որու են բացում դեպի ներշնչումների ու պատկերների բարդ աշխարհը։

Մանուկ հասակից նա աշքի էր ընկնում անհանգիստ ու որոնող բնավորությամբ։ Ոներ շիկացող միտք, տաք բնավորություն, սուր լեզու, համարձակություն ու անկախության հակում։ Նա զղուտ, նիհար, գրեթե փոքրամարմին, մեծ քթով, ավելի շատ Սիրանո զր Բերժերակին հիշեցնող մի երիտասարդ էր։ Մի ուսը փոքր-ինչ ցածր, գլուխը մի կողմի վրա հակած... Այսպես են նկարագրում Զարենցին։ Բայց նրա դեմքն ուներ ինչ-որ գրավիչ ու մագնիսական ուժ։ Թերևս գեղեցիկ, սև, թափանցող սուր աշքեր։ Դրա հետ միասին նրա դեմքը հաճախ էր փոփոխվում, ենթարկվելով ներքին ապրումներին, ուրախ պահերին հիշեցնում էր մանկան լուսավոր, ճառագող հայացքը, երբեմն էլ կնճոռտվում էր, հանկարծակի ծերանում, ստանում ներքին տառապանքից հոգնած, իմաստում ու ցաված, անգամ հիվանդագին երանգներ։ Արտակարգ զգայուն բանաստեղծի հոգեկան անվերջ շարժումները իշխում էին նաև մարմնի վրա։ Ամբողջովին ունեղեն երեւութ...

Այս արտասովոր պատանին, որն օժտված էր հոգեկան զորեղ լուրով, ծնվել էր մեծ դեպքերի, անհանգիստ օրերի ու կյանքի համար։ Նա պատկանում էր այն բանաստեղծների թվին, որոնք աշխարհ են գալիս ու գնում անհանգիստ խառնածքով, ամենուր բախման մեջ են մտնում, ամենուր կովում նոր եղերքի ու հորիզոնի համար, ճաշակում բուռն սլացումների հաճույքը, հոգեկան վերելքների ճախրը և ձախորդությունների դառնությունը։ Դանատե, Ֆրանսուա Վիյոն, Բայրոն, Հայնե, Պուշկին, Լերմոնտով, Աբովյան, Նալբանդյան, Մայակովսկի, — ահա նրա հարազատները, որոնց բնածին հակումներին միացել էին ընդհանուր կրքերը, համամարդկային խոր շահագրգությունները, վիթխարի էներգիա հաղորդելով բաղաքացիական ընդդիմագիր ուժին և ստեղծագործական մղումներին։

Զարենցն էլ կյանք մտավ խենթ երազներով և որոնում-ների բացառիկ կրքով, Պատանուն հետաքրքրում էր մեծ աշխարհը՝ հերթափներով, երազներով, յոթգլխանի հրեշներով, անհայտ հորիզոնների կախարդանքով։ Աշխարհը նագիտեր սոսկ գրքերով ու երազներով։ Նա դեռ չէր տեսել մինչև անգամ իր հայրենի Հայաստանը։ Եվ ահա ոգեշունը որոնում էր այդ աշխարհն ու հայրենիքը։ Բայց կյանքը նրա համար պահել էր ուրիշ անակնկալներ... Շուտով ծանրանում է «թարմ ու թեթև» թվացող զինվորի համփան։ Պատերազմի դաշտում տասնութամյա պատանին թեաթափ է լինում։ Վաղ, շատ վաղ են կործանվում պայծառ երազները աշխարհի, մարդու, հայրենիքի մասին։ Նա բռնկվում է նաիրյան երկրի ցավով։ Հայրենի երկրի բախտը նրա հոգուն մի անհուն տիրություն է բարդում...

Յս կարծում էի— այստեղ,
Խոմքերի ահեղ որոտում
Կառնեմ քա գեմքը լուսեւ
Բայց գտա... զիակներ փայտա
Ու տեսա մի երկիր, որը դու
Լրեցիր խուժումից մեր սեւ
Ու իշավ բախիծն հնամյա,
Ու հոգիս հնշեց, ճնշեց...

Պատանի Զարենցի բախտը կապվում է հայրենիքի բախտի հետ։ Հայրենասեր, զգայուն ու կրթված շատ ուսանողների և բարձր դասարանների աշակերտների պես նա էլ մեկնում է ուազմի դաշտ՝ ոռմանտիկ հովերով, հայրենիկ՝ հրկության հույսով։ «Երկիր նաիրի» վեպում շատ ազդեցիկ է նկարագրված պատերազմի թողած նախնական տպավորությունը՝ հասարակության զանազան խավերի վրա։ Աշնանային մի կիրակի, երբ իր ծուլլ հանգիստն էր վայելում նաիրյան քաղաքը, նույնքան խաղաղ ծննդում էին Առաքելոյեկեղեցու զանգերը, բաղաքացիների մեծ մասը փակ խանութների առջև զբաղված էր առօրյա զրուցով, իսկ բաղաքային ակումբում շիկանում էր մեծամեծների պրեֆերանսը, մի խոսքով, ամեն օրվա պես անբովանդակ մի օր հանկարծ պայթում է պատերազմի բոթը։ Մեծ շուրջ և հանդիսավորությամբ է նաիրյան բաղաքն ընդունում «հետագայում հա-

մաշխարհային պատերազմ կոչված արյունալի «Հյուրին»։ Երածշտություն, կեցըներ, ուռաներ, ճաներ, տոնական զբանական միջամտություն մի ամբոխ, որին ուշնկցում են ուրախ երեխաները։

Սկզբում ամեն ինչ բվում էր ուրախ ծիսակատարություն, «կիրակաօր» ներելի հանաքներ»։ Սակայն դա խորապես դրամատուրգ, ավելի ճիշտ՝ ողբերգական մի պահ էր, ճակատագրական պահ, քանի որ ցնծության մեջ գտնվող քաղաքը հենց այդ պահից արդեն դատապարտված էր կործանման։ Կամաց-կամաց հեռվում տեղի ունեցող պատերազմը սկսում է նկատելի դառնալ նաև նախրյան քաղաքի մըթնոլորտում, հնուափոր լուրը մարմին է առնում որպես շոշափելի աղետ, զրկանք, արյուն ու սարսափ։ Տեղի է ունենում «անխուսափելի մի փոփոխություն»։ Խսկ արդեն պատերազմի դաշտում գտնվող Զարենցի աշքի առջև բացվում է «մոխիրներու և մահերու դանթեական ճանապարհ» (Սիամանթո), «արյունալի հյուրը» ողջ սարսափներով ծառանում է ժողովրդի առաջ և իր թաթը դնում Հայաստանի վրա։ Տեղի էր ունենում մի ողբերգություն, որի մասին մոայլ գուշակություն էր արել հայրենի ցավի արտասովոր զգայուն երգիլ Սիամանթոն, գուշակել է ինքն էլ զո՞ն դարձել եղեռնին։

Զարենցը տեսնում է այրվող հինավուրց գյուղեր ու հազարամյա քաղաքներ, արյունոտ ջրեր ու գիակներ։ Կամավոր բանակն անցնում է երկար ճանապարհ։ Առաջին իսկ տպավորություններն ահավոր էին... իգդիրից դուրս գալով դեպի Վան, նրանք հանդիպում են դանթեական իրական առասպելներին։ Թափառեղ սարի վրա զինվորները կանգ են առնում մի սարսափելի պատկերի առաջ։ Ամենուր փոված էին սպանված և սառած երեխաներ, կանայք, ծերունիներ, որոնք փախած թուրք զարդարաներից ու քորդ հրոսակների հարձակումներից, խուճապահար բարձրացել էին լեռան գագաթը։ Աղետից ցնցված բանակը արտասովում էր... Ահա հայրենիքը, որի պատկերը մշտապես շղողացել էր պատանու երազների մեջ։ Երդման և վրեժի խոսք են ասում շատերը։ Առաջին անգամ հենց այտեղ, այդ հարազատ դիակների առաջ, այդ բարձր սարի գագաթին, որից այնքան գեղեցիկ էին երևում Հայաստանի հովիտները, իր ժողովրդին և հողին

երդման խոսք է ասում նրա բանաստեղծ որդին՝ երկրորդ վաշտի զինվոր եղիշե Սողոմոնյանը։

Եվ վերին անգամ երդվում էինք, որ Ու ոք իր ուխտը երբեք չի խախտի...»

Զարենցն իր բանաստեղծական «օրագրի» մեջ, «Դանթեական առասպելում» թողել է այդ առաջին ողբերգական հանդիպման նկարագրությունը։ Անսքող, առանց սեթևեանքի, ճշմարտության պես մերկ։

Եվ ահա կրկին—մի քանի դիակ։
Եվ այստեղ ահա—վարսեր կանացի։
Իսկ այստեղ—նեխած վերմակների տակ—
Չորցած փշրանքներ արնաներկ հացի։
Իսկ այստեղ—ահա ոսկրացած մի ձեռք։
Մարմինը չկատ է անձայն։
Հեռվում դասանք սրուճները մերկ,
իսկ մի քիչ հնուն—ատամներ ցիցան։
... Կևոր էր արդեն, երբ հսկա լեռան
Ակեր ու ցորտ զակաթը հասանչ։
... Մատեցա... Եվ քար կտրած մնացի։
Չյուների վրա ընկած էր մի կին
Եվ առանց խոսքի ու առանց լացի
Ազմնդում էր իր մէնավոր հոգին։
Չոր ձեռքերի մեջ փշրանքը հացի
Սեղմել էր ամուր, որպես զանձ անդին։

I ճշատ.

Այստեղից, մոայլ ու արյունոտ այս սպատկերներից են սկիզբ առնում ու խոր արմատներ ձգում հաիրյան կակիծը և ողբերգական սերը, այս տառապանքի աշքերով է բանաստեղը սկսում նայել նաև մեծ աշխարհին։

Բայց հետո հանկարծ բացվեց մեր առաջ
Մի ավեր ողի, որ անհուն ու խոր
Մի տառապանքի խորշակ կար վառած։
Եվ կամաց-կամաց դարձավ վիրավոր
Մեր հոգին շահել ու բազմաերազ։

Այսպիսին էր երկիր դրախտավայրը։ Այրված գյուղեր, մոխրացած քաղաքներ, ծվատված, տանջված դիակներ ու մի

անսահման և դաժան լուսթյուն, սարսափելի լուսթյուն, որ իջնում էր զարավոր հողի և հազարամյակների ստեղծածի վրա... լոել էին երգերը, լոել էին ձայները... Մահվան շարաշուր ստվերը իշել էր երկրի վրա: Տառապանքից, անհուն ցալից ծխում էր պատահի բանաստեղծի հոգին, որ նոր էր աչք բացել աշխարհի վրա և բռնել հայրենի ուղիները: Մի թանկագին հուշ մեղ պատմում է շարքային զինվոր Զարենցի պատերազմական օրերի մասին. «Մեր վաշտապետ Գ. Սիրունյանը այդ հարմար առիթը օգտագործեց մոտալուտ մարտից առաջ զինվորներին ոգևորելու ու խիզախաբար կռվելու զարավոր ոսուխի դեմ... Զէ՞ որ գնում էինք մեր սրբավայրերը՝ Աղթամարն ու Նարեկա վանքը... Հետո ելույթ ունեցան ուրիշները, որոնցից լավ հիշում եմ բոլորին սիրելի Վահան Թոթովենցին, դարալագյազգի նկարիչ Ա. Տեր-Առաքելյանին: Խոսեց նաև Սողոմոնյան ազգանունվ մի վտիտ և փոքր զինվոր և լավ խոսեց: Ես նրա հետ ծանոթացել էի Թափառեղ լեռան վրա բազմաթիվ գաղթական հայերի սառած դիակներին հանդիպած ժամանակ, որտեղ նա ճառ ասաց: Հաղար ափսոս, որ միտքս չեմ պահել նրա ճառը: Ախր այն ժամանակ ո՞ւմ մտքից կարող էր անցնել, որ այդ վտիտ պատահին մի օր պիտի դառնա մեր նոր պոեզիայի փառք և պարծանք հանճարեղ Եղիշե Զարենցը...»¹:

Այս բոլորը տեղի էր ունենում Հիրճ գյուղի մոտ (Շատախի ճամփի վրա) Նարեկի, Աղթամարի և Ոստանի համար մզվող կոփվներից առաջ:

Դժվար չէ գուշակել պատահի բանաստեղծի ճառերի բովանդակությունը: Դա այնքան լավ է երևում նրա պոեմներից ու բանաստեղծություններից: Ամեն քայլափոխի զինվորը շանգ է առնում սրբությունների առաջ: Մահվան օրերին նրա առնել բացվում են հայրենի ոգու առեղծվածները և հազարամյա գեղեցկությունները: Բայց ամեն ինչի վրա կարծես իջնում է մաշվան մշուշը, քանի որ մարդկային շարժումն ու ձայնը ամենուր լուս է: Նա մի մեծ պտույտ է կատարում Վանա ծովի շուրջ: «Մեռած քաղաք»— ահա

¹ Թուրքում Գեղարքան, Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Նաիրի», 1969 թ., հ 2, էջ 2.

Վանը, հինավուրց բնօրրանիր, Վանա ծովը... «Գորշացել էին ջրերը կապույտ, ու գորշ էր թվում աշխարհը ամրողց»: Ահա Նարեկա վանքը, որի մոտ երդման խոսք է ասում զինվորը: Հայրենի հանճարի հոյակապ մի կոթող, լուս ու դատապարտված հազարամյա մի վանք:

Եվ մի օր ես այն հին վանքը մտաւ
Եռորչը կաղնիներ հաղթ բազմել էին,
Երգում էր անուշ զանգը հեամյա
Ու թախծում էին գորշ քարերը հին
Եվ այն հին վանքի կամարների տակ,
Ուր մի անիմաց, անիմանալի
Գոյության ճախրում կա լուրջ ու պարփակ՝
Ես ծունկ չոփեցի աղոթքներով լի:
Թեկուզ շվառվեց տոնական բույզով
Զահը վերեկ, շահը հազարաշ.
Թեկուզ քացվեց վարագույրը մով
Եվ ոչ մի ծնծղա անուշ շզնգաց,
Թեկուզ ոչ մի երգ լսվեց վանքի
Այն հազարամյա կամարների մեջ—
Բայց հոգիս զզաց մի հին բերկրանքի,
Բախտավորության ու սիրո վայրէջք:

Տեղի է ունենում մի ցավագին դրամա: Զարեցն իր մեծ ու հինավուրց երկիրը սկսում է ճանաչել ու զգալ այն պահին, երբ նրան սպառնում է մահը, ամբողջ հոգով սիրում է հայրենիքը, այն պահին, երբ քաղաքական աղետները կործանում էին նրան.

... Բայց ես գիտեմ, որ սիրեցի քեզ մի օր,
Երբ հասկացա, որ աշխարհում դու չկամ...

Այս տողերը նա ավելացրել է «Կապուտաշյա հայրենիթի» նախնական մշակման ժամանակ, բանաձեկի պես հստակ ներկայացնելով հայրենիթի բախտի և բանաստեղծ որդու հոգեկան աղերսները: Նա էլ երկրի զավակների հետ հուսահատ կոիվ էր մզում այդ անհետացող երկրի գոյության համար... Բայց հայրենիթի պատկերը մնաց միայն տառապած զավակի հոգու մեջ: Մնաց վերքը... Մնաց անհուն կոկիծը: Վառողի ծխի մեջ, անվերադարձ կորուստների ճանապարհին խոր արմատներ է ձգում նրա մեծ սերը հայրե-

Նիքի նկատմամբ: Հարադատների դիակների և զոհերի միջով, կամավոր գինվորները մարտնչում են հայկական գյուղերի ու քաղաքների փրկության համար: Թայց աղետը գալիս է աղետի ետևից: Ինչ-ինչ նկատառումներով ցարական բանակի գիներաները կամավորական ջոկատներին դուրս են հանում Արևմտյան Հայաստանի սահմաններից: Կամավորները ստիպված էին թողնել երկիրը և անցնել Պարսկաստանի սահմանները: Հենց այս սահմանների շրջանում, Սովորովի դաշտում, նոռագ վրա անսպասելի հարձակում են գործում քըրդական զինված խմբերը: Անհավասար կովում 1915 թ. դեկտեմբերի 25-ին գոհկում են զինվորներից շատերը, Զարենցի ընկերները: Խսկ փոքրաթիվ մասը նահանջում է: Այս անցքերից անմիջապես հետո գրած «Դանթեական առասպել» պոեմը Զարենցը նվիրում է զոհված ընկերների հիշատակին:

Այսպես Հայաստանը մնում է անտեր: Ցարական բանակը ռազմի դաշտում վարում էր դիվանագիտական մեծ խաղ, նրա հաւանչների և առաջխաղացումների իմաստը ավելի քան պարզ էր... Հայաստանը թողնել առանց հայերի: Դիվանագիտությանց զո՞ն էր գնում հայրենիքը, թուրքերը մի կողմից անարգէ: Շնչացնում էին ոռուական սահմանների մոտ գտնը-վող շրջանների բնակչությանը, ամայացնում նահանգները, մյուս կ. զմբէջ անապատներն աքսորում և ճանապարհներին ոչնչացնում հետամոր շրջանների բնակությանը: Կամավորական ջոկատները որոնց մեջ էր բանաստեղծը, արդեն անգոր էին փոքրինչ կասեցնելու արյան ու խարդավանքի ընթացքը:

Ընկնում էին հինավորց քաղաքները՝ Վանը, Սարիղամիշը, Էրգումբը, Կարսը, Տրկիզվում էին գյուղերը: «Սարսափահար նախուների պես» աշխատավոր ժողովուրդը իր այրվող արտերի ու արոտների միջով փախչում էր գեպի Ռուսաստան, ետ էր փախչում նաև ամօթահար զինվորը, անզորաց աժ քաղաքական աեւումների սուազ: Նրանց հետ էր նաև բանաստեղծ-զինվորը: Նոր հրամափությունը Զարենցը՝ 916 թ. ձմռանը վերադառնում է Թիֆլիս, ապա Կարս Անդրեանեան դառնում է ցնցող զեպքերի և անվերջ անկումների ականատես...

Հետագայում նա խոր կսկիծով ու դառնությամբ հյուսում

է մեծ գաղթի և նաիրյան հինավորց քաղաքի անհման, ժողովրդի քաշած աղետալի օրերի պատմությունը, նյութ ունելով 1918 թ. Կարսի սարսահներից: «Թե ինչ էր կատարվում այդ ժամանակ կայարանում—անհնարին է նկարագրել Խուճապի և նիթարկիված քաղմահազար ամբոխը լցվել էր պլատֆորմը, տեղի էր ունենում այնպիսի մի իրարանցում, որի հանդեպ մանկական մի խաղ էր թաբելոնի աշտարակաշինույթը: Եթե միայն դա իրոք տեղի է ունեցել: Մարդիկ կոխոտում էին իրարու և իրարու վրայով սողալով՝ առաջ անցնում, որպեսզի մոտ լինեն եկող զնացքին: մայրերն ամբոխի գլուխների վրայով առաջ էին նետում իրենց երեխաններին, որպեսզի իրենք ևս առաջ սողան, բայց երեխանները խեղդվում էին ընդհանուր հրհրոցում, իսկ մայրերը, առանց երեխաններին հասնելու, վշում էին իրենց շունչը՝ շորս կողմից և նզմված: Տղոցկան կանայք ծնում էին կանգնած տեղերում, և նրանց ճիշը լսելի էր լինում անգամ այն ահուելի աղմուկում, որ բարձրացնում էր բաղմահազար, սարսափից խելազարված ամբոխը»:

Այսպես էր կործանվում հայրենիքը... Ժողովուրդը փախչում էր իր հողից ու աշխատանքից: Զարշարանքների հինավորուրց պատմությունները գունատվում էին այս աղետների առաջ:

Զարենցը հասկացավ աղետի էությունը, ճանաշեց ճըշմարտությունը, մեծացավ աղետների մեջ և իր երկերում լուրովի բնորոշեց այս հին աշխարհը, որը նեխում էր պատերազմներից և արյունալի սպանդից:

Հնամյա արևին մոտիկ աշխարհը նեխած դիակ էր, որ քայքայվում էր տոթից: Քաղաքներից ու գյուղերից մնում են միայն անունները, «սատանան քրքչում» է մարդկության դարերի վաստակի վրա, անընդմեջ աղետները ընդհանուր կյանքը դարձնում են գեհեն:

Համաշխարհային աղետի մեջ Զարենցն ուներ շատ հոգեկիցներ: Պատերազմի դաշտում էր երիտասարդ Ապոլիները՝ ֆրանսիական բանաստեղծության ապագան: Ենթասպա Ապոլիները խորապես ատեց պատերազմը, գրեց արյունությունը խրախճանքի գեմ: Նա մեռավ 38 տարեկան հասակում, պատերազմի դաշտում գլխին հասած ծանր վերքից: Խրա-

մատների մեջ էր արձակագիր, հումանիստ Հանրի Բարբյուսը: Հենց խրամատներում էլ ձևավորվեց դարի ամենածշմարիտ գրքերից մեկը՝ «Կրակ» վեպը, որը իր անսրող ունալիքով ցնցեց աշխարհը: Գերմանացի պատանի Բերտոլդ Բրեխտը հագել էր սանհիտարի հագուստը և հիվանդանոցում ամեն օր տեսնում էր պատերազմի զոհերին, զգում նրանց տառապանքները: Չարենցից մի փոքր հետո ուսւ-թուրքական ճակատում կովում էր նաև պատանի ճեմարանական Ակսել Բակունցը:

Բոլոր ազնիվ հոգիները ծառս եղան համաշխարհային կոտորածի և անմիտ եղբայրասպանության դեմ, Կևծ հայրենասիրության պաթոսով բռնված գրողներից շատերը տեսնելով իմացերիալիզմի ստեղծած արյան բաղանիքը, կրկին մտնում էին ճշմարտության հոնք: Իսկ նրանց հոգեկի՞ցը, հայ նորագույն գրողը... Նրա վիշտը անհամեմատ մեծ էր: Պատերազմը բանաստեղծի համար սկսվեց մեծագույն աղետով, հայրենի բանաստեղծական սերնդի գլխատումով: Արևմտահայ բանաստեղծների նորագույն ծաղկուն սերունդը, որ ապրում ու շնչում էր համամարդկային երազներով, բարբարոսաբար գլխատվեց: Բայց ոչ պատերազմի դաշտում: Բանաստեղծները բայլում էին աքսորյալ, խարված ժողովրդի հետ, շշնչալով սարսափի և սիրո նոր խոսքեր: Նահատակները, որոնց թվում էին Սիհամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, ողջակեզին բերության երազները: Բանաստեղծությունը արյուն էր տալիս, հայրենի եզերքներին ընկնում էին պատանի բանաստեղծները՝ «Հույսով գեղուն, արևով խենթ և անուղղով երջանիկ» (Սիհամանթո):

Հայ բանաստեղծը հանդիպում է մեծագույն ոճիրին՝ բանաստեղծների սպանությանը և բանաստեղծության գլխամանը: Իսկ այդ բանաստեղծները նրա հարազատներն էին, այդ սերնդի հետ նա արյան կապեր ուներ: Մեծ աղետին հետևում է գերագույնը... գլխատվում էր նաև պատերազմին ու սպանությանը անվարժ ժողովորդը, ամայանում էր բանաստեղծության մայրական գիրկը: Ընդհանուր մահվանը խառնվում է նաև Սողոմոնյանների գերդաստանի վիշտը գաղթի ճանապարհին, էրզրումից փախչելիս, կոտորածին զո՞ւ է:

գնում միշնեկ քույրը՝ Մարիամը, իր բազմանդամ ընտանիքի հետ միասին:

Զարենցի հոգու վրա երկար, գրեթե մշտապես մռայլ կնիք է զնում այս անողորմ սպանդը: Նա դառնում է բորբոքման, տաք ու անհավասարակշիռ, մյուս կողմից՝ արագ հասունանալով, բեռնավորվում է բազում խոհերով, զգացումներով, կենսաճանաշղողությամբ: Այս աղետալի անցքերը, պատերազմը, հայրենիքի կործանումը, կյանքի ու երգի սպանությունը, անցած ժանր ճանապարհը այրող լիցքեր են հաղորդում բանաստեղծին, հսկայական շափով մեծացնում նրա իմացության աշխարհը և ներքին տեսողությունը: Գրեթերից հետո, որոնք ենր լիցքեր էին, եռոր գրգիռներ, շարժման մեջ էին դնում հոգեկան աշխարհը, վիրխարի էներգիա հաղորդելով դեռ պատանի, նոր-եռոր բացվող ծիրենն, բանաստեղծական հասակի մեջ տեղի է ունենում ինչ-որ արտասվոր, գերբնական բացառող զորեղ անցում: Թերևս այս մեծ անցմանը, մտավոր հասունացմանը, պատերազմի հեղաշրջող դերին շատ հարմար է գալիս Ապոլիների «Փոքրիկ ավտոմեքենա» բանաստեղծության ամփոփումը.

Եվ երբ վերջապես մենք Ֆոնտելու հասանք կեսօրին
Եվ Փարկղը

Մեզ զորահավաքի հրամանով հանդիպեց,
Մենք երկուս, ընկերու ու ես հասկացանք,
Որ ավումքենան մեզ բերել է մի ուրիշ դարաշրջան
Եվ ուրիշ դար.
Եվ որ մենք, թեև հասուն մարդիկ,
Հենց հիմա նորից ծնվեցինք:

Զարենցը նույնպես վերածնվում է, ոտք դնելով նոր սկսվող դարաշրջանի և դարի սեմին... Այդպես էլ ձևավորվում է երգը:

Պատերազմական մթնոլորտում ծնունդ են առնում հասկին «անհամապատասխան» երկեր: Մինչ այդ նա գրել էր «Երեք երգ տիրագալուկ աղջկան», գրքույկը և մի բանի ուրիշ բանաստեղծություններ, որոնց մեջ լսվում էր պատանեկան անկեղծ ապրումների ձայնը, բայց շատ ավելի՝ ուրիշ բանաստեղծների ցավը:

Առաջին ոտանավորների մեջ երբեմն-երբեմն երկում էր

և հայրենիքը: Բայց այդ հայրենիքը դեռ շղարշլած էր երազով, կարտով ու թախիծով:

Եվ ահա շուտով, գրական վերելքի հենց սկզբին, հայրենիքը իր դժբախտ կյանքով, քաղաքական ողբերգությամբ ու կենսական ձգտումներով դառնում է նրա երկերի բուն հերոսը: Նոր սկիզբ է գրվում հայ բանաստեղծության ճանապարհին, տասնութամյա բանաստեղծը վերցնում է ազգային ողբերգության ծանրությունը: «Սիրտու լցված տարիների սեղմ արձիճով ու կապարով», — 1918 թ. «Տաղ անձնականում այսպես է նա բնութագրել իր երիտասարդ հոգին: Դրական ազդեցություններին զուգընթաց, կենսական և հոգեկան գործունների ճնշման տակ նրա կյանքն ու գործը մտնում են ստեղծարար հոսանքի մեջ, տաղանդը թեածում է ամբողջ ուժով, գրսկորելով աստվածային շնորհի հնարավորությունները, քաղաքացիական արիություն և մարդկային վեհություն: Հայ բանաստեղծությունը կրկին մտնում է մեծ ծիրը և շարունակում տառապանքի ու երազների համամարդկային ուղին:

Երկրի բոլոր մարդիկ տենդագին որոնումների մեջ էին, Հայաստանը գտնվում էր օտար ճամփերի վրա, հնձվորները չէին դառնում հեռուներից... 1916 թ. վաղ գարնանը Ե. Զարենցը վերադառնում է Կարս և, որոշ ընդհատումներով, մնում մինչև 1918 թ.: Այժմ նա միայնակ չէր: Կարսում ուներ իր շրջապատը, որը բաղկացած էր քաղաքային ու ուելական ուսումնարաններից, քաղաքական ու հասարակական կյանքով ապրող մարդկանցից, որոնք փորձում են վերականգնել ծննդավայրի առօրյան և հոգեկան կյանքը: Նրա երիտասարդության պատկերն ամբողջացնելու համար հուշերը մեղ տալիս են թանկագին բեկորներ: Ահա մի հատված այն նամակից, որ Կուզյան եղբայրը գրում է ի՞ բույր Եպրաքսյալին՝ Զարենցի պատանության օրերի մասին: «Ղարս վերադարձա միայն 1916 թ. մայիսին: Այդ ժամանակ Մարտին Մելիքյանի միջոցով ծանոթացա Եղիշեի Նըրոր՝ Սողիկի, այսինքն Սողոմոն Սողոմոնյանի հետ: Այդ ժամանակից սկսած մինչև 1918 թ. ապրիլը, այսինքն՝ մինչև մեր բոլորի կողմից Ղարսը թողնելու թվականը, ես եղել եմ երիտասարդ մարդկանց շրջանի մեջ, ուր մտնում էին

նաև Սողիկը և նրա եղբայր Եղիշեն: Երկու եղբայրներն էլ այդ ժամանակ աշխատում էին իրենց հոր կրպակում, եվ քանի որ պարսկահպատակ էին, նրանց զինվորական ծառայության չին վերցնում: Այդ ժամանակ Եղիշեի մոտ արդեն կուտակվել էին շատ բանաստեղծություններ, և խոսում էին այն մասին, որ հրատարակեն նրա բանաստեղծությունների ժողովածուն: Բայց, ահա, չեմ հիշում, հաջողվե՞ց նրան այդ ժամանակ հրատարակել իր ժողովածուն, թե ոչ: 1917 թ. ամունը, գրեթե ամեն կիրակի, Եղիշեն բերում էր քաղաքային այգի շարաթվա ընթացքում գրած բանաստեղծությունները, կարդում էր մեր խմբին: և հարցնում մեր կարծիքը նրանց որակի մասին: Հաճախ կարծիքները բաժանվում էին, ուրիշները բննադատում, իսկ նա ուշադիր լսում էր և լուս: Բայց մի անգամ, հիշում եմ, եկավ և սկսեց կարդալ մեզ մի բանաստեղծություն «Գիշերապահ» վերնագրով, որը մեզ այնքան շատ դուր եկավ, որ վերջացնելուց հետո նրան իսկական օվացիա սարքեցինք»:

Միայն մի ճշտում. այս բանաստեղծությունը նա գրել է մի քիչ ավելի շուտ, 1916 թ. ընթացքում:

Այսպես ահա, նա կրկին իր հին այգու մեջ է, գրքերի ու բանաստեղծությունների հետ, ընկերական շրջանում: Դառնացած զինվորն այժմ ամբողջովին ապրում է բանաստեղծությամբ: Առանձին հուշերից մնացած բեկորները լավ են բնորոշում բանաստեղծի ստարօրինակա աշխարհը, համակրանքներն ու հակումները: Նա մեծ սեր ուներ դեպի ժողովրդական երգն ու խոսքը: Քաղաքային այգի էր գալիս մի կույր աշուղ, սազը ձեռքին, նվազում էր ու երգում, կոպեկներ հավաքում: Զարենցը ժամերով նստում էր նրա մոտ և լսում երգերը: «Դրա համար էլ երեխաները, որոնք խմբով քայլում էին աշուղի հետևից, Եղիշեին տվել էին ուրախ մականունը: — Տեսք տղերք: Ահա նորից կերևա ուրախ Եղիշը իր աշուղի հետ»¹:

1916 թվականի գարնանը Կարսում կրկին հանդիպում են «Հին» բարեկամները՝ Կարինեն և Եղիշեն: Երկուն էլ անցել էին ժանր ու արկածալից կյանքի բովով: Սկզբում Կարինեն

1 Նամակ քրոջ՝ Եպրաքսյալին, 1955 թ., Կուզյան, ԳԱԹ:

ընկերութիների հետ որոշաւմ է փախչել ուղմաճակատ՝ կամավորների շարքերում կռվելու Հարազատները ծրագիրը խափանում են, բայց տեղափոխվելով թիֆլիս, համառ աղջկը հաճախում է քույրական կուրսեր՝ գթության քույր դառնալու համար 1915 թ. լույս է տեսնում Հովհաննես Թումանյանի տագնապալի կոչը՝ հայ գաղթականներին, մասնավորապես որբերին օգնելու մասին։ Կարինեն փախչում է էջմիածին։ Այստեղ նա հանդիպում է մեծ թումանյանին, որը իր աղջկա՝ նվարդի հետ ամբողջովին տարված էր որբերի փրկության դժվար հոգսերով։ Բանաստեղծը բացառիկ տպավորություն է թողնում գիմնազիստ աղջկա վրա։ Եվ նա ոգևորված դառնում է սուր վարակիլ հիվանդությունների բաժնի քույր։ Սարսափների մեջ երկար շեն դիմանում Կարինենի նյարդերը։ Նա լուրջ հիվանդանում է։ Մոսկվայի հայկական կոմիտեի միջնորդությամբ բուժման նպատակով հայրենասեր աղջկան տեղափոխում են Մոսկվա։ Բարեկամները շատ բան ունեին իրար պատմելու իրենց տեսածից, իրենց տառապանքից։ Կարինեն Մոսկվայից Կարս էր եկել մի կարճ ժամանակով։ Նա ամեն կերպ Զարենցին համոզում է գնալ Մոսկվա։ Պատմում է Շանյավսկու ժողովրդական համալսարանի մասին, ուր դասերը վարում էին երեկոյան հերթին, խորհուրդ է տալիս ընկերոջը շարունակել կրթությունը։ Զարենցին ոգևորում է այս հեռանկարը։

1916 թ. սեպտեմբերին մոր օգնությամբ Զարենցը մի կերպ համոզում է հորը և մեկնում Մոսկվա։ Նա համաձայնել էր օգնել հորը, այսինքն՝ դառնալ գորգավաճառ Արգար աղջայի առևտրական գործակալը։ Մոսկվայի վեց ամիսները նշանակալից էին։ Նա ապրում էր Մալայա Դիմիտրովկա փողոցի վրա, միջանցքի նմանվող մի փոքրիկ սենյակում, ուր դրված էին մի սեղան, մի մահճակալ և երեք աթոռ։

Զարենցը սկսում է հաճախել Շանյավսկու համալսարանի բանասիրական ֆակուլտետ որպես ազատ ունկնդիր։ Ի դեպ, դրանից մի փոքր առաջ, 1913—14 թթ. այս նույն ժողովրդական համալսարանի դասախոսություններին հաճախում էր նաև երիտասարդ Սերգեյ Ծսենինը, որի շուրջն արդեն հյուսվել էին ուրախ ու տխուր լեգենդներ։ Լավատեղյակ ընկերներն ու ծանոթները վկայում են, որ Զարենցը շփվում

է գրական կյանքի հետ, հաճախում գրական հավաքույթներին ու երեկոներին, մտնում մայրաքաղաքի բանաստեղծական բուռն միջնորդությունը։ «1916 թվականին Մոսկվայում մոտիկից և ազարաբար կլանել էր իրեն արդեն Կարսից ծանոթ ուսումնակությունների ստեղծագործությունը, ծանոթացել էր նորագույն կամաց համարական կարգությանը... 1916 թ. նա հաճախել էր նաև գրական շատ երեկոներ, անձամբ լսել էր Թալմոնտի, Անդրեյ Բելու, Սերյանինի և շատ ուրիշների արտասանությունները»¹։

Սա շատ կարևոր իրադարձություն է, քանի որ առաջին անգամ իր «մենաստանից» Զարենցն ընկնում է գրական կենդանի կյանքի ոլորտը, մոտիկից տեսնում նորագույն գրողներին, լսում նրանց նոր երկերը։ Այս միջնորդությունը, շտարակույս, նրան հաղորդում է որոշ գրգիռներ և տալիս ստեղծագործական ինքնավստահություն։ Նա իրեն զգում է համաշխարհային գրական փորձերի միջնորդությունը, ինչու բան է վերցնում այդ ամենից և գգտում է ինչ-որ էական, սեփական բան ավելացնել ստացածին։ Երիտասարդ բանաստեղծը դուրս գալով գրական ուրինգոնի վիճակից, գգտում է նաև հաղթահարել որոշ շրջանակներ, որոշ կապանքներ։ Նա շարժման մեջ էր թե՛ բուն կյանքում և թե՛ գրական միջավայրում։ Տենդագին գրում էր և կարդում։ Աշխատում էր ցերեկները, իսկ երեկոները հաճախում համալսարան կամ գրական երեկոներ, երբեմն էլ ամբողջ շաբաթով լին հեռանում գրասեղանից։ Բոնկված տեսական ոգևորությամբ՝ իր փոքրիկ, անհրապույր սենյակում նա մեծ վերելքով ստեղծում էր բանաստեղծություններ, «Վահագն», «Աթիլա» պոեմները և «Ծիածանը»։

«Ծիածան» ժողովածուի մեծ մասը գրվել է լոթ-ութ օրվա ընթացքում, ինքնամոռաց ոգևորությամբ։ «Երբ գնացի եղիշեի մոտ, ինձ դիմավորեց ուսու տանտիրուհին և տագնապով ասաց՝ ո՞ւր եք, սիրելի Կարինե, որտե՞ղ եք կորել, ուզի՞ղ յոթ օր է նա դրում է, անվերջ գրում, առանց ուտելու, խմում է միայն քաղցր թեյ»։ Այդ պահին էլ նա գրում, ավարտում

1 Գ. Աբով, Մի բանի համառա դրվագներ... «Ծիածան» նույնական համարական մասին, էջ 102։

է «Ծիածանի» վերջին տողերը, ապա ձեռագիր ժողովածում նվիրում իր գեղեցիկ բարեկամին, «իրիկնային, աստղային բրոջ»՝ Կարինե Քոթանջյանին:

Այս գրքի վրա որոշակի հետք էր թողել սիմվոլիստական դպրոցը, մասնավորապես մուկովյան նորագույն գրական կյանքը՝ նոր տեսություններով, անգամ՝ սխեմաներով։ Բայց այդ նմանություններն ու զուգորդումները չեն բավարարում բանաստեղծին։ Ներքին բնազդով նա զգում էր, որ էականը դեռ չի ասված։ Ցավերի մեջ բարձրացող երիտասարդը որոշում էր անհատական երջանկություն, նրբին ապրումների ու երազների աշխարհ։ «Ծիածանի» մեջ երբեմն-երբեմն երևում է նաիրյանը՝ ցավերի մեջ բեկված ազնրվ հոգիների երազն ու թախիծը։ «Ծիածանը» ունի երկու շերտ՝ խիստ գրքային, և մյուս կողմից՝ անձնական, անգամ կենսագրական։ Դրան զուգորդաց Զարենցը շարունակում է իր մեծ թեման, ցավի երգը, ամբողջացնելով հայրենիքի կերպարը։

Այսպես էին ապրում Մոսկվայում երկու բարեկամները։ Ապրում էին իրենց հասակին և ոգուն ցայել անհանգստությամբ, փող ունեցած գեպքում «քամուն» էին տալիս բոլորը, մտնում առաջնակարգ ռեստորան, նստում թատրոնի լավագույն կարգում։ Եղիշեն երբեմն շատ նեղություններ էր քաշում, բայց երբ առիթը գալիս էր, հանգիստ խղճով, բանաստեղծական սավառնումով։ Քամուն էր տալիս Աբգար աղայի ուղարկած գորգերը, գույնզգույն փոշիները և հանրահոչակ դանակ-շախունները։ Աբգար աղայի այս ապրանքների եկամուտներից էլ նա հավաքեց միջոցներ և 1917 թ. սկզբին Մոսկվայում հրատարակեց «Ծիածանը»։ Քաղցած օրերին նրանք գնում էին Մոխովայա փողոց, ուր արևմտահայ մի գաղթական կես սրճարանի կամ կրապակի պես մի բան ուներ և ապառիկ կերակրում էր երկու անփող հայրենակիցներին... Փող գտնելու գեպքում լինում էին գեղարվեստական թատրոնի ներկայացումներին, Տրետյակովյան պատկերասրանում և Մեծ թատրոնում, սիրում էին Կաչալովին և Շալյապինին։

Ժամերով նստում էին Զեխովի դերեզմանաքարի մոտ, լինում էին Գորկայում։ Խսկ գրուցին վերջ շկար։ Նրանց հուզում էին գեղեցիկն ու կյանքը, արվեստի ու բանաստեղծու-

թյան նորադույն հարցերը։ Բայց պատանության այս վառվորուն օրերի երազները հաճախ մույլ երանգ էին ստանում հայրենիքում ծավալվող գդրախտություններից։ Հեռու հյուսիսում, ուստական արվեստի ու գրականության շրջանում, ներշընչված պատանի հոգիներին անխուսափելի հայտնվում էին նաև արյան ու մահի շարաշուր տեսիլները։ Այսպես ապրում էին նրանք խառը տպավորությունների, մուալ տեսիլների ու պայծառ երազների մեջ։ Ի՞նչ էր սպասվում նրանց գալիքում և ի՞նչ բախտ էր վերապահված հայրենիքին...»

Ամեն ինչ խառն էր ու մեռւու...

ԱՍՏՎԱՅԱՅԻՆ ԵՊՐԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Բայց դարձյալ վիթխարի մի հարված ցնցում է նրա հոգին, նոր ուղի նշելով բանաստեղծի համար։ Տեղի է ունենում մի հղոր շարժում, որ սասանում է հավերժական թվացող աշխարհը։

1917 թվականի փետրվարի 26-ին սկսվում են փետրվարյան դեպքերը։ Աշխարհից դառնացած անհանգիստ հոգին՝ Զարենցը, անվերապահորեն ձուլիում է բարձրացող հեղափոխության ալիքներին, մասնակցում է բանվորական խմբերի ելույթներին։ Նա մի որոշ ժամանակ կորցնում է Կարինեին, որը նույնպես միացել էր հեղափոխության ալիքին և արդեն աշխատում էր հեղկումում՝ որպես մեքենագրութիւն, գործերի կառավարիչ, հետագայում երբեմն էլ հսկում էր սպահակակետերը։ Փետրվարի վերջերին Կարինեն զինվորական զգեստի մեջ հերթ էր պաշտպանում պարենամթերքի խանութիւն առաջ։ Մի խումբ խավար կանայք հարձակվում են Կարինեի վրա, շփոթելով նրան հրեա աղջկա հետ։ Այս խանութիւն առջևն էլ հենց այդ պահին Զարենցը գտնում է մրտերմուհուն։ «Ահա մի օր, երբ հրացանս ուսս հերթ էի սպաշտպանում, Զարենցն այնպես բղավեց գեռ հեռվից, ոս խեղճ կանայք վախեցան... «Դու կենդանի՞ ես, Կարինե...»։

1 Քաղվածքները բերում եմ հուշերի այն օրինակից, որը Կ. Քոթանյանը տրամադրել է ինձ։

Հեղափոխության այս մինուրտում Զարենցը չէր կարող երկար մնալ, քանի որ շուներ ապրուստի միջոց։ Կար նաև զլխավորը. նրան հուզում էր իր հեռավոր եղերքի ճակատագիրը։ Նա այդպես էլ ասում է ընկերուհուն. «Էլ ինչ, հալ շունեմ, էլ մնալ չեմ կարող։ Ահազին գրականություն են տվել, գնամ, մեզ մոտ էլ շատ գործ կա անելու»։ Մոսկվայից վերադառնում է 1917 թ. մարտի սկզբին։ Նրան ճանապարհ է դնում ամազոնուհու կերպարանք առած Կարինեն՝ զինված ընկերուհուն։ Զարենցը նրան նվիրում է «Հեռացումի խոսքեր» բանաստեղծությունը, ասելով. «Կարդա, նոր եմ թիւեց։ Դա ամփոփումն էր «Ծիածանի» կամ նրա առավել հողեղին արտահայտությունը։

Ես երգել եմ քո հոգին, քո ժամփառ լուսավոր,
Քո աշքերի, քո գեղքի տիրությունը սրբազն։
Կյանքս թողած անհունում—ես երգել եմ սերը խոր
Ու կարութ թերիս, որ երբեք քեզ շհասան...
— Ի՞նչ չէ մինի, քո՞ւր իմ, քո՞ւր, հեռանալիս, շանիձե՞ս
Խե՞զ կարութ թերիս, որ երբեք քեզ շհասան...»

Այս բոլոր կարուտների ու կորուստների հետ միասին նա իր հետ տանում էր մի ինչ-որ թանգագին բան՝ նորագույն հեղափոխական շարժումների շունչը, որ գնալով պետք է ժավալվեր նրա հոգու և կյանքի վրա, դառնար իշխող էություն։

1917 թ. մարտին նա կրկին Անդրկովկասում է, Կարսում, Թիֆլիսում, էրզրումում։ Կարսում ապրիլին հանդիպում են իրար զեռ ծխական դպրոցում միասին սովորած Տաճատ Ալեքսանյանը, Զարենցը և նրանց ընկերուհին՝ Կարինեն, որն արդեն եկել էր Մոսկվայից։ Նրանք որոշում են հրատարակել մի ամսագիր՝ «Կարմիր աստղ» խորագրով։ Գեղարվեստական նյութերը պետք է պատրաստեր Զարենցը, քաղաքական-հասարակական՝ Տաճատը։ Կարինեն հանձնարարում են թարգմանել Գարշինի «Կрасный цветок» պատմվածքը։ Թարգմանելով այդ երկը, Կարինեն թողնում-հեռանում է շրջան, որբանոցում աշխատելու։ Թե ի՞նչ եղավ ամսագրի հետ, հայտնի չէ։ Բայց այս փաստը նույնպես ցույց է տալիս երիտասարդ Զարենցի ներքին կյանքի ընթացքը և

մտորումների ուղղությունը, որն արդեն կապված էր ծավալ-վող հեղափոխության հետ։

Նույն 1917 թվականի աշնանը նրան տեսնում են նաև Թիֆլիսում, շարժման ու աղմուկի մեջ, կյանքի կենտրոնում։ «Եղիշե Զարենցին առաջին անգամ տեսել եմ 1917 թվականի աշնանը, Թիֆլիսում։ Քաղաքացին դումայի առջև էին հավաքվում այդ օրերին այլևայլ քաղաքական հոսանքների պատկանող գործիչներ, բուռն ու հախուն վիճաբանում ու քննարկում էին իրարամերժ ծրագրեր, եռում էին ու աղմկում։ Բացօթյա այդ դիմուտները հին Աթենքի իմաստունների վեճերն էին հիշեցնում Աթենպագոսում։ Զարենցին միշտ տեսնում էի այդտեղ իր ընկերոց հետ», — հիշում է Մ. Մազմանյանը։

Այս խառը մինուրտում բանաստեղծն արդեն գիտեր իր անելիքն ու տեղը։ Իզուր չէին անցել մոսկովյան օրերն ու ապրումները։ Բոլորն էլ գիտեին, որ նոր բանաստեղծի համակրանքը կոմոնիստների կողմն է։ Նա ապրում էր բարդ, անհանգիստ կյանքով։ Պատանի բանաստեղծը և զինվոր էր՝ «աշխարհի բեռը ուսերին առած», և բանաստեղծ՝ Հայրենիքի վիշտը ամբարձ սրտում, և հեղափոխական տրամադրություններով տարված քաղաքական գեմքի նա տալիս է ուշագրավ, անհավասարակշիռ, բովանդակալից կյանքի օրինակ։ Հենց միայն որոշ երկերի տակ նշված թվականներն ու վայրերը շատ խոսուն են... «Տեսիլաժամեր», Կարս, 1915 թ., աշուն, «Կապուտաշյա հայրենիք», 1915 թ., գետրվար, «Դանթեական առասպեկտ», 1915—1916 թթ., Տաճկաստան—Պարսկաստան, Հայկական յոթերորդ կամավոր բանակ, «Ալթիլլա», 1916 թ., Մոսկվա, «Ազգային երազ», 1917 թ., գեկտեմբեր, 1918 թ., գետրվար, էրզրում—Թիֆլիս։

Ալսպես անընդմեջ շարժման մեջ էր բանաստեղծը՝ աշքերի մեջ պահած երջանկության մի առասպել, դառնալով ողբերգական, բայց ուժեղ անձնագորություն, որին հատուկ են անկման արագությունը, կյանքի հատակի ու բարձունքները, արտաներն ու առաքինությունները, բայց որի մեջ մշտապես բազում ակունքներից գոյանում է սրբազն, ազնիվ ներշնչանքի բուռն հոսանքը, այնքան հայկական, այնքան մոտիկ իր ժողովրդի ոգուն։

Պարկեշտ պատմաբանները ձգտում են ողջ դրականությունը և գրական մարդկանց վարքը շափել առաքինության ընդունված և կաղապարված սխեմայով, նրանց զրկելով բազմերանգությունից, ստվերներից, շեղումներ և մարդկային թուլություններ ունենալու իրավունքից, այսինքն՝ ամեն ինչ գնահատում են մանկավարժական տրակտատների և վարժապետական կենցաղի շափանիշերով։ Զարենցը հեռու էր առաքինության այս տաղտկալի շրջանակներից, մարդ էր՝ ընդունակ շեղումների և ներշնչումների, մարդ, որն ուներ բացառիկ տարողունակություն՝ ընկալելու և ամբարելու մեծագույն տրամադրություններ և երևույթներ, մարդ, որն ընդունակ էր իր կարճատև տարիների հրդեհով հազարավորների համար նշելու կյանքի ուղիներու ֆամանակը հոգատար չէ այսպիսի բացառիկ ծնունդների նկատմամբ։ Բալզակը հրաշալի է բնութագրում մեծ անհատի վիճակը քաղենի հասարակության մեջ։ Այդ շրջանն ամեն ինչ անում է, որպեսզի գրողն այլևս չկարողանա ստեղծել երկրորդ տաղանդավոր երկը։ Այդ ամենի մեջ ամենամեղմն, ասում է նա, — թերևս այն կլիներ, եթե ուղղակի ատրճանակից կրակ բացվեր տաղանդի ճակատին։

Զարենցը խոր է զգացել քաղքենի շրջանի պատճառած դառնությունը և միշտավայրի անտարբերությունը։

... Ու ձմուն բուքերի միջին ես բորիկ ու մերկ մնացի. — Դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հողուդ մեջ ամառ է, ասին։ Ասի թէ՝ մա՞րդ եք ախար դուք, չե՞՞տ տեսնում մարմինս ծիլատ. Զարենցի հոգին տաղերում աննկուն, համառ է, ասին։ Ինդացին, բրչացին միայն, որ այդպիս մնացել էմ մերկ. — Փարերի հիացմունքը զեւմ տաղերից համար է, ասին։

Այսպես մորմորում է Զարենցը՝ քաղենի լեգենդի դեմ, լուրովի բացելով ո՞վ գիտի որերորդ անգամ կրկնվող բանաստեղծի հինավորց դրաման։

Փամանակը, իրոք, մեծ բեռ էր դրել Զարենցի ուսերին, շատ վաղ կնճռապատել նրա զեմքը։ Նա գրում է զարմանալի հասուն երկեր, բոլոր ճամփեքի վրա, ամենուր տեսնելով աղդային աղետի երևույթները՝ Կարսից—Թիֆլիս, Թիֆլիսից—Մոսկվա, Մոսկվայից—երգրում։ Գրում է նշանավոր պումբերը՝ «Կապուտաշյա հայրենիքը», «Դանթեական առա-

պելը», «Ազգային հրազը», «Աթիլան», «Վահագնը». գրում է քնարական շարքերն ու գրքերը՝ «Հրո երկիրը», «Միածնը»։ Դրեթե պատանի, նա արդեն նորովի ստեղծում էր ազգային երգը, դառնալով հայ բանաստեղծության բախտի տերը։ Այս տարիքում դա արտակարգ երևույթ էր, թվում է մի անսովոր շեղում բնական վիճակից, պատանեկան հասակի հնարավորություններից։ Բայց բնությունը անում էր իր գործը։ Զարենցը մերթընդմերթ վերադառնում էր տարիքի անխուսափելի պահանջներին՝ պատանի հոգու խենթ երազներին, տալիս էր հասակի տուրքը և վայ բնականը նույնպես թվում էր խիստ անբնական, մինչև անգամ՝ հանցանք։ Այդպես էր եղել նաև Բայրոնի, Լեռմոնտովի, Սսենինի հետ։

Իրոք, դաժան իրականության մեջ, բանաստեղծի հոգում ծաղկում էին նաև խենթ երազներ, հեռավոր ափերի որոնումների տագնապները, որոնց, իհարկե, վիճակված չէր երկար կյանք։

Այդպիսի երազներից է 1918 թ. «Ճամփորդությունը»։ Վաղ գարնանը նա վճռում է դուրս գալ մեծ աշխարհ, վնալ մինչև Զինաստան։ Ընկերոց՝ Վիվանի (թարգմանիչ, արձակագիր Անուշավան Զեղեցյան) հետ կապկապելով քարտեզները, գրքերն ու թղթերը, նրանք գուրսւ և գալիս մեծ ճանապարհի, Առաջին իսկ քայլերին նրանց երազները փշուր-փշուր են լինում կյանքի հարվածներից։ Ամենուր նրանց հանդիպում են արևմտահայ գաղթականներ, էրզրումցիներ, կարսեցիներ, որոնց թշել էր «պատերազմի թաթը»։ Նրանք հասնում են մինչև Սրմավիր։ Դնացըք կանգ է առնում, քանի որ հյուսիսում կոփվներ էին գնում։ Զարենցի ընտանիքը այդ օրերին արդեն հասել էր Հյուսիսային Կովկաս, Կարս—Թիֆլիս—Մայկոպ ճանապարհով։ Ուրիշ հայերի պես նրա հարազատները ևս վերջին հանգրվանում փորձում էին նոր տուն գնել։ Համարագեցիների օգնությամբ հարազատները գտնում են Զարենցին. ծնողները նրան իրենց հետ տանում են Մայկոպ։ Ճանապարհորդությունը ավարտվում է։ Երիտասարդ գրող Վիվանն էլ հիվանդանում է և պակում հեռավոր բարեկամի տանը։ Ցնդում են պատանեկան որոշումներն ու երազները։ Մնում է միայն մի շնաղ բանաստեղծություն, անթառամ մի էջ՝ «Հարդագողի ճամփորդները», ծնված «Ճամփորդու-

Բյունից» ըլու առաջ, տենդարն և բառների վահնդին, — որը Զարենցը նվիրել է Վիլանին:

Զարենցի հայրը՝ Արգար աղան, մալրը՝ Թելին, քույրը՝ Աշխենը և եղբայրները՝ Սերոբը, Սողոմոնը, Գեղամը հիմնավորվելով Մայկոպում, ստեղծում են իրենց տունն ու այգին: Զարենցին նվիրված մի հոգվածում գրված է, թե նա եղբայրների հետ միասին, Մայկոպում տուն է կառուցել և աճեցրել հրաշալի այգի: Դա հերթափառ է: Քույրը՝ Աշխենը, պատմում է, որ Զարենցը մնաց մի կարճ միջոց, փորձեց օգնել հարազատներին, բայց ոչինչ շհաջողվեց: Նա շեր կարող լինել նստակյաց, դառնալ տանու մարդ, երբ աշխարհը շուռ էր եկել: Նրա խառնվածքը ուրիշ էր... Ամենից ավելի ծղիշեն կապված էր մոր հետ, սիրում էր նրան առանձին քնքշանքով. հեռու ճամփաների վրա, օտար ուղիներում բանաստեղծ որդուն հաճախ էր այցի գալիս մոր սրբազն կերպարը: Նրա զահել կյանքի և անհանգիստ օրերի պատմությունը, հոգու ողջ քնքշանքը արտացոլված է «Մորս համար գագել» բանաստեղծության մեջ: Ջինչ ու զուզալ տողերի մեջ զգացվում է մայրական հոգու անծիր տիրությունը, լըսվում է օտար ուղիներ ընկած որդուն անքուն կարոտի և սիրո հավերժական զողանքը.

Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
Լույս խորշումներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:

Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենին
Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ ու անգին:

Նստել ես լուռ ու տիսոր, հին օրերն ես հիշում այն,
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց, —
Ո՞ւր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:

Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞վ է արդյոք, թե մեռած,
Եվ ի՞նչ դռներ է ծծել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ երբ հոգնած է եղել, և երբ խարզել է սիրոց—
Ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Մտորում ես դու տիսոր, և օրում է թթենին
Տիրությունը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին:

Եվ արցոնքներ դառնադի ահա ընկնում են մեկ-մեկ
Թո ձեռքերի վրա ծեր, մայր իմ անուշ ու անգին:

Այսպիս նրբին էր նրա սերը, անձնական աշխարհը, այսպիս հաճախ էր մոր կարոտը ծավալվում նրա թաքում աշխարհում... Դա նրա հոգու մի սրբազն մասն է: Բայց Զարենցը, այնուամենայնիվ, պատկանում էր դրսին: Նրա հոգին թռչում էր դեպի մեծ աշխարհն ու անցքերը, փոթորկու տարեքը:

1918 թ. Զարենցի կյանքում տեղի ունեցավ մի նոր իրադարձություն, որը բախտորոշ եղավ: Հարավային Ռուսաստանում կատաղի մարտեր էին մղվում: Քաղաքացիական կոհիվը առանձին թափ էր ընդունել Ցարիցինում: Զարենցը մինչ այդ էլ, գեռ 1917 թ., համակված էր հեղափոխական տրամադրություններով և հարում էր կարմիրներին: Եվ ահա թափառական որդին կրկին թողնում է հարազատների շրջանը: և հեռանում Մայկոպից:

Շուտով նա ընկնում է Ցարիցին և որպես հասարակ զինվոր մտնում կարմիր զորքերի շարքը: Բանաստեղծ զինվորը ամոռն ամիսներին կարմիր զորքի հետ անցնում է ոռուական ստեղնաբներով, արգեն գնում է իր փայտայած «բարձր ու հին երազների ճանապարհով»: Նրա անձնական կյանքում տեղի է ունենում հոգեբանական մի բացառիկ վերելք, որը, ինչպես այդ հատուկ է մեծ անհատներին, հսկայական դեր է խաղում նաև գրական ու հասարակական հոգեբանության մեջ:

Մինչ այդ, հայկական վերջին անցքերը նրան կարող էին տալ միայն դառնություն ու մաղձ: Կյանքը, բառիս բռն իմաստով, ցրում էր մարդկանց ու ողջ ազգությունը, ճանապարհներին մեռնում էին անօթևան մարդիկ ու որշերը: Այս ուղիների վրա, հավաքական ամրողությունը կորցրած հայ մարդիկ քայլում էին աշխարհի սառն ու անտարբեր հայացքի առաջ: Նրանցից մեկն էր Զարենցը. Նա շափազանց նուրբ էր հյուսել իր սերնդի տիսոր կյանքի այդ թափառիկ հոգիների պատմությունը շատ ոտանավորներում և հատկապես «Հարդագողի ճամփորդներում» (1916—1917 թ.թ.).

Ու մշուշոտ մեր աշքերը հավիտյան
 Որոնեցին պատահական աշքերում
 Հարդագողի ուղիները ոսկեման,
 Նրա անծիր, անձայրածիր այն հեռուն
 Բայց աշքերում նրանք երկինք չտան,
 Ու սրտերում արեգակներ ոսկեվառ.
 Ու բգկավեց հայացքներից անկենդան
 Որբ սիրտը մեր՝ երազորեն-հոգեվար

1919 թ. «Տաղ անձնականում» նա կրկին դառնում է նույն թեմային, նույն ողբերգությանը: Այս բանաստեղծության ամեն տողը կենսագրական իհաստ է. ամեն մանրամասն խոսում է Զարենցի հոգու, գործի և առօրյայի մասին: Բայց այս անձնական տաղը, կարելի է ասել, յուրովի խտացնում է սերնդի և հայրենիքի ցավը:

Անց եմ կենում. շուրջս—մարդիկ, շուրջս դեմքեր հազա՞ր-հազա՞ր.
 Շուրջս աշխարհն է ազմկում, մարդկային կյանքն անհավասար.
 Եվ ո՞վ կասի՞ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ո՞ւր հաւար,
 Դնմքերը, ա՞և, բով են այնպես՝ կարծես շինված են տապարով:

Անհատական և ազգային մենակության այս թեման յուրավի մշակել էին նաև նրա անմիջական նախորդները՝ Սիամանթոն և Տերյանը: Բայց այս տառապալից մենակությունը նոր օրերին, հասկանալի պատճառներով, ավելի էր սրվել, գարձել ճակատագրական, գարձել սպառնալից: Եվ, ահա, ուռական ստեպներում, հիսամթափված ու ծվատված հոգին կրկին հարություն է առնում: Նրա աշքի առչե տեղի է ունենում անսովոր, արտակարգ մի բան. ժողովրդական տարերի խտացում և շերմացում, հոգիների մեծ եղբայրություն, հավատի ու հույսի ընդհանրության ծնունդ: Մեծ եղբայրության և պայքարի շրջանում նա առաջին անգամ զգում է մարդկության հրաշագործ ուժը, ֆիզիկական և հոգեկան վիթխարի էներգիան: Այժմ արդեն տառապանքի ուղիներով անցած բանաստեղծի առջև բացվում են նոր հորիզոններ, քանի որ այս նոր իրադարձությունները բերում էին զարմանալի պայծառ սկզբունքներ՝ ազգերի հավասարության և եղբայրության մասին, որը մի առանձին իմաստ է ձեռք բերում արնաքամ երկրի համար: Մի ժամանակ նա մորմոքում էր, մի ժամանակ նրա տաղերից դառնություն էր կաթում:

Եվ երբ բարչ տվին դիակդ արնաքամ,
 Որ նետեն քաղցած ոհմակներին կեր—
 Մեր կյանքի հիմերն անդունզը ընկան
 Եվ արնոտ միզում ճարճատում են դեռ...

Ի՞նչ ոգևորություն է ապրել այս տողերի հեղինակը, ինչ անօրինաց կ ոգևորություն, գտնելով ժողովրդի գոյության այս նոր ակունքն ու հիմերը:

Անշուշտ հայ մարդու համար սոցիալիստական հեղափոխության խնդիրները նոր չէին: Բազում հայ գործիչներ մարտիկներ արյուն էին տալիս հեղափոխական մարտերում, քաղաքացիական կոփվներում, ոռուսական հողի վրա՝ մարդկության վաղվա համար: Հայ բանաստեղծության համար ևս հեղափոխության խնդիրը բնավ նոր չէր, նրանց հանդիպումը տեղի էր ունեցել դարասկզբին: Բայց կարելի է ասել, ամբողջ ուժով բանաստեղծության մեջ առաջին անգամ էին առնչվում ազգային ողբերգությունը և միջազգային հեղափոխության հերոսական ոգին:

Չարենցը, մի որոշ ժամանակ մնալով հեղափոխական բանակի շարքերում, անձամբ տեսնում էր բարձրացող ալիքը, հարձակվում էր և նահանջում, անձամբ կրակում էր թշնամու վրա՝ հեղափոխության կարմիր արյանը խառնելով իր բանաստեղծի արյունը: Կենսագրական այդպիսի մի դրվագ է նկարագրված «Կոմունարների պատը Փարիզում» պոեմի մեջ: Ի՞նչ է տեսել նա քաղաքացիական կոփվների ճանապարհին: Ամենից առաջ հերոսություն, բայց զոհողությունների ու կախաղանների գնով, արյան գնով: Կախաղաններ, եղբայրական շիրիմներ... Այդպես մի օր, դառն պարտության ժամանակ նահանջել է և ինքը: Բայց...

Այսպես է ահա, Պեր-Լաշե՛զ!
 Ես փրկեցի կաշիս,
 Բայց անողո՞ք եղա,
 Երբ Կարմիր բանակը կրկին
 Մտավ քաղաք:
 Ե, երեք օր շանցած ես ունեի արդեն
 Կարմիր ձեռներ...

Այս բոլոր ապրածը, տեսածն ու լսածը արտահայտվեցին հեղափոխական պոեմներում: Նրանց մեջ ես ահա ընդդեմ

վում էին անձնական լիցքն ու երազը. ինչոր շափով գրանք ևս «անձնական» պոեմներ էին, թեև միաժամանակ ամենահասարակական հրեւությներն էին մեր նորագույն բանաստեղծության մեջ։ Անձնականի և հասարակականի, ազգայինի և համամարդկայինի այս առնչությունը բանաստեղծի հոգում ծնեց մեր գրականության բազմադարյան ճանապարհի համար անսովոր մի ոգևորություն։ Զարմանալի երեւությներ էին բանաստեղծի սանձարձակ երևակայության, կրթի ու զերմության համաձուլվածքից ծնված նոր երկերը՝ «Սոմա», «Ամրոխները խելագարված» պոեմները։

Քաղաքացիական կորիների այդ դրվագներում երեսում էր նաև հայ մարդը, որի ոգևորությանը անօրինակ ուժ էր տալիս տառապանքներից դուրս նետվելու ճիգը, ապրելու և հարատելու տենչը։ Այդ պոեմները ցնցեցին հայ մարդկանց, «ամպրոպի պես պայթեցին» (Գ. Մահարի) և մաքրեցին օդը, դառնալով նոր կյանքի հիմն։ Ողբերգության և որոնումների պահին Հարդագողի մեծ ճամփորդը՝ Ե. Զարենցը, բացեց հայկական բանաստեղծության նոր էջը, իր բացառիկ բնազդով և մտքով հասկացավ պատմական անցքերի կենսական դերը մոլորակի կյանքում և իր փոքրիկ հայրենիքի ճակատագրի մեջ։ Մեր ազգային նոր երգը ծնվեց ուազմի դաշտում, ողջ մարդկության ազատության համար մղվող մարտերում։ Հայ բանաստեղծը խոսում էր աշխարհի հետ։

Հեռո՞ւ, մոտիկ ընկերներին, —աշխարհներին, արևներին, —
Հրանման հոգիներին...»

Բանաստեղծության պատանի ասպետը առաջին անգամ կանգնում է բուն հրաշքների առջև, ապրում է երջանկության և հպարտության բացառիկ օրեր ու ժամեր՝ տարերային մեծ շարժումների, մարդասիրական իդեալների ու զգացումների մթնոլորտում։ Առաջին անգամ հայ բանաստեղծը ներքնապես խաղաղվում է. մտածելով ապագայի մասին, նա զգում է իրեն որպես գալիք մարդկության լիիրավ զավակ։ Այսպես, ահա, զալիս է լիցիների երրորդ, ամենանշանակալից շրջանը։ 1917 թ. հեղափոխական բուն անցքերը, ժետրվարյան հեղափոխությունը, միապետության անկումը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը,

քաղաքացիական կորիները հսկայական լիցքեր են տալիս բանաստեղծին և, ամենազգխավորը, նրա մտավոր հայցքի առջև բացում են նոր հորիզոն, շափազանց մոտ և շոշափելի դարձնում կյանքի հեռանկարները։

* * *

Բայց ոչինչ հարթ ու խաղաղ չի եղել բանաստեղծի կյանքում։ Նրան չէր վիճակված օլիմպիական խաղաղ ընթացքը՝ իմաստության և պոեզիայի ճանապարհին։ Նրան վիճակված չէր նաև մշտապես մնալ հոգեկան վերելքի և հեղափոխական ոգևորության մթնոլորտում։ Հարդագողի ճամփորդին մի անհեռնություն էր դուրս է բերում հայրենի եղերը։ 1918 թ. վերջերին նրան տեսնում են Անդրկովկասի քաղաքներում։ Թիֆլիսի երիտասարդությունը նրան արգեն գիտեր, համարում էր հեղափոխական-բոլշևիկ, ոմանք մինչև իսկ դեպի Հյուսիս ունեցած նրա զերմությունը դիտում էին ազգային իդեալների նկատմամբ զավաճանության պես մի բան։ Այսպես է նրան հիշում ականատեսը. «Այդ օրը Վենյամինովսկայա փողոցի անկյունում կանգնած ժամանակ մեզ մոտեցավ մեր լավ սովորող աշակերտներից մեկը՝ ներկայում Մոսկվայում բժշկագիտության պրոֆեսոր Արամ Ղուկասյանի մեծ եղբայրը, որն արդեն ավարտել էր ունալական դպրոցը։ Նա մենակ չէր, նրա հետ կար նաև մեզ պես վատ հագնված և վատ սնված, խուզարկու աշքերով, հարցականի հայցք ունեցող տգեղ մի պատանի։ Ռեալիստ Ղուկասյանը ներկայացրեց իր նույնապես ունալիստ ընկերոջը—Եղիշե։ Զարենց, «Դանթեական առասպեկլի» հեղինակը»¹։

Այդ օրերին, 1918 թ. վերջին կամ 1919 թ. սկզբին, նա մի ամիս շարունակ երևում է մի ուրիշ երիտասարդի՝ ներսիսյան դպրոցի շրջանավարտ Գևորգ Աբովյանի (Աբովի) հետ։ Շուտով նրանք մեկնում են «անհայտ» ուղղությամբ, թողնելով Թիֆլիսի վեճերն ու ասպարեզը։

Նա անհանգիստ, անվերջ շրջում էր Կովկասի քաղաքներում, հարսում, թիֆլիսում, երևանում։ 1919 թ. սկզբին

1. Հ. Թուշյան, Հարդագության բարեկամ, ԳԱԹ, Զարենցի Փոնդ։

Երևանում նրան հանդիպում է դպրոցական ընկեր Աշոտ Փալանջյանը: Նրանք միասին մեկնում են Կարս և աշխատում պարենավորման գծով: Նույն թվի ամռանը Երևանի այգում նրա հետ ժանոթանում է որրանոցի սան, բանաստեղծ Գուրգեն Մաշարին:

1919 թ. մի կարճ միջոց թուրքերը ետ էին քաշվել հայկական մի շարք գյուղերից ու քաղաքներից: Ամենուր սով, հիվանդություն, անտարբերություն, գունատ, մեռնող մարդիկ, ընտանիքներ, ժողովուրդ... Դրախտից՝ դժոխք, երկնային երջանկությունից՝ կրկին գանթեական սարսափներ, տիեզերական ոգեգործությունից՝ կրկին տառապնիքների աշխարհ: Այսպես հակասական էր կյանքը մի բանաստեղծի համար, որը մարդկության զավակն էր, սակայն չէր գտնում այդ մարդկության մի մասը կազմող, բայց մերժված հայրենիքում մի հանգրվան:

Այս մթնոլորտում անասելի դժվար էր պահպանել ստեղծագործական խիթճն ու հավասարակշռությունը: Եվ սակայն կյանքում անհավասարակշիռ, նյարդային, տաքարյուն բանաստեղծը ներքնապես ուներ ամբողջական և նպատակասլաց մի աշխարհ: Նա ընկալում էր հայկական կյանքը՝ խոհերի և զգացմունքների բաղում երանգներով, բազմաթիվ կողմերից: Պատանի բանաստեղծը կրկին զգում էր իրեն վիճակած կոչումը, նա և՛ պատմություն էր ստեղծում՝ գեղարվեստի լեզվով տալով իր ժողովրդի հոգեկան բազում առջնարդությունները, և՛ որոնում ուղիներ վաղվա համար, բանի որ միայն այնտեղ, միայն գալիքում էր թաքնված հայության ինել-Ալինելու ճակատագիրը:

* * *

Ահա նա կրկին իր հողի վրա է, իր ծննդավայրում: Ի՞նչ անելի Կարսի ամբողջ շրջանը սարսափելի վիճակի մեջ էր, քաղցն ու համաճարակը հնձում էին մարդկանց: Այստեղայնտեղ կրկին լսվում են անձնազո՞ն մարդկանց ձայները՝ գնալ հայրենի քաղաքներն ու գյուղերը, օգնել ժողովրդին, շարունակել կյանքն ու միտքը: Այդ ազնիվ ձգտումներով համակված՝ Կարս են մեկնում ներսիսյան, Գայանյան և Հով-

նանյան դպրոցն ավարտած տղաներն ու աղջիկները, Ռուսաստանում և Կովկասում ցրված զարսեցիները նրանց միանում է նաև բանաստեղծ Զարենցը: Մոսկվա, Ցարիցին, Թիֆլիս, Կարս և Բաշքյաղիկլար,— ահա նրա ուղին:

1919 թ. ամռանը Զարենցը Արովի հետ երևում է Կարսում: Նրանք որոշում են գնալ գյուղերից մեկը՝ ուսուցչության: Կարինե Քոթանջյանը պատմում է, որ նրա տեսքը անմիտիար էր, հագուստները՝ խունացած և հնամաշ, իսկ կոշիկները՝ պատոված: Նորելուկ ուսուցչին տեսքի բերելու համար մտերիմները ուզում են ամերիկյան օգնության հակերից հագուստները ընտրել, բայց նա հրաժարվում է: Ի վերջո, մի կերպ այդ հակերից գտնում են մի զույգ կոպիտ կոշիկ և համոզում նրան հագնել: Կարինեն և բույրը կոշիկները տեսքի են բերում, ներկում, քուղ գործում և հացցնում: Որոշ ժամանակ ուսուցիչները դեռ մնում են Կարսում: Նրանք անձնագիր չունեին. Զարենցը որոնում է պարսկական անձնագիր և հարկավոր էր նման անձնագիր ձեռք գցել նաև Արովի համար, այսինքն՝ կաշառքի համար փող աշխատել: Արովը մի որոշ ժամանակ մոտակա երկաթուղային կայարանում բեռնակրություն է անում: Վերջապես հոկտեմբեր ամսին, ինչպես հիշում է Արովը, նրանք արդեն աշխատանքի մեջ էին:

Արդեն վեց գրքի հեղինակ Սղիշե Զարենցը Կարսի խոռվագործում՝ Բաշքյաղիկլարում, հայրենիքի մի տանջահար անկյունում, հասարակ ուսուցիչ է զառնում իր պետական ճակատից գարձած մի տրիշ երիտասարդ բանաստեղծի՝ Գևորգ Արովյանի (Գևորգ Արովի) հետ:

Զարենցը կրկին ժողովրդի հետ էր, կյանքի ու սարսափների մեջ: Իր ժողովրդի ճակատագրին նա այս անգամ արդեն նայում էր այդ փոքրիկ անկյունից... Սակայն այստեղ ևս տեղի էր ունենում մի տանջալի դրամա, քանի որ այդ փոքրիկ բնակավայրում նույնքան ուժգին զգացվում էին ողբերգական ցնցումներ: Զարենցը այս անգամ մանուկների մեջ էր, ապրում էր երկրի վաղվա օրվա ծանր տագնապը, անմիջապես զգում էր իր ժողովրդի աներեակայելի մաքառումը: Հովհաննեսի պատման մասնակի ամեն օր, ամեն պահ սրտին ընդունում էր բախտի դաժան հարվածները... Եվ այդ հարվածները իշնում էին ամենաքնքուշ և անպաշտպան արարածները:

թի՝ երեխաների վրա։ Դեռք Աբովը թողել է այդ ծանր մթնութորտի ազգեցիկ պատկերը։ Ահա դպրոցը աշնան և ձմռան օրերին, ահա ճնճղուկների պես ցրտահար երեխաները, որոնց ցուցակը դասամատյանում օր-օրի նոսրանում է...»

«Գալիս էին ցրտից դողալով, քաղցած, շատերը լնդախտից ուռած։ Բայց գալիս էին։ Զարմանք ու հիացմունք էր պատճառում ուսում ստանալու համառությունը, և այդ ոգեշվորում էր մեզ։ Բայց ահա գալիս է փոքրիկ Արծվիկը՝ ոտքերի մաշկը ճաքճած, կոպերն ու այտերը ուռած, շրթունքները կապուտ, աշքերը ջրակալած։ Մի օր էլ բացակայեց։ — Ո՞ւր է Արծվիկը...»

Երեխաները լուր նայում են իրար։ Եվ մեկը՝ քաշվելով, ասես հանցավոր, հայտարարում է.

— Մեռավ։

Եվ կարծես թե այդ զարհուրելի բառը դարձել է անբովանդակ։ Դարձել էր սովորական։ Մահվան պատճառը հասկանալի էր, բացատրելու կարիք չկար։

Շարունակվում էր դասը։

— Իսկ ինչո՞ւ Արշամը չի եկել։

Երեխաները գլուխները կախում են, նայում են ուսուցիչն տիրությամբ։ Պատասխանի կարիք չկա, պարզ է, Դասը շարունակվում էր։

Այս մթնոլորտում էլ, ահա, թանձրանում, ահագնանում է տաճապը։ Մեռնող երեխաների գեմքերը անջնջելի մըռայլ կնիք են զնում բանաստեղծի հոգու վրա։ Ցարիցինի կարմիր զինվորը և գլուղական ուսուցիչը գրում էր նոր երեկո՝ տրամադրությունների ընդգծված ծայրաբնեռներով և բացառիկ անկեղծությամբ։

Կյանքը նրա խառնվածքին տվել էր որոշ ողբերգական շերտեր։ Հայ գրողներից ոչ մեկը նրա պես, նրա շափ չի նայել մահվան աշքերին, անգամ արեմտահայ նահատակ բանաստեղծները։ Հայոց նորագույն երգի այդ գլխատված ասպետները ամենավերջում զգացին ողջ աղետը, խաչվեցին անապատներում, ճանապարհներին, խաժամուժի ձեռքով, ծողովրդի հետ միասին, մրմնջալով սիրո և սարսափի վեր-

ջին խոսքերը։ Զարենցին վիճակված էր քայլել հենց այդ սարսափիների միջով, թեքվել ընկերների դիակների վրա, զգալ մեծագույն ցավը՝ երեխաների հոգեվարքը, լսել մահվան գերանդու անողորմ սովորը հայկական հովիտներում։ Ամայանում էր հաղարամյակների երկիրը, կործանվում էր կյանքը։

Նա լարված, շիկացած, հակասական վիճակի մեջ էր։ Որպես մարդկության զավակ ապրում էր վառ երազներով, ալրվում էր խելազար ամբոխների վառած հրդեհներով, տեսնում ժողովուրդների եղբայրության մոտիկ ապագան։ Բայց դրա հետ միասին կար նաև մի ուրիշ ցավագին հակասություն՝ մարդկային մեծ վերելքի և ազգության ճակատագրի միջև։

Մեծ երազներ տեսնող Զարենցը, որպես ազգության զավակ, մորմոքում էր նորագույն ցավերի մեջ, քանի որ լուսավոր ապագայի նախօրյակին մեռնում էր իր հայրենիքը, իր ժողովուրդը։

Բանաստեղծությունների մեջ երևան է գալիս այդ խոր կակիծը։ Նա հյուսում է «Ողջակիդվող կրակը»՝ ամբողջովին հյուսված «իրարամերժ», ալվելի ճիշտ, բնական, բայց բնեուացած ապրումներից, որոնց մեջ, այնուամենայնիվ, ազգության զավակը հույսով, հավատով, սրբազն դողով է նայում ժողովուրդների գալիքին։ Ահա այս հոգեկան ծանր լարումների օրերին եղավ այն բախտորոշ գեաքը, որի մասին տիրուրախ շեշտերով է գրել Զարենցը։ Ամենադրամատիկ օրերին աղետների, լուսե մարդկանց կորուստների, կապույտ մանկության կանաչ բարդու սրածման պահին, տեղի է ունենում բանաստեղծի, այսպես կոչված, հասարակական «հայտնագործությունը»։ Բանաստեղծական երջանկության երազած պահի վրա անգամ մոայլ ստվեր է իշնում։

Մանկական երազում տեսած
Շուքերի նման չկային
Մանոթներս—լուսե մարդիկ...
Դարձել եր—սրբի հեսան
Կապույտ մանկությունը իմ—
իմ էանաչ, պայծառ բարդին...
էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս,
երբ մի լուրջ քննադատ մի օր

¹ Նույն տեղում, էջ 115։

Սարսելով դահլիճն ու ֆոյեն—
Ավետից ամրող աշխարքին,
Որ ծնվել է—մեծ մի պոեա...

1919թ. հոկտեմբերի 18-ին (պետք է տեղի ունենար 11-ին) պառամենտի դահլիճում տեղի է ունենում Հայաստանի գրական ընկերության երեկոն՝ նվիրված Զարենցին։ «Մի նոր բանաստեղծ» խորագրով բանախոսություն է կարդում ն. Աղբալյանը, վերլուծելով «Երեք երգը», «Միածնը» և «Դանթեական առասպելը»։

Բայց ահա մի նոր անակնկալ Բարձրախոս մեծարվում էր մի նոր բանաստեղծ, այնինչ ոչ ոք չփառեր՝ որտե՞ղ է նա, ի՞նչ է անում, քանի՞ տարեկան է, ո՞ղջ է արդյոք, թե՞ մեռած։

Եվ դարձյալ Կարինեն, որ այդ ժամանակ սովորում էր Երևանի մանկավարժական երկամյա կուրսերում (ի դեպ՝ Զարենցի ապագա կնոջ՝ Արինենիկ Տեր-Աստվածատրյանի հետ), բեմ է թղում և հուզված խոսք ասում Զարենցի մասին։ Կարինեն ծանոթանում է ն. Աղբալյանի և Արմենուչի Տիգրանյանի հետ, որոնք հանձնարարում են նրան բանաստեղծին կանչել Երևան։ Արովը գրում է, որ այդ լուրը Զարենցին իմացել էր թերթերից, իսկ Կարինեն հիշում է, որ ինքն է Զարենցին հեռագրով կանչել։ Հնարավոր է, որ Երևանուն էլ ճիշտ են, քանի որ թերթի լուրը և հեռագիրը կարող էին զուգադիպել Ե՞րբ է Զարենցը եկել Երևան։ Արովը գրում է՝ վաղ գարնանը հիշողության սխալը ակնհայտ է։ Կարինեն հիշում է, որ դեկտեմբերի վերջերին արդեն Զարենցը Երևանում էր, գրական սարունակություն ունի հավանական է, քանի որ փետրուարին նա արդեն գրել էր «Գալանտ երգերը»՝ նվիրված Արմենուչի Տիգրանյանին։ Ի՞նչ խոսք, այդ երգերը կարող էին ծնվել միայն որոշ մտերմությունից հետո։

Սուածին անգամ Զարենցը ոտք է զնում գրական շրջանակից ներս։ Արմենուչի Տիգրանյանը նրան հանդիպած առաջին հայ գրողն էր, եթե չհիշենք մի երկու տարօրինակ «ծանոթություն»։ Մի անգամ հեռովից նա տեսել էր Վ. Տերյանին, մի ուրիշ անգամ արդեն վաղ պատանության տարիներին, ինչպես Հովհաննես-հիշում է Վարպետի գրոյցը, Կարսում ապառեկ է ստացել Ավ. Խսահակյանից, քանի

որ խիստ զարմացած և խուզարկու հայացքով անընդհատ պտտվել էր նրա շուրջը։ Բացի այդ, նա Մոսկվայում մի կարճ միջոց շփվել էր գրական կյանքի հետ՝ առանց ծանոթությունների, որպես ընթերցող։ Ուշագրաւվ երկույթի։ Դարի բանաստեղծը գրական բարձր հասակ էր նետել գրական շըրջանից գուրս, կյանքի բովում։ Նա եղել էր ամենուր, շըրջել էր քաղաքներ ու գյուղեր, ծանոթացել կյանքի հատակին, հանդիպել բազմատեսակ մարդկանց, դգացել մեղքերն ու գեղեցկությունները, ապրել էր մարդկային հարուստ կյանքով։ Մինչ այդ նա տեսել էր մենող զինվորների հնձվող շարքերը, անցել էր լուծ քաղաքների ու գյուղերի միջով, ապրել տարերային սարսափների և վերելքների թանձր մըթնոլորտում։ Իհարկե, նա չէր կարող մինչև վերջ ապրել առանց գրական կյանքի։ Բայց արտասովորն այն է, որ նոր բանաստեղծը գրական շրջան էր մտնում մեծ վաստակով՝ տիրական հպարտությամբ։

Այսպես անհուն տիրության մեջ ծավալվեց նորագույն բանաստեղծի հոչակը, ընդհանուր աղետների մեջ նշվեց տաղանդի ծնունդը։

* * *

Ի՞նչ էր սպասվում Զարենցին այս նոր մթնոլորտում։ Նա արդեն հայտնի էր որպես իսկական բանաստեղծ։ Զարենցի ծնունդը ստացավ նաև հոգեբանական առանձին խորհուրդ։ Ուգրեմն ամեն ինչ կորած չէ, ժողովուրդը գեռ ընդունակ է ծնելու նոր տաղանդներ, շարունակելու իր մշակույթն ու բանաստեղծությունը։ Զարենցի ծնունդը այդ կենսունակության ծանրակշիռ փաստն է և ցուց է տալիս, որ հայկական մըռուայլ, աններդաշն կյանքում, հոգևոր ծանր մթնոլորտում նորից սավառում է ժողովրդական արարշագործ, ստեղծագործ ոգին։ Նոր հայտնագործած բանաստեղծին փորձում են հովանավորել որոշ ազգեցիկ մարդիկ, մի կարճ միջոց նրան շրջապատում են նաև այդ օրերի բանաստեղծական պանասի գեմքերը։ Որպես կենսագրական փաստ, ուշագրավ է ն. Աղբալյանի հուշը՝ Զարենցի հետ ունեցած առաջին հանդիպման մասին։ «Մի օր գրասենյակի մեջ նստած վարժարանների

մի նոր ծրագիր էի ուրվագծում, սպասյակս ինձ հայտնեց, թե մեկն ուզում է ինձ տեսնել, «Ներս թող», — ասացի, Մտավ աղքատիկ հագուստով մի նի՞ար երիտասարդ, անխնամ մազերով մի վտիտ զլուխ ուսերին, դեմքի մորթը դժգույն, և քաշված, քիթը մեծ ու սուրբ «Նստեք», — ասացի, — «Վ եք և ի՞նչ եք ուզում»: «Չարենցն եմ», — ասաց Երևաց, որ ուսուցիչ է Կարսի շրջանի ինչ-որ գյուղում: Լրագրի մեջ կարդալով դասախոսության մասին, թողնում է պաշտոնատեղին և եկած է Երևան»: Լուսավորության մինիստրության մեջ Աղբալյանը նրան տալիս է մի պարապ պաշտոն, անձնական քարտուղարի անվան տակ: Բանաստեղծը պետք է մի բան անելու համար զբաղվեր շենքի գույքագրությամբ: Չարենցը մինչև մայիսյան դեպքերը, այսինքն՝ մի կարճ միջոց, ինչպես հիշում են Աղբալյանը և Քոթանջյանը, մնում է այնտեղ, անշուշտ, իր աշխատանքը տանելով կատարյալ անհոգությամբ... Այս ամիսներին նա ծանոթանում է գրական սալոնի նշանավոր գեմքերի հետ: Նրան չերմ է ընդունում ժամանակին հայտնի բանաստեղծուհի Տիգրանյանը՝ Տերյանի դպրոցի շնորհալի հետևորդներից մեկը: Կարինեն պատմում է, որ ինքն է առաջնորդել Չարենցին Արմենուհու մոտ, ինքն է ծանոթացրել: Նրանց տնից բանաստեղծը վերադարձավ նորոգված, տեսքի եկած, նոր զգեստի մեջ: Արմենուհու և Չարենցի ծանոթությունից ծնվեցին «Գալանտ երգերը»՝ այնքան հակասական և առեղծվածային...¹

1 Այս առեղջագայինը բանավիճակին շնչով փորձում է պարզել Գառնիկ Անանյանի, ըստ նրա՝ առեղջագայ պարզում են Արմենուհուն նվիրված Զարբնցի մյուս՝ մինչև կերպես անհայտ բանաստղությունները: Իրեն Արմենուհին արբած էր Զարբնցի պոեմիավ, բայց այդ արքեցությունը Արմենուհին չի ունեցել Հերինակի անձի նկատմամբ, անպատճան է թողել նրա սիրո տառապանքները:

Բայց դու կարոտիս հանդեպ
ինչու ես լոել, շվարել,
ինչու է լոռիթյունը անդեմ
Շարել պատնեշներո բարի:

Այս առղերը նա գրել է «Գալակտոն երգերից» հետո, հոկտեմբերին: Բայց մի՞թե ամբողջ շարքի իմաստը կարելի է փնտրել մերժված սիրո մեջ: Չէ՞ որ ամբողջ շարքը նույնպես նա նվիրել է Արմենուհի Տիգրանյանին:

Այս նոր մթնոլորտում հենց սկզբից նրա շուրջը հյուսվում են զանազան պատմություններ, խտանում է քաղքենի բամբասանքը՝ տաղանդի առաջին թշնամին, չնշին հոգիների մեծագույն մխիթարությունը՝ ուղղված ընտրյալների դեմ, Զարենցը արհամարհում է քաղքենի շրջանի հալածանքը և պահանջի արհամարհում է դաշնակցական հանրապետության օրերին նա անվախ պաշտպանում էր հեղափոխության գաղափարներ:

Բանաստեղծը շատ կարճ է մնում լուսավորության առարարության մեջ ստացած աննշան պաշտոնում։ Այդ կարճ միջոցում էլ շատ քիչ էր գալիս նախարարություն, եկած ժամանակ էլ, ինչպես հիշում են՝ «իմանգարում էր» մեքենագորուհիների աշխատանքը։ Զարենցի կյանքում մի առանձին նշանակալից էջ եղավ 1920 թ. մայիսը։ Մայիսյան

Ընդ որում հենց գալանտ երգերի մեջ կարելի է ցույց տալ նման համապատասխան պատճենները:

Հաստակ խոսում են իմ
Երգերը Զեր մասին.
Տրվել եմ Զեր բույրին,
Զեր մեղմահոս լույսին..

By Law

Առել էմ զիրքը Զեր
Ու նայում նրան։
Զգվում են բիլ զծեր
Գրքից՝ հոգուս վրաւ

Ժպտաց ժպտով առեղծված
Հայի երժական կանացի:

դևպերի ընթացքում նա փաստորեն դուրս է գալիս աշխատանքից, իսկ աղատման հրամանը ձեակերպվում է հունիսի 1-ին։ Դուրս գալով՝ նախարարությունից՝ Շավարշ Բասենցյանի միջնորդությամբ նա դառնում է № 2 որբանոցի դաստիարակ։ (Այս Շավարշն էլ նախատիպ է եղել «Խըմբապետ Շավարշը» պոեմի հերոսի համար)։ Այդ շրջանում Զարենցը հսկողության տակ էր, քանի որ նրան կասկածում էին «կարմիր գործունեության» մեջ։ Նա իր թղթերը և գրքերը թաքցնում է Կարինեի մոտ, որբանոցում։ Քաղաքի շարետ դոկտոր Ռուբենը աղջկան կանչում է հարցաքննության։ Կարինեն փրկվում է միայն Շավարշ Բասենցյանի անմիջական օգնությամբ, ավելի ճիշտ՝ դոկտոր Ռուբենը՝ նրան զիշեց մառզերի սպառնալիքի տակ։

Նույն այս օրերին Զարենցը կրկին ապրում է ոգեսրության բացառիկ պահեր, աստեղային երջանկության օրեր։ Հեղափոխության ալիքը բարձրանում է այս անվամ արդեն բուն Հայաստանում։ Երևանում տեղի է ունենում մայիսինեկյան ցույց, ապստամբություններ են բոնկվում Ալեքպոլում, Կարսում, Սարիղամիշում, Սևանի ավագանում, Իջևանում և Դիլիջանում։ Քաղաքական հրդեհները խոր ազդեցություն են թուղնում Զարենցի վրա։ Նոր շարժումների ազդեցության տակ ծնվում են «Խաղիոպեմները», որոնք շոշափում են սոցիալիստական հեղափոխության և ազգային հեռանկարների առնչությունները։ Մայիս ամսին, հեղափոխության վերելքի պահին, կրկին նոր ուժով նա բարձրացնում է ժողովուրդների եղբայրության և համաշխարհաւիճն հեղափոխության թեման։

Հեղափոխությունը Եղիշե Զարենցի տարերքն էր։ Նա
և Նախրիի որդին էր, և աշխարհի բաղաքացին։ Հայկական նոր
դեպքերը նրա մեջ ծնում են գալիքի թեման, սովորական
կարգերի նախօրդակին ծնվում է Հայաստանի ռուժի և գե-
ղեցկության երգը, ձևավորվում է բարձրացող նոր հայի հե-
րոսական ոգին։

Մենք ենք, որ նո՞ր ենք, Հազա՞ր էնք ու բլո՞ւզ
Երկաթի հակա մի դիսկի նման
Բյո՞ւր եղայրների կամքը մեր արի,
Տիեզերական—

Նետե՛լ ենք արդեն թափով վիթխարի
Դիպի հողմերը գալիք օրերի,
Դեպի—Ապագան:

Բաղիոպոեմները, կարելի է ասել, նաև ինքնակենսագրություն են, ցույց են տալիս բանաստեղծի ներաշխարհի վերելքը և քաղաքացիական մեծ մտահոգությունները։ Զարենվերելքը էր միայն այս կյանքով ու տագնապներով։ Սուզդալապում էր միայն այս կյանքով ու տագնապներով։ Սուզդալագործական հոգեբանության տեսակետից միանգամայն բնական էր այս հրդեհը։ Մանր օրերի և ողբերգական մինուրության մեջ անթեղված կրակը մի բարենպաստ շարժումից ու քամուց բոցավառվում էր։ Բանաստեղծը գնում էր կենսական շարժման առաջին ալիքի հետ, գալիքին ընդուաց, աշխարհին պարզելով «իր բոսոր սիրար որպես դրոշ»։ Մասիսի պես բարձր կանգնած ուղիուկայանը՝ հայ մարդու հզոր հոգին, նոր խոսք է բացում ազգերի ու ժողովուրդների հետ։ Այսպես էր Զարենցը։ Նրա հողում կուտակված հակայական խանդը հասարակական լիցքերի ներքին դրդուով երգի է վերածվում։

Այդ օրերին նա ապրում էր Նազարյան փողոցում (այժմյան Ամբիքյան), ներքնահարկի մի սենյակում, որի պատուհանը դրված էր ուղիղ գետնին։ Բանաստեղծի մոտ էին հավաքվում նոր մարդիկ, սկսնակ բանաստեղծներ, քաղաքական գործիչներ ու մտավորականներ, որոնք տարված էին հեղափոխական հովերով և մտածում էին Հայաստանի գալիքի մասին։ Նույն շրջանում նրա հետ ծանոթանում են նաև որ-բանողային բանաստեղծները։

Զարենցը գալիքի հետ էր, զգում էր սոցիալիզմի պատմական անխուսափելիությունը Հայաստանի կյանքում: Բայց այս շրջանում ևս մի որոշ շափով շարունակվում է հոգեկան դրաման, երկինությանը Ցավալի պարտություն կրեց Մայիսյան ապստամբությունը: Թուրքերը շարունակում էին բարբարոսաբար նվաճել նոր շրջաններ և խորանալ երկրի մեջ: Հեղափոխությունը ուղանում էր: Օրերը դանդաղ էին առաջանում, ժողովուրդն արյուն էր տալիս, իսկ հինավուրց հողը շարունակում էր վ'որբանալ: Շարունակվում էր աղետը, սպառնալի էին դառնում նաև եղբայրասպան կոիլները, որոնք հրահրում էին ազգային անհեռատես գործիչներն ու արկա-

ծախնդիր քաղաքագետները: Այս ամենի ճնշման տակ հերոսական տրամադրությունների կողքին մորմոքում է տիբրությունը, կրկին ասպարեզ են գալիս մահվան տեսիլները՝ տոգորված կապարի կարծրություն ունեցող, անպարփակ վշտով: Քաղաքական դրաման խոր հետք էր թողնում երիտասարդ բանաստեղծի վարքի ու ապրելակերպի վրա: Նրան դառնացնում են քաղենի միջավայրն ու գրական շրջանը: Կյանքի սարսափիների միջով անցած բանաստեղծը, որին ծանոթ էին շատ առաքինություններ ու արատներ, ժողովրդական տարերքի մեջ կոփկած ոգին, Հարդագողի ճամփորդը, զինվորը, ուսուցիչը, որբանոցի զաստիարակը նեղ էր զգում պայմանականությունների և ստի մեջ, մթնոլորտը խեղդում էր նրան, «օդը չէր հերիքում»:

Բոլոր հակասություններն ու մաքառումները լարում են նրա ոգին: Բանաստեղծը տեսնդապին նայում է առաջ՝ հեռու հորիզոնին, հեղափոխական կոփվների և համաշխարհային մեծ հրդեհի մեջ տեսնելով երկրի փրկությունը: Այդ հրդեհից է նա վառում իր բանաստեղծության զար, նորովի լուսավորելով և ի ցուց դնելով մեր կյանքը, մեր երազներն ու ճանապարհը:

Առաջինն ս՞կ երգեց գովը այսաբացիդ...

Հետագայում մի առիթով հիշեցնում է բանաստեղծը իր պատմական մեծագույն ծառայությունը։ Այդ մեծ վաստակով, տանջված սրտով, բայց ոգու բացառիկ կորովով բոլորվին երիտասարդ, քսաներիքամյա բանաստեղծը ողջունում է Խորհրդային Հայաստանի ծնունդը։

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՔԵՂԾՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄբՆԵՐԻ ՄՅՈ

Բոլոր բանաստեղծները, անգամ մեծերը, սկիզբ են առ-
նում անվարժ երգերից, բնական թոթովանքներից, որոնց
մեջ գրքային ազդեցությունների հետ միասին ծնվում է և
սեփականը, երեսում է մանուկ հոգու զարմանքը շրջապատի
նկատմամբ։ Նկատած ամեն բան նրանց թվում է հրաշք
հանելուկ, ամեն պատկեր ու տեսիլ՝ հայտնագործությունն

Այսպես է սկսում իր երգը նաև կարսեցի մանուկը... Միամիտ, անաղարտ, անմիջական.

Սաղիկները հեզ թերվում են քամու օրորի տակին—
Եվ լուս Նրա հեռվիցը բերող երգը տիրապին...
Քամին ծաղկունանց շուրթերն է դողդոշ շոյում, գուրգուրում
Ու լուս մրմնչում, թե հեռուներում ինչպես են սիրում...
Եվ այս ամենը կատարվում է միշտ իրիկնամամին,
Երբ որ տրտում են հեզ ծաղիկները ու մեղմ է քամին...

Ահա վաղ հասակից մնացած առաջին ոտանափորը՝
տպագրված «Պատանի» ալմանախում, 1912 թվականին,
տասնհինգ տարեկան հասակում, մի բանաստեղծություն, որի
մեջ զգացվում է ներքին քնիչանք, հիացում և զարմանք բնու-
թյան շարժման և հավերժական նրբին խաղի նկատմամբ...
Մինչև այդ նա գրում էր, շատ էր գրում: Ինչի՞ն մասին՝ բնու-
թյան, շորս եղանակների, սիրած աղջկա, ժամապահ գինվո-
րի, դպրոցական առօրյայի, ուրիշ մանր ու մեծ բաների: «Մի
գլուխ թղթեր է մրոտում», — տագնապում էր Աբգար աղան,
վախենալով, թե մի օր որդին սոված բանաստեղծ կդառ-
նա: «Եղիշեն բանաստեղծություններ էր գրում: Դրանք դեռ
անվարժ գրչի խաղեր էին՝ անպաճույք ու մակերեսային,
բայց մենք կարդում էինք ու հիանում», — գրում է դասընկերու:

Ուելական դպրոցի բանաստեղծը, որ գրում էր «տաղա-
կան նշանակություն ունեցող», «լուրջ» և հանդուզն երգիծա-
կան ոտանավորներ՝ դպրոցական հայտնի թեմաներով, ան-
նկատելի փոխվում է և հասունանում: Նա գտնում է գե-
ղեցկության ակռնքներ... Բնությանն ու շրջապատին ավելա-
նում են գրքերի հրաշքները: Այնտեղ ևս պատանու համար
կային կախարդական պլատէկերներ, որոնք սննունդ էին տա-
լիս նրան, ծնում նոր զգացումներ: Տարեցտարի նրա գրիչը
ավելի է լրջանում. 1911—12 թթ. Նա գրում է բանաստեղծու-
թյուններ, որոնք գրեթե անմատչելի էին հասակակիցներին:
Ուելական դպրոցի բոլոր երեխաները Զարենցի վարակիչ
օրինակով բազում ոտանավորներ էին գրում, բայց Եղիշեն
տարբերվում է նրանցից, բնական ձիրքը առաջ է մղում
նրան: Տեղի է ունենում հայտնի բաժանումը սիրողների ու
ստեղծողի միջև: Գեղեցիկը զգում են շատերը, բայց գեղե-
ցիկը ստեղծում են հազվագյուտ անհատները, բնության

ընտրյալները։ Յուրաքանչյուր սիրող, բատ երևույթին, իր կյանքում ունենում է ստեղծագործական բռնկման ինչ-որ պահ, ինչ-որ այրում, որը երբեմն էլ դառնում է ստեղծագործական փաստ, այնինչ՝ ստեղծողի կյանքը բռնկումների ու ներքին հրդեհների, տեսնդագին ստեղծման տեսական ընթացք է։ Զարենցի հետ տեղի էր ունենում նույն երևույթը։ Գեղեցիկի զգացողությունը նրա նոր երկերում ձուլվում էր ստեղծողի զորեղ տարերքի հետ։ «Կարդում էինք նրա ալբոմում հատուկ ձեռագրով արտագրված բանաստեղծությունները ու հիանում, շատ անգամ առանց բուն բովանդակությունը հասկանալու»։

1912 թ. նրա կյանքում տեղի է ունենում երկու նշանակալից դեպք. ինչպես հիշեցինք «Պատանի» ալմանախում լույս է տեսնում առաջին բանաստեղծությունը («Մաղիկները հեզ...») որը, թեև խմբագրի ձեռքով ենթարկվել էր անխիզճ կրծատման, բայց շատ է ուրախացնում սկսնակ հեղինակին, բարձրացնում նրա անունը աշակերտության մեջ։

Ավելի նշանակալից էր մյուս դեպքը. հրաշքի ու հայտնության պես նրան երկում է մի հարազատ բանաստեղծ... Նույն տարում, նույն օրերին նրա ձեռքն է ընկնում Վահան Տերյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն, որը նոր էր լույս տեսել։ «Զարենցը ինձ պատճել է, որ դեռևս աշակերտ՝ Կարսի ուսալական դպրոցում, 1912 թվին, մի ոուրլի է թոցրել Արգար աղայից և զնել Վահան Տերյանի «Բանաստեղծություններ» գիրքը, որ նոր երեսցել էր Կարսի գրախանութիւնցափեղկում»։ Հիշում է Միք. Մազմանյանը։ Նա շատ գրեթե էր կարդացել, գիտեր, հարկավ, և օտար շատ բանաստեղծների, բայց Տերյանն ուրիշ էր։ Նա արյունակից էր, հարազատ, լի հայրենի թաքուն խորհուրդներով։ Ուսուցչի և աշակերտի հանդիպումը մի մեծ իրադարձություն էր, որ կարևոր դեր խաղաց աղջային բանաստեղծության ճանապարհին։ Այդ հանդիպումն անխուսափելի էր։ Բայց կարեռն այն է, որ հոգեոր այդ առնչությունները սկիզբ են առնում ճիշտ ժամանակին, դառնում ազնիվ ակունք պատանու ձիրքի համար, որի ներաշխարհում սկսվել էին բարդ խմորումները։ Տերյանը կախարդում է պատանուն. «Ասսե անհուն մի գանձ նվիրեցին ինձ, զարմանալի հայտնություն եղավ ինձ շամար ադ-

գիրքը, էլ ձեռքից վայր չդրի։ Առանձնանում էի ու շարունակ կարդում։ Այնպիսի կախարդական ազդեցություն ունեցավ վրաս, որ մինչև օրս էլ չեմ կարող առանց հուզմունքի հիշել այդ»¹։

Տպագրված առաջին բանաստեղծությունը և առաջին հանդիպումը հարազատ բանաստեղծի հետ զրացնում են Եղիշեի ինքնավատահությունը։ Հոգեկան աղերսները մեծանում են, ծավալվում, լայնանում է տեսողության հորիզոնը, այսպես ասած բացվում են հոգու դռները։ Ներքին հավատը նրան առաջ է մղում զեպի ստեղծագործության ոլորտը, հոգեկան տառապանքների և վերելքների աշխարհը։ Կարճ միշտոցում տեղի է ունենում գրական ձիրքի ծաղկումը։ Այս երևույթն ունի իր «գաղտնիքը», ամենից առաջ կապված է բնածին հակումների և խառնվածքի հետ։ Զարենցի բնավարույթունը շատ յուրահատուկ էր, նա ստեղծում էր, կարելի է ասել նաև ապրում էր բուն պորկումներով, որոնց, անշուշտ, նախորդում էր զգացումների, խոհերի և դիտողարյունների ներքին աւելական կուտակումը։ Մ. Շահինյանը ճիշտ է նկատել, ստացած տպագորությունների մասին խոսելով, նա նշում է, որ Զարենցը համար իրեն քաշված, մինչև անգամ ճնշված էր պահում միջավայրում, բայց հենց այդ պատճառով էլ բուն լրավածության դեպքում նա անսպասելի շիկանում էր։ Նա բացվում էր գերագույն լարումներով, հըրդեվելվում էր խոսքի մեջ, մտքերի փոխանակության ժամանակ, նվիրական սկզբունքների պաշտպանության պահերին, մտածում էր այրվելով։

Այսպես էր նաև ստեղծագործական տարերքի պահերին... Նա պատկանում էր այն բանաստեղծների խմբին, որոնք գրում են անսովոր վերելքներով, արագ և բուռն պոռթիկումներով։ Նման խառնվածքի տեր բանաստեղծները շուտ են հասունանում։ Ստեղծագործական վերելքին նպաստում են նաև գրական աղդակները, որոնք նկատելի շափով մասնակցում էին խառնվածքի ձևավորմանը։ Մեծ տաղանդը շատ զգայուն է նաև ուրիշի ստեղծածի նկատմամբ, և ինչպես Գյուղ-

¹ Հիշություններ Եղիշե Զարենցի մասին, Մ. Մազմանյան, Զարենցի հետ, էջ 60։

թեն է ասում, մեծ հափշտակի է, ատեղծագործաբար անմիջապես յուրացնում է այն ամենը, ինչ հարազատ է իրեն, ինչ անհրաժեշտ է իր ներշնչանքին: Բայց, ի վերջո, աղջանդի աճի մեջ առանձնահատուկ դեր է խաղում կյանքի բնույթը: Բուն խառնվածքների վերելիքին մեծապես նպաստում է պատմական երևալյաների և բախումների կուտակած շերմուքունք, որն ընդգծում է խառնվածքի հատկանիշները, վրեական դեր խաղում բանաստեղծական հասակի ծեսվարման գործում: Նա տալիս է մեծ էներգիա և բերում շատ հասարակ թվացող, բայց արվեստի համար կենսական բան՝ նոր և նշանակալից ասելիք, որպիսին, օրինակ, չունեին, ասենք, ժամանակի բանաստեղծները՝ Տերյանի բազում հետևորդներ (Գառնիկ Քալաշյան, Արմենուշի Տիգրանյան, Ռոտանիկ և ուրիշներ):

Այս բախտավոր միասնությունը Զարենցին կարծ միշոցում հանում է բանաստեղծական արվեստի մայրուղի...

1914 թ. Կարսում լույս է տեսնում «Երեք երգ տիրապարական» վեց էջանոց գրքույզը, որը բաղկացած էր երեք բանաստեղծությունից: Դեռ վաղ շրջանում իրար հետևում են բանաստեղծություններ, շարքեր, պոեմներ, գրքեր: Նրանց մեջ կարելի է ցուցյ տալ և անկատար փորձեր, և օտարամուտ երանգներ, և ազդեցություններ: Կարելի է, բայց ստեղծագործության զարգացման էությունը, այսինքն՝ ստեղծած լավագույնը ուրիշ բան էր ասում, ավելի ճիշտ աստիճանաբար վերաճում էր մի յուրահատուկ հոգեոր հարստության: Կյանքի բարդ պայմաններում Զարենցը հրահրում ու բորբոքում էր ազգային բանաստեղծության թվում է թե արդեն մարող կրակը, որի պահպանման համար իրար հետևից ողջակիզվում էին հայ տաղանդները:

* * *

Ի՞նչ երևույթ էր վաղ շրջանի Զարենցը: Ի՞նչ էր բերում մայրենի բանաստեղծական խոսքին: Այս հարցն ունի ուրույն բարդություն և պատճու է դարձել բուն վեճերի: Ասենք ինքը՝ բանաստեղծն էլ ունեցել է երկակի վերաբերմունք իր վաղ շրջանի երկերի նկատմամբ: 20-ական թվականների

ոկզբին «Զարենց-Նամե» պոեմում նա գնահատում է վաղ շրջանի գրքերը՝ «Երեք երգը», «Սիհածանը», «Ողջակիզվող կրակը», որպես իր գրական կյանքի կարևոր երևույթներ՝ ծնված երկու ճակատագրի նկատմամբ ունեցած տագնապ-ներից: 1932 թ. լույս տեսած «Երկերի» առաջաբանում արդեն ընդգծված խստությամբ է խոսում նույն այդ գործերի մասնակիության վրանի գրվածքներից ես կատարել եմ խստագույն ընտրություն՝ երկերիս ժողովածությունից մուկովյան հրատարակության առաջին հատորից զետեղելով մուսկովյան հրատարակության առաջին համարյա մի քառորդը: Այդ հատորից այստեղ այդ հատորի համարյա մի քառորդը: Այդ հատորից ես գուրս եմ թողել ամբողջ ցիկլեր, ինչպես, «Սիհածանը», «Ողջակիզվող կրակի» առաջին մասը և այլն, գերազանցապես այն պատճառով, որ այդ գրվածքները պատկանելով իմ ստեղծագործության առաջին շրջանին, թե՛ ձևի և թե՛ բովանդակության տեսակետից համարյա զուրկ են ինքնուրույնությունից, հետևապես ոչինչ չեն ավելացնում ինչպես մեր պոեզիային, այնպես էլ իմ ստեղծագործության հանրագումարին:

Բայց ահա վերջերս արծարծվեց մի ուրիշ տեսակետ. գրականագետները երկար լուսությունից հետո ձգտում էին տեսնել բուն Զարենցին, պաշտպանել և վերականգնել առաջին շրջանի երկերը, հայտնաբերել այն կապերը, որոնք գոյություն ունեն պատանի բանաստեղծի և համաշխարհային պեղությամբ: Դեռևս լավ շիմանալով Զարենցին, շթափանցելով նրա աշխարհը, նրանք փորձում էին առաջին հայացքից, առաջին ծանոթությունից, առաջին գործերից որոշել բանաստեղծի բուն մեծությունը, նույնիսկ համաշխարհային արժեքը: Իսկ գնահատության շափանիշը, առաջնորդող սկրզբո՞ւնքը: Նորագույն հետազոտողները շատ հաճախ գնացել են նմանությունների և ընդհանուր գծերի հայտնաբերման ձևնապարհով: Ո՞ւ է նման պատանի Զարենցը, ի՞նչ ընդհանրություններ կան նրա երկերի և աշխարհի մեծերի ստեղծածի միջև: Պատանի Զարենցը վաղ շրջանում իրոք կապված

1 Խղիչ Զարենց, Երկերի ժողովածու հ. 6, էլ 211.

Է Եղել համաշխարհային դրականությանը, ծգտել է յուրացնել նորագույն բանաստեղծության նվաճումները թայց, ինչպես միշտ նման դեպքերում, այս կապերի ու նմանությունների մեջ ամեն մի բանաստեղծ սկզբում երևում է աշակերտի կերպարանքով:

Որոշ մեկնարաններ անզուսպ գնահատել են Զարենցի վազ շրչանի գրական առնչությունների դիրք՝ հենց դրանց մեջ տեսնելով նրա մեծությունը, ոմանք էլ, ցավոք, այդ առնչությունները և անխուսափելի նմանությունները դիտել են իրեն գաղափարական հետադիմության երևույթ։ Մեկնարանությունները զառնում են խիստ միակողմանի և անտեսվում է տաղանդի զարգացման բնական ընթացքը, այսինքն այն բարդ խմորումը, ուր երևան են եկել նոր տաղանդի ինքնուրույն, տարրերի գծերը։ Անտարակույն նմանությունները, հայրենի և օտար ազգեցությունները անխուսափելի և սկզբանապես անհրաժեշտ երևույթ են, շատ կարևոր բանաստեղծի յուրօրինակ ծնունդն ու աշխարհը ըմբռնելու համար։

Խոշոր բանաստեղծները, իրոք, մինչև կյանքի վերջն էլ մտնում են համաշխարհային անխուսափելի կապերի մեջ, չուր են խմում շատ ակունքներից։ Զարենցը նույնպես բացառություն չի կազմում։ Վաղ հասակից նա ապրել է բանաստեղծական մթնոլորտում, տարվել համաշխարհային հին ու նոր բանաստեղծների երկերով։ Թայց պատանի Զարենցի համաշխարհային կապերի ու մեծության եռանդում մեկնողները մոռացել են մի ուրիշ մեծ ճշմարտություն։ Նախ, բանաստեղծները կամա թե ակամա, հենց սկզբից, մշտապես ազգային հոգեբանության և կյանքի թելադրանքով դառնում են հայրենի ակունքներին և ավանդներին, որոնց մեջ, անշուշտ, նույնպես այս կամ շափով արտացոլվում են համաշխարհային երևույթները։

Զարենցի հասակի ու խառնվածքի վրա խոր և տեսական ազդեցություն է թողել նախ հայ նոր ու նորագույն բանաստեղծությունը։ Դա նույնքան բնական երևույթ է ազգային բանաստեղծի համար, որքան մայրական կաթը՝ նորածին մանկան կյանքի համար։ Թայց, ահա, ինչպես հայտնի է, շատ ավելի հեշտ է տեսնել նմանությունները, քան տարրերությունները, քանի որ տարրերի գծերը, այսինքն՝ ինքնու-

րույնը որսալու և տեսնելու համար անհրաժեշտ է թափանցել ազգային խառնվածքի և կյանքի յուրահատկությունների, ազգային հոգեբանության «առեղծվածների», ինչպես նաև ստեղծված նոր գեղեցկության տարերքի մեջ։ Հենց այս պարագան մեզ թելադրում է տեսնել և ընդգծել այդ էականը, այդ «տարրերությունը»՝ հայկականը և շարենցականը։ Ինչպես Զարենցի բանաստեղծության բուն մասի համար հոգ և պատվանդան են եղել հայկական կյանքն ու հոգեբանությունը, այնպես էլ նրա աճին խորապես նպաստել են հայ նոր ու նորագույն բանաստեղծները։ Նրանց մեջ առաջին տեղի էր գրավում Վահան Տերյանը։ Հարազատների թվում էին Միսաք Մեծարենցը, Սիամանթոն, Հովհ. Թումանյանը։ Հենց այս աղերսների բարդ ընթացքում են «անտեսանելի» ձեռվ ընդգծել տարրերի գծերը։

Մի՞թե շենք բարդացնում հարցը։ Ինչպես կարող էր նույն բանաստեղծն ունենալ մի բանի ուսուցիչ և նախորդ, ներառյալ նաև օտարները, երբ այդ ուսուցիչներն ու նախորդները ունեին տարբեր ռեն ու նախասիրություն, տարբեր խառնվածք։ Գաղտնիքը պետք է որոնել նոր բանաստեղծի յուրահատուկ ձիրքի և խառնվածքի մեջ։ Զարենցն ուներ բազմակողմանի հակումներ և հարուստ, բազմերանգ աշխարհ։ Բնականաբար, նա պետք է մտներ բազում առնչությունների, տարբեր, մինչև իսկ անհարիր թվացող կապերի մեջ, չուր առներ շատ վտակներից, հոգեկան սնունդ ստանար շատ հեղինակներից։ Այս իմաստով նա տարբերվում էր իր անմիջական նախորդից և ուսուցչից՝ Վահան Տերյանից, մեծ շափով զանազանվում էր նաև մի ուրիշ հարազատ բանաստեղծից՝ Միսաք Մեծարենցից։

Զարենցը իր խոհերով ու զգացումներով ձեռվորվել է քաղաքային միջավայրում, տասական թվականներին նա ապրել է իր սերնդի, հայ երիտասարդության դրաման, որի բուն հոսանքը ծայր էր առնում նույն ակունքից, նույն այդ միջավայրից ու մթնոլորտից։ Ինչպես ամենուր, մեզանում ևս հասունանում էին նոր, բարդ կոնֆլիկտներ՝ կապված հասարակական հակասությունների և մարդու ճակատագրի հետ։ Մյուս կողմից մեզանում մշտապես բորբոքվում էին ազգային քաղաքական հարցերը, որոնք ստանում էին նոր երանգներ։

զորանում հայկական ցավի խոր ազգեցությամբ։ Առաջին գեպքում ընդգծվում էր ընդհանուր մարդկային մի խնդիր՝ մարգու սոցիալական և բարոյական ողբերգությունը, երկրորդ գեպքում՝ ազգային ողբերգությունը, որը նույնպես, զուտ ազգային երանգներ ունենալով հանդերձ, կապված էր համաշխարհային քաղաքական կյանքի հետ։ Պատանի Զարենցը անցավ այս սուր հակասությունների միջով, ապրեց այդ դրաման, գառնալով նաև ժառանգորդ, քանի որ նույն դրաման անականորեն համակել էր նաև գրական նախորդներին՝ Տերյանին, մասամբ Մեծարենցին։

Այստեղ ահա առաջ է մղվում մի ազնիվ, տիսուր և պայծառ երգի՝ Մ. Մեծարենց։ Ի՞նչ կարող էր տալ արևմտահայ պատանի բանաստեղծը արևելահայ քաղաքի երգին։ Չէ՞ որ արտաքուստ, թվում է, իրարից հեռու են նրանց աշխարհները։ Նա Պոլիս էր եկել հեռավոր մի գյուղից և ախտավոր, խորթ մի շրջանում ապրում էր ծանր դրամա։ Իր աշակերտական տերերում, որոնց երեսին գրված էր աշակերտ Միսաք Մեծափայլյան, պատանին հյուսում էր գրավիչ ու մեղմախոս երգեր։ Բայց շուտով այդ մեղմախոս երգերը դարձան նշանակալից երևույթ, ինչ-որ ներքին խորհրդի շնորհիվ։ Գավառների հայ երիտասարդությունը, ուսուցիչներն ու աշակերտները հատուկ զերմությամբ սիրեցին այդ երգերը։ Վահան Թոթովենցի վկայությամբ, Մեծարենցն իշխում էր նոր սերնդի ներաշխարհի վրա։ Ի՞նչ գաղտնիք կար բոլորովին պատանի բանաստեղծի ազգեցության ուժի մեջ։ Միսաք Մեծարենցը գտնել էր երգի մի նոր երակ։ Թուրքական ռեակցիայի մթնոլորտում, համատարած բոնության մեջ նա ոգում էր իր սերնդի ցավի ու երազների նոր մեղեդիները։ Երգը ծավալվում է, գտնելով բնական հուն և ընթացք։ Միրո երգերում, բնության պատկերներում, գիշերային տեսիլներում, «անմեզ» թեմաների մեջ զարմանալի անմիջականությամբ ծընվում է արևմտահայ նորագույն բանաստեղծությունը։ Այդ երգը գտնուում է մի ուրույն փառաբանություն կյանքին, մարդուն, բնությանը, այսինքն ամբողջական գեղեցկին կամ, ինչպես ինքն է ասում, թեուրյանը։ Զավի, երազի ու սիրո այս պունջիան սրտամուտ էր հայ երիտասարդ սերնդին։ Զարենցը չէր կարող զգալ այս ցավն ու երազները, քանի որ այդ ա-

մենց որպես կենսական ժառանգություն արդեն նստած էր նաև նրա հոգու մեջ։ Մեծարենցը երազում էր գարուն, արև, կյանք, տագնապում էր, այրվում։

Հիվանդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՛...
Հոգիս թռնիկ մըն է,
Օդ ու լուսի, երգ ու ծիծաղի կարոտ...»

Կամ՝

Գարձուցե՛ք նավակներս հողմավար, ջրանույշ պայիկներ,
Գարձուցե՛ք նավակներս դյութավար, իրիկվան հովիկներ...

Մեծարենցը ստեղծում է նաև սիմվոլներ և սիմվոլիկ պատկերներ, որոնք, սակայն, զերծ են սիմվոլիզմին բնորոշ սառը մենամոլությունից։ Նրա երգերում մեղմիկ լույս է տալիս օրավուր սպառվող, այրվող ու մարող հոգու կրակը, որը տեղ-տեղ բոցավառվում է մեծ ուժով, ի հայտ բերելով ցավից արագ հասունացած բանաստեղծի անզուսպ սերը գեցակի ուրիշները, մարդիկ, աշխարհը, կյանքը։ Այս նրբին երգի ուրիշները, մարդիկ, աշխարհը, ցավից, ժոխից, մոխրացող երազներից, դառնում են նաև հոգու շարժման պատմություն, հոգերանական ու գեղագիտական բնույթի նոր հարստություն, քանի որ, անհատական բնույթով հանդերձ, բանաստեղծի ներաշխարհին իր կարևոր հոգեկան բաղադրիչն էր տալիս նաև հոգեվարքի և հույսի մեջ տարուրերվող հայկական սերունդը։

Հենց այստեղ էլ թաճնված է Միսաք Մեծարենցի երգերի հասարակական արժեքը, այսինքն՝ երգի անհատական, հայկական և համամարդկային բնույթը։

Անձնական դրամայի, կենսական ապրումների և երազների բովից, տագնապի և սպասման տարերքից, գեղեցկության և արևի անզուսպ ձգտումներից Մեծարենցի հոգու մեջ ծընվում է խոր մարդասիրությամբ օժգած հայ սերնդի սիրո և տառապանքի երգը, որի մեջ զգացվում է նաև համաշխարհային, ատիեզերական» սիրո բաբախը։ Կյանքի մեջ եղածվում են երազները, կյանքի մեջ ժավալվում են ցավերը, երազի մեղուները թուել են ծաղկած հովիտներ՝ երազների մեղրը բերելու, բայց լեն գերադասում տարագնացիկ մեղուները։

Սանր տագնապով բռնված հոգին սպասում է մեղուների դարձին, իր երազների դարձին։

... Ու տարածամ այս հածումին մեջ երջունի՞կ պիտի ըլլամ՝
Եթև թունեղ խաշիթ իսկ բերեն
Աղեմոլար մեղուներն իմ տենչանքներուն

Որքան տագնապներ, սպասման պահեր, անհանգիստ
երազներ պետք է նախորդած լինեն այս ցավլագին տողերին,
այս խորապես մարդկային, խտացված ասլրումին։ Մնեծա-
րենցի կենացոնական զզացումը սպասումն է, տագնապալի
սաշասումը՝ կյանքի, արևի, մարդկային ջերմության։ Նրա եր-
գերում անվերջ, անհանգիստ ապրում է երջանիկ եզերքների
նույսը, որին, սակայն, ամեն անդամ հետևում է հիասթա-
փությունը, բախտի ժանր հարվածը։ Բայց անկման դառը
պահերին, գիշերային ժանր նոպաներին, հուսահատ արա-
մադրություններին և մահվան տագնապներին փոխարինելու
են գալիս արևային պատկերն ու սիրո հույսը, ծնվում է
«Վերադարձի երգը»։

Փուշեր նետվեցին օրեօր վերքիս,
Ու հոն հեծեծանք մը բերին հովեր,
Բայց սիրո հույս մը կ'արեւ հոգիս

Տառապող հոգոր դրամայի էությունը զարմանալի իրիտ և
սպասիչ արտահայտված է երկու բառի մեջ։ «Մպասման հի-
վանդն եմ», — այսպես է բնորոշում իր ներաշխարհը պատա-
նի բանաստեղծը։ Այս մեծ սպասման, տիեզերական այս բա-
րախների մեջ Մեծարենցը որոնում էր հոգեոր հենարաններ...
Եվ գտնում է... Քաղքենի մթնոլորտում, հոգեոր ու քաղաքա-
կան ստրկության մեջ նա գտնում է հոգեոր ներդաշնակու-
թյան ոսկի բանալին։ Դառնում է հայրենի բնաշխարհին, գյու-
ղական անաղարտ կենցաղին, բնության ու աշխատանքի
մարդուն, ստեղծելով ներդաշնակության մի շքնաղ եզերք։
Մյուս կողմից նա մտնում է այլասիրության մեծ երազների
մեջ, քաղքենի միջավայրից դուրս ելնելով անանձնական խո-
հերի, մարդկանց ճամփերին այրվելու, լուսավոր բաղձանք-
ների, հոգեոր գեղեցկության արտասովոր գեղեցիկ աշխար-
հք, Եվ հենց այս շիկացումից էլ ծնվում են մեծ բնության
ներքին շարժման գունագեղ երգը, հայրենի ակունքների, աշ-
խատանքի ու սիրո և ծաղկուն երազների, ներքին գեղեցկու-
թյան կախարդող մեղեդին։ Ժամանակի ժանր ճնշման տակ

ճնշմած երգը, հատկապես հոգեվարքի շրջանում ճնշմած ներ-
դաշնակության խոհը, անանձնական երջանկության ու պայ-
ծառ ակունքների երազը ինչ-որ էական կողմերով դառնում
է նաև մարդու հավերժական զգացումների երգ։

Զարենցը ոչ միայն զգում է, այլև ժառանգում Մեծարեն-
ցը ցավը, երազը, սերը, որոնք հարազատ էին նաև իր սերըն-
դին։ Մեծարենցը շգնում է նրան ավելի դյուրին մտնել նո-
րագույն սերնդի ցավի ու երազի ոլորտը։ Ծնվում է Զարենցի
նոր բանաստեղծությունը, որը և՛ ինքնուրույն, և՛ հարազատ
է նախորդին, զառնում է ժառանգական հատկանիշ՝ նոր երան-
գավորումներով ու շեշտերով։

Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար,
Ես երազեցի արևի ժամին.
Շուրջս ոչ մի ձայն ու շշուկ չկար—
Դունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին
Ես երազեցի արևի ոսկին,
Տենչացի երա հրաշքը խնդուն՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն
Արևանման, արևակառ խոսքի,—
Բայց շուրջս այնպիս գունատ էր, տկար—
Խոսքը չկային ու արև չկար

Պատկերի մեջ նկատելի է ապրումների ու տագնապի
ուրուն շեշտված լիցը, այսինքն երեսում է Զարենցի անհա-
տականությունը, բայց երկու հոգիների տառապանքի ակուն-
քը և վերջը ակնհայտորեն նույնն են, նույն իրականությունը
և հողը, նույն երազանքն ու սպասումը։ Զարենցի կրած ազ-
նիվ ազեցությունը դառնում է կենսականորեն հասկանալի
և բնական մի երեւոյթ։ Այս տրամադրությունները ինչ-որ
շափով երեսում են նաև ուրիշ երգերում՝ «Ճիշիլաժմերում»,
անգամ «Միածանում»։ Հետագա տարիներին ևս Մեծարենցը
իր հոգով; մարդկային ներքին պայծառությամբ, անանձնա-
կան երազանքով ու սիրով մնում է հարազատ։ Անգամ կյան-
քի վերջին շրջանում էլ Զարենցը մի առանձին չերմությամբ
հիշում է «հիվանդ, հանճարեղ պատանի» սրնգահարի գար-
նան և արևի երգերը, որոնք հնչել են արյունոտ աշխար-
հում, կովի ու եղեռնի տեսական մթնոլորտում։

Արյուն է եղել աշխարհում:— Եղել է եղեռն ու կոփի,
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամենի ելած իրար գեմ:
Աշխարհից հեռու մի զուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,
Արև է երգել ու գարուն այս հրվանդ, հանճարեղ պատանին:

* * *

Մեծարենցը հարազատ էր Զարենցին իր ցավով ու երա-
զով, բայց նրա մեծ ուսուցիչը մնում է Տերյանը: Նրանց առըն-
շախյունների պատմությունը շատ ուշագրավ է և բարդ: Տեր-
յանը պատանի Զարենցի հեռավոր իդեալն էր, գրեթե անի-
րական մարդ, գերմարդ: Բայց կարելի է նաև ասել, որ Զա-
րենցի ստեղծագործական կյանքը եղել է սիրո, հաշտության
և կովի ասպարեզ՝ նույն Տերյանի հետ: Թերևս ոչ մեկն այն-
քան երկյուղած սեր չի ունեցել իր ուսուցչի նկատմամբ, և
երկի ոչ մեկն այնքան չի մեղանչել ուսուցչի առջև, ինչպես
Զարենցը: Եվ այնուամենայնիվ, սերը եղել է իշխող, մինչև
իսկ՝ տառապագին զգացում: Այդ տարօրինակ սերը և մեղքը
ուրույն խառնվածքի և բմահաճ բնավորության արդյունք չէին ։
Դրանք կապված էին նորագույն ստեղծագործական հոգերա-
նության և փորձի հետ, առնշվում էին նոր բանաստեղծի
ձևագործմանը և նորագույն ազգային բանաստեղծության
ստեղծման դժվարություններին:

Այս երեսովն, անտարակույս, ուներ իր ներքին տրամա-
բանությունը: Զարենցը ծնունդով ու կյանքի հանգամանքե-
րով մոտ էր Տերյանին, ապրել էր նույն միջավայրում, դաս-
տիարակվել էր նույն ոգով: Նրա առջև ծառացել էր նույն
խոդիրը: Նույնն էր նյութը, նույնն էին կյանքը, ցավը, երա-
զը: Ուղեր-շուգեր պատանի բանաստեղծը պիտի մտներ տեր-
յանական շրջանի մեջ: Բայց կար մի ուրիշ բարդություն, որը
շափազանց կարենոր է գրական փորձի մեջ: Կարենոր էր այն,
թե ինչ էր արդեն արել ուսուցիչը և ինչ էր թողել նա անելու
իր աշակերտին, հետևորդին: Բանն այն է, որ ուսուցիչը
գրեթե ավարտել էր իր աշխարհի պատմությունը և իր նյութի
ու ոճի մեջ դարձել անհասանելի: Ի՞նչ էր մնում անել Զա-
րենցին: Եթե նա սոսկ կրկներ ուսուցիչին և մնար նույն մըթ-
նոլորտի մեջ, ապա դա հավասար կլիներ ինքնազրկման: Զարենցը,
ի վերջո, գնում է միակ ճշմարիտ ուղիով, սկսում

է որոնել բանաստեղծական ու կենսական նոր, սեփական
երակներ:

Մտնելով Տերյանի գրավիշ աշխարհը, նա երկար ժամա-
նակ ձգտում է կանգնել սեփական ոտքերի վրա և ստեղծել
իր աշխարհը: Աւսուցին հաղթահարելու համար հարկավոր
էր գերմարդկային ուժ: Տերյանի պոեզիան գրեթե շուներ իր
նախօրինակը մեղանում: Ճիշտ է, այս բանաստեղծի մոտ
դժվար է գտնել թումանյանի կենսական հզոր լիցքերը և փի-
լիսոփայական խօր ընդհանրացումները, իսահակյանի կիրքն
ու ոգու թոփքը, բայց նա բերել էր մի ուրիշ, շատ էական
բան, որ հայտնագործություն էր և նոր սկիզբ հայ բանաս-
տեղծության ճանապարհին: Ներքին արտակարգ նուրբ զգա-
ցողության շնորհիվ նրան հաջողվել էր մեծացնել հոգու հե-
ռավոր ծալքերն ու խորշերը տեսնելու հնարավորությունները:
Զարմանալի ներքին տեսողությամբ օժտված բանաստեղծն
իր երգով հաստատում էր, որ բոլոր զեպքերում հոգին ար-
վեստի համար անսահման է ու անսպաս: Նա նոր նշանածողեր
դրեց հոգեկան աշխարհի իմացության համար, անվերջ հո-
րիզոն բացելով նրբերանգի ու նրբագծի առջև:

Բովանդակության մեջ երեան եկած այս նոր երևույթը
բնականաբար ենթադրում էր որոշակի առաջխաղացում նաև
բանաստեղծական ձեր ոլորտում: Ներքին ապրումն ու խոհը
ենթադրում էին ուրույն վերածեավորում պատկերավորման,
ոփիմի, տաղաշափության, առհասարակ բանարվեստի մեջ:
Ներդաշնակության ներքին պահանջից էլ ծնվում էին Տեր-
յանի խոսքի արտասովոր նրբությունը և կախարդող մեղեդին:

* * *

Զարենցն ապրում էր այս կենսական և բանաստեղծական
մինուրտի մեջ: Բնականաբար, նրա տարերքը պետք է սնունդ
առներ այս աշխարհից, նա պետք է գրեր այս կյանքի մասին: Մի
շարք էական թեմաների մեջ ուսուցիչն արդեն գրել էր
նոր սկիզբ, ստեղծել նոր որակ: Ամենից առաջ ուսուցիչը
խոր էր զգացել գարասկըրին բեկված ու քաղաքական հողմի
բերանն ընկած տանջահար սերնդի դրաման: Դառը իրակա-
նությունը և քաղքենի ճահիճը, նյութական ճնշումն ու քա-

զաքական տեսորը բանաստեղծի մեջ հարուցում էին խոր հակարանք դեպի ժամանակն ու միջավայրը։ Դարասկզբին Տերյանի մեծ նախորդը՝ Խսահակյանը, արդեն արտահայտել էր ազնիվ հոգու դառնությունը արտատավոր աշխարհի դեմ, որից սկիզբ էր առնում դարի մեծ հիվանդությունը՝ ոգու աղքատությունը։

Ես ձեզ ասում եմ, կզա ոգու սով
եզ դոք կրաղցեք ճոխ սեղանի մոտ,—
Կընկնեք մուրալու հափրած որկորվ՝
Հընդեն խոսքի, զեմ խոսքի կարուտ։

Այս մեծ արատի դեմ լարվել՝ ու շիկացել էին ինչպես աշխարհի, այնպէս էլ հայոց խոշոր բանաստեղծները։ Թումանյան, Խսահակյան, Մեծարենց, Վարուժան, Սիմանթուման բանաստեղծներ, որոնք դառն ատելության հետ միասին բերում էին իրենց իդեալը, գեղեցկությունը, իդը, խիղճը, ցավի հետ միասին, պայծառ երազները՝ վաղվա օրվա և գալիք մարդու մասին։ Տերյանի երգերի մեջ ևս յուրովի երևան է գալիս մի խորունկ, սիրտ կեղեքող տրամադրություն, ծնված այն անելանելի կյանքից, որի մեջ էին մարդիկ, առավելապես հայ մարդիկ։

Մենք բոլորս, բոլորս
Մանուկներ ենք որք,
Մանուկներ ենք մենք կորած—
Հավիտյան անմայր։
Մենք բոլորս մոյորված
Աշխարհում խավար...
Մենք նետված ենք բոլորս
Երկիրն այս հետու,
Կանում ենք միշտ—ծայն լիա.
Աղոթում ենք—ո՞ւմ,
Ո՞վ կփրկի, ո՞վ կզա,
Որ տանի մեզ տուն...։

Տերյանը խոսում է կյանքի ցրտի և մարդու դրսից ստացած վերքերի մասին։ Մորմոքում են տողերը խավարի աշխարհի դեմ, ուր հունից դուրս մղված մարդը շրջապատից չի ստանում կենսական գրգիռ, այնքան անհրաժեշտ շերտունություն։ Մենակության մեջ նա ապրում է միայն ներքին, արա-

գորին մարող ու սպառվող պաշարներով։ Նրան սպառնում է նաև ներքին էորուստը։

Բյուր մարդոց մեջ, պաղ մարդոց մեջ,
Ռապես արտօնմ անապատում,
Մենակություն, մենակություն։

Այս բոլորը դրսեորում են անհատի և շրջապատի ուրույն հարաբերությունը, այսինքն՝ այնտեղից է սկիզբ առնում Տերյանի մարդասիրական պոեզիայի բուն հոսանքը։ Տերյանը գրել է սիմվոլիստական երանգներ ունեցող զանազան ոտանավորներ («Աշնան մեղեդի», «Ճիրություն» և այլն)։ Բայց անզամ նրանց մեջ այս կամ այն շափով լսվում է այս մեծ ցավի արձագանքը։

Բանաստեղծի մասին խոսելիս, պետք է ամենից առաջ կանգ առնել կյանքի մթնոլորտում ձեւավորված նրա ներքին աշխարհի վրա։

Տերյանի ներքին աշխարհից ծնված երգը ցավի մի պատմություն է, որը, բնականաբար, չի հարմարվում սիմվոլիստական հայտնի աշխարհայեցողությանը։ Ճիշտ է, ինչոր կետում, ինչոր սահմանագծում սիմվոլիստները հակառակում էին կյանքի արատավոր կողմերին, չեն հարմարվում գոհեհիկ, տափակ միջավայրին ու նյութապաշտ ոգուն։ Բայց հենց այստեղ էլ ավարտվում է նրանց աղերսը կյանքի հետու Այնուհետև նրանք վերջացնում են իրենց անելիքը աշխարհի հետ, և իբրև հակադրություն կամ փախուստ, ստեղծում են իրենց հակաշխարհը, արվեստից դուրս մղելով կենսական բովանդակությունը, կյանքի գծերը, հասարակական էներգիան։ Զերմություն չստանալով կյանքից, այսինքն՝ կյանքի իրենց ճանաշած կամ ընտրած ոլորտներից, չնկատելով կամ շտեսնելով տալով կենսական էներգիայի ակունքները, նրանք իրենց հերթին ոչինչ կամ շատ քիչ բան են բերում կյանքին ու մարդկանց։ Այս պարագայում սիմվոլիզմն ամենաքիչը՝ կորցնում է հասարակական ազդեցության ուժը կամ իր ընթերցողին դուրս մղում հասարակական էներգիայի ու շարժման ոլորտից։ Գե՞ որ սիմվոլիզմը գրականության մեջ տարածում է մենամոլություն, հաստատում «հսկա»-ի իշխանություն, բացառելով այլասիրությունը, որ մարդասիրության

Հիմքերի հիմքն է՝ Դա շատ լավ էր ըմբռնում բոլորովին պատասխանի Միսաք Մեծարենցը՝ կովելով «Ես»-ի ոչնչաբանության դեմ։ Սիմվոլիզմը շատ դեպքերում հանում է բովանդակությունը՝ կյանքի բուն պատկերը, մարդու ուշագրությունը թեքելով դեպի անիմանալի սիմվոլների ու միստիկ խորհրդածությունների աշխարհը։ Նման դեպքերում ավելի հարմար է դիմել Հենց իրենց, նշանավոր սիմվոլիստների հայացքներին, ինքնաբնութագրումներին։

Ուստի նշանավոր սիմվոլիստ, բանաստեղծ, տեսաբան Բայլ-
մանտը դիպուկ է բնորոշում սիմվոլիզմը.

«... Ըեալիստները միշտ հասարակ դիտողներ են, աիմվոլիստները, ինչպես միշտ՝ մտածողներ, ուեալիստները բռնված են կոնկրետ կյանքով, ինչպես ալեբախությամբ։ Դրանից այն կողմ նրանք ողինչ չեն տեսնում, սիմվոլիստները՝ օտարացած ռեալ իրականությունից, նրա մեջ տեսնում են միայն սեփական երազանքը։ Նրանք կյանքին նայում են պատուհանից։ Դա այն պատճառով է, որ ամեն մի սիմվոլիստ, թեկուզ ամենափոքը, բարձր է ամեն մի ուեալիստից, թեկուզ ամենամեծից, մենք գեռ մատերիալի ստրուկն է, մյուսը հեռացել է իդեալական ոլորտը»։ Այսպես է նա գրել «Ճարրական խոսքեր սիմվոլիստական պոեզիայի մասին» հոդվածի մեջ։

Այս խոսքերը նաև յուրօրինակ ինքնաբնութագիր են։
Սիմվոլիզմի փորձից և տեսությունից կարելի է բերել նման
հարյուրավոր օրինակներ։

՚ՆՀՆ աղերս ունի Վահան Տերյանը այս սիմվոլիզմի հետ:
Այստեղ նկատելի է ոչ թե հարազատությունը, այլև օտարացումը: Տերյանի այսպես կոչված պոեզիան, բնիելով կյանքից ու լառապանքից, ունի նաև սոցիալական ներքին մեծ արժեք, նրա Ճերած նորություններն էլ որոշակի շափով թելադրված են ժողովրդի և մարդու նկատմամբ ունեցած սիրուց:

Տերյանը ստեղծել էր նոր որակ նաև քաղաքացիական պոեզիայի ասպարեգում։ Հայրենիքը իր ուրույն բախտով, ամբողջ կյանքում, ցավ է բերել իր նուրբ և զգայուն զավակին, եղել նրա հույզերի և խոհերի բուն ակունքը։ «Երկիր Նախրին» կարուտի և քնքանքի, խոր խոհերի և ցաված սիրո

աշխարհն է: Թոլոր բանաստեղծները գրում են Հայրենիքի մասին, բայց նրանցից յուրաքանչյուրն ունի ի՞ր հայրենիքը, որի մեջ ընդհանուր ճշմարտությունների հետ առանձնանում է ստեղծող անհատի սիրո և ցավի երանգը, իր հոգու փայլը, գեղեցկության ուրույն բնկալումը, իր իսկ առանձին հայացքը, ավելի ճիշտ՝ փիլիսոփայությունը ապրած օրերի և բացվող հորիզոնների մասին: Վահան Տերյանի «Երկիր Նաիրին», իհարկե, նույն Հայաստանն է, պատմության քառուղիների վրա գտնվող երկիրը, որի մասին գրում էին Սիամանթոն, Վարուժանը, Թումանյանը: Եվ, սակայն, երևություների ընկալման, նորագույն հոգեբանության և կենսափիլիսոփայության տեսանկյունից և գեղարվեստական առումով Տերյանի հայրենիքը հայտնագործածիյուն էր հայ արվեստի ու մտքի մեջ: Աղետի տարիներին ձևավորվում է նրա նոր հայացքը հայրենիքի մասին, ծնվում է Երկիր Նաիրիի բախտի փիլսոփայությունը, ամբողջանում է հոգեոր Հայաստանի կերպարը: Այս նոր երգի աշքին հայրենիքը նմանվում է երակը կտրած գեղեցկունու, որը րոպե առ րոպե կորցնում է վաղեմի փայլն ու կենսական գեղեցկությունը: Ի՞նչ խոսք, այս դեպքում յոթնապատիկ երևում է կորսվող գեղեցկությունը և յոթնապատիկ է դառնում սերը: Դա մի հասկանալի երևույթ է և զաղափարի, և հոգեբանության առումով: Տերյանը մեռնող գեղեցկությանը բերում է վիրավոր մտքի և սրտի, բեկվող հոգիների երգը, հարազատ ցամի մեղեղին:

Հայրենիքում իմ արևաներկ
Գրշերն իշավ անլույս ու լուս,
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Ե՛վ վարդի բույր, և՛ սրտի հուր
Ամէն մի միտք հիմա մի վերք,
Ամէն հայցը հատու մի սուր,
Արնոտ դիերն են համբ ու մերկ
Նայում երկինք անզոր ու զուր:
Մի օր ինչ վառ ծաղկեց ձռպատ
Մեր նախրայն սիրտը բեկված,
Հրով որբան խորդդավալոր.
Ահա որպես ծաղիկ թերված
Մեր հին հոգին համբ ու մալոր
Աշխ, և անզո՞ր, և անարդվաճ...

Ցավից մշուշված հայացքի առջև կանգնում է հայրենիքի պատկերը, երևում են լքնաղ տեսիլներ, թովիչ պատկերներ, սրբազն դեմքեր։ Մի անօրինակ ուժով նա կապվում է հայրենի աշխարհի հետ։ Բանաստեղծը գեղարվեստի լեզվով գնահատում է հայրենի սրբությունները, անգամ՝ «գերագնահատում»։

Տեղի է ունենում ստեղծագործական և զուտ մարդկային հոգեբանության տեսակետից մի հետաքրքրական երևությունը Սիրո զգացումը մեծանում է, տարածվում կորսոյան տագնապին զուգընթաց։ Աղետների ու արյան մեջ մի առանձին իմաստ են ստանում հայրենիքը, հողը, տունը, օջախը, մայրը, հիշատակները։ Ցուրօրինակ սերը կորսոյան ցավի աջակցությամբ լույս է նետում ամենոր, բոլոր մեծ ու փոքր, տեսանելի և անտեսանելի իրերի և առարկաների վրա, ընդգրծում։ Կ մեծացնում այն ամենը, ինչ կործանվում է կամ դատապարտված է կործանման։ Սիրո միջոցով հայտնաբերվում են նաև հոգեկան կերտվածքի թաքում հատկանիշներ, ստեղծվում է հոգենոր երևությների մի յուրօրինակ թանձրացում, որի միջոցով բանաստեղծության մեջ նաև մարմին է առնում հոգենոր Հայաստանը։ Մի ինչ-որ անիմանալի ուժով միանում են հինն ու նորը, հառնում են նաև անցյալի արդեն խորհրդավոր ավանդները, մորմոքում են նաև հինավորց վերերի սպիները։

Իրար հաջորդում են բազմազան տեսիլներ... ֆաղկում է բանաստեղծական հիշողությունը։ Ահա թախիծով մշուշված մի գեղեցկություն՝ նաիրուհու պատկերը հեռավոր հյուսիսում։

Բարակիրան՝ նաիրուհին ինձ ժպտաց,
Նաիրուհին տիտուրայա և համեստ。
Այնպես վառ էր լեռնադասը դեմքը բաց,
Նս լվածն այնպես հրեղեն ու անարվեստ։
Այդպես արեն է զուր նայում մոթ ամպից
Իմ նաիրյան բա՛րեր, բա՛րեր աշխարհում։

Ահա հայրենի օջախի սրբազն տեսիլը, հարազատ անկյունը, այստեղից է բխում սիրո աղբյուրը։ Հիշողության մշուշից ելնում են ձև է առնում մոր նորը, անարվեստ կերպարը։ Անկրկնելի այդ գեղեցկությունը գառնում է հայրենի հնօրյան երեխաթի շաղախը։

Կարծես թե դարձել եմ ես տում, :
Բոլորն առաջվանն է կրկին։
Նորից դու հին տեղը նստում,
Եարժում ես իլիկ մեր հին։
Մանում ու հերիաթ ես ասում,
Մանում ես անվերց ու արագ։—
Սիրում եմ պարզկա բո լեզուն,
Զեռներդ մշշլած ու բարակի
Նայում եմ, մինչև որ անզոր
Գլուխս ծնկիդ է թեքվում։
Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում։
Արկը հանգչում է հեռվում,
Գետից բարձրանում է մշուշ,
Հերիաթդ անվերց օրորում,
Խիկդ խոսում է անուշ...»

Այս գերող մինուլորտը անտեսանելի վերաճում է մեծ ընդհանրացման, ծնվում է մի ուրույն փիլիսոփայություն՝ Հայաստանի անցյալի, ներկայի ու գալիքի մասին։ Հուսալրգության և անկման օրերին, պատմությունից, հողից, արյունից, հոգուց, Տերյանը քաղում է խոհերը՝ Հայաստանի գալիքի մասին։ Հոգենոր Հայաստանի գաղափարը կրկին ընդունում է իրական կերպարանք, վերաճում ժողովրդի կենսական գոյության հավատի։ Արյան ու խավարի մեջ մեղմիկ առկայժմում են հավատի ու հույսի ճրագներ։

Ինում է գիշերն անգութ ու մթին,
Եվ այգը բացվում դառն ու մահանուա,
Բայց հրկնեց հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է զեռ բո առավոտին...»

Տերյանը ծանր կակիծով երգում է արնաներկ հայրենիքի օրհասի և յոթնապատիկ խոցված Տիրամոր տառապանքները, երկրի երեկվա արեային գույներին հյուսում ներկայի մահվան տագնապաները։

Զկար երկրիս նման պարտեզ—
Եվ նա ավեր, շարին ավար...
... ինչպես կարկուտն արտն անարատ
Վայր է թափում այնպես առատ,
Այնպես անգութ երկրում իմ որր,

Նայիր՝ թափված քանի կորյուն—
Որքան, որքան, որքան արյուն,
Վերքեր—վարդեր արնոտ ու բորր...

Նույնիսկ այս պահին նրան անհավատալի է թվում իր ժողովրդի մահը: Հավատարիմ պատմության ոգուն և ժողովրդական կենսահայեցողությանը, Տերյանը ստեղծում է Երկիր Նախրիի կենսունակության երգը. ամբողջացնում ուրույն երանգ ունեցող մի փիլիսոփայություն: Նրա ստեղծագործության մեջ հայրենիքի կերպարի հետ միասին ուրվագծվում է նաև նրա որդու՝ ուխտավոր, անդուզ զարերի ժառանգի՝ նախրցու կերպարը: Քայլում է պատմության դժվար ճամփերին մի միայնակ հայրենիք, մի հինավուրց երկիր: Արյուն է նա տալիս, թուլանում, թեքվում հողմերից, բայց քայլում է: Այդպես անկանգ առաջ են գնում նաև հայոց որր մանուկները: Այս ապրումների մեջ թանձրանում է ծանր ուղի ընտրած հայ մարդու կենսական որթմին նվիրված տողը:

Դանդաղ է հայում նօգնատանց իմ ձին...

Գնում են հայրենիքը, որը մանուկները, հոգնատանց հայր, դանդաղ առաջանում է հայոց բախտի երիվարը:

Հայ ժողովրդին վիճակված էր դարերի դժվար, բայց հավերժական ու սուրբ մի ուղի:

Ուխտավոր անդուզ, զարերի ժառանգ
Մի հեր նախրի՝ գնում եմ անկանգ.—
Թող զուժկան գիշեռ ահասաստ դավի—
Որքան մութք ուն այնքան ես համառ,
Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար,
Սո՞ւրբ է քո ուղին և պասի՛ վեհ...

Տերյանը հայտնագործում է ժողովրդի ուժի աղբյուրը, դարերի ճանապարհի ստեղծած հոգնոր հարստությունը, ամբողջ էությամբ ընկալում հայրենի երգը, արտմությունը, իմաստությունը, արքայական լեզուն, արվեստը, կենսունակությունը, մարդասիրությունը:

Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր,
եղ անպարտ երկիրն այնպես արյունոտ...

Իր նրբին երգերով, թվում է աննկատելիորեն, աղետի օրերին Տերյանը դիմում է պատմության փորձին: Նա մի հայացք է նետում դեպի ասորացիները, բարելացիները, հին եգիպտացիները և փորձում է գտնել հայ ժողովրդի գոյության բուն կովանը: Այդ նրբին քնարերգուն դրսենորում է իմաստուն հայացք պատմական փորձի նկատմամբ՝ նայում անցյալին ու ներկային: Նա ուրույն ձևով առաջ է քաշում իր տեսակետը կենսական ուղիների մասին, ժողովրդի գոյության գաղտնիքը տեսնում է ընդհանրապես մաքառման, մասնավորապես հոգնոր պայքարի մեջ: Տերյանը միայնակ չէր, դարասկզբին արևմտահայ նորագույն բանաստեղծները ևս եկան այդ մտքին, որ ուզմի պայքարը միայն զոհեր է տանում, կործանարար է, և պետք է ընտրել նաև պայքարի մի ուրիշ ուղի: Սիամանթոն «Սուրբ Մեսրոպի» մեջ անցյալից դուրս է քաշում հոգնոր պատերազմի ավանդը՝ զա համարելով շափազանց կենսական մի ուժ խառն ու շփոթ օրերի համար Այս հայացքը թելադրված էր ապրված ժամանակով: Հայ ժողովրդը կովի գաշտում, հզոր պետությունների գեմ մնացել էր անզոր և այլևս գրեթե արյուն շոներ թափելու պատերազմի գաշտերում: Այժմ արդեն նա պետք է հավաքեր ու զարգացներ հոգնոր ուժերը, իր դպրոցը, լեզուն, մշակույթը, գրականությունը, հասներ ներքին միասնության: Գա ազգակառուց մեծ գործ էր: Այս հայացքի մեջ տվյալ ժամանակի համար պատմության կարև միջոցի տեսանկյունից կար մի խոշոր նշանաւորյուն: Խոգեոր մաքառումը, հարատեկու կենսական ձգտումն ու ներքին լարումը, կենսունակություն պահպանելու առումով, լինելով կաւեռ գործոն, հաղահական մեծ բախումների պահին փոքր ժողովուրդների համար ձեռք է բերում գրեթե նակատագրական նշանակություն:

Այս մաքառումների ճանապարհին՝ պատմական հանգամանքների թելադրանքով, Տերյանը գտավ ճշմարտության նոր ուղին, նոր փրկարար օրը.

Նոր օր է բացվում ազգերի համար,—
Իմ հայրենիքում տիրում է գիշեր...

Նա գնաց դեպի սոցիալիստական հեղափոխություն: Այդ անցման մեջ մյուս գործոնների հետ բացառիկ դեր խաղաց

նաև իր տառապած Հայաստանի նկատմամբ ունեցած սերը: Հետեւ նորագույն անցքերի տրամաբանությանը, նա համեցավ, որ մարդու և ազգության փրկությունը կապված է միայն սոցիալիստական հեղափոխության հետ: Զուլավեց բանաստեղծի ներքին աշխարհը, նա դուրս եկավ «որոնումների, կանկածների անտառներից»:

Չարենցը շատ է որոնել և հաճախ էլ կրկնել իր մեծ ուսուցիչն: Նա էլ է ապրել նույն տառապանքը և կանգնել նույն խնդրի առաջ՝ սոցիալիստական հեղափոխության առաջ Առաջին շրջանում Չարենց քնարերգուն դեռ չէր կարողանում նոր սկիզբ դնել հայ բանաստեղծության մեջ: Նա դեռ չուներ իր մեծ ասելիքն ու հայտնարերած աշխարհը: Նա դեռ Տերյանի շնորհալի աշակերտն էր, որը, սակայն, ինչ-որ շափով արդեն ուրուցի փայլ էր տալիս ուսուցչի բանաստեղծական մթնոլորտին: Երբեմն-երբեմն, իհարկե, նա դուրս էր գալիս Տերյանի ու Մհերենցի գծած շրջանից՝ սեփական բնագդի թելադրանքով կամ օտար հեղինակների ճնշման տակ: Այսպիս նկատելի է ֆրանսիական, լեռ և ոռւս սիմվոլիստների, որոշ լափով նաև նատուրալիզմի ազդեցությունը («Երեք երգ», «Տեսիլաժամներ», «Երեքը», «Հետերա երազ», «Մարի, էգ թոշու», «Միածան», «Ճամփին», «Անքուն գիշերին», «Մեռելոց»): Մույլ տրամադրություն, միստիկ երանգներ, թռքախտավոր կին, ողբացող քամի, անհայտ ուղի, հոգեվարք, մահվան տեսիլ, սեռական հրճվանք, անքուն գիշեր: Ահա ժերեք երգ տիրապալուկ աղջկան» գրքույկի մթնոլորտը: Նման կարգի երկերում ինքնուրույնությունը քիչ է, ասելիքը՝ խճճվածի: Օտար տրամադրությունների ոլորտում բանաստեղծը, որոշ բացառություններով, տուրք է տալիս մահվան տարերքին, միստիկային ու նատուրալիզմին: Այդ բնույթի ոտանակորները և վաղ շրջանի բալլագները փոխ են առնված հիվանդ ու խառն հոգիներից: Իրոք, լեռ Պշիրիշևսկին, իտալացի գրող գ'Անունցիոյի որոշ երկերում: Ամեն գեպօւմ այս գրականությունը շատ հոգու էր կյանքի առողջ ակոնքներից և արմատապես ուղղված էր առաջավոր գրականության հումանիստական ոգու գեմ:

Թյուն եմ, ինձ մոտ խիղճ չկա, քանի որ բնության մեջ այն չկա»:

Այդ «գերմարդը» սոսկ մի մեքենա է, որին ղեկավարում է ուղեղը: Նա քայլում է իր զոհերի դիակների վրայով, անսահման եսամոլությամբ: Մորորում բոլոր սրբությունները: Նա ծիծաղում է մարդասիրության վրա՝ դա համարելով նախապաշարում, ծիծաղում է թունավոր, խայթող ծիծաղով: Այդ եսամոլ, թունավոր հոգու տեր «գերմարդու» մեծագույն հաճույքը միայն սեռի և կրքի անհոգի, անասնական տարեքն է:

Ահա այս գիրքն էր բուլվարում խորասուզված ընթերցում տասնվեցամյա Չարենցը: Նման բովանդակություն ունենին նաև մի ուրիշ լեռ գրողի՝ Տետմայերի երկերը, որոնք վաղ հասակում կարդացել էր Չարենցը: «Մահվան հրեշտակ» վեպում Տետմայերը ստեղծում է բարոյական կայուն աշխարհ չունեցող, կամազորկ մարդկանց կերպարներ, որոնք ինքնասպան են լինում (ինչպես Պշիրիշևսկու մոտ) կամ խելագարվում: Նրանք չունեն բարոյականություն, հասարակական արժեքների գիտակցում, պարտքի զգացում: Եվ զարձյալ նրանք էլ ապրում են բիրտ կրքերով և արատավոր զգացումներով: Նման տրամադրություններ էին իշխում նաև իտալացի գրող Գարրիել գ'Անունցիոյի որոշ երկերում: Ամեն գեպօւմ այս գրականությունը շատ հոգու էր կյանքի առողջ ակոնքներից և արմատապես ուղղված էր առաջավոր գրականության հումանիստական ոգու գեմ:

Չարենցը, որոշ լափով կրելով կարդացածի ազդեցությունը, այնուամենայիվ, այստեղ-այնտեղ, թեև անվատահ, բերում էր նաև ինչ-որ հարազատ բան իր պատանեկան ապրումներից: «Երեք երգի...» մեջ նկատելի են կենսագրական երանգներ, լսվում են նաև առաջին սիրո և մեղքի արձագանքներ, թեև պարուրված, այսպես ասած, օտար, «գերեզմանյին» մշուշով: «Տեսիլաժամներին» ևս բնորոշ են օտարածին, եկվոր տրամադրություններ.

Մի լուսե աղջիկ, լուսե մի մեռել
Օրերի միզում երեռում է ինձ:

Բայց իսկական տաղանդը լէր կարող անտարբեթ մնալ հարազատ եզերքի, շրջապատող միջավայրի և մթնոլորտի նկատմամբ, Կյանքը թափանցում է բանաստեղծի ձևավորվող աշխարհը՝ ինքնատիպ դրոշմ թողնելով հոգու, մտածումների ու երազների վրա:

Եվ ահա այս մթնոլորտում հանկարծ բոցկլում է կրաքը, խորթ ու կոպիտ աղմուկի մեջ լսվում է սիրո և կարոտի թախծալի մեզեղին, երկում են հասակը, դեմքը, ժամանակը, անգամ տեղը.

Ես նստում էի անմարդ բռվվարում՝
Աշնան արքի համբույրին գերին,
Եմում էր հոգիս երկնքի հեռուն,
Հսում էր հոգիս երզը զանգերին

Եվ հանկարծ այդ բառսից սկիզբ է առնում ու զանգերի դողանցի պես հնչում չահել հոգու կարոտի ծայնը: Պատանի բանաստեղծի երգերում բնական ու նրբին շեշտերով ուրվագծվում է էականը՝ հայրենիքի թեման: Նա գուռ է բացում հարազատ աշխարհի ու գույների առջև: Հայաստանը թափանցում է բանաստեղծական տարերքի մեջ, դառնում երազ, տեսիլ, աստղային կարոտ ու սուրբ անուրջ, բացվում խորհրդավոր առեղծվածներով («Հայրենիքում»): Հոգեկան այս բնական ու բարդ աղերսների հարստացմանը ինչ-որ շափով նպաստում են նաև Վահան Տերյանի հայրենական նվազները.

Չունապատ լեռներ ու կապույտ լճեր:
Երկինքներ, որպես երազներ հոգուն
Երկինքներ, որպես մանկական աշեր:
Մենակ էի ես ինձ հետ էիր դուն
Երր լսում էի մրմունջը լճի
Ու նայում էի թափանցիկ հեռուն,—
Զարթնում էր իմ մեջ քա սուրբ անուրջի
Կարոտը այն հին, աստղային, անհուն,
Կանչում էր, կանչում ձյունու լըռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին:
Խել գիշերն իջնում, ծածկում է հեռուն,
Խառնելով հոգիս աստղային մութին...

Ամեն անգամ, երբ նա դառնում է իր տեսածին ու ապրածին՝ դուրս է գալիս օտար ազդեցությունների ոլորտից, հյու-

սում է գեղեցիկ նվազներ: Մինչև «Ողջակիզվող կրակը» Զարենցի հոգին ընդունում է որոշ հակասություններ և տատանումներ, օտար ազդեցությունների պղտոր հոսանքը ինչ-որ շափով ճնշում է նրան: Բայց ներքին ուղին բոլոր դեպքերում ուներ բնական ընթացք: Բանաստեղծական մտածողությունը հետզհետե հարստանում էր և զուլավում: Վաղ շրջանի լավագույն երգերը օծված են թախիծով, հնչում են որպես հոգնաբեկ սրտերի անկեղծ արձագանք.

Հոգուս մեջ իշել ու փովել էր մի
Հիգանդու, հիգանդ ախրության հանգիստ:

Այս տողերը լավ են բնորոշում վաղ շրջանի տրամադրության բուն պատճառը: Կար ինչ-որ հիգանդու տիրություն կյանքում, մարդկանց շրջանում: Զարենցը հավատարիմ էր իր ոգուն, հասակին ու կենսագրությանը: Համենայն դեպս, այդ ճշմարիտ տաղանդը տեսնում էր նաև լուսե երազներ, և, ասենք, հայրենիքն էլ նրա համար արդեն գրեթե հեռավոր երազ էր և ծավալվող տեսիլքների շարք:

Այս հիգանդու տիրությունը և երազները խորապես մարդկային էին, քանի որ հայրենիքը՝ ուրեմն և երջանկությունը օր-օրի հեռանում էին բանաստեղծից:

Այսպես թե այնպես, Զարենցի քնարերգությունը վաղ շրջանում ինչ-որ շափով գեռ երեսում է որպես ստեղծման խառը տարերք: Բայց, բոլոր գեպքերում, նրա երգերում դըրսնորվում են ձիքքի հարստություն և խոսքի ճաշակ: Հակասական այդ վիճակը, լույսն ու ստվերը ակնառու էին նաև «Ծիածան» գրքում:

* * *

«Ծիածանի» մասին Զարենցը տարբեր կարծիքներ է հայտնել: 1932 թ. «Երկերի» առաջաբանում նա բացասաբար է խոսում վաղ շրջանի պոեզիայի մասին և նույնիսկ դրա ճնշող մասը դուրս է թողնում ժողովածովից: Այնինչ «Զարենցնամե» պոեմում 1922 թ., ուղիղ տասը տարի առաջ, այլ կարծիք էր հայտնել «Ծիածանի» մասին.

«Սիածանք»...

Արեն է այնտեղ—
Նախրյան թափածի միջից.
Հրկիված իմ հոգին բանտել
Եկ ուզում էր անդարձ շիջի
Իրանի արեն էր շող—
Լացակումած կապույտը նախրի...
Ու թախիծը—ինեղող, ճնշող,—
Խառնված ոսկեման հրին
(Դեռ չկա՞ր աշխարհում անշող,
Գևո չկար արեւ-նախրին...):

«Սիածանը» կապված է հայկական եղերքների հետ, նրա մեջ շողում է նախրյան լացակումած կապույտը, նրա մեջ իշխում է նախրյան խեղղող թախիծը: Ո՞րն է ճիշտը, որի՞ն հավատալ: Անկե՞ղծ էր Զարենցը անցած ճանապարհի գնահատության մեջ: Կարելի է ինչ-որ վեճ բացել նաև բանաստեղծի հետ: Բայց միշտ պետք է աշքի առաջ առնել մի իրողություն: Պուղիայում նա դրսկորել է արտակարգ անկեղծություն և անգամ կյանքի ամենածանր պահերին երբեք լի խաղացել ճշմարտության հետ: Համոզիլ չեւ այն տեսակետը, թե Յ0-ական թվականների աննպաստ մինուրտի պատճառով է Զարենցը դուրս հանել վաղ շրջանի բանաստեղծությունների զգալի մասը: Դա կարող է, թերեւ, վերաբերել միայն «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությանը, որը ձախ քննադատությունը որակում էր իրբեք նացիոնալիստական տրամադրությունների «կոնտրաբանդա»: Մնացած դեպքերում Զարենցը վախենալու ոչինչ շուներ: Զպետք է մոռանալ, որ ընդամենը մի տարի հետո, «Դիրք ճանապարհ»-ի մեջ նա հրապարակեց իր ամենախիզախ բանաստեղծությունները:

Հստ երկույթին 1932 թ., իր ստեղծած նորագույն արվեստի բարձունքից նայելով անցյալին, Զարենցը գնահատում էր հատկապես այն երկերը, որոնք արմատապես տարբերվում էին յյուս բանաստեղծների երկերից և հայկական բանաստեղծությանը բերում նոր որակ: Այսօր կարելի է ավելի հանգիստ գնահատել այդ անցյալը և որոնել արժեքավորը նաև պահպականի մեջ, ուր նկատելի հետք է թողել նոր բանաստեղծի ձիրքը, այսինքն, ըստ երկույթին, պետք է ընտրել միջին ուղին: Մի քանի գրականագետներ՝ խոսելով «Սիածա-

նք» և վաղ շրջանի երկերի մասին, անկեղծ ոգևորությամբ չգտել են գանազան զուբացանեռների միջոցով գանել նմանություններ: Գտած նմանությունների մեջ էլ նրանք տեսնում էին Զարենցի մեծությունը: Նրանք նշել են մի շարք ընդհանրություններ: Ա. Գրիգորյանն, օրինակ, Զարենցի մեծությունը տեսնում էր միայն նմանությունների մեջ, երբեմն հիմնավոր, երբեմն էլ անհիմն ընդհանուր եղբեր գտնելով Զարենցի ու Բլոկի միջև: Վերլուծությունների այդ եղանակը մի վրապում էր բանաստեղծական արվեստի գաղտնիքների և օրինաշափությունների աեւանկյունից: «Սիածանը», օրինակ, չէր կարող քննություն բռնել ազգային արվեստի մեջ՝ համաշխարհային արժեքի իմաստով, քանի որ այստեղ շատ ակնառու են նմանությունները, ընդհանուր եղբերը, երբեմն էլ պարզ կրկնությանները: Խսկական բանաստեղծը, անշուշտ, անխուսափելիորեն անցնում է նմանությունների միջով, բայց ավարտվում է և ամբողջանում տարբերությունների հմքի վրա: Այստեղ մեզ կարող է օգնել հենց ինքը՝ մեծ բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը: Նա «Օ լուրիկ» հոդվածում ժամանակակիցներին հիշեցնում է մի էական ճշմարտություն: «Բանաստեղծները հետաքրքրական են այն իմաստով, թե ինչով են տարբերվում իրարից և ոչ թե նրանով, թե ինչով են մեկը մյուսին նմանվում: Եվ քանի որ յուրաքանչյուր բանաստեղծի ծանրության կենտրոնը ստեղծագործական անհատականությունն է, ապա նմանողության ուժը մշտապես հակադարձ համեմատական է ստեղծագործական ուժին»:¹

Եթե յուրաքանչյուր բանաստեղծի ծանրության կենտրոնը ստեղծագործական անհատականությունն է, ապա, ինչ խոսք, ազգային բանաստեղծության ծանրության կենտրոնը ևս պետք է համարել ստեղծագործության անհատական ու աղջային ինքնատիպությունը: Զարենցի «Սիածանը» դեռևս լի տալիս տարբերության լուրջ որակ, այստեղ ավելի մեծ տեղ էին գրավում նմանությունները: Այլ բան է, որ նմանություններով հանդերձ, այս գրքում, կար ինչ-որ հայկական բան, որը, հակառակ Զարենցի ժառանգած գրական սիմեայի, արտացոլում էր նաև 10-ական թվականների հայկական կյանքի

1. А. Блок, Собрание сочинений, т. 5, 1962, стр. 135.

Հոգեբանությունը: Ծիշտն ասած, տողերիս հեղինակը ևս, այս հարցի մասին խոսելիս, բանավեճի ընթացքում նշելով առաջինների ընտրած սկզբունքի թերությունը, մոռացել էր այս երկրորդը:

Ռուս սիմվոլիստները մշակել էին մի սխեմա, որի իմաստը իրենք էլ դժվարանում էին բացատրել: Նրանք գտնում էին, որ չկա արտաքին աշխարհ, գոյություն ունեն, ի վերջո, միայն մեր զգայությունները: Աշխարհը գոյություն ունի սուկ գույնների համադրության մեջ, իսկ կապույտը, ոսկին, մանուշակագույնը ստեղծում են արտաքին աշխարհի պատրանքը Անգամ Բլոկը, սիմվոլիզմին նվիրված հոդվածում նշում է, որ իրենց առաջ քաշած այս սկզբունքը գույնների համադրության և ներքին իմաստի մասին անհնար է բացատրել, դա միայն կարելի է զգալ: Սիմվոլիստների այս տեսության մեջ թշում էր ենթագիտակցական կամայականությունը: Բայց ընդհանուր առմամբ դժվար չէ նկատել, որ գեղագիտական այս սկզբունքի փիլիսոփայական հիմքը իդեալիզմն էր, իսկ հասարակական ակունք՝ ժտավորականության վախը կյանքի կենդանի տարերքի և քաղաքական շարժումների հանդեպ:

Զարենցը ժառանգել է նրանց ստեղծած գույնների սխեման և անհամանը՝ այդպես էլ կառուցված է: Գիրքը բաժանված է երեք մասի՝ «Կապույտը», «Ոսկին», «Մանուշակագույնը» խորագրերով: Համաձայն սխեմայի՝ բոլոր պատկերները և տրամադրությունները հաջորդաբար պետք է պտտվեին այդ երեք գույնների շուրջ: Տերյանի ստեղծագործության մեջ էլ ինչ-որ շափով երևան են գալիս այդ գույնները, բայց այնտեղ չկա սիմվոլիստների գծած սխեման: Տերյանի գույնները ձուլվում են քնարական հերոսի բնական, նրին ապրումներին, ունեն հոգեբանական շատ որոշակի գեր: Այնինչ Զարենցը այս զեպում ստիպված էր փիլիսոփայել ուրիշի հնարած սխեմաներով և որոշ շափով կրկնել ժամանակի սիմվոլիստների հանրահայտ սկզբունքները: Պատկերավորման բռնազրության համակարգի, անիմանալի սիմվոլների հետ միասին, Զարենցը երբեմն-երբեմն արտահայտել է մոռայլ տրամադրություններ և կրկնել օտար զաղափարներ, որոնք չեն կարող գտնել Տերյանի պոեզիայում: Բանաստեղծի հայացքները պարզելու համար ամեն գեպում ծագում է նույն հարցը՝ ի՞նչ գիրք է

գրավում նա կյանքի նկատմամբ: Զարենցը ևս «Սիածանում» փորձում է յուրովի մեկնաբանել կյանքի և մահվան հավերժական հարցը:

Մահը, գիտե՞ս, մի լուսավոր առասպել է, քույր, կյանքը այնքան մեղի ու անգույն ու անբեր է, շույր: Մահը անուշ, անրշալույս տրտմություն ունի. Կյանքը սակայն շալող, փախչող, անհամբեր է, քույր: Կյանքի կանչը անկումների ազդարար է լոր: Մահը սակայն Կապույտ երկրի մի բանբեր է, քույր:

Զարենցը գունազարդում է մահը, գարձնում լուսավոր առասպել, գեղեցիկ փայլ ու երանգներ տալիս նրան: Ինչ-որ գրավիչ և լուսավոր, հեռավոր, կապույտ, խորհրդավոր բան, անրջալույս տրտմություն ունի մահը: Դրա հետ միասին նա պսակագերծում է կյանքը, այն համարելով անգույն, մեղի, անբեր, շալող, փախչող, մահը կապույտ երկրի բաններն է, իսկ կյանքի կանչը՝ անկումների ազդարարը: Ահա Զարենցի ժառանգած կենսափիլիսոփայական սխեման, որն, իհարկե, սկզբունքի և հոգեբանության իմաստով շուներ որևէ ինքնուրույն և նոր բան: Մահվան մեղեղին և անդրշիրմի այս թեման նկատելի տեղ է գրավում «Սիածանում»: Զարենցը երազում է Ամենտի երկիրը, անդրաշխարհը, մի եզերք, որ տարփողվում էր սիմվոլիստների կողմից:

Այս բոլորով հանդերձ, Զարենցի պոեզիան էության մեջ շունի գտարյուն սիմվոլիզմի հայտնի խորթությունը, երբեմն էլ թշնամանքը կյանքի նկատմամբ: Սիմվոլիզմը ընդունելով միայն որոշ կողմերից, նա չի կորցնում կապը իր հարազատ տարերքի ու ժամանակի հետ: Սիսեմաների հաստ շերտի միջով այստեղ-այստեղ ճեղք են տալիս ու ծլարձակում բնական զգացումը, անձնական ապրումը, անհատական կյանքի լիցերը: «Սիածանի» մի շարք երգերում անտես ու թաքուն է նաիրյան թախծի ու գույնների նրբին շերտը: Կա գոյանում է նաիրյան թախծի ու գույնների նրբին շերտը: Կա այստեղ մի գրավիչ երանգ, որ զալիս է հայրենի հոգուց ու եղերից: Սիմվոլների քառոսում թաքնված են նաև անկեղծ թախծի ու տանջող կարոտ, տեղ-տեղ սառն ու օտար միտքն ու խոհը ետ են քաշվում և զգալի է դառնում տիխոր հոգու մորթը:

Մենք զիտենք, քույր իմ, մեզ կապույտը ո՞ւր կտանի, թե լուս լինենք, լուս ու հեղ-կապույտը ո՞ւր կտանի.

Նա—տրամունակ մի կարուտ, նրա անունը սակայն
ԱՇ գու գիտես, թուլը, ոչ ես,— կապույտը ո՞ւր կտանի...

Կապույտ երանգների մշուշի մեջ դժվար չէ զգալ 10-ական թվականների հայ սերնդին տանջող երազները։ Ցավին ու կարոտը թափանցում են բանաստեղծական սխեմայի մեջ, սիմվոլիստական եռագույն մշուշի մեջ գծագրվում է դարասկզբի հայ երիտասարդ մարդը, որը վերքեր է ստացել տիսուր կյանքում, արտահայտվում է այրվող երազների դրաման, որն այնպես բնորոշ էր նաև Միսաք Մեծարենցի և Վահան Տերյանի քնարական հերոսին։

Նա երգում է ոսկին, այսինքն՝ սխեմայի օգնությամբ փորձում է ստեղծել ոսկեգույնի սիմվոլը, բայց մեկ էլ ձիրքն ազատագրվում է կաշկանդող կապանքներից, պատկերի մեջ են խուժում նաիրյան դաշտերի ու արտերի երանգները։ Այս դեպքում ոսկին, ոսկեգույնը մինչև անգամ նրան մղում է երգելու հայրենի բնաշխարհը, արտերի ժամանքը, լսելու հայրենի եզերքներում «դողացող լույս հնչյունները» (Տերյան)։

Ես հավատում եմ հասկի շշուկին, խոռքին,—
Երբ հազել ես արեկ թափանցիկ ոսկին։
Հեռաստանները հացի—ոսկեգույն, ոսկեգույն։
Դու նայեցիր, ժամացիր իմ գունաւ հոգուն։
Աչքերիդ մեջ, հոգուս մեջ, բույր իմ, կար, բույր իմ, կար
Ոսկու շշուկ, ոսկու փայլ, ոսկու ճաճանն ոսկեվառ։

Ինչո՞ւ միայն գույներն ու բնությունը, նա գտնում է նաև հոգու խորքը տանող արածեանները։ Ահա ռԵիածանը» բացող ռԵլուսամփոփի պես աղջիկ» բանաստեղծությունը... սիմվոլների բողի տակ Զարենցը երգում է ցավը, զգայուն, նրբին հոգիների դրաման։

Այսպիս, ահա, տեղ-տեղ ուժ առնելով գրական ու կենսական ակունքներից, հաղթահարելով անհրապույր սխեման, երիտասարդ բանաստեղծը մտնում է մարդկանց աշխարհը, գրտնում կենսական հոսանքը։ «Ծիածանի» որոշ էջերում իսկական ներշնչումից ձևավորվում է մշուշը, խմորվում տառապանքը, սկսում են շողալ հարազատ երանգները, խփում են ցավի ու սիրո հարազատ շեշտեր։

Վ.Օ.Հ.Ս.Գ.ՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ Ս.ՈՒԱՍՊԵԼԸ

Ես ուզեցի երգել գովքը աստծո, երգել փառքը պայծառ սիրո և հացի, Սիրտս լցվեց... բայց չցիտեմ թե ինչու— Գորշ օրերի տաղուկությունը երդեցի... («Հարդազողի համփորդներ»)

— Դու ձշում էիր այնպես զաշնության, երբ անկան էր շուրջդ կյանքը... («Քիչ հանապահի»)

Պոեզիայի խառնարանում Զարենցը անվերջ որոնում է, անվերջ գտնում ու կորցնում է վկրզո, նա ելնում է մայրուղի, երգը մի ներքին գորեղ տրամաբանությամբ մտնում է կենսական մեծ տարերքի ոլորտը։ Բանաստեղծը համակվում է նոր տրամադրություններով, ավելի ճիշտ, շատ բան է «մոռանում» կամ զնում մի կողմ՝ հետևելով ծանր օրերի հրամայականին։ Իհարկե, մի այնպիսի բանաստեղծի համար, որի ազգը մոլոր կանգնել էր պատմության քառուղիներում, շեղվելն ու մոլորվելը մեծ արատ չէր։ Հաճախ կյանքի հաւակասկան բնույթն ու անբնական ընթացքը անխուսափելի կնիք են զնում բանաստեղծական փորձի վրա։ Զարենցն էլ ուներ իր շեղումներն ու մոլորությունները, բայց միշտ ձրգում էր գնալ դեպի կենսական ակունքները, որոնել ազգային-ծողովդրական կյանքի հոսանքը, բանաստեղծության կենարար սկիզբը։

Ռուսաստանում տեղի էին ունենում քաղաքական բարդ խմբումներ։ Մոսկվայում 1916—17 թթ. բանաստեղծը բազում է նորագույն շարժումների շոնչը, բարձրացող ուժերի թափը։ Պատանի բանաստեղծին շատ հարազատ էր բարձրացող ալիքը։ Նա կորցրել էր իր մանկությունը, իր ծննդա-

վայրը, Ընկերներին, կորցնում էր Հայրենիքը: Իրականությունը և Հասարակական շարժման էներգիան նրան մղում են դեպի կյանք: Մեծ բնազդով և քաղաքացիական համակարանքներով նա բռնում է այն ճանապարհը, որի մասին առանձին կրքով հայ գրական մարդկանց և մտավորականության հետ խոսում էր Վահան Տերյանը: Դեռ 1914 թ. վերջին օրերին «Հոգկոր Հայաստան» հոդվածում Տերյանը, ուրիշ շատ ցավոտ հարցերի հետ միասին, մի նոր խորհուրդ էր բերում հայ սերնդին. «Այսօրվա ահավոր անցքերը, ինչպես շատ իրավացի նկատել էր մի հայտնի ոռու գրող, ոչ միայն աշխարհագրական սահմանագծերը պիտի փոխեն, ազգերի փոխադարձ հաշաբերությունների մի նոր դասավորում ստեղծեն, այլև գաղափարական աշխարհում պիտի մի նոր հեղաշրջում, մի վճռական փոփոխություն առաջանեն»¹:

Զարենցը, որի համար Տերյանը կիսաստված էր, չեր կարող ծանոթ լինել այս հոդվածին, քանի որ 1915 թ. հայ մամուլը աղմկում էր Տերյանի հայացքների շուրջ: Նրան անպայման հայտնի էին նաև «Հայ գրականության գալիք օրը» (1914 թ.) գեկուցման դրույթները, քանի որ այս նշանավոր ելույթի շուրջը ևս մամուլը աղմուկ էր բարձրացրել: Ահա լայնորեն հայտնի այդ գեկուցման մեջ ևս Տերյանը մեր հայրենիքի ծանր օրերին մտավորականության առջև խնդիր էր դնում «գրականությունը դուրս հանել նեղ, անձուկ կղերական բանտից դեպի իսկական արվեստի անծայրածիր լայնությունը»: Նա գտնում էր, որ հայ գրականության «գունագեղ ծաղկումը կլինի այն ժամանակ, երբ երիտասարդ Ռուսիան կթափահարի իր արծվի թերը, երբ երկրի կենդանի ուժերը գարնան ելման ջրերի նման կշարժվեն՝ հզոր ու լիբնդրմանը²: Երիտասարդ Զարենցը մեծ լարումով որոնում է այդ կենդանի ուժերը, նրա մտահորիզումը օրեցօր լայնանում է, միտքը դառնում է ավելի սթափ, վերլուծող և նպատակալաց:

Սիմվոլիստական պատկերներին զուգընթաց, Զարենցի

ատեղծագործության մեջ սկիզբ է առնում ու խորանում մի ուրիշ թեմա: Գրական ազդեցությունների հետ միասին նա սկսում է տեղ բացել իր լսածի ու տեսածի, իր ապրած կյանքի համար: Զարենցին, բնականաբար, ամենից ավելի հուզում է հայրենիքի բահութը, որին մեծապես առնչվում էին իր կենսափորձն ու ճակատագիրը:

Գրական մողան, որին, ի գեպ, նա շատ արագ էր տուրք տալիս և շատ շուտ էլ լքում, ետ է մղվում: Բանաստեղծը խիզախում է արվեստի մեջ, քնքուշ, սենտիմենտալ, երրեմն կանացի ցավի ու մշուշու երանգների մթնոլորտից երգը տանելով դեպի անողոք ճշմարտության, կենսական երևույթների, ազգային և համաշխարհային աղետների, քաղաքական ու բարոյական փլուզումների ոլորտը:

1917 թ. «Պատանի» ալմանախի համար լրացրած հարցաթերթիկում Շիրվանզադեն գրել է, որ նորագույն գրական սերնդի մեջ նկատվում է ինչ-որ վեհերուտություն. նման շրի ափին նստած մերկ մարդուն, որ չի համարձակվում նետվել չուրը, նորերը վախճանում են ձեռք զարկել մեծ կտավների և մտնել բուռն կյանքի մեջ:

Բայց այդ իսկ պահին, գրական հորիզոնում բարձրանում էր այդ խիզախ պատանու կերպարանքը, մի մարդու, որին կյանքը արդեն մի փոքր խաթարել էր, բայց և տվել տարերային վիթխարի ուժ: Նա նղիշե Զարենցն էր, որ հյուսում էր արդեն իր հայրենիքի նորագույն կյանքի տխուր առասպելը, անցած ճանապարհի պատմությունը: Այդ պատանին անցել էր աղետալի ճանապարհ, սայթաքել, բարձրացել, որոնել ու կորցրել, երեքմն էլ առնչվել մեղքերի հետ: Բայց այդ բռոլորի մեջ թրծվել էր իսկական մարդը, քաղաքացին, որն ընդհանուր աղետների ու արյան մեջ արդեն ծանրորեն մաքառում էր գալիքի համար:

Մեր գրականագիտական աշխատանքներում, թվում է, հաճախ է վաղ շրջանի Զարենցը ենթարկվում ժամանակագրական մասնատումների, որոնց հետ կապվում են նաև ոճական յուրահատկություններ: Զարենցը սիմվոլիստ, Զարենցը նատուրալիստ, Զարենցը ռեալիստ, Զարենցը ռոմանտիկ: Թվում է՝ այդ շափազանցությունների պատճառով մենք կորցնում ենք ամբողջական Զարենցին, հակասությունների

¹ Վահան Տերյան, Երեսի ժողովածու, հ. 2, 1981, էլ 318:

² Նույն տեղում, էլ 302:

սովորված առաջացող այն բանաստեղծին, որի ստեղծագործությունը ունի իր կենտրոնական հյարդային համակարգը և ողնաշարը։ Հենց ամբողջ հարցն այն է, որ ջարենցը սկիզբ է առնել այս ներքին հասունացման միջոցով և գնալով զորանում, ստեղծագործության համար ունենալով իր հողն ու պատվանդանը։ Ջխտելով օճական որոշ ազդեցությունները, մենք պետք է ծանրանենք այդ էականի, կենսական լիցերի, կյանքի գեղարվեսական պատմության վրա, որը ստեղծվել է ռեալիզմի և ռամանափառմի ուրույն ներքափոխության կամ փոխներգործության միջոցով։

«Կապուտաչյա հայրենիք», «Դանթեական առասպել», «Վահագն», «Աթիլա», «Ազգային երազ»՝ ահա այն երկերը, որոնք իսկապես նոր էշ էին բացում հայ գրականության պատմության մեջ, եթե այս երկերին ավելացնենք նաև մի շարք քնարական գլուխգործոցներ («Հայրենիքում», «Հարդագողի ճամփորդները», «Դիշերը ամբողջ», «Ծիածանի» մի քանի հատվածներ, «Հրդեհը»), հոգու պատկերը կամրջանա, և մենք կտեսնենք մի ամբողջ միասնական գեղարվեսական հարստություն։

«Կապուտաչյա հայրենիք» և «Դանթեական առասպելը» նոր երևույթ էին հայ բանաստեղծության մեջ, առանձնանում էին ուրույն ձեռվ և բովանդակությամբ։ Քնքուշ և տխուր քնարերգուն՝ Տերյանի աշակերտը, արդեն անցնում էր ծավալուն տեսակներին, մասնավորապես պոեմի ժանրին։ Այս անցումը շատ նշանակալից էր, կապված լուրջ ազդակների և մզումների։ Եթե, շատ բան էր ասում նաև նրա ձիրքի և ընտրած նյութի մասին։ Հայկական բաղաքական ողբերգության նորագույն պատմությունը արդեն ենթադրում էր պահմի անհրաժեշտությունը, որն ավելի տեսանելի և խորն է ներկայացնում դեպքերի էպիկականությունն ու գրամատիկ բնույթը։

Բայց այստեղ էական դեր էր խաղում նաև ձիրքը։ Ջարենցը խորապես օծուված էր նաև էպիկական մտածողությամբ, որը բնորոշ էր, օրինակ, Վահան Տերյանի և Ավետիք Խաչակյանի ձիրքին։ Հետևաբար Ջարենցին, այս զորեղ և բազմաձիրք անհատականության էր վիճակված դիմանալ նոր նյութի ծանրությանը և մարմին տալ ժամանակի գեղարվես-

տական պահանջներին։ Վերջապես ուրույն փոփոխություն է կատարվում նաև երիտասարդ գրողի գեղարվեսական մասությունը մեջ, նաև այս մեծ թեմայի հայրենիքի կերպարի առջև կանգնում է նախնական անաղարտությամբ, արյան ծանր հիշողությամբ և սրբազն դողով։ Այս ամենի մեջ լուրջ պեր է խաղում հոգեբանական գործոնը։ Պոեմների և բնարաւելան որոշ երկերի մեջ նա ազատագրվում է գրական օտար ոճավորումներից, մտնելով իր տարերքի մեջ։ Դա պետք է բացատրել նախ այն վերաբերմունքով, որ նա ուներ գեղի բնտրած նյութն ու աշխարհը։ Ջարենցը տեսել էր ժողովրդի աղետները, տեսել և խորապես ապրել։ Նրա տեսածն ու ապրածը շափազանց ուժեղ էին, զորեղ և, բնականաբար, պոեզիայից դուրս են հանում օտար մզումները կամ դրանք նմիակում ընդհանուր գաղափարին, տրամադրությանը, ոճին։

Ջարենցը ազգային ողբերգությանը մոտենում է որդիական ցավով և արյունով։ Ինչպես կյանքում, ույնպես էլ բանաստեղծության մեջ, տառապող, հարազատ զավակը շի ծամածովում։ Բայց յուրաքանչյուրը տանջվում է յուրովի։ ամեն բանաստեղծ բերում է ցավի, և հույսի իր եղանակը, իր նվագը։

Այս իմաստով շափազանց ուշագրավ է՝ «Կապուտաչյա հայրենիք» պոեմը։ Ահա այստեղ ծագում է առաջին և երկրորդ տարբերակների հարցը։ Ջարենցը տիսրության մշշուշին երկրորդ տարբերակում տվել է ավելի շոշափելի, բնական շեշտեր, ընթերցողին մոտեցնելով հայկական տանջող ցավերին ու հույսերին։ Ե՞րբ է մշակել։ Արդյոք հենց 1912—22 թթ. երկհատորյակի հրատարակության ժամանակի, թե ավելի շուտ։ Ըստ երևույթին երկրորդ տարբերակի ձևավորումը սկսվել է հենց «Դանթեական առասպելը» գրելու ժամանակից (1916 թ.)։ «Կապուտաչյա հայրենիքը» նա գրել է 1915 թ. գետրվարին, երբ դեռ որպես զինվոր ոտք չէր գրել Արևմտյան Հայաստան, թեև բացառված չէ, որ նա եղել է, օրինակ, էրգորումում, ուր ապրում էր քույրը, և ուրիշ վայրերում։ Հետևաբար նա դեռ ամբողջ խորությամբ զգիտեր այդ երկրամասի կյանքն ու ցավերը։ Մի քանի ամիս հետո նա մտավ այդ երկիրը որպես

զինվոր և ամեն ինչ տեսափ: Ուստի բնական էին առաջին տարբերակի տիրության մշուշը և նրանում մեծ տեղ գրավող միֆերի վերածնության հույսը: Այնինչ հետագա մշակման ընթացքում զորանում են դրամատիկ շեշտերը: Ամենայն հավանականությամբ այդ փոփոխությունների անհրաժեշտությունը նա զգացել էր «Դանթեական առասպելը» գրելիս, քանի որ իրականության անմիջական, ծանր ճնշման տակ Զարենց արդեն ուրիշ աշխերով էր նայում Հայաստանի կերպարին: Հայրենիքի ճակատագիրը հեշտությամբ քանդում էր ոռմանտիկ հույսերի մշուշու «պատնեշները»:

«Կապուտաշյա հայրենիքում» նկատվում է մի հետաքրքրական երեսոյ՝ գրական ոճի ուշագրավ փոփոխություն և նրբին համադրություն: Այնտեղ կարելի է տեսնել, թե սիմվոլիզմի որոշ երանգներ ինչպես են վերափառավորվում և յուրովի մասնակցում ողբերգության պատկերմանը: Կապուտաշյա հայրենիքը Հայաստանն է: Թերևս այդ գույնը՝ կապուտը, բանաստեղծական այդ երանգը հոգեբանական առումով բնորոշ էր հայրենիքին, որը գնալով հեռանում և երազ էր գառնում իր զավակների համար: Երբեմն-երբեմն վիշտը ստանում էր բնական գույներ, դառնում կործանված եղերքի նրբին պատկեր:

Օ՛, հեռավո՞ր, կապուտաշյա՝ սիրումիս...
Հովիտի մեջ փրփրոն զնոն էր հոսում
Ու փսփսում էր երազներ անհումի
Գորշ օրերի միամաս երազում:
Ելում էր մայրս տնակից հնամյա,
Սեր քայլերով զնում էր ափը զրի,
Աւ թթենին մեղմ օրորում էր նրա
Թափիծը հին, անհրապույր օրերի...
Ես շփառեմ, ես շփառեմ հիմա էլ՝
Աղջիկ ես գու, թե այն տնակն ու այգին,
Ուր հոսեցին իմ երազները շահել
Ու վայրկյանները անսփոփ պատրանքի:

Զարենցը երգում է տունը, ծեր մորը, թթենին, գետափի տիրամած երազը, հովտի միջով հոսող փրփրուն գետը, հարազատ եղերքը և մեծ հայրենիքը, արն այլևս չկար: Խորունկ է այն խոհը, թե սերը ծնվել է կորստից հետո, հայրենիքի կործանումից հետո: Չէ՞ որ առաջ հաղը, երկինքը, տունն ու

եղերքը, ամեն ինչ թվում էին այնքան հավիտենական, որքան իրերի բնական ընթացքը: Առաջին հրատարակության մեջ այս խոհը փոքր-ինչ մշուշու էր.

Բայց ես գիտեմ, որ սիրեցի քեզ մի օր,
Երբ թթենու լալահառալ երգի տակ
Էսցի իմ կարուի ձայնն հեռավոր,
Որ թվաց մի մեռած բախտի հիշատակի:

Երկրորդ տարբերակի մեջ մեռած բախտի հիշատակի ձայնը դառնում է այրող տող ու բաղաքական բախտի շատ որոշ արձագանք:

Բայց ես գիտեմ, որ սիրեցի քեզ մի օր,
Երբ համացած, որ աշխարհում դու չկամ,
Բայց երազի ուղիներով հեռավոր
Դու մի գիշեր պիտի իշնե՞ս, պիտի զամ:

Պոեմում շատ բան գեղեցիկ է ու բնական: Բանաստեղծական մշուշի մեջ Զարենցը կրկին Տերյանի հետ է: Ճիշտ կլինի ասել, որ այս գեղքում աշակերտը տեղ-տեղ մրցում է ուսուցի հետ: Անավարտ պոեմի հատվածներում պահպանվում են նաև սիմվոլիստական պոետիկայի որոշ երանգներ, ոճավորումներ, արտահայտչական միջոցներ և այլն: Բայց ստեղծվում է էականը, ուրվագծվում է Հայաստանի կերպարը, լսվում են քաղաքական աղետների արձագանքները: Այս ծանր մթնոլորտից էլ ծայր է առնում հույսի բուն հոսանքը, որը պոեմի գեղարվեստական բուն արժանիքն է: Պատկերները տողորված են թախիծով, կախարդող անկեղծությամբ: Դա բանաստեղծությանը տալիս է բնական փայլ՝ դառնալով քաղաքական երկույթների հոգեբանական-հույսական համարժեքը.

Ու ժպտում էր ինձ երկիրը տրտում,
Երկիրը ցավի, սուզի, արյունի...

- Առաջին տարբերակի 9-րդ գլխում երկիրը բառի փոխարեն գրված է խորան: Զարենցը, մնալով տառապանքի և խոչերի նույն մթնոլորտում, եթե կարելի է այսպես ասել, ավելի հստակ էր դարձնում բանաստեղծական հասցեները և ցավի լեզուն:

Նա երգում է՝ կապուտաշյա սիրուհու, իր որբ երկրի
բախտը: Ի՞նչ է պատահել այդ երկրի հետ: «Երկիր իմ որբ,
արևաքամ ու ավերակ», — ահա նրա վիճակը՝ բնութագրող
տողը: Ծնցող տպավորություն է թողնում հնձվորների՝ այ-
սինքն, երկրի կորած, սրի քաշված զավակների թեման: Չեն
դարձել հայոց հնձվորները արյունոտ դաշտերից, նրանք
«հնձում են» տիտուր հեռուներում, իսկ երկիրը մնացել է
անտեր:

Հնձում են հրմա հնձվորներն այստեղ.
— Ճերմակ սիրուհի, էապուտաշյա բո՞յցր...
Արկը հրմա այրում է այնտեղ
են՝ դժ հնձվորների կրծքերը մաքուր...
Իսկ ես անսփոփ սպասում եմ զեռ
Վերագարձների բերքառատ ժամին:—
Օ՛, հեռու իմ քույր, երկիր իմ անտեր—
Այստեղ, երկի քրչում է քամին...

Ինչպես 9-րդ գլխում, այնպես էլ այս հատվածում, Զա-
րենցը կատարել է որոշ ուղղումներ, ճշտումներ, հստակելով
միտքն ու պատկերը:

Օ՛, անուակ քույր, օ՛, լուսավեր քույր,—
Այստեղ, երկի, քրչում է քամին...

Այս մշուշտ, բայց ենթատեքստով հասկանալի երկտողը
դարձել է.

Օ՛, հեռու իմ քույր, երկի իմ անտեր—
Այստեղ, երկի, քրչում է քամին:

Այս փոփոխությունները, անշուշտ, հոգեբանական առու-
մով ունեն «հին» պատմություն, կատարվել էին մինչև
1920 թ., քանի որ մի կողմից՝ ավելի էին շեշտում քաղաքա-
կան ողբերգությունը, մյուս կողմից՝ կարող էին երեան զալ
գեղարվեստական մեծ փորձի տեսական ճնշման տակ: Ես նկա-
տի ունեմ «Դանթեական առասպելը», «Վահագնը», «Աթի-
լան» և մի շարք բանաստեղծական շարքեր... Խսկ 1921—22
թթ. Զարենցը բռնկված էր նոր հոգսերով, ապրում էր բա-
նաստեղծական ուրիշ եզերքում:

«Կապուտաշյա հայրենիքի» մեջ անվերջ մորմոքում է ցա-
100

վի մեղեդին: Տիբրության միջով նրբորեն անցնում է նաև
մշուշու երաղը գալիքի մասին...

Օ՛, իմ հեռու, կապուտաշյա սիրուհի,
Երկիր իմ որբ, արևաքամ ու ավերակ...
Թրերում այս տառապանքի ու մահի
Վառել է իմ սիրտը հեռու մի կրակ:

Հայրենիքը ապրում է տառապանքի օրեր, բայց այդ տա-
ռապանքի մեջ էլ յուրովի ծագում է մի տենչանք գալիք
օրիվա նկատմամբ: Ե՞ր կարող էր ծագել այս հույսը: Այն
ժամանակ, երբ զեռ չէին սկսվել երկրի ոչնչացման սոսկալի
դեպքերը, երբ պատանի Զարենցը ինչ-որ հույսեր էր կապում
պատերազմի հետ, մտածելով, թե զա կարող է փրկություն
բերել Հայաստանին, ազատագրել նրան թուրքական լժից:
Թերևս այդ ոռմանտիկ հույսերը, որ արձագանք էին գտել
Հայաստանում, լիցքեր էին տալիս Զարենցի տեսիլներին,
որոնք ավելի մեծ տեղ էին գրավում պոեմի նախնական
հյուսվածքում:

Այս մինողորտում էլ, ահա, Զարենցը դառնում է նաև հե-
թանու աստվածներին, հինավորց առասպելներին, մասնա-
վորապես քաջության, հրդեհի և արկի աստված Վահագնին
ու սիրո աստվածուհի Աստղիկին, սերն ու քաջությունը հա-
մարելով կյանքի վերածնության հիմքը: Այդ հերանոսականը
բնավ նման չէր արևմտահայ հեթանոսական գրական շարժ-
ման և մտածողության ընդհանուր մինողորտին: Այսինքն՝
Զարենցը բնավ հակում չուներ. վերստեղծելու հեթանոս
կյանքի, կենցաղի, հեշտանքների ու կրքերի պատկերները:
Հեթանոսությունը այս դեպքում որոշ լիցքեր և սիմվոլներ էր
տալիս նրա քաղաքական մտածողությանը: Այս իմաստով նրան
շատ ավելի հարազատ է Սիհամանթոյի «Նավասարդյան ա-
ղոթքը...» հայոց արևորդիների ծննդյան մասին: Արտաքնա-
պես, ձևի իմաստով Զարենցի հեթանոսական այս սիմվոլ-
ները, կարծես, ավելի մոտ են սիմվոլիստների յուրահատուկ
դեպքին հետապնդության ակունքը, սիմվոլիստական
նորագույն բանաստեղծության ակունքը, սիմվոլիստական
պոեզիան համարելով ժողովրդական հիշողության զգիտակց-

ված մի օրգան, որն այլևս կարիք չունի դիմելու ժամանակակից ժողովրդական կյանքի և դասական պոեզիայի ակունքներին:

Ռուս սիմվոլիզմի տեսաբաններից մեկը՝ Վ. Իվանովը, դարասկզբին գրած մի քանի հոդվածներում («Պոետն ու ամբոխը», «Տառապող աստծու հելենական կրոնը») ողջունում էր բանաստեղծության և ժողովրդի, պոեզիայի ու ժողովրդական ակունքների պառակտումը: Նորագույն սիմվոլիստական դպրոցի բանաստեղծներին նա համեմատում էր հինավորց Ալեքսանդրյան դպրոցի բանաստեղծների հետ, որոնք հեռացած կյանքից, զբաղվում էին տեքստաբանությամբ, հնագույն եգիպտական և հունական տեքստերի վերծանությամբ: Բլոկը այդ դպրոցի «անցման շրջանի» պոեզիայի մեջ տեսնում էր նախամահու գեղեցկություն կամ նախահարության բաժանումն հայրենի սկզբներից: Միանալով Վ. Իվանովին, Բլոկը գրում էր. «Մենք մոտ ենք նրանց դարաշրջանին: Մենք պիտի սիրով նայենք «Պոետի ու ամբոխի» ճակատագրական պառակտմանը: Ոչ ոք այլևս չի կրկնի ժողովրդական պոեզիան, ինչպես այն ժամանակ այդ պոեզիան կրկնում էր Հոմերոսին: Մենք գիտակցեցինք, որ «ցեղը» ամենազոր չէ, և եկավ «տեսակի» ու «անհատի» ժավալման ժամանակը: Թերևս այդ ընդարձակումը բռնված է մթնշաղով, ինչպես այն ժամանակ Ալեքսանդրյանը, Համաշխարհին խոսրի («Աստվածաշունչ» Հ. Թ.): Հայտնվելուց երկու-երեք դար առաջ»¹:

Սիմվոլիստները կարծում էին, որ ժողովուրդն է «սիմվոլ գոել երգիների հոգու մեջ»: Սիմվոլների ուղին տանում է դեպի աշխարհի պատանեկության մոռացված հետքերը: «Սիմվոլիզմի ուղով ընթացող պահար ժողովրդական հիշողության շգիտակցված օրգանն է»:

Նրանք հատուցում են իրենց մեղքը, վերադառնալով ժողովրդական ոգուն: Բանաստեղծը դառնաւմ է ժողովրդական, իսկ ամբոխը՝ ժողովուրդ: Մի խոսքով՝ սիմվոլիստները ժողովրդային ոգին տեսնում էին լոկ հեռավոր, միջական ակունքների մեջ, բանաստեղծությունը ամբողջովին կտրում արդիականությունից ու բուն ժողովրդական տարերքից:

¹ А. Блок, Собрание сочинений, т. 5, 1962, стр. 89.

Եվ ահա ոռուսական բանաստեղծության մեջ երևան են գալիս միջական սիմվոլները, լեգենդար անունները, հոները, սկյութները, Աթիլան, ասորական ու հունական աստվածները: Ընդհանուր առմամբ, ինչպես տեսանք, տեսության մեջ այդ գարձը մեկնաբանվում էր որպես հրաժարում ամբոխից, ժամանակից, գնահատվում որպես ժողովրդայնության նոր որակ, որը իրը ծնվում է հենց ժողովրդական կյանքից բաժանվելու ճանապարհով:

Զարենցը նույնպես դիմում է հեռավոր լեգենդներին ու աստվածներին, որոշ իմաստով սիմվոլացնում հայկական առասպելի հերոսներին, ասենք՝ Վահագնին ու Աստդիկին: Բայց տեղի է ունենում հետաքրքրական մի երևույթ: Այդ սիմվոլները նրան ոչ թե հեռացնում, այլ մոտեցնում են հայկական ժամանակակից կյանքին, ինչ-որ լիցք տալիս աղետների ընկալուներին, քաղաքական հույսներին ու երազներին: Դա երևում է «Կապուտաշյա հայրենիքում»՝ հույսի շեշտեղի աղետների մասին բան: Կապուտաշյա հայրենիքում» ցայտուն է դարձնում նաև հույսի թեման: Մշակման ընթացքում վերանում են պատրանքները, բայց փոխարենը բանաստեղծը պահպանում և ընդգծում է հույսը գալիքի նկատմամբ, որոշ իմաստով՝ դառնում ժողովրդական հույսների պատգամախոսը: Վիրավոր երազների ու տեսիների մեջ բանաստեղծը նայում է գալիքին: Հիասթափության վաղաքական խարդավանքներից, նաև, այնուամենայնիվ, ված քաղաքական խարդավանքներից, իսկամատում է երկրի կենսական հիմքերի վերածնությանը: Պոեմի մեջ ծավալվում է մեծ երազը...

Սովոր կանցնի ու մառախուղը անծայր
Հուշ կդառնա, հնատենի մի զբուց...

Հայրենիքի ցավով հիվանդ սերնդի մորմոքների միջով, երգի ու երազի նրբությամբ անցնում են թախիծով օծուն հովհանների, արդեն մշուշող խաղաղ կյանքի պատկերները: Պոեմի վերջին հատվածը մի լուսե տեսիլ և թախծալի ներ-

բող է Հայաստանի գալիքի, ծաղկուն հովիտների ու հարսանեկան նվազների մասին:

Կապուտաչյա՞ն սիրուհիս, ամուսնանաթ պիտի մենք
Արեք տակ՝ հայրենի հովիտներում կանաչուն։
Ու հնամյա աշխարհում մենք բախտավոր կլինենք,
Կապուտաչյա՞ն սիրուհիս, դրախտայի՞ն իմ թոշուն։
Հովիտներում հայրենի, հովիտներում սրբազն
Կիմի մի հարսանիք հազարնազ ու խնդուե,
Երդ ու ծիծաղ կլինի, ու աղջիկները կզան։
Ու կպարեն հնամյա պարերը խնդիր ու ճկուն։

Տառապանքից ծնվել են տեսիլները, հոգեվարքի և հույսի այն երազները, որոնք այնքան մեծ տեղ էին գրավում նաև նախորդի՝ Սիամանթոյի ստեղծագործության մեջ։ Կապարե ճնշման մեջ, մահվան տեսիլների հետ միասին հայ բանաստեղծները տեսնում էին նաև լուսե պատրանքներ, հրապուրիշ երազներ, որոնք եղծվում էին անգամ երազի մեջ։

«Կապուտաչյա հայրենիքը» ձուլված է հակադիր տեսիլներից, տիսուր պատկերներից և լուսե երազներից։ Պոեմը կիսատ է, բայց ունի հուզական ամբողջություն, բանաստեղծական տրամադրությունը ծավալվում է, ստեղծելով կորսույան ցավի, անծայր սիրո և կարուի մքնուրու, այնտեղ բարձրանում է հույզի ալիքը և սիրո մշուշը, այնտեղ հայոց եռագույն պատմությունը դառնում է դառը մորմոք, սիրո կելեկող վերհուչ, կարուի կանչ և նեռացող կյանքի համար տագնապի ծայն։ Այս ամենին են ծառայում բանաստեղծական բոլոր տարրերը, տարրեր ոճերի հատկանիշները։ Հոգեկան նրագծերի պատկերմանը նպաստում են անգամ սիմվոլիստական բնույթի փոխարերությունները, շեշտերը, երանգները, արտաքին ձեւը և մշուշը։ Պոեմի մեջ նկատելի է որոշ տարրերի, մասնավորապես իրական պատկերների և ոռոմանտիկ երազների միասնությունը, որը, սակայն, ըստ էության մեզ մոտեցնում է կյանքի պատմությանը և ժամանակի հայկական հոգեբանությանը։ Այդ բարձր հատկանիշով Զարենցի խոսքն առանձնանում էր 10-ական թվականների վերջի լական ու վաստ պոետիայի մեջ։

Նույն տասնամյակում Զարենցի պոեզիայի մեջ երևան են գալիս նոր ուրույն երանգներ, որոնք նրան բաժանելով ու-

առըցից, կանգնեցնում են սեփական ոտքերի վրա։ Տերյանը մի զգալի ժամանակ «խաղաղ» օրերի երգի էր, գործ ուներ ինքնամփոփ ու ճնշված հասարակական մի ուժի հոգեբանության հետ, որը դուրս էր մնացել մեծ պայքարի ոլորտից, թեև ներքնապես չէր հաշտվում տանջող իրականության հետ։ Ինչպես արեկի ճառագայթները բեկվելով թափանցում են խաղարքի մեջ և սովորական աշքին անգամ տեսանելի դարձնում օդի բաղադրությունը, այնպես էլ Տերյանի տաղանդը լուսավորում է այդ խաղաղ թվացող, մութ, առեղծվածային աշխարհը և այնտեղ նկատում մի տանջալի լարում, ապրումներով ու տենչերով մեղմիկ այրվող մի թաքոն կյանք։ Ճիշտ է, ինչ-որ շափով «խաղաղ» և հնազանդ է թվում նրա հերոսների կյանքը, ասենք հենց այդ պատճառով էլ սկզբնապես Տերյանի առեղիալի մեջ շատ էլ ուժեղ չեն արտահայտված հասարական խանդն ու կիրքը, բայց գրա փոխարեն նա ներքին աշխարհի գաղտնիքները հետազոտողի գերի մեջ էր։ Հայտնագործում էր խուզ տառապանքի և լուր ցավերի մեջ գտնվող մարդկանց հոգեկան աշխարհի անսպառ նրբերանգները, թաքուն ծավալուները, նոր սկիզբ զնելով բանաստեղծական «մարդագիտության» մեջ։ Նա հաստատում էր մի մեծ ճշմարտություն։ Մարդու ներաշխարհը՝ անվերջ փոքրացող, բայց և նրբացող հոգեկան եկէջներով անսպառ է։ Պոեզիան անսպառ է իր հայտնագործումների մեջ, քանի որ անսպառ է նաև հոգու շարժումը, գեղեցկությունների ծնունդը։ Բնավ պատահական չէր, որ նա ընդգծում էր Դուտունսկու խոսքը՝ «անդունդն իմ մեջ»... Այս անվերջ նրբացող հայտնագործումները զուտ գեղեցկության հետ միասին, ուղղված էին նաև հոգեկան ընշաղբեկության, նյութապաշտ կրքերի, կեղտի, գոեհիկ ուժի ճնշման, բարոյական անկման այն երկությունների գեմ, որոնք նույնպես բնորոշ էին դարասկզբի համաշխարհային կյանքին։ Զարենցը ժառանգում է Տերյանի փորձը, մտնում փորձասենյակը, լցում նրա աշխարհով և առաջ գնում՝ հետևելով իր ձիրքի նոր կողմերին և կյանքի նոր ուժմերին։

Տերյանի սիրած աշխարհն արդեն շարժման մեջ էր, միացել էր մեծ կյանքի ու տարբերի հետ։ Դա զգաց նաև ինքը՝ Տերյանը, և որոշ շափով արտացոլեց հոգեկան այդ գե-

բելքը թայց, ի վերջո, այդ գերք ծանրանում է նրա ջահեղ հետևեցի վրա, որը մտել էր պատմության շեշտապառչար, ժամանակի մեջ էր, ընթանում էր աղետների և համաշխարհին իրադարձությունների հորձանութիւն: Եր էսիիկական տաղանդի և ներքին ներգիայի շնորհիվ նա դառնում է այդ տարեային շարժումների երգիշը, որը ինչնուրույն ասելիք ծանրակիւռ, վեռական տեղ է գրավում հայ խոսի մեջ և գնում է դեպի համաշխարհային գրականության: «Դանքական առասպելի» ծննդյան օրը մի կողմից հայ ժողովրդի կյանքի մոռայլ պահն էր, մյուս կողմից նայ գրականության տոնական կիրակին:

Տասնությամյա բանաստեղծի պոեմը աննախաղեալ երևալիք էր: Հայկական եղենի մասին գրված բոլոր երկերի մեջ այդ պոեմը մինչև այսօր էլ գեղարվեստական ուժով մեռմ է որպես ամենախորն ու ազդեցիկը, նույնիսկ եթե նկատի ունենանք Թումանյանի և Տերյանի երկերը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽՈՐԾՈՑԸ

(«Դանքական առասպել»)

Պատանի բանաստեղծը ապրում էր Հոգեկան աղերսների ու խմորումների բարդ շրջան: Նա դուրս էր եկել բանաստեղծության ալեկոծ ծովը և որոնում էր իր եղերքը, իր ափը: Անխուսափելի առնչությունների, ազդեցությունների, մինչև անգամ կրկնությունների հետ միասին, ծնվում էին նաև փոքրիկ գրուտերը, սեփական ապրումի ու ձայնի ազդեցիկ արձագանքները: Թայց այս ամենը խոսում էին միայն շամբուշացած հարուստ տարերքի և Հոգեկան կորովի մասին: Դեռ չեր եկել ասաեղային ժամը, այն պահը, երբ ծնվում է զրայիգությունը, որը հաստատում սկիզբ է դառնում և անհատի ստեղծագործության, և ազգային գրականության մեջ, երես որպես բարձութե՛ բոլոր կողմերից և բոլորին:

«Դանքական առասպելը» եղավ այդ սկզբն ու բարձութը:

Դժվար է պարզել զրուխտործոցների ծննդյան բոլոր գաղտնիքները Մշտապես մնում է չպարզված ինչ-որ բան, որի մասին հաճախ դժվարանում են խոսել նաև հեղինակները:

Խոսքը վերաբերում է ստեղծագործական հոգեբանության առեղջավագներին: Թայց հնարավոր է տեսնել էական շարժությներին, ներքին ու արտաքին զիխավոր լիցքերը: Այս պոեմը Զարենցը գրեց 18—19 տարեկան հասակում, 1916 թ. սկզբին, Հայկական կամավորական բանակի տիսուր սգիսականից հետու Գրական շրջաններին քիչ հայտնի բանաստեղծի և կամավոր զիխվորի պոեմը գրավեց հասարակությանը: Նրա ձայնը ազդեցիկ էր ու անսովոր նոր և ինքնատիպ էին պոեմի ենթարկությունը, ոնք:

Աղումը մի յուրօրինակ զինվորական օրագրություն էր, հիշողություն պատերազմի գաշտից՝ Օրագրությունը հյուսել էր մի բանաստեղծ, որ զեռ երեկ զինվոր էր, դպրոցական մի պատանի, որի հայրենիքը դարձել էր «սրբի հսկան»: Թայց այդ շափածո օրագրությունը ուներ ինչ-որ նոր ու նշանակալից բան, որով առանձնանում էր համաշխարհային և հայրենի գրական աղմուկի մեջ՝ ինչո՞ւ Աշխարհի գրականության մեջ այդ տարիներին բորբոքվում էին մութ կըրքերը, մոլեգնում էր շոլինիզմը, գրական մարդկանց մեծ մասը ներբողում էր համաշխարհային սպանդը:

Հգեն նետիկով ոռմանտեիկ բողը և հրաժարվելով Արևմուտքում և Ռուսաստանում, մասամբ նաև Հայաստանում տարածված «պատերազմական սգեորությունից», Զարենցը ստեղծում է աղետների ու արսափների իրապատում մի հյուսվածք, դրսեռում ստեղծագործական մտքի անկախությունը:

Հակառակ զրողների մեծամասնությանը, 1916 թվականին Զարենցը տալիս է համաշխարհային սպանդի ճշմարտացի պատմությունը: Խրավացի էին Հ. Սուրենաթյանը և Ս. Հակոբյանը, երբ ժամանակին պոեմը համեմատում էին Հանրի Բարբյուսի «Կրակը» վեպի հետ: Առավել ազնիվ մտավորականները պատերազմի բնթացքում ունեցան նույն հակապատերազմական տրամադրությունները: Միևնույն օրինակը այդ հոգեբանության տվեց Հանրի Բարբյուսը, որ Գիկարդիտի գաշտերը գնաց իր «Վտանգված Հայրենիքը» պաշտպանելու նպատակով: Թայց մարգկային որեւէ աղատագրության փոխարքն այնտեղ տեսավ «մարդկության խելագար աշխատացում», իմպերիալիստական պատերազմի դեմ ժամանակի փոքրինչ աարբերությամբ, խոր ատելությամբ ելան աժեղի և

լուսավոր գրողները՝ Մ. Դորիկին և Ա. Բլոկը, Ա. Ֆրանզը և
Ռ. Ռոլանը, Գ. Ապոլիները և Հ. Բարբյուսը, Վ. Մայակովս-
կին և Բ. Բրեխտը, Յ. Հաշեկը։ Ապոլիները՝ ֆրանսիական
բանաստեղծության հույսը և գալիքը, հենց այնտեղ, իրա-
մատներում զգաց համաշխարհային մարդակերության սար-
սափները։

Հոգը խեռութիւն մեջ է այսօր, հոգը բաղցած է,
նա բացում է խամրած երկարածիք թերանները
եվ ահա Բալտասարի մարդակեր խրախնաքի թունդ պահն է,
Ոչ կմտածեր, որ մարդակերությունը կարող է հասնել
այսպիսի աստիճանի,
եվ հարկավոր է այսքան շատ կրակ, որ խանձի մարդկանց մարմինները։

Այդպես պատերազմի առաջին օրերին մոլորված Վ. Մա-
յակովսկին ևս իրեն հատուկ արիությամբ շուտով հրաժար-
վեց սուտ հայրենասիրական մոտիվներից և մեծ կրքով
սկսեց համաշխարհային սպանդի մերկացումը։ Սկզբում նա
նկարում էր պատվիրված պլակատներ, գրում աղմուկի ազ-
դեցության տակ («Պատերազմը հայտարարված է»), բայց մի
փոքր հետո զգում է, որ պատերազմը զգվելի է, թիկունքը՝ ավե-
լի զգվելի։ Եվ սկսում է գրել հակապատերազմական երկեր։

Բայց ճիշտ կիններ ասել, որ հայ բանաստեղծը ավելի է
խորանում կոտորածի ու աղետների թեմայի մեջ։ Դա միան-
գամայն հասկանալի է։ Տաղանդի ուժի հետ միասին կարևոր
դեր են խաղում ուրիշ ողբերգական հանգամանքներ։ Այդ
մարդակերությունն ու արյունոտ խրախնաքը կլանում էին
բովանդակ Հայաստանը։ Բանաստեղծը կորցնում էր հայրե-
նիքը։ Տեղի էր ունենում ամենամեծ աղիտը։ Մյուս կողմից՝
բանաստեղծը որպես զինվոր գտնվում էր իրադարձություն-
ների խառնարանում, պատերազմի դաշտում։

«Պատերազմի մասին խոսք ասելու համար հարկավոր է
տեսնել։ Գնացի կամավոր գրվելու թույլ շտվին, Բարեհուս
չեմ»¹, — այդպես է գրել Վ. Մայակովսկին «Ես ինքս» ինք-
նակենսագրական նոթերի մեջ պատերազմի առաջին օրերի
շուրջ։ Զարենցը պատերազմի դաշտում էր, ուսւ-թուրքական

ճակատում։ Նրա խոսքը ծայր էր, առնում արյան հովիտ-
ներից։

Տեղի է ունենում արտասովոր արագ հասունացում։ Նա
մտնում է ժամանակի այն հազվագյուտ գրական մարդկանց
շարքը, որոնք չովինիստական ընդհանուր աղմուկի, եղած
հայրենասիրության ու զրալի պաթոսի մթնոլորտում բարձ-
րացնում են խղճի ու ճշմարտության գրոշը։

Պոեմը այս մեծ իմաստին հասնում է ինքնատիպ հյուս-
վածքի ու հարստության շնորհիվ։ Այնտեղ ամեն ինչ ար-
տաքուս շատ պարզ է և ամեն ինչ ներքնապես շատ բարդ։
«Դանթեական առասպելը» այն հազվագյուտ երկերից մեկն
է, որը կարելի է բնութագրել Հ. Թումանյանի հայտնի խոս-
քով՝ «Աչքի պես պարզ և աչքի պես բարդ»։

Բանաստեղծը մի գրուց է բացում զինվորի ճանապարհի
մասին, ընթերցողին տանում Արևմտյան Հայաստանի քա-
ղաքներով ու շենքերով։ Պոեմի մուտքը փոքր-ինչ նմանվում
է Դանթեի պոեմի առաջին պատկերներին։ Բայց մուտքի և
հզացման ձևական նմանություններից հետո, Զարենցը բա-
ցում է իր աշխարհը, իր տեսած դժոխքը։ Մի քանի տարի
առաջ Սիամանթոն գրում էր, որ մեր կյանքը երկրի երևս
եկած դժոխք է, «մոխիրներու ու մահերու գանթեական ճա-
նապարհ»։ Այդ գժբախտ ու մեծ բանաստեղծի մուլլ տեսիլ-
ներին ու գուշակություններին Զարենցը տալիս է իրական
տեսք, իր երկի մեջ բերելով նաև ճանաշողական վիթխարի
նյութ, ստեղծում է այս աշխարհի արատների ու աղետների
նորոյա պատմությունը։

Նա «Դանթեական առասպելը» հյուսում է մեծ հմտու-
թյամբ։ Ընթերցողին առաջնորդելով պատերազմի արսափ-
ների միջով, յուրաքանչյուր անգամ ստեղծում է և պատկեր,
և փիլիսոփայական եզրակացնություններ։ Զինվորի ճանապարհը
ընդգծվում է յայտուն հակադրություններով։ Հայտնի է, որ
հակադրությունը որպես եղանակ, արվեստի մեջ շատերին
հասցնում է միօրինակության ու ծանծրույթի, բայց Զարենցի
պոեմում այն ստանում է առանձին իմաստ։ Նա հակադրում
է իրար ընական ու անընականը, գազանայինն ու մարդկա-
յինը, բարբարոսությունն ու խիղճը։ Սկզբում խոսքը ընթա-
նում է խաղաղ ու բնական ընթացքով։ Զարենց-պատանին

աշխարհին նայում է զահել հոգու մաքրությամբ, գրեթե ժանկական հիացքով, անմիջական զգացումը ձուլվում է պատկերին, առեղքելով հրաշք-հեքիաթի՝ բնության պաեզիան, որի անաղարտ էության հետ ձգտում է միանալ մարդկային հոգի։

Անսահման դաշտն էր փափած մեր առաջ
Ոսկի հասկերով ողջունում էր մեզ
Աշխարհի հեռուն՝ բաց ց, լայնատարած՝ ժ,
Մթկի շնչով լվացփած կարծես
Իսկ ճամփան անծայր իրանը փառժ,
Թափալում էր մի հսկա օձի պիտ
Թեթև քալլերով ու սրտով թեթև
Քայլում էինք մենք կայտառ ու շահել
Մեր հոգին ուներ թոփշներ ու թե՛
Պո՞վ էր մեզ արդյոք այդպես հմայել

Բնության գեղեցկությունների գովզը նույնքան հին է, որքան բանաստեղծությունը, որը հաճախ ժնվում է խոր հիացքից և անձեռակերտ հրաշքի նկատմամբ տածած զարմանքից: Այս հավերժական երգը, սակայն, ամեն անգամ նոր երանգ է ստանում, քանի որ անսպառ են բնության հրաշքները: Անսպառ են նաև արտասովոր ներքին ունեցող մարդ արարիչները՝ բանաստեղծները, նման հանդիպումից միշտ ծնվում է նոր գեղեցկություն: Այդ ներքին մերձեցումից է ծնվում նաև պատանի Զարենցի երգը: Նա արցոնքից պայծառացման, տառապանքից մի պահ ազատագրված մարդու հայացքով նայում է մեծ բնությանը և անծայր հեռու-ներին:

Թնության մեջ վերացած մարդը զուլավում է, բարձրանում, ձուլվում աստվածային ներդաշնակությանը: Թվում է՝ շարսնակվելու է այս շքեղ հեքիաթը, մեծ բնության և զահել հոգու մերձեցումից ծնված այս մեղեղին: Բայց անսպասելի հարվածով կտրվում է երազի և հիացման ընթացքը, փոխվում են տրամադրությունը, խոհը, պատկերը, հանկարծ տարածվում է սև մշուշը:

Ճամփի մոտ ընկած տեսանք մի դիակ:
Կանգնեցինք, մի պահ նայեցինք իրար:
Փաել էր արղեն անձրեների տակ.
Ի՞նչ ցեղից էր նա—այդ ո՞վ կիմանաբաւ

Պոեմը զարգանում է պատկերների ու զգացումների նորանոր հակադրություններով, գոլար, գրեթե մանկական պայծառ զգացումներին հակադրվում է ամենամաշլ ու տանջող խոհը, անաղարտ գեղեցկությանը՝ արյունու անսարքանը։ Էպիկական, «խաղաղ», «ավանդական» պատումը ալեկոծվում է ծայրահեղ տրամադրություններից և բուռն հակասություններից, զանալով բնական ընթացքից դուրս նետված աշխարհի յուրօրինակ պատմություն։

Սա պոեմի գեղարվեստական առաջին, բարձր համեստ նիշն է։ Բանաստեղծը խոր է զգում բնականը, գեղեցիկը, հավերժականը, հայտնաբերում է բնության ներդաշնակության պոեզիան։ Բայց նույնքան խոր է զգում անբնական աղետն ու սարսափը, ներդաշնակությունից շեղվող կյանքի ընթացքը։ Այս ժայրաբենեանները՝ իրենց հակադրության մաջ, առանձին իմաստ են ստանում հենց այն բանի շնորհիվ, որ տալիս են նոր ժամանակի աղետալի պատմությունը։ Պատերազմները նոր բան չեն ոչ կյանքում, ոչ էլ գրականության մեջ։ Բնականի ու անբնականի, բնության հավերժ ընթացքի և մարդկային կյանքի հակասությունները գրականության մեջ գալիս են շատ հնուց Վաղնջական դարերից էլ գեղեցիկ գրականությունը գեմ է եղել այդ անբնականին և ծգուել է կյանքի ներդաշնակության։ Մինչև անգամ Հռոմեական «Ելիականն» ու «Ոգիսականը», ուր ներբռովդում է ուժը, հերոսությունը, պատերազմական կորովը, մեզ տալիս է բազմաթիվ հակադիր փաստեր Անողոք, արյանալի պատերազմը դեկավարում է ճակատագիրը, մարդիկ հազթում կամ ընկնում են աստվածների կամքով։ Հենց միայն Աքիլլեսի մահը, Հեկտորի և Անդրոմաքեի բաժանումը, ծերուկ Գրիամասի աղաշանքները՝ որդու դիակի համար, Թղիմուսի անհռոտառապահները ցույց են տալիս, որ Հռմերոսը խոր է զգացել նաև պատերազմների աղետավոր բնույթը և անվերադարձ կորուստների ցավը։ Բայց բոլոր պատերազմներից էական տարբերվում էր այս նորը՝ համաշխարհայինը։ Դա մի խելագար ընթացք էր, որի մեջ էին քաշվել բոլոր ժողովուրդները, իմակերիալիզմի տառեսական ու քաղաքական աշխանքն ունեցած միհինոնագոր մարգիկ։

Այս մասին էր գրում Զարենցը:

Առաջին հատվածներում ձևավորվում է բանաստեղծի վերաբերմունքը. կյանքի փաստերից ու տեսարաններից բխում են ժանր խոհեր: Պոեմում առանց սխեմայի և տրամաբանական վարժության, կյանքի լեզվով թանձրանում է մի հանգուցային հարց՝ բանական է արդյոք մարդկային կյանքը, հաշտ է բնականի ու հավերժականի հետ:

Հետո «Գիրք ճանապարհի»-ում նա անկեղծ ու դիպուկ է բնորոշել մեծ կյանքի և իր բանաստեղծական ուղղու հակասական բնույթը: Այդ ուղին եղել է զաշնության մշտական ձգտում կյանքում և արվեստում: Բոլոր բանաստեղծները երազել են հասնել կատարյալին ու ներդաշնակին, ձգտել են գեպի գեղեցիկն ու իդեալականը: Բայց կյանքը հաճախ խաթարել է նրանց ուղին: Զարենցի անդուկ ձգտմանը խանգարում էր անդաշն կյանքը, որն այնքան բնորոշ էր հայկական նորագույն պատմությանը:

Դա շատ ցայտուն է երևում նաև «Դանթեական առասպելում»: Բանաստեղծը պատկերում է մի անհատի, մի ամրող ազգի, ավելին, ողջ մարդկության կյանքի ներդաշնակության խաթարումը:

Մի կողմից՝ բնության հեռուներ ու հավերժական գեղեցկություններ, մյուս կողմից՝ ավեր ու կոտորած, մի կողմից՝ բնության հրաշքներ, հավերժ նորոգ աշխարհ, կապույտ երկինքներ, մյուս կողմից՝ սպանված կանայք, երեխաներ, հողի մարդիկ,— այսպես շարունակվում է հակադրությունը: «Խաղաղ» պատումը՝ հյուսված զինվորի անցած ճանապարհի մասին, դառնում է մի անողոք պատմություն: Մարդկանց երկրում կարծես ամեն ինչ մնում է, մնում են տները, այգիները, ջրհորները, բայց անհետանում է կյանքը, կորչում է ստեղծողը, արարիչը, ավելի ճիշտ, այդ ամենի մոտ, իր ստեղծածի մոտ ընկնում է մարդու արյունոտ դին: Այս է այն էականը, որի շուրջ կենտրոնանում է բանաստեղծի հայացքը, խոսքը հասնում է խոր խոհականության և հոգեբանական ընդհանրացման:

Իսկ ավեր դարձած գյուղակն ալեսոր,
Սեր, խորհրդավոր, որպես մեռած հայր,
Ննջում էր անվերը իր ու նինջը խոր,
Մեռելաստանի իր նինջը մռալլ:

Եկ ւէ՛ր հասկանում այդ ժիր, բախտավոր,
Զար ալիքների զրույթները շարը
Իսկ այգիների շուրջպարը կաեալ
Զգում էր անծայր ու անծայր հեռու:

Եարումակվում են հակագիր բևեռների վարֆացիաները, գեղեցկության, բնական ու ստացական արժեքների և արյունախում մոլոսի բերած աղետների հակադրությունները, որոնք ուրույն ոիթմ են տալիս գործողությանը, առաջ մզում գեղարվեստական պատկերը: Նա հրաշալի է նկարագրում այգիների շուրջպարը, խաղաղ ծովը, բնության շքեղ, հեթանոս հրապույրները, մարդու արարչագործությունը: Նա տարվում է բնության անձառ հմայքով, շուայլ բերքով: Ինչպիսի հմայքներ ունի բնությունը: Ալիքները նման են կարկաչուն, հնչում մանուկների, բնությունը մի հեթանոս հլու կին է, որ վաճառքի է հանել իր ռմարմինը մերկա:

Սպասում էր գիրգ ստինքները բաց՝
Իր աշեանային բերքերը տալու

Բայց ալիքները համրուրում են լոկ մեռած շենքեր, այգիների շուրջպարը ծգվում է մեռելաստանի շուրջ:

Այս մթնոլորտում բանաստեղծը շի մոռանում հայկական միֆերը: Բայց արդեն չկան նախկին ոգեստրությունը և շերմագին այն հրավերը, որ հնչում էր մի տարի առաջ «Կապուտաշյա հայրենիքում», չկան առկայօղ հույսերը: Սկսվում է ինչ-որ օտարացում հայրենի միֆի և բանաստեղծի միջև: Մեռած քաղաքի մեռած հարկի տակ նա լսում է ծովի երգը՝ Աստղիկի սիրերգը: Իսկ Աստղիկը՝ հավերժական ու անհերթելի ապրում է շրերի խորքում, հեռավորության վրա, նրա երգը հնչում է սոսկ շուրջպար բռնած մեռեների համար: Պոեմի պոազին տարբերակում կարդում ենք:

Եվ մեռեների շուրջպարն էր թռլում՝
Այլանդակ, մռալլ, զիվոտ, արնաների:
Եվ հանկարծ, այն գոց լուրթյան միջում
Զնդաց մի անուշ, մի անուշ սիրերգ...

— Զրերի միջից Աստղիկն էր կանչում —
Աստղիկն՝ հեթանոս, աստվածորեն մերկ...

Աւ գառնում էին մեռելներն անվերջ՝
նրենց աշակոր պարը դարավոր...

Եղ մահաշառաշ զառանցանքի մեջ
Ծնվում էր մի նոր ու խորհրդավոր
Աստվածածրավ երգի ելեւչ,
Որ գուրգուրում էր սիրտս վիրավոր:

Սարսափին հետևում է սարսափը, մահվան ուրվականը և
արյան գույնը տարածվում են կյանքի ու աշխատանքի վրա:
Բանաստեղծ զինվորը նախընտրում է դաշույնի պես մերկ,
անխարդախ ճշմարտությունը և անսրող նկարագրում է բար-
րարոսության հետքերը, խաղողի վազի տակ ընկած դիակ-
ները, այգու ջրհորից հանած մարմնի մասերը:

Մ. Գորկին 1919 թ. Հանրի Բարբյուսի «Կրակ» վեպի մա-
սին գրում էր, թե «Գրքի յուրաքանչյուր էջ—ճշմարտության
երկաթի մուրճի հարված է, այն կեղծիքի, երկերեսանության,
դաժանության, կեղտի ու արյան զանգվածի վրա, որը ընդ-
հանրության մեջ կոչվում է պատերազմ»¹: Այս գրքի մեջ
պարզ ու անողոք ճշմարտությամբ,— գրում է Մ. Գորկին,—
պատմված է այն մասին, թե ինչպես տարրեր ազգի մարդկա-
ռչնչացնում են մեկը մյուսին, ավերում իրենց տաժանակիր և
հոյակապ աշխատանքի զարավոր պտուղները, աղբակուցափ-
վերածում տաճարները, պալատները, տները, հիմնահատակ
ոչնչացնելով քաղաքները, գյուղերը, խաղողի այգիները:
Մ. Գորկու այս գնահատականը կարելի է տարածել նաև «Դան-
թեական առասպեկտ» վրա, քանի որ հայ բանաստեղծը
Հ. Բարբյուսից և մյուսներից անկախ նույն օրերին ստեղծել
է բարբարոսության և մարդակերության պատմությունը, այ-
սինքն՝ պատերազմական մզձավանշի ճշմարտացի պատկերը:

Այս իմաստով Զարենցին ու Հ. Բարբյուսին շատ հարա-
զատ էր նաև էմիլ Վերհարնի պատերազմական տարիների
պոեզիան: Գրականագիտության մեջ անցյալում երբեմն սխալ
են գնահատել այդ մեծ բանաստեղծի՝ պատերազմի շրջանի
երկերը, նրանց մեջ դիտվել են նահանջ հումանիզմից և հա-
կում դեպի շովինիզմ: «Վերհարնի պատերազմի շրջանի բա-

նաստեղծությունները մեծ գեղարվեստագետի անկումն են:
Տանշագին է թերթի «Պատերազմի կարմիր իների» և «Արյու-
նաներկ Բելգիայի» էշերը: Դրեթե ֆիզիկական տանշանք ես
ապրում, այնքան աղավաղված է բանաստեղծի դեմքը»²: Իրա-
կանում պատկերը բոլորովին ուրիշ էր: Մեծ հումանիստը ոչ
թե ներբողում էր պատերազմը, այլ հակառակը՝ պատկե-
րում էր գերմանական միլիտարիզմի կրնկի տակ կործան-
վող փոքր երկրի արյունոտ ճակատագիրը: Նա ոչ թե պաշտ-
պանում էր համաշխարհային պատերազմի մեջ մտած երկու
իմպերիալիստական խմբավորումներից մեկին՝ ընդդեմ մյու-
սի, այլ մեծ տառապանքով ստեղծում էր իմպերիալիզմի
կրնկի տակ ընկած Բելգիայի ողբերգությունը: Դա ըստ էու-
թյան ուղղված էր իմպերիալիզմի գեմ, ուներ հումանիստա-
կան բովանդակություն: Բանաստեղծը ստեղծում է իր ազգի
տառապանքի ճշմարիտ, անսրող պատկերը: Դանակը մոր
կրծքում, մահապատճի սպասող ծնկաշոք զառամյաներ,
մանկամարդ աղջիկներ՝ հարբած զինվորների ոհմակի մեջ,
կտրված կրծքեր, արյունալի խրախնձանք,— ահա սարսափ-
ների շարքը: Բելգիան նմանվում էր ավերված գեթակի.

Повсюду к городам из брошенных селений
Спешили беженцы с безумием в очах;
За ними шёл поток огня и разрушений
Гудел набат в смятенных городах..
Страна была, как разорённой улей...
...О Фландрия, каких невыразимых дел
Какого ужаса, безумия, трагизма
Ты стала зреющим! Как страшен твой удел
Быть жертвой голода германского садизма.²

Կան ողբերգական պահեր, սարսափների գերագույն պա-
հեր, երբ գրողն այլևս խուսափում է գրական հնարանքներից,
քանի որ կարիք չունի դիմելու երևակայության աշակու-
թյանը: Երևութը շափազանց ակնառու է և գերազանցում է
ստեղծագործական երևակայությանը: Մեծ գրողը միայն ձբ-
դում է պահպանության առաջնային գործությունը:

¹ Эмиль Верхарн, Лирика и поэмы, 1935. М., И. Анисимов, Ли-
рика Верхарна, стр. 748.

² Նույն տեղում, էջ 696:

տում է սաեղծել երևյալի հարազատ, համարժեք պատկերը:
Պարենցը ևս դրում է անթաղ դիակների, բգկտված մարմինների և արյունոտ դեպքերի մասին, որոնք ստեղծում են յուայլ մինոլորտ: Նա հետապնդում է քաղաքացիական ու գեղագիտական մեծ նպատակներ: Նա ձգտում է ստեղծել կյանքի պատմությունը, աշխարհին ի ցուց դնել պատերազմի բում պատկերը, ցրել մոլորության մշուշը և մարդկանց ասել միայն ճշմարտությունը:

Այս հանգամանքը, տեսածն ու դիտածը նրան հանում են իրապատում ոճի ուղին: Իրապաշտությունը ծևավորվում է կենսական զորեղ լիցքերից: Հայ բանաստեղծը գործ ուներ մեռած քաղաքների ու գյուղերի հետ, քայլում էր պատերազմի երախն ընկած հայրենիքի անթիվ զոհերի միջով: Նա չէր գրում նրին ոճավորման ու փափուկ հանգերի համար, այլ աճավոր ճիշով աշխարհին պատմում էր անբնական սարսափների մասին: Աղետների տպավորություններով ծանրաբեռն՝ երիտասարդ բանաստեղծը իր պոեմով շառաչուն ապահ է հասցնում քաղաքակրթությանը, մարդկային արդարությանը, ճիշտ այնպես, ինչպես նրբին Սիհամանթոն, ստիպած էր շափածո տողերով թքել մարդկային արդարության երեսին: Պատերազմական սարսափների իմացությունը, ազգային ողբերգության զգացողությունը, առնական ատելությունը՝ միացած բուռն կրքի հետ, հզոր շարժում են առաջ բերում նրա խոհերի մեջ, բանաստեղծին միանգամից հանում մեծ արվեստի մայրուղի:

Այո՛, շատերի հետ նա էլ ոսկեզօծ հույսերով գնացել էր պատերազմի գաշտ՝ փրկելու հայրենիքը: Բայց պատերազմն այլևս ոչ լրագրական տեղեկություն էր, ոչ գիտելիք, ոչ ոսկեզօծ, փեռն խոսք, այլ արյուն, մղմավանշ, շարշարանք, մինչև երկիր խորքը և երկինք ճպվող հոգեվարքի հառաջանքներ, որոնց տեսնելու և զգալու դժբախտությունը պատմությունը վերապահել էր պատանի բանաստեղծին: Նրա վիշտը ստանում է մեծ խորք, զառնում համաժողովրդական: Պոեմում ծեավորվում է մի նոր հոսանք, շարունակվում է «Կապուտաշյա հայրենիք» մեջ արդեն նշմարվող միտումը, «հնձվորեների» թեման: Նա ստեղծում է մի հավաքական ներու, որը հայ ծողովուրդն է, իմպերիալիստական պատերազ-

մի զանը: Սա խոշոր նորություն էր հայ բանաստեղծության մեջ, հանի որ լայն կտավի վրա, բազում ծայրերից նա հյուտում է ազգային աղետի պատմությունը, հայրենիքի հաղափական ողբերգության և սպանության պատկերը:

Փողովուրդը երեսում է իր ստեղծագործ երեկով և արյունալի ներկայով, հավաքական հոգերանությամբ, ծանր հառաջանքով, բանի որ կտրվում էին նրա կենսական երակները: Դա բացառիկ երեսույթ էր ազգային գրականության մեջ, ծանրակշիռ փաստ, որը ցուց էր տալիս պոեզիայի ներքին շերտերի հարստացումը և հասարակական բովանդակության ընդգրծակումը:

Բայց նա չի մնում այս սահմաններում:

Զարմանալի խիզախությամբ և տվյալ պահի համար հաղվագյուտ ներքնատեսությամբ, բանաստեղծը առաջ է գնում իր խոհերի ու ապրումների մեջ, հայ ողբերգությունը դիտելով նաև համաշխարհային կապերի ոլորտում: Եվ հանկարծ, թվում է անսայսելի, ազգային դանաւորյունների մրնալութում, ողբերգության մեջ ծնվում է մարդու նակատագրի, հանուր մարդկության խաղաղ օրվա և սիրո թեման: Բարձրանում է մտածողը և հումանիստը, որ հոգու մեջ տիտանաբար տանելով իր ժողովրդի անհուն ողբերգության ցավը, չի մոռանում նաև մարդկանց մեծ հայրենիքը:

Ազգային դանաւորյունների մեջ, ծողովուրդի ցավերի մեջ, հայ բանաստեղծը մնում է իրեւ մարդկության զավակը, հավատարիմ նույն ծողովուրդի ոգուն և զարավոր ալվանդներին: Նա ցավով նկատում է, որ պատերազմը բազում աղետների հետ միասին, բերում է նաև մի մեծ շարիմ, բարոյական աղետ, որը աղավաղում է ծողովուրդներին, զազմացնում մարդուն, ոչնչացնելով հաղաքակրության դարավոր նվազագույն նույնները.

Մենք գրկում էինք ու շնորում իրար,
Սվենի զարկով զորում գետին
Վագրերի նման խորամանկ ու շար՝
Ապրելու հսկա ծարավով հետին՝
Մեղքում էինք—ապրենու նամար,
Նախամարդկային բնազրով մրին...

Այս խնդիրը հուզում էր դարի բոլոր հումանիստներին, նույն անքում ցախն էր տանջում թումանյանին: Համաշխարհային բարոյական-քաղաքական աղետի մասին է նա հյուսում սիրով ու գանությամբ տոգորված հանճարեղ «Հոգեհանգիստը» և խորունկ քառյակները:

Բերանն արնուտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ջեռքերն արնուտ գնում է նա զեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Զարենցին ամենից մոտ էր Հովհաննես: Խոսքը վերաբերում է ընդհանուր ոգուն և փիլիսոփայությանը, հումանիստական աշխարհգացողությանը, որն ուղղված էր իմպերիալիստական պատերազմի և կապիտալիզմի քաղաքականության դեմ: Փողովրդական ողբերգության թեմայի մշակման ճանապարհին զորանում է բանաստեղծների հարազատությունը:

Այս բոլորը իմաստ են ստանում մի ուրիշ մեծ արժանավորության շնորհիվ: Պոեմում շատ վառ են երկում բանաստեղծի նկարագրական ձիքը, զգացմունքի ուժը, թափանցող գիտողականությունը և կենսափորձը՝ թայց գեղարվեստի առուով, ամենագլուխավորը՝ հեղինակի կամ հերոսի նոգեկան լարումների ընթացքն է, որը ամբողջացնում է դիտողությունը, նկարագրությունը, գեղագները, ապավորությունները:

Հայրենիքը երևում է հերոսի հոգեկան քաղմազան ու բարդ ապրումների միջոցով, Հայաստանի կերպարի հետ միասին ստեղծվում է նաև նրա որդու կերպարը: Այդ հերոսը ապրում է մեծ ալեկոծություն: Նա մանկական հիացքով նայում է բնության անվերջ հրաշքներին և անհուն ցավով խռնարհվում դիակների վրա, նա հիանում է ծովի հավերժական խաղով և ապրում գյուղերի ու քաղաքների լուսության սարսափը, նրա հոգեկան տեսողության մեջ ուրույն տեսք, մըղավանշային երանգներ են ստանում շարշարանքի տեսիլները, նրա մեջ ծովագում են ցավը, տագնապը, միֆերի օտարացումը, դառնությունը, նահանջի ամոթը, անզորությունը՝ ճակատագրի առջև: Այդ հերոսը դարի ազնիվ մարդն է,

մարդկանց բախտի ծանրությունը սրտին առած հայ մարդը, որի հայրենիքը դառնում է կորչող եզերը:

Այս տարերային ընթացքին ուղղություն է տալիս ստեղծագործ միտքը, բանականությունը դառնում է յուրօրինակ կարգավորող ուժ:

Զարենցը դրսնորում է երևույթների մեջ թափանցելու, նյութի խորհուրդը հայտնաբերելու բացառիկ ձիրք, փիլիսոփայական շուայլ տարերք, որը ներքին հոսանք է հաղորդում պոեմին, ազդում ընթերցողի բանական աշխարհի վրա: Աղետների ու սարսափների մեջ ընկած մարդկանց ու ազգերին պոեմը ստիպում է դիտել, մտածել, քննել, լարել հոգևոր ուժերը...

«Դանքեական առասպելում» հարստանում է փիլիսոփայական պոեզիայի ավանդը: Երիտասարդ Զարենցը կանգնում է դարի գլխավոր հարցի, ամենացագուտ երևույթի առջև, տագնապով որոնում է արյունալի աղետների, աշխարհավեր երազների պատճառները:

Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գիտին այսպես կուրորեն:
Ինչո՞ւ են փոկում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս չար ե՞րբ պիտի լան:
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր—
Կյանքը դարձնում նզովյալ գեհեն:

Արյունից, դիակներից, աղետից դառնացած բանաստեղծը խոր ցավով ցույց է տալիս վայրենի բնազների ծնունդը պատերազմի դաշտում, մարդկային հարաբերությունների մեջ: Հակառակ քաղաքակիրթ աշխարհի բարբարոս աղմուկի և գիշատիչ տերությունների անամոթ քաղաքականության, նա դեմ է դուրս գալիս մարդասպանության «խելագար խանդին»: Առավել հետաքրքրական է, որ մարդասիրության դրոշը բարձրացնում էր գրեթե արնաքամ եղած մի ազգի բանաստեղծ, հասկանալով տառապանքի համամարդկային բնույթը.

Ճշում էր հոգիս՝ անզարձ մեղավոր,
Եվ աշխարհը ողջ թվում էր կարմիր:
Հասկացա հանկարծ կակիծով մի խոր,
Ար եռւյնն է հսկա տառապանքը մեր:

Նկարագրությունից նա անցնում է ընդհանրացման, յուրովի առաջ քաշում մարդու հարցը, որը հուզում էր դարի բոլոր մեծ արվեստագետներին: Դա հատկապես տանջում էր հայ պոետին: Համաշխարհային պատերազմի ժամանակ Հովհաննը գրեց «Հայրենիքիս հետ» գողովածուն և ծանր խոսքեր ասաց այդ հին ու նոր աշխարհի հասցեին: Զարենցն էլ յուրաքի, սեփական փորձի օգնությամբ, ընթերցողի առջև զնում է նույն հարցը. «Վ է այս կյանքը դարձրել ահավոր գեհեն:»

Պոեմի տարերքն ամբողջացնելու և ծանր խոհերն ամփոփելու իմաստով շատ ուշագրավ են վերջաբանի հատվածները: Զարենցը կրկին առաջ է մղում հակադրությունը, աշխարհի գեղեցկության և անհեթեթ իրականության ծայրաբեռները: Խնչպես հայտնի է, նա հազվագյուտ էր դիմում բնական երեւյթների աշակցությանը, համենայն դեպս նրան ոչ մի կերպ շեմ կարող դասել բնության երգիշների շարքը: Բայց երբ նա դիմում է բնության՝ գեղարվեստական մտահղացման և հոգեբանական անհրաժեշտությամբ, ստեղծում է բացառիկ ուժի պատկեր: Այդպես է նա պատկերում անհունորեն սիրելի դարձած իր կորչող եղերքը, հյուսում բնության շարժման, կախարդող ձայների, ոսկի հեռաստանների մեղեղին:

Եթե առախոս բարձրացա կանուխ
Ծվ լուռ կանքնեցի բլորի վրա:
Հեռուն՝ զնդալով իշնում էր մի ուղի,
Խոսմ էր ես կարկալը նրա:
Կապույտ երկերում ո՛չ ամպ կար, ոչ ծուխ:
Եվ ես մռացա՞՛ տաժանքն առօրյա:
Ախ, դյուշակների շարշպարը կահուչ՝
Գաշտերի սոկի՛ հեռաստաններում,
Ուր մի անսամբ թախի՛ կա փռած
Եվ մի հոգեթով տիրություն հեռու,
Ուր հավերծության ցնորքը անհաս-
ճախում է կարծես ոսկի՛ զատերում...

Բայց այս դյութող պատկերը ընդհանուր հյուսվածքում խաղում է հոգեբանական բաղադրիչի դեր: Ի վերջո, բանատեկդր ամփոփում է պոեմի սկզբից անվերջ կոտակվող բացական լիցքերը, ողբերգական ցեցող պատկերով ցույց:

Պալիս հայրենիք նողի և նրա գավակի անդարձ բաժանումը: Մի վերջին հայացք է նա նետում հայրենի կախարդող բնությանն ու եղերքին: Այդ վերջին հայացքի բացվող գեղեցկությանը խառնվում են հայրենիքը կորցրած մարդու կապարեցիշը, պարտության ցավը, ֆիզիկական գոյության պաշտպանության բնագդի ամոմիք, ձյունոտ դաշտերում անթաղ մնացած գինվոր ընկերների կորստի զգացումը.

Եվ խավարի մեջ կարժիր ու կարժիր
Խնդակներ էին թոշում ու շաշում,
Եվ ընկնում էին ընկերները մեր՝
Սատանայական խոճապի միջում:
Եվ ընկնում էին անզի՞ն ընկերներ
Եվ վերջին անզամ մեզ էին կանչում...
Եվ երբ արեք բարձրացավ երկինք
Եվ մենք լուսի տակ իրարու գտանք—
Մեռելների պես սփրթնած էինք՝
Չինք հավատում, որ ապրում ենք, կանք...
Կրանք մնացին ձյունոտ դաշտերում:
Քաղցած զայլերի ոհմակներին կեր:

Այս է պատերազմի բուն պատկերը, ուսոր ճշմարտությունը, հայրենական հողի վրա մղած վերջին մարտի գեղարվեստական պատմությունը: Այսպես են ընկնում հինավորց հայրենիքը և նրա լավագյույն զավակները: Նրանք պատերազմի ահավոր ուժին զոհ են տալիս իրենց միակ հարըստությունը՝ կյանքը, բայց շեն կարողանում փրկել հայրենիքի կյանքը: Այս պատկերներին հետևում է հոգեբանական խորխուցումը՝ հողը կորցրած մարդկանց հոգեկան ծանր անկման մասին:

Անխոս հայացքով իրար թաղեցինք,
Իրար հողու մեջ գերեզման մտանք:

Այսպես է մեռնում հայրենիքը, այդ մահը մոայլ նրսավածք է զնում զավակների հոգու վրա: Այստեղից էլ սկիզբ են առնում որոնումները, ցավագին մղձավանշը, տիեզերական զառանցանքը, հայկական բախտի ծանր բեռի տակ ծագալվում է հսկա երազի տենչը... Հայրենիքը կորցրած բանատեղիք, աշխարհի դեմ անհունունն դառնացած մարդը մի անիմանալի գորությամբ, կրկին մտնում է հայրենական

երազերի և որոնումների մշուշու ուղիները, իր հետ տանելով մի անանոն հիվանդություն և բօլոր աղետների միջով առաջ ժայլելու դարերի փորձություններից եկաղ խորհրդավոր պատգամը:

Այսպիսի բաժին է հանում անարդար, ապական աշխարհը ժողովրդին և բանաստեղծին: Դանթեական դժոխքին կոչ են գնում ազգերը, մարդիկ, բանաստեղծները: Նույն դժոխքի մեջ դառնացած Դ. Վարուժանն ասում էր, որ երկիրը պիտի հեղաշրջվի, որպեսզի արժանի լինի արևի շուրջը պտտվելու Զարենցը գեռ այդ հարցը չէր գնում, բայց խորապես զգում էր աշխարհի դժոխային էությունը:

Ահա այսպես երիտասարդ Զարենցը, որպես մտածող, մեզ փոխադրում է ազգային և համաշխարհային կյանքի ոլորտը: Խոր խոհերի և հարուստ պատկերների միջոցով նա գնում է իսկական մարդու և մարդկայինի հարցը, խորհելով աշխարհի բախտի մասին, մի աշխարհ, որին Ալ. Բլոկը անվանում էր «պառավածք շուն»: Այս երկի մեջ Զարենցը, ի վերջո, ժխտում է այդ համաշխարհային գեհենը:

Պոեմի մեջ ամեն ինչ զարմանք է հարուցում: Տասնութամյա պատանին գրում է խոսքի բացառիկ զգացողությամբ և հմտությամբ, ներդաշնակությամբ և էպիկական մի խաղաղ ընթացքով, որը իր զուլալ էության մեջ թաքցնում է մեծ խորություն և ստորջրյա բուռն հոսանքներ: Ամեն ինչի մեջ զգացվում է վաղաճաս, արագ մի հասունացում, որը վիճակվում է միայն հազվագյուտ մարդկանց:

Սակայն ամենից ավելի զարմացնում են տարիքին անհամապատասխան մտքի խորքը, զգացմունքի շափը, երեվույթների բազմաշերտ ընկալումը, որոնք նրան հանում են դարի առողջ և ուժեղ մտածողների շարքը:

ԱՌԱՍՊԵԼ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(«Վահագն»— «Աթիլա»)

Դանթեական առասպելը ծավալվում է նոր երգերում, բանաստեղծը մնում է իր նվաճած եզերի մեջ, բայց ամեն անգամ հայտնաբերում է նոր շերտ և հոգեբանական երանգներ: Իր բուռն տարերքում, հայրենական հողի ողբերգության

պատկերների մեջ շատ ակնառու են դառնում նոր հարստացուցիչ լիցքերը, պատմական ու հոգեբանական գուգահեռները, ազգային հիմքերի քննությունը և գոյության կովանների հուսահատ որոնումը:

1916 թվականը շատ նշանակալից էր: Տեղի էր ունենալ տաղանդի այն արտասովոր կենտրոնացումը, որի տեսական շիկացումից ծնվում են գլուխգործոցները: Ժողովրդական սղբերգությունը հանգիստ շի տարիս բանաստեղծ սրգուն, դանթեական առասպելը մի քանի օրվա անցողիկ տրամադրությունների ծնունդ էր: Ողբերգությունը դառնում էր, առօրյա, կենցաղ, մինուրտ, ծանր մառախուղի պես թափանցուած հայ կյանքի բոլոր ոլորտները, շարունակվում էր անկման, ֆիզիկական ու բարոյական կորուստների ծանր ընթացքը: Զարենցն ամբողջովին, անվերապահ այլևս այդ հայրենիքի հետ էր, այդ առօրյա գարձող ողբերգական մինուրտի մեջ, սոսկահար ապրում էր կյանքի հիմերի կործանումը, կյանքի արագ վայրէջքը...

Այս մինուրտում ծնվում են նոր երկերը, փոքրիկ գլուխգործոցները, հոգեբանական և բաղաքական նյութի պատկերավոր խտացումները:

«Վահագն»—«Աթիլա»:— Հենց այսպես գծիկով նա միացրել է երկերի 1922 թ. հատորում, հատուկ իմաստ զնելով այդ մերձեցման մեջ, ընդգծելով երկու պոեմի ժամանակագրական, բարոյական ու գաղափարական աղերսները: Նրանց տակ դրված է 1916 թվականը:

1922 թ. «Երեքի» դեկլարացիայի շուրջ ծավալված բանավեճի ժամանակ, քննադատ Պողոս Մակինցյանը ակամաթե կասկածով գրել է. «... Հնից Աթիլան է հրահրում կարմիր պոետի ֆանտազիան, «Հոների արքա Հզոր Աթիլը»: Զարենցը իր պատասխան հողվածում շտապում է բացատրել իրողությունը և թոթափել անհիմն մեղադրանքը. «Իմ Աթիլա» բանաստեղծության մասին միայն պիտի ասեմ, որ նա գրված է 1916 թվին և նրանում պատկերված է «Հոների արքա Հզոր Աթիլը», որպես պատերազմի ահեղ սպառնալիք, որ կախված է բուրժուական հասարակարգի վրա և կախված իմնա, քանի դեռ այդ հասարակարգը կա: Ինչ կա սրանում

մեղադրելի և էն ո՞ր մարքսիստն է, որ կարող է հակածառել սրանք։

Զարենցը 1932 թ. «Երկերի» մեջ նո պահպանել է այդ թվականը ու այդ գծիկը Թվում է, ամեն ինչ պարզ է։ Բայց նորերս մի հոդվածի մեջ Ա. Զաքարյանը ուղղում է և Զարենցին, և ՚իր իսկ ծանոթագրությունը։ Վահագն-Աթիլայի ստեղծման թվականը անորոշ պատճառաբանությամբ նա 1916 թվականից տեղափոխում է 1918 թ., այսինքն այդ երկերը դանթեական առասպելի մթնոլորտից տանում է իսկագրված ամբոխների մթնոլորտուր։ Այստեղ մինչև իսկ երկմըտելու հարկ չկա։ 1916 թվականը դրված է Զարենցի կողմից՝ Մոսկովյան հրատարակության մեջ, այդ թվականը նա պաշտպանել է Մակինցյանի անզգույշ ակնարկներից, այդ թվականն ու գծիկը մնում են նաև իր ձեռքով կազմված վերջին հրատարակության մեջ։ Բանաստեղծի կամքը սրբազն է. պարզ է, որ Ա. Զաքարյանը իրավացի էր միայն առաջին դեպքում, երկերի ծանոթագրության մեջ։

Այս երկու երկը կապվում են իրար, ծնվել են նույն ողբերգական մթնոլորտում, ունեն հոգերանական-գաղափարական հետաքրքրական նախապատրաստություն և շատ ուրույն զարգացման ընթացք։

«Վահագնի» բանաստեղծական տարագը և յուրօրինակ աղերսը Հայոց Հնագույն միֆերի հետ, ինչպիս տեսանք, բնավ էլ նոր չեր... «Կապուտաշյա Հայրենիքում» նա հույսի ու հարության թեման հարստացնում է Հայոց Հնագույն առասպելների լիցքերով, ստեղծելով Հայոց աստվածների՝ Վահագնի ու Աստղիկի մշուշու սիմվոլները։ Այս սիմվոլները բնավ չպետք է շփոթել սիմվոլիստների հայտնի կոնցեպցիայի հետ, քանի որ Զարենցը, ոտք դնելով ժողովրդական հիշողության արահետներին, ոչ թե պոեզիան բաժանում է ժողովրդից, այլ մոտեցնում է ժողովրդին, խորապես ժամանակակից, այրող իմաստ և քաղաքական լիցք տալով գեղարվեստական պատկերներին ու սիմվոլներին։ Դանթեական առասպելի մոայլ մթնոլորտում Նկատելիորեն իշնում է ոգնորությունը, մահվան մթնոլորտն ու շարաշութ տեսիլնե-

րը կարծես հակադրվում են հույսներին, հեռավոր հայկական միֆերի հավատին։ Աստղիկը դանում է հեռավոր, անմերձնալի դեղեցկություն, որն այլև չերմություն չի բերում մեռնող երկրին։

Ահա ձգելով այս լարք, խտացնելով պատմության դառը փորձը, Զարենցը հայկական բազության և հրդեհի աստծուն՝ Վահագնին, հաղորդում է ժամանակակից լիցքեր և հեռավոր առասպելի հերոսի մեջ մարմնավորում մեռնող Հայաստանի կերպարը։

Այս փոքրիկ պումն ունի իր նախապատմությունը, երկունքի տանշագին շրջանը։ Շատ խոսուն փաստ է, որ նույն 1916 թ. նա գրել է նաև «Հրդեհ» բանաստեղծությունը՝ բաղկացած երկու մասից։ Այդ գեղեցիկ բանաստեղծության մեջ Զարենցը ստեղծում է ավերումի պատկերը, երգում կործանվող շենքերը, մահն ու մոխիրը, նոր հրդեհը, ծխերի միջից երկինք թուղող Վահագնի հարսներին։

Ճշկա շենքերը հոր ու ծխի մեջ,
Շենքերը հսկա վառվում են, վլուս։
Բոցերը՝ կարմիր նայազների պես
Մխերի միջից երկինք են թռչում։
Այն որտեղ էին, ո՞ւր էին պահված
Փերիներն ավան կրակի, հրի,
Անմահ Վահագնի հարսներն հրավարս,
Նայազները այս կարմիր փրփորի,
Երգով ու ծափով երկինք են թռչում։
Դեպի արկի գիրկը մոռացված։
Շենքերը սակայն փլում են, վլուս։
Նրանց կարոտին ողջակեզ գարձած։

Այս լարումը հանգիստ չէր տալիս բանաստեղծին, բանի գեռ նա չէր գտել ողբերգության առավել արտահայտիչ, գերխիտ պատկերը։ Հայոց փրկության, արկի, հրդեհի և բազության աստվածը, վաղնջական դարերում հյուսված հերոսության, ուժի և գեղեցկության առասպելը բանաստեղծին մղում է դեպի նորօրյա անողոք անցքերը, պատմության ու քաղաքականության դաժան դասերը։ Հինավուրց լուսավոր առասպելների փոխարեն նա տեսնում է նորագույն ծանր անցքերը, արյունոտ առասպելները։ Ընկնում, ոտնատակ են լինում հին աստվածները, ավերվում են հազարամյակներում դրված

կյանքի ֆիզիկական ու հոգևոր հիմքերը, ձևավորվում է ար-նաքամ աստծու, Վահագնի նորօրյա առասպելը:

«Վահագնի ծնունդը... Հայ ժողովրդի հպարտության և հերոսության հեռավոր հիմնը՝ առողջ, զվարիթ, լուսավոր... եղեգների միջով վազում է խարսյաշ, հուրհեր, արևաշ պատանեկիկը. վաղնջական, առասպելյալ դարեր, երբ մարդկանց ուղեղներում ձեւվորվում էին աստվածների պատկերները, երբ դրվում էին կյանքի հիմքերը և ծայր էին առնում հայոց սերունդները: Այս բոլորի փոխարեն, որպես դարերի ժառանգություն, այժմ արդեն մնացել են խեղճություն, մոխիր, արյուն, բազում թշնամիներ և արնաքամ մի դիակ.

Հրդեհի աստված, հրդեհ ու կրակ,
Օ՛, Վահագն արի!— Տեսնում եմ ահա,
Որ ծիծաղում ու քրքչում են երանք
Արնաքամ ընկած դիակիդ վրա:

Մի՞ֆ է եղել այն, երգ ու առասպե՞լ, հայոց փրկության մի պատմությո՞ւն, որին դարեր շարունակ հավատացել են հայերը: Հազարամյակների միջով է անցել այդ իմաստուն և հավերժ ջահել առասպելը, դարձել և՛ հիմն, և՛ սիմվոլ, և՛ սրբազն ավանդ. սերունդները ամեն անգամ յուրովի բացել են առասպելի ոսկե կեղեր, զգացել նրա մեծ խորհուրդը՝ կյանքի հիմքերի պաշտպանության համար, նրա մեջ ահսել իրենց պատկերը.

Թե մի՞ֆ էիր դու... Եկան, երդեցին
Սի հրն իրիկոն գուսանները ծեր,
Բր զո՞ր ես դու, հրոտ, հրածի՞ն,
Որ դո՞ւ կրեքս փրկությունը մեր:

Ժողովուրդը սերնդի սերունդ ավանդել է իր փրկության և ազատության երգը, բոլոր մաքառումների ընթացքում հավատացել իր հերոսին, այսինքն՝ ինքն իրեն.

Եվ հավատացինք, հարրած ու գինով,
Որ դու կա՞ հզոր, մարմնացում Ուժի...

Եվ այսպես, բանաստեղծը «Վահագնի» մեջ, ընդամենք տասնվեց տողում, ստեղծում է դառն անկման պատկերը: Միջը դառնում է նոր ժամանակների պատմություն:

Դատապարտված կյանքի ու հայրենիքի ծանր հոգեվարքի պատկեր: Ամբողջովին գեն են թռչում սիմվոլիստական կոնցեպցիաները պոեզիայի հետագարձ ընթացքի մասին, բանաստեղծը հեռավոր միջք բացում է արյունուտ փաստերի վրա, առեղծում քաղաքական աղետի արտասովոր խիտ պատկերը: Ալեկոծ հոգով նորագույն հայը կառկածի է ենթարկում իր ամենալուսավոր առասպելը, երազը, հայրենական ավանդը:

Ի՞նչ է եղել անցյալում, օ՞վ է Վահագնը. մշուշ է, պարզ է միայն մի անհերքելի, դաժան իրադություն, որ հեռավոր դարերից իր առասպելը բերած ժողովուրդը դարձել է քաղացած ոհմակներին կեր—

Ներ կյանքի հիմքը անդունդը ընկան
Եվ արնուած միջում ճարձատում են դեռ...

Այս փոքրիկ բանաստեղծությունը, որ նա անվանում է պոեմ, մեր պատմական բախտի փիլիսոփայությունն է, տոգորված դառնությամբ, ուժեղ, խորունկ, ծանր վշտով: Այսպես է նորագույն գարում ձեւվորվում հայոց բախտի տառապելը, ժաղովուրդը կանգնում է նոր սահմանագծի՝ անդունդի առջե... Տեղի է աւենինում ծանրագույնը՝ կյանքի հիմքի կործանումը.

Ներ կյանքի հիմքը անդունդը ընկան
Եվ արնուած միջում ճարձատում են դեռ...

Եվ դարձյալ խորապես հայկական այս պատմության մեջ երևում է բանաստեղծը որպու կերպարը, որն այնքան անմիշական է ընկալում ժողովրդական բախտի ժանր ընթացքը և զարմանալի խորթավ գիտում հայրենիքի բախտի ուղին: Սա ստեղծագործական այն ժանրանիստ ընթացքն էր, որի մեջ ծավալվում էր բանաստեղծի ձիթը, ստանալով ազգային և անհատական ինքնատիպ շեշտեր: Ամեն ինչ, ամեն կարևոր բան արգելու մեջ սկսվում է ազգային հիմքերից՝ և՛ սպին, և՛ գաղափարները, և՛ խտանվածքի տիրապետությունը:

Հենց այս հիմքի վրա է բարձրացել նաև համամարգիան ընդհանրացում և հնչեղություն ունեցող «Աթիլանտ» Ի՞նչ հանգամանք է Զարենցին մզել գեպի աշդ թեման, ինչո՞վ է Աթիլան՝ Հոների արքան, կապում Վահագնի հետ, արդյոք անհարիր բան չէ՝ հայոց քաջության, արևի ու փըռը կության տառժու այս մերձեցումը Հոների գաժան արքացի հետ, որի ոտքի տակ տնքում էր հողը, թայց ո՛չ Հոների արքան այս դեպում ոչ թե պատմական հերոս է, այլ լեզենդար, սիմվոլիկ, որի միջոցով հայ բանաստեղծը ինչ-որ կարևոր բան է ասում աշխարհին:

Ետք ուշագրավ է, որ այդ կերպարը՝ 5-րդ դարի դաժան արքան, խուժեց նաև ոռւսական պոեզիա: Ինչո՞ւ, չէ՞ որ պատմության մեջ նա հրդիչի էր մատնել գյուղերն ու քաղաքները: Բանն այն է, որ այս պարագան, ոչնչացման այս դաժան կիրքը շատ էր գրավում 20-րդ դարի բանաստեղծին: Բրյուսովը գրում է բանաստեղծություն՝ «Ապագայի հոներին» խորագրով: Վյաշեսլավ Խվանովի տողը՝ «Կոչեվնիկ կրաсотոյ» բանաստեղծությունից՝ «Տրորիր նրանց գրախարը, Աթիլ...»— Զարենցը վերցնում է իրեն բնաբան իր նոր երկի համար:

Հետագայում Բլոկը դիմեց սկյութներին: Այս հին լեզենդար անուների միջոցով նրանք ուզում էին արտահայտել իրենց հայացքները նոր կյանքի մատին: Իջարկե, կա ինչ-որ տարբերություն ուսւ սիմվոլիստների և Զարենցի միջև, տարբեր են նրանց շիկացման կետերը, առասպելի ու լիգենդի ընկալումները: Ճիշտ է նկատում Փ. Քալանթարյանց «Աթիլայի» մասին գրած իր էտյուդում. ուսւ սիմվոլիստները, դիմելով սկյութներին, մոնղոլներին, հոներին, գերազանցապես ընդգծում էին արևելքի և արևմուտքի հակադրությունը, ներռողում նրանց անպարտելի ուժի գեղեցկությունը: Այսպես էին գրում Վլ. Սոլովյովը, Վ. Խվանովը, ինչ-որ շափով նաև Վ. Բրյուսովը և Ալ. Բլոկը: Թայց դրա հետ միասին, որոշ շափով Աթիլը դիտվում է նաև որպես մի զորեղ ուժ՝ հին աշխարհը կործանելու համար (Վ. Բրյուսովի):

Ահա Զարենցը, ունենալով խորապես ազգային հիմքեր, զարգացնում է հենց այս գիծը: Այն բանաստեղծը, որի հայրենիքը դարձել էր հին, արատավոր աշխարհի զոհը, ամենից

ավելի իրավունք ուներ փայտայելու այդ աշխարհի կործանման երազը: Զարենցի ստեղծագործության տրամաբանական ուղին տանում է գեպի վրեմինդրություն: «Վահագնում» և «Աթիլայում» որոշ կողմերով ավելի է զորանում «Դանթեական առասպելի» ոգին: «Աթիլայում» խստորեն ընդգծված է այրող, անկեղծ ատելությունը զառամած աշխարհի գեմ: Լեզենդար մշուշից բարձրանում է պատմության հերոսը՝ զաժան Աթիլը, լսվում է նրա ահարկու խոսքը.

Ինձ թաղել էին ոսկե դագաղում
Եմ հոները մի հեռավոր գիշեր:
Եվ իմ շիրիմը ոչ ոք չգիտեր
Եվ աճյունիս հետ ոչ ոք չէր խաղում:
Սոռացել էին արքա Աթիլին:
Եվ հեղնում էին երազը նրա...
Եվ կարծում էին, որ մեռել է նա...
Իսկ ես—բարձրացել, անցնում եմ կրկին:

Ի՞նչ երազ ուներ Աթիլը. Զարենցը բացառություն չի առեւկելի համար: Աթիլան ուզում է արևելքից մինչև արևմուտք ավելի աշխարհն: Ահա «հարություն առած» հին հերոսի անողոք խոսքը.

Տեսնում են նորից իմ աշքերը նեղ,
Որ հին նժույշիս ամբակների տակ
Ցնդում են, որպես տարտամ հիշատակ,
Չեր երազային շնչերը բյուրեղ...

Ճե՞ր, արևմուտքից մինչև արևելք
Փիտի հրդեհեմ ու քանդեմ հիմա՝
Ես—արքա, աստված, անշնչ, զժո՞խք ու մա՞հ,
Ես—ճշմարտության խարազանը մերկ:

«Ճշմարտության մերկ խարազանը» երազում է մի կարմիր գիշեր հիմնովին քանդել Հռոմը, երազում է այն օրը, երբ իր ոտքերի առաջ կրկին կողդան չնշին արքաները: Վրիժառության ոգին, որ գարերով քնել էր, վերստին արթնանում է, իմաստավորվում է գրական պատկերը, կապում նոր դարի անցքերի հետ:

Եվ թող աշխարհի տերերն իմանեան
Եվ խոր ըմբռնեն մի վերջին անգամ,

Որ եզե՞լ եմ ես, կիրաբեմ ու կամ,
Ես—անհերքելի ու հավերժական...

Աւրեմն հավերժական է ոչ միայն դաժանությունը, այլև վրեժի ոգին Մեղքերով ու արատներով ծանրաբեռն կյանքը կանգնած է անգուշդի եղրին, չին ապականված աշխարհին սպասազում է անեղ յարատաներ: Սա ծանր և լուրջ եղրահանգում էր, որը ցույց է տալիս Չարենցի մտքի առնականացումը և պարզացումը:

Զպեսք է կարծել, թե Չարենցն իգեալականացնում է պատմության արյունաբերությանը հերթափն. Աթիվան սիմվոլ է, միջոց, Չարենցը հաշիվ ուներ ոչ թե նրա, այլ արատներով բեռնված աշխարհի հետո եղ, բնականաբար, նա ուրույն գծեր է տալիս հերոսին, անում ինչ-որ ուղղումներ, ավելի ցայտուն գարձնում վրիժառության կիրոք:

Պոեմն տևիք գեղարվեստական մի սրբոյն հատկանիշ. գրված է թանձր ատելության կրքով, շիկացումով, որը հիպերբոլիկ բնդրկում և ուժ է տալիս պատկերներին. «Իսկ ես քարօնացել, անցնում եմ կրկին: Եզ Հրդեհների բոցերը գլուխին—խանձում են ահա աստղերը նորից: Աշխարհավերման հզոր այս կիրքը, ինչպես արդեն առացինք, ուներ կենսական հիմքեր, առանձին առ էր ստանում բուն հայկական պատմության նորապատճեն լիցքերից:»

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿՎ ԽՐԱՉԱԲԵՐԻ ՁՅԱԼԵՐԻ

(«Հայոց պատմություն»)

Զարենցն անվերջ մեծացնամ է իր երգի հոսանքը, ձբդ-
տելով հոգեբանական ու կենսական հարստության: Դան-
թեական առասպելի էպիկական հուսվածք, հայոց դրամայի
փիլիսոփայական խտացում, աստվածների ողբերգական ան-
կում, տառելության բոցավառ կիրք, որոնումներ, երազներ,
ծանր դիմադրություն ճակատագրին:— Այսպիսի բազմապի-
սի գտակներից էր գոյանում բանաստեղծական հզոր հոսան-
քը: Զարենցը ապրում էր իր սերնդի հետ, ամենօրյա լարում-
ների մինուրտում: Հենց գրա շնորհիվ, պտեզիայի մեջ զգաց-
վում է ժողովրդական կյանքի արգելեալ խաթարվող ծանր շըն-

շառաթյունը: Խա գառեռմ է բարիս բան խմառավ հայ ողջ կյանքի՝ անցքերի, աղեաների, բարոյական փլազտմների, հաւաքների ու հազարք, ֆիզիկական և հոգիսր ողջ բարունեների հրագիչն ու կենսագիրը, որը հանդիս է գալիս նաև երազաւեան խորհրդագույր գերաւած:

Այս առամենք նրա բանաստեղծությանը ձեսք է բերում Հագիբանական մեծ կշիռ, քանի որ Վահան Տերյանի հետ, բայց տրդեն յարովի, նա իր հայտցրի լույսը նետում է դարձի ժառանգ հետ նախրցու հոգու թաքան թորշերը, անմոռմ ժողովրդի հոգեկան ներքին շարժումը, ցափի ու երազների ելեջները: Եվ դարձյալ այս ճանապարհին երևում է և առանձնահատուկ հայկականը, և հայկական համամարդկայնությունը, ինչպես զեղեցիկ բնորոշել է Պ. Դեմիրճյանը:

Այսպիսի մի գեղեցիկ կերտվածք է «Հարդագողի ճամփորդները», խարսնելի զբամտ, որը հնչամ է և իբրև պատմություն, և կենացքառական յավի երգ, և ամբողջ սերնդի երազների գերող միջեղի, ինչպես ցույց են տալիս կյանքի փառաւերք, այս բանասեղծությունը շատ է համապատասխանում պատանի Գարենցի կենացքությանը, խառնվածքին, խենթ երազներքին, հետանիքի տանձող կարստին, թափառիկ օքերին ու կրքերին, անհանգիստ տարերքին։ Դա բնական շեշտ ու անժիշտականություն է տարիս տուերքին, սրբածադրությունների հակառական ընթացքին.

Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու,
Երկու ճամփորդ պատառաված շաբթորդ։
Ու սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրական կարտաներով ու սիրով։

Այս առղերի մեջ երկուամ է նաև նարագուշ սերունդների ծանր դեպքերաւաների ա թափառիկ օրերի պատկերը։ Հայ պատանիները, ինչպես զաւշակել էր դռա Սիամանթոն, գալուկվեների խմբերի պես անցնուան էին կատարածի ճամփաներով, բայտս օբանում մեծ աշխարհի մօլոր բավիզներում։ Անշուշտայս բանաստեղծության մեջ կա ինչ-որ համամարդկային հարազար բան։ Տրտում պատանիները բռնված էին կարուա անուրջներով. զահել հոգու պատմությունը գալիս էր բազում ակունքներից, թախիծն ուներ նաև ինչ-որ բարերեր

բան, որ ծնվում է մարդու և երազների, մարդու և բնության աղերսներից, կարոտի ու սիրո բռնկումներից, լուս երազներից Առասարակ այդ թափածի մեջ կա ինչ-որ վեհացնող, հարստացնող բան, որ գարնանային անձրկի պես իշնում է մարդու հոգում, ոսկեզօծում ներաշխարհը։ Տրտմությունը, անուրշը, կարոտը, երազը, տիխորությունը ծնվում են շատ բնական ճանապարհով և գնում երջանկությանը և հոգու թոփշին միաձուլյալ Տիրությունը բարձրագույն բարիք է, հոգեկան այս վիճակը հետո մի այլ երկում («Տաղ հիվանդների համար») շատ խոր է մեկնում Զարենցը։

Բայց դու կարող ես լինել անեզրությամբ տկար,
եղ տիխորությունը, որ բարիք է բարձրագույն
և ծնվում է ոգու կարոտից,
Կարող է ծանր լինել քո ուսերի համար
եվ դժնի տենդ դառնալ, իբրև մշուշ իշնել և
աշերդ զրկել փարոսից...»

Այս տիխորությունը որպես բարիք, ոգու այս կարոտը ապրում է Զարենցի ողջ ստեղծագործության մեջ, սկսած վաղ շրջանից մինչև «Գիրք ճանապարհի»։ Բանաստեղծի ոգին մի կարող չբռնկվել այդ հիվանդությամբ, ոգու կարոտով, անեղբությամբ, երջանիկ հեռուների տեհնով։ Նրա ոգին անհանգիստ կարոտով մշտապես գալիքի հետ է՝ բռնկված բազումբազում զուլալ ու տարօրինակ, մատշելի ու քմահաճ երազներով։

Այս ապրումները մեծացնում էին Զարենցի բանաստեղծությունների հոգեբանական մթնոլորտը, սաւով նրան համամարդկային երանգները Հավերժ մարդկային զգացումները, սակայն, Զարենցի ստեղծագործության մեջ շատ հաճախ ընդունում էին նաև այլ երանգներ, ստանալով որոշ աղդակներ ուրիշ ակունքներից։ Բանաստեղծական տրամադրությանը խառնվում էին նաև ծանր խոհերը աղգային բախտի մասին, որը երազներին տալիս է մոռայլ գույներ, ոգու կարոտին՝ որոշ դառնություն։ Ահա այսպես, անտեսանելիորեն, ընդհանուր հոգեբանությունը փոխանցվում է բանաստեղծությանը, արվեստին բերելով ինքնուրույն հատկանիշ և աղգային խառնը վածքի շեշտ։

Մշուշի պես մեր մանկությունը անցավ՝
Գորշ, անարկ, անմիտիքար մանկությունն
Զառանցանքի պես մանկությունը անցավ—
Ու հեռացանք! Ու շենք դառնա կրկին տուն։

Այս տարօրինակ կյանքից է գալիս ջահել հսկու դրաման։ Հայ պատանին որոնում է արևներ ու լուսավոր հեռուներուն նրան նույնպես բնականորեն հարազատ են անեղբության կարոտը, օտար եղերքների ձգտումը, ոգու ուլացումները։ Հենց դրանից է ձեւվորվում բանաստեղծության մի շերտը։ Բայց, ինչպես միշտ, ստեղծվում են հակադիր տրամադրություններ ու գույների հակասությունն։ Բանկական զուզակ հայացքին հետևում է ծերունական կնճիռը, երազներով մշուշված հայացքները երկնքից իշնում են երկիր։ Բանաստեղծության վրա ծանրանում են ողբերգական շեշտը, եղծվող երազների կոկիծը։

Ու մշուշու մեր աշքերը հավիտյան
Որոնեցին պատահական աշքերում
Հարդապողի ուղիները ոսկեման,
Նրա անծիր, անծայրածիր այն հեռուն։
Բայց աշքերուան նրանք երկինք չգտան
Ու սրտերում—արեգակներ ոսկեվառ։
Ու բգկտվեց հայացքներից անկենդան
Որը սիրտը մեր՝ երազորեն հոգեվար։

Հեռու, շատ հեռու են Հարդագողի ուղիները։ Հայ պատանիների առջև հառնում են մեր «մութ, անհեթեթ, տարօրինակ» կյանքի դրվագները։ Կյանքը հեռանում էր, երազը եղծվում, արեք չէր փայլում որբ հոգիների վրա։ «Կյանքը դարձավ Հավերժական մի փնտրում»,— այսպես է նա մեկնում հայ կյանքի ծանր խորհուրդը։ Բանաստեղծության մեջ տեղի է ունենում դրամատիկ շեշտի յուրահատուկ փոխանցում։ Սերնդի դրամայից Զարենցն անցնում է բանաստեղծի դրամային, այսինքն՝ հայ երգի և ոգու դրամային, որը հարազատ էր նաև նախորդներին՝ Թումանյանին, Տերյանին, Վարուժանին, Սիհամանթոյին։ Նրա տեսիլները վերցնում են արյունոտ երանգներ։

Զարենցը թերեւ ավելի խոր է զգում բանաստեղծական այդ հայտնի տառապանքը, ազգային առասպելների կործանումը, ավելի ճիշտ՝ պատահազերծումը պատմության կողմից Նրա հոգում կուտակվում է դառնություն զառամած աշխարհի գեմ, մյուս կողմից՝ զորանում է երջանիկ ակունքների ձգումը Մի դեպքում բանաստեղծության մեջ ծնվում է կործանման կիրքը, մյուս դեպքում՝ որոնող հոգու յուրօրինակ պատմությունը, որը, ի վերջո, ավարտվում է ներաշխարհի խոր վայրէցքով.

Օս ուղեցի երգի երգը աստծու,
Երգի վասքը պայծառ պիրո և Հացի.
Սիրսու լցկեց... բայց լցիտեմ, թե ինչու—
Գորդ օրերի տաղակոթյունն երգեցի...

ԱՀա երգի մեծագույն գրամանեան Բանաստեղծը ծնվում է հյուսելու երջանկության, սիրո ու հացի երգը։ Նրան մշտապես գերում է գեղեցիկ ներդաշնակությանը բնության և կյանքի մեջ։ Բայց կյանքը շեղում է այդ ուղին, փոխում նաև բանաստեղծական հոգու բաղադրությունը։

Թաղիքած մեաց թէ աշքեռում մի անհուն
Կապուտաչյա երջանիկալիյան առասպեկտ
Մի երկնային առնչության պատմոլիյուն,
Աւ կարծրացագ սիրու՞ անուզս ու անընթու

Այսպես է ավարտվում հայ սերնդի նորագույն առասպելը, փրկության և երջանիկ ափերի փնտրումը: Կործանվում են միֆերը, զանձել սերնդի ոգու թորչքները, տիեզերական առնչությունները և ճախրը, որոնք շատ էին հարազատ խավարի ու զրկանքների մեջ գտնվող մարդկանց: Հայ բանաստեղծը բացում է իր սերնդի դրամայի ակունքը, փլուզման և հոգիների անկման գաղտնիքը տեսնում արյունոտ իրականության մեջ: Ամենուր զգացվում է անհատական ցավը, լրսվում է սերնդի հառաջանքը և երեսում է պատմության ծանր նստվածքը մարդկային հոգու վրա: Զարենցը դրամային տալիս է խոր բացատրություն:

Զէ՞ս որ կյանքամ չհառկացավ ոչ ոք մեզ,—
Ու խնդացին լուսավո՞ր մեր աշբերին,

Բաւթ հեղինեցին մեր կարուտները Հրկեզ—
Աւ հեռացան։ Բւ ո՞չ մի լույս շրերին։

Պատմաթյան ճամփամիջին միայնակ մնացած աղքի ողբերգությունը փոխանցվում է իր զավակին։ Միայնակ ազգ, միայնակ հոգիներ, որոնք մաքառում են մոլոր ճամփաներին գալիքի համար։ Զարենցը հարազատ է իրականությանը։ Այս բանաստեղծության մեջ երեան է գալիս խոր հարազատություն սերնդի ու հայրենիքի հետ։ Բանաստեղծության նշանավոր տողը՝ «Որ երազում երազեցինք ու անցանք...», 10-ական թվականների հայ երիտասարդ սերնդի հոգու բանաստեղծական բնութագիրն է։

Զարենցն առաջ է գնում Տերյանից, խորանարդ նոյն
նյութի, թեմայի ու ոճի մեջ, հասնելով ստորշյա էական
փոփոխությունների: Նա դրանում է բարձր տաղանդ՝ իր
հոգու մեջ խտացնելով սերնդի ապրումները, ազգային ող-
բերգությունը ընկալելով ուստի անձնական մեծագույն
վիշտ, երազների մշուշի միջից զառանարդ իր տառապած երկ-
րի պատմությանն ու հողին, պատեսառ խփելով որոնում-
ների հանապարհին: Անզամ երա «տերյանական» երկերում,
այսինքն օրերի թեմաներում, նկատվում է հատուկ մի բան,
շարենցական մի հատկանիշ: Երա վիշտը զառնում է ավելի
զորեղ, առնական, բնարական երգերի մեջ ընդգծվում է դրա-
մատիզմը, որը ծայր է առնում անհատական, խմբային, հա-
վաքական և ազգային հոգեբանությունից, զառնարդ մի
զորեղ հոսանք և անդուկ ձգում դեպի մարդկային երշանկու-
թյան ոսկեման հեռավոր ուղիները:

Թերևս Զարենցի որոնող ներաշխարհը և անդով մաքառումը կարող են բնութագրել նոր դարի բանաստեղծներից մեկի՝ Ապոլիների խոսքերը։ Նա խորունկ տողերով բացում է բանաստեղծական նոր, տառապող, ազնիվ սերնդի մաքառող հոգին։ Այդ սերունդը մեղքերի ու սխալների միջով գնում է դեպի գալիք, մշտապես ճակատամարտ է տալիս գալիքի սահմաններում։

Ներողամտություն մեր հանդեպ Մենք անդադար մարտնչում ենք
Գալիքի և անհունի սահմանագծում։
Օ, ներողամտություն

Մեր թուղթյունների, մեր սիալների, մեղքերի հանդեպ:
Ահա և ամառը վաս հասավ, հարձակման պահը:
Եվ մեռած է իմ պատանեկությունը, գարնան նման...

Չարենցը ևս այդ ազնիվ սերնդի բանաստեղծներից մեկն էր, որն իր ժողովրդի բախտի և հանուր մարդկության կյանքի խոր շահագրգոռություններով արդեն մաքառում և մարտ էր մղում վաղվա համարι

ՀԵՂԱՓՈԽԱԼԻԹՅՈՒՆԻ ԵՎ ՍԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ

Հայկական կյանքում արյունոտ ակոս էր բացել քաղաքական ողբերգությունը, Միջազգային դիվանագիտության լուռ համաձայնությամբ թուրքական բռնակալությունը սկսած անցյալ դարից ուժեղացնում էր ճնշումը հայ ժողովրդի վրա։ Առաջին համաշխարհային պատերազմն արդեն լայն առարկ բացեց գիշատիչների համար. նպաստավոր պայմաններում թուրքերը կազմակերպեցին առաջին ցեղասպանությունը՝ եղեռնը, ծգտելով կենսական ընթացքից հանել մի ամբողջ ժողովուրդ և հասնել քաղաքական անդորրության։ Այս անցքերը մահվան շունչ էին տարածում հայ կյանքի, հայ մարդու դարավոր հոգեբանության, հայ երգի ու հեռավոր ակունքներից եկած լուսավոր առասպելների վրա։

Մինչև ե՞րբ և ո՞ւր կարող էր շարունակվել այս դրաման, կործանված առասպելների այս շարքը, օտար ուղիների վրա գտնվող սերունդների տառապանքը։ Պատերազմից առաջ Վահան Տերյանը տագնապով, ահով, կասկածով էր նայում իր երկրի գալիքին։

Ահով ահա կանչո՞ւմ եմ քեզ,
Ցոլա, ցնորք նաիրի, —
Մի՞թե վերշին պոետն եմ ես,
Վերշին երգին իմ երկրի...»

Չարենցն արդեն տեսնում էր այդ կյանքի հիմերի կործանումը և ճարճատյունը արնոտ միգում։ Տարիներ հետո, 1933 թ. «Նորք» պոեմում նա խորհրդագում է հայ ժողովրդի և երգի այդ ճակատագրական օրերի շուրջ։ Դարերից էր եկել երգը՝ խարսխի նման շղթայված ժողովրդի հետ, իր մեղեղիների և գույների մեջ արտացոլելով նաև ժողովրդական ողունքը։

և կյանքի ընթացքը։ Այդ երգը, որ աճում էր երկրից, ոչ թե ձախերից կամ բառերից, բերում էր իր հետ երկրի շունչն ու ոգին։ Եսկ այդ շանչն ու ոգին հաճախ էին կանգնած օրհասի պողուն։ Մահվան գերանդին սովում էր հայ կյանքի և երգի պարտեզներում, համաշխարհային քաղաքական աղետներին զոհ էին զնում հայ բանաստեղծները, երգերը, երազները։ Հայ խառնվածքի վրա պատմությունը զնում է ցավի մի նոր շերտ։

Բայց ահա բարձրացավ մի օր
Այն հողմը—ուրագանն արյունոտ,
Սամուելի նման ահավոր
Տարածեց աշխարհի հանով,—
Ունատակ արագ սշխարհում
Ռորափոր քաղաքներ ու շներ,
Աղերց երկեր մեր ողջ
Եկ անապատ շնեց...
Մանգաղի նման մահարեք,
Նու հնաց օրերում այն սև
Բարձրարեք այգեստանը մեր,
Մեր երդի պարունզը լառնա—
Եւունուվ մահու գերանդին՝
Նա հնաց բերքի նման սուր—
Նահրյան գաւաննօր անթիվ,
Եկ ամբո՞ղջ մի անմահ ժողովորդ...

Պատմությունը կարծես մեր սպան ու երգին պիհակել էր դաժան մաս։ Մերիացին էր արդեն մեր սրբազնն բարդին։ Թվում է՝ առեն ինչ վերջացած է։ Բայց այդ պահին նույն սրբամությունը կրկին կենաւահան լիցքեր է ստալիս ժողովրդի ոգուն ու երգին... Մեր կյանքում սկիզբ է առնեամ մի նորագույն առնչություն։

Հյուսիսից եկած հեղափոխությունը խոր արմատ է ձգում հայ կյանքի ու հոգեբանության մեջ։ բնականաբար, այստեղից, այս առնչությունից սկիզբ է առնեամ հեղափոխության և տղային երգի մեծ կատը, որն այնքան կարենը էր մեր սպանամար։ Սայու է առնեամ ստեղծագործական լիցքերի երրորդ շրջանը։ Եթե վաղ հասակում Զարենցի ձիրքը սկսեց բարորշել գրքային տպագործություններից, գրական լիցքերից, ապա մի քանի ստարի հետո, համաշխարհային պատերազմի շրջանամ կյանքի ալիքը, մասնավորապես՝ ժողովրդական

որբերգությունը, հսկայական էներգիա հաղորդեց նրա առեղծագործությանը, խոր ինքնատիպություն տալավ նրա անհատականությանը։ Անտարբակուց, այստեղ նա շատ մեծ է, ինքնուրույն, ինքնատիպ։ Նրա պոտենցիում և մի շարք սուանվագներում անկրկնելի ուժով արտացոլված են ժաղովրդական ոգու ամենապրկված, լարված, ճակատագրական պահերը, կյանքի ու մահվամագգեամ զիմացրող հայենիքի գրաման։

Եվ, սակայն, Զարենցին վիճակված էր շատ ավելի խարս, պատմականորեն նշանակալից գեր, բայց ժահվամ առաջնապնդիք երգը։ Պատմությունը նրան չեր վիճակել միայն այդ ողբերգականորեն գեղեցիկ ու ծանր գերը։ Նա կոչված էր բացելու հայոց գրականության նոր էջը, բարդ անցումների ընթացքը, համական բախտի գրամատիկ, բայց և լուսավոր առաջության պատմությունը, որը երկունք պետք է լիներ նաև ոգու և պանզիայի համար Եվ աշա այս նոր առնչությունների մեջ համառութասանյան և կովկասյան հեղափոխական անցքները, քաղաքացիական կոմիները, մարգկանց և ժագավուրգների գերեզքը նոր, հզոր ցիցքներ են տալիք բանաստեղծներ, որին վիճակված էր գեղարվեստական մտածողության նոր գարացքան բացելու տիտանական զերք։

Դեռ երեկ բանաստեղծը գեղենքար մշաշի մեջ որոնամ էր աշխարհակարծան այն ամը, որ պետք է վրան լաւձեր նեխած աշխարհից ու տիբականներից, որանում էր տիեզերական վրիժառության ակունքները։ Մի ժամանակ բանաստեղծի զրմունքներից հնչում էին անեծքի, դառնության կամ շարշարանքի խոսքեր, և նրա ոգին, երբեմն-երբեմն տպորված մաղծում, տառապանքի միջով զնում էր զեզի մեծ, թանձր շաբաթյանը։ Վերջապես նրա հայոցը և միտքը անհանգիստ որոնումներից զտանում է զեզի մամանակի տցուզ անցքերը, այնտեղ նա զտնում է իր որանուծ համաշխարհացին, տիեզերական այն ամը, որ անմակ է մաքրելու հին ու ազական աշխարհը արատից, արյանից, նեխուումից։ Դա ոչ թե Աթիլան է՝ հաների գածան արքան, այլ պատմության անողաք ընթացքը, «Հշմարառության խարազանը մերկ», այսինքն՝ հեղափոխության ծիրը մտած ժողովրդական հզոր տարեքը։

Եվ հանդաբժ, իրաք, ունի է ուննում առասպելական մի

վերափոխություն, թվում է, կախարդական գավազանի ուժով վերածնվում են կյանքը, երազը, երգը: Զարենցը հեղափոխությանը հանդիպում է հոգեկան ծանր անկման պահին Բայց այդ նոր առնչությունը միանգամբ կլանում է նրա հոգին, ողջ էությունը, երեսակայությունը, գրավում տեսողության ողջ հորիզոնը:

Այս զարմանակի արագ վերափոխությունը, ավելի ճիշտ՝ վերածնությունը, կենսական և հոգեբանական մի բնական երկույթ էր: Երկար ժամանակ Զարենցի մեծությունը ընդգրծելու համար գրականագետները պնդել են, թե բանաստեղծը բաժանվեց նաիրյան վշտից և իր կապերը խզելով անցյալի հետ, անցավ սոցիալիստական հեղափոխության կողմը: Խորապես սխալ դատողություն: Ազգային ողբերգությունը և հեղափոխությունը բնավ էլ հակադիր երկույթները չեն, նրանց միջև գոյություն ուներ մի նիրքին կապ, մի էական առնչություն, որը եղավ կարևոր ազդակ ազգային վերափոխության ձանապարհին:

Կարելի է ասել, որ հենց ազգային ողբերգությունն է Զարենցին մզի դեպի հեղափոխություն, արագացրել նրա քաղաքական-սոցիալական հայացքների խմբումը և հասունացումը: Խոր և լուրջ մտածողը շատ արագ կուահեց ազգային խների և հեղափոխության կապի մեծ հեռանկարները:

Հուշափոխությունը՝ հավասարության, բարեկամության, խաղող լության նշանաբանով, առավել հարազատ էր ու կենսական մեր ժողովրդի համար, որ կանգնած էր անդունդի եղբին. Բնականարար, Երկիր նաիրիի գաղափարախոսությունը և ազգային երանգները, բատ էության, խորրության փոխարեն այս դեպքում արդեն նոր հայի հոգում ծնում են Եերին հարազատուրյուն դեպքի սոցիալիստական հեղափոխությունը, որը կոչված էր ազգերին հանել մեծ եղբայրության ընտանիք և վերջ դնել անվերջ, անխիղն և արյունալի այն հալածանելին, որ մղում էր միայնակ մնացած փոքր ժողովուրդերի դեմ: Ավելին, հայոց վիշտը մի խրան էր, հզոր ազգակ, որ առաջ էր մղում հայոց երգը դեպի սոցիալիստական, միշազգային գրականուրյան անընդհատ մեծացող, զարգացող հոսանքը:

Այս անցումը ստեղծագործական հոգեբանության առու-

մով, շատ ավելի բարդ էր, քան կարող է թվակ առաջին հաշյացից: Զարգացման ձանապարհին ազգային կյանքի որոշ ժանր երկույթներ ծովակներ էին դնում բանաստեղծի առջև: Հեղափոխության և ազգային ճակատի համար այս պարագան մի մասն ապրում էր ոուսական հեղափոխության տարբերքի մեջ, մյուս մասը՝ թուրքական վայրենի կամացականության. և ֆեռազիզմի պայմաններում: Քաղաքական և հոգեսոր երկույթները քննելիս, պետք է նրբորեն հաշվի նրանեւ այդ հակասական վիճակի հետ: Հակառակ դեպքում զարգացման ընթացքից շատ բան մեզ կմնա անհասկանալի և անմատչելի, մեր հոգեսոր կյանքի շատ դռներ կմնան գոյց Ավելին, նախորդների պես նույն շափանիշն ու կշեռքը գործածելով, հեշտությամբ կարելի է խառնել և սկացնել 20-րդ դարի հայկական ողջ բանաստեղծությունը՝ արևմտահայ և արևելահայ վտակներով: Հոգեբանական և գաղափարական առումով մի առեղծված կմնա նաև Զարենցի բանաստեղծական առաջինական դրամատիկ բնույթը:

Ամեն ազգային մեծ գրող իր հետ բերում է սեփական ժողովրդի զգացումների ամբողջությունը: Նրա հոգու մեջ լուրզի ամբողջանում են ժողովրդի անցյալը, ներկան և գալիքը, եթե մինչև անգամ հեղափոխությունը անմիշապես վերացներ Հայաստանի քաղաքական այդ երկակի վիճակը, ապա իսկական բանաստեղծի հոգում ինչ-որ շափով պետք է մնար այդ ժանր, արյունուտ անցյալի դրոշմը: Պատմության ընթացքը անչնչելի հետք է թողնում ժողովրդի խառնվածքի, բնականարար նաև բանաստեղծի ներաշխարհի վրա, որը անհասկան ցայտուն շեշտերով հանդերձ, հենց ժողովրդական ոգու խտացումն է:

Եվ ահա այս պատճառով Զարենցի ոտանավորների մեջ դնու շարունակվում են մոտիկ անցյալի որոշ տրամադրություններ: Մի կողմից նա երգում է Երկիր նաիրիի ողբերգության՝ դանթեականի թեման, մյուս կողմից՝ սկզբնավորում սոցիալիստական հեղափոխության թեման: Այս հիմքի վրա

Էլ ծեռակ են առնում ուրույն հասականիշներ, որոնք ստեղծ ծով են մի նոր որակ Զարենցի, բնականաբար նաև ուղ հայ բանաստեղծության մեջ:

Զարենցը ժողովորդի բանաստեղծն էր, ազգային կյանքի երթիւր: Բնականաբար, նա չէր կարող միայն հրապուրվել հեղափախական ուրախապրություններով, ուռախան և ոռախայ երեսայիներով ու մոռածակ բաղաբական այն ողբերգությունը, որ անօդից ժամանակում էր Հայուսաւանի մյուս ժառում:

Զարենցը հետաքրքրական զարգացում է ապրում նաև գեղարքիւսական ոճի բնափառություն: Սկզբում նա որոշ առլր է սույն սիմվոլիզմին, անգամ՝ նաև ուրախապիտիմին: Մի շարք երիտաս երկան են զայնու ուռախանուկան ուրույն երանգավորումները՝ մեծ շափով կատարված հայ մարդու ուռախանուկ սրատրանքների և ունակիների հետ: Բայց այս բոլորից հետո, ինչպես տեսանք, նրա պահպատճեմ, մասնավորապես՝ «Դանթեական սուսապելում», թանձրանում է իրաւաչառությունը, որը գործ ունենալի կինդանի կյանքի և իրական անցքերի հետ և հնագույն էր հոգեբանական որամայի վրա: Այժմ անու նա առաջ է նայած, հաստատվում է ոչ միայն սիմվոլիստական սրաբերութիւն և այլից կազմի ավանդներուց, այլ շերջում է անգամ իր իսկ բանաստեղծարան մեծ հիմնութիւն՝ պետքանից: Նույն պետքանությանը զուտ է դեպի ուռախանություն տարելը, իստոցներու հետախախական ռածախափզմի մերություն, բանաստեղծարան ուռախանություն մեջ: Սկզբովիզմից դեպի ռեալիզմ, ռեալիզմից՝ ներափախական ռածախափզմի, — ահա երիտասարդ Զարենցի բան նաև պարագանք՝ զերավիւսական ոճի առարկան:

Բայց մի՞նչ որ մի նահանջ չէր պահպատճի հանապարհին Քառական աները պետք է վահանափն պատմական ըստ Հանդամենքների և մեծ անցքերի լույսի տակ: Գրական հեթանու ու ոճը հանուի առաջ են մըլքում կյանքի թերադրանք: Վ, սեր ոորեն կապվում հասարակական ուժերի շահերի ու նաշակի հետ Գրականության պատմությունը տալիս է հետաքրքրական փառաներ գրական ոճերի ձեռվարման և ընթացքի մարդին Հայուսաւանի մեջ 70-ական թվականներին իշխազ ու էր ռեալիզմը: Առաջարձով վրա էին Պ. Սունգույանը, Հ. Պարոնյանը, Դ. Աղայանը և Պ. Պողոսյանը:

որոնց երկերը մեծ ազդեցություն էին թողնում պրական մտածովության վրա: Թվում էր զարաշրջանի ան արգելու պրականը և ամեն ինչ պետք է զնա նոր մեթոդի համար: Թարց կյանքի պարզ մանները պողություններ են մտցնում: Քաղաքական հանգամանքների մնացած առաջ արդիությունները մոտենում են ուսմանտիկական անդրամանքներին, որովհետեւ ծաղկությունը ական էր ապրող գաղթավայր, գարշալում էր պողություն համար, ազգային-բազմաբանական անձնելու թափթին գրանցած է կենապահանական գնաճը հասարակական և պրական կրանքում: ԴՅ-ական թվականների վերջին նրա առմանտիպմը ձեռք է բերում միթիստի ուժը Հետաքրքրամշակում, քաղաքական խնդիրների գաղփակության հետևանքով՝ ուսմանտիպմի հրգեւը մարտամ է և սեալիզմը շարունակում է իր բնական ուղին:

Ուսմանտիպմը առավել ցացուան գնի է առանձնում որն համանակ, երբ հասարակությունը մտնում է մեծ պայքարի բավը, երբ ամբողջ սրությամբ ներկայի մեջ գրվում է վաղվահարցը, սարցը, սկսվում է բառն պայքարը ատյան առջև մեթոդը, ինչպես սիրում էր ընդգծող, օրինակ, Թաֆֆին, ներկայի ուսմանտիպմի մեջ տեսնում է գալիքը, գրազը մարգարեմի պես կունամ և պատկերում է այն մարդկանց գործն ու երևույթները, որոնք ամբողջովին երկան են գարու միայն երկար ժամանակ, անգամ դարեր հետո:

20-րդ դարի գրական փառքը նույնպես հաստատում է այդ օրինաչափությունը: Մաքսիմ Գորկին գրում էր թանձր իրաւաչառական նովելներ՝ կյանքի առաւտքի նրի, Հասարակ մարգկանց ցագեների մասին, պատկերում ռնախակին մարգկանցից գոյացած հաստիքը Բայց ԴՅ-ականների երկրորդ կեսին և մասնավերապատճառ 1985 թ. հեղափոխական շրջանակ ուսմանտիկական բացառիկ գերելքով արտահայտվեցին բանաստեղծների, ըմբաւուների բարձրացող հեղափոխական առարկաների պատմությունները: Նա, այսուհետեւ, խարսցից հեղափոխական առմանտիպմի մեջ, օրինակ առլուզ պարզաբանական գրականության ներկայացուցիչներին, նկատելի աղեցության թագմերը նաև զնամնության պրական:

Մեզանում ևս հեղափոխական ռոմանտիզմի ոճին անցան Հ. Հակոբյանը և Շ. Կուրդինյանը, առաջավոր ռոմանտիզմին նկատելիորեն հարցին նաև Հ. Թումանյանը, Ա. Խաչակյանը, Վրթ. Փափազյանը, քանի որ նրանց ստեղծագործության մեջ ևս հատուկ ընդգծվեց դարի հարցերի հարցը՝ վաղվա, գալիքի, հեռանկարի հարցը:

Զարենցը «Դանթեական առասպելից» և մի շարք ուրիշ դրամատիկ բանաստեղծություններից անցնում է հեղափոխական ռոմանտիզմին: Օրերով և ժամանակով թելադրված այդ կարևոր անցումը բերում էր բարձրացող տարերքի հզոր ոգին և ցնցում էր մարդկանց, ժողովրդին, զարթնեցնում ոքնած կենդանի ուժերին: Ինչ խոսք, մեծ պայքարի և հեղաքեկումների շրջանում ռոմանտիկ գրողը ավելի շատ անելիք ուներ, էներգիա էր ստանում հասարակական ուժերի լարություն և էներգիա էր տալիս նույն այդ հասարակական ուժերին, ավելի ցայտուն և պաթոսով շիկացնում էր գլխավոր խնդիրը, գաղափարը և գալիքի տեսնչը: Այս շրջանում էլ Զարենցի ստեղծագործության մեջ ընդգծվում է վաղվա հարցը. բանարանում է մի նոր հեռու՝ Գալիքը: Այս գաղափարական ու ոճական փոխանցման իմաստը շատ դիպուկ է բնորոշված Զարենցի մի համեմատության մեջ.

Իմ հեռու, խուզ աշխարհից
Աչա ես, հին մի պոետ,
Տեսնում եմ հեռոները հիր,
Որպես մի նոր Ռոբերտ Շունեն:

Զարենցի հեղափոխական ռոմանտիզմը փշում էր շատ կապանքներ, ինչ-որ նոր էական բան էր տալիս հայ մտավորականության հոգեկոր մինուրությանը, թեև նրա պոետիայում դեռ ինչ-որ լափով շարունակվում էին թեմատիկ և ոճական հակասությունները:

Այս տեսակետոց բնորոշ է «Ողջակիզվող կրակը» ժողովածուն, որը հաւ բնարերգությանը բերում էր 10-ական թվականների հայ առաջավոր մտածողի հոգեկան անցումների գեղարվեստական պատմությունը. «Երիկոն», «Վերադարձ», «Առավոտ», — ահա շարքերի ենթավերնագրերը:

Նոր գիրքը լափազանց ուշագրավ երևույթ էր տասնամ-

յակի գրական մթնոլորտում, եթե կարելի է այսպես ասել, «Ողջակիզվող կրակը» հայ մտածող անհատի հոգեկան շարժման բազմաթել հյուսվածքն է, որի յուրաքանչյուր բաժին ունի հոգեբանական ու գաղափարական ուրույն շեշտ ու թանձրացում, իսկ ամբողջության մեջ՝ բազմազան տպավորությունների միջոցով արաւացոլում է հայ մարդու հոգեբանական զարգացումը: Քնարական հերոսը, շենթարկվելով որևէ սխեմայի և միակողմանի ճնշման, երևան է գալիս բազմապիսի ապրումներով, զավով, երազներով, թափիծով ու սիրով. բանաստեղծը ցույց է տալիս ահեղ անցքերի մըթնուրատում մղավանջ ապրած, ցավոտ երազներ տեսած հայ մարդու հոգեկան ուժերի կազմավորումը և լուսավորումը, յուրօրինակ զարձր զեպի կյանքը, զեպի լուսավոր առավոտները: Գեպի վառվող հրեեն ու զալիքը: Տեղի է ունենում հոգեբանական մի շատ ինքնատիպ երեսություն: Աշխարհից օտարացած, ցավի տարօրինակ լիցքերին սովոր մարդը կրկին դառնում է զեպի աշխարհի, կապվում կյանքի ակունեներին, արդեն սկսում են գործել երա բոլոր զզայարանները, տեսնագին աշխատում է միտքը, մեծացնելով հեռոսի հոգու դիմաշողական ուժը: Բազում երանգներով ու եկեղեներով, նոգեկան դրամատիկ անցումներով «Ողջակիզվող կրակը» քողնում է ներքին բարդ շարժման վրա մարմնավորված հնարական մեծ այսեմի տպավորություն:

«Երիկոնը» բաժնի մեջ իշխում է ճնշող մթնոլորտ: Այս բաժինը ամփոփում է անցած օրերի տանջող խոհերը: Սանոթ են ապրումները, մտորումները, խոհերը: — Նորից երկիր նաիրին, կյանքի մութ խորհուրդները, նորից կապույտ կարուտը.

Կապույտ կարուտ ոչինչ, մեզ ոչինչ լուսեց,
Սութ է խորհուրդը կյանքի ու անհուն ու մեծ
Սութ է խորհուրդը կյանքի, բայց կյանքի մթնում
Հազար հրդեմ կա հոգու ու հազար խնդում:
Ծակաց գիրքն առ գիրքն ու աշխարհը մի
ծակացաց ու գիրքն ու աշխարհը մի
ծրգ է հնեղ, հրաշունշ-հրաշունշ բամի...

«Կապույտ կարուտ» ասելով նա հասկանում էր հայրենիքի կարուտը, նաիրի երկրի կարուտը: Ժամանակը ոչինչ լուսեց հայ մարդուն, և կործանվեցին նրա կյանքի հիմերը: Բանա-

տեղը շարունակում է գրուցքը երկրին վիճակված բախտի մասին, մտնելով տիսուր խորհրդածությունների սրբություն Դարձյալ երազների կարծանամ, անհատական չափ, գարձյալ սերնդի հոգու պատմաթիւն՝ ամենաված երկրի նորագույն պատմությանը: Բայց ինչ-որ բռն նոր է Շնարաւական երգերում անտեսանելի կատարված է երանդների գոտիախոթիւն: Թվում է՝ «Ծիածանի» բարոն ցավին այստեղ գուրս է զալիս գրեացին ծեերից և օտար տարագներից, ընդունամ ավելի երկրացին, հայկական գոյներ: Արեւ՝ արնաշագախ, իրեկան, մահ, կանացի մարմինը՝ հրափթիթ վարդերի գագագ, Հոգու հրդեհ՝ շրջափակված խավարով, մշաշով, մահով, վհատ հոգու կարսու՝ հանգերձյալ աշխարհի համար, պատմաթիւննույն ճնշող, մռայլ ազգեցությունը բանաստեղծական երեւակայոթիւնն, սիմվոլների և ոճի վրա: Կարծեա ամեն ինչ նույն է, բայց «Ծիածանի» մշուշից հետո, այս զարգութ կա նաև մի ուրիշ բնական ներմուծում: Տխուր մինուզորտի մեջ նկատվում է ինչ-որ հոգեկան շարժում, տագնապ, անհանդրատություն: Գուցե զեռ ազատ, գուցե մեղմ լիցքերազ բանաստեղծը մասնելում է գալիքին, երկրի կրակներին, հոգավար լոյսերին: Արգեն նաև խռութ է բան ցույք ափանքի, հոգեկան մինչեղորդի մասին Ապրում է ներքին ինչ-որ անհանգություն գալիքի համար, որը և կենառկան ուժ է առ լիս բանաստեղծությանը.

Օրերը, որ գնացին, չեն դառնա հիմա,
Օրերը մեզ բերեցին մենություն ու մահ:
Տիրությաններ, որ գյաներում այս՝ անոն շոնին.
— ՄՌ՝ իք տափառապ հոգուս, ու կարուո՞ հին:
Դաշտերի մեջ երկրային, հեռավոր ու մոտ,
Մեզ չեր ծպուու ոչ մի լույս ու կրակ ազոտ:
Զգիտեիք, սիրո իմ, որ խավարում հեաի:
Գետը է երկրի կրակով քա հեռուն գառմի:
Բռեկզի է, սիրո իմ, տես, քա հեռուն հիմա—
Սուրզդ խավար է, սահայն, ու մշուշ ու մահ...

Այս բանաստեղծությունը, գրված 1918 թ. փետրվարին կամ մարտին, շատ սրազ արտացոլում է բանաստեղծի հոգեկան դժվար վերելքը... գրեթե ազարիչ նրան հոգու մեջ աշխարհի շարժաների ազգեցության ներքա անգի մեջ:

նում գոփոխություններ, սաղմեավորվում են գոլիքի տրամադրությունները, մինչև իսկ գեղագիտական սկզբունքները Համենայն դեպօ, նոր էր այս միաբնիք, թե բանաստեղծի հեռուն պիտի է վառովի երերի կրակութ, որ մշուշի ու խավարի մեջ, արնաւաճենայինիվ, բանաստեղծի որտի մեջ արդեն բրընկիլի է հեռանեների երակը: Բայց կար ինչ-որ բնական հակառակություն բանաստեղծի հոգուս, ժայռաբեկնեների ինչ-որ ոժվար միասնություն: Աշխարհի կրակները հեռու հեռովից շերմություն էին առլիու բանատաղծին, իսկ հոգինի երկրում զետ անթափանց մշուշ էր Զարենցը վերցնում է այդ դրամատիկ վիճակի ժամրությունը: Եզ սակայն այդ ծայրարևեններն արդեն ակնառու են դարձնում հոգու շարժումը. բանաստեղծը հոգու ականջող արդեն լուսում էր հեղափոխական տարերքի հեռավորությունը:

Մահվան, կարուի և հեռուների մասին խոռոշ բանաստեղծը «Վերադարձի» մեջ ներբողում է երկրային կյանքն ու արեւը, ավելի տեսանելի դարձնելավ վերածնության վառվող լույսները: Բայց նաքը, հոգեկան անցաւմն ու խոհական վերելքը ակնառու երեսով են բանաստեղծություն «Առավոտ» շարքում: Մեծ վշտի երգիլը՝ համաշխարհային հեղափոխական շարժման ազգեցությամբ, սկսում է նվաճել բանաստեղծական մի նոր եղերք, ոզգային պոեզիան քաշում է համաշխարհային շարուների ոլորտը, հեղափոխության հետ կապերով ազգի հարատագիրը և մարդու գալիքը: Տեղի է բանենամ սաեղծաւության մի շատ բարդ տեղեր: Չառենցը իր նոր աշխարհն ստեղծելիս, հիմունքն անցնում է ծուլակների միշով, ձգտելով նաղբանաւել բանկագին կապանեների և նորույն անցքերի նեղումը: Արդեն առաջին քայլերի մեջ նա ստեղծում է հասարակության հեռանկարները, փորձում է հեղափոխությանը մոտենալ և համաշխարհային, և ազգային տեսանկյունից:

Հայ ժարովուրը և իր բանաստեղծը այդ նեղափոխաւրյունից ոչ միայն վեցցեսում են իտեղ բամբեր, այլև երան տարիս են իտեղ բամբեր: Պարենցը փակում է հայկական ողբերգության վերջին էջը և բացում նորագույն պոեզիայի առաջին էջը՝ ազդարարելով նոր գարաշրջանի ծնունդը: Վեհարադիք մեջ նա դեռ վերացական ծնով է խոսում իր անց-

ման մասին, բայց արդեն «Առավոտի» մեջ գեղարվեստական և գաղափարական անցումը դառնում է ակնառու և տպավորիլ: Թեև այստեղ գեռ կան ինչ-որ երանգներ «Ծիծածանից» և սիմվոլիստաներից, բայց դրանք արդեն ուրիշ գեր են խաղում բանաստեղծական հյուսվածքի մեջ: Բացի այդ, տեղի է ունենում սիմվոլիկ գույների ուրույն փոփոխություն: Կապույտը զիշում է կարմիր գույնին, գունատ, անմարմին աղջկա փոխարեն առաջ է մղվում ամազոնուհին, վհատ տրամադրության փոխարեն ընդգծվում է զորեղը: Հերոսական ներշշանքը խոր կնիք է զնում նաև պոետիկայի վրա, փոխվում են բանաստեղծության ոիթմը և էներգիան, ստանալով աշխույժ երանգներ: Նախորդներից թերեւս միայն «Աթիլան» է գրված այսպիսի բուռն կրով: Նոր սիմվոնները հարմարվում են ոռմանտիկական ոճին և ուրույն երանգներ տալիս Զարենցի պատկերային ու գունային համակարգին:

Կարմիր նժույգները թոշում են սրբնիաց,
Կարմիր նժույգները՝ բաշերը փրփուր,
Վառվում, բոցկտում են պայտերը նրանց,
Պայտերը սփռում են բոցկտութ ու հուր

Պատկերը սիմվոլիկ է, որոշ իմաստով՝ փոխարերական: Կարմիր նժույգները հեղափոխական ուժերն են, որ թոշում են սրբնիաց և ճեղքում գալիքը: Ընկալելով տենդուտ օրերի ոիթմը, Զարենցը, իրոք, տեսնում է զորեղն ու հերոսականը իրադարձությունների և հոգեբանության մեջ, մյուս կողմից բոլոր նյարդերով ընկալում է ականը՝ հասարակական զգացումների լարումները: Բանաստեղծական հրդեր և շարժումը գառնում են հեղափոխական վերելքի բնական աղղեցությունների: Բանաստեղծի անժամանակ կնճոռութած դեմքի վրա ծագալիում է ժափտը, բանաստեղծությունների մեջ վառվում է ջաճել կրակը, մի նոր երեւյթ հայ երգի մեջ, թեև երբեմն-երբեմն կնճիռները նորից են հավաքվում, նորից հնչում է ցավի ու կորսայան մեղեդին:

Այսպես է սկսվում նորագույն բանաստեղծությունը: Ամեն տեղ, ամենուր նա ջաճել շնչով խոսում է կապանքներից ու անցյալի ճնշումից ազատագրված իր հոգու մասին: Բայց ամենուր նա չի մոռանում իր անձնական վիշտը, նաիրին

վիշտը, հիշում է մորմոքով... Նա դարձյալ ունի մղկտացող կարոտ, անամոք մի ցավ, թեև ոգեշնչված է ամբոխների խելագար խանդով: Ո՞րն է գաղտնիքը.

Սրտիս մեջ մղկտում է կարոտը,
Սրտիս մեջ մորմոքով է մարմանդ.
— Աշխարհը հեկեկանք է, կարոտ է,
Սրտիս մեջ մորմոքով է մարմանդ:

Հեռու է տունը, թեավոր օրերի հետ հեռանում է երկրի պատկերը: Կրկին նա Հայաստանի հետ է:

Անբախտ եմ, ո՞ր եմ ու խեղճ,
Խնչպես իմ երկիրը, որ—
Կորե՛լ է աշխարհի մեջ,
Լու՛լ է՝ անտեր, անօր:

Զարենցը ժամանակի մյուս բանաստեղծներից շատ է տարբերվում: Նա գաղաքական-սոցիալական երկույթը, գաղափարները, պատմական անցքերը պատկերում է կյանքի լեզվով, բազմերանգ ալյումներով, ինչպես միշտ՝ խոր անկեղծությամբ: Նրա հերոսը երբեք չի դառնում ձայնափող: Դարի հոգսերով ու ցավերով ծանրաբեռնված այդ մարդը հայ ժողովրդի դրամայի կրողն է, որի գաղափարները ժագում են ազգի ճակատագրի ազգեցության ներքու: Նա ամբողջ հոգով զգում է հեղափոխության անհրաժեշտությունը, այրվում այդ հրճեհով, գնում է ժողովրդի հետ միասին, հուսելով նաև այդ անցման պատմությունը: Այստեղ է քանի անգամ բանաստեղծության հոգեբանական խորությունը և պատմականությունը: Ամբողջ գաղտնիքն այն է, որ պատմականութեն և հոգեբանութեն հասկանալի այդ դժվար անցման գեղարվեստական պատմությունը ընթերցողին բնավ չի շեղում կենսական նեռանկարներից: Հակառակը, դրամատիկ այս հյուսվածքը ներհնապես հաստատում է հեղափոխության անհրաժեշտությունը, ուրը, դժբախտաբար, դեռ հեռու էր Հայաստանից, ուր դեռ հոսում էին արցունել:

Նա մի գեպքում գրում էր չերմ հավատով, ոգեորությամբ, մյուս դեպքում՝ արնոտած սրտով: Այս հակասական վիճակի և հոգեկան երկատվածության խոր արտացոլումը մենք գրտնում ենք «Առավոտ» շարքի մի քանի երգերում, որոնք, ըստ

երևութին, գրվել են Բաշքադիկար պյուղում և Կարսում՝ 1918—19 թթ.: Նրանց մեջ զանազանվաւմ է մի ցնցող բանաստեղծություն, որը, կարելի է ասել, այդ օրերի Հայաստանի բուն պատկերն է.

Ինչպես երկիրս անսփռի, ինչպես երկիրս բախտազուրկ, —
Ինչպես երկիրս ազերակ ու արնաներկ: —
Միում է սփրոս հմամ որբ, միում է սփրոս բախտազուրկ,
Միում է սիրում՝ ավերակ ու արնաներկ...
Եզ արս երգերն իմ կարմիր, ա՞ն, այս երգերն իմ կարմիր,
Որ երգում է անսփռի սփրոս կարմուն—
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ա՞ն, այս երգերը իմ
Կարմիր—
Իմ ավերակ, իմ ո՞քք երկրում...»

Հազվագյուտ են ծնվում այսպիսի երկեր, հազվագյուտ է տեղի ունենում ժողովրդական հոգու և բանաստեղծի՝ այս արտասովոր ուժի մերձեցումը կամ նույնացումը: Շատ քիչ բանաստեղծների է տրված ժողովրդական ցավը ամբողջովին սեփականը, անձնականը դարձնելու ձիրքը, հոգեբանական ծանրությունը սրտի վրա վերցնելու ուժը: Այսաեղ է թաքնված քաղաքացիական պանզիալի գմչվարությունը: Բանաստեղծը իր հոգին համեմատում է իր երկրի սրտի հետո— իսկ երկիրը՝ արնաներկ, բախտազուրկ, իսկ երկիրը՝ ավերակ ու որբ:

Վերը է գտանում սրտի խորքամ օրերի փա՛յլը այս հրակ: —
Ախ, սի՞րո իմ, բո՞քք ու անսփռի, — երկի՞ր իմ՝ ո՞քք ու անուբանի...»

Ահա հոգու անսփռ պատկերը, ուր բեկվում է նաև վիրավար, կործանվող երկրի կյանքը: Խո՞ր թախիծ, անսփռի մորմոք, մխացող սիրտ: Բայց մի՞թե սա մի շեզում չէ հեղափոխական ներշնչանքից, հավատից ու գալիքից: Զէ որ նա մինչև իսկ կասկածում է կարմիր երգերի անելիքի շուրջ: Ի՞նչ կարող են նրանք տալ արդեն մեռնող երկրին: Բնական հարց է ծագում՝ ինչպէ՞ս է կարմիր օրերի մասին երգող պոետը այդպես դառնացած: Այս հարցին պատասխանելու համար պետք է փնտրել ծանր տրամադրության կենսական ակունքը, այսինքն՝ քրքրել նախապատմությունը:

Չարենցը հեղափոխական զինվոր էր: Մեծ իդեալներով

նա մտավ հեղափոխության մեջ, մասնակցեց քաղաքացիական կոլլեգերին և արտակարգ ոգերորությամբ վերադարձավ հայրենիք՝ կարս: Բայց կարսը չկար, գրեթե ոչնչացված էր: Թուրքերը կրկին մոռենում էին Արևելյան Հայաստանին: Այս պայմաններում բանաստեղծը ամբողությունը է ծանր ողբերգություն՝ մի կողմից հեղափոխության ալիքը տարածում է, մոտենամ է փրկության ժամը, մյուս կողմից հայրենի երկիրը հեռանում է, դառնում մշուշ, կարոտ, հայրենիքը հոգեվարքի մեջ է: Մրանք իրարամերծ զգացումներ չեն: Մրանք երկու հակադիր երևույթի արացովին են նույն բանաստեղծի երգերում:

Միանգամայն հասկանալի են դառնում և հոգեկան դրաման, և հեղափոխական ոգեռորությունը: Բայց անկեղծ և խոր ապրված մի զգացում է նաև գալիքին ուղղված ջերմագին կանչը.

Կրա՞կ կա սրտիս մեջ, կրա՞կ կա,
Հրդե՞ն է վազում է հրկեզ:
Գալիքը կուզեմ որ արա՞գ զա—
Անդարձ է կարուտը երդիք:
Կուզեմ, որ կյանքի մեջ դայթ այն
Երգերս վնասն ու հնչեն—
Կուզեմ, որ լսե, ախ, զալիքը
Երգերս այս վառ ու հնչեն...

Այս ծայրաբենները բնավ հիմք չեն տալիս Զարենցի մեջ տեսներու մաներբարժաւական շեղում կամ գաղափարական տնկազմակերպվածություն: Զարենցը անվերջ տենչում էր հեղափոխության գալստյան օրը, բայց հեղափոխությունը ուշանում էր: Արգեն հարցականի տակ էր զրված նաև Արեվելյան Հայաստանի գոյությունը: Այս երևույթը ինքնին թելազրում է մի ուրիշ եղանակում: Քաղաքական այս հակասական մրնուրտում, արյունոտ ու շփոր օւերին, միայն գաղափարական առողջ հայացքը և ստեղծագործ տիտանական ուժը կարող էին բանաստեղծությունը պահել գալիքի սահմանագծում, շարանակել և նոր շեշտերով բարձրացնել հեղափոխական երգը, մշուշի մշշից տեսնել իր երկրի վաղվական կարմիր օրը:

Չնայած այս բարդ ապրումներին ու դրամատիկ մթնո-

լորախն, ամդքակիզվող կրակում» առաջ է մղվում նորագույն թեման։ Զարենցը խոսում է խելազար ամբոխների մասին։ Նրա տոշորված Հոգին սպոնդի պես ներծծում է կենսահյութը, հեղափոխական տրամադրությունները, խելազար ամբոխների խանդր և առաջարկում է կրակի առասպելական դուստր Սոմային։ Նրա հայացքի առաջ բիշ-բիշ բացվում է մի նոր երկիր, սրտի մեջ ծփում է նոր կյանքի ալիքը։

Հողմի պես հնչեղ երգեր
Հնչում են սրտում իմ շինչ,
Տեսնում եմ—մի նո՞ր երկիր
Բացվում է իմ գեմ բիշ-բիշ...

Ի վերջո, այս ամբողջ սգնորության մեջ կա մի կիղա-
կետ՝ Հայաստանի և հեղափոխության առնչությունը։

Կարմիր երկիրս բո գեմ—մի կարմիր կանթեղ,
Նետի՞ր ժախտ վերջին իմ ակե՞ր երկրին։
Տուր վերերին նրա մառ, վերերին անդեղ
Կարմիր ժախտը բո սուրբ, բո՞ւրի իմ, Սո՞ւսա, կի՞ն...

Սա իսկապես և՝ աղերս է, և՝ ներբող, և՝ պայքարի կանչ, և՝ ողջակիզում։ Բանաստեղծի մտածողության մեջ ծայր է առնում մի ուշագրավ փոփոխություն։ Տառապանից անց-նելով պայխարին, մենակուրյունից, բեկված հոգիներից, դրամայից անցնելով ժողովրդի պայխարին, նաև հոգեբանական երբեանգներից, երբին ապրումներից և տիրուրյան մշուշից անցնում է ոելիեֆներին, էպիկական նկարագրություններին, բարձրացող ժողովրդի տրամադրություններին։ Պատկերները դառնում են շատ զորեղ, հզոր, զգացումները հասնում են հիպերբոլայի, ստանալով շլացուցիչ երանգներ։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՐԻՎՆԵՐԻ ԷՊԱՍԾ

(«Սոմա», «Եմբոխները խելազարված»)

Բազում դժվարությունների ու հակասությունների մեջ՝ հաղթահարելով հին կապանքները, նաև առաջ տարավ պոեզիան նոր ուղիներով, հետեւելով համառուսական կյանքի բնիցքին, մթնոլորտի մեջ զգալով նաև հայ կյանքին սպաս-

վող փոփոխությունները։ Առանձնապես «Սոմա» և «Եմբոխները խելազարված» պոեմներում վառ դրսեորվեց հեղափոխական սոմանտիզմը, որը թերևս հարմար կլինիք անվանել նաև հերոսական ոռմանտիզմ։ Նա բերում է մի շարք նորություններ։ Զափազանց էական էր հերոսի ընտրությունը։ Զարենցի պոհմների գլխավոր հերոսը այժմ արդեն ոչ թե անհատն է կամ անհատների գումարը, այլ ժողովուրդը որպես հավաքական ամբողջություն։ Բաֆու վիպահան հերոսը չէր կարող ունենալ ընդհանրացնող հավաքականությունը։ Մեր «Հին» ոռմանտիզմները երազում էին բացառիկ, հերոսական անհատների միջոցով արթնացնել նիրհող ժողովրդին։

Ժողովուրդը, որպես հավաքական հերոս, երևան է գալիս Հատկապես 20-րդ դարի սկզբին, հեղափոխական ոռմանտիզմների ստեղծագործության մեջ։ Զարենցը ևս ոռմանտիզմական ոճի վերելքի շրջանում ամենից առաջ նկատում է պատմության բեմում ժողովրդի զերի բարձրացումը, հեղափոխական մեծ տարբերքի հեղաշրջող ուժը։ Ժողովրդի տիտանական պայքարը հին աշխարհի ղեմ Զարենցի հայացքի առաջ բացում է ուժի և հերոսականության գեղեցկությունը, որը ստեղծագործական բացառիկ լիցը է տալիս պոեզիային։ Ժողովրդի կերպարի ստեղծման ճանապարհին Զարենցը յուրովի հայտնագործում է նաև ազատության նվաճման հավերժական գեղեցկությունը և հոգեկան անսովոր վերելքը։

Ցիզիկական ու հոգեկան այս թոփշը ընդգծում է հեղափոխական անցքերի էպիկական բնույթը և ժողովրդի հերոսականությունը։ Նրա պոեմները արտաքուստ ունեն թեթև ուրգագծված սյուժենային կատացվածք, բայց ներքնապես ուժի, գեղեցկության ընկալմամբ, էմոցիաների լարվածությամբ ստեղծում են հերոսականության մթնոլորտ, որը էպիկական գորություն է հաղորդում ժողովրդի կերպարին։

Ամենուր նա ընդգծել է հավաքական հերոսի հուզական վերելքը, բարձրացող ժողովրդի զորությունն ու տիտանական ուժի կամ արտասովոր էներգիան էական փոփոխություններ է մտցնում նաև գեղարվեստական ձևի ու ոճի մեջ, առաջ մղում ավանդականից շեղվելու անհրաժեշտությունը։ Ի՞նչ խոսք, այդ նոր հերոսի և համաշխարհային երկույթի մասին

անհեար էր այլևս գրել «Անուշի» կամ, ասենք, «Դանթեական առասպելի» ոճով:

20-ական թվականներին շատ քննադատներ ջուր էին ծեծում մի հարցի շուրջ: Նրանք կարծում էին, որ հեղափոխական պոեմներում Զարենցը երես է որպես հեղափոխական գրող, բայց ոչ բնագլ պրոլետարական: Նրան համարում էին մանրբուժուական մի անհատ, որը ներքնապես չի ընկալել մարքսիզմը, և իր նրա երկերը սոսկ անարխիայի տարերացին արձագանքներ են: Հենց վերնագիրը՝ «Ամբոխները խելագարված», ըստ Վանանդեցու և մյուս ձախ քննադատների ցույց է տալիս, որ Զարենցը ճիշտ չի հասկանում հեղափոխական ուժերի էությունը և դասակարգային պայքարի բնույթը: Առևնիսկ 1928 թ. պրոլետարովների ասոցիացիայի «Արտրիներու», մի տեսակ զիջում անելով Զարենցին, հեղափոխական ոգին գտան միայն «Երկիր Նախրի» վեպում: Ասել կուզի՝ նրանք պրոլետարական գրականությունից գուրս էին համարում 1918—1924 թթ. գրած հեղափոխական պոեմները: Ասսպես չին գրում, սակայն պատմությունը իր գործն էր անում: Զարենցը ճանապարհ էր բացում սոցիալիստական շրաեանության համար, նրա պոեմները որոշակի գրոշմ էին թողնում հասարակական հոգերանության վրա:

Զարենցին գգվար են հասկացել կամ աշխատել են հասկանալ: Նա առաջինն է երգել Հոկտեմբերյան հեղափոխությունը, քաղաքացիական կոհվները, ստեղծել մեծ պայքարի էպոսը: Անինչ նրան մեղադրում էին անհատապաշտության ու անախիզմի մեջ: Սա պատմությանը հայտնի դրամատիկ երեսներից մեկն էր, երբ մարդուն կոպիտ ուժով հակադրում էին իր գայլական գաղափարներին, ձգտելով նրան դուրս հանել իր ձեռքով աճեցրած երգերի պարտեզից: Իրականում նման կարգի մարդիկ հաճախ չէին հասկանում Զարենցի մեթոդն ու ոճը, ուրույն ձեզ: Աղմկարարներից շատերը մինչև իսկ որևէ պատկերացում չունեին արվեստի ու գրականության յուրահատկությունների մասին, նրանք նախկինում ձախողված բանաստեղծներ էին, որոնք ստանձնել էին գրական դատավորի «մատչելի» դերը:

«Ամբոխները խելագարված» վերնագրով Զարենցը փորձում է ցույց տալ ժողովրդի ոգևորության շափը և անում տալ

այդ երևույթին: Ամբոխ ասելով նա հասկացել է ժողովրդական այն տարերքը, որը լուսնված թափով «խելազարված» գրոհում է զեպի երկինք, նոր սկիզբ վելով մարդկային կյանքի մեջ: Այս բնորոշական էր փոխաբերական ձեկ մեջ գերազանցապես ունեին հոգերանական իմաստ: Մ. Գորկին ևս խոսում է խենթ խիզախների մասին, որոնք անձնազո՞ւ զնում են նվաճելու ազատությունը: Մեր էպոսի մեջ ժողովաւրդն իր սիրած հերոսներին անվանում է ծուռ, խենթ: Դեմիրճյանը ճիշտ է նկատել: Այդ ժոերը այն հերոսներն են, որոնք պայքարի են զնում, փոխելով կյանքի ավանդական ձեռ, դաւս են գալիս միջակության շրջանից: Սուրխաթյանը, մի փոքր վեհերոտ, ժամանակին բանավիճել է «նապսառվշիների», այսինքն՝ «Գրական գիրքերի» բնագատների՝ Գ. Վանանդեցու, Ն. Գրաբալյանի հետ, բացատրելով Զարենցի խոսքերի բուն իմաստը: «Տարակուսանքի պատճառ է զարձել, և իրավագիորեն, պոեմի վերնագիրը՝ «Ամբոխները խելագարված»: Խարկե, ոչ միամիտ և ոչ էլ շարամիտ պետք է լինել կարծելու համար, թե բանաստեղծը «ամբոխներ» հասկացությանը գործ է ածել Կերև մտքով: Դա միևնույն է, թե Հ. Հակոբյանը իր «Ամբոխն իմ աշխարհը» գրելիս նկատի է ունեցել փողոցի ամբոխը և նրան իր իդեալը համարել: Բառացի շպետք է հասկանալ: Զարենցի «Ամբոխները» գործածված է մասնաւոր իսկ «խելագարված» բառը՝ բարձր ոգևորության իմաստով»¹:

Ձախ քննադատները ձգտում էին Զարենցի պոեմների մեջ տեսնել անարխիա, մանրբուժուական պաթոս: Վանանդեցին, օրինակ, կարծում էր, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը ոչ թե կարգավորել է Զարենցի միտքը, այլ միայն ցնցել: Այս կոպիտ մեկնաբանության դիմ կրկին ելնում է Հ. Սուրխաթյանը: Նա գրական ու հասարակական նման բացարությունը համարում է «նախնական մարդու միամտւթյուն»:

Հակառակ այս ամենին, Զարենցի պոեմները ակոսում էին հայ գրական խոպանը, մեծ ազդեցություն թողնելով ընթերցողի և գրական սերնդի վրա՝ հենց հեղափոխական բավան-

1. Հ. Սուրխաթյան, Գրականության հարցեր, 1970 թ., էջ 193.

դակությամբ և արվեստի նորարական բնույթով։ Զարենցը արվեստի մեջ այդ մեծ խենքերից մեկն էր, այն ծուռը, որը փոխում է մտածողության և պատկերավորման ընթացքը, սասանում ավանդականի շենքն ու սահմանները, բանաստեղծության մեջ դուռ բացելով նորի, արտասովորի ու արտակարգի առջև։ Նա էլ, ինչպես հնագույն գուսանները և ինքը՝ ժողովուրդը, արտակարգ զորեղ, շափականց մեծացրած, տիտանական ուժ և ձև է տվել իր հերոսին, նա էլ իր նկարագրած երևույթին նայել է միլիոն գլխանի տարերքի հայացքով, դրել է միաժամանակ հնաց այդ խենթացած միլիոնավոր տարերքի համար։ Այսպես թե այնպես, գեղարվեստական խոշոր տաղանդներից յուրաքանչյուրը իր դարին համալստասիսան, իր դարի տարազով կատարում է իր մեծագույն պարարք՝ առաջ մղելով կյանքի պատկերման եղանակն ու հնարավորությունները։ Եվ շափականց բնորոշ է, որ ծուռի ու խենքերի արտասովոր պատմություններն ու հյուսվածքները ներքնապես զարմանալիորեն մոտենում են տարերային ուժերի պայքարի էությանը։ Զարենցի մոտ այդ խենթուրյունը հասնում է մի անսովոր ընդգրկման, բանի որ ընկճված ժողովրդի բանաստեղծի հոգում խոր արմատներ էր ձգել ուժի և ընդգրման պաշտամունքը։

Նա ոչ բարդ սյուժետային գծի միջոցով մարմնավորում է հեռափոխական ուժերի պայքարը։ Առաջին անգամ պատմաթյան ասպարեզից թվում է արդեն հեռացող ժողովրդի բանաստեղծի խոսքը ստանում է համամարդկային հնչեղություն, շնելի բառնում աշխարհին։ Տառապանքի միջով կրտորմ և ասցնում է հոգեկան ու հուզական մի նոր սրբնթաց հետահերթ զեպի մարդկության ծով ողերությունը։ Մենության դատապարտված աղքի բանաստեղծը 1918 թ. խոսում էր հեռու-մոտիկ աշխարհների հետ, վկայում և հաստատում էր իր ժողովրդի հոգու մեջ ծայր առնող փոփոխությունը։

Հեռո՞ւ, մոտիկ ընկերներին, — աշխարհներին, արևներին, —
Հրանման հոգիներին, —
Բոլո՞ր նրանց, ոմ որ հոգին վառվում է վառ, —
Բոլո՞ր նրանց հոգիներին արևակառ, —
Կյանքին, մահին այս ամենի աղջամուղցում՝
Ռզշակիզող հոգիներին — ողջո՞ւն, ողջո՞ւն

Այս տողերը, ամեն իմաստով 20-րդ դարի հայ հոգերանության մեջ ունեցել են բացասիկ նշանակություն, եղել են հոգերանական ու գաղափարական սկիզբ, յուրօրինակ մի շըրշաղարձ՝ զեպի մեծ աշխարհն ու արվեստը։ Բանաստեղծը երկար ու ծիգ հուսալքությունից հետո իր ձայնը միացնում է աշխարհի ձայնին, մարդկանց ու արևներին նետում խոսքը։ Հայ ողին, հաղթահարելով ճնշումը, արյունն ու մղձավանշը, մտնում էր համաշխարհային ոլորտը։ Ի՞նչ խոսք, այս բացառիկ վերելքը գալիս էր իրականության լիցքերից։ Անսովոր ովկորության մյուս ակունքն էլ պետք է տեսնել այն բանի մեջ, որ կյանքը ու միայն լիցքեր է տալիս երգին, այլ նաև զգում է նոր երգի կարիքը, օգնությունը։ Արդեն անցնում էր հոգերանական այն կաշկանդվածությունը, որն առաջացել էր բանաստեղծի մենակությունից և բանաստեղծության նկատմամբ միջավայրի դրսնորած խլությունից։

Եվ դարձյալ ասենք, ժողովրդի թեման նորություն չէր Զարենցի ստեղծագործության մեջ։ Ժողովրդը իր պատմական բախտով ու երազներով կենտրոնական տեղ էր գրավում «Կապուտաշյա հայրենիք», «Դանթեական առասպեկտ», «Վահագն», «Աղգային երազ» պոեմների և մի շարք բանաստեղծությունների մեջ։ Զարենցն էլ ամենայն իրավունքով կարող էր ասել, որ իր գլխավոր թեման, որին նվիրել է իր ողջ կյանքը, Հայաստանի թեման է, ինչպես այդ իրավունքն ուներ ասելու Ալեքսանդր Բլոկը Ռուսաստանի մասին։

Այո՛, չի կարելի ասել, թե մինչև հեղափոխության թեմայի նվաճումը հայ բանաստեղծը երգում էր նեղ շրջանակների մեջ։ Ինչպես տեսանք «Դանթեական առասպեկտում», ժողովրդի ողբերգությունը նրան տանում է զեպի մեծ հարցերի ոլորտը, գուրս բերում մարդասիրության մայրուղին, լարում ընդգեմ արյունոտ պատերազմների։ Բայց Զարենցն առաջ է գնում։ Նոր երկերի մեջ տեղի է ունենում որակական փոփոխություն, բանի որ պատմության քառուղիներում փոխվել էին նաև հերոսի անելիքը, հոգերանությունը։ Նա հոգեկան վերելքի տեսանկյունից է դիտում հերոսին և երգում աշխարհաշինության երգը։ Ողբերգությունից և դրամայից հետո, հայ պոեզիայի մեջ ընդգծվում է հերոսական ոնք։ Զարենցը դառնում է հավաքական հոգերանության երգիլը, հատկա-

պես ընդգծելով իրադարձությունների էպիկական հատկանիշները:

Նորից անհրաժեշտ է նշել, որ հերոսականությունը, հաւաքառական հերոսի հեղափոխական տժերի կերպատվումը նույնական նորամիտության շնչին հայ հեղափոխական պոեզիայունքն Պարտականության պարունարիստափերին երգիչների՝ Ը. Կուրդինանի և Հ. Հակոբյանի մի շարք տժերու ու արաւուհայտիչ երիկառու նկատելի էին ուզ հասկանիշները: Խրանք արտացոլել են ուզ վերելքը, լարումը, պարզաբն թափն ու գեղեցկությունը («Բանվարիներ», «Աստար քո խաչը», «Մեռան՝ շիրան», «Հեղափոխության» և այլն): Դա նշանակարից երեսը էր Բայց հետո, արդեն Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքաւ ցիտական կրկիների շրջանում, ազգային խնդրի ու հեղափոխության մեծ աշերսների մթնոլորտում, նրանք նկատեինքուն ետ մնացին: Խոսքը վերաբերում է ոչ թե համոզումքներին, այլ պատճեռապահան մեծ կոնֆինենտի թափի, հաւաքական մեծ էներգիայի և Հոգերանական հարատաթյան բանառական բնկարմանը: Պայմանական պրականության երախառվորների դրական ձիրը այնու շատեր արտասանվոր երեսըների ընկազման առաջանակությունը, ընկալման ուժը: Սոցիալական-քաղաքական բարդ անցումների, ազգային կյանքի ու հեղափոխության աղերաների էպիկական տօքը և հոգերանական հարատաթյանը ունեմք էր ըստ արտանվաքի մարմանափելու միացն Ե. Գարենցի առեղջուագործական հանճարը: Այս առում ոչ նաև առաջ է անցնում ոչ միայն նախարարներից, այլ պրավունք է նաև մի ուրախ տեղ համաշխարհային հեղափոխական պոեզիայի մեջ:

* * *

Բայց չ «Ամբոխները խոհապարփած» պահմի սրուծեն Շմերլիները հարձակվում են քաղաքի մաստուցներում գրանցող կայտարանի վրա և վեշիրային պրոնից հետո, լուսաբացի գրավում: Այս է «ուղղութ հայաբանն էլ սիմվոլիկ մի անուն է, զայ հին աշխարհն է, որի վրա պրաւում են ամբոխները Զարենցը այս պարզ հյուսվածքի միջոցով արտահայտում է օրերի բորբոքու կիրքը և ժողովրդական ովկուու:

Թյունք: Այս երեսույթը ընդգծելու նպատակով նա առնդում է Հոգոր պատկերներ, նկարագրությունների մեջ արտացոլում թշնամական տժերի ընդհարման զորությունը և վ զարձագ այստեղ ծագում է աղբացինի և համամարգկայինի խնդիրը, զարձագ առաջ են մզվում հագերանական և գնազիտական նոր հասկանիշները:

«Ամբոխների» և «Ամբոխյան նորությը Փաղված է ոռուական հեղափոխական անցքերից, մասնավորապես քաղաքացիական կոիզմներից: Ի՞նչ աղբացին բան կար այդ երկերում, ի՞նչ որ Հայաստանը գեղ հետու էր այդ անցքերից, գեղ ուրիշ ցավերի մեջ էր գանգոսն Արգեսսի մեջ կարևոր է ոչ միայն նուաթը, այլև հեղինակային վերաբերմումքը գեպի այդ նյութը, այսինքն՝ անհաստական այն ապրումները, խոհերը, որոնց վրա անխուսափելի հետք է թողնում աղբային խառնքվածքը: Զուա ոռուական հեղափոխական կյանքից զերցրած նյութն ու բախումք գեղարվեստական հյուսվածքի մեջ ստանում են անտեսանելի հայկական շեշտեր, մցքեր, հոգերանական բնույթի բազագիշներ, տեղի են ոնենում աղբային խառնվածքի փոխանցումներ: Խոսքը վերաբերում է լաբան աստիճանին, ուժի ներբողին, եղբայրության և համաշխարհային աղերսների ջերմագին ընկալմանը կամ, ինպես ապիուպումներում է նա անգերզ ընդգծում, «հեղափոխական երգի խելագար խանդին»: Այս ամենի մեջ կարելի է տեսնել անծայր տառապանքների մեջ գտնվող հայ ժագովրդի տենդագին երազների և լարված որոնումների շեշտը, մրատասովոր ուժի գտումը՝ ղեպի եղբայրությունը, համաշխարհային կյանք մտնելու բնական տենչը, հավասար ապրելու, ժողովուրդների ընտանիք վերադառնալու զորացած կիրքը: Բանաստեղծի նոգին այն կենտրոնն է, ուր անտեսանելի հավաքված ու բորբոքվում, սահնձագործական եղենի են վերածվում աղգային երազը, կամքը, տեսանելի ու անտեսանելի տենչերը, հաղաքական ու հոգեկան լիցելերը:

Այս իմաստով, ահա, հեղափոխական առաջին պոեմների մեջ չի կարելի անտեսել նուե աղբայինը, այսինքն՝ հայկական բաժննը: Պրանց մեջ բարտախում է հայ բանառուեղի սիրոց, երեսմ հացկառն հայոցը, պրոնք ուղղված էին զեպի հայ ընթերցողը Զարենցը ձգտում էր արթնացնել Հայ մարդու

ւպին, իր պոեմներով արյուն էր ներարկում արհաքամուշը՝ ընկրծված հայ հասարակության երակները, որ մի թեթև գլխապտույթից հետո արդեն զգում էր կենսական ազդակների նշանակությունը իր օրերի ու գալիքի համար:

Մի ուրիշ նորարարական հատկանիշով էլ պոեմները ներքնապես կապվում են հայկական արվեստի ուղիների հետ։ Զարենցը այս նոր նյութի մշակման ճանապարհին զարգացնում է հայ քնարական պոեմի ավանդները, մեծացնելով նրա ներքին։ Հնարավորությունը և առաջ մղելով ձեր։ Նա ստեղծում է պոեմներ, որոնք ունեն ուրույն ձեւ, առաջ են մղվում հույզերի խաղաղ և սրբնթաց վիճակների համադրությամբ, որի միշոցով, ի վերջո, գնալով հարստանում են և զրանում։ Սա շատ կարևոր հատկանիշ է մեր պոեմի պատմության մեջ։ Հիշենք այդ պոեմի գլուխգործոցներից մեկը՝ «Աերու Լալա Մահարին»։ Բանաստեղծը հերոսի ապրումների զարգացման միշոցով ստեղծել է ուրույն կառուցվածք և արտացոլել իր ժամանակի հոգեբանությունը։ Նկարագրությունների, հույզերի ու խոհերի զարգացումը և զուգործումը դարձել են պոեմի գործողության առաջմղիլ ուժը։

Զարենցը ևս արծարձում է իր խոհերը հասարակական կյանքի մասին և արդեն բարձր լարումով տալիս նոր ուժերի հերոսական պատկերը։

Արկի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝
Այդ հին դաշտում կռվում կին ամբոխները խելագարված,
Քաղաքներից ու գյուղերից, ստեղներից հնու ու մու՛
եկւ, իրն նրանք նորից՝ հուսավառված ու կրակու։

Հսկայական շափով մեծանում են անհատական կրքի սահմանները, շայն տեղ է բացվում համաժողովրդական հույզերի ու հավաքական հերոսիթապրումների համար։ Այսպես գոյաւթ հույզերը հարստությունը գալիս է ժողովրդական տուրերքը հերոսարհից։ Առաջ է մղվում էպիկական ոճը, քանի որ կերպավորվում է տարերքը, ամբոխը, ժողովրդորությունը։ Կառուցվածքով, մատուցման եղանակով, ժանրային ձևով քնարական պոեմը ստանում է էպիկական բովանդակություն և ոճ։ Բանաստեղծական անհատականությունը այս հյուս-

լվածքում նկատելիորեն իր տեղը զիշում է հավաքանության հարուսին, ուղղ երևում է շատ ամբողջական ու լիածիր։

Ով բարձարից էր հեռացել՝ նա թողել էր մշուշը ծեր, — Մշուշը, որ կյանքի վրա մխաչազսի ամպ էր դարձել, Ով եկել էր գյուղից հեռու՝ նա թողել էր հողը խոնավ, Որի վրա կյանքը հու ո՞չ մի սովոր հասկ չծնավ։ Ով եկել էր ստեղներից, նա թողել էր անծայրածիր Լայնությունը հորդոսի, որ իր համար բանս էր դարձել, Ով բաղարից էր հեռավոր, ուր մառախուղ էր անորոշ՝ նա բերել էր թոքախտավոր սիրաց որպես կարմիր դորշ՝ Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր մութք գյուղի՝ թերել էր իր մէկաններում բեղմնավորված ուժը հողի, Ով եկել էր ստեղներից, ուր ապրում էր որպես գերի՝ թերել էր իր լուրթ աշքերում լայնությունը ստեղների...»

Նման պատկերների և համեմատությունների միջոցով նա հասնում է ժողովրդական ցավի ու զորության ամբողջացնան։ Կերպարի ստեղծման համար տարերայններն բանաստեղծը դիմում է նաև ժողովրդական պոեզիայի կերպավորման ձևերին, մասնավորապես՝ Հիպերբոլաներին։ Հիպերբոլաների օգնությամբ նա թափանցում է ամբոխների, այսինքն հեղափոխական Ռուսաստանի պայքարի տարերքը։ Հիպերբոլաներն են գալիս ամենուր՝ նկարագրություններում, համեմատություններում, պատկերներում, բնանկարներում և ամբոխների բնութագրումներում, իր հետ բերելով ձևի և իմաստի թարմություն։ Այդ լափազանցությունները ընթերցողին մոտեցնում են մեծ շարժման բուն իմաստին, հոգեբանական խորքին և պատմական արժեքին։ Նույն օրինաշափությանն են ենթարկվում նաև բանաստեղծական մյուս տարրերն ու միջոցները՝ մարդկանց և բնությանը նվիրված բոլոր հատվածներում։ Ահա, օրինակ, սկզբնական բնանկարը, որը հիպերբոլիկ համեմատությունների ու պատկերների մի շարք է, ուր մայրամուտի երանգների միշոցով գունեղ մթոլորտ է ստեղծվում ամբոխների կերպավորման համար։

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն։
Արկը բորք՝ մայր էր մտնում արևմուտքում։
Դաշտի վրա փողել էր մուժ արյունամած՝
Թույն էր կարծեն՝ բորք արկի սրտից քամած։
Արկը թեժ՝ մայր էր մտնում արևմուտքում։

Ու արյուն էր դաշտի վրա, թո՛ւյն էր թքում:
Հորեգոնառ վառել էր մի կարմիր թուրա—
Ու արնավա փայլ էր փռում դաշտի վրա:
Ու արտերը, ալեծածան, վասնել էին
Արեգակի կարմիր փայլով իրիկնային:—
Դաշտը, ահծոյր ու անսահման, լայնատարած՝
Հրակարմիր տարածվել էր նրանց առաջ:—
Սով էր կարծեն, որ սիրզը ու առհման շանի—
Նով էր կարծեն՝ մշուշի մեջ իրիկնամեն:

Գույները թանձրանում են: Հետո կարմիրը տեղի է տալիս,
նկարագրությունների մեջ ընդգծվում են իրիկնային մշուշն
ու գիշերային խավարը: Խսկեգույնը մարու է երկնահուպ
գմբեթների խալերի վրա, կորչում են քաղաքի երանգները:
Թանձրացող մշուշի մեջ, խավարի մեջ ընդգծվում են հին
աշխարհը խորհրդանշազ հազարամյա քաղաքը և այն հսկող
կայարանը: Կրկին առաջ է մզվում փոխաբերական համեմա-
տությունը.

Սֆինքսի պես հսկայական, շեկ ծծերը գրած հողին՝
Նա կորել էր արեակամ ամբոխների կարմիր ուղին:—
Ու կայարանը հազմանդամ, իրիկնային կարմիր մուժում,
Հաղթ նստել էր նրա առաջ, սրակս նրան հսկող մի շան:

Խավարի մեջ խտանում է գարանակալ սւեք. մութ գաշ-
տում նստել է անաշք, անլայս խորհրդավագը կասկածը Բայց
խավարի մեջ զորանում են նաև խելագար ամբոխների տառե-
լությունը, սերը, սպասումը: Տարբեր երեւոյթների և զգա-
ցումների հակագրությունից ծնվում են բանաստեղծաւթյան
ուժանայիկական ճափրը, խելագար ամբոխների սգու և կամքի,
ներքին էներգիայի գեղարվեստական բնութագիրը, ժողովր-
դական տարերքի գրեթե տիրտանական ընդգրկումը: Նա գրում
է հավերժական տողեր՝ մարգիության համաշխարհային ըն-
թացքի առջև բացվող անժայքածիր հորիզոնների, երկրային
ու երկնային ուղիների, ծաղկուն երազների մասին.

Խավար է մեծ սիրութ նեցա, բայց խավարում անժայքածիր—
Երկինքներ կամ հապուտաշյա, հորիզոններ՝ անծաշը, անծիր:
Ու աշքերում նրանց հապուտ, առ իշել է պիշեր մութ—
Հազար բողոք կա կրակուտ, ու արշալույս, ու առավոտ
նրանց ձգված մկաններում ո՞ւժն է նստել խռնավ հողի:—

Եթե ուզեն՝ արձներին նոր տեմպ կտան ու նոր ուղի...
Եթե ուզեն՝ արեգակներ՝ կը պատեն երկինքն ի վեր.
Եթե ուզեն՝ վար կը երեն երկինքներից արեգակներ...
Եթե ուզեն՝ կամսով արի ու աշխարհի հրով վառված...
Ինչե՛ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...

Զգացումների անընդհատ վերելքի, այսինքն ներքին
շարժման միջոցով նա հասնում է ժամանակի էությանը, իրը և
մտածող, բայց ավելի շատ իրուն զգացող մի անհատ, մի
բանաստեղծ, որը ներքին ուժ ունի քայլելու տարերքի, բա-
ղաքական ու բարոյական հողմերի հետ: Դարը և բանաստեղ-
ծը մոտենում են իրար, ծովզում, թվում է, վերանում են մո-
ծը մոտենում են իրար, ծովզում, թվում է, վերանում են մո-
տիկ անցյալի հակասությունները, օտարացումները, քանի որ
պատմության ընթացքը բնական ճանապարհի վրա է դնում
ժողովուրդներին, հույսեր վառելով նաև հայ ժողովրդի սր-
տում:

Դարի ու բանաստեղծի ներքին մերձեցման մասին մի գե-
ղցիկ հյուսվածք էր նաև «Սոմա» պոեմը, գրված կրկին պա-
ղցիկ հյուսվածք ու գաշտում, թերևս մի քիչ, մի քանի օր շուտ «Ամ-
բոխներից»: Այս բնարական պոեմի մեջ դեռևս նկատելի է
սիմվոլիստական պոեզիայից մնացած որոշ մշուշ, պատ-
կերներն ունեն նաև առասպելաբանական թեթև հանդերձա-
վորում, որոնք արդեն դառնում են գրական բաղադրիչներ՝
ընդգծելու ժամանակի շունչը, օրերի ոգին: Այս պոեմում ևս
զգացվում է հազարամյա մարդկության արյան շարժումը,
թարմացումը: Չաեւ ոգու կրակը բոցավառվում է բանաստեղ-
ծության տողերի մեջ, բերելով ողջակիզվող ամբոխների ողե-
վորությունը, աղատատենչ խելագար խանդը.

Ու սրբազն հա՛րս զու ազատության,
Դու—ազատություն,
Դու—վերցին ցնորք վերցի՛ն բաղցրության,
Դու—ոգու խնդում:

Մարդկությունը բռնել է մի հեքիաթային շուրջապար, տեղի
է ունեցել մի հրաշագործություն՝ փոխվել է զարք, փոխվել
են ժողովուրդները, փոխվել է տանջահար, զեռ երեկ խեղճա-
ցած մարդկային ոգին: Չարենցը իր բանաստեղծական ոգես-
տության ակունքը ածոնում է նորագույն մարզու հոգեկան վե-
րաբերյան ակունքը ածոնում է նորագույն մարզու հոգեկան վե-

բածննդի մեջ Սա նաև նոր գեղագիտության անկյունագրը էր։ Փոխվել է հազարամյա մարդու ոգին, էությունը, շարժման ձեր։ Նա հրաշալի է բնութագրում մարդու կերպարի այս փոփոխությունը, որը զորեղ հոսանք է տալիս բանաստեղծությանը։ Հրդեհ են վառել ամբոխները, և կրակապատաշխարհում ամեն մի մարդ դարձել է ցան։

Հրթի՛ո-հրթի՛ո զեր են թռչում
Կյանքերը մեր կարեվեր,
Ու վասվում է աղջամուզում
Ողջակիզող սիրաց մեր:

Ամբոխները զրահապատ
Ծափ են զարկում ու պարում;
Զա՞ն է դարձե՞ս ամեն մի մարդ
Կրակապատ աշխարհում:

Մարդն այրվում է բոցավառ կրակով, նրա ոգուն հրդեն
է նետում աշխարհը, լուսավորվում և գեղեցկանում է նրա
ներքին աշխարհը, բացվում են անհատի բացառիկ հնարա-
վորությունները և գեղեցկությունները՝ կապված ժողովրդ-
ական տարերքի հոգեկան, ֆիզիկական և սոցիալական վե-
րելքի հետ:

Այս իմաստով էլ, ահա, Զարենցը դառնում է դարա-
սկղթի համաշխարհային պոեզիայի խոշորագույն դեմքերից
մեկը, որը նոր խոսք է ասում կյանքի, մարդու, ժողովրդի
մասին, հայտնագործում նոր գեղեցկություններ կյանքում և
արվեստի մեջ: Ծիծ ձախ քննադատները թերագնահատել
են Զարենցի հեղափոխական երգի գաղափարական արժեքը
և մեծ հայտնագործությունների գրական-պատմական գերը,
ապա մի շարք քննադատներ էլ գտել են, որ հեղափոխական
երգի մեջ Զարենցը հավասարը չունեցող մեծություն է խոր-
հըդային գրականության մեջ: Թերևս կարելի է ճշտումներ
մտցնել այս տեսակետի մեջ: Հեղափոխական երգի մեջ նշա-
նակալից դեր են խաղացել Ա. Բլոկը, Վ. Մայակովսկին, Դ.
Բեդնին: Բայց նրանցից յուրաքանչյուրն այդ անսահման թե-
մայի մեջ ընտրել է ուրույն կողմեր, արել է ուրույն հայտնա-
գործություններ: Բլոկը «Տասներկուսը» պոեմում բացառիկ
տաղանդով պատկերում է հեղափոխական Պետրոգրադի բարդ

շարժումը, հակասական ընթացքը, որի միջով հաստատուն քայլում են տասներկու ծովայինները։ Պատին սեղմված քաղենին, բուրժուան, մանր Հոգիները դարանակալ անի- ծում են հեղափոխությունը, Հին աշխարհը պառավ, անտեր շան նման կծկում է նոր ուժի առջև, մեռած կյանքը շարժ- վում է, ծողովուրդը իր կենդանի կյանքով և մտածողու- թյամբ արդեն իշխում է անցքերի վրա։ Մայակովսկին մեծ ներբողում է հեղափոխության գեղեցկությունը, վե- հությունը, ստեղծում պայքարի քայլերգը՝ «Զախ մարշ», անհուն ատելությամբ բացելով քաղենու երեսը։ Դրանք մեծագույն նվաճումներ էին գեղարվեստական մտքի շարժ- ման մեջ։

Ե. Զարենցը ևս բերում է իր գյուղերը: Քեզին են սրա
պես զգացել հեղափոխական շոնչը և պաթուր, մասնավո-
րապես՝ Էպիկականությունը, բարձրացող ժողովրդի հոգե-
կան վերելքը: Ոչ մեզը այնքան խոր չի ընկալել ազգերի և հե-
ղափոխության հոգեբանական մերձեցումը, ազատության
կենսական ու ֆիզիկական արժեքը, տառապանքի և երշան-
կության բարդ փոխանցումները: Նա դառնում է հեղափոխա-
կան արվեստի իսկական վարպետներից և ուսուցիչներից մե-
կը:

Եթե «Ամբոխները...» գրված է շատ հստակ, ապա «Սուման» զանազանվում է պատկերավորման ուրույն համակարգով: Զարենցը վերնագիր է ընտրել հնդկական կրակի և արքեցման աստվածուհու՝ Սումայի անունը: Փոխաբերական իմաստը հասկանալի է. փողոցներում տեղի են ունենում մարտեր, բորբոքվում են կրքեր, և, բնակաբար, հնդկական աստվածուհին դառնում է սիմվոլ՝ նորը բնորոշելու համար: Զարենցը շատ կրօտ, աշխատյժ, կենդանի ոճով բերում է մարտերի, հրապարակների, փողոցի շարժման ոիթմը, երգում է նոր հրդեհը և խելագարված ամբոխներին, որոնք եկել են աշխարհը հրդեհելու:

Այս մտքերն ու սիմվոլները նոր էին մեր պոնզայի համար: Երկու պոեմն էլ տալիս են հին կյանքի կործանման պաթուսը: Այդ պատճառով քննադատները ասել են, որ Զարենցը տեսել է միայն հեղափոխության կործանող ընթացքը: Ճիշտ է, Զարենցը շատ խոր է տալիս կործանման կիր-

թը, բայց այս երկերում վառ երևում են նաև պայծառ հեռանկարները։ Ամբոխների մեջ նա բացառիկ խորությամբ է ներկայացնում ժողովրդի տիեզերական, ստեղծագործ ուժը, իսկ «Առման» արդեն հրդեհում է գալիքը։

Կյանքս կմարի՝ հին, լնշին մի կայծ
Վո սակի հրամ—
Բայց վառվի՛ պիտի սիրոս մոխրացած
Թո բոլո՞ր գալիք արշալույսներում։

Այսպես, դեռ 1918 թ. «Ռիջակիզվող կրակում» և պոեմներում նա հեղափոխությունը համարում է ոչ թե մի հզոր, տարերային, բայց անցողիկ իշաղածություն, այլ հավերժական ընթացք, մշտապես բացվող գեղեցկություն, որը նորից նոր պիտի բացվի գալիք բոլոր արշալույսներում։ Այդ գեղեցկությունը հավերժ պետք է ապրի, ու հավերժ պետք է վառվի հեղափոխության առաջին երգի կրակված սիրուր։

ԴԱԼԻՔԻ ԶԱՅՆՈՎ

(«Թաղիովոնեմներ»)

Արտաքուստ այնպես է թվում, թե Չարենցի 1918—20 թթ. երկերում երրեմն խախագում է հաջորդականությունը, զարգացման ներքին տրամաբանությունը, կամ նրանց մեջ երևան է գալիս տրամագրությունների և գաղափարների ինչ-որ հեղհեղուկություն, այսինքն՝ շատ հաճախ են երևամ «նահանջեներ ու շեղումներ» հիմնական գծից։

Բայց այսպես է միայն արտաքուստ։ Հստ էության Չարենցի առաջխաղացումը և շեղումները ենթարկվում են մի ուրիշ տրամագրության՝ հայ ժաղովրդի կյանքի ոիթմին, որը, անշուշտ, ուներ ինչ-որ տարօրինակ, արտակարգ և անբնական բան, ինչ-որ անտրամարան ընթացք, չեր ենթարկվում համաշխարհային նորագույն մեծ շարժումների հաջորդականությանը։

Դարի սկզբին սուս բանաստեղծները և մտածողները մի առանձին սրությամբ արվեստի առջև դնում էին երեք հարց՝ ինչպես և ինչուն, այսինքն նյութի, գեղարվեստականության և պարտքի միասնության հարցը։ Ա. Բլոկը, օրի-

նակ, դեռ 1908 թ. ընդգծելով արվեստագետի հասարակական պարտքի հարցը, գտնում էր, որ դա մարդկային հոգու միակ դրսերումն է. «Ո՞րն է մեր կյանքի այդ ուղեցույց ոիթմը։ Իբսենի ստեղծագործությունն ասում է մեզ, երգում, ճշում, որ մեր կյանքի ոիթմը պարտքն է։ Պարտքի գիտակցության, ժողովրդի և նրան ծնած հասարակության հանդեպ մեծ պատասխանավորության և կապի մեջ է արվեստագետը ուժատախանակությունը ոիթմիկ քայլելու միակ անհրաժեշտ ճանապարհով։ Դա ամենավտանգավոր, ամենանեղ, բայց և ամենաուղիղ ճանապարհն է։ Միայն այդ ճանապարհով է գնում իսկական արվեստագետը»¹։

Զարենցը ևս դարասկզբի այն մեծ արվեստագետներից էր, որին խորապես հուզում էր ինչուն, գրականության հասարակական պարտքի ինդիբը։ Նրա ստեղծագործության ներքին շարժումը, զարգացման օրինաշափությունը ենթարկվում էր քաղաքացիական պարտքի զգացմանը՝ մարդկության առաջ, ժողովրդի առաջ Բայց այստեղ, ահա, կրկին ծագում է հայ ժողովրդի վիճակի երկակիությունը։ Հայրենիքի կյանքը զգալի շափով շեղվում է համաշխարհային ոիթմից, քանի որ իմպերիալիստական պատերազմը սպառնում է նրա ֆիզիկական գոյությանը։ Այս անկման ոիթմը, ընթացքը, շնորհը, անշուշտ, ինչ-որ հոգեկան երկվություն, տրամագրությունների ուրույն մթնոլորտ պետք է առաջացնեին նաև հեղափոխության երիտասարդ բանաստեղծի հոգում, քանի որ հեղափոխությունը առանց ժողովրդի, առանց ազգության անիմաստ բան կարող է լինել ազգային բանաստեղծի համար։ Այս առիթով էլ խոր դիտողություն է անում Ա. Բլոկը։ Նա շատ նույր զուգահեռ է անցկացնում հայրենիքի ու նրա զավակի միջեւ։ Շահարենիքը նման է իր որդուն՝ մարդուն։ Երբ նա առողջ է և հանգստանում է, նրա ողջ մարմինը դառնում է նույնքան զգայուն, որքան առողջ մարդկային մարմինը²։ Ռուսական մեծ հողի բանաստեղծը հենվելով հայրենիքի կենսափորձի վրա, գրում էր. «Ու թե հայրենիքը կը մարդուն, այլ մարդը՝ հայրենիքը»։ Ահա այս ցավագին հարցը բոլո-

1. А. Блок, Собрание сочинений, т. 5, 1962, стр. 238.

2. Նույն տեղում, էջ 444։

բովին այլ կողմից էր երևում հայ բանաստեղծին։ Հայ մարդը չէր լքել իր հայրնիքը, հակառակը՝ հազար ձեւրով կառչել էր իր հողին, իր եզերքին, բայց հայրենիքը դատապարտված էր, մեռնում էր վայրենի հորդաների կոտորածներից, շարդերից... Հայ բանաստեղծը լարվում էր երկու մեծ զգացումների՝ ազգային ողբերգության և համաշխարհային հեղափոխական ոգևորության միջև, անընդհատ տատանվում էին նրա տրամադրությունների չերմաստիճանը, խոհերը... մեծ կըրաքից մինչև դրամատիկ ապրումները, ոգևորությունից մինչև չեղանաժամ։ Խսկ երազները երբեմն ստանում էին թախծոտ գույներ, ընկճված շեշտեր, քանի որ հեռու էին իրարից իրականությունը և երազները, Ռուսաստանում տեղի ունեցող մեծ դեպքերը տագնապալի ուշանում էին, դառնալով գրեթե հեռավոր երազ։

Կարմիր են գալիքի լուսերը ու մուգ են.—
Կարմիր են, կրակե, — բայց, ախ, անամո՞ք են։
Եվ ո՞վ կկանչի նրանց, որ կյանքում այս
Մենակ են, ախուր են, տխուր ու անո՞գ են...
Նվում է սրտիս մեջ շանոթ մի մորմոր հին։
— Լուսերը հնո՞ւ են, անփո՞ւթ ևն, անհո՞գ ևն...
—

Զարենցը երգում է այս երազն ու ողբերգությունը, հակասական այս ընթացքը, նրա ստեղծագործությունը ենթարկվում է հայ ժողովրդի նորագույն կյանքի տրամաբանությանը։ Նա գրում է նոր, ցնցող բանաստեղծություններ («Մահվան տեսիլ», «Անկումների սարսափից»)։ Բայց ոչ միայն այս Հզոր ոգին հսկայական ճիգերով հաղթահարելով ողբերգությունը, շարունակում է հետևել համաշխարհային կյանքի ոիթմին, հեղափոխական շարժումներին, պատերներում ու պոեմներում ստեղծելով նոր հայի կերպարը, որը բերում էր հեղափոխության պատգամները։ Նա գրում է «Երգ ժողովրդի մասին» պոեմը և ուղիովումները։

Առաջին պոեմում Զարենցը պատմում է ոռւս ժողովրդի դարավոր պայքարի մասին, Բանաստեղծություն լեզվով նա գիտելիք է տալիս ժողովրդին, արմատավորում նորագույն հեղափոխական գաղափարները։ Բոլորովին ուրիշ, ուրույն երևույթներ էին ուղիովումները։ Երանց մեջ նկատվում է լուրջ առաջխաղացում, բանաստեղծը գտնում է հեղափոխա-

կան երգի նոր երակներու նա արգեն հեղափոխության թեման երգում է Երկիրի նախրիի տեսանկյունից։ Հեղափոխական երգի մեջ ավելի տեսանելի է դառնում հայ հայրենիքի կերպարը։ Զարենցն առաջ է գնում, փորձում է ստեղծել քնարական մի հերոս, որն ունի նոր հայացք կյանքի ու գաւիքի նկատմամբ, օժտված է նորագույն հատկանիշներով։ Այդ հերոսը հայ երկրի զավակն է, մի մարդ, որի ներաշխարհին մածապես խառնվում են համաշխարհային շահագրգոռությունները։ Ի՞նչն է բնորոշ հերոսին։ Հպարտության զգացո՞ւմը, առնականությո՞ւմը, կորո՞վը, ավելի ճիշտ կլիներ ասե՞՝ այդ բոլորը միասին վերցրած։ Տաղապանքի մեջ ճկված մարդը կանգնում է ամբողջ հասակով և խոսում ամբողջ ձայնով։ Բանաստեղծը մթնոլորտի մեջ զգում է վերահաս փոփոխությունը, մայիսյան դեպքերի ազդեցության տակ 1920 ի. արգեն նոր հայացքով և երիտասարդացած հոգով երգում ժաղովրդին սպասվող վերածնունդը։ Այս երկերում բնականորեն տեղի է ունենում համամարդկային ու հայկական զգացումների խաչաձևումը։

Հուսալքության և քաղաքական անկման տարիներին իր հեղափոխական երգերով Զարենցը հսկայական լիցք է հաղորդում հայ գրական կյանքին, լայնացնում պոեզիայի մայրուղին, բերում համաշխարհային շարժման շունչն ու կորուվը։ Դեռ Հայաստանում սովորական կարգեր հաստատվելուց առաջ նա յուրովի մշակում է հայկական թեման, Հայաստանի ճակատագիրը բննում է հեղափոխության տեսանկյունից, տալով բարձրացող հայի հոգիկան առանձնահատուց վերելքը։ Փոխվում են պոեզիայի նյութը, ոգին և հերոսը։ Հարստանում է բովանդակությունը, հասարակական շունչը, ներքին ու արտաքին ոիթմը։ Բանաստեղծության մեջ ձեւվորվում է պատմական հանգամանքների մեջ թրծված ու հարրստացած հայ մարդը։ Թարմ ու զորեղ հոսանք է մտնում արգային երգի մեջ։

Զարենցը իրեն համարում է նախրի երկրի, հինավուրց և տառապած ազգի զավակը։

Ես—ես եմ նորից՝
Դարերից եկած անհո՞ւ մի պոետ—
Եղիշե Զարենց—

Նաիրի երկի՞ր, քո երգիլը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու զավակը մեծ...

Նա տարբերվում է այն «ձախլիկներից», որոնք հեղափոխությունը բաժանում էին ազգային վշտից: Արդար հավատով նա հեղափոխական սերնդին համարում էր «Հնամյաց ցեղի ոսկի երակը», ընդունում արյան ու բախտի փոխանցումները.

Ե՞ս—ե՞ս եմ նորից.—
Ոսկի երակը հնամյա ցեղիս,
Իմ չշաբագուկ հաղթ ժողովրդի
Օղակը վերջին...

Բանաստեղծը հեղափոխական երգը կապում է ժողովրդի պատմության ու տառապանքի հեռու և մոտ ակունքների հետ: Նա գալիքի մասին խոսում է ուրուցն վիճակի մեջ: Կանգնած «ավեր երկրի լեռների» վրա, խոսում է բացառիկ խանդով, զերմացած դեպի մարդկակ, ազգերն ու աշխարհը: Զարենցը դառնում է մի բացառիկ ուժ ժամանակի հայ բանաստեղծության անգույն և փետրաթափ պառնասում: Տերյանի վտիտ է-պիգոնները հայ երգը դարձել էին արցունքի հովիտ, հնչում էին լալկան երգեր, ծավալվում էր մի որբանոցային յուրօրինակ քնարերգություն: Հնչում էին սիրո և կրքի հինավորց շերմոցային երգերը, իսկ փողոցը, կյանքը, պատմությունը դուրս էր մնացել երգի հունից: «Որբանոցային գրական աշխարհում սիրված էր Վեսպերը, որը ստեղծել էր մի տեսակ գաղթականական պոեզիա: Ոստանիկը իր նման կարծ ու թեթև բաներ էր գրում, Ֆենիքսը ճոռում ու կեղծ կլասիցիզմով նարեկացիություն էր անում, Արմենուհին իր սախարինի լիրիզմով սեր էր ճովողում: Այս գորշ ֆոնի վրա Զարենցի անոնը պայթեց ոռութի պես»,— հիշում է Գուրգեն Մահարին:

Զարենցին խորթ էր գրական տաքուկ անկյունը, շերմոցը, նրան ներքնապես արդեն վանում էր էժան զգացումներից ու լալկանությունից գոյացած մարմանդ ճահիճը: Այս հակադրության մեջ նա այրում է անգամ իր հիսուն գագելները: Արևադարձային հոկա էվկալիպտի պես նա բարձրանում ու

անառողջ մթնոլորտի մեջ մի անիմանալի ուժով մաքրում է թունավոր ճահիճը, ուր չեխն կարող ծաղիկներ ամել: Այդպես են հանձարները: Դարձյալ իրավացի է Գուրգեն Մահարին՝ Զարենցի տիտանական դերի գնահատման մեջ: «Նոր էր աշխարհը, առնական, խորին: Հեղափոխությունը ես Եղիշե Զարենցով ընդունեցի այն ժամանակ, լեցվեցին ես, որբանոցը, երեանը, ամբողջ աշխարհը շփոթ երգերով և աղմուկներով»: Զարենցի հեղափոխական երգը մեծապես ազդում է հայ երիտասարդության վրա:

Դա միանգամայն բնական էր: Զարենցի պոեմները ազդարում էին գալիքի պատգամները, աշխարհի ու հայենիքի արյան բաղադրության և ոգու փոփոխությունը, գառնուց գեղեցկության, ուժի և զահելության հիմն: Նրա հերոսը, թոթափելով ծանր ու ծերացնող հոգեկան բեռը, աշխարհի առջև կանգնում է ֆիզիկական և հոգեկան աշխույժով, հզու հասակով և զահել կրօպու: Նա այլևս ճամփերին մոլորված հարդագողի ճամփորդ չէ, որի առջև փակվել էին երկնքի ո, երկրի դուները: Այժմ իր հոգին նա համեմատում է Մասւու հետ, որի բարձունքից երկում են աշխարհները, հեռակոր եզերքները և գալիքի արշալույսները:

Այդ նոր երգերը մարգու զահելության և ուժի մասին՝ երբնապես հարազատ են Վ. Մայակովսկու այս գեղեցիկ իշքնարնութագրմանը.

У меня в душе ни одного седого волоса,
И старческой нежности нет в ней!
Мир огромив мощью голоса,
Иду красивый
двадцатидвухлетний...

Ոգու և արյան այս փոփոխությունը, երիտասարդական կրքի բացավառումը և հարիզանի ընդլայնումը՝ որպես հոգեբանական բարդ երկուլթ, կապված էր կյանքի հետ:

Հայ բանաստեղծը մի անհրապույր ու մռայլ աշխարհից ընկել էր արեւով ու զերմությամբ ողողված մի ուրիշ ափի: Հեղափոխական պայքարները և Մայիսյան ապստամբությունը նրան ազատագրում են տանջալի ապրումներից: Բանանը տեղի բնազդը նրան առաջ է մղում, նեղափոխական փորձը

նրան թելաղբում է մի մեծ նշնրառվյուն, որը գրչի տակ ստանում է գրեթե բանաձեհ հստակություն: Համաշխարհային հեղափոխության կամքի երթի իր հուսակարենով ավելի մոտ է նաիրի երկիր հոգուն, որին պատճուրյունը դրա տապարտել էր մահվան:

Ո՞վ գիտե արդյոք՝
Թերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու ձեր մեծ ու հզոր երգին
Մի երգ—ավելի՛ ըմբռուտ ու արի,
Քան իմ երգը մեծ—երգը նաիրի...
Ո՞վ գիտե արդյոք՝
Թերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու հզոր, բռուր ձեր սրտին
Մի սիրտ—ավելի՛ ըմբռուտ ու արի,
Քան իմ սիրտը թեժ—սիրտը նաիրի
Եվ ո՞վ, ո՞վ կասի՛
Նետե՞լ է արդյոք մեկը աշխարհում
Այսօրվա կարմի՛ր, կարմիր ձեր երթին
Ողջույն—ավելի՛ առնական, արի,
Քան ողջույնը քո, երկիր արևաքամ,
Կարմի՛ր նաիրի...»

Զարենցը ողջունում է իր տառապած ժողովրդին սպասվող գալիքը: Երեք ուղիոպեմներում նա առուց ոիթմով երգում է ժողովրդի վերածնունդը: Այս նոր երկերի մեջ ապստամբության օրերին նա առանձին ուժով ընդգծում է գալիքի թեման: Ավելի ճիշտ, գալիքը ձեռք է բերում հսկայական տեսակարար կշիռ, հոգեբանական ու սոցիալական առօճեք: Կարելի է ասել, որ դա իր վրա կրում էր նաև ազգային հոգեբանության ազդեցությունը, քանի որ նայ ժողովրդը գրեթե զրկված էր ներկայից: Քաղաքական նպաստավոր ալիքը անմիջապես ծնում էր մեծ ոգեստություն և աշխարհի ու մարդկանց հետ զրուցի մտնելու բուռ ցանկություն: Ռադիոպեմ անվանումը սիմվոլիկ է, ազգային բանաստեղծը իր հոգին համարում է բարձր, հզոր կայան, որտեղից հնչում և ամենուր տարածվում է «կարմիր երգը»: Այդ իմաստով էլ շատ խոսուն են վերնագրերը՝ «Նաիրի երկրից», «Դեպի ապագան» և «Բրոնզե թևերը կարմիր գալիք», բոլորն էլ գրված են 1920 թ. մայիս ամսին:

Զարենցի հեղափոխական պոեմիայի մեջ արտահայտված է նաև Հայկական հոգեբանության առաջխաղացումը: Ավելին, խորհրդային գրականության մեջ այդ պոեմիան առանձին ուժով արտացոլել է ազգության և հեղափոխության փոխհարաբերությունը, արտահայտել հեղափոխությունը գնացող ազգի հոգեբանական անցումները: Թերեւս նրան ավելի հարսած է Ա. Բլոկը, որին նույնպես խորապես հուզել է ուստական և զգային կյանքի քաղաքական ու հոգեբանական փոփոխությունը: Բայց գրականագետների այն պնդումը, թե Զարենցը այստեղ նման է Բլոկին, համոզի չէ: Իրոք Բլոկը և յարդ անցումներ ունեցավ դեպի գեմոկրատիա և հեղափոխություն ձգվող ճանապարհին: Նա գրեց «Տասներկուսը» և «Փկութները»: Բայց ճիշտ է նաև այն, որ Զարենցը ավելի բաղմակողմանի է արտացոլել քաղաքական այդ մեծ իրադարձությունը: Զարենցը կտրեց անցավ Բլոկի ճանապարհը և առաջ գնաց, տալով ավելի զտարյուն հեղափոխական երերի:

Գրականագիտության մեջ շատ է խոսվել Զարենցի ու Մայակովսկու փոխհարաբերության մասին: Ոմանք, ձբդակով ընդգծել հայ բանաստեղծի մեծությունը, հանգել հնահամոզի եզրակացության, թե նա հայկական Մայակովսկին է, գրեթե կրկնօրինակը: Նրանք կանգ են առնում հատկապես գաղափարական ընդհանրությունների վրա, մի տեսակ, Մայակովսկուն դարձնելով հեղափոխական գաղափարականության միակ ակունքը: Դա, իհարկե, կոպիտ սիսալ է:

Ամենից առաջ, ինչպես անդրագարձել ենք այդ խնդրին զրբի սկզբում, նմանությունը չի կարող լինել մեծության նշան, կարևոր տարբերությունն է, որ դառնում է անհատականության պատվանդան: Երկու նշանավոր բանաստեղծները ունեն շատ ցայտուն տարբերություններ՝ ձիրքի, ոչի, նյութի, հոգեբանության և աղգային խառնվածքի առումով: Թերեւս 10-ական թվականների հեղափոխական երգերի և հակապատերազմական երկերի մեջ կարելի է տեսնել սրոց հարազատություն: Խոսքը վերաբերում է տարբերքի ուժին, հումանիստական պաթումին, բողոքի և ատելության հզոր շեշտերին: Սխալված չենք լինի, եթե առենք, որ աշաւեսակետից երկու բանաստեղծների վրա էլ գրական ազդե-

ցություն է գործել դարի մեժ հումանիտար, սոցիալական ու քաղաքական վերելքների, բարձրացող աճը բոխների և քաղաքների երգիշ էմիլ Վերջառները Խոսքը դարձաւ վերաբերում է ոգուն, ներշնչանքին, արատավոր աշխարհի դեմ ունեցած առաջնորդությանը: Այդ ազդեցությունը միայն և միայն նպաստել է երիտասարդ բանաստեղծների անհատականության զրացմանը, նրանց մղել ստեղծագործական նոր որոշումների:

Մյուս կողմից նույնքան սխալ է հեղափոխական պոեզիայի միակ ակունքը համարել Վ. Մայակովսկուն, շատ ավելի կոպիտ սխալ է մյուս ազգերի բանաստեղծների հեղափոխական երգը կապել միայն գրական լիցքերի հետ:

Մի՞թե հեղափոխությունը անմիջականորեն չէր կարող ազել մյուս ազգերի հոգեբանության և գրական մտածողության վրա: Մեր խոսքն, իհարկե, վերաբերում է 10-ական թվականների պոեզիային, երիտասարդ Զարենցի ստեղծագործությանը: Հետագայում մի որոշ ժամանակ տեղի է ունենում ավելի ակնառու մերձեցում Մայակովսկու և Զարենցի միջև: Մայակովսկին մի որոշ շրջան ազել է Զարենցի վրա, այն էլ ավելի ուշ, 20-ականների սկզբին, նոր որոշումների շրջանում, բայց այդ ազդեցությունները տևական չեն եղել: Մինչ այդ մերձեցումը Զարենցն արդեն խոշոր բանաստեղծ էր, գնում էր ուրույն ուղիղվ, որ գծել էին նրա համար և ազգային ճակատագիրը, և սոցիալիստական հեղափոխությունը:

Այս կամ այն շրջանում, որոշ անխաւափելի ազդեցությաններ կրելով հանգերձ, նա մնում էր որպես ինքնատիպ, ազգային, աւժեղ նկարագիր ունեցող մի բանաստեղծ, որի պեղպահ արատացում էր անցաւմների բարդությունը: Զարենցը շատ բազմազնամի բանաստեղծ էր, ուներ բազում հետաքրքրություններ և թեմաներ: Նա էապես չէր ենթարկված գրական մաղացի ճնշմանը: Բնությունից օժտված և առածու կողմից սիրված այդ բանաստեղծը նվազում էր բոլոր լարերի վրա:

Բազմազնության և գրական որոշումների իմաստով Զարենցին դաշտ կարելի է համեմատել միայն Վարուժանի:

Հետ, որի ամեն մի գիրք թեմատիկ ու ոճական նոր աշխարհ էր բացում և նոր սկիզբ գնում:

Վերջապես, այս բանաստեղծի ինքնատիպությունը և ազգին կատված էր հայ ժաղովրդի կյանքի բան հատկանիշների ու հակասաթյանների հետ: Այս իմաստով կրկին մեր ազգն ծառանում է նրա ճանապարհի հերթական բարգավաճությունը:

ՄՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԵՐ, ՆԱՐ ԱՌԵՎԱԾ

Զարենցը հուն էր բացել հեղափոխական թեմայի հասար, գտել էր կյանքի երակը և պանդիայի զարգացման մալուգին: Բայց բնավ էլ հեշտ չէին անցումները, նոր թիմական նվաճումները: Խոսքը վերաբերում է ոչ թե որոշ նույնությունների, որոնք պետք է հաղթահարվեն, ոչ կյածել բարդությաններին, որոնք զարձալ բարգավաճություններ էին ծնում նաև ստեղծագործության մեջ: Զարենցը տեսավ, իւ ինչպես պատմության գիրկն է անցնում Արևմտյան Հայատանը, աեսավ այդ ժողովրդի զարգը, զգաց հայրենիքի ամաւության սարսափը:

Բանաստեղծի վրա ազդում էին նաև նոր հակասաթյունները, ազգային կուսակցությունների ինտրիկներն ու գործերը, որոնց պատճառով տեղի էին ունենում եղբայրական զարդեր: Հեղափոխության երգիլը անխուսափելի տառն է ազգային գրամային: Ինչպես արևածագից առաջ մութը մի պահ ավելի է խոտանում, կարծեն վերջին կափը մզելով լույսի գեմ, այնպես էլ արգեն փոքրացած Հայաստանում 1920 թվին ողբերգությունը ավելի թանձրացավ: Երկրում տեղի ունեցավ բազմաքացիական կռիվ, պարտվեց Մայիսան ապստամբությունը: Թորքերը սկսել էին հարձակումը, իսկ հեղափոխությունը գեր չկար, արյունը դեռ հոսում էր:

Այս օրերին նա գրում է «Անկումների սարսափից» և «Մահվան տեսիլ» բանաստեղծությունները, որոնք օրերի բարդ անցումների ու անցքերի ծանր արտացոլքն են: Բանաստեղծը նորին ընդուռաց է գնում բնավ էլ ոչ մանկական հրավառությամբ: Նրա հոգում տեղի է ունենում մի յուրօրինակ անցում հին ու նոր սիրո միջն, անցյալի ու գալիքի միջն, մի անցում, ուր հին ոգին մորմոքով տեղի է տալիս գեղ:

բող ուժի առջև Սա հոգեբանորեն և պատմականորեն հասկանալի մի երկույթ է: Զարենցը տեսնում է ներկայից և անցյալից եկած ավանդների անկումը, սեղմված սրտով անցնում է հոգեբանական գրավիլ ծուղակների վրայով, դառնում է նորագույն կյանքի օրհներգուն: Տառապանքի ու բարխակալ երազների միջով նա գնում է դեպի կարմիր զալիքը, ողջունում սպասվող նորը, բայց տեսնում է նաև ավերված երկիրը, որ գնում է դեպի նոր ափ՝ երեր ընթացքով և սարսափելի կորուստներով:

Ազատվեց հին կատանքից հոգիս վիրխարի ցավով...—այսպես է նա գրում «Զարենց-Նամենում», նկատի ունենալով 1918 թ. Հեղափոխության վերելքը: Նա անկեղծ էր Տեսկան ընթացքի մեջ բանաստեղծը խոր է զգում անցման դրժարությունը, կրկին ու կրկին դառնում իր հին սիրուն, երեկվա տառապանքին, նախապաշարումներին և սրբազն շիրմներին: Այդ դրամայի մեջ է Զարենցի ուժը, մեծությունը, քանի որ իր բանաստեղծության մեջ նա դնում է հոգու վիթխարի ցավ, «Անկումների սարսափից» բանաստեղծությունը այդ դրամայի զորեղ արտահայտություններից մեկն է, բանաստեղծություն՝ գրված արյունով և հոգեկան վիթխարի լարումով: Դա հին ու նոր Հայաստանի հոգեբանական ընկալումն է, որն ինչ-որ մի տեղ անպայման վերը է առաջացնում մեծ անհատի հոգու մեջ: Եվ ի՞նչն է գաղտնիքը: Հեղափոխությունը կենսականորեն անհրաժեշտ էր, այո՛, բայց ոչ մի ժողովուրդ այնքան գրկանքով չի գնացել դեպի հեղափոխության փրկարար ափը, որքան հայ ժողովուրդը:

Եվ չի՞ հիշի ո՞չ մի սիրտ, որ դարերի մեջ մի օր Միրտս եղել է գերի անկումներին ահավոր:

Որ եղել է դարերում մի սարսափի նման կիհ, Որը նետել է հեռու աստղանկար իմ հոգին:

Նրանք կզան, կավերեն, և չի մնա էլ ոչինչ՝ Ո՛չ դրախտը ձեր գեհեն, ո՞չ թափիծը ձեր դյուքիլ:

Եւ չի լի՛ ո՞չ մի կին իմ անկումի մասին այս, Որ դարձրեց իմ հոգին թարախակալ մի երազ:

Եվ չի մատնի ո՞չ մի բառ չնշում իմ տոթ երգերի, Որ եղել եմ ես տկար, որ եղել եմ ես գերի...

Ես պոետ եմ—և հիմա իմ վառ երդերը պիտի Դեպի գալի՛ քը թոշնն սկաբների սկս նետի:

Ես եկել եմ գարերից ու գնում եմ հաղթական Դեպի դարելը նորից, դեպի կարմիր ապագան...

Նոր ուղու վրա կանգնած, արդեն գալիքի հետ մերձեցած բանաստեղծը անելիքի բարձր դիտակցությամբ նայելով առաջ, իր հետ առնում է դեռ թարմ, արյունու վերքը և թարխակալ հոգին, որը դեռ երկար, մենակության ու անկման պահերին, և մեծագույն թոփշնների, սլացքների մեջ ինչ-որ չափով պիտք է մորմոքի, զգացնել տա իրեն, դառնա արյան հիշողություն, ինչ-որ ձեռվ թափանցի նորագույն գործերի մեջ...

Հոգեկան ցնցումը և ցավը, որ խտացել է բազում տառապանքների ու անցքերի մեջ, ավելի զորեղ են արտահայտված «Մահվան տեսիլում»: Ինչպես են ծնվում քնարական գլուխգործոցները: Շատ հաճախ ծնվում են միանգամից, մի շնչով, ոգևորության մեջ: Բայց դարի նշանավոր բանաստեղծնությունները մշտապես ունենում են իրենց նախապատմությունը, թաքուն սկիզբը, ծայր են առնում բազում մեծ ու փոքր երկույթներից, տրամադրություններից, դիտողություններից, գեպերից, որոնք երբեք չեն կորչում, անհետանում, այլ հավաքվում և ապրում են ենթագիտակցության մեջ, դանդաղորեն խմորվում, եփվում մինչև երկունքի բուն պահը, երբ բոլոր տարրերը խտանում են, շիկանում և ծնվում է ստեղծարար հոսանք: Այսպիսի դարակազմիկ բանաստեղծություն է «Մահվան տեսիլը»՝ գրված մի ծանր տագնապի պահի...

Մի քանի ամիս հետո, 1920 թ. նոյեմբերին իրադարձությունները փոխվում են, սպասված հեղափոխությունը վերջապես հասնում է Հայրենիք, կարմիր զորքը տիրաբար մըտնում է երկան, հաստատելով սովորական կարգեր:

Բայց այս բանաստեղծությունները մնում են, դառնում են անցած մահվան տագնապների և հոգեկան անցումների խոր

խտացումների Նրանց մեջ մնում է սիրո, կարութի և անձնա-
զոհության մի անօրինակ, Հավերժական զգացում:

Տանջալի որոնումների մեջ, կորուստների հետ միասին,
բանաստեղծը զտնում է էականը, իր սոցիալիստական հայ-
րենիքը, այսինքն՝ ազգային նոր գոյության և բանաստեղծու-
թյան բուն ակռները։ Անցյալի կապանքներից նա դուրս է
գալիս տապառած, բայց կորովի: Վաստակած բանաստեղ-
ծական մուսան կրկին ընդունում է ամազոնունու կերպա-
րանք, բերելով հրդեհված օրերի շունչն ու հերոսականու-
թյունը, անվերտարձ խորասուզվելով գալիքի մեջ։

Որպես գաղույթ՝ օրերի հնամենի պատյանից
Ենուան է կարծը ու բանոր, ու վառվում է տպագուն,
եվ չի մտնի նա հնի փոշոտ պատյանը նորից,
Ու չի թաղվի օրերամ, որ վառվեցին ու չկան։

Պատմությունը լուծում է դրաման, նոր ուղի նշելով հայ
կյանքի ու երգի համար։ Բանաստեղծը շարաւակում է իր
նոր ճամփան պատմության քառալիներով, այլև շդառնալով
գեպի անցյալ, բայց երբեք լմոռանալով այդ անցյալը, հա-
յոց անցյալը...

ԱՇԽԱՐՀԱ, ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(«Զարենց—Խամե», «Ամենապետ»)

Զարենցի ստեղծագործական վերելքին բնորոշ է մի ցայ-
տուն հատկանիշ։ Նա մշտապես եղել է ճանապարհ բացողի
և գրական շինարարի գերի մեջ, առանց ունենալու նման գեպ-
երում հաճախ երկացող գրական անկատարություններ։ Նյու-
թի, երկույթների ու գաղափարների յուրացման ճանապար-
հին նրա գեղարվեստական միաբը անվերջ, անգաղաք եփվել
է շարժման և վերելքի տենդագին մինուրտում։ Դա վաս դրսե-
մորվեց նույն Հայաստանում սովորական կարգեր հաստատ-
վելուց հետո։ Ստեղծագործական անցման շրջանը իր բնույ-
թով արտասովոր էր և, կարելի է ասել, ուներ գարաշրջա-
նային տեսակարար կշիռ։

Այդ պահին նա ընդամենը բառնչորս արթեկան էր։ Սո-
վորաբար այդ հասակի բանաստեղծները նոր-նոր են սկսում
ստեղծել իրենց աշխարհն ու մինուրտը կամ էլ ապրում են
որոնումների տանջագին շրջան։ Բայց շահել բանաստեղծն
արդեն ամփոփել էր մի ողջ պատմական-գաղաքական շըր-
ջանի գեղարվեստական պատմությունը և գարծել նորագույն
գրականության բախտի տերը։

Պատմությունը հսկայական բնու էր դրել երիտասարդ բա-
նաստեղծի ուսերին։ Այդ «բերք» բնավէ չի թեթևանում նոր
կյանքի մինուրտում։ Նրան վիճակվում է սոցիալիստական
դրականության հիմքերի և հարստության ստեղծման դերը։
Այդ ընդհանուր գործոնի հետ շմոռանանք նաև անհատականի
հանգամանքը։ Աչ թե պատմությունն էր Զարենցի զգին փա-
թաթում այդ դերը, հոգու վրա դնում այդ վիթխարի բեռը,
այլ ինքը՝ անհատն էր ընդառաջ գնում պատմությանը և
կյանքի պահանջներին։ Մեծ գորոշ չի կարող ապրել առանց

ամենօրյա կենսական լիցքերի, զերմության ու գրգիռների, նա միշտ գտնվում է կյանքի հազարավոր լիցքերի ճնշման տակ: Նրա ներաշխարհում տեղի են ունենում ստեղծագործական էներգիայի բազում փոխակերպումներ, որոնց խառնը դրվում են Հոգեբանական նոր բաղադրիչներ: Զարենցի նախորդ շրջանի հեղափոխական երգերն իրոք ծնվում էին անսովոր ոգևորությունից, իր երկրի ձայնը նա տանում աշխարհին: Բայց ահա, նոր կյանքի սկզբին, նոր երգի հունը լայնացնելիս, նա կանգնում է մի յուրօրինակ դժվարության առաջ: Այդ հզոր ձայնը լսվում էր մի բանաստեղծի բերանից, որը ճակատագործ քերումով կանգնած էր այեւակների վրա: Անհունորեն ծանր էր այդ ավերակների վրա ստեղծել նոր կյանքի հիմերը: Դժվար երկունքով էր բռնված հայ կյանքը: Թույլ հազիներին Հայաստանի վերածնունդը նոգելարձության պես անհուսալի բան էր բվում:

Դժվար էր նաև նոր երգի ստեղծումը, քանի որ գեռես թույլ էին խփում կյանքի լիցքերը: Եղիշե Զարենցը այս շրջանում ևս երեսում է իր հանճարի ամենահական կողմով, զգում է թույլ լիցքերի, առաջին բողբոջների, կյանքի դանդաղ շարժման, սիրո և կենսական աւելշերի հարաբյան ներթին խորհուրդը: Այս ամենը նրա աշբում զորանում են, զառնում կյանքի և սիրո անկրկնելի մեղեդիներ: Կյանքի ստեղծման երգը, այսինքն՝ Հայաստանի վերածնության թեման դառնում է նրա գլխավոր խնդիրը: Այս գերագույն խնդիրի համար նա գործադրում է նաև ուրիշ զենքեր: Այսպես, երգիծանքի ահեղ ուժով կովում է անցյալի մղամանշի զեմ, որը գեռ տոթի պես իշնում էր հայկական հոգեբանության վրա:

Բայց բոլոր գեպերում բանաստեղծը երբեք չի մոռանում իր հայտնաբերած երգի հզոր երակը, հեղափոխական երգեավանդը: Հեղափոխությունը նա համարում է հավերժ շարունակող, մշտադալար կենսածե ու էություն, կյանքի էական հատկանիշ: Այս թեմային նա հավատարիմ է մնում մինչև կյանքի վերջին պահը, մինչև վերջին սկագրությունները, վերջին տողերը: Հայրենիքի և հեղափոխության առընչությունների երգը մնում է որպես կենտրոնաձիգ խնդիր, որի շուրջը համախմբվում են բազում արտադրություններ,

հայտնագործումներ, անհատական ու հասարակական բազմապիսի լիցքերը:

Բայց այս երգը ժամանակի ընթացքում անվերջ խտանում էր և ճյուղավորվում, ստանալով իմաստալիին ու գեղարվեստական նոր շեշտեր, ապրելով լուրջ տեղաշարժեր, որոնք դառնում են ժանրակշիռ երեսույթ սովետական պոեզիայի մեջ:

Հեղափոխական երգի փոխակերպությունը և հարստացումը երեան են գալիք 1920—22 թթ., մասնավորապես երկու նշանավոր պոեմների՝ «Զարենց-Նամեն» և «Ամենապոեմի» մեջ: Ամենից առաջ հետաքրքրական էր գեղարվեստական ոճի մեջ կատարված շարժումը: Խորանարդիկան ներշնչանքի ընդհանուր մթնոլորտում բանաստեղծը սկսում է տեղ բացել նաև ուսալիստական ոճի համար, մի շարք զեպերում բարձր ոճի՝ «իշնելով» Հոգեբանության, անհատական կերպավորման, բնական հարաբերությունների ոլորտը:

Ոճական այս փոփոխությունը, անտարակույս, ներքնապես կապված էր բովանդակության փոփոխությունների և նյութի ընկալման ու մատուցման հարստացումների հետ: Այս առումով պոեմներն ունեն մի շարք նոր հատկանիշներ, որոնք ժամանակին խաղացել են նշանակալի դեր:

Հայ բանաստեղծության մեջ ձևով ու մտահղացումով, հերոսի ստեղծման սկզբունքով նոր և աղղեցիկ երևույթ էր «Զարենց-Նամեն»: Նոր էր այս պոեմի տեսակն ու բնույթը: Դա, այսպես կոչված, կենսագրական պոեմ էր, Զարենցի քսանհնդամյա կյանքի գեղարվեստական ուրույն պատմությունը:

Սա խոշոր նորություն էր, քանի որ գրական երկի հերոս է դառնում դարի բաղաքացին ու բանաստեղծը: Զարենցը որպես անհատականություն, քաղաքացի՝ դարի ամենահետաքրքրական մարդկանցից մեկն էր, որն անցել էր խառը, գժվար, երբեմն արկածալից, հաճախ ողբերգական անցքերի բռվով, իր համար ստեղծել էր մի ազնիվ և դրամատիկ կենակագրություն, որը ուներ նաև ներքին խտացում, բանաստեղծական մեծ խորհուրդ:

Ավելորդ չէ, թերես, ավելացնել, որ սոսկ գրական վաստակի արժեքը դեռևս թիւրչ էր նմանօրինակ երկի համար: Նովելակի արժեքը դեռևս թիւրչ էր նմանօրինակ երկի համար:

քան կարեոր էին գրողի անհատականությունը, կյանքի ճանապարհը, փորձը, գործունեության եղանակը, խառնվածքը: Ոչ բոլոր նշանավոր գրողների կյանքը կարող է լինել բանաստեղծական, դառնալ նաև ժամանակի բաղաքացու կերպարի ընդհանրացման միջոց կամ նյութ: Խ. Սոռվյանի կյանքը ամբողջապես բանաստեղծական բնույթ ուներ, առանձնանում էր մաքառումով, դիմադրությամբ, հրդեհներով: Բնականաբար, այդ կյանքը մշտակես եղել ու մնում է որպես բանաստեղծության գրավիչ թեմաներից մեկը: Գ. Սունդուկյանը մեծ գրող է, սակայն նրա կյանքի համեմատական խաղաղ վիճակը, այսպես ասած՝ անդորրը, քիչ է հուզում բանաստեղծներին: Միքայել Նալբանդյանի կյանքը անվերջ շարժման ու վերելքի, անձնագույթյան մի կարճատև ուզի էր, նա իր հետեւից տանում էր նորագույն սերնդին, ուսերին վերցնելով հալածանքի վիթխարի բեռը: Այնինչ մեծ Ռաֆֆու բաղաքացիական կյանքը շուներ նշանակալից անցումներ, սուր անցքեր: Գրասեղանի մոտ նստած մեծ գրողը հյուսում էր քաղաքական ազատագրության մեծ վեպը, որը շարժման մեջ էր զնում «խաղաղ» հեղինակի ժամանակակիցներին:

Եղիշե Զարենցը իր բնավորությամբ, կյանքի եղանակով ավելի շատ հիշեցնում էր նալբանդյանին, անցյալի ամենահրդեհված հերոսներին ու նահատակներին, որոնք պատմություն էին ստեղծում ոչ միայն խոհերավ, զգացումներով ու երևակացությամբ, այլև՝ արյունով, կյանքի գնով: Հենց այդ յուրահատկությունը, խառնվածքի ու գործի այդ հատկանիշներն են արտացոլված «Զարենց-նամենում»:

«Զարենց-նամե» (Զարենցի գիրք) խորագիրը բնութագրում է մտահղացումը: Զարենցը գրում է իր անցած ճանապարհի մասնկության, ժնողների, ծննդավայրի, կարդացած առաջին գրքի մասին: Այս ամենը ունեն հոգեբանական ու ճանաշողական հետաքրքրություն, քանի որ բացում են հասակի ու խառնվածքի ձևավորման առեղծվածները, բանաստեղծ-մարդու ծննդյան հանգամանքները: Մանկության խորհրդավոր աշխարհի շքնազ հյուսվածքին աստիճանաբար խառնվում է մի ուրիշ թեմա, որն արդեն ստանում է դրամատիկ շեշտեր

գալիս է մի պահ, երբ տեղի է ունենում մտավոր համունացումը և բաղաքացիական ինքնահաստատումը, երբ անհատի բախտը խառնվում է ժողովրդի բախտին, երբ ձևավորվում է բաղաքացին և ծնվում է բանաստեղծը: Ահա Զարենցը իր կյանքի երգին հյուսում է երկրի երգու «Զարենց-նամեն» դառնում է նաև ապրած օրերի, աղետների, մղձավանշի, պատերազմի ու զարդերի, հույսերի ու վերածնության պատմություն: Դա օրինաշափ էր: Դարաշրջանի բանաստեղծը նաև մեծ քաղաքացի էր, տառապած և անձնազոհ մարդ, որի կյանքի ամեն դրվագ կապված էր ժողովրդի հետ և ամեն տող ծնվել էր հողից ու երկրից:

Զարենցը կրկին անդրադառնում է իր բանաստեղծական ծրագրին, ցուց տալով հոգու ուզած տաղի ստեղծման յուրահատուկ բարդությունը: Ո՞ր է այդ պոեզիայի բերած զեղագիտական նորը, բուն էլությունը:— Հոգեկանը, բարդը, նոգեղեն կարքը, որը բանաստեղծի սրտից զցվում է ընթեցողների սիրտը: Զափականց ուշագրավ է, որ այս բոլորի հետ միասին նա ընդգծում է գլխավորը՝ տաղերի տակ գտնվող կենդանի մարդուն: Ե. Զարենցը դեմ է գնում մակերեսային պատկերացումներին, որոնք ծնվում են «չոր», դատարկ տեսքով տարգած մարդկանց մեջ, հակադրվում անտարեր ընթերցողին ու քննադատին, և հենց սկզբից առաջ է քաշում այն խնդիրները, որոնք հետո ծավալվում և զարգանում են «էպիքական լուսաբացում»: Դա կյանքի բարդ տարերքի բյուրեղացած ընկալման, հոգեբանական ռեալիզմի, կենդանի կյանքի ու հերոսի սկզբունքն էր: Ճիշտ է, մի երկու տարի նա իսկապես շեղվեց արվեստի մայրուղուց, տուրք տալով ձախ ըմբռնումներին, սակայն էլության մեջ, ինչպես տեսնում ենք, նա սկսում է յնել սոցիալիստական ռեալիզմի հիմքերը, որոնց վրա հետո բարձրանում են տասնամյակի գլուխգործոցները: Տեսական այդ բարդ խնդիրը, բանաստեղծի ինքնարնութագրումը և ընթերցողի որոշ խավի գնահատությունը, բարդ կյանքի բարդ արվեստի նորագույն ըմբռնումը նա

տահայտում է վերին աստիճանի զուզալ, անմիջական, հուզական տաղերով՝ որպես իր հոգեկան աշխարհի մի անհանգիստ լարում:

Բախչովն անցան, բույր շնչեցին, ափսոս, որ վարդը շտեսան, շոր ու դատարկ տեսքով տարգած՝ նոզեկան բարդը շտեսան: Երգիս ծայնին մեղլիսն եկան ու անտարբեր անցան նորից՝ Մրցից իրենց սիրտը զցած նոզեղեն կարը շտեսան: Եղան ինչպես ամառվա արո՞ք քանի դեմ սիրտ կար ու կրակ, ծողունների ոսկով տարգած՝ անսահման արտը շտեսան: Քո՞ւր, սիրեկան, օտար մարդիկ, բարեկամ ու անձանոթ Մոտովս անցան՝ տալիքիս տակ կենդանի մարդը շտեսան:

Զարենցը ստեղծում է նոր կյանքի շեմին ոտք դրած, վերածնվող մարդու կերպարը և հայրենիքի պատկերը:

Նա պոեզիան տանում է դեպի փողոց, հրապարակ, ազատագրում գրքային ազդեցությունից և հրապարականոսական ներշնչանքից, ստեղծում է կենդանի մարդու, իրական հերոսի կերպարը, երգում է սեր, ուրախություն, կենցագ, առօրյա, որոնք, իհարկե, ձախ քննադատությանը կարող էին թվալ աղանդավորության պես մի բան.

Մե ձեռքիս արադ է, մեկելը գինի,
Երկուսն էլ քո անուշ կենացը, գոզար
Կարոտ եմ սուլթանի, սիրեկան խանի:
Անուշ է քո էշնի բերածը, գոզար

Այս գգացումները գալիս են կյանքից և գնում դեպի կյանքը: Հերոսի ապրումներին խառնվում է նաև անանձնական ուրախության շունչը, որն ուներ որոշ ակունքներ նախորդ շրջանի բանաստեղծության մեջ, իսկ այս գրքում ստանում է նոր երանգ: Ահա մի «հողեղեն» բանաստեղծություն, որի մեջ գգացվում է նաև պատանի Մեծարենցի «Ըլլայի, Ըլլայի» շարքի նրբին արձագանքը.

Կուղեմ հիմի փլե գուռնեն—հարրած ըլիմ մինչե էկուց,
Ամեն մարդու ընկեր ըլիմ,— ու բաց ըլիմ մինչե էկուց,
Ֆայտոն եստած՝ անցնեմ քուզով, պատոհանից վրես եայն,
Եշիս անքուն սիրտ ընկեր—ու լաց ըլիմ մինչե էկուց,
Խելքս քամուն, Հովին տված՝ երթամ ընկեր դուքան ու բազ,
Ընկերների սուփիրն գինի ու հա՛ց ըլիմ մինչե էկուց,
Երթամ—ուրիշ գոզալների փրկը զնեմ գուխս տաք,
Քո էդ անուշ, ազի՞զ տեսքով հարրած ըլիմ մինչե էկուց:

Տողերի մեջ ևրկում է աշխատքիվ Զարենցը՝ մարդկային փոքրիկ «մեղքերով», սիրո էքստագով, կրքի ու զգացմունքի խննիլությամբ, զերմաշունչ գիշերներով, տարրիանքով ու աշխատության բացառիկ տարերով, խառնվածքի կրակված և անհանգիստ գծերով, որոնք նրան խորապես տարբերում են մյուս բանաստեղծներից:

Այդ բուռն տարերքի ծնունդն էր նաև գրեթե նույն օրերին գրած (1921) «Ութնյակներ Արևին» շարքը: Դա արբեցման, արևի, զերմացած մարմնի, առողջ տարերքի մի յուրօրինակ ներբողագրություն է: Այս շարքը նա գրել է «Գալանտ երգերց» և «Փողոցային պշուռչուց» առնվազն մի տարի հետո, բայց այստեղ այլևս չկա հոգեկարգ ապրող գեղեցկությունը, հեղձուցիլ զերմոցը, սալոնի հիվանդ կիրքը, մեռնող կյանքի ծույզ ոիթմբ: Ինչ-որ հրաշքով նոր շարքի մեջ ծնվում է խընդության, վայելքի, արևային տարրանքի սանձարձակ կիրքը: Արևը վառվում է բանաստեղծական երկնքում, ցրելով տրխության ամպերը, ծնվում են նոր տրամադրություններ, կըրքեր, գրգիռներ, պատկերներ: Արևի վրա վրնջում են «ձիեր ոսկենալ», աշխարհը բորբոքվում է, մարդը տենդի, հոգեկան և մարմնական հրդեհի մեջ է:

Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում,
ինչ որ լավ է՝ միշտ վառ կմնա.
Այս արև, այս վառ աշխարհում
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛:
Մոխրացի՛ր արևի հրում,
Արեկից թող ոյինչ լմնա, —
Այս արև, այս վառ աշխարհում
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛:

Արև աշխարհ, հրդեհվող օր, վառվող մարդ, — ահա նոր տրամադրություններ, սիմվոլներ, նոր ապրումներ, որոնք երեան էին եկել նաև հեղափոխական պոեմներում («Ամբոխներ», «Սոմա»), «Առավոտ» շարքում, իսկ «Ութնյակներում»՝ ստացել նոր բաղադրություն: Այստեղ իրար հետ մի տեսակ խառնվել են ոգեկան թոփշը, առօրյան, մարմնական տենչը:

Թորք մի աղջկի զարկեց ձեռով իր բոց կոնքին
Ու վերեից խնդաց զվարի ու ոսկեծան: —
Հազար վարդեր կրակվեցին շուրջը, կողքին,

Ժաշա՞ր իւսիւսչ, ու պատճան օր, ու ծիածան:
Կ աղջր ծիաց հնշտանք-ու տապ, թոյն ու գրգիռ,
Դաշտերը խաս ծաղիկներով ծփծփացին: —
Աշխարհը՝ ալ, նարնջագույն, վառքը-կարմիր,
Աղջր-հրաշքը ու խնդություն արեգնաձին...

Ստեղծվում է ուժի, կրքի, առողջ մարմնի, առնական տենչը գեղեցկության մինոլորտ, տարածվում ցնծագին տրամադրությունը:

Որտեղի՞ց է զալիս այս ամենը: Կյանքից: Բայց կյանքը դեռ այդ հանուր ցնծության փողոցը չէր, հայկական մինուրուրում դեռ ապրում էր հին մղձավանջը, ցավը: Բանաստեղծի մեծությունն էլ այն է, որ հակասական-դժվար տարբերքի մեջ ծնվող նորի մեջ տեսնում է արդեն ծաղկուն առավոտ:

Այս, հոգիս մի նո՞ր խոսքի
Արևոտ շունչ է կիզում...

«Ութնյակների» և «Տաղարանի» մեջ զգացվում է նոր խոսքի արևոտ շունչը:

Առօրյայի ու սովորականի մեջ դժվար է հայտնաբերել բանաստեղծականը, գեղեցիկը: Այնտեղ չկան ընդգծված էֆեկտ, արտակարգ իրադարձություն, ցնցող, արտասովոր անցքեր, որոնք փոքրիկ տաղանդների գրչի տակ էլ կարող են հնչել, դառնալով ազգեցիկ ու ներգործուն: Հանճարի ուժն էլ այն է, որ նա կարող է հրաշագործել բոլոր ձեերի մեջ, ամենուր զնել իր անջնջելի կնիքը: Զարենցի համար ստեղծագործական մի նոր էջ էր այդ առօրյայի նվաճումը:

Բայց հարցն այն է, որ նա առօրյայի պատկերներին տալիս է նաև հոգեբանական ու փիլիսոփայական խորություն, մրցելով իր մեծ նախորդների հետ: Հենց այդպիսի լարման ծնունդ է «էլի գարուն կգա» թախիծով օծուն և լույսով ողողված պատկերը, գարնան, սիրո և գեղեցկության անվերջ ընթացքի փոխակերպության երգը: Դա երիտասարդ Զարենցի երազած ներդաշնակ կյանքի, բնական թախծի, պայծառ սիրո ու հողի, աստծո, այսինքն՝ մեծ բնության երգն է, որի համար հայկական իրականությունը 10-ական թվականներին չէր տալիս հող ու հիմք, չէր դառնում ամուր պատվանդան:

Բանաստեղծական ինքնազրկման այս ցավը նրանից առաջ երգել էր Սիամանթոն, «մերժելով» Արևմուտքի և Արևելքի իմաստության, կյանքի, բնության և սիրո երգի հարուստ ավանդները, բանի որ նրա բանաստեղծական հայացքը հայ իրականության մեջ արյուն, միայն արյուն էր տեսնում:

Այսպես, ահա, պատմական բախտի փոխակերպությունները անողակիորեն, բայց տիրական շեշտով հեղաշրջում են նաև ստեղծագործական հոգեբանությունը, նորովի լուծելով հայ բանաստեղծի դրաման, կենսական լիցքեր ու բազմազանություն հաղորդելով բանաստեղծությանը. նոր տրամադրություններին միանում է նաև սիրո հավերժական մեղին...

Էլի գարոն կպա, կրացվի վարդը,
Սիրեկանը էլի յարին կմնաւ:
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլրովի երգի էլի՝ սարին կմնաւ:

Ուրիշ բլրուկ կդա կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Խնչ որ ե՞ս չեմ ասե—նա՞ կասե վաղը.
Օրերը ծուխ կըլին, տարին կմնաւ:

Հազար վարդ կրացվի աշխարհի մեջը,
Հազար աշք կիացվի աշխարհի մեջը.
Հազար սիրտ կիսովի աշխարհի մեջը,—
Էշիի կրակ կըլի՝ արին կմնաւ:

Ուրիշ սրտի համար կհաւիլի խոռեկը,
Կրացվի շուշանը, վարդերի տունկը.
Գոզալը լաց կըլի, կընկնի արցուքը—
Գերեզմանիս մարմար քարին կմնաւ:

Այսպես էլ կարող էր գրել երիտասարդ Զարենցը, որը հասակ էր առել աղետների, աղմուկների, արյան ու մաքառումների մեջ, ստեղծել ուժի և ցավի պոեզիա, կարող էր գրել այսքան նուրբ և իր սրտից կարթ գցել ընթերցողի սիրտը.

Գոզալը լաց կըլի, կընկնի արցունքը—
Գերեզմանիս մարմար քարին կմնաւ:

«Ճաղարանի» մեջ ստեղծվում են երգի նոր ավանդներ: Զարենցի բազմերանգ ձիրքը, բորբոքում խառնվածքը իր նոր սկիզբներով պոեզիայի վրա թողնում է բազմակողմանի ազգեցություն, լիցքեր հաղորդում շատ ճյուղավորումների, նպաստում տարբեր ոճի բանաստեղծների զարգացմանը: Ուրույն ոճի շատ բանաստեղծներ ջուր էին առնում նրա ստեղծագործության տարբեր ակունքներից: Այժմ արդեն նրան էին դիմում սիրո և բնության, պայքարի և բաղաքական իդեալների երգիները, էպիկներն ու լիրիկները: Բոլոր-բոլորի համար նա բացում էր ուղիներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ

(«Ես իմ անուշ Հայաստանի...»)

Զարենցը ամուր պատվանդան է զնում նաև մի ուրիշ թեմայի, մի ուրիշ ավանդի համար, սովետահայ գրականության մեջ բացելով երգի մի նոր երակ, մի նոր հոսանք: Դա Հայաստանի երգն էր, Երկիր Նահիրի նոր երգը: Նա մի նոր սկիզբ է զնում թեմայի, նյութի, կենսափիլիսոփիայության, հոգեբանության և ոճի ասպարեզում, յուրովի շարունակելով և արգասավորելով անցյալի ավանդները, ինքն էլ ստեղծում է նոր ավանդներ գալիքի համար, ինչպես միշտ, աշակերտի գերից արագորեն մտնում է ուսուցչի գերի մեջ:

Հայաստանի թեման նրա ստեղծագործության մեջ միշտ էլ եղել է կենտրոնական: Զարենցն իրավունք ուներ գրելու՝ «իմ Հայաստան յարին եմ սիրում», քանի որ նրա մուսան անդավաճան էր եղել Հայրենիքին, բերել էր ներշնչանքի բազում պահեր, որոնցից ծնվել են խորունկ սիրո, ծանր ցավի, հույսերի ու կորուստների, անկման ու հարության նվազներ, ցավոտ երազներ, շարշարանքի ու մահվան տեսիլներ: Ժամանակի իմաստով ամենամուր «Մահվան տեսիլն» էր, գրված 1920 թ. Հոկտեմբերին: «Մահվան տեսիլը»՝ հայկական ցավի խտացումը, ծնունդ է առել, կարելի է ասել, մահվան ու կյանքի, անկման ու հարության սահմանագծում: Եվ անգամ այս ողբերգական պատկերի մեջ Զարենցը փորձում էր խոսել գալիքի հետ:

Բայց մենք կրկին կանգ ենք առնում գրական, կենսական-քաղաքական երևութիւնի փոխության և բանաստեղծական հոգեբանության նոր խմբումների առջև:

Անցնում է մի փոքր ժամանակ, մեկ-երկու ամիս, Հայաստանում փոխվում են կարգերը, նոյեմբերի 29-ին հեղափոխությունը հաղթանակ է տանում տանջված հողի վրա: Եվ ահա փոխվում են նաև բանաստեղծի հոգեբանությունը, տրամադրությունը, ոճը, ուրույն ընթացք է ստանում հայրենիքի երգը: Դեռ 1920 թ. մայիսյան դեպքերի ազեցության տակ գրված ուղիղումներում Հայաստանը երևում էր էպիկական գծերով, քնարական հերոսը օժտված էր ներքին ուժով և հպարտությամբ: Բայց մայիսյան անցքերի դրամատիկ վերջաբանը ծանր ազեցություն է թողնում Զարենցի վրա:

Քաղաքական վերածնության օրերին Զարենցը սկսում է որոնումները արդեն բնական կյանքի հուն մտած, ազատագրված հայրենիքի սիրո երգի համար: Այդ որոնումները, բնականաբար, եղել են տևական, բանաստեղծը ձգտել է ողբերգական շեշտերից անցնել զորության, ուժի, հարատև արժեքների լավատեսական երգին:

Որոնումների և նորագույն տրամադրությունների բովում էլ ծնվել է սիրո հանճարեղ երգը՝ «Ես իմ անուշ Հայաստանին...», ամենածոլովրդական և սիրված բանաստեղծությունը՝ հայ հայրենիքի մասին: Ավետիք հուահակյանն այդ բանաստեղծությունը համարում է հայրենիքի մասին աշխարհում երբեք գրված ամենագեղեցիկ բանաստեղծությունը: Թերեւ ավելի ճիշտ կլիներ ասել, որ ամեն մեծ պոեզիա ունի իր «Ես իմ անուշ...»-ը, յուրահատուկ ազգային երգը, որը հարազատ է նաև մյուս ժողովուրդներին:

«Ես իմ անուշ...»-ը ծնվել է արտասովոր պոռթկումից, հոգեկան հրդեհից, կրակված սրտից: Բայց ու այն հրդեհն է, որ բորբոքվել է տարիների մխացող կրակից, ցավատանչ սիրուց ու երազներից, ու այն հոգեկան թոփեքն է, որ բորբոքվել է ենթագիտակցական աշխարհում, բազում լիցքերից ու տրամադրություններից: Ուրիշ բանաստեղծ էր կարող ստեղծել այս գլուխգործոցը, քանի որ Հայաստանի սիրո երգը կարող էր ստեղծել միայն այն բացառիկ տաղանդը, որը ու միայն երգել է նրա ցավերը, այլ նաև անձնապես կիսել է մեծ դժ-

բախտությունները և փոքրիկ ուրախությունները, ցավագին հույսերով սպասել հարության օրվան:

Բայց այդ ընդհանուր նախապատրաստության և հոգեբանական լիցքերի հետ միասին, այդ բանաստեղծությունը ունեցել է նաև երկունքի ուրույն շրջան: Մինչև գլուխգործոցի ծնննդը Զարենցը գրել է ներքնապես նրան նման մի ուրիշ բանաստեղծություն՝ «Հայաստանին» խորագրով: Ինչ-որ նոր ու գրավիչ բան կար նաև այս բանաստեղծության մեջ: Զարենցը խոսք է բացում ցավերով, զոհերով, վերքերով, հանձարներով հարուստ Հայաստանի անցած ուղու և գալիքի, այսինքն՝ հավերժական նանապարհի մասին: Սա արդեն մի նոր ըմբռնում էր.

Հազար ու մե վերք ես տեսել—էլի՛ կտեսնես,
Հազար խալիք ձեռք ես տեսել—էլի՛ կտեսնես

Աշնան քաղած արտի նման՝ հազա՞ր զոհերի
Զավագաքած բերք ես տեսել—էլի՛ կտեսնես:

Գլուխդ շոր քամուն տված պանդուխտի նման
Հազա՞ր տարվա հերք ես տեսել—էլի՛ կտեսնես:

Նարեկացի, Ծնորհալի, Նաղաշ Հովնաթան—
Խելքա՞ն հանճար, խելք ես տեսել—էլի՛ կտեսնես:

Քո Զարենցին լեզու տվող երկի՛ր Հայաստան,
Հազա՞ր ու մի ե՞րգ ես տեսել—էլի՛ կտեսնես:

Բայց այս գեղեցիկ, ջերմաշունչ բանաստեղծությունը դեռևս թանձրացում էր, այլ մի անկեղծ զգացում, թախծի շերտերով պատված մի խոհ: Գեղարվեստական հրաշքը, որ ցնցում է մարդու հոգին, անգամ մարմինը, անսովոր գող ու սարսուր բերող այդ գեղեցկությունը ծնվել է մի փոքր հետո: Զափազանց ինքնարնութագրող է՝ «Քո Զարենցին լեզու տվող երկիր Հայաստան» տողը, ավելի ճիշտ, ու ազգացում է, և հավատամբ, և գեղագիտական անխախտ սկզբունք:

Հայաստանի սպատկերը միշտ կտնյած է եղել Զարենցի առաջ, և, ինչպես պատահել է Խ. Արովչանի հետ, բացել է նրա «բիսովված» միտրն ու սիրար:

Եվ ինչ-որ բոցավոր պահի ծնվել է նաև սիրո հանճարեղ երգը՝ «Ես իմ անուշ Հայաստանին...»:

Այս բանաստեղծությունը իր սկիզբներով հասնում է նաև Վահան Տերյանին: «Երկիր՝ Նախրի» շարքում կարելի է տեսնել որոշ զուգահեռներ: Ձուգրդպւղ տաղերը մինչև իսկ ակընհայտ են:

Սիրեց հեզ, անքեն հոգիդ,
ծվ երգերդ մեղմ ու բնկբեկ,
ենզությունք խավար ու լուս,
Աղոթքներդ գառն ու ցավոտ,
Զանգակներիդ զարկը ախուր,
ծվ խուզերիդ լուսերն աղոտ...

Վ. Տերյանի այս տողերը, թվում է, հարազատ են «Ես իմ անուշ Հայաստանիի» համապատասխան տողերին. «Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում...»: Բանաստեղծության մեջ երևում են նաև տերյանական երանգներ, համեմատություններ, ոճեր: Բայց ահա մենք կանգ ենք առնում մի զարմանալի երկութի առջև: Այդ հարազատությունը, նման եղբերը ինչ-որ գաղտնիքի շնորհիվ բնավ շեն խփում երգի անհատական բնույթին և ուժին: Տերյանի պոեզիան մեղմիկ կրակ է, որը մեղմիկ էլ շերմություն ու լրսյու է տալիս: Զարենցը այդ կրակից բորբոքում է վիթխարի հրդեհ, հասցնում բարձր շիկացման: Այստեղ երևան են գալիս Զարենցի խառնվածքի բոլոր էտական հատկանիշները՝ գգացմոնքի ուժը, մտքի շիկացումը, զորեղ ընդգրկումը, այրող կիրքը, նրբերանգի հետ միասին առաջ է մզգում ամեն իմաստով զարեղը: Այս հատկանիշները հսկայական լիցք են հաղորդում բանաստեղծությանը: Զարենցը սկսում է մի լքնաղ ներքող և մի զարմանալի կրակած մեղեղի Հայաստանի մասին:

Ես եմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սաղի ողբանվագ, ցացակումած լարն եմ սիրում,
Արևանձան ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Աւ նաիրյան աղջիկների հեզակուն պարն եմ սիրում:

Այնպես է թվում, թե բանաստեղծությունը ձևավորվում է դրական հատկանիշների թվարկման եղանակով, քանի որ Զարենցը հաջորդաբար հիշում է Հայրենի գեղեցկությունները, բայց այդ «հիշումները» ունեն ուրույն կառուցվածք և որոշա-

կի ամբողջություն: Բուռն ոգևորության պահին կրակված սիրու ստեղծել է Հայաստան երկրի պատկերը: Զարմանալի, բայց գեղեցիկ իրողություն: Այս բանաստեղծության ամեն մի տող ունի որոշակի տեսակարար կշիռ, բերում է Հայաստանի հոգևոր, աշխարհագրական կամ քաղաքական ու պատմական մի հատկանիշ, հայկական խառնվածքի բնորոշ գծերից մեկը: Փոքր ծավալի մեջ նա ներկայացնում է Հայաստանը, երկնքից մինչև երկիր: Այսաեղ կան հայոց երկինքը, լինը, զրերը, հայոց խիստ ու առնական բնությունը, ամռան արևն ու ձմեռվա վիշապածայն բուքը, հայոց երգը, պարը, գիրը, հայոց տառապանքն ու հպարտությունը: Բանաստեղծը ընթերցողին տանում է հայ գեղջուկի խրճիթը, հպարտամյա քաղաքները, խոռում ժողովրդի հոգևոր գանձերի, երգի, խոռքի, բառի, մտքի մասին: Ստեղծվում է գեղեցկության մի թանձր տարերը, կերպավորվում է Հայաստանը:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, զրեր զինչ, լիճը լուսեւ,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապածայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը ու
Ռ հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Եվ, իհարկե, նա բնավ չի մոռանում իր երկրի վերքերը:
Տողը ձեռք է բերում էմոցիոնալ և իմաստային ծանրություն,
սիրո պայծառ պատկերի միջով կրկին անցնում է արյունոտ-
ված ու վիրավոր հայի ցաված սերը:

Խըշան էլ ո՞ւր սիրոս խոցեն արյունաբաժ վերքերը մեր—
էլի՛ ես որը ու արնավառ իմ Հայաստան—բա՛րն եմ սիրում:

Սա պատմություն է, քաղաքական շատ մոտ անցյալ, սա
արյան ու կովի, ցավի ու տառապանքի արդեն զարմանալի
քնքացած, բայց խորունկ ընդհանրացումն է երկու տողի մեջ:

Զարենցի արվեստի մեջ մշտապես առաջ է մզգում մի կտրելոր առանձնահատկություն: Նա մշտապես տեսնում է էականը, բեռնաթափվում մանրամասներից, երկրորդական հատկանիշներից, մանր զգացումներից: Մտքի զորեղ շողարձակումները անակնկալ և անսպասելի լուսյու են սկսում երեվութների, անցքերի ու իրերի վրա, բացում ընթերցողի տեսողական ու դիտողական հնարավորությունները: Երևակայության թուշքով և մտքի շողարձակումներով Զարենցը մի

փոքրիկ բանաստեղծության մեջ ստեղծում է երկրի կերպարը և երկրի մարդու ցաված տիրո, հավերժական սիրո բոցավառ պատմությունը: Զարմանալի է: Ի՞նչ ներքին գաղտնիքով, ի՞նչ անսովոր ուժի շնորհիվ է նա մի փոքր բանաստեղծության մեջ հասել այսպիսի խտացման: Մի օտար ընթերցող այստեղ կարող է գտնել հայոց պատմության և քաղաքական ծանր բախտի արձագանքը, հազարամյա անցյալի ստեղծածը, պոեզիան, հոգեկան վերելքները, կարող է տեսնել հայոց ուրույն բնությունը, մինչև անգամ երկնքի գույնը, կորուկ հակադրությունները, խրճիթների պատերը, քաղաքների հազարամյա քարը, հայոց աղջկների նազանքը: Ինչպես է կուտակվել այս հարստությունը մի բանաստեղծության մեջ, որը թվում է մի հին ու հարազատ երաժշտություն, որտեղից այս ճանաշողական հսկայական նյութը մի բանաստեղծության մեջ, որը հնչում է որպես ոգևորություն ու կարոտի մի քնքազին մեղեդի և սիրո հիմն: Այս բանձրացումը և հատկանշերի խտացումը մի բանաստեղծության մեջ կարող է ստեղծվել միայն արտասովոր կենարոնացման, տարեային ուժի բոցավում խորհրդավոր պահին, երբ արարից մի ուրիշ բացառիկ ուժի շնորհիվ սահծում է նոյն այդ տարեայի, ստեղծելով մարմին ու ներդաշնակուրյուն, նյութի կառուցվածք ու պատկեր: Մեծ բանաստեղծի ծիրէը ունի մագնիսական հատկություն, շիկացման պահին իրեն է քաշում բոլոր հատկանիշները, անհրաժեշտ կամ համապատասխան երեւույթները, որոնք զորացնում են ներքին հոսանքը, նպատակ նյութի բանձրացմանը: Զարենցը մեծ հանճարների մեջ ամենազարմանալին համարում է «ներքին երկարյաց կոնտրլը», «հոգեւոր նժարի» գործոնը, «որպեսզի ոչ թե նյութը տիրապետի հեղինակին, այլ՝ հեղինակը նյութին, — սակայն այնպես, — որ չկորչի և ոչ մի կարևոր նյութի, անգամ ոստ, անգամ ոստիկ»: Այս երեսութը տեղի է ունենում բուռն լարման ու շիկացման, գերագույն էքստազի պահին, երբ բանաստեղծը երկնում է գեղարվեստական հրաշքը:

«Ես իմ անուշ Հայաստանին» արտասովոր կենտրոնացման, ներքին երկաթե կոնտրոլի ծնունդն է, որի ամրողացման մեջ բացառիկ դեր է խաղացել հոգեւոր նժարը: Այս երեսութին, անշուշտ, որոշ իմաստով ձևավորվում է նաև են-

թագիտակցական աշխարհի արտասովոր լարման պահին և բնավ էլ չի առնչվում ուացինալիստական հաշվեկշռի հետ: Ուրիշ խոսքով՝ բուն գաղափարը ծնունդ է առնում հուղական և խոհական հոռավոր ու մոտ, մանր ու մեծ լիցբերից, որոնք բնականորեն միանալով՝ վիթխարի էներգիա են տալիս բանաստեղծությանը: Այս պահին բազմաթիվ երակներ են ձրգվում դեպի կենտրոն, դեպի սիրտ, որտեղից էլ «հոգեղին» կարթ է նետվում ընթերցողների սիրտը: Ամեն, ամեն ինչ ստանում է առանձին և ընդհանուր իմաստ: Եվ ինչ խոսք, այստեղ պետք է խոսել ոչ միայն տողի, այլ նաև բառի իմաստային բացառիկ կշռի մասին: Այստեղ ամեն բառ իսկական մի աշխարհ է, ավելի ճիշտ՝ նաև հոգեբանական առանձին ընդհանրացում: Հեզանկուն պարը, հազարամյա և պատերը, վիշտապանայն բուքը, աղոք դարձած երկարագիր գրքերը, արևանամ բառը, արենավառ յարը, անհաս փառքի ճամփան (Մասիսը), լացակումած լարը, ողբանվագ երգերը, ու բոլորը, բոլորը ստեղծում են մտերիմ մթնոլորտ, դարերում բյուրեղացած տրամադրությունների ու խոհերի մի տարերք, որի մեջ բարձրանում է նաև ողարերի ժառանգ» բանաստեղծի կերպարը, թանձրանում ժողովրդի հավերժյան գաղափարը:

Եվ դարձյալ մենք կանգնում ենք զարմանալի փաստի առաջ: Ամբողջ «Տաղարանում» և այս բանաստեղծության մեջ Զարենցը պսակացեր է անում ոռմանտիկական ոնք, խոսքը զարձնում հստակ, զուրած, մտերիմ, մինչև անզամ՝ առօյա, սովորական: Թվում է, այս ծեռվ իրար հետ կարող են խոսել և սիրող զուրպը, և սեղանի շուրջ նստած բարեկամները, և երկրի անցյալի, ներկայի ու զալիքի մասին մառող մարդիկ: Դա շատ հասկանալի, բայց ծայրագույն դժվարություն ներկայացնող մի անցում էր: Զարենցը լուծում է ստեղծագործական բարդությունը: Նա գրում է հոգեկան մեծ թոփելքներով, մեծ թափով և դրա հետ միասին խոսում կանոնի լեզվով, կարծես զրուցում է մտերիմի հետ, ամենասրատառութ թեմաներով: Ամեն դեպքում նա ժողովրդական բախտի պատմության անհատական արտասովոր բնկալման և զրուցական մտածությանը հարազատ մի հետական պատում, ստեղ-

ծում բարձր լարվածություն, ամրապնդելով ռեալիստական կենարար ռեթ՝ ուղիս պոեզիայի բուն հարսացուցիչ:

Այս բոլորի շնորհիվ ստեղծվում է հպարտ սիրո բարձր միջնորդութ, ուր գծվում են Հայաստան երկրի հմայքը, դարերից բերած և գալիքին պատկանող հավերժական գեղեցկությունները:

Իմ կարուտած սրտի համար ո՞չ մի ուրիշ հեքիաթ չկա.

Նարեկացու, Քուշակի աես լուսապատճեն ճակատ լեա.

Աշխարհ անցի՞ր, Արարատի նման ճեղմակ պատթի իւա.

Ինչպես անհաս փառքի ճամփա՛ կը կիմ Ատահա սա՞ն կիմ սեղամ:

Այս ընդհանրացումը՝ երկրի գեղեցկության և հավերժի մասին, ստիպում է ավելի ներհուն լինել: Զարենցին մեղադրել են ազգային սնապարծության ու շափազանցությունների մեջ Այսպես, օրինակ, Ն. Դարավայնը գրել է. «... Ես իմ անուշը-ի «իմ կարուտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա» և հաջորդ տողերում բացարձակապես հանդես է գալիս մանրբուրծուական հղկված ազգայնական հոգեբանության ու աշխարհայեցողության մի վարիանտը»¹: Նույն շրջանում Վանանդեցին բանավիճելով Սուրխաթյանի հետ, գտնում էր, որ Սուրխաթյանը կոնտրաբանով ցանկանում է ծածկել Զարենցի ազգասեր ոգին, «հեղափոխության գրոշակի կտորով փաթաթելով, թաքցնում է Զարենցի ազգային ոգին»²: Ուրիշ երկերի շարքում նա նշում է նաև «Ես իմ անուշ Հայաստանին», որը Սուրխաթյանը զետեղել էր «Գրական գոհարներում»:

Այժմ արդեն ավելորդ է խոսել այդ բանաստեղծության գաղափարական հակառակորդների գեմ, ժամանակը ցույց տվեց ազգային արժեքների թերագնահատման, ազգային հպարտության և հեղափոխության ներքին կապի անտեսման սնանկությունը։ Բայց ամեն ինչի հետ միասին, ձախ քննադատներից շատերը տկար էին բանաստեղծական հոգեբանության գաղտնիքների ոլորտում, իսկ դա շատ կարևոր էր. սիրո հոգեբանությունը արվեստի մեջ ունի իր օրենքները, իհարկե, կապված գեղարվեստի օրինաշափու-

բոլոր արդեւ կարող է ծնվել նման դարակազմիկ բանաստեղ-
ծովիյուն։ Միայն պատմական և հոգեբանական ժանրակշիռ
հանգամանքներում։ Չարենցը հենց այդ հանգամանքների մեջ
էր։ Անցյալից նա բերել էր տառապանքի հսկայական բեռ։
Նա շատ հաճախ էր կանգնել զարհուրելի պատկերների առաջ
և զգացել հայրենիքի կործանման տափապը։ Մահվան
զգացողությունը և տագնապները, ահաելի ցավը խոր կնիք
էին դրել նրա խառնվածքի վրա, նվաճել ենթագիտակցա-
կան աշխարհը։ Հենց այդ ճնշման տակ կարծրացել և յե-
տացել էր նրա բանաստեղծական դիմադրության ուժը, տա-
ղանդը ստացել էր ցավին համապատասխան զորություն։
Արգեն «Վահագնի» մեջ, ինչպես տեսանք, արտացոլվում էր
հայոց հինավորց առասպելի, հազարամյա հույսերի և քա-
ռության աստծո անփառունակ կործանումը։ Թշնամիները
քարշ են տալիս Վահագնի դիմակը և քրքչում։ Ամեն ինչ միջ
է, երազ, հեռավոր առասպել, մահվան ուրվականը սավառ-
նում է Վահագնի հայրենիքի վրա, իսկ հայ նորագույն
կյանքի հիմքը ընկել են անդունդ։

Ու մեկը այդպես չէր զգում ճակատագրի հարվածը, ուր
ապրում ցավի բովանդակ խորությունը, ինչպես նաև Չափա-
գանց բնական է, որ հենց նա՛, նույն Չարենցը, առաջինը

¹ «Գրական դիրքերում», 1927 թ., № 3—4:

² Նույն տեղում, 1927 թ., № 5,

խորությամբ տեսավ լուսավոր ճամփաները, ամբողջովին, անվերապահ, մեծ շիկացումով ընկալեց հայրենիքի վերածնության ճակատագրական պահը և կյանքի զարդումքը: Այս մինչուրատում ծնվեց Հույսի, Հապարտության, ուժի ու վերածնության երգը, Հայաստանի սիրո երգը, որը աբեղակի շողերի պես կենարար լույս տարածեց հայ նորագույն բանաստեղծության տիրամած աշխարհում:

Գրական երևույթի ծնունդը կապված էր հասարակական նորագույն հոգեբանության, ժողովրդական տրամադրությունների, կենսական տեխնոլոգիան հետո Զարենցը շափազանց զգացուն էր ժողովրդի հոգեբանության մեջ տեղի ունեցող տեսանելի և անտեսանելի փոփոխությունների նկատմամբ։ Եատ շուտ էր զգում և շատ արագ էլ արձագանքում։ Կենսական զերածնության առաջին երևույթները նրա հոգում ծնում էին գալիքի խորհրդավոր և պայծառ պատկերներ։ Արտաքին հազարավոր գրգիռների ճնշման տակ բանաստեղծի հոգում օրորի թանձրասում և հզորանում է մի սրբազն զգացում և զաղափար՝ Հայաստանի և հայ մարդու կյանքի մասին։ Տարերային զգացումների ու մտածումների կուտակումը դառնում է զորեղ, անսովոր հոսանք, որի մեջ այլևս չեն կարող դիմանալ հոգեբանական ոչ մի պատճեղ, ավանդական ոչ մի արգելք։ Ե՞րբ է ծնվել բանաստեղծությունը, Բնավ էլ ոչ հայրենիքի զորության պահին։ Բնավ, Հայրենիքը նոր-նոր էր կյանքին դառնում։ Դա մահամերձի հոգեգարձի շրջանն էր, ևր երեսում են վերածնության առաջին նշանները, կյանքի վելընձյուղումն ու շարժումը։ Մահամերձ Հայաստանը դանդաղ ստրի էր կանգնում, իսկ փողոցներում դեռ մեռնում էին սովահարները, գաղթականները, որբերը։ Բայց արդեն լավում էր շինարարական աղմուկը, զգացվում էր տնտեսական շարժումը, բացվում էին անարյուն առավոտները...։ Կա՞ ամելի մեծ երջանկություն, քան հարության փաստը, հարացատի փրկության հաստատուն նշանները և մեծ հույսը զալիքի նկատմամբ։ Այս իմաստով «Ես իմ անուշ Հայաստանին ժամանակի ծնունդն է և անկրկնելի...։ Բանաստեղծի մեծությունն այն է, որ նա գեռ առաջին նշանների ու սաղմերի մեջ արտասովոր ուժով ընկալեց Հայկական բախտի փոփոխությունների հասարակական ուղղ իմաս-

տը, բոցավառ սիրով հյուսեց իր հայրենիքի երգը, որին կըր-
կին վիճակված էր դարերի, հազարամյակների գոյություն։
Այսպես, ահա, քաղաքական փաստը, պատմական բնույ-
թի երևույթը, հասարակական ու կենսական հարաբերու-
թյունների բովում տրոհվելով, այսինքն՝ դառնալով կենցաղ,
կենսաձև, տնտեսական, բարոյական կապեր, միջնորդավոր-
ված անցնում է բանաստեղծին։ Անձնական անմիջական
տպագրությունների և հասարակական զգացումների հրս-
կայական ճնշման տակ ուժանում են նոր սերմերը, զորա-
նում է ոգեգորության լարվածությունը, ճնվում է մեծ բա-
նաստեղծությունը։

Ահա այսպիսի միտք ու նպատակ, այսպիսի ենթատեքստ
ունի Զարենցի «շեղումներից» մեկը, որոց խաչաձևումներից
այնքան բնականորեն ծնված «Տաղարանը», Ավանդական և
ամբողջովին նորարարական մի զարմանալի շարք: Այս երե-
վույթն ըստ Էռիթյան խոսում է նաև անդրադարձի մասին:
Նոր խոսքը, արտակարգ ու արտասովոր թվացող երևույթը,
ներքնապես սերտորեն կապված էր Զարենցի ստեղծագոր-
ծության ողջ տրամաբանության հետ: Ավելի ճիշտ՝ զար-
գացման անհրաժեշտ օղակներից մեկն էր: Ժամանակն
ուղղում է միամիտ ընթերցողի և քննադատի մոլորությունը:
Շեղումներն արդեն հնչում են ուրիշ ձևով, գրականության
պատմության և ընդհանուր հոգեբանության մեջ գտնում են
իրենց տեղը, ընկալվում իրրե բնական և անհրաժեշտ երե-
վույթ:

«Σωλαριανό» ήταν μια επαναστατική δραστηριότητα στην οργάνωση της αγροτικής κοινωνίας στην Ελλάδα.

«ԵՐԿԻՐ ՆԱԽՐԻ» ՎԵՊԸ

ԵՐԿՈՒ ՎԱԻՐԻ, ԵՐԿՈՒ ՀԱՅԱՁՔ

Եկ այնուամենայիվ, պատմությունն այս գեղքում էլ ծայր է առնում Վահան Տերյանից, Քննադատությունը շատ է խոսել երկու «Նախրիների»՝ Տերյանի բանաստեղծական շարքի և Զարենցի «Երկիր Նախրի» վեպի միջն եղած հակասության մասին, բայց հաճախ մոռացել է մի ուրիշ, նույնը առ կարենոր բան, անտեսել նախասկիզբը, ստեղծման հոգեբանական ու հասարակական շարժառիթը, ուր երևան է գալիս նաև երկու բանաստեղծների ու երկու «Նախրիների» հարազատությունը: [Վահան Տերյանի «Երկիր Նախրին» ըստեղծվել է 1910-ական թվականներին, այսինքն՝ ժողովրդի պատմության ամենաաղետալի ժամանակներում, արյան ու անընդմեջ կոտորածի տարիներին, թանաստեղծի խոսքը այս տարիներին պետք է ունենար երկու շեշտված հատկանիշ, նա չէր կարող շրջանցել աղետները, այսինքն՝ ողբերգությունը և դրա հետ միասին նրան չէր կարող հուզել ամենապլիսվորը՝ ժողովրդի ապագայի հարցը] Վահան Տերյանը ստեղծում է մեր տառապանքների ներքին պատմությունը, արտահայտում է հայոց վիշտը, մորմոքը, հայկական թախիծը, որ պարուրել էր ժողովրդի հոգին: Բայց դա թիւ էր, շատ թիւ, դա միայն ժողովրդին բերում էր իր վերքերի ու ցավերի պատկերը այն պահին, երբ նույն այդ ժողովուրդը դատապարտված էր: Եկ ահա բանաստեղծը ամբողջացնում է հայրենիքի բախտի մասին իր նշանավոր շարքը, ստեղծելով հայրենի գեղեցկությունների, սուրբ եղբաների ու հիշատակների, հոգենոր գանձերի ու դարերի ժառանգության բանաստեղծական պատկերը: Այս բոլորի միջով՝ հանցնում է մի թանձր հայացք անցյալի, ներկայի ու գալիքի մասին:

Որբ մանուկների, անարգված հոգու, ավերված տան, տիպուր
ու թեքված ծաղիկների, դարերի ժառանգ, ուխտավոր հետ
նաիցու և արյունաներկ գիշերների մթնոլորտում Վահան
Տերյանը, այնուամենայնիվ, ընդգծում է Հայաստանի կեն-
սականության և հավերժության գաղափարը՝

Սենք մի կողմ ենք դնում բանաստեղծական նորը ու ազգեցիկ միջնոլորտը, մի կողմ ենք դնում նաև պատկեր-ներից բիոլ գաղափարը: Դա մեզ շատ հեռու կտանի, բա-ցի այդ, շատ է քննված ուրիշների կողմից (Վ. Պարտիզոնի, Կ. Գրիգորյան և ուրիշներ): Զափազանց կարեոր են նաև մտածող, հրապարակախոս, քաղաքացի Տերյանի հայացք-ները, որոնք եղել են ազգակ և բանաստեղծական շարքի, և նրա կենսափիլիսոփայության համար: Խոսքը վերաբերում է «Հոգեոր Հայաստան» նշանավոր հոգվածին, որը մի տեսակ, կարծես, մտավորականության խոհերի թանձրացումն էր: Ի՞նչ է խոսում այդ հոգվածը, ի՞նչ լույս է նետում հայ կյան-քի երկույթների վրա: Տերյանին գերազանցապես հուզում էր ժողովրդի հեռանկարների, հետաքա գոյության եղանակների, բարդ խնդիրը, մի բան, որ տանջում էր նաև թումանյանին, Շիրվանզադեին, Սիամանթոյին, Վարուժանին և առջասա-րակ բոլոր մտածող հայերին:

Տերյանը ընդհանուր տառապանքի, արդեն սրբազն
դարձած ցավի ու հիվանդագին ապրումների մթնոլորտում
փորձում է նորովի մոտենալ խնդրին, սթափ ու զգաստ նա-
յել հայկական ողբերգությանը և ժողովրդի գոյության ուղի-
ներին։ Հոգեբանական առումով դա մի դժվար, շատ դժվար
բան էր։ Հենց ինքը Տերյանը՝ ամենազգայուն մարդկանցից
մեկը, մերկ նյարդերով էր ընկալում ողբերգության ամեն
մի փաստ և ժողովրդական բախտի ծանրությունը։ «Բավա-
կան է թերթել մեր գրականության լավագույն ներկայացու-
ցիչների երկերը՝ համոզվելու համար, թե ի՞նչ նշանակու-
թյուն է ունեցել այդ հարցը մեր կյանքում, որպիսի անմո-
ռանալի ոգևորությունների, զոհաբերումների, որպիսի ծանր
հիասթափումների ու լուսմի աղբյուր է եղել մեր ոչ միայն
մտավորականության, այլ նաև ժողովրդի ամենալայն խա-
վերի համար։ Արդեն թվում է, որ եթե անգամ այդ Հայաս-
տան կոչված դժբախտ երկրում ոչ մի հայ չմնա, մենք դարձ-

յալ պիտի այրվենք նույն իղձերով, նույն ցավագին, մեզ
համար մի տեսակ կրոնական գունավորում ստացած այդ
խնդրով:

Այդ հարցի այս կամ այն լուծման ժանր տարակուսանք-ներով և ոսկե երանգներով սերունդներ են կրթվել, այդ հարցի շուրջ պտտվող գրականությամբ սնվել են սերունդները Հայության համար մի զավոտ ցնորս է գարձել այդ «Հայաստանը», մի ավետագ երկիր, որութական մի անուն։

Տերյանական այս վերուժությունը, ցավի այս ընկալումը և տարակուսանքները ինչ-որ կարեռ բան են տվել «Երկիր Նախրի» վեպին, մասնավորապես առաջարանին, նույն ցավուտ հարցը գրեթե հարադար երանգավորումներով, անգամ բնորոշումներով կարելի է գտնել և Տերյանի, և Զարենցի գրվածքներում:

Տերյանը սրբազն ցավի, կրոնական գունավորում ստացած հիվանդագին ապրումների մթնոլորտում, հաղթահարելով հոգեբանական ծովակները, առաջադրում է իր տեսակետը, փորձում իր որոնած և դտած զեղատումնը. «...Մենք անկարող ենք այդ խնդրի մասին սառնասիրտ խոսել, հանգիստ մտածել: Ավելին կասեմ, մեզ մի տեսակ սրբապրդություն է թվում, երբ մարդիկ մեր ազգի տարիներով ու տասնյակ տարիներով փայփայած գաղափարին մոտենում են սառը մտքով, անտարբեր գիտնականի ոճով: Մենք ուզում ենք ճշակ որովհետև երբ ցավ ես զգում, խոհեմ լինել չես ուզում: Մենք ուզում ենք աղաղակել, որովհետև երբ սիրելին տանջում է, խոհեմության խորհուրդներն անդոր են, իսկ այդ աղաղակի ապարդյուն լինելու մասին չեն մտածում»²: Այդպիսին էր լնդհանուր հոգեբանությունը, դժվար էր դիմադրել ազգային գգացումներին, թանձրացած ցավին, որն արդեն ավանդներ էր ստեղծել, մեծ խիզախություն էր պետք հակադրվելու «միահամուռ ու բորբոքուն տենչանքին, այդ տարերային հեղեղի բնույթ կրող, ճակատագրական դրոշմով կնքված ընթացքին»: Բոլորին հետաքրքրում է մի հարց՝ «Պետքի Հայաստան», «Հայաստանը պետք է ազ-

տագրվիս: Անտարակույս, Տերյանը ևս փայփայում է սըր-
բազան ավանդ դարձած այդ համաժողովրդական փափագը,
նվիրական տվյալտանքը, երազում է Հայաստանի ազատա-
նվիրական «արյունլվիկ հարցի» վերջնական լուծումը: Սա-
կայն նրան ճետաքրքրում են, ավելի շուտ հուզում են ավելի
մեծ հարցեր՝ թե փրկության ուղիները և թե մասնավորապես
ապագա՝ Հայաստանի վերաշնուրվյանը. «Դա միայն նախա-
գուռն է մեր ապագա հայրենաշեն, ազգակառույց գործի...»:
Տերյանը շատ սթափ, շատ որոշ նշում է ապագա հայրենա-
շեն, ազգակառույց գործի ճանապարհ:

Ո՞րն է այդ ճանապարհը, այսինքն՝ Հայաստանի ապա-
գայի ստեղծման բուն եղանակը։ Տերյանը համաձայն չէր
այն մարդկանց չետ, որոնք Հայաստանի ողջ ապագան կա-
պում էին միայն Արևմտյան Հայաստանի փրկության հետ։
Ինչո՞ւ Դա շոշափում է միայն ֆիզիկական գոյության
ինդիրը, — ասում էր Տերյանը, — այնինչ կան ընդհանուր
հայկական հարցեր։ Նա թերահավատ էր «մի հարվածով»,
թեկուզ հերոսական ճիգով ստեղծվելիք Հայաստանի», ինչ-
պես նաև արևմտահայ հարցի արմատական լուծման նկատ-
մամբ, թեև ինքը մինչև կյանքի վերջը տանչվում և մաքա-
ռում էր արևմտահայ հատվածի փրկության համար։ Հայ
կյանքի խառն ու շփոթ ժամանակներում, հակադրվելով
արորժուական մտավորականության տեսակետներին, նա ա-
ռաջ է քաշում հոգենոր Հայաստանի ստեղծման ինդիրը,
որպես ուղի, ճանապարհ, ազգի կառուցման բուն եղանակ։
Ի՞նչ բան է հոգենոր Հայաստանը. «Հայության հավաքում»
կամ «Հայության կազմակերպում» գաղափարական իմաս-
տով, — ահա ինչ եմ հասկանում ես «Հոգենոր Հայաստան»
ասելով։ Դա այն կուլտուրան է, այն կուլտուրապես կազ-
մակերպված ժողովուրդն է, որի գալուն մենք կուզեինք Հա-
յաստագու։

«Հոգեստ Հայաստան»

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, Հատ. II, Երևան, 1961, է. 303—304:

2 Նույն պեղամբ

Երկու շեշտված նպատակ, ազգային հոգեւոր ուժերի կազմակերպում՝ որպես ինքնուրբյան առհավատշյա, հայ լեզվի, գրականուրբյան և արվեստի զարգացում՝ հենվելով ոչ թե ենուրական Հայաստանի գաղափարի, ոչ թե արտաքին փոխինուրբյան հրաշք հոգեւորի, այլ հոգեւոր արժեհեների անդադրում սաեղծման վրա: Դա նշանակում էր ոչ միայն հայկական խառնվածքի և հոգերանուրբյան ամբողջացում ու ամրապելում, այլ նաև յուրօրինակ մրցուրյուն ու մաքառում զարգացած ազգերի հետ, յուրօրինակ դիմադրուրյուն ամեն տեսակ հոգեւոր ու ֆիզիկական ննջման: Այս խնդիրը նա լայնորեն դնում է նաև «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ: Կոփվ է հայտարարում լիբերալ և պահպանողական թեսերի գրական քաղաքականության, ծիսական, սահմանափակ ըմբռումների դեմ, գտնելով, որ հայ հոգեւոր կյանքը պետք է լարվի համառուսաստանյան դեմոկրատիայի տրամադրություններով, իսկ հայ գրականությունը պետք է գնա դեպի Նվրոպա, գրական բարձունքները, ապրելու համար պետք է մրցի քաղաքակիրթ ազգերի արվեստի նվաճումների հետ:

Այսպես բազմակողմանի ու լայն է դիտում նա հոգեւոր գործոնի նշանակությունը, մինչև իսկ ընդգծում, մի բացառիկ բնույթ է տալիս հոգեւոր գործոնին, ունենալով այն տեսակետը, թե «Ենուրական կորուստները միշտ կարելի է վերադառնել, իսկ հոգեւոր կորուստն անդառնալի է»:

Բայց, ահա, այստեղ ծագում է հաջորդ հարցը: Ինչո՞ւ էր Վահան Տերյանը այդպես թանձրացնում հոգեւոր Հայաստանի գաղափարը, վեր դասելով և նյութականից, և տարածությունից, և սահմաններից: Ի՞նչ էր պատահել: Եվ արդյո՞ք նա մեն-մենակ էր իր նոր հարցապնդումների մեջ: Այդ աղետալի օրերին Հայաստանի հոգեւոր արժեքների գնահատության, ազգային ներքին հոգեկան ուժերի կազմակերպման խնդիրը՝ մինչև իսկ տարերային բնույթով, կարծես դարձել էր ընդհանրական: 1910-ական թթ. վերագնահատվում էր հայոց անցյալը, պոետիան, ճարտարապետությունը, ժողովրդական բանահյուսության անբավ հարստությունը, առաջ էր քաշվում դպրոցի, լուսավորության, գրականության, ակադեմիայի խնդիրը: Վիթխարի դեր էին կատարում հայ

մտավորականությունը, գրողներն ու գիտնականները, տարվում էր հասարակական, կազմակերպական մեծ աշխատանք: Թրյուտովի զեկուցումները, թորամանյանի հետազոտությունները, Վ. Թրյուտովի և Ս. Գորկու կազմած ժողովածությունները, գրական-կուլտուրական հետաքրքրությունները, երեկոները, թումանյանի հոդվածներն ու զեկուցումները, Սիհամանթոյի «Սուրբ Մեսրոպ» կարծես նախանշում էին մեր հոգեւոր վերածնությունը՝ քաղաքական, տարածական ու նյութական անկման պայմաններում:

Ո՞րն էր այս երեսույթի բուն պատճառը: Նոր շարժումն ուներ կենսական հիմքեր, կապված էր մեր կյանքի յուրահատուկ պայմանների հետ: Տանով ալով հաղաքանակության և նյուրական արժեհեների ասպարեզում, կորցնելով թիզիկական դիմադրության հիմքերը, (ժողովուրդն ու երաժիշտական դիմադրության մասը աղետի պայմաններում ձգտում էին ամեն մտածող մասը աղետի պայմաններում ձգտում էին ամեն զեռով պահպանել զոյուրյան մյուս կովանը՝ հոգեւոր աշխարհով պահպանել զոյուրյան մյուս կովանը՝ հոգեւոր աշխարհով: Սայր էր առնում հոգեւոր դիմադրությունը և մաքառումը՝ իրերին ուժերի համար, որ, անշուշտ, այդ պայմանների համար ուժելի կամար, իրադրության մեջ, աներ ենում, շփոր ու փոփոխական իրադրության մեջ, աներ կենսական նշանակություն: Այդ շարժումը առաջադիմական էր նաև այն առումով, որ իր ներքին բնույթով ուղղված էր հայ բուրժուազիայի քաղաքական անհող լավատեսության և մշակութիւն նկատմամբ դրսորած անտարբերության դեմ: Բուրժուազիայի, ավելի ճիշտ՝ «լիբերալ-ազգասեր-բուրժուազին տեղի դնելու հայոց լիզուն, մշակույթի հայրենասիրությունը», — ինչպես նկատում է Վահան Տերյանը, — շենքերի հայրենասիրություն է, սոսկ է Վահան Տերյանը, — շենքերի հայրենասիրություն է, սոսկ էր արտաքին, ունի մի տեսակ «զողոլոգիական» բնույթ: Այդ ինտելիգենտները արհամարհում են հայոց լիզուն, մշակույթը, գրականությունը, ողին: Նրանք մեր այսօրվա արյունաթը, գրականությունը, ողին: Նրանք մեր այսօրվա արյունաթը, թամադաներն են», ո՞ւր էին լի հանդեսի «ապազգայնացած թամադաներն են», ո՞ւր էին նրանք և ո՞ւր են, երբ մեռնում է արհամարհված ու ընկած, ըայց ազնիվ ու լուսեղեն ոգին Հայաստանի, երբ մեռնում է հոգեւոր Հայաստանը»:

Այսպես Վահան Տերյանը իր հետեւրդին՝ Զարենցին, բողնում է երկու ավանդ՝ հոգեւոր Հայաստանը, այսինքն՝

Դազգային ներքին հոգեոր ուժերի կազմակերպման և ներքին դիմադրության գաղափարը և հայրենասիրության մակերեսային, բուժության բմբնումների ու բաղաքանանության վեճադառնությունը, վերլուծման սրափ հայցիք:

ԱՀա այսպիսի ավանդների առաջ կանգնեց Զարենցը:
Սկզբնապես նա, իհարկե, գտնվում էր տերյանական ըմբռունումների շրջանակում։ Եթե դրան գումարելու լինենք նաև հոգեբանական ավանդը, այսինքն՝ Հայաստանի ցալերի ու գեղեցկությունների նբացած երգը, ապա պատկերը ավելի պարզ կդառնա:

* * *

Բայց գաղափարական ու հոգեբանական ըմբռումները իմաստ ու բովանդակություն են ստանում միայն պատմական որոշակի պայմանների ու շրջանակի մեջ։ Անվերջ փոփոխությունների մեջ գտնվող կյանքը ստիճանում էր գրողներին ու մտածողներին մշտապես մնալ որոնումների ոլորտում։ Զարենցը նույնպես այդ ոլորտի մեջ էր, արդեն և խառնվածքով, և իբրև ժամանակի սպասավոր, նա զարձել էր մեծ որոնող, որն անվերջ, անդարսում մտածում էր Հայաստանի մասին։ Կարելի է ասել, նա էլ ապրում էր նույն տերյանական տագնապների մեջ, երբեմն էլ ավելի խոր և զորեղ ցնցումներով էր ընկալում Հայաստանի բախտի տարուքերումները։

ՎՃԵՐԾԱՎԵՆ, 1920 թ. երկրի կյանքում տեղի ունեցավ կայունացում, պատմությունը պատասխան տվեց ճակատագրական մի շարք հարցերի: Սոցիալիստական հեղափոխությունը լուծեց «արյունվիկ հարցը», ֆիզիկական գոյության հարցը, թեև ծանր ճանապարհին ժողովուրդը տվել էր շատ մեծ կորուստներ, կորցրել էր տարածքի և բնակչության նշանակալից մասը: Սովետական Հայաստանում սկսվեց մի ուրիշ շարժում, ֆիզիկական և հոգեոր մի վերածնություն, որը, իհարկե, բնավ հակադիր չէր նախորդ շրջանի հայ գեմոկրատիայի հոգեոր մաքառումներին, սակայն դրված էր արդեն կայուն, վստահելի հիմքի վրա, առաջ էր մզգում քաղաքական աղատության մթնոլորտում:

Բայց ամեն մի լուրջ զարգացում ենթադրում էնակ ներքին անխուսափելի հակասություններ։ Վերածնության ճանապարհին քաղաքական խնդրի լուծումը գեռաս հարցի մի կողմն էր, կային նաև ուրիշ հանգամանքներ, որոնք կարելի էին ազգային նորագույն վերելքի համար դրանցից մեկը վերաբերում էր քաղաքական կյանքի այն երևույթներին, որտեղ բատմական բաիստի այն դրական ու բացասական ավանդներին, որոնք յուրահատուկ կնիք էին դրել հասարակական հոգեբանության, մարդկանց ներաշխարհի ու հոգնոր կյանքի վրա։ Ուրիշ խոսքով՝ այս անգամ արդեն զայլիքի խնդիրը դրվում է շատ ամուր հիմքի վրա և, բնականաբար, ազգակառույց գործի շուրջը ծագում է անցյալի գնահատության և անցյալից բաժանվելու անհրաժեշտությունը։ Նոր դարաշրջանը բերում էր իր կենսաձեր, գաղափարները, մարդկային հարաբերությունները, բարոյականությունը, սոցիալական-տնտեսական և հոգնոր նորությունները։ Հենց այստեղ առաջ են գալիս բարդություններ, անտեսանելի դժվարություններ, բարոյական ու հոգեբանական ծուղակներ ու արգելքներ, զատապարտված, բայց հարատեղ պատրանքներ, վերթեր, ցավեր, նախապաշարումներ, որոնց դեմ, աչա, ծագում էր հոգնոր պայքարի անհրաժեշտությունը։

Այս պարագային մեծապես ընդգծվում է գրականության հասարակական դերը, քանի որ գրողը հենց այն մարդն է, որն ավելի լավ է թափանցում հոգեբանական ծովականը, անտեսանելի, բայց ամրացած նախապապաւորանքների, անտեսանելի, բայց ամրացած նախապապաւորանքների ու տրամադրությունների ոլորտը։ Սովետական շարումների ու տրամադրությունների ոլորտը։ Սովետական գրականությունը իր վրա է վերցնում այդ մեծ բեռը, և ասդրեզի վրա բարձրանում է ամենատաղանդավոր մարդու նդիշեցարևությունը անունը ու գործը։ Անցյալից բաժանվելու և ժողովրդին մղավանջից ու պատրանքներից բեռնաթափելու համար գրողները, այդ թվում նաև մեծ Զարենցը, որոնում են հարմար գրական տեսակներ ու ձևեր, հարմար ոճ։ Նոր գրականության մեջ, հենց առաջին իսկ օրերից, գիտակցական գրությունը անհրաժեշտությունը, քանի որ ծաղրը վում է երգիծանքի անհրաժեշտությունը, քանի որ ծաղրը անցյալից բաժանվելու ամենատպղեցիկ միջոցներից մեկն է։ Այստեղ շափականց հարմար է հիշել Մարքսի հանրահայտ գիտողությունը՝ կապված հասարակությունների և կարգերի

պայքարի ու անցումների հետ։ Մարդսը հատկապես ընդգծում է այն հանգամանքը, որ անցյալի հիշատակը ժանրանում է ժողովուրդների կյանքի վրա։ Ահա այդ անցյալից մարդկությունը «բաժանվում է ծիծաղելով», դա «պատմական մի ուրախ կոչում է», ուղղված անցյալից մնացած անախրոնիզմի դեմ։

Ահա հայ իրականության մեջ ևս անվերադարձ անցել էր ազգային միամիտ պատրանքների, անհող ծրագրերի, մոլոր գործողությունների շրջանը, սակայն անցյալի հոգեբանական բեռը, խաբուսիկ պատրանքները, հայրենասիրության սխալ պատկերացումները դեռ մնում էին։ Զարենցը, Դեմիրճյանը, Շիրվանգաղեն, կեռ Կամսարը և ուրիշներ տասնամյակի սկզբին մեծապես տոգորվում են անցյալի դեմ կովելու պարտքի վրասկցությամբ։ «Երկիր նաիրի», «Քաջ նազար», «Մորգանի խնամին», ահա այն նշանակալից երկերը, որոնք հատուկ դեր խաղացին այդ պայքարի մեջ, հասարակական ժանրակշիռ բովանդակության և գեղարվեստական արժանիքների շնորհիվ, կարելի է ասել, նոր էջ բացեցին հայ գեղարվեստական մտածողության ընթացքի մեջ։ Այս բոլորի մեջ, արդիական շեշտով, հեղաշրջող նշանակությամբ, ձևով ու խորքով առանձնանում է «Երկիր նաիրին»։ Դա եղավ հենց այն երկը, որը ներքին կոիլ էր հայտարարում հասարակական հոգեբանության, գրական մտածողության, ազգային մի շարք ավանդների անտեսանելի, բայց ձնշող ուժի դեմ։

* * *

Ի՞նչ ընդհանրություններ կան Տերյանի և Զարենցի երկերի ու հայացքների միջև։ Ահա մի շատ կարևոր և բոլորիս կողմից անտեսված հարց։ Ամենից առաջ երկուսն էլ՝ ուսուցիչն ու նախկին աշակերտը, խիզախորեն ընտրել են մի դժվար հաղթահարելի ու բարդ հերոս՝ Երկիր նաիրի, Հայաստան։ Նրանցից յուրաքանչյուրը յուրովի փորձել է ստեղծել հայրենիքի գեղարվեստական կերպարը, վերցնել նրա

1 «Մարդսը և էնգելու արվեստի մասին», 1934, էջ 66։

կյանքն ամբողջության մեջ, բազմանիստ ու բազմակողմանի թայց նրանք արդեն երկու տարբեր շրջանի հեղինակներ էին, որն ինքնին ենթադրում է հայացքների որոշակի կարգացում ու հաջորդականություն՝ նույն կյանքի ու նույն երկույթների մասին։ Վահան Տերյանը գրում էր ողբերգության մեջ գտնվող Երկիրի նաիրիի մասին։ Զարենցն ստեղծագործության մեջ նաև տերյանական օրերին, աղևտի օրերին, մի փոքր հետո արդեն անցել էր մի ուրիշ կյանքի շրջան։ Նա գործ հայությունները արդեմ կատարել է անհաջապես գրադարական ազատագրությունից անմիջապես հետո, խաղաղված հողի վրա Երկրորդը։ Տերյանն ու Զարենցը, երկուսն էլ ունեն գրեթե նման հայացք՝ նախորդ շրջանի բաղաքական ուժերի, ազգային կուսակցությունների շրջանի բաղաքական ուժերի, անհաջապես մշակած անհող, անկատաւական մտավորականության մշակած անհող, անպատասխանատու, մոլոր ծրագրերի նկատմամբ։ Երկուսին էլ անվերջ հուզում էր Երկիր նաիրիի ծագման, ճանապարհի, անկեղծ հայրենատիպ երևան է գալիս մի թանձր, բնական, անկեղծ հայրենասիրական հոսանք, որը լարում է ընթերցողին, մեծապես ազդում հոգու, անգամ ֆիզիկական հակեցվածքի վրա։ Ի դեպ, այս երկու հեղինակներին հակեցվածքը է դառնում նաև մեծ թումանյանը («Հայրենիքիս հետ»)։

Բայց այստեղից սկիզբ են առնում նաև տարբերությունները, պատմականութեն հասկանալի ենթին վենեն ու հակառակությունները։ [Ի՞նչ բան են Երկիր նաիրին, երա անցյալը, ենեկան, ո՞ւն է երա զայիը։ Այս հարցերին գեղագիտ մտածող Զարենցը տալիս է երա պատասխան, մի տեսակ հոխացնելով երա օրերի տեսակետներն ու հավաքական նոխացնելով երա օրերի պատասխան ու հավաքական նոխացնելու պատճեն։ Զարենցն էլ Տերյանի պես իր գրույցը սկսում է ողբերգական շեշտերով, բայց զենում է բոլորովին ուրիշ հանգրվաճի և ընդհանրացման։ Առաջարանի մեջ նըրությ հանգրվաճի և հանգանական առաջարանի մորմորումով Զարենցը խոսում է համատարած կարքին երանգավորումով։ Զարենցը խոսում է համատարած կարքությ ու թախծի մասին, որոնք անվերջ մորմորում են մարդու ուրությունը, ապրում, երկում ամենուր, «հազար տեսքով ու գործում ապրում, ապրում, երկում ամենուր, «հազար տեսքով ու կերպարանքով», սովորական փայտ ծախողի ալքերի մշուկացմանը մասին մեջ։ Կա ինչ-որ շում, Աբգար աղայի դեղնափայլ մագերի մեջ։

բան, որ «ապրում է, աներնույթ, մեր ամեն ինչում», «Բայց
ո՞վ է, կամ ի՞նչ է նա— ահա ամենաէականը» Գուցե մեծ լի-
նի զարմանքդ, սիրելի ընթերցող, եթե ասեմ, որ ե՞ս էլ զգի-
տեմ: Գիտեմ, որ նա—կա, եղել է և հին է, որպես իմ ար-
յունն է—հին: Կա,— զգում եմ, շոշափում եմ սրտով, տես-
նում եմ,— բայց հենց որ ուզում եմ բռնեմ, տեսնեմ մարմ-
նավոր, կանգնեցնեմ հաստատ,— կորչում է, դառնում է ա-
ներնույթ, ցնդում է որպես ծովս կամ ցնորք:

Գորշ, առօրյա մեր կյանքում, կենցաղում, մորմոքում է նա մութ, աներևույթ, կանչում է—ուր... Երբ իրիկ-նադեմին մեզմ, հատ-հատ ղողանջում է զանգը հին, խարխով զանգակատնից—կանչում է նա:— Ո՞վ է լսում:— Ով էլ որ լսում է—շա՞տ բան է հասկանում: Ես էլ, որ մանկությունից լսել եմ նրա կանչը—շա՞տ բան եմ հասկացել. Թայց էլ ինչո՞ւ է խեղդում ինձ, ինչո՞ւ է կարուք խեղդում: Ինչո՞ւ է կանչում—մտերիմ, կանչում—անվերջ: Եվ ես ինչո՞ւ եմ ուզում, ինչո՞ւ եմ կամենում փնտրել, գտնել նրան, խսով երա հետ—սրտով, սիրել երահ:

Զարենցը անկեղծ է այս թախածալի ապրումների և մոր-
մոքող խոհերի մեջ։ Զէ՞ որ նա էլ ապրել է այս մթնոլորտի
մեջ, շատ շատերի հետ բերել անցյալ որոնումների, ողբեր-
գության, կարոտի ու թախծի բեռը։ Քաղաքական կյանքի
հանգամանքները, հայրենիքի որոնումները, կորսայան ցա-
վերը, արյունն ու ավերը միայն մի ժանր ժառանգություն են
թողել ժամանակակիցներին ու հետնորդներին, հայկական
խառնվածքին տվել մի անհուն թախիծ, մի տևական կարոտ
ու ցամագին սեր։

Այս՝ Զարենցն էլ Տերյանի պես իր մեջ կրում էր Երկարաւաև անցյալի այդ ցավագին բեռք, նրա հոգին հայ հասարակական հոգեբանության առավել ցայտուն խտացումներից մեկն էր: Բայց բախիծք, կարուր, ցավագին սերը, անզաղում ու անդրակ որոնումը, հայրենիքի, Երկիր Նախրիի մշուշը, որն այնքան ծանր է նստում հոգիների վրա, այնուամենայնիվ, չեն խեղդում նրան, չեն հաղրանակում, չափի ու Զարենցն առջեն կանգնած էր ուրիշ հողի ու պատվանդանի վրա, բեռանակ՝ հաղրահաւելու հոգեբանական մեծ ու փուլ ոռոգայրերը: Նրա մտածողության մեջ, տառապանելով

պարուրված նոգում արդեն նեղք էր բացել և տիրական շեշտերով զրահում էր նոր ուժի, նոր կյանքի ու գործի տրամաբանությունը՝ կապված Հայաստանի բախտի հետ:]

Նույն այս անկեղծ ու վարակիչ խոստովանությունից հետո, առաջին անգամ հայ նորագույն գրականության մեջ, ամբողջ սթափությամբ նա առաջ է քաշում մի հարց, որը բնորոշ էր ճակատագրական պահերին և քաղաքական խոշոր անցումներին: «— Ինչքա՞ն, ինչքա՞ն անգամ հարցուել եմ ես ինձ, թի ի՞նչ է, վերջապես—նախրին: Գուցե քեզ տարօրինակ թվա այս հարցը, սիրելի ընթերցող! Բայց նա նույն քանի է բնական, որքան այն հարցը, թե ո՞վ ենք մենք, վերջապես—նախրցիներս: Ի՞նչ ենք մենք և ո՞ւր ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը»:

Նման ուժեղ և խիզախ հարցադրում մեր գրականության
մեջ երևան է եկել մի քանի անգամ։ Վ դարում, երբ չկար
ալլես հայոց պետականությունը և երկիրը գտնվում էր ծանր
վիճակի մեջ, Մովսես Խորենացին քննական խոր մտքով
առաջ քաշեց այդ հարցը և սերունդներին ի տես գրեց «Հա-
յոց պատմությունը»՝ հայկական կյանքի ամենասաթափ, խիստ
և արժանապատվությամբ տոգորված մատյանը։ ԽIX դարի
սկզբին, հայ կյանքի նոր անցման շրջանում, դարձյալ սե-
րունդների ի տես, Խ. Արքովյանը առաջադրեց այդ հարցը և
գրեց «Վերք Հայաստանին», շմոռանալով այնտեղ և մեր
քավերը, արատները, և՛ մեր հին ու նոր հերոսական էջերը։
Զարենցն էլ նոր անցման, հայրենիքի բախտի փոփոխության
շրջանում, հարկավ սեփական խոսքով ու ոճով և նորագույն
հասարակական շահագրգոռություններով առաջադրում է նույն
հարցը, այսինքն՝ երեկով և գալիքի հարցը։ Նրա միտքն ան-
վերջ պտտվում է Երկիր նահրիդի շուրջը։ «Ձէ՞ր կարելի արդ-
յուք տեսնել մարմնավոր, պատկերացնել հաստատ Երկիրը,
Նահրիդ, Նու, թեկուզ հնաց իրենց՝ նահրցիների կյանքում,
կենցաղում։ Շոշափել այդ երկույթը—նահրյանը—սրտով,
շոշափել մարմնավոր, պատկերել երկրային... Գուցե սուտ
է նահրիդն, նահրին—չկա... Գուցե—հուշ է միայն,— ֆիկ-
սիա, միֆ։— Ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն...»։
Առաջադրած հարցերին պատասխանելու համար նա այս ան-
գամ արդեն ունի շատ ամուր հող, իրականություն, Հայա-

տանի մի այլ պատկեր ու գաղափար, որ շուներ երեկ, երբ գրում էր ողբերգական ցնցող երկերը՝ «Վահաճնը» ու «Մահա-վան տեսիլը», «Ազգային երազն» ու «Հարդագողի ճամ-փորդները», «Կապուտաչյա հայրենիքն» ու «Դանթեական առասպելը»],

Նորագույն կյանքի թելադրանքով և նոր հոգերանության ներքին մղումով Զարենցը սկսում է իր վեպը, այսինքն՝ եր-կիր Նախրիի, Հայաստանի մոտ անցյալի պատմությունը: Եվ, ինչպես նշեցինք, Զարենցը մոտ անցյալից ընկալում ու թանձրացնում է որոշ դրական տեսակետներ, ըմբռնումներ, բայց ավելի շատ սկսում է քննել անցյալի մի շարք քարա-ցած և արմատացած, դեռ ներգործուն ուժ ունեցող ավանդ-ներ:

ՄՏԱՀԱՅՈՒՄԸ, ԲՈՂԱԽԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՃԸ

Հենց սկզբից, ահա, ծագում է այս նոր վեպի բնույթի, ոճի ու բովանդակության բնորոշման հարցը: Ժամանակի ընթացքում վեպի շուրջը մշակվել են տարբեր տեսակետներ: Կարելի է հասկանալ բազմակերպ մեկնությունների պատճա-ռը. ամեն ինչ կապված է վեպի հետ, որն ըստ էության բարդ է, ունի ոճական և իմաստային մի քանի շերտ: Քննադատու-թյունը զգալի ներդրում ունի այս վեպի գնահատության աս-պարեզում: Մ. Շահինյանն, օրինակ, միանգամայն նպատա-կասլաց ցույց է տալիս վեպի հոգերանական-սոցիալական հարստությունը և հասարակական իմաստը, Մ. Աղաբարյանը շատ ուշադիր է եղել վեպում արծարծված գաղափարների և փիլիսոփայական ծալքերի նկատմամբ: Ալմաստ Զաքարյա-նը մեծ աշխատանք է կատարել վեպի ստեղծագործական նախապատմության, կենսական ու փաստական ակտնք-ների բացահայտման ուղղությամբ: Մի շարք գրականագետ-ներ էլ հատկապես կանգ են առել վեպի ներքին հոսանքի դրամատիկ երանգների վրա: Բայց, ահա, որոշ հիմք ունեցող այս ընդգծումները հաճախ վերաճում են հակասության, քանի որ առանձին շերտերի թանձրացումը, պատահում է, ստվերի տակ է թողնում հեղինակային մտահղացումը, գա-ղափարը, վեպի բուն ոճը, էական ուղղությունը:

Մի քննադատ վեպը համարում է էպոպէա, մյուսը՝ փի-լիսոփայական թերում ունեցող, գաղափարների վրա հեն-ված կերտվածք, երրորդը, ընդգծելով ողբերգական հոսանքը, մոռանում է ահեղ սատիրան կամ հավասարության նշան է դնում երկուսի միջև:

բարդ բովանդակություն: Հեղինակային խոսքը, ընդունելով
բազում երանգավորումներ, ոճական և հոգեբանական թոփք-
ներով նպաստում է բազմերանդ նյութի ներքին կառուցմանը,
լիսախտելով բուն մտադաշտման իրականացման ընթացքը:
«Այլակերպ» այդ վեպում կան այսպես կոչված նյութի կող-
մից թելաղրվող ոճական անակնկալներ, որոնք հենց դրսե-
րում են տաղանդի մեծ հնարավորությունները: Ամենից առաջ
գա անողոք, խստահայաց նկարագրություն է, դաժան ուս-
իղմի որակով, որին օրգանապես ձուլվում է մերթ ցնցող
բնարական շեղում, մերթ փիլիսոփայական խիտ ու անսպա-
սելի վերլուծություն: Եթեմն թվում է՝ գրական շենքը հեն-
վում է համարձակ վեր խոյացող մի սյան վրա, թվում է՝

ժանրանում է շիկացած մտքի վրա, թվում է՝ ակոս է բացվում՝
արյունոտ դրամայի համար:

Այս ամենի հետ միաժամ վեպի մեջ արգասավորվում են
հատկապես նրբերանգի ու նրբագծի ուժը, հոգեբանական
մանրամասների արագ ընկալումը, ոճական նուրբ երանգա-
վորումները, որոնք իրենց հետ բերում են կենսական արձա-
գանքներ, վեպը ավիշավորում բազում լիցքերով և դիտողա-
կան անվերջ գյուտերով: Հետո Ակսել Բակոնցը ժառանգեց
կան անվերջ գյուտերով: Հյուտերի եղանակը, աշխարհը դի-
հենց այս նորությունը, գյուտերի եղանակը, աշխարհը դի-
տելու նոր հնարավորությունները, իր նյութի, աշխարհի ար-
տացոլման և ոճի մեջ հասնելով կատարելության:

Եվ այս բոլորը տեղավորվում է վեպի փոքր տարածության
վրա, անդադար պտտվում է մտահղացման, այսինքն՝ Հա-
յաստանի քաղաքական անցքերի ու բախտի շուրջ, թանձ-
րացնելով առողջ, ուժեղ, կենսական էներգիա բերող երգի-
ծանքը՝ ընդդեմ աղետալի անցյալի ու հոգեկան մղձավանշի:
Այսո՛, Զարենցը ընտրել է պատմոթյան շարադրման անկաշ-
կանդ ձև, վեպը զրուց է, ժողովրդական կյանքի պատում,
բայց անհատական բացառիկ խտացումներով, հոգեբանական
վիճակների ու հասարակական անցքերի անսպասելի, անա-
կընկալ բնութագրումներով, ոճական ինքնատիպ եղանակ-
ներով: Այս վեպը դուրս էր գալիս գեղեցիկի սովորական
ըմբռնումների շրջանակներից: Կերպավորումը, ոճը, մտա-
հղացումը, փիլիսոփայությունը, ամեն ինչ, խորապես նոր
և անհատական դրսերումներով, բերում էին նոր որակ՝ առ-
և անական մի զորություն, որը լիցք էր առնում պատմության
ներքին տրամաբանությունից և հասարակական բովանդա-
կությունից, և ինքն էլ ներգործում նույն պատմության ըն-
թացքի ու հասարակական հոգեբանության վրա:

կերտ», որոնցից առաջանաւմ են նացիոնալիզմ, ոռմանտիզմ, պեսիմիզմ և սիմվոլիզմ:

Հարձակումը շատ մերկապարանոց էր: Բանաստեղծության երիտասարդ ասպետները փորձում էին պսակագերծանել հսահակյանին, Թումանյանին, Տերյանին և դարասկըրդի արևմտահայ բանաստեղծներին:

Դրական կազմակերպչական գործը սկսվում էր աղճտով: Երեքը պղտորում էին այն ակունքները, որից ջուր էին խմել: Նրանք իրենց համարում էին ախտահանողներ, որոնց վիճակված էր դարասկըրդի գրական հիվանդությունների դեմ օգտագործել բուժիչ միջոցներ, բերել մաքոր օդ և երկաթեառողջություն: Հայտնի հիվանդություններին նրանք հակագրում էին ախտահանիչ միջոցներ, քաղքենի նացիոնալիզմի դեմ հանելով պրոլետարական ինտերնացիոնալիզմ, «անբիծսիրո» դեմ՝ «սեռական առողջ բնագդ» և անապատների դեմ՝ «բազմամժխոր քաղաքներ»:

Իրենց ծրագրի մեջ նրանք եռանդագին առաջ էին գնում: Ժիտելով հայ գրականության ավանդները՝ զնում էին նոր պահանջներ, որոնք առերեսույթ գրավիչ էին: Դրականությունը պետք է հանել գաղափարական ու ստեղծագործական փակողուց և տանել դեպի փողոց: Դեպի զանգվածների պայքարի ու աշխատանքի մթնոլորտը. «Մենք դեպի բազմություն ենք իշեցնում մեր ստեղծագործությունը»: Նրանք շարադրում էին գեղագիտական ու սոցիալական բնույթի նոր սկզբունքներ. Նորագույն գրականությունը պետք է կապված լինի արգիականության հետ և արտահայտի այժմեականը՝ «շարժում, գասակարգային պայքար, երկաթ ու կարմիր»: Արդիականության և նոր կյանքի ոփթամի տեսանկյունից հռչակում էին իրենց լոգունգները՝ «Կորչին գրական արիստոկրատ ջկուները, առանձնասենյակային գրողները, գրադարաններում ննջող գրքերը և սալոնային կանաչք»: Ահա այսպէս պարզ ու բացահայտ նոր արքեստի պաշտպանները գտան «թշնամիներին» և պարզաբանեցին իրենց անելիքները:

Գեկլարացիային հետեւեցին շեփորահանգեսները և երեքի բանաստեղծական բյուզետեները: Հետաքրքրության համար մեջ ենք բերում առաջին շեփորահանգեսի հայտարարությունը.

ԶԱ.Խ ՖՈՒՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԵՆՑԸ

«ԵՐԵՔԻ» ԴԵՎԱՐԱՑԻԱՆ, ԴԱՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՆՈՐ
ՃԱՆԱՊԱՐՀԻ ԽՆԴԻՐԸ

1922-ի ամռանը Երևանում բարձրացավ մի աղմուկ, որի ձայնը լսելի եղավ ողջ Հայաստանին: Հունիսի 14-ին «Խորհրդային Հայաստան» լրագրում լույս տեսավ «Դեկլարացիա երեքի» հոդվածը: Դա մի գրական անակնկալ էր: Առաջին անգամ Սովետական Հայաստանի գրողները հանդես էին գալիս ստեղծագործական ծրագրով, առաջին անգամ խոսք էր բացվում սովետական գրականության ակունքների, ներկայի և մանավանդ գալիք ուղիների մասին: Դրական մարդկան աշխատաժանն: Մթնոլորտը շիկացնում էր գեկլարացիայի արտասովոր բնույթը, այսպես կոչված՝ «պատերազմական» տոնը: Ժամանակի ընթացքում աշխատությունը և հետաքրքրությունը մեծացան... չէ՞ որ «Երեքից» մեկն էր նղիշե զարբնցր...

«Երեքի գեկլարացիան» գրված էր մի անսովոր, տարօրինակ լեզվով: Բանաստեղծները խոսում էին գարի անունից, հանդուն հարձակվում մոտիկ նախորդների՝ նախահեղափոխական շրջանի գրական հսկաների վաստակի վրա և, իհարկե, շատ հավակնուուր ընդգծում էին իրենց բաժին ընկած գրական-քաղաքական հեղաշրջող դերը:

Ներկա հայ բանաստեղծությունը մի թոքախտավոր է, անխուսափելիորեն դատապարտված մահվան: Նրա գոյության միակ արդարացումը մահամերձ լինելն է: Նրա տրադիցիաները նման են թոքախտավոր երեխաների, որոնք բացի վարակումից ոչինչ չեն առաջացնելու: Դեկլարացիան նշում է վարակի մանրէները՝ «հայրէնիք», «սեր անբիծ», «անապատու մենություն», «մոռացում ու երազներ», «մթնշաղ նրա-

«Հայտարարություն երեքի»

Կուսակցական ակումբի սրահում (ցեկայի դիմաց)
շաբաթ, հունիսի 8-ին, երեկոյան ժամը 8-ին

կկայանա Դասաստեղծություն № 1

Նյութն է՝ «Մեր բանաստեղծության հեռանկարները»
դասախոս՝ Արով:

Դասախոսությունից հետո մտքերի փոխանակու-
թյուն և արտասանություններ երեքի:

Մուտքն ազատ է և ձրի բոլոր քաղաքացիների
համար անխտիր: Տոմսակները ոչ ոքի չեն
ուղարկվում»

Ի՞նչ արձագանք գտան դեկլարացիան և «Երեքի» շեփորա-
հանդեսները, այսինքն՝ հանդիպումները ընթերցողների հետ:

Հասարակության հետաքրքրությունը մեծ էր: Երիտասար-
դության հետ միասին բանավեճն ունկնդրելու էին գալիս նաև
տարեցները, գրական մարդիկ, պետական-քաղաքական
գործիչները: Հուլիս և օգոստոս ամիսներին «Երեքը» Երևա-
նում և Ալեքսանդրապոլում կաղմակերպեցին երեք շեփո-
րահանդես-երեկո, լույս ընծայեցին երեք բյուլետեն, որոնց
մեջ զետեղված էին նմուշներ նդիշե Զարենցի, Գեորգ Արո-
վի, Ազատ Վշտունու բանաստեղծական նոր փորձից: Տրր-
վեցին զեկուցումներ հայ բանաստեղծության հեռանկարների,
Վահան Տերյանի, ուսւական նորագույն բանաստեղծության
և ուրիշ հարցերի շուրջը: Մասնավորապես անհանդիս էր
Զարենցը: Նա եռանդագին խոսում էր Վահան Տերյանի մա-
սին... Զեկուցումներ էր կարդում Երևանում, Ալեքսանդրա-
պոլում և Թիֆլիսում, ամեն անգամ «կրակի տակ առնում»
Վահան Տերյանին, ծգտելով նրա երգերում գտնել մանր-
բուրծուական, քաղքենիական տրամադրություններ և սիմ-
վոլիստական, անկումային ոգի:

Երիտասարդության մի մասը, ըստ Երևույթին, որոշ շա-
փով պաշտպանում էր նոր բանաստեղծներին, աղմուկ բարձ-
րացներով նրանց տեսակետների ու փորձի շուրջը: Բանավե-
ճերի ընթացքում հակադրվում էին հին ու նոր բանաստեղծ-
ները, հին ու նոր բանաստեղծությունը: Շեփորահանդես-երե-

կներն ավարտվեցին: Բայց գրական աղմուկից հետո սկսվեց
բում վեճը:

Սկզբնապես անհոգ և ուրախ թվացող աղմուկը վերահեց
մոլեգին վեճի, ծայր առավ գրական-տեսական պայքար: Մի
փոքր անց մարդիկ զգացին դեկլարացիայի և վտանգը, և
լրջությունը. բոլորն էլ հասկանում էին, թե որքան կենսական
է նորագույն գրականության ակոնքների, վիճակի և ուղինե-
րի, տեսական հայացքների և գրական փորձի բննությունը:
Բանավեճը, հակառակ ծայրահեղություններին, դարձավ
լուրջ խոսակցություն՝ սովետահայ գրականության ակուլ-
րի և նոր ճանապարհի շուրջը: Անդրկովկասի ողջ հայկա-
կան մամուլը հեղեղվեց այս բանավեճով, ասպարեզ եկան
բազմաթիվ գրողներ և քննադատներ: Գրականության նոր
խնդիրների շուրջը մամուլում հանդես եկան Հ. Սուրխանյանը, Ա.
Նը և Ա. Կարինյանը, Պ. Մակինցյանը և Տ. Հախումյանը, Ա.
Մելիքյանը և Ա. Մյասնիկյանը, ինչպես նաև իրենք՝ նորա-
գույն հեղափոխական արվեստի տեսարանները՝ Յ. Չարեն-
ցը, Գ. Արովը, Ա. Վշտունին և Յ. Մելիքը: Հետագայում վեճն
խուժելով նաև արվեստի մյուս բնագավառ-
ները:

Բանավեճի ընթացքում առաջ քաշվեց մի էական հարց՝
ո՞րն է ճշմարիտ մարքսիստական սկզբունքը նոր արվեստի
ու գրականության ստեղծման ճանապարհին, ի՞նչ արժեք
ունեն ևլեֆի» կողմնակիցների, այսինքն՝ ձախերի հայացք-
ները սոցիալիստական հեղափոխության և գրականության
աղերսների տեսանկյունից: Պողոս Մակինցյանի «Հայկական
Բոււլոն» և նրա արքանյակները՝ թվով երեք ու կեսս հոդ-
վածը տպագրվեց դեկլարացիայից մի ամիս հետո, «Խոր-
հըրդային Հայաստանում»: Նա հեգնում է «Երեքի դեկլա-
րացիան» և Զարենցի ձախ դիրքորոշումը, պաշտպանում
գրասակգի հայ դեմոկրատական պետքական նվաճումները:
Մակինցյանը ցույց է տալիս, որ «Երեքի» նշած թոքախտի
մանրէներ կարելի է քաղել ոչ միայն Տերյանից, այլև «ա-
ռողջ» Զարենցից: «Եվ եթե Զարենցը հանդես է գալիս որ-
պես ախտահանող, նախ և առաջ իրեն պիտի ախտահանի...»:
Ուրիշ խոսքով՝ նա ցույց է տալիս, որ վաղ շրջանի Զարենցը
Ուրիշ խոսքով՝ նա ցույց է տալիս, որ վաղ շրջանի Զարենցը
Երեքել է և հայրենիք, և սեր անբիծ, և նրակերտ մթւն-

շաղ, որ կովելով նախորդների գեմ, նա, ըստ էության, կը ու վում է ինքն իր զեմ: Մակինցյանը նշում է նորագույն տեսաբանների շատ կոպիտ վերաբերմծները՝ նախորդների վաստակի և առհասարակ գեղեցիկի նկատմամբ: Թննադատը խոր ցավով է նշում տաղանդավոր Զարենցի անցումը դեպի գուեհիկ սոցիոլոգիզմը. «Մենք պարծենում ենք Զարենցով, որպես մեր պոետով, բայց... սկսում ենք ամաշել երանից»¹:

Այս պայքարում որոշ էր նաև Ա. Կարինյանի գիրքը, նա գրեց մի քանի պոլեմիկական հոդված, որոնց ուղղված էին Զարենցի ձախ հայացքների և գրական նոր փորձի գեմ, այնուղեք տեսնելով գավառականություն և գուեհկություն: 1923 թ. «Պայքարում» լույս տեսավ Ա. Կարինյանի «Վտանգավոր սայթաբաւմ» հոդվածը: Զարենցն անմիջապես պատասխանեց «մի պրովակացիայի առթիվ»: Ա. Կարինյանը կրկին պատասխանեց: Վեճը թեժացավ:

Ընդհանուր բանավեճին երբեմն խանդում էին նաև անլուրջ, կոպիտ խոսքեր, վիրավորանքներ, գուեհիկ ֆելիետաններ: Նրանց մեջ ամենաբռնորդը «Բադիո-կատակն» էր, ուր թունոտ ակնարկներ կային Զարենցի կենցաղային որոշ թուլությունների մասին:

«Բոլորին, բոլորին, բոլորին... և հատկապես Երևանի ռադիոկայանին՝ դեպքեր են պատահել: Նոր գեմքեր են եկել, հարևան գինետանը իմացա, որ եղ. Զարենցը իր երկաթի ոտքերը ցցել է Աստաֆյան փողոցում.

Ռադիո շվար է իմ հոգին հիմ
և ուղիո հարցում...»

Ահա մի ճաշակ գրական բանավեճից: Բայց, իհարկե, այդ ոճը տիրապետող չէր: Մարդիկ վիճում էին, ըստ էության, կրքով, բայց նպատակաւաց, ընդգծելով իրենց տեսական սկզբունքները՝ հին ու նոր արժեքների ու գրական ուղիների շուրջը: Այսպես, օրինակ, շափականց ընդգծվեց և ուղղուցիկ, տեսանելի դարձավ հայ դասական գրականության, մասնավորապես մոտիկ անցյալի բանաստեղծության խընդիրը: Վեճի ընթացքում «Երեքը» խտացրին իրենց տեսա-

կետները, ավելի մուայլ ներկայացնելով անցյալ գրականության պատկերը: Զարենցը, օրինակ, գրում էր. «Ավելի վտանգան պավոր բան, քան Տերյանի, բանաստեղծությունը, ես չեմ պատկերացնում»¹:

Նա պաշտպանում էր ձախ փուտուրիզմը, գտնելով, որ վերջինս ուղղված էր սիմվոլիզմի ու քաղքենիության դեմ, իսկ սիմվոլիզմի ներկայացուցիչը մեզանում, ըստ Զարենցի, Տերյանն էր:

Իր վեճի մեջ Զարենցը երբեմն հասնում էր անհիմն եղանակումների, կոպիտ և անարդար գնահատականներ տալիս Տերյանի սիրո երգերին, քաղաքական հայացքներին ու տրամադրություններին: 1922 թ. հունիսի 20-ին կայացած երեկո-շեփորահանդեսը, օրինակ, նվիրված էր Վ. Տերյանի ստեղծագործությանը: Զեկուցում էր Զարենցը: Ահա թե ինչ է պատմում «Խորհրդային Հայաստանի» լրատուն, ունա (Զարենցը) մանրամասն վերլուծեց այն հասարակական պայմանները, այն շրջապատը, որի մեջ սնվել ու դաստիարակվել է Տերյանը, և հիմնավորեց այն տեսակետը, թե Տերյանը արտահայտիլ է եղել մեր երկրի մանր բուրժուական տրամադրությունների ու ապրումների: Դասախոսը միշտ անհերքելի փաստերով ապացուցեց, որ Տերյանը սիրային խնդրում մի մազոնիստ է, իր քաղաքական ձգտումները նացիոնալիստ է, իսկ աշխարհայեցողությամբ՝ միստիկ...»¹:

Զայնակցելով Զարենցին, լրագրող Տ. Խորունին շարունակում է գատափետել Տերյանին, զարմանալի անհոգությամբ պարզունակ զարձնելով նրա նրբին երգերը: «Նոքա («Երեքը») ճշմարիտ կերպով գտել են, որ նոր սերումդը ու մի օգուտ չի ստանա, եթե շարունակի կարդալ

Հեռանա՞լ, մոռանա՞լ
Այն ինչ մոռանալ...

Ասացեք խնդրեմ, ո՞ւր է հեռացնում, ո՞ւր է տանում Տերյանը, ինչո՞ւ է պահանջում մոռանալ ամեն ինչ և ինքնասպանության դիմել: Իհարկե սա հիվանդ հոգու հիվանդ

¹ «Խորհրդային Հայաստան», 1922 թ., 16 հունիս:

արտահայտություն է, մենք շպիտի ելնենք այդ հիվանդ տրամադրություններից՝ ինչպես կարծում են շատեր...»¹

Արովը ավելի սարսափելի բաներ էր գրում. «Անցել են թումանյաններ իրենց կիսաֆեռազական, կիսազյուղացիական միամիտ ապրումների հետ, կանցնեն նաև տերյանները»։ Նրանք շարունակում էին շեփորահարել իրենց հայցըները։ Իսահակյանին անվանում էին քաղքենի ինտելիգենտների ավագ երգի, որը ժնկում նստած երազում է Ալագյաղի փերիներ։ «Տերյանի հրաշը աղջիկը՝ Իսահակյանի նույն մախմուր Զարոն—Ալագյաղի փերին է՝ դեկուտե հագաւծ»։— ասում էր Զարենցը։ Իսկ մի ուրիշը՝ Ե. Մելիքը, հայ նախորդ շրջանի պոեզիայի մասին գրում էր. «Հայ բանաստեղծությունը ֆիդայինների կովի և Սոլոլակի բարձրաբերձ նացիոնալիզմի ամրոցներից անդին չի անցել»։ Ֆուտուրիստների կողմից դասական արվեստը ենթարկվում էր բիրտ հարձակման, նրանք շափազանց հստակ ու անսրբող մերժում էին անցյալի լավագույն ժառանգությունը, իրեն նոր հասարակության գեղագիտական պահանջների տեսանկյունից՝ «Երեքը»։ Համակիրները ժիւտում էին դեմոկրատական գրականության գաղափարական ու գեղագիտական հարստությունը։

* * *

Հարց է ծագում՝ ինչո՞ւ և ինչպե՞ս ծնվեց «Երեքի դեկլարացիան», ի՞նչ հիմքի վրա։ Մի՞թե պատահականություն էր այս աղմուկն ու վեճը, մի՞թե սոսկ գրական մարդկանց քմահաճույք։ Թելադրվո՞ւմ էր պատմական անհրաժեշտության կողմից, թե սոսկ զարգացման ընթացքի անխուսափելի և անցողիկ դրսերումներից մեկն էր։ Այստեղ մենք կանգ ենք առնում հակասական ու բարդ երևույթների առջև։ Որքան էլ տարօրինակ ու անսովոր, այնուամենայնիվ, ներքնապես զեկլարացիան ու վեճերը ունեին լուրջ շարժադրություններ։ Դեկլարացիան բարձրանում էր գրական կենսականությունը կանգնած որոշ հիմքի վրա։ Սովետահայ գրականությունը կանգնած էր բոլորովին նոր խնդիրների առաջ, բնականարար, որո-

նումները խիստ անհրաժեշտ էին այդ խնդիրները արծարձելու և նոր կյանքի երևույթներն արտացոլելու համար։ Հոկտեմբերի առաջին օրերից նույն մտահոգության և որությունների մեջ էին նաև ուս խորհրդային գրողները։

2. Սուրխաթյանը այդ առումով անում է մի հետաքրքրական գիտողություն։ «Եթե «Երեքի» հանդես գալը անպտուզ եղավ գրական արտադրանքի տեսակետից, ապա այդ փաստի (Երևույթի) դրականն այն էր, որ մեր երկրի խորհրդայնացումից հետո առաջին անգամ շեշտվում էր գրական կազմակերպված աշխատանքի անհրաժեշտությունը, հրահրվում խնդրի հասունացած լինելու հանգամանքը»։ Սուրխաթյանը իրավացի էր։ Երեքի նկատառումները ազնիվ էին, անհանգստությունը արդարացված էր։

Բայց ոչ միայն կազմակերպականը. կար նաև մի ուրիշ խնդիր։ Սկսվում էր գրական մտածողության նոր շրջան։ Գրողները փորձում էին բանաստեղծությունը տանել բարձր պայքարի ոլորտը, շեշտը դնել արդիականության վրա։ Որքան էլ սիալ ու ծուռ, «Երեքի» ելույթները գրական ուժերին, քննադատներին, գրողներին, ընթերցողին լարեցին դեպի կարևորագույն հարցը, ստիպեցին մտածել արդիական թեմայի և գրական ոճավորումների շուրջ։ Այս խնդիրն ստացավ հասարակական լուրջ խորհուրդ, սրբելով գրականության նոր անելիքների, հասարակական ու գեղագիտական կոչման խնդիրը։

Խսկապես ասած, միայն անցյալի, նոյնիսկ մեծերի՝ համակյանի, Տերյանի ու Թումանյանի ոճն ու մեթոդը, ստեղծագործական հարուստ փորձը բավական չէին նոր խնդիրների կենսագործման համար։ Զարգացող կյանքը բերում էր իր գեղագիտական պահանջները, ազգային արվեստը կանգնած էր սոցիալիստական գրականություն ստեղծելու բարդ ճանապարհին, կարենոր իմաստ էին ստանում հերոսի, նյութի, հոգեբանության որոնումները և այդ ամենը ոճավորելու խնդիրը։ Այս առումով, միայն այս տեսանկյունից, ձախ խմբավորումների պայքարը և որոնումները կարող են բացատրվել և մի որոշ արդարացում գտնել պատ-

¹ Նոյն աեղում։

‘մության կողմից: Մնացած դեպքերում այս ձախությունները քննություն չեն բռնում պատմության առաջ:

Պետք է ասել, որ ստեղծագործական այս մեծ անհանգ գրստությունն ուներ Համառուսաստանյան ընդունում: 1918 թ. սկսած Ռուսաստանում հեղափոխական գրականության և թրականության աղերսների ու զարգացման խնդիրը հուզում էր գրադարձների ու տեսաբանների մեծամասնությանը: 1920 թ. Հռկանեմբերի 5—11-ը պրոլետկուլտականները հրավիրեցին իրենց Համագումարը և այնտեղ յուրովի առաջադրեցին հեղափոխական գրականության տեսական-կազմակերպչական խնդիրները: Համագումարում առաջ էր քաշվում նաև ռպրոկետկուլտի ավտոնոմիա» ստեղծելու հարցը: Այդ տեսակետը որոշ ժամանակ պաշտպանում էր նաև կոմաշարսկին, բայց, բարեբախտաբար, խնդրին հատուկ ուշադրության նվիրեց լենինը: Համագումարի ընթացքի մեջ նա տեսակ լուրջ վտանգ և հենց հոկտեմբերի 8-ին իր ձեռքով կազմած ուրվագծի և բուն բանաձնի մեջ նշեց, որ նոր դարաշրջանի հեղափոխական մշակույթը շպետք է դեն նետի բուժութական դարաշրջանի նվաճումները, այլ կոչված է սովորելու և յուրացնելու մարդկության մշակույթի բոլոր նվաճումները: Լենինը խստորեն քննադատեց նաև պրոլետկուլտի ձըգտումը ընդհանուր սովետական մշակույթի մեջ ստեղծելու ավտոնոմ, առանձնահատուկ վիճակ, որը կտաներ դեպի աղանդավորություն...

Նույն թվականին կոմերիտմիության երրորդ Համագումարում լենինը մերժեց հոգեր կյանքում և աշխատանքում դրսնորված ձախությունը, նշեց, որ իսկական կոմունիստը պետք է յուրացնի այն ամեն լավագույնը, ինչ ստեղծվել է անցյալում: Բավական երկար ժամանակ պետք եղավ այդ ձախ պատկերացումները ցրելու և լենինյան դրույթները ամբողջովին կենսագործելու համար: Զախերը ամեն գեպօւմ համառում էրն, առաջ քաշելով նորանոր սկզբունքներ, որոնց բովանդակությունը, սակայն, նույնն էր: «... Մենք բոլոր ուժերով կպայքարենք մեռածների աշխատանքային մեթոդները այսօրվա արվեստի մեջ փոխադրելու գեմ», — Համառում էր «Եթը» (1923 թ. № 1):

Ի՞նչն է պատճառը: Պրոլետկուլտականները ինչո՞ւ էին

հարձակվում անցյալի վրա: Նրանք, իհարկե, ունեին իրենց հատուկ տրամաբանությունը, մտածում էին այսպես, երկրում տեղի է ունեցել հեղափոխություն, որը ոչնչացրել է հին պետական քաղաքական մեքենան, տալալի միապետությունը և բուրժուական կարգերը: Եթե հիմնական հարցերում տեղի է ունեցել հեղաշրջում, արմատական փոփոխություն է կատարվել, ապա արվեստի մեջ ևս պետք է տեղի ունենան նույնը: Նրանց կարծիքով, նոր գրողները, բանվոր դասակարգի երգիշները պարտավոր են հակադրվել ֆեոդալական և բուրժուական անցյալին: Արվեստի խնդիրները նույնացնելով քաղաքական ու պետական խնդիրների հետ, նոր արվեստաբանները պահանջում էին արմատապես մերժել հին աշխարհի հոգերանության ու կյանքի գեղարվեստական պատմությունը և անցյալի ավանդները, ստեղծել նոր նյութ ու ձև, պատկերավորման նոր սկզբունք ու եղանակ, հիմնովին շըրշել անգամ բանաստեղծության տեխնիկական լեզուն ու տաղաշափությունը: Եվ իսկապես, նոր բանաստեղծները փորձում էին ստեղծել նոր արվեստ, այնտեղից դուրս մղելով «բռնը բռնը բռնը», այսինքն՝ պատկերը, հոգերանությունը, լեզուն...

Աւրիշ խոսքով՝ ամենուր մոլոր ճանապարհի վրա կանգնած ձախ ֆուտուրիստները և, առանարակ, պրոլետկուլտականները հազարամյա մշակույթը յուրացնելու, դասական արվեստի հետ ստեղծագործաբար մրցակցելու փոխարեն, նախընտրում էին ամենահասարակն ու հեշտը՝ ձգտում էին ոչնչացնել, մերժել, պսակազերծել այն ամենը, ինչ գալիս էր անցյալից: Դա աղետալի երկույթ էր, քանի որ այդ բռնագրուիկ մեթոդներով ու ձեերով անհնար էր նվաճել հեղափոխության թեման և իրականության ներքին շարժումը: Նոր երկերը զրկվում էին ներգործող ուժից, հասարակական իմաստից ու գեղագիտական հմայքից, գեղարվեստական յուրահատկություններից, դուրս մնում կյանքի տարերքից, այսինքն՝ հեղափոխական հավակնություններ ունեցող գրականությունը, անկախ ձախերի ձգտումներից, շեղում էր հեղափոխական արվեստի ստեղծագործական տարերքից: Գրականությունը կորցնում է իր գլխավոր հատկանիշները:

ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԻ ԶԱԽՈՂՈՒՄԸ

Անզուսպ ոգևորության մեջ, մոռացած հազարամյա պոեզիայի ավանդներն ու յուրահատկությունները, նրանք փորձի ընթացքում արվեստը մղում էին դեպի անդունք «Զախերը», խոսելով մարքսիզմի տեսանկյունից, իրենց անկեղծ ցանկություններով հանդիրձ, ձախողվեցին։ Զախ Փուտուրիզմի և պրոլետկուլտի հայ հետեւրդները, անգամ Զարենցը, ստեղծագործական փորձի մեջ դաշտանորեն «պատրժվեցին»։ Երկու տարվա ընթացքում նրանք ստեղծեցին շատ բիշ բան, կարելի է ցույց տալ միայն մի բանի երկ... Թերես «Ասպետականը»... «Պոեզոգունայից» մի բանի հատված և այլն։

Այո՛, գրական նոր սերնդի պահանջը, արդիականության արտացոլման որոնումները և եռանդագին ճիշերը ունեին ինչ-որ նոր և կարևոր երանգներ, աղերսվում էին զարգացող կյանքի տրամաբանությանը։ Բայց նրանց տեսության մեջ երեան էր գալիս հիվանդագին թեքում, որը հարված էր հասցնում ստեղծագործական փորձին։ Հակառակ անկեղծ ցանկություններին, պատմականորեն անհրաժեշտ նոր արվեստի հետ միասին մի որոշ ժամանակ ծնվեցին նաև անխոսափելի մոլորություններ և զարգացման ամբողջ ընթացքի դեմուղված արատավոր ձևեր, որոնք սկզբից էլ զատապարտված էին։ Կովելով քաղքենիության դեմ, հակադրվելով հին բանաստեղծության ավանդին, նոր գրողները և արվեստի զատագովներն ընկնում էին ուրիշ կարգի արատների ոլորտը։ Նոր երկերի մեջ երեսում է, օրինակ, երիտասարդ Զարենցի ատելությունը՝ քաղքենիության դեմ, սակայն դժվար չէ նկատել մերժման եղանակի արատավորությունը, գրական կոպիտ ձեւերը, նատուրալիստական պատկերները։

Գրասակարգը առնչություն շուներ «առողջ բնագդի» և կըրքի այս նոր բանաստեղծության հետ իսկ ձեր... Գրում էին անկանոն և վայրիվերո, բանաստեղծությունը զրկելով իր հազարամյա տեսքից։ Նոր փորձը վարակիլ էր... շուտով արձագանք գտավ նաև գրական երիտասարդ սերնդի մեջ։

Մի փոքր հետո Ալագանը գրեց «Հրաբրապոեզիան»։ Զարյանը գրում էր նոր ձեր բանաստեղծություններ՝ նվիր-

ված հեղափոխությանը, զրանցքակինարարությանը, («Շոգեգությանի երգեր») և այլն։ Թեման լավ էր, բայց ձևը՝ անձակի։ Վշտունին ու Սբովը ասպարեզ հանեցին գրական բարբարոսության օրինակներ («Հուզանք ու զանգ», «Դանակը բկին»)։

Զարենցն այդ շրջանում գրեց «Կապկազ թամաշան», «Պոեզոգունան», «Ասպետականը» և «Կոմալմանախը»։

«Կապկազ թամաշան» բերում էր ինչ-որ նորություն։ Զարենցը երգիծում էր կովկասյան ազգային-քաղաքական կուսակցությունների լարախաղացությունները՝ օտարների առաջ, նրանց սնամեջ խոսքերն ու հակածողվրդական դորձը։ Դրամատիկական պոեմն ավելի շուտ հիշեցնում էր ժողովրդական բատերախաղ, որին մասնակցում էր ինքը՝ ժողովուրդը, որպես գործող անձ։ Դա հենված էր ոչ թե զարգացող կոնֆլիկտի ու կերպարների, այլ՝ պայմանականությունների վրա։ Զարենցը հասնում է իր նպատակներից մեկին՝ ագիտացիոն խոսքով ժողովրդին ներկայացնում երեկով տերերի քաղաքական գործի կեղծիքը։ Բայց քաղաքական երգիծանքն այստեղ չուներ այն խոր ենթաքերածությունը, որը կազմում էին ուրիշ նախրիհա տարերքը։ Զարենցը տորք էր տալիս ձեր ու խոսքի կամացականություններին, հեռագրական ոճին, «Կապկազ թամաշան» շուներ գեղարվեստական խորք, գործողության և կերպավորման ներքին լրջություն...»

«Պոեզոգունա» շարքում կան ապրված անկեղծ տրամադրություններ, մասնավորապես կարելի է հիշել «Գյումրին», «Երևանը» և այն հատվածները, որոնց մեջ Զարենցը խոսում է հին ու նոր ոգու մասին, այսինքն՝ արծարծում է այն միտքը, թե բանաստեղծությունից պետք է վերացնել լալկանությունը, «ոռնոցը» և զրանց տեղ դնել նոր կյանքի ու գալիքի շունչը։ Բայց ընդհանուր առմամբ այս շրջանի շարենցյան պոեմիան մեզ տալիս է գրական անկման տխուր փաստեր։

Առհասարակ «Երեքի» մասնակիցները և նրանց արբանյակներն ու հետնորդները ասպարեզ հանեցին երկեր, որոնք շատ բիշ առնչություն ունեին գեղեցիկ գրականության հետ

Ա. Վշտունու հրապարակած բանաստեղծությունները ավելի շուտ անհմաստ բառախաղեր էին, մնամեց, զրնգուն հանգեր, բառեր ու հնչյուններ, առանց ներքին կապակցության։ Այս մի հատված այդ նորագույն՝ ոճից, Աղատ Վշտունու բանաստեղծությունից։

Վեր, զանգահար,	ու հանգով	զարկ
վեր զանգտան կրտուր	դու	ու զանգը
ու զանգը	զանգը	զարկ,
տուր...	զարկ,	զանգը
Հուր հնանքով	զանգը	զարկ...

Արովը ներբողում է կնոջ մարմինը և սեռական կիրքը Սուրբաթյանը, անդրադառնալով Արովի «Միայն կինը» գրքին (1919) և նոր շրջանում գրած բանաստեղծություններին, գրել է. «Մրանից էլ առողջ բնա՞զդ, ո՞ր ցուլը կհանդգնի պարծենալ ավելի առողջ սեռական բնագդով»։

Մի առանձին հավակնութությամբ «Դահակը բկին» (1923թ.) գրել առաջաբանում Արովը նշում էր իր ծառայությունը. «Արովը... Տերյանի ստատիկ ու ածականներով մշուշփող լեզվին հակադրեց կոնկրետ ու չոր լեզու, բերեց հատու որթմա Մեր բանաստեղծությանը տվեց կենդանի խոսակցական տեմպ։ Ոչնչացրեց համարյա բոլոր ածականները, բանաստեղծությունը կառուցեց բայերով ու գոյականներով, բանաստեղծություն մեջ մտցրեց օտար և հայ խոսակցական բառեր, մեր էսթետներին մեծ դժոնություն պատճառեց իր ու բանաստեղծական ֆորմայով»։

Այս գրական սկզբունքները պարզ ձև են ստանում «Դահակը բկին» գրքում։ Այս մի նմուշ Արովի նոր ոճից, անորարարությունից, որը գրվել է 1922 թ. դեկտեմբերին։

Արովն էր՝ ով էր
Որ ձեզ հերթեց,
Երգեց գոռ—
Ռար
Կո—
Ռար
Տասնինը թվին էր զեռ՝
Երբ տպեց իր սկինը։
Բերքամ էր իր հետ ռումբ ու պրոպելեր,

Բերում էր գոռաք, կոռակ
Բերում էր
«Գու-եր
«Կո-եր
«Կիներ», կոնք ու «կառք»։

Ուշագրավ մի միջադեպ։ Այս շարժումը և ոճը ծաղրելու նպատակով, Բակունցը հետաքրքիր եղանակ ընտրեց Նա 1935 թ. իր «Եղբայրության բնկուղենիներ» երկը գրեց Վըշտունու նոր լույս ընծայած փառազարդ գրքի էջերի վրա, ծաղրելով բարձրորակ թղթի գրեթե ամայի, սպիտակ այն բազում էջերը, ուր տողերը շատ հաճախ բաղկացած էին միավանկ, անհմաստ բառերից կամ հնչյուններից։ Սպանի ծաղր... Շատերը գրում էին հենց այսպես «Հեռագրական» ոճով, անհեթեթ, միայն նոր, արտօրինակ, արտասովոր երեւալու մղումով։

* * *

Զարենցը այս տարիներին ծանր վիճակի մեջ էր։ Նա տեսական ու հոգեբանական կոիվ էր մղում Վ. Տերյանի դեմ։ Այո՛, Տերյանը չէր կարող լիովին գոհացնել նոր ընթերցողին։ Նրա պոեզիան միայն մասնակիորեն էր ծառացում հեղափոխական նորագույն խնդիրներին և գեղագիտական պահանջմունքներին։ Բայց, այսուհետերձ, տերյանական մինուրար ճնշում էր գեղարվեստական մտքի վրա։ Զարենցը ինքը լավ էր հասկանում այդ ամենը և ապրում էր հակասական վիճակի Տերյանը Զարենցի ուսուցիչն էր և հոգեհարազատը։ Զարենցը շատ բան էր սովորել նրանից և արդեն մի շաբաթ կարենոր հարցերում կարողացել էր հաղթահարել ուսուցչին, ստեղծել նոր որակ։ Բայց Տերյանի աշխարհը մեծ էր և զեռ ոներ շհաղթահարված շատ կետեր։ Դրանք պահպանվում էին նույնիսկ Զարենցի հոգում։

Զարենցն անհանգստանում էր և տագնապում։ Նրա պայքարի մեջ պետք է տեսնել և օրյեկտիվ, և սուբյեկտիվ հիմքերը։ Ո՞րն էր օրյեկտիվ հիմքը... Ժողովուրդը գեռ չէր պատագրվել անցյալի վերքերից, ողբերգության մշուշփության մարդու հոգը, տագնապը, թախիծը գեռ ճնշում էին. հայ մարդու հո-

գին։ Վահան Տերյանի բանաստեղծական թախիծը ուներ հող ու հիմք, ուներ և մեծ լսարան։ Այժմ արդեն ծագում էր ալդ հին թախծից ազատագրվելու անհրաժեշտությունը, գարաշրջանը հրամայական պահանջ էր դնում քայլել նոր կյանքի ոփիմի տակ, ոփիմի հետ։ Հետևաբար ծագում էր նաև տերյանական մթնոլորտին հակադրվելու կենսական պահանջը։ Բայց պակաս կարևոր չէին նաև սուբյեկտիվ հիմքերը։ Զարենցը ևս ապրում էր հակասական մթնոլորտում։ Հեղափոխության մեծ երգիշը իր վրա ևս զգում էր զեռ ապրող, ժավալվող թախծի ազգեցությունը։ Նրա հոգում դեռ նվում էին նաև Տերյանի և հենց իր իսկ մոտիկ անցյալում ստացած ծանր վերքերը։ Տերյանից և իր իսկ անցյալից ազատագրվելու ձգտումը, բնականաբար, հանդիպում էր ներքին դիմադրության։ Այս բոլորը միանգամայն հասկանալի էր։ Բայց Զարենցի դիմադրությունը հաճախ վերաճում էր պատերազմի, անզուսպ բանաստեղծը, մոռանալով գեղեցիկի սահմանները, անցնում էր անվայել ոճի։ Ահա այդպէս էլ նա սկսում է «Ռումանս անսերս պոեմը»։

Համեմի է, լէ՞, էի՞ ձեզ Տերյանի երգը թքառ,
Բայց էսօր հոգիս թող ձեզ լիզե երկաթե թեժ արգուկով։

Զարենցը ստեղծում է նոր տիպի «հակատերյանական» երկեր, որոնք իսկապես շեղում էին մեծ արգեստի ճանապարհից։ Զարմանում ես, երբ ընթերցում ես դրանք, երբեմն թվում է՝ հնդինակը ոչ թե հանճարեղ բանաստեղծ Զարենցն է, այլ շնորհազուրկ մի արկածախնդիր։

Եատ բնորոշ էր հենց «Ռումանս անսերս պոեմը»։ Զէ՞ որ տեսության մեջ բանաստեղծը գեմ էր անբիծ սիրուն, հրաշք աղջկան, սալոնային կանանց, գերադասում էր երգել կիրք, մարմին, սեռական առողջ բնազգ։ 1923 թ. Զարենցն այսպես է բացատրում իր պոեմի իմաստը։ «Ի՞նչ սեր, երբ միլիոններն են եկել հանդես, — ահա իմ պոեմի իմաստը»։

Եվ ահա քաղքենի երգիլ համարելով հսահակյանին ու Տերյանին՝ նա դեմ հանդիման հանում է նոր ձևով հասկացած պրոլետարական սերը։ Օրյեկտիվորեն այնպէս էր դուրս գա-

լիս, որ նոր բանաստեղծների ծառայությունը նոր աշխարհին փոխվում էր իր հակադրությանը, դառնում աննպաստ։ Գըլիավոր ցավն այն էր, որ նրանք արվեստի մեջ հրաժարվում էին ամենաէականից։ Երեքն էլ նոր ժամանակի տարերքը համարում էին կարմիրը, բնառոնը, փողոցը, մարմինը, սեռական կիրքը և մոռանում էին արվեստի կարեռագույն հատկանիշները՝ մարդու հոգեբանությունը, ներքին իմաստը, գեղեցիկ ձևը։ Պետք է ասել, որ Զարենցը ներքնապես երբեմն-երբեմն զգում էր այդ սխալը, բայց իներցիայի ուժով առաջ էր գնաւմ, իսկ ստեղծագործական փորձն ընդհանուր առմամբ դառնում էր անարտահայտիլ, երբեմն էլ աղետալի։

Կարելի է հիշել «Կոմալմանախը»։ Բավականին թույլ շարք էր «Պոեզոգունան», անգույն էին «Կապկազ թամաշայի», «Սնոուշեն ամուսիններ կամ ինքնիրեն կոմունիզմի» շատ էշեր։ Նա ամեն կերպ ձգտում էր պոնդիայի մեջ կիրառել «Դեկլարացիայի» առաջադրած սկզբունքները, ձախ տեսությանը տալ գեղարվեստական մարմին։

Այդ պատճառով էլ խոսքը երբեմն վերաճում էր յուրահատուկ ցինիզմի, բոլոր կետերով ուղղվում Տերյանի երգի դեմ։ Ահա, օրինակ, մի հատված «Ռումանս անսերից»։

Լսում եմ՝ ասում եմ—«սեր».

Բայց

ծամած այդ բառը որ ասի—

Ասել է՝ ուզում եմ—բեզ

եզ ոչ թե—լիզած լուսին

Միս

Մսի

Մսե

Ամուսին։

Այս էր նոր երգը, «Դեկլարացիայի» երազած երգը։ Զարենցը թքում էր և՛ Տերյանի, և՛ իր շքեղ երգերի վրա։

Ի՞նչ է,

Ինչ իմացար.

Կարծում ես Տերյանն եմ թեն։

Ճիշտ է,

Շաղել եմ «տաղեր»,

«ժիածան»,

Բայց թքել եմ դրանք արդին գեի։

Դժվար է խոսել մյուս ծանր հատվածների և նատուրալիստական անճաշակ տողերի մասին։ Նախորդ շրջանի մեծ արվեստի, դրամատիկ ապրումների, հեղափոխական ոռման-տիզմի բացառիկ լարման և շքեղ ձևերի, «Ողջակիզվող կրակի» և «Տաղարանի» պայծառ պոեզիայի փոխարեն Զարենցը ասպարեզ հանեց ոչ մի բանի չնմանվող, աղավաղված բանաստեղծություններ, որոնք ընդգծվում էին աղմուկով, հոետորական գոշուններով, բառաձևերով, տարօրինակ տաղաշափությամբ։ Բերենք մի հատված այդ «նորօրինակ», «առողջ», «ուժեղ», «հրապարակային» բանաստեղծություններից։

Կյանքն աերո,
 Կամքն օղալու,
 Կուզբ ուղեր—
 Արեր զենիթից մեզ կտա չու,
 Եյ ցնդածներ
 Մենք պրոլետար,
 Կամքը մեր ռումբ
 Առող
 Միշա հեռուն, հեռուն, հեռուն...

Սա մի հատված է «Կոմալմանախից»:

Այս առումով շատ դիպուկ էր երգիծաբան Լեռ Կամսարի 1923 թ. գրած «Իշաբար գրված ողորմի» ֆելիխտոնը (վերնագիրը տող է «Խոմանս անսերից»),ուր ծաղրված են Տերյան-Չարենց և «նոր» Չարենց և «հին» Չարենց հակադրության բնագրութիւնները:

«Սեպտեմբեր և Հոկտեմբեր.

— Երանի քեզ,— դարձավ սեպտեմբերը հոկտեմբերին
նախանձով լի, — դայսկի նման Զարենցը գրկած, կզզվե
քեզի:

— Մի նախանձեր, դրացի, եթե հնար ունենամ, գիշեր մը կփախէմ նոր եռաբերն:

$$= \hbar u, n^a u$$

— Ծո ի՞նչ կհարցնես, օրը ցերեկուն ալ «ուռած շոգ կոնք», «կակուղ միս», «արնահամ բուրմունք»... ամոթէս գետին և մտնեմ:

— Վայ օռոպանամ. օռուսիկ. ինչու աւերան տկուու

— Տերյանին հակառակն ըրած ըլլալու համար...
«Հին» և «Նոր Զարենցը». — Երբ Զարենցը նոր ըլլության
հետ նստած խրախճանք կըներ, իր հին պոեմները սկսեր հա-
գած ներս մտան ու այսպէս ըստին. —

— Ետ տուր մեզի «Չարենց» անունը, այդ անուսը սովոր մով առիր, մեզ կպատկանի: Մեզի գեն ես «թքեր», մենք ինչպես ապրինք անանուն: Եթե մեզը հարցնի, թե «որո՞ւ պոեմ ներն եք», ինչ պատասխաննենք...»

Արդուի և Վշտունու բանն ավելի վատ էր: Բայց բոլորի
մեջ, հանճարից մինչև սկսնակ, կար մի ընդհանրություն:—
Հնազանդություն բոի սիսեմաներին, նորարարության շար-
դարացված ճիգ ու ջանք, բովանդակության կորուստ, ձևի
քայլայում, որոնք իրենց հերթին գուրս էին մղում անհատա-
կան ձիրքը, հակումը, մղումը:

Հոգեբանական այս աղքատությունը և ձմի զամայականությունը շատ շուտով ընդունեցին աղետալի բնույթի: Խնայեսկ ենթադրում էր արվեստի անողոք օրենքք՝ գաղափարականության համար մոլեգին պայքար մղող կրիտասարդ բանաստեղծների խոսքը զրկվեց գաղափարական ուժից:

«ԱՄՊԵՏԱԿԱՆԻ» ԲԱՑԱՌԻԿ ԲՆՈՒՅԹԸ

Բայց մեծ տաղանդը չէր կարող ինչ-որ շափով իրեն գագ-
նել շտալ: Չարենցը ունեցավ նաև բռնկումներ, ներշնչանքի
խորհրդավոր պահեր: Աղմուկի մեջ հանկարծ ծնվեց մի նոր
գլուխգործոց՝ «Ասպետականը»:

ինչո՞ւ Զարենցը հանկարծ դարձավ միշնադարին: Դարձը
տարօրինակ էր, իսկ գաղտնիքը թաքնված բանաստեղծի խառ-
նը վաճառքի մեջ Զարենցն ուներ մի զարմանալի ուժ: Նա կարող
էր թուշքներ կատարել ժամանակների ու դարերի վոյայով,
գրել ներկայի, ապա՝ գալիքի մասին, կրկին թոշել զեպի միշ-
նադար և գրել խաչակիր ասպետների կյանքից: Բանաստեղծի
տեսադաշտը լայն էր, երևակայությունը՝ ուժեղ: Անհարիս
թվացող ժամանակների հեռապատկերի վրա նա կարողանում
էր ստեղծել գունեղ կողորիտ, կենցաղ և բնական աշխարհ,
թերևս «Ասպետականի» մեջ կարելի է գտնել ինչ-որ եղբեր՝
նման խաչակիրների մասին ստեղծված բազմահարուստ բա-

նաստեղֆական երկերին, մասնավորապես իտալացի բանաստեղծ Տորվատո Տասսոյի «Ազատագրված հրուսաղեմը» պոեմին: Խոսքը վերաբերում է արտաքինին՝ ոճավորմանն ու մթնոլորտի նկարագրությանը: Բայց դա կարող էր տեղի ունենալ սոսկ անուղղակի, ինքնաբերաբար, քանի որ «Ասպետականը» չի ունեցել նախապատրաստություն, գրվել է մի շընչով, ընկերական-կենցաղային մի հանդիպումից և միջաղեպից հետո, այժմյան 26 կոմիսարների այգում:

Դա բնավ չի բացառում միջնադարյան պոեղիայի երանգ-ների փոխանցման հանգամանքը։ Մեծ բանաստեղծների հոգում մշտապես ապրում են համաշխարհային բանաստեղծության տպավորությունները, ոչ որպես յուրացում, այլ հոգեկան ապրումների անբաժանելի մաս, որը այս կամ այն լարման դեպքում անսպասելիորեն կարող է գառնալ ստեղծագործական մեծ կամ փոքր բաղադրիչ։ Այդպես են ծնվել, օրինակ, Պուշկինի փոքրիկ դրամատիկական պոեմները, որոնց նյութն առնված է օտար կյանքից։ Դրանք՝ այդ տպավորությունները, դառնում են նույնքան ինքնուրույն, որքան սեփական կենսափորձի տպավորությունը, սեփական գիտումը։ Հենց մի շնչով գրած, անսպասելի ոգևորության ծնունդ այս պոեմում Զարենցը ևս գրական հինավուրց տպավորություններին տվել է սեփական գույն և բանաստեղծական շունչ։

Մի Հոգնած, տխոր տրուբազոր,
Օթերի զորշ ճամփերին
Երգում էր Հարվածը Հատու,
Մահացու Հարվածը իր տեղի:
Երգում էր Նրանց երգը լուսե,
Մարմինները Նրանց ալ-Կրակ,
Երգում էր սե՛րը Նրանց սև
Ու վերքի արյունն ալլան:

Սկսվում է սիրո և անկման մի պատմություն, որն արդեն ոչ մի եզր չունի անցյալ ակունքների հետ, հոգեբանական մի նուրբ դիտված առեղծված է, որը բերում է նաև ժամանակակից ապրումների արձագանք:

Այս տարօրինակ սիրո պատմությունը մի կողմից գալիս և առնշվում էր զեկլարացիայի առաջադրած սեռական բնազ-

զի սկզբունքին: Ինչ-որ շափով դա այդպես է: Թերևս Ա. Կարինյանը իրավացի էր՝ «Ասպետականի» մեջ՝ որոնելով «Ռոմանս անսերի» նման մի խաղ, Բայց նա առաջ է գնում, գնահատականի մեջ դառնալով անարդար և պոեմը համար ուժական: Համար ուժական արկածախնդրության արդյունքում՝ բարում «Էսթետիկական արկածախնդրության արդյունք», բանաստեղծական մի քմահաճ խաղ, որով Զարենցն իրըն ուզում էր ասել, թե տեսեք, այսպես էլ կարող եմ գրել: Այս դեպքում Կարինյանը նկատելիորեն անարդար էր, քանի որ գումար սայթաբումը, ինչպես բնորոշում էր ինքը, օժտված էր գեղարվեստական ուրուցիչ հմայքով:

Պարբեկամները (Հ. Սուրբաթյան և
Արքշներ):

Զարենցը բարեբախտաբար, սեռի և սիրո հարցը այս անգամ քննում է հեռավոր անցյալի նյութի հիմքի վրա, այսինքն՝ ի տարբերություն «Ռումանս անսերի», իր երկը վե մարդկանց առջև՝ որպես ժամանակակից կլանքն արդիում մարդկանց առջև՝ որպես ժամանակակից կլանքն արտացոլելու նորագույն օրինակ։ Սիրո, սեռի և կնոջ խնդիրը նա առաջադրում է յուրովի, փորձում ընդգծել ինչ-որ հանելովային, ինչ-որ առեղծվածային բան։ Այս բարդ խնդիրի մեջ նա տեսնում է միստիկ, հիվանդագին մի երկույթ, որը թեև կյանքում տիրապետող է, բայց հանդիպում է մարդկանց բարոյական կապերի մեջ։

Ամենից առաջ նա ստեղծում է խաչակիր ասպասի գործադրությունը.

«... Σαρώνωσε πι θυμέλη μή τι ωτακήρ
θεί μή ορ αιδη τηγάνικηρ μπω.
Αιωνικήρ ταθήρειρ έρι ζωαφήσι,
Δρωνένικροι` θωνόπονωσε πι θωσι
θεί ημενηιδ έκι μπορηρ θωληρήση
θεί ιρητήριο θωρητήνιειν ηνήρει
θεί τωνηνηδ έκι γω'ψηρ ηρερήσι
Πι ηρηπονι` ρω'ράρη πι ηνής...

Կերպարի միջոցով Զարենցը բացում է սիրո և սերի մի
պատմություն, որը պահանջում է ներհուն վերլուծություն
և Ասպետականը շոշափում է հոգեբանական խնդիրը
Խաչակիր ասպետը մտնում է դղյակը և հանդիպելով տի-
րողը՝ 93-ամյա Ալֆոնս Անդոյին, ստանում է դարի ոգուն և

բարեբերին վայել հարգանք: Մթնոլորտը հագեցած է ուրույն փայլով, ներս են մտնում երկու գեղեցկուհիները՝ Ալֆոնս Անդուի սիրուհիները: Հրաշք գեղեցկության հետ ծնվում է անխուսափելի խանդղ և մթազնում ասպետի միտքն ու տեսողությունը: Ինչ-որ ուժի, ինչ-որ զգայական հատկության, ինչ-որ անմեկնելի գաղտնիքի շնորհիվ Ալֆոնս Անդոն՝ մոռալ ձիգ ու հարուստ ծերունին, նվաճել է գեղուհիների տարփանքըն ու կիրքը: Բաղնիքում ծերունին լլկում է մերկ գեղուհիների մարմինը: Խանդղ փոթորկում է խաշակրին: Նրան թվում է՝ ինչ-որ բան անբնական է, ինչ-որ բան՝ անարդար: Աղջիկները նրա աշքին երկում են զոհի կերպարանքով: Ասպետի հոգում ծավալվում է մարդկային տագնապը: Այդ ներքին դրաման շրջում է միամիտ ասպետի կյանքի ուղին, մըշտապես թողնելով նրան օրերի գորշ ճամփեքին: Հանուն գեղուհիների խաշակիր ասպետը սպանում է ծերունուն: Բայց տեղի է ունենում անսպասելին: Միամիտ ու կույր ասպետ Գեղուհիները գրկում են ընկած ծերունուն, համբուրում, հարձակվում են ասպետի վրա, ծվատում նրան, նորից սկսում համբուրել Ալֆոնս Անդոյի արյունոտ մարմինը: Խաշակիր ասպետը փախչում է դղյակի բանտից՝ իր հետ տանելով զահել տղամարդու խոր վիրավորանքը:

Եթե վերացականորեն դատելու լինենք պումի սխեմայի մասին, գուցե վիճենք Զարենցի հետ։ Մի՞թե բնական է այս պատմությունը, մի՞թե կանայք այդպիսին են, արդյոք նա չի՞ ընդհանրացնում բարոյական այս անկումը և այլն։ Բայց Զարենցը վարպետությամբ և ներքին բարդ մտածողությամբ գրել է հավերժական մի գաղտնիքի մասին։ Ինչոր բան այդ ծերունու և գեղուհիների մեջ, լկելու և լլկվելու տեսնը, գեղեցկությունը տանջելու հիմնադագին ճգտումը նույնպես հանդիպող երկույթ է մարդկանց վարքի ու հոգեբանության մեջ։ Բանաստեղծության մեջ, իհարկե, շատ դրժվար էր այդ խնդրի հոգեբանական լուծումը, բայց երկույթը դիտված է նրբորեն։ Այս առեղծվածի հետ տաղանդը բերում է նաև ուրիշ երանգներ։ Մասնավորապես ուժին են արտահայտվում գեղեցկության զգացումը, կիրքը և խանդը, որոնք կենդանի շունչ են տալիս պումին։ Ռապսոդիայի մեջ մասնավորապես շափազանց ազդեցիկ է կանացի գեղեցկու-

թյան պատկերը, նույնիսկ կոպիտ կրքերի ու տարերքի մեջ բանաստեղծը տեղ է բացել գեղեցիկի հոգեբանական արձագանքի համար.

Ա ու մտան երկու գեղանի
Աղջկնառ՝ Հուր-Հրեղեն...
Սոսեցան կլոր սեղանին,
Դրեցին գավաթներ Հողեւ
Ու ճկուն շարժումով մի պարե՞
Իրենց սեգ ողջույնը տվին...
Ուխտավո՞ր, նման մի արև
Մի՞ անգամ թող կյանքը արևի,
Ուխտավո՞ր, մի՞ անգամ կյանքիդ
Օրերում տիսուր ու մոայլ
Թող ցոլա հրանուր ու անգին
Այդպիսի մի բախտ քո վրա:
Թող բացվի այդպիսի մի լույս
Երկրային կյանքում քո խավար—
Եվ ապա՝ տանջանքին հուր՝
Թող սիրտոց զավիտաւն նվատ:

Գեղեցկության պատկերը մեղմացնում է հատուրալիստական հատվածների ազդեցությունը։ Հոգեբանորեն, իհարկե, հասկանալի է չահել ասպետի խանդի ծնունդը։ Նա տեսկե, հասկանալի է չահել ասպետի խանդի ծնունդը։ Նա տեսկե, հասկանալի է չահել ասպետի խանդի ծնունդը։

Սեղինի խարույկներ էին խոլ
Սևամած աչքերը մեկի,
Մյուսի աշքերը — տիուր
Միրաժներ էին անմեկին։
Մեկի կործքը մզկի՞թ էր սպիտակ,
Մյուսինը — սե՞գ մի տաճար。
Մեկը թիւ գագե՞լ էր կապուտաշ,
Մեկը հոր նժո՞ւց սևալչա...
Մեկը թիւ քայլում էր թեթև,
Թողկոտում էր, որպես թիւ գագել...
Մյուսի քայլքն հրաթե—
Թոփէք էր դաշտերում ամազք...
Աշխարհում գեռ չի՞ երազել
Նման բախտ և ո՞չ մի արքա, —
Բայց այդ վառ բախտին տիրացել
Տիրացէ՞լ էր Անդոն շարկամ։
Ու հոսում էր հուր՝ հրահուր,

Թափում էր գրնին սեղանին:
Ու տարփում էին բոց մի մահու
Մարմինները նրանց գեղանիւ:

Ինչո՞վ էր գրավում Անդրոն այդ կանանց։ Հազիվ թե հոգնած ասպետը կարողանար պատասխանել այս տանջող հարցին։ Ինչո՞ր ծանր դրամա է թաքնված այս երկույթի մեջ։ Աշխարհում կան տարբեր տեսակի կրքեր։ Կան արատներ, որոնք շատ երկերում արտահայտվել են վայրենի ու ապաշնորհ ձևով, բայց կան նաև արատներ, բարդ, վիճելի խրնդիրներ, որոնք գեղարվեստի մեջ մարմնավորված են բարձր տաղանդով։

Զարենցն այս թեմայի մեջ, այդ պարագային բերում է բարդություններ ու նրբություններ, ներշնչման պահեր, շնախտեսված գեղեցկություններ: Ո՞րն է էականը, գրավիլը այս պատմության մեջ: Դիտելով երկույթը, ստեղծելով սեռի, կրքի, խանդի և անկման պատմությունը՝ Զարենցը հիվանդագին տրամադրությունների բովից պատկեր դուրս է բերում դրամատիկ խորհրդածությունների, գեղեցկության ու առեղջածաների ոլորտը: Բապսողիան ընթերցողի վրա թողնում է ցնցող տպավորություն: Մարդու հոգում ծնվում է մի զարմանալի թախիծ՝ գեղեցկության կործանման, արատի ու անկման, ոգեռության և տառապանքի պատկերների ազդեցության տակ: Խաչակիր ասպետը, ողջ կյանքում իր հետ, կըծի տակ, տանում է շահել օտերի խոր վիրավորանքը, գեղեցկության անքացարելի, խորհրդավոր անկման ձանք ազդեցությունը... Ամեն զեպիում ընդգծում է հոգու դրաման, որը կարող է երեան գալ ե՛ միջնադարում, և կյանքի բոլոր համփեքին, բոլոր ժամանակներում: Այս անգամ տաղս նդը կարողանում է հաղթանակ տանել իր իսկ պաշտպանած մոլոր տեսակետների դեմ:

շանք, հույզ, իր տառապանքն ու ողբերգությունը նա դուրս
էր հանում «սրտի խորերից»: Միջնադարի մեծ բանաստեղ-
ծը իր հանճարով գիտակցում էր այս ամենի անհրաժեշ-
տությունը մեծ բանաստեղծության համար: Այս հատկանիշ-
ների նշանակությունը շատ խոր են զգացել նաև հետագա-
շրջանի բոլոր իսկական տաղանդները: Բայց այս այս բո-
լորը անտեսվում էին նոր շրջանի տեսաբան բանաստեղծ-
ների կողմից: Նույնիսկ Զարենցը, մեծ Զարենցը նորի հա-
մար, իր սխալ գիտակցած կամ հոշակած նորի համար հրա-
ժարվում է աստծու տվածից, իր մեծ ձիրքի հնարավորություն-
նեթից, ներշնչումից, հույզից, սրտի խորերից, մտքի շի-
կացումից:

Զարենցը, իւսարկե, տուժեց այդ մոլորովյունների մեջ,
քայց «Անպետականը» հաստատեց ուրիշ բան։ Նույնիսկ
ամենամոլոր շրջանում անկեղծ ներշնչանքը այսպես թի այն-
պես օգնում է գրողին զուրս գալու կապանքներից, ստեղ-
ծելու իսկական երկ։ Պոեմում իսպառ բացակայում են նաև
ձեր տարօրինակությունները, անկանոնությունները, տգե-
ղանալու անզուսակ ձգտումը, որոնք բնորոշ էին «Նորարարու-
թյանը»։

Կար և մի ուրիշ էական տարբերություն Զարենցի և ըս-
կերակիցների միջև։ Զարենցը շատ բարձր էր նրանցից։
Թումանյանը կյանքի վերջին օրերին Զարենցի մասին ասել
է. «Զարենցի նամակից երևում է՝ տաղանդ է, որովհետև
տաղանդն է, որ ծուռ ճամփից իրեն կարող է ուզիդ ճամփի
վրա դնել»։ Տաղանդավոր անհատները կարողանում են գուրս
գալ մոլորություններից, իսկ փոքրիկ, թույլ ձիբերը՝ կոր-
ծանվում են։

ԳԵՐՁԻՆ ՄՈԼՈԲՈՒԹՅՈՒՆԸ

(«Ստանդարտի» կույսը

Բուռն վեճերից, աղմկալի պատմություններից ու ձախող փորձերից հետո, թվում էր, «Երեքի» ներկայացուցիչները մի փոքր հանդարտավեցին։ Շուտով տեղի ունեցավ անխու-

1 Ալ. Թումանյան, «Հուշեր և զրուցներ», 1969 թ., էջ 302։

սափելին՝ պառակտումը. «Երեքը» բաժանվեց երեք մասի: Մայր առան նոր վեճեր, այս անգամ արդեն երեքի միջև Զարենցը քննադատում էր և Վշտունու, և Արովի նոր երեքը: Արովը և Վշտունին նույնպես հետ չէին մնում: Ի՞նչ էր պատճառը: Թերևս ծիրքերի տարբերությունը: Ասում են, երկրորդական դեր չէր խաղում նաև առաջնության հարցը: Զարենցի ընկերները բնավ էլ չէին տառապում համեստությամբ: Բայց, իհարկե, բում պատճառն այն էր, որ ուրեքը շկարողացավ գտնել գրական ու հասարակական բավարար հող ու հիմք, տեսականորեն ու փորձով ներգործել հասարակական ճաշակի ու մտքի վրա: Բաժանումը անխուսափելի էր:

Բայց Զարենցը չհանդարտվեց։ Մի փոքր հիասթափությունից հետո նրա մեջ կրկին ալիք տվեցին զահել կիրքը և դիմագրելու ներքին եռանդը։ 1924 թ. Մոսկվայում նա մշացավ ճարտարապետներ Մ. Մազմանյանին և Կ. Հալաբյանին ու կրկին սկսեց մշակել իր նորագույն ծրագրեր՝ արվեստի ու գրականության մասին։ Նրանք հրատարակեցին «Ստանդարտ» ամսագիրը, ուր շարադրված էին նոր խմբակցության տեսական դրույթները։ Խնչն էր հետաքրքրականը։ «Ստանդարտ»-ում Զարենցը քննադատում էր «Երեքի» գեկլարացիան։ Դա միայն առաջին փորձն էր, — ասում է նա, — հինգ գեն նետելու և նորը հաստատելու ճանապարհին։ Այդ «Ակտը» կազմակերպված ձևով եղանակակում էր մեր պոեզիայի «տերյանական» շրջանը և հիմք դնում նոր շրջանի Զարենցը սպառիլ բնութագրում է «Երեքի» պակասությունը։ «Թեկլարացիան ավելի քան անկար էր ու խառնաշփոթ իր գրական ծրագրում, ավելի ճիշտ՝ այդպիսին նա համարյաթե լուներ»։ Ուրիշ խոսքով՝ «Երեքի» համար գրական ուղիների հարցը մնում էր շպարզաբանված, ժխտելով հինգ՝ նա գեռ շգփտեր «Թե ինչը պիտի բռնի նրա տեկր...»¹։

Ընդգծելով այս էական պակասությունը՝ Զարենցը, ահա, փորձում էր նսրովի որոշել այդ ուղիները, գալիք արվեստի ու գրականության բովանդակությունը, ուղղությունն ու բնույթը։ Բայց այս նոր փորձը դրությունը չի շտկում։ ԱՄան-

դարս»-ում շատ ավելի հստակ է երևում ձախ հայացքների և գոեհիկ սոցիոլոգիզմի ներքին աղքատությունը։ Զգիտես արդեն ինչ ճնշման տակ, թերևս «լեշի» նոր փորձերի, նա ընկ-նում է տեսական նոր մոլորությունների մեջ։

Զարենցը ամենից առաջ հերքում է արվեստի բուս շամկանիշը՝ կյանքի արտացոլման հատկանիշը. «Պրոլետարիականիշը՝ կյանքի արտացոլման հատկանիշը. «Պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ արվեստը պետք է ոչ թե արտացոլի, այլ ամենաակտիվ, ամենագործնական ու ամենաանմիջական ձեռվ պայքարի»: Այսինքն՝ արվեստը պետք է պայքարի, զրկվելով իր բուն տուրահատկությունից, նա բացատրում է իր տեսակետը, հենակետ ունենալով արվեստի հասարակական օգտակարության նպատակը: Բայց օգտակարությունը նրա հայացքներում շփոթվում է գործնական շահերի և մեկ ուժիիտարիզմի հետ: Օգտակարությունը շփոթելով գործնական նշանակության հետ, նա անտեսում է նաև արվեստի ողնաշարը՝ գաղափարական խորհուրդը: Զարենցը գտնում է, որ նոր արվեստը պետք է ունենա ամենաանմիջական, ամենագործնական բնույթ, մինչև անդամ՝ դադարի իդեոլոգիական կատեգորիա լինելուց, զառնալով «գործնական կատեգորիա»: Գաղափարների անտեսման հետ միասին նա բոլորովին մերժում է նույն արվեստի գեղագիտական կողմը:

ինչպիսի՞ն պետք է լինի նոր արվեստը, ի ոչ առկ առդ գործի կյանքի ընթացքի վրա։ Ահա նա փորձում է առաջ գնալ երեքի գեկլարացիայից և առաջադրում է իր տեսակետը գալիքի մասին։ «Բարձրացող արվեստը պետք է լինի սագիտկա» բառիս ամենալայն իմաստով։

Այդպես, «Ստանդարտ»-ի կուրսը» առաջնորդողութ
ջարենցը և ընկերները գրականության և արվեստի մեջ էա-
կանը համարում էին ազիտկան: Ավելի մանրամասն նրանք
այսպես էին ներկայացնում նախընտրելի գրական տեսա-
կետներն ու ձևերը: Գրականության մեջ՝ դիկտատուրայի
ժամանակաշրջանից վերցրած արկածային վեպ, սատիր-
ագիտ, հերոսական ագիտ-դրամա, նկարչության մեջ՝ պլա-
կատ, կարիքատուրա, իլլուստրացիա, շարժ, ֆոտո և կինո-
նկարներ, ճարտարապետության մեջ՝ ընթանալ ժամանա-
կակից ինժեներիայի հետ կողք-կողքի, թատրոնի մեջ՝

1 b. Գարենց, Երկերի ժողովածու, հ. 6, 1967, էջ 97,

շարժական ագիտ-թատրոն, բանվորական ակումբների թատրոնական կողեկտիվներ՝ բանվոր գերասաններով, Թատրոն՝ սատիր-ագիտ, քաղաքական բռնփոնադ, հերոսական ագիտդրամա խաղացանկով: «Հոգեբանության գոխարեն»: արյունկիզմ, ֆիզկուլտուրա: Կինո»¹:

Աւրիշ խոսքով՝ «Ստանդարտ»-ը (օրինակելի նմուշ, մոդել) գրականության մեջ հերքում էր գեղագիտականը, անգամ գաղափարականը, դուրս գալով արտացոլման, հոգեբանության, կենցաղագրության դեմ, մերժում էր սոցիալական-հոգեբանական վեպը, դրաման, պոեմը, նկարչության մեջ առաջ էր քաշում մասսայական սպառողի խնդիրը, հերքելով «Կիսամեռուած» պեյզաժը, ժանրը, պորտրետը, ճարտարապետության մեջ՝ անցյալի ավանդները, իսկ թատրոնում՝ դերասանական մասնագիտական արվեստը:

Նրանք անլուրջ հարձակվում էին հայրենի և համաշխարհային արվեստի դեմ, տեղը դնելով առօրևական, գործնական, մակերեսային ձևերն ու տեսակները։ Զախ մոլորությունները դառնում էին լուրջ վտանգ։

«Ստանդարտ»-ի կուրսը շատ կողմերով նման էր 1923 թ. «Լեֆ» խմբավորման (ձախ ֆրոնտ) և ամսագրի լոգունքներին և Մայակովսկու տեսակետներին։ Խնդնակենսագրության մեջ 1923 թ. մասին Մայակովսկին գրել է. «Կազմակերպում ենք «Լեֆր»։ «Լեֆր»։ — դա սոցիալական մեծ թեմայի ընդդրկումն է բոլոր գործիքներով։ Այս բնորոշումով, իհարկե, խնդիրը չի սպառվում։ Հետաքրքրվողներին հանձնարարում եմ ամսագրի համարները։ ...«Լեֆի» լոգունքներից մեծ նվաճումներից մեկը՝ արտադրողական արվեստների ապահովետացումն է, կոնստրուկտիվիզմը։ Բանաստեղծական հավելված՝ ագիտկա և տնտեսական ագիտկա՝ ռեկլամ։ Զնայած բանաստեղծական վայնասուններին, համարում եմ «ոչ մի տեղ-բացի»։ «Մոսսելպրոմից»—բարձրագույն որակի պոեզիա։

ՖՈՍՏՈՐԻԳՄԸ ճգնաժամի մեջ էր, արդեն ակնառու էին դառնում նրա տեսական կազմակերպչական և ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ խոշոնդունելիք՝ սոցիա-

լիստական գրականության զարգացման ճանապարհին: Դա
նույնքան ակնառու է ու նաև հայկական արձագանքների մեջ,
երեքի դեկլարացիայում և «Ստանդարտ» ամսագրում:

Բարեբախտաբար «Ստանդարտին» վիճակից տրուի
վախճան։ Մ. Մազմանյանը թողել է մի ուշագրավ հուշ։
Մոսկվայում Զարենցը «Ստանդարտի» մի օրինակը տալիս է
Ա. Մյասնիկյանին։ «Մյասնիկյանը կարգացնել էր ու մի լավ
քննադատել մեր ամսագիրը իր անընդունելի գաղափարների
համար և խորհուրդ էր տվել ոչնչացնել բոլոր օրինակները»

Զարենցը տիսուր վերադարձավ ու հայտնեց ոսր ամերկ ների մասին։ Հենց նույն երեկոյան, հուլիսի 1-ին, վառեցինք մեր Հանրակացարանի մեծ պլիտան և կրակին տվինք անքան սիրով զուտի բերած մեր «Ստանդարտը»։

«Սահմանադրություն» մնացել է միայն մի օրինակ, բասկա-
րանային օրինակ:

Այսպես, ահա, Զարենցը կրակին է հանձնում իր վերջին մոլորությունը: Երկրի գրական-քաղաքական նշանավոր մարդկանց հուզում էր Զարենցի ճանապարհի և ստեղծագործական աշխատանքի խոնդրը: 1924 թ. Անդրֆեղբացիայի կենտկոմի քարտուղար Ա. Մյասնիկյանի աջակցությամբ Զարենցը մեկնում է արտասահման՝ մոտիվից ծանոթանալու համաշխարհային կյանքին ու արվեստին: Այս գործուղումը շատ բեղմնավոր եղավ: Շուրջ ութ ամիս (1924 նոյեմբեր—1925 հունիս) նա մնաց արտասահմանում, շրջեց մի շարք երկրներ (Թուրքիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա), եղավ մեծ քաղաքներում, այցելեց նշանավոր թանգարանները, Պոկվելով ձախի խմբավորման գրկից, նա գեռ արտասահմանում լով ձախի խմբավորման գրկից, նա գեռ արտասահմանում զբաղված էր նաև ինքնադատությամբ: Հենց այստեղից գրած նամակներում նա ամբողջովին ընդունում է մոտիկ անցյալի սիալները, կրկին մտնելով մեծ արվեստի մայրուղի, շարունակելով հեղափոխության և նոր կյանքի երգը: Այս, Զարենցը շուտով զգաց իր սիալը, հրաժարվեց ձախի դիրքերից, ընկերներին թողնելով շոր գետնի վրա: Վշտունին ու Աբովը այդպես էլ չկարողացան իրենց հավաքել, մտնել մեծ արվեստի հոմքը, մինչդեռ Զարենցի նոր շրջանը բերեց անսովոր ծաղ-

Հայոց թագավորության տպաքանչական գործակությունների պահպան և մասնաշենք, 1961 թ., էջ 69

կում, ստեղծագործական մեծ վերելք։ Կրակին տալով բոլոր ձախ ու ծուռ հայացքները, բարբարոս ու խենթ շահելության շղաձգումներն ու որոնումները՝ նա կրկին մտնում է սոցիալիստական գրականության մեծ ընթացքի մեջ, դառնալով գրական շարժման առաջատար ուժերից մեկը։

Այս անգամ արդեն ծայր է առնում գրական մի նոր մաքառում, սկիզբ է առնում մրցություն՝ դասական արվեստի հետ։ Նա սկսում է հրաշքներ գործել բոլոր այն տեսակներում, որ երեկ ժխտել էր ինքը։ Ստեղծվում է հոգու և իմաստության մեծ բանաստեղծությունը։ Զարենցը երեսում է գրական հսկա մի արարիչի կերպարանքով, նորովի շարունակում հազարամյա պոեզիայի ուղին և բացում նոր ճանապարհներ։

ՄԵԾ ԿՅԱՆՔԻ ԷՊԻԿԱԿԱՆ ՀՅՈՒՍՎԱԾՔԻ

ՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՃԻ ՀԱՅՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆ

Արդեն բազմիցս խոսել ենք Զարենցի մի բարձր հատկության, նոր սահմանագծերի և ոճի հայտնագործումների ձիրքի մասին։ Իրոք, Զարենցի ամեն նոր գիրք բոլորովմին նոր աշխարհ էր, կենսական նյութի տրուման, կերպավորման և գեղարվեստական մտածողության առումով։ Առերևույթ նույնիսկ այնպես կարող էր թվալ, որ այդ գրքերը ստեղծել են տարրեր ոճի և նախասիրությունների տեր հեղինակների կողմից։ Բայց միայն առերևույթի Ըստ էության, այդ մեծ անհատականության ստեղծագործ միտքը անվերջ շարժման մեջ էր և նյութի ճնշման տակ կամ նյութի կազմավորման ընթացքում բացվում էր նոր հնարավորություններով, մշտապես տեղի էր ունենում կենսական նյութի, այսինքն՝ կյանքի ներքին շարժման և բանաստեղծական խառնվածքի շատ բարդ փոխներգործություն, փոխթափանցում, որը զգալի հետք էր թողնում բանաստեղծական մտածողության ընթացքի վրա։

Ավելի ճիշտ, որքան ծավալվել, բարդացել ու խորք է ստացել կյանքը, այնքան նոր խնդիրներ են ծառացել Զարենցի առջև, նրա հոգում կուտակվել են հսկայական դիտումներ, խոհեր, զուգորդումներ, որոնք հենց տարերային ուժով ստիպել են բանաստեղծին որոնել կերպավորման նոր եղանակ, կառուցվածք և ոճավորման հնարավորություններ։ Դրա հետ միասին նշենք, որ առերևույթ գեղարվեստական անակնալիքներ թվացող նրա գրքերն ունեն ներքին գորեղ կապեր, և եթե կուգեք, ստեղծում են հայկական իրականության շարժման էպիկական մեծ հյուսվածքը, ուր ազգային բուն հոսանքին խառնվել են համասովետական և համաշխարհա-

յին կյանքի աղերսները, անմիջական և անուղղակի արձագանքները:

Ուրեմն նյութը թեև անվերջ փոփոխվում էր և զարգանում, ծեռք բերելով նոր հատկանիշներ, սակայն ողջ Հայաստանի կյանքն էր՝ ներքին կապերով, հաջորդականությամբ, ժամանակով, բարդացումներով, նրա հերոսը միշտ մնում է նույն Հայաստանը, սակայն նոր կապերի մեջ, հասարակական ու հոգեբանական խմորումներով, ժողովուրդների ընտանիքում ձեռք բերած տեսակարար կշռուի:

Ահա այստեղ ծագում են և գեղագիտական ծրագրերի ու ոճի խնդիրները, կապված զարգացման բարդությունների հետ: Սովորաբար, Զարենցի գեղագիտական ծրագրերի լավագույն մասը կամ բուն մասը կապվում է «էպիկական լուսաբացի» հետ: Սակայն այստեղ խոսք կարող է լինել միայն ուելիստական ոճի և մեթոդի թանձրացման և նոր, ավելի բարձր քննության մասին: Իրականում այս խնդիրը Զարենցին սկսել է մտահոգել Սովետական Հայաստանի առաջին իսկ օրերից: Հենց նոր շրջանում ստեղծած առաջին իսկ քննարական գրքում՝ «Տաղարանում», Զարենցին մտահոգում էր օրերի խրնդությունն արտահայտելու, «հոգեկան բարդի», կենդանի մարդու, «հոգեկան կարդի», սրտի ուզած տաղի խնդիրը:

Հենց այդտեղ Զարենցն սկսում է պսակազերծել անհոգի, անսիրտ բանաստեղծությունների պղտոր հոսանքը: Հենց այդտեղ նա հարազատորեն կապվում է զասականների՝ Սայաթ-Նովայի, Վահան Տերյանի, Միսաք Մեծարենցի հարստության հետ: Ուշադիր նայելու դեպքում դժվար չէ նկատել, որ նույն այս խնդիրներն են ընկած նաև «էպիկական լուսաբացի» գեղագիտական ծրագրերի հիմքում: Զարմանք են պատճառում Զարենցի խորաթափանցությունը և բանաստեղծության ուղիների կուհման մեծ ուժը, քանի որ նոր կյանքի արշալույսին, թերևս տեղ-տեղ տարերայնորեն, նա զգաց սոցիալիստական ուսալիզմի գեղագիտական հատկանիշները Բայց դա միայն սկիզբն էր, առողջ, ուժեղ սկիզբ: Առջևում կանգնած էին կենսական և ստեղծագործական բարդություններ, որոնք հատուկ դժվարություն էին ծնում բանաստեղծի առջև: Կարող է հարց ծագել՝ այդ դեպքում ինչո՞ւ ընդհատվեց գեղագիտական ըմբռնումների և գեղարվեստական փոր-

ձի ճանապարհը, ինչո՞ւ երևան եկան ծախությունները, կոմֆուտուրիզմի տխուր երևույթները, ոճական շնորհմները՝ ուսացմից և հեղափոխական ոռմանտիզմից:

Մենք արդեն խոսել ենք մի շարք պատճառների մասին: Այստեղ հարկ ենք համարում հատկապես առաջ քաշել և ընդգծել մեկը: Բանն այն է, որ իր գեղագիտական ծրագրերը նա մարմնավորում էր իրեն ծանոթ, հայտնի, հարազատ նյութի միջոցով, նոր կյանքի առաջին երևույթների և հոգեբանական արձագանքների աջակցությամբ: Խոսքը վերաբերում է Հայաստանի գերւանությանը, կյանքի վերընձյուղմանը և հեղափոխության թեմաներին: Բայց ահա նոր կյանքի ճյուղավորված, բարդացող ընթացքը, նոր աշխատանքն ու առօրյան դեռևս դժվարությամբ էին ենթարկվում բանաստեղծական տարերքին:

Կենսական-հոգեբանական երևույթները առաջին տարիներին դեռ այնքան ակնառու և ընդգծված չէին կամ, ավելի ճիշտ, բանաստեղծական շիկացումների համար անհրաժեշտ հրկիզող չէին տալիս: Այս իմաստով՝ բանաստեղծությունը նկատելիորեն զանազանվում է մյուս ժանրերից, մասնավորապես արձակից, մանրամասների փոխարեն սիրում է հզոր գրգիռներ, նոր, ուժեղ լիցքեր: Բոլորովին պատահական չէր, որ «Ճախությունների» ընթացքում արձակագիրները, ինչպես ասում են՝ գլուխները կախ, խաղաղ քննում էին իրականության փաստերը, ստեղծում կյանքի մանր ու մեծ տեղաշարժերի պատմությունը: Զախ մոլորությունները անցան Գեմիրճյանի, Ա. Զորյանի, Ա. Բակոնցի կողքով: Պատահական չէ նաև այն ուշագրավ երևույթը, որ «Ճախ» մոլորությունների մոլեգին շարժման տարիներին գրված «Երլորությունների» մոլեգին շարժման տարիներին կիրակի նախրի» վեպը իր վրա կրում է այդ մտածողության միայն աննշան հետքերը:

Այս ամենը մեզ հիմք են տալիս մտածելու, որ բանաստեղծության ճգնաժամը կապված էր նրա յուրահատկության, կյանքի հետ ունեցած աղերսների ուրույն բնույթի հետ: Այսո, նյութը դժվար էր հանձնվում բանաստեղծին, այնինչ մեծապես զգացվում էր նոր օրերի պոեզիայի անհրաժեշտությունը: Ուրիշ խոսքով՝ բանաստեղծական ծրագրերը դեռևս չէին գտնում կենսական հող, գրական փորձը ետ էր մնում

տեսությունից, որի պատճառով սկսվում էին տատանումներն ու շեղումները նաև այս ոլորտում։ Բայց աստիճանաբար բանաստեղծությունը և տեսությունը ներդաշնակում են, ձևավորվելով կյանքի զորացող լիցերի աղդեցոթյան տակ։

Սկիզբ առնելով «Տաղարանից», «Ամենապոեմից», ծրագրային բանաստեղծությունը ստանում է նոր խոսք, նոր իմաստավորում, արդեն թափանցելով բարձրացող երկրի աշխատանքային ստեղծագործ տարերքի, կյանքի գեղեցկությունների և էպիկական ընթացքի մեջ։ Դեռ արտասահմանում Զարենցը զգում է մոլորությունների բուն պատճառները և առաջ քաշում նոր կյանքի արտացոլման, նոր նյութի մարմնագորման միջոցով դասական արվեստի հետ մրցելու հարցը։ Կյանքի այդ հրամայականը շատ ազդեցիկ է հնչում «Պոեմ Հերոսականի» նախերգանքում և «Էլեգիա զրված վենետիկում» պոեմում, այսինքն՝ 1925 թ. ստեղծված երկերում։

Լեֆտան թմրուկը թողած մի կողմ,
Հատվող տողերը նետելով դեն,
Կրկին խրթին մի խոր դողով
Առնուած յամբ ես ու քողալոտ,
Որ մեր պայքարը քնարերգեմ։

«Պոեմ Հերոսականի» մեջ նա իր հեղափոխական պոեգիան համարում է լեֆյան թմրուկի ձայն, բայց դա անարդարություն է, քանի որ Զարենցի հեղափոխական լավագույն պոեմներն ու բանաստեղծությունները որոշակիորեն զանազանվում էին կոմֆուտի փորձից, մեծ բովանդակության, հուզականության և ձեր ներդաշնակության բացառիկ օրինակներ էին։

Սակայն այս ամենի մեջ կա երկու կարևոր կետ. առաջինը՝ Զարենցը հրամարվում է «Լեֆի» ոճից, զենքերից ու ձեմից, երկրորդ՝ Զարենցը շատ դիպուկ բնութագրում է իր հեղափոխական պոեգիայի հոգեբանական, գաղափարական և գեղագիտական նշանակությունը՝ հայ կյանքի և գրականության ճանապարհին, իր խաղացած գերը՝ հայ կյանքի խավար ու երերուն օրերին, ազգային զարթոնքի, գալիքի հույսերը բորբոքելու համար։

Եվ մի՞թե, մի՞թե, մի՞թե շերգեց
Եվ լողունեց իմ սիրտը խնդուն
Այն առավոտը—այն խոր մթնում,
Խոր խավարո՞մ այն—արևն այն կեզու
Երկրում երբ մա՞հ դեռ ու մուժ կար մի՝
Այն ո՞մ հայացքն էր անահասաստ,
Որ մեր գալիքը այնքա՞ն կարմիր
Եվ այնքա՞ն, այնքա՞ն պայծառ տեսավ...
Եվ շատերի՞ն դեռ թվում էր երբ,
Թե գերեզմա՞ն է մեր դեմ բացվում—
Իմ աղաղակը, իմ երգը չէ՞՞ր՝
Հնեցց խանդո՞վ խոր ու խաղացկուն.—
Խո՞ր հիացքով մի ու խինդով խոր
Ես ողջունեցի այգը երկիւս
Եվ ավետեցի թինդով երգիս
Երկրիս թոփչին ու բախտը նորու
Եվ աղմկում են եթե այսօր,
Ղծուամ են շուրջս ձայներ նորեկ—
Ես հարցնուամ եմ թախիծով խոր.—
Զեր ձայնը ո՞ւր էր, ո՞ւր էր երեկ...
Խնչքան էլ խորը ես դեգերեմ,
Խնչքան երթին ձեր լինեմ «օտար»—
Գիտեմ՝ երկիրս ինձ իմա՞ռք կտա
Եվ սերունդները ինձ կներեն...

Այս ընդարձակ հատվածը մենք մեջ ենք բերում միտունավոր, քանի որ այստեղ կան շատ հետաքրքրական մեկնություններ, կենսագրական գծեր, գրական մթնոլորտի արձագանքներ։ Խնչքես երկում է, դեռ 1925 թ. հեղափոխական Զարենցի և հեղափոխական երգի շուրջը բարձրացել էր աղմուկ ու «ղղճոց», այդ շրջանից էր սկիզբ առել «օտարության», «խորթության» լեգենդը։ Ճախ խմբավորումները, մասնավորապես պրոլետ գրողների ասոցիացիայի ղեկավարները Զարենցի պոեզիան իր լավագույն դրսերումներով հանդերձ, համարում էին սոցիալիստական երթից և գրական ուղղուց գուրս մեացած օտար երկույթ։ Ուրիշ խոսքով՝ մեծ բանաստեղծությունը դիտվում էր մութ ակնոցներով և շափազանց կասկածելի շափանիշներով, դա ծագում էր երբեմն տեսական ընշաղըրկությունից, հաճախ էլ՝ խմբակային նկատառումներից։ Հետևաբար ամեն ինչ՝ և հարստությունը, և թշնամանը, գալիս էին խորթից, ունեին իրենց հեռավոր սկիզբը։

Բայց այստեղ չափաղանց կարևոր է մի ուրիշ հանգամանք, որ շատ բան է ասում Զարենցի ստեղծագործական նոր մաքառումների և գեղագիտական ծրագրերի մասին։ Զարենցը լավ գիտեր, որ ինքը մեծ դեր է խաղացել գրականության մեջ՝ քաղաքական անցումների դարաշրջանում, կատարել է իր պարտքը՝ հեղափոխության ու ժողովրդի առջև։ Սակայն չէ որ երկիրը մտել էր նոր հունի մեջ, փոխվել էին աշխատանքի ու պայքարի ոիթմերը, ծավալվում էր հենց այն կյանքը, որի համար մաքառել էր հեղափոխական պոեզիան։

Ուրեմն ծագում էր նոր պարտքի, ստեղծագործական նոր աշխատանքի ու մաքառումների անհրաժեշտությունը։ Պոեզիան ետ էր մնում այդ ընթացքից, որն արդեն տալիս էր իր տնտեսական, քաղաքական ու բարոյական արգասիքները, ստեղծում նաև իր հոգեկան հարատությունը։ Այս կրկին նա մտնում է առաջնորդ դերի մեջ, այսինքն՝ ճանապարհ է հարթում հայ բանաստեղծության համար և տեսականորեն, և ստեղծագործական փորձով։ Դժվար է ասել, թե դրանցից ո՞րն է եղել առաջինը, փորձից է ծնվել տեսական հայացքը, թե՞ տեսական հայացքներն են նրան տարել նոր փորձի տարերը։ Թերևս երկուսը երեսն են եկել միասնաբար, քանի որ ծրագրային բանաստեղծություններն իրենց հերթին նաև գեղարվեստական նոր փորձի հետաքրքիր նմուշներ էին, միացնում էին երկու հատկանիշները։ Բնորոշ օրինակը՝ 1925 թ. գրած «Էլեգիան...» էր։

Այս պոեմի շուրջ, մասնավորապես հին ու նոր բանաստեղծների հակադրության առիթով, գրականագիտությունը մշակել է որոշ հայացք։ Մասնավորապես Սուրեն Աղաբարյանը լիովին բաժանում է Զարենցի և ոգևորությունը, և նոր հայացքը հին ու նոր պոեզիայի մասին։ Աղաբարյանի հետ կարելի է համաձայնել միայն մի պայմանով, եթե վերանանք «հին» բանաստեղծի, այսպես կոչված, նախատիպից։ Բանն այն է, որ «հին» բանաստեղծի կերպարը ստեղծելիս, նա օգտագործել է Ավետիք Խսահակյանի կենսագրական և բանաստեղծության մի շարք փաստեր։ Համենայն դեպք դրանք շատ ակնառու են։ Եվ այստեղ, իհարկե, կա մի որոշ անարդարություն, մի մեղանչում, որն ըստ երևութիւն մոտ անցյալի ձախ մոլորության վերապրուկն է։

Զարենցը կարծես անտեսում է իր նախորդի պոեզիայի բողոքը, և հումանիստական պաթուսը, և ղեմոկրատիզմը, խոր կապերը։ Հայրենի հողի հետ, հավատը գալիքի նկատմամբ։ Ծեր պոետն իբրև ատել է և տերերին, և ճորտերին, երազել է սոսկ քաղցրենի մի անդորր, մի մարմանդ ճահճին, իրազել է սոսկ քաղցրենի մի անդորր, մի մարմանդ ճահճին, հայրենի երկրի վերևէքը նրա հոգում սոսկ մաղձ է կուտակել։ Դա մեծ անարդարություն էր, եթե նկատի ունենանք բուն իրողությունը։ Բայց եթե վերանանք կոնկրետ փաստերից և երկը դիտենք իբրև գեղարվեստական ընդհանրացում, այսինքն՝ զիտենք իբրև գեղարվեստական ընդհանրացում, այսինքն՝ ինչպիսին որ կա, ապա հեշտությամբ կարող ենք հայտնաբերել այդ երկի գեղագիտական ու հասարակական նշանակալից բովանդակությունը, որը շատ էական էր գեղարվեստական մեծ անցման տեսանկյունից։ Ամբողջ պոեմը վառվում է հայկական առօրյայի պաթոսով, աշխատանքային եռուցեռով, էպիկական ընթացքի զգացողությամբ, կյանքի գեղեցկությամբ, մանավանդ սպասվող գալիքի պատկերներով։

Զարենցի ստեղծագործության մեջ աստիճանաբար զորանում էր նոր իրականության, կինսական երակների երգը, կրկին նա մտնում է ուսալիզմի հունը, միրճվելով մեծ կյանքի տարերը։ Բազմաթիվ վտակներ հարստացնում էին իսուների ու զգացումների հոսանքը։ Հենց հեղափոխության թեմայի մեջ ևս ակնառու էր դառնում որոշակի առաջնադացում՝ ոռմանտիպմից գեպի ուսալիզմը, այսինքն՝ տեղի են ունենում թեմայի մարմնավորման հարստացում և գեղարվեստական նոր միջոցների հայտնաբերումներ։

Զարենցը հասնում է ստեղծագործական ծանրակշիռ նվաճման ու հոգեբանական յուրահատուկ խաչաձեման։ Նա միշտ ազգային հեղափոխական նյութին նայում է հայկական հայացքով, ազգային նոր հոգեբանության տեսանկյունից, իսկ տեղական նյութը պատկերում է համասուվետական ու համաշխարհային աղերսների խոր իմացությամբ՝ ընդհանուր միջնորդությամբ։ Միջազգային նյութի պատկերներում մշտապես լորտի մեջ է Միջազգային խառնվածքի շեշտը, իսկ հայկական նյութի մեջ մշտապես խփում է սովետական կյանքի ոիթմը։

Ինելով ոռմանտիկ տարերքից գեպի ուսալիզմ, նա ձրգում է ճանաչողական հարստության, հոգեբանական հիմնավորման, կերպավորման և անհատականացման բազմա-

զան եղանակների: Ուելխստական ոճի ամենաակնառու նվաճումներից էին Լենինին նվիրված «Լենինն ու Ալին», «Թալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին», «Կոմունարների պատը Փարիզում» բալլագները, միջազգային թեմայով գրքած՝ «Ստամբոլը» և ուրիշ երկեր:

Լենինի կերպարին դիմելը թե՛ ստեղծագործական խիզախություն էր և թե՛ նոր ճանապարհի սկիզբ: Այս բնագավառում ևս Զարենցը դառնում է ուղի բացող, նրա օրինակին հետևում են ժամանակակիցներն ու հետորդները: Սակայն մի շատ կարևոր կետում նա տարբերվում է մյուսներից: Զարենցը խուսափում է պաթետիկ, վերամբարձ ոճից, միտինգային, հանդիսավոր կերպարվորման սկզբունքից՝ ձգտելով մեծ անհատին կերտել բնական երանգներով, բնական միջավայրում, հաճախ իրական դեպքերի մթնոլորտում: Լենինյան թեման Զարենցի մոտ ստանում է ստեղծագործական հատուկ բովանդակություն և կարևոր դեր կատարում սոցիալիստական ուսալիզմի նվաճման ճանապարհին:

Առաջնորդի կերպարին բանաստեղծը մոտենում է պատմական ժամանակաշրջանի սուր զգացողությամբ, ուսալիստական արվեստի սկզբունքային դիրքերից, գեղարվեստական շափի ընկալումով: Զարենցի համար Լենինը ամենից առաջ պատմական առաջազիմության կրողն է, քանաներորդ դարի ոդին, նրա խորհրդանիշը: Ամբողջ քանաներորդ դարը բանաստեղծն անվանում է լենինյան, իսկ Լենինին համարում այդ դարի ամենանշանակալից, ամենապայծառ երեսութը.

Մեծ է մեր դարն, ինչպես օվկիան, և օվկիանում այդ անհուն,
Որպես արև անեղրական—քո անուն է բարձրանու:

Սակայն Զարենցը սովետական գրականության ականավոր վարպետների հետ միասին հասկանում էր, որ մեծ արվեստ ստեղծելու, ինչպես նաև Լենինի հանճարին արժանի գեղարվեստական կերպար կերտելու համար անհրաժեշտ է գաղափարը բարձրացնել գեղագիտականի ու գեղեցիկի մակարդակին: Ահա թե ինչու այսպիսի խանդավառ գնահատականների կողքին նրա մոտ գերակշռում են ուելխստական պատկերները, որոնց մեջ Լենինը երեսում է նաև կյանքի «փոքր», բայց զուգիշ ու բնութագրական մանրամասների

մեջ: Այստեղ դրսեռովում է Զարենցի մեթոդի մի առանձնահատկությունը, որն արտահայտվում է փոքր փաստերից լայն գեղարվեստական ընդհանրացումներ անելու ուսալիստական սկզբունքի մեջ: Ահա Լենին—ժողովուրդ հարաբերության բնորոշ պատկերը՝ «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին» երկը: Մեծ վարպետությամբ Զարենցն ստեղծում է հեղափոխության առաջնորդի կերպարը, բնական երանգներով ցույց տալիս նրա մարդկային գծերը, յուրահատուկ աղերսների մեջ ներկայացնում հանճարին ու հասարակ մարդուն, տեսնում նրանց հարազատ գծերը, լենինյան այն խորաթափանցությունը, որը փոքրի մեջ նկատում է մեծը, ժողովրդական հոգեբանության բացվող շերտերը: Սիբիրցի մուժիկին Լենինի մոտ է բերել հավատը: Լենինի ժողովրդասիրության մասին ունեցած համոզմունքը: Մուժիկի մոտ կասկածի նշույլ չկա, թե առաջնորդը հակարծ իր արտառոց խորհրդը չի կատարի, ուստի խորին համոզմունքով նա աղմկում է նախասենյակում, մինչև որ հասնում է նպատակին: Լենինի կերպարի հմայքը մեծ շափով պայմանավորված է նրա բնական, անկաշկանդ, ոչ պաշտոնական պահվածքով: Առաջնորդը սովորական մարդկային հետաքրքրասիրությամբ մոտենում է դռանը, զրուցում գյուղացու հետ և ապա՝

Միծաղում է քահ-քահ Իլյիչը:
Խորամանկ խինդ է աղերսում:
Բոթում է մուժիկին,

Հետո—
Կերցնում է մի թուղթ,
Գրում է.—
«Ում որ հարկն է.
Տակ մուժիկին մի զույգ կոշիկ»:

Զարենցին հաջողվել է գեղարվեստական պատկերի միջոցով վերականգնել այն հոգեբանական կապը, որ ձևավորվել էր պատմական նորագույն շրջանում՝ հանճարեղ անհատի կապականական գործությամբ գրողը ստեղծել է հանճարի և հազարմանալի հմտությամբ գրողը ստեղծել է հանճարի և հասարակ մուժիկի հանդիպման պատկերը, արտահայտել նրանց խոհերը, ըմբռնումները, նոր կյանքի հուն մտած գյուղացիու-

թյան հավատը հեղափոխության առաջնորդի նկատմամբ:

Նույն համոզիլ մանրամասները, նույն բնականությունն ենք տեսնում «Հենին ու Ալին» պոեմում: Տրավիզոնցի թիավար Ալու համակրանքի ազնիվ ցուցը գեղարվեստական տեսակետից շատ ավելին է ասում, քան երկարաշունչ ու վերացական շատ ներբողներ: Ռուս նավաստու պատմածների շնորհիվ լենինը Ալու համար դարձել է հույսի փարոս, հարազատ ու սիրելի, ուստի նրա մահն Ալին ապրում է իբրև անձնական վիշտ և վտանգն արհամարհելով՝ իր ցավակցությունն է հայտնում սովետական հյուսատուսին: Իրական փաստի հիման վրա ստեղծված գեղարվեստական այս հույսի պատմությունը ստանում է ընդհանրացման ուժ: Գաղափարական-գեղարվեստական եղանակումը, թե լենինը հարազատ ու սիրելի է Արևելի աշխատավորության համար, արտահայտվում է գործողությունների բնական ընթացքի մեջ, համոզիլ պատկերով: Սա էլ հենց ուսալիստական ոճի հաղթանակն է:

Հավատարիմ մնալով պատմական ճշմարտության ու ժամանակի ոգուն Զարենցն ստեղծում է լենինի և միջազգային պրոլետարիատի առնչության գեղարվեստական պատկերը: «Հենին ու Ալին», «Կոմունարների պատը Փարիզում» երկերում լենինի կերպարը երևում է նոր լույսի տակ:

Բոլոր այս երկերի մեջ երևում են նաև հայ ժողովրդի հայացքը, մեծ սերը լենինի նկատմամբ, հոգեհարազատությունը միջազգային հեղափոխության սրբություններին ու աշխատանքներին: Բանաստեղծի խոսքի մեջ խտանում է իր ժողովրդի խոհը, սերը, երազն ու հավատը: Զարենցը հաճախ մարմնավորում է խոհը, գործողության տեսք տալիս մեծ առաջնորդի և հայ ժողովրդի պատմական առնչությանը: «Չուզունե մարդը» պոեմում լենինի արձանը դառնում է այն մոգական ուժի խորհրդանիշը, որ փոխում է գետերի հոնը և շրջում հայ ժողովրդի պատմության ընթացքը: Լենինի և լենինիզմի կատարած դերը հայ ժողովրդի կյանքում ավելի անմիջական, թեև խորհրդանշական ձեռվ, երևում է հետո «Մահվան տեսիլ» պոեմում: Հեղափոխության առաջնորդն այն փրկարար ուժն է, որ հուսավառ իր լապտերով ուզի է նշում արյունաքամ ժողովրդի համար.

Այդ լապտերը իր զեմ պահելով՝ նա հանեց մեզ մութ անտառից, Մոլորվել էինք ուր արդեն՝ կորցըրած ուզի ու հավատ...»

Զարենցը հանճարեղ մարդու կերպարն օժտում է նորանոր հատկանիշներով, հայտնաբերում հարստության ու գեղեցկության նոր շերտեր, անում անսպասելի հայտնագործություններ: Առաջնորդի մահը դառնում է նրա շարունակվող կենսագրության նոր էջը. Հայ բանաստեղծն ընկալում է պատմության այդ պահի գերագույն իմաստը, արտահայտում մահվան կազմակերպող, միացնող ուժը, տեսնում ըմբռստության, հավատի ու կամքի փոխվող վիշտը.

Մենք փող զարկինք ե արձագանքն ահազոր երկրից-երկիր որոստածայն շառակեց...

«Լենին» բանաստեղծության մեջ արտահայտված վիշտն ու հավատը «Մահվան բայլերգում» ընդունում են առնական ու հերոսական շեշտեր:

Եզ լուռ ննչած Առաջնորդի դագաղի
Երիխն ելած բազմություններն այդ անահ
Երդում տվին պայքարելու կատաղի—
Մինչև վերչե՞ն, մինչև վերշե՞ն հաղթանակ...

Լենինի ոգեշնչող կերպարը, ոգին ու պատգամները գաղափարական ու գեղարվեստական ներդաշնակ ձուլվածքով են հանդես գալիս Զարենցի ողջ ստեղծագործության մեջ լենինյան թեմայի գեղարվեստական մշակման մեջ ավելի որոշակի ու արտահայտի գրսնորվեցին գրական նոր մեթոդ՝ սոցիալիստական ու ալիզմի առանձնահատկությունները: Նավաստի Ալին, որ կեսզիշերային լուսության մեջ, թաքուն, մեջքը պատերին քսելով գալիս է սովետական դերապանատուն, լենինի առանձնասենյացի առջև մի զույգ կոշիկի համար վիճող մուժիկը, համաշխարհային գործերը թողած և հասարակ մուժեկի հետ զրուցի բռնված լենինը, կոմունարների հըրդահած դեմքերը պատի վրա, բաղաքացիական պատերազմի ողբերգական վերհուշը, Ստամբուլի վերնախավի արատների շրջապտույտը, — բազմաթիվ-բազմաթիվ մանրամասներ, հոգեբանական խտացումների հետ միասին, նոր մեթոդի արտահայտի գրսնորումներն էին:

Զարենցը կանգնած էր Հայտնագործումների դժվար ճանապարհին, գտել էր նոր երգի կենսական երակները և մեծ լարումով լուծում էր զլխավոր խնդիրը, բացում էր սոցիալիստական ռեալիզմի հունը, սովետական գրականության վարպետների հետ միասին բացում էր մայրուղին։ Այդ ճանապարհին նա մշակում էր հեղափոխության էպոսը, նոր հասարակության ծննդյան, պայքարի ու մաքառման գեղարվեստական պատմությունը, ձևավորում էր էպիկական հյուսվածքները, ուր արդեն ուրվագծվում էին ազգային և համասովետական կյանքի ներքին կապերն ու բարդ ընկալումները։ Կյանքը բուռն հակասություններով, ուժեղ լիցքերով, լիարյուն ընթացքով խուժում էր գրականության մեջ։ Ծնկում էր դարաշրջանի պոեզիան, ծաղկում էր ուսալիստական ամենազոր ոճը, բնավ էլ ոչ ոռմանտիզմի անտեսման հաշվին։ Հակառակը, որպես մեծ կյանքի ոճ, ճշմարիտ և բազմանիստ արտացոլք, այն իր մեջ ընդունում էր նաև ոռմանտիկական վտակները, նոր մարդկանց ծաղկուն երազները՝ բացվող և գալիք հորիզոնների մասին։ Դա ավելի ամբողջական, շարժուն և համակողմանի էր դարձնում էպիկական ընթացքի պատկերը, իր հետ բերում էր կյանքի ու հոգեբանության գործող լիցքերն ու անմիջական արձագանքները։

Դժվար որոնումների, մանր ու մեծ հայտնագործումների ընթացքում ծրագրերը, որոնումները, բանաստեղծական փորձը ավիշավորվում են, լցվում կենսական հարստությամբ, ներդաշնակում հասարակության վերելքի ոիթմերին։ Հենց այս ճանապարհին են ծնվում ուժեղ, առնացի, հոգեբանական ու կենսական ամենաապնիվ համաձուլվածքը, անկրկնելի «Խմբապետ Շավարշը», և այս ճանապարհին է հյուսվում «Էպիկական լուսաբացը»՝ ամենակինսավիլ, առողջ, շահել գիրքը, որը մինչև այսօր մնում է մեր բանաստեղծության գարնանային առավոտը, հոգեկան ուժերի ծաղկման երևույթը։

«ԽՄԲԱՊԵՏ ՇԱՎԱՐԺԸ» ՊԱՏՄՈՒԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Զարմանալի է սովորության ուժը։ Դժվար է ազատագրովել տարածում գտած սկզբունքներից, թեզերից, մտքերից, նույնիսկ տասնամյակներ հետո, եթե մինչև անգամ զգում ես բացահայտ անհեթեթությունը։ Գրիշը վերցնում ես ձեռքողի, և քեզ պաշարում է անվնտահություն, նորը որքան ճիշտ է թվում, այնուամենայնիվ, քեզ տանում է մտքերի նոր, թվում է անհայտ ուղիներով... Մինչդեռ անհամեմատ հեշտ ես վազում ուրիշի բացած ճանապարհով։ Երբ հունը բացված է ուրիշի կողմից, բոլորը հարկ են համարում գնալ այդ հունով և միայն ուշ, շատ ուշ, մեծ ժամանակ վատնելով մոլոր ուղիների մեջ, զգում են կորուստը։ Այս երեքությը մեր գրականագիտության մեջ մի որոշ շափով հոգերանական բնույթ ունի, մի զգալի շափով էլ կապված է գրական և պատմական երևույթների գոենիկ սոցիոլոգիական ըմբռնումների հետ։

Խոսքը վերաբերում է նղիշե Զարենցի ստեղծագործության գնահատությանը։ Հոգեբանական տարօրինակ երևույթ է, որ քննադատը երկարատև լուսիոնից հետո գրիշը ձեռքն է վերցնում գրելու այդ բանաստեղծի մասին և հանկարծ գործը սկսում է հնագույն սխնմայով։ Բայց զա նաև գրական մի ըմբռնում է, ոչ միայն սովորություն, քանի որ քըննդադատը իր մեջ բավական ուժ չի գտնում հաղթահարելու 20—30-ական թվականների սոցիոլոգիզմը և եթե մինչև անգամ համաձայն չի նրա հետ, այնուամենայնիվ, չի ձրգտում սեփական ձեռքով նոր հուն բացել, գուրս գալ մոլոր հայացքների շրջանակներից։

Նղիշե Զարենցի մասին ժամանակին թեև շատ հոգվածեց ականական բարձրացուած գույնը միայն մի երկուը են գրվել, բայց այսօր դրանցից միայն մի երկուը

կարող են քննություն բռնել, քանի որ միայն նրանց մեջ է հեղինակը դիտված որպես գեղարվեստագետ և գաղափարի մարդ։ Այսօր էլ շատ են գրվում հոգվածներ ու գրքեր, բայց դարձյալ ոչ բոլոր զեպքերում է, որ բացահայտվում է բահաստեղծի ստեղծագործության բուն էլությունը։

Այս անգամ խոսքը վերաբերում է Զարենցի նշանավոր պոեմի՝ «Խմբապետ Շավարշի» մեկնաբանությանը: Հենվելով սովորության ուժ ստացած տեսակետներին, ավելի ճիշտ՝ խոսափելով 20-րդ դարի հայ կյանքի մի շարք երեղույթների մեկնաբանությունից, գրեթե բոլոր քննադատները (այդ թվում նաև տողերին հեղինակը մի հոդվածում) խոսում են միայն այդ պոեմի մի շարք հատկանիշների մասին, բաց թողնելով էականը: Նրանք «Խմբապետ Շավարշը» համարում են սոսկ երգիծական-սատիրական մի երկ, ուր ծաղրված են խմբապետները, ուր մերկացված է դաշնակցական Հայաստանը: Անպայման «Խմբապետ Շավարշը» արտացոլում է 1918—1920 թվականների Հայաստանի իրական կյանքը, դաժան ու անողոք ճշմարտություն է ասում հայ ազգայնական կուսակցությունների ու խմբապետների գործունեության մասին: Բայց խնդիրն այն է, թե ի՞նչ մեթոդով է ասում պատմական ճշմարտությունը, ո՞ր ծայրից է սկսում իր երկը, ո՞րն է այդ երկի բռն պաթոսը: Այս հարցերին պատասխանելու դեպքում միայն հնարավոր կինք մոտենալ 20-րդ դարի հայ պոեզիայի նշանավոր կոթողի բովանդակությանը և գաղափարներին:

Ամենից առաջ՝ արդյո՞ք երգիծական-սատիրական երկ է շիմբապետ Շավարշը»։ Բոլորն էլ այս հարցին դրական են պատասխանում՝ պատճառաբանության համար հիմք ընդունելով այն պարզ փաստը, որ Զարենցը մերկացրել է հայ ազգային քաղաքական կուսակցությունների արկածախընդությունը։ Բայց այսքանը շատ քիչ է, քանի որ նման պատճառաբանությամբ մենք կարող ենք երգիծական-սատիրական երկ համարել մինչևսկ «Անուշը»։ Նույնը կարելի է ասել նաև «Քառսի» մասին։

Իրականում «Խմբապետ Շավարշը» բավական հեռու է սատիրական-երգիծական ոճից, քանի որ բոլորովին ուրիշ մեթոդով ու միջոցներով է հեղինակը հասել պատմական

դարաշրջանի երևույթների գնահատությանը: Աստիքական-
երգիծական ոճը ենթադրում էր երգիծական հնարանքների
օգնությամբ հասնել հերոսի բացասական գույների անլող-
հատ խտացմանն՝ ու թանձրացմանը: Օրինակներ կարելի է
բերել հենց Զարենցի «Երկիր Նախրի» վեպից, «Կապկազ
թամաշա»-ից և այլն: Թոլորովին ուրիշ է «Խմբապետ Շա-
վարշի» ոճը: «Խմբապետ Շավարշը» խորապես դրամատիկ
մի երկ է, ուր հեղինակը ճշմարտություն է ասում հոգեկան
դրամայի միջոցով:

Մի՞թե, իրոք, դժվար է ասել, թե այս պոեմը ստեղծված է ոչ թե երգիծական խտացման, այլ հոգեբանական վերլուծության միջոցով։ Առեւնույթ թվում է հասարակ մի բան, բայց ըստ էության այս դեպքում քննադատը ստիպված կլինի հաղթահարել ոչ քիչ դժվարություններ, մոտենալ հայ կյանքի մի շարք ժանր ու տանջալի խնդիրների քննությանը։ Նա հարկադրված կլինի պատասխանել մի հարցի. ինչպես և է ջարենցը դիտում և մեկնաբանում հայ ժողովրդի ողբերգության պատմական-քաղաքական պատճառները, 20-րդ դարի սկզբի հակատագրական իրադարձությունները։

տական կուսակցությունների արկածախնդրական քաղաքաւ կանության, անտես էր առնում կամ գրեթե երկրորդ շարք մղում արտաքին գործոնների նշանակությունը փոքր ժողովուրդների ճակատագրի մեջ, Այսպես պատկերացնել բանը, ամեն ինչ կապել բուն ժողովրդի ներքին մի շարք ուժերի, մինչև անգամ նացիոնալիստական կուսակցությունների գործունեության հետ, նշանակում է բնքշորեն շոյել և կամ օրյեկտիվորեն արդարացնել թուրք բռնակալությանը, որին զո՞ւ էին գնում հայերը, հույները, բոլղարները, նշանակում է պնդել, թե հայերն իրենք են իրենց ծեծել կամ նրան ֆիզիկապես բնաջնջել են ներքին թշնամական ուժերը:

Հարց է ծագում, իսկ եթե մեր իրականության մեջ լինեին ազգային շարժումները, չգործեին կուսակցությունները, կիրկվ՞ո արդյոք ժողովուրդը: Մի՞թե նմանօրինակ մտաժողությունը պարզապես չի ենթադրում ստրկական հպատակություն, ապավինություն թուրքական բռնակալության քմեծահոգությանը» և ոռուսական ցարիզմի «անսահման հուժանիզմին»: Այստեղից էլ բխում է մի շատ պարզ ու հստակ հարց, որի շորջը, չփառ ինչու, մոլոր կամ ավելի ճիշտ մոլորեցնող պառույտներ են անում նշանավոր մարդիկ: Արդյոք ազգային շարժումները հետևանք էին ժողովրդի պատմական-քաղաքական թշվառության, թե՝ նրանք էին պատճառը այդ թշվառության: Արդյո՞ք ազգային կուսակցությունները երկընքից իշան հայ իրականություն՝ բուն ժողովրդին թշվառություն բերելու, թե՝ նրանց ծնունդն էլ պայմանավորված էր մեր կյանքի պատմական պայմաններով:

Այստեղ խոսքը տանք Միք. Նալբանդյանին, Վերլուծելով տնտեսապես կաթվածահար Թուրքիայի վիճակը, նա մարդարեանում էր. «... Մի գեղեցիկ առավոտ թե Պոլսի և թե գավառների մեջ մարդիկ չպիտի կարողանան հաց ձարել. աղքատությունը և սովոր պիտի հարկադրե նորանց դեպի հափշտակություն և կողոպուտ, մի խոսքով բարելույան խառնակություն: Բայց չէ պիտո մոռանալ, որ մի այսպիսի վատարախտ դիպվածում առաջ քրիստոնյացք կկողոպտվին, կմերկանան և կմեռանին, իսկ հետո թյուրքը, կառավարչական ուժը, գոնե այստեղ գեթ պիտի երկի, որ յուր ողորմելի ստրուկներից ավելի ապրի մի քանի օր, և այն, սպանված-

ների հաշվով»¹: Եվ իսկապես, Թուրքիան դանդաղ ու ծրագրոված ուժեղացնում էր ճնշումը իրեն ենթակա մյուս ազգերի նկատմամբ, աշխատում էր նրանց խեղդել տնտեսապես, քաղաքականապես ու հոգեպես, ոչ միայն արգելակել նրանց բնականոն զարգացումը քաղաքակրթության ուղիներով, այլև ֆիզիկապես բնաջնջել: Այդ քաղաքականությունը նա սկսեց, երբ գեռ երկրում ոչ մի քաղաքական-ազգային կուսակցություն չկար:

Այդ դաժան ճնշումը չէր կարող հակառակ երևույթը չծընել. չէր կարող առաջ ըբերել հակածնշում, քանի որ ժողովուրդը բանական, զգացող, ապրող ու շնչող տարերք է, որը ներքին օրգանական ընդհանուր ձգտում ունի պահելու իր գոյությունը: Նրա պայքարը ազգային ճնշման դիմ խորապես բնական էր, և դա ամենուր մի շատ արդարացված երևույթ էր: Հայ պահպանողականները քարոզում էին հնագանդություն իշխող պետության նկատմամբ: Անշուշտ, նրանք էլ ձգտում էին մի լավ բան անել իրենց ժողովրդի համար: Բայց եթե մինչև անգամ բոլոր ազգային գործիչներն ու կուսակցությունները համաձայն լինեին նրանց հետ, այնուամենայնիվ, ազգային շարժումը չէր դադարի, քանի որ նա ուներ խորապես ժողովրդական հիմք, տարերային բնույթ և, ինչպես հիշեցինք, օրինաշափ երևույթ էր, ստուգված ոչ միայն հայ ժողովրդի պատմական փորձով: Բայց այդ, ամեն դեպքում ստրկամտության համար պահպանողական այդ քաղաքականությունը հաղիվ կարողանար փրկել մի ժողովուրդ, որն արդեն կուլտուրապես ու տնտեսապես առաջդիմում էր բուրժուական զարգացման ուղիներով, առավել ևս, որ թուրք բուրժուական զարգացման շատ լավ զգալով ձևավորվող վտանգը, հետևողականորեն ծրագրել և իրագործում էր բնաջնջման արյունալի քաղաքականություն:

Բայց այս դեպքում, այնուամենայնիվ, ինչո՞ւ 20-ական թվականներին և մինչև անգամ այսօր այդ շարժման բովանդակության և ուղիների, առավելապես այդ շարժման ղեկավար ուժերի մասին գոյություն ունի ծայրահեղ սուրյեկտիվ, ոչ պատմական վերաբերմունք: Խնդիրն այն է, որ մեր պատ-

1. Մ. Նալբանդյան. Երկ. լիակ. ժող., 1983, հ. 4, էջ 62.

մարաններն ու գրական մարդիկ հաճախ անտեսում են ազգային ու միջազգային կյանքի մի շարք իրական պայմանները Ամենից առաջ նրանք ընդհանուր գիծ են՝ անցկացնում Արևմտյան Հայաստանի ու Ռուսահայաստանի, կիսափեղալական Թուրքիայի և Հեղափոխական իրավիճակի մեջ գտնվող Ռուսիայի միջև։ Արևմտյան Հայաստանը, ուր բնակվում էր Հայ ժողովրդի մեծ մասը, գտնվում էր տնտեսական-քաղաքական ամենածանր պայմանների մեջ, տնտեսական, քաղաքական, կրոնական և զանազան այլ պատճառներով Թուրքիայում վտանգի տակ էր գրված Հայ ժողովրդի փիգիկական գոյությունը, ընդ որում՝ ինչպես փորձը ցույց տվեց, դա վերաբերում էր ոչ միայն աշխատավոր ժողովրդին, այլև բուն ազգությանը՝ բոլոր սոցիալական շերտեռով ու խավերով։ Անշուշտ, այդ վտանգը տարածված էր նաև մյուս փոքր ազգերի վրա, բայց առավելապես մեծ վտանգը կախված էր Հայ ժողովրդի և Հույների վրա, քանի որ նրանք քանոնկապես, տարածութամբ, տնտեսապես և կուլտուրապես առավել ամբողջական, ուժեղ միավորներ էին։ Այնին, Ռուսահայաստանում, ուր առավելապես ընդգծվում էր սոցիալական-քաղաքական շարժումը, կապված Համառուսական դեմոկրատիայի ընդհանուր վերելքի հետ, ազգային-ազատագրական պայքարը զուտ հայկական բնավորություն լուներ, այլ միանում էր ընդհանուր հոսանքի հետ։

Հետևաբար հայ ազգային-ազատագրական շարժումները պետք է գնահատել ոչ միայն ոռուսական հեղափոխության դիրքերից, այլ նաև թուրքական բռնակալության դեմ մղվող պայքարի տեսանկյունից, հետևաբար նույն շափն ու կշիռ ամեն անգամ մեզ կտանեն դեպի մեխանիկական, հակապատմական մոտեցում։ Միայն ոռուսական հեղափոխությունը կարող էր լուծել Ռուսաստանի ժողովուրդների ճակատագրը, բնականաբար, հայ մարքսիստները միանգամայն ճիշտ էին, երբ քննադատական վերաբերմունք ունեին հայ ազգային-քաղաքական կուսակցությունների գործունեության նկատմամբ, որը միտում ուներ ընդհանուր սոցիալական պայքարի բովում անշրջական հայ ժողովրդի արևելյան հատվածը, ստեղծելով նեղ, գուտ հայկական հայությունը և այլ հայությունները միավորությունում առաջընթաց կատարելու համար։

Բակ Արևմտյան Հայաստա՞նը: Բնականաբար, նրա ազա-

առությունը պետք է դիտվեր Թուրքիայի ժողովուրդների ընդհանուր ազատագրության մեջ, Բայց կա՞զ արդյոք այդ պայքարի համար ամուր հող: Ժողովուրդների միջև ստեղծվե՞լ էր արդյոք սոցիալական-քաղաքական շահերի ընդհանրություն: Դժբախտաբար չկար այդ հողը, գեռևս չին ստեղծվել նպաստավոր պայմաններ ընդհանուր շարժման համար: Թուրքիան ֆեոդալական և կրօնական խայտարդետ կապերի մեջ գտնվող մի երկիր էր, նոր էր մտնում բուրժուական զարգացման այն շրջափուլը, որը իսկապես ժողովուրդների միջև ստեղծում է ընդհանրություններ, սոցիալական ու քաղաքական համանման կյանք ու տեսչեր: Բացի այդ, փոքր ժողովուրդները ցրված էին ողջ երկրով մեկ: Հույնները գերազանցապես գտնվում էին երկրի ուղղի հակառակ ծայրում, բուլղարները գտնվում էին Եվրոպայում, Հրեաները տարածված էին երկրով մեկ, քրդերը՝ խաչնարած մի ժողովուրդ դեռևս անսովոր նստակյաց կյանքի, ասպարեզ էին հանում միայն քաղաքական հասուն գիտակցություն ունեցող սակավաթիվ անհատների: Կրօնական մոլեռանդությունը, ցեղերի ներքին հակասությունները, սոցիալական գիտակցության և շերտավորման պակասը, այս ամենը նրանց տանում էր ուղղի հակառակ ծայրը, որը ճակատագրական եղավ նաև հենց իրենց՝ քրդերի համար: Այսպիսով, հեղափոխական իրադրություն Թուրքիայում 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում դեռ չկար և երկար ժամանակ էլ չեղավ...

20-րդ դարի սկզբին ասպարեզ եկան երիտասարդ քուր-
էերը՝ թուրքական նոր բուրժուազիայի ներկայացուցիչները
Բայց նրանց օրով ոչնչով շփոխվեց փոքր ազգերի վիճակը,
քանի որ երիտասարդ թուրքերն արտահայտում էին թուրքա-
կան բուրժուազիայի ամենամոլի նաշխոնալիստական տրա-
մադրությունները: Ավելին, նրանք ժառանգելով Սուլթան Հա-
միզի քաղաքականությունը, առաջել գիտակցված, կազմա-
կերպված ու խարդախ ձևերով էին ձգտում խեղդել ժողո-
վուրդներին: Մի կողմից նրանք հակադրվում էին եվրոպական
մեծ տերություններին՝ ինքնուրույն կյանք ստեղծելու համար,
մյուս կողմից՝ բուրժուական ուղիներով բարձրացող ազգե-
րին, առավելապես հայերին, ձգտելով տնտեսապես և քա-
ղաքականապես հասնել ներքին անդրբի ու բացարձակ գեր-

իշխանության։ Այստեղ նրանք հրաժարվում էին ազատ մըրցակցության մեթոդից, քանի որ այս պարագայում հնարավոր էր հայերի անշեղ զարգացում, եթե ոչ հաղթանակ, համենայնդեպս, հավասարազորություն։ Ահա թե ինչու նրանք էլ գերազասեցին օգտագործել նուև իրեն այնքան «արդարացրած» փորձը՝ զարդր։

Այս պայմաններում, բնականարար, բնաջնջվող ժողովուրդը պետք է եղած փնտրեր, նա չէր կարող սպասել... Սպասումը կարող էր հավասարվել ինքնապանության ժողովը գին չեա կարող թելազգեղ՝ թե մի աշխատիր, մի մտածիր, գերագասիր ստրուկի վիճակը և վերադարձիր դարերի խավարը, քանի որ այդպիս միայն ժամանակավորապես պահպանել ֆիզիկական գոյությունը։ Ժողովուրդը մաքառում էր իր գոյության համար, ծայր էր առել մի շարժում, որը բնականաբար, ինչպես ամենուր տվյալ պայմաններում, զեկավարում էին ոչ թե մարդասիստները, այլ բռնժուածացիոնական կուսակցությունները։ Այդ կուսակցությունները չէին կարող ավելի խելոց լինել, քան հնարավոր էր, քան նման գեղքերում լինում են բայոր բուրժուական նացիոնալիստական կուսակցությունները՝ բոլոր փոքր ժողովարդների մեջ։ Այդ կուսակցությունները չէին կարող փրկել ժողովուրդին ոչ միայն այն պատճառվ, որ չէին վարում զգացած քաղաքականություն։ Փորձը ցույց է տալիս, որ ոչ մի փոքր ժողովուրդ երբեք չի կարողացել ազատազրկել բոնակալության ճիրաններից՝ առանց գրսի օգնության, արտաքին ու ներքին նպաստավոր պայմանների։ Գանգելով երկու հզոր տերությունների արանքում, բնաջնջվելով աշից և խարվելով ձախից, այնուամենայնիվ, այդ ժողովուրդը հուսահատ ճիգեր էր անում արևի տակ իր տեղը պահելու համար։ Ազգային կուսակցությունները ձգտում են գտնել որևէ հենարան գրբում, քանի որ բուն ժողովուրդը միայնակ ի վիճակի չէր նվաճել իր ազատությունը։ Բնական էին նրանց միամիտ պատրանքները եվրոպական տերությունների մեջառության նկատմամբ, բնական էր և փորձը՝ լեզու գտնել երիտասարդ թուրքերի հետ, առավել ևս բնական էին նրանց հույսները՝ կապված Ռուսաստանի հետ, քանի որ ժողովուրդը ներքնառեն հարազատ էր զգում թրիստոնյա Ռուսիա-

յին և նրա աշխատավոր ժողովրդին։ Կա՞ր արդյոք մի որևէ վստահելի, իսկապես ամուր ուժ, որին չդիմեցին հայ բուրժուական կուսակցությունները, երբ Թուրքիան և Գերմանիան առդեմ ծրագրել էին երկրի երեսից չնշել Արևմտյան Հայաստանը։ Զկար այդ ուժը։ Մի խոշոր շափով էլ այստեղից էին բխում այդ կուսակցությունների մոլոր գործողություններն ու սխալները։

Իրականում սա մի մեծ ողբերգություն էր, որի առաջը չէր կարող առնել ոչ մի ուժ։ Բուրժուական կուսակցությունները ձգտում էին փրկել ազգը, այսինքն՝ ստեղծել ինքնուրույն բուրժուական հանրապետություն, որտեղ անտարակույթ մի սուզաքայլ կարող էր լինել ուազմա ֆեոդալական Թուրքիայի համեմատությամբ։ Բայց շփոթ ու սոսկահար, միջազգի հմագերի իմացերի ազգմի խարդավանքների մեջ խճճված, անմիտ գործերով նրանք ավելի էին արագացնում և ուժեղացնում ողբերգության շնչարերը։

Այստեղից էլ բխում է մի այնպիսի ճեծված և, կարելի է ասել, գրեթե կեղեքված հարց՝ հայ կամավորության և Արեւելյան բյուրոյի հարցը՝ կապված համաշխարհային առաջին պատերազմի և Թուրքիայի հայացինչ քաղաքականության հետ։ Այն միտքը, թե կամավորական շարժումը եղավ 1915 թ. մեծ եղեռնի պատճառը, գարճալ շափազանց միամիտ է, քանի որ ոչ մի կուսակցություն, եթե չի հենվում բռն ժողովրդի ոգու վրա, չի կարող կազմակերպել մի այդպիսի լայն ու մեծ շարժում։ Իհարկե, այդ շարժումը շափազանց անազնիվ կերպով օգտագործում էր ցարական ինքնակալությունը, քայլ, այնուամենայնիվ, չէ՞ որ հույսով ապրող մի փոքրիկ ժողովուրդ չէր կարող լրցավառվել հայրենասիրական կրակով, երբ քրիստոնյա Ռուսիան պատերազմ էր հայտարարել Թուրքիային և հանդես էր գալիս հավատակից ժողովուրդների փրկության լողունգով։

Մինչև այստեղ մենք գործ ունենք խորապես բնական, քաղաքական տեսակետից հասկանալի և ապացուցված մի երկույթի հետ։ Մինչև այստեղ մենք գործ ունենք բուրժուական կուսակցությունների հետ, որոնք ձգտում էին դառնալ համաժողովրդական տեսակետից արտահայտիլ և սակայն ամեն

անգամ տապալվում էին, հանդիպելով մեծ տերություններից շահնդին ու քաղաքականությանը:

1915 թ. իրադարձությունները ամբողջովին խաչ դրեցին Արևմտյան Հայաստանի վրա. աշխարհի քարտեզից հանվեց մի հինավորց երկիր, 20-րդ դարում բնաշնչվեց հազարամյակների միջով անցած ու պատմական բոլոր փորձությունները հաղթահարած մի ժողովուրդ, որի միայն մի մասին հաջողվեց բռնել փրկության օտար ուղիները: Ողերգական վախճան ունեցան հայ ժողովրդի ազգային-աղատագրական շարժումները և տապալվեց բուրժուական կուսակցությունների քաղաքականությունը՝ որևէ պաշտպանություն չգտնելով միշազգային դիվանագիտության կողմից:

Բայց այստեղից սկսվում է մի ուրիշ պատմական: Իրողություն. 1917 թվականին սկսվեց ոռւսական հեղափոխության նորագույն շրջանը, տեղի ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը: Այս իրադարձությունների մեջ հայ նացիոնալիստական կուսակցությունները փաստուն վարեցին հակածողովրդական քաղաքսկանություն, հանդես գալով իրեն ոռւսահայ իրականության տերեր, շհասկացան կամ շուղեցին հասկանալ համառուսական դեմոկրատիայի պայքարի բնույթը, նոր հողի վրա, նոր պայմաններում: Զի կարելի, իհարկե, մոռանալ, որ այդ կուսակցություններից առավել խելամիտ մարդիկ հասկացան տեղի ունեցող երեւյթի պատմական նշանակությունը. մտավորականության լավագույն մասը ոռւսական հեղափոխության և առհասարակ Ռուսաստանի քաղաքական կյանքի հեռանկարների հետ կապեց հայ ժողովրդի հետագա բախտը: Այնինչ դաշնակության զեկավարությունը անտեսեց արյունաքամ ժողովրդի այդ միակ փրկարար ուղին և հեղափոխության փոխարեն հենարան որոնեց հեռավոր Եվրոպայում, դառնալով իմանալիստական մեծ տերությունների երիցն խարված ստրուկը: Այստեղ, իհարկե, այս ճշմարտությունը ասելով հանդերձ, մենք շենք կարող բաժանել «Վсемирная история» գրքում մշակված մի խորապես հակապատմական ու թրշնամական տեսակետ: Ամբողջովին պաշտպան կանգնելով Թուրքական բուրժուազիայի արյունոտ քաղաքականությանը, այդ հեղինակավոր գիրքը Թուրքիային հանդես է բերում:

Հարստահարված, ճնշված երկրի, գրեթե նահատակի վիճակում, իսկ Հայաստանը դիտում է ոչ ավելի, ոչ պակաս, քան մի կատաղի ագրեսոր, որ ձգտում է գրավել Թուրքիան և ճըշշել Թուրքիայի առաջադիմական շարժումը:

Անշուշտ, թուրքական բուրժուազիան հակադրվում էր Անտանտին, ազատագրվելու եվրոպայի երկարատև տնտեսական ու քաղաքական ճնշումից: Դա օբյեկտիվորեն դրական էր ոռւսական հեղափոխության համար, որի դեմ էր ելել Անտանտը: Բայց չէ՝ որ նույն այդ բուրժուազիան ամենամոլի եղանակներով ոչնչացնում էր և փոքր ազգերին, կոնկրետ դեպքում՝ հայ ժողովրդին: Ավարտելով Արևմտյան Հայաստանի հարցը, նա ձգտում էր շարքից հանել և Արևելյան Հայաստանը: Երկրի մեծ մասն արդեն նվաճված էր ու ավերված էր, երկիրը դարձել էր ամայի անապատ կամ ավելի ճիշտ՝ մի ընդարձակ գերեզմանոց: Այս բոլորից հետո ինքնապատպանության հուսահատ ճիգեր անող ժողովուրդը, որ սեղմվել էր մի փոքրիկ, քարքարոտ բարձրավանդակի վրա, ինչպես կարող էր հանդես գալ ագրեսորի դերում: Բայց, թերևս, Հայաստանը իրո՞ք դարձել էր միշազգային իմպերիալիզմի մարտական օջախը ընդդեմ Թուրքիայի և Սովորական Ռուսաստանի: Պատմական անցյալը մեղ շի տալիս այդպիսի փաստեր: Եվրոպական իմպերիալիզմը միայն խոսքով էր Հայաստանի հետ, իրականում նա Թուրքիայի հետ էր, քանի որ ամեն անգամ ձգտում էր մի բան կորզել այդ երկրից և շկորցնել իր իշխանությունը նրա վրա: Այդպիսով էլ եղավ:

Պաշտպանել մեծ տերության նացիոնալիզմը և ամբողջովին թշնամական, ագրեսիվ համարել փոքր, բնաշնչվող երկրի ինքնապատպանությունը, շտեսնել պատմական երեւկույթի երկու կողմը, ամեն շարիքի պատճառ համարելով սոսկ այդ երկրի նացիոնալիստական կուսակցություններին, առնվազն անհեթեթություն է, մարքսիզմի ոգուն բոլորովին խորթ մի բան: Դա նշանակում է սպանության փաստի դիմաց առաջ քաշել ինքնապանության անամոթ վերսիան: Ինչպես ասացինք, բոլորովին ուրիշ է հայ նացիոնալիստական կուսակցությունների մեղքը: Նրանք ձգտում էին ինքնուրույնության հասնել, ստեղծել մի բուրժուական ինքնու-

րույն Հայաստան և թեև ճիշտ է, բնավ էլ եռանդուն թշնամական պայքար չէին ծավալել և չէին էլ կարող ծավալել Սովետական Ռուսաստանի գեմ, այնուամենայնիվ, մի որոշ ժամանակ Ռուսահայաստանը կտրեցին ժողովուրդների ընդհանուր-սոցիալական պայքարից և մոլորվեցին եվրոպական դիվանագիտության խարդավանքներում:

Այստեղ մենք պետք է ասենք ուղիղ հակառակոր նացիոնալիստական կուսակցությունները չկարսղացան զարել ու եալիստական քաղաքականություն։ Նրանք գնացին լայն ծավալի մի արկածախնդրության, հավատալով ռազար խոստումներին և մշուշու հավաստիացումներին, չկարսղացան երկիրը պաշտպանել թուրքական նոր ագրեսիայից։ Արևելյան Հայաստանում խոտանում էր գաղթականությունը, եշմիածնի պատերի ռազար մեռնում էր ժաղովուրդը, իսկ Թուրքիան հարձակվում էր։ Դաշնակցությունը, ինձնված ինտրիգների և խարգավանքների մեջ, չէր կարողանում կազմակերպել ինքնապաշտպանությունը եվ երբ արդեն կառկածի ռազար էր գրվում առնասարակ Հայաստանի գոյությունը, թշնամին սպանալիորեն մոտենում էր Երևանին, ժողովուրդը ինքը ոտքի կանգնեց և Սարդարապատի հերոսամարտում, հայկական գնդի, խմբապետների որոշ մասի, արևմատհայերի ու հոգեոր օրոշ մարդկանց մասնակցությամբ հականարգած տվեց թշնամուն, կրկին գարերի երկար ու մեծ սովոր նշելով իր հայրենիքի համար։

Այս իրագարձությունների հրմքի վրա են ծնվել խմբապետները։ Նրանցից շատերը ժամանակին խոշոր դեր էին խաղացել ժողովրդի կյանքում, կազմակերպելով արևմտահայերի ինքնապաշտպանությունն ու գաղթը։ Բայց ահա նույն այդ մարդիկ Արևելյան Հայաստանում շգտան երազածը Խմբերի հետ միասին, մտնելով ռուսական հաղը, նրանք հանդիպեցին առաք ընդունելության, տեսան կյանքի բոլոր սարսափները։ Արյունաքամ ու մեռնող ժողովրդին դաշնակցությունը կերակրում էր սոսկ սին հույսերով։ Շատ շուտով խմբապետների մի զգալի մասը չարգեց դաշնակցության գեմ, մյուս մասը եղ զանակով և շունենալով քաղաքական մտածողություն, գաղթած բնակչության կյանքը փրկելու համար պարզապես գիմում էր ամեն տեսակ անարխիայի, մի քան-

որ լնայած բազմաթիվ աղետներ էր բերում տեղական բնակչությանը, միաժամանակ սասանում էր նաև դաշնակցական ողորմելի կառավարության հիմքերը։ Իր հիմքով խորապես հայրենասիրական բովանդակություն ունեցող շարժումը դաշնակցական Հայաստանում, տեսեսական ու քաղաքական ահավոր պայմանների մեջ, ազագազվեց, այլասերվեց, դարձավ խորապես անարխիկ, տարերային ու անկազմակերպ, շատ հաճախ վնասակար դա պատմական ողբերգության հետագա զարգացումն էր ամենատաննպաստ պայմաններում։

Խմբապետների մի մասը իրականացնում էր դաշնակցության ավանդուրան՝ ընդդեմ աեղական սոցիալական շարժման, մի մասը անկեղծ ատելությամբ կավում էր թուրքական զորքերի դեմ, իսկ մյուս մասը կորցնելով ամեն մի հեռազորքերի դեմ, խոր հակասություններ, խոց գարձավ երկրի հակար, ապրելով խոր հակասությունների մեջ երբ արդեն կառկածի ռազար էր գրվում առնասարակ Հայաստանի գոյությունը, թշնամին սպանալիորեն մոտենում էր Երևանին, ժողովրդը ինքը ոտքի կանգնեց և Սարդարապատի հերոսամարտում, հայկական գնդի, խմբապետների որոշ մասի, արևմատհայերի ու հոգեոր օրոշ մարդկանց մասնակցությամբ հականարգած տվեց թշնամուն, կրկին գարերի երկար ու մեծ սովոր նշելով իր հայրենիքի համար։

6. Զարենցը ևս, իհարկե, մի շարք գործերում որոշ դեպքերում շրջանցել է այս հակասություններն ու ողբերգությունը։ Դա փոքր-ինչ երևում է նույնիսկ մի այնպիսի տաղանդավոր երկում՝ ինչպիսին է «Երկիր նահիբին», ուր այնքան ուժեղ է երկու գործիչների, բայց խոսքի արձագը ընդդեմ ազգայնական գործիչների, բայց խոսքի բոնակալության հարկադիր զապություն կա թուրք բոնակալության նկատմամբ։ Սակայն ամենից ավելի Զարենցն էր դուրս գանկատմամբ։ Սակայն ամենից ավելի Զարենցն էր դուրս գանկատմամբ։ Սակայն ամենից ավելի Զարենցն էր դուրս գանկատմամբ։

րում ստեղծելով քաղաքական Հայաստանի իրական պատկերը: Մեծ մտածողն ու արվեստագետը տեսավ մեր ազգային շարժման ողբերգական վախճանի արտաքին ու ներքին գործոնները, խորապես ըմբռնեց ողբերգության գլխավոր պատճառները՝ եկրոպական տերությունների և Ռուսաստանի ներքին հակասությունները, որի անխուսափելի զոհը դարձավ Հայաստանը: Նա լավ էր տեսնում ազգային շարժման դարգացման տարրեր շրջանների բերած նոր կողմերն ու երանգները: Զգաստ մտածողը ազգային շարժման դիրքերից գնաց դեպի հեղափոխությունը, խորապես զգալով, որ 1917—20 թթ. Հայաստանի փրկության հենարանը և միակ ուժը Հոկտեմբերն է: Արյունոտ փորձը ցույց էր տալիս, որ Հայաստանը բանվորագուղացիական կառավարությունից բացի չոնի ոչ մի իսկական բարեկամ Եկրոպայում, Թուրքիայում և Ռուսաստանում: Նա դատապարտում էր ազգային-նացիոնալիստական կուսակցությունների ղեկավարությանը և այն ուժերին, որոնք ճակատագրական պահերին շտեսան այդ միակ, վստահելի ուժը: Զարենցը կարծում էր, որ սոցիալիստական հեղափոխությունը ոչ մի երկրի համար այնքան կենսական չէ, որքան հայ արյունաքամ ժողովրդի...

եկ ո՞վ, ո՞վ կ կասի՝
Նետե՞ղ է արդյոք մեկը աշխարհում
Այսօրվա կարմիր, կարմիր ձեր երթին
Ողցույն—ավելի առեական, արի,
Քան ողցույնը քո, երկիր արնաքամ
Կարմիր նաիրի...»

Հենց «Ամենապոեմի» մեջ ծաղրելով հայ ազգային-նացիոնալիստական ուժերի անբանությունն ու պատմական ուսմանտիկան, նախրիի իսկական որդի համարելով բանվորին, նա առանձին ուժով ընդդում է միջազգային իմացերիալիզմի և Թուրքիայի սկ գործը.

Նորից—խուժեց թշնամին,
ծեավ—մինչ Զարս հասավ...
Նորից զարձավ նաիրին
Բարբարս սրերի հսան...

Նորից քաղաքերն հնամյա
Դարձրին հողին հավասար—
Դաշտերում անթաղ մնաց
Ժողովուրդը՝ հազար-հազար:

Այսպիսով, Ե. Զարենցը մեր ժողովրդի ողբերգության հիմնական գործոնները տեսնում է միջազգային դիվանագիտության, Թուրքիայի և իմացերիալիզմի արյունոտ քաղաքականության մեջ: Մերժելով հայ նացիոնալիստական կուսակցությունների անհեռատես, կույր քաղաքականությունը, նա փոքր ազգի փրկության և ազատագրության գաղափարը կապում է պատմական նոր ուժի հետ, միանգամայն բնական համարելով ազգային-ազատագրական շարժման նոր էական կողմը՝ անցումը դեպի սոցիալիստական հեղափոխությունը՝ որպես ֆիզիկական, քաղաքական ու տնտեսական փրկության միակ միջոց իմացերիալիզմի որոգայթներից: Այս ամուր, ճիշտ, կենսական ու մարքսիստական ըմբռնումն էլ նրան երևույթները դիմել անվախ ու վստահ, բազմագույն նրան երեսների սոցիոլոգիական մոլորություններից: Մեծ տաղանդը գոեհիկ սոցիոլոգիական մոլորություններից: Մեծ արգասավորվում է միայն այն դեպում, երբ իր ընդգրկման շրջանակի մեջ է վերցնում պատմական ու կենսական ճշմարտությունը: Այդ ուժեղ և առողջ մտածողության, ազգային-քաղաքական շարժման ու ժողովրդական կյանքի խոր իմացության ծնունդն է «Խմբապետ Շավարշը»:

* * *

«Խմբապետ Շավարշը» մի հատված է «Ապստամբություն» պոեմից, «Անհայտ» պատմաներով պոեմը շգրվեց: Ճակատագրի հեղնանքով մենք ժամանակակից պոետի կյանքի ու հղացումների մասին երեմն ավելի քիչ գիտենք, քան անհայտ ուղիներով հեռացած Արովյանի մասին: Պոեմը, նվիրված հեղափոխական անցքերին, Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը, փետրվարյան օրերին և զաշնակների հշխանության կործանմանը, չի ավարտվել. ըստ երևույթին դա շափածու այն վեպն է, որից էպիկական ֆրագմենտներ են մնացել: Մեզ հասած հատվածը՝ «Խմբապետ

Շավալը», ուժեղ ու ինքնուրույն մի երկ է, ուր ստեղծված է մի ամբողջական կերպար՝ իր շրջանի ու կապերի մեջ, մի ամբողջ քաղաքական մթնոլորտ և որ կարևոր է՝ ժողովրդական կյանքի պատկեր:

Ստեղծագործական մեթոդով այս երկը նման է «Դեպի լյառոր Մասիս» պոեմին։ Երկու գեպքում էլ հեղինակը գործադրում է հոգեկան դրամայի մեթոդը և մի գիշերվա հոգեկան ապրումների միջոցով տաեղծում է մի ամբողջ կյանքի ու հայասությունների պատմությունը։ Խարկե, հակասությունները տարբեր են, հերոսները՝ բոլորովին ուրիշ։ Մի գեպքում դրաման բացում է հերսի դաժան ու բացասական վարդի ձեւավորման ուղին, մյուս գեպքում՝ դրաման ցուցադրութ է հերոսի հոգեկան հարստությունը, որ տանում է նրան դեպի սովոր մությունը (դեպի լյառոր Մասիս):

Պոեմի առաջին իսկ տողերից գծագրվում է մի հերոս, որի մարսնավորման եղանակը նորություն էր 20-ական թվականների հայ քաղաքական պունդիայում։ Այստեղ զուգ շեք տեսնի բացասական հերոսի ստեղծման ծաղրանկարը, խիստ միամիտ ու մակերեսային ձեզ, այստեղ չկա ռեալիզմակազմականից գրութեսկը, ոչ էլ «Երկիր Նախրիի» կերպարներին բնորոշ մույլ գծերի թանձրացումը։ Զեա նաև թշնամու կերպավորման տարածված ձևը՝ ճիշտացային կերպարանեքը, որը վանում է ըսթերցողին։ Խմբապետ Շավարշը մարդ է, գառը կյանքի ճանապարհ անցած, ուժեղ ու էպիկական անհատ, օժտված առնական գծերով.

Թմբքապիս Շավարշը— Մի Հաղթ տղամարդ,
Երեսին վերից վար՝ զաշույնի Հարգած.
Այդ հարգածն համարում էր իր գևմքի գարզը
Մանավանի, երբ դժուռն էր ու մի քիչ հարբած
Այդ հարգածն—ու բեղերը— Դեղին, ոլորած
Երկու խորձ հրեղեն, երկու սոռու,
Թր ծաներ իշնելով կակի վրա—
Նրան ատափի էին քրացին համարում:
Եվ մոռալ աշքերը՝ բիթերում արցուն,
Եվ խիս հոնքերի գերանդին...
Նա իրեն համարում էր—անհաղթ արու,
Որած հրաց՝ ետած հա, ցեղի արգանդից:

Նրա կյանքն անցել է մասյլ ուղիներով, ծանր փորձությունների միջով։ Մինչև անգամ կենսագրությունը արտացոլվում է զեմքի վրա՝ երեսին վերից վար՝ դաշույնի հարված։ Մեզբերված հատվածի մեջ երևում է Շավարշի և անձնական հատկությունը՝ ուժն ու քաջությունը, և բացասականը՝ ինքնասիրահարված մարդու ամբարտավանությունը՝ որպես հետևանք նրա ինքնիշխան գործունեության.

Նա իրեն համարում էր—անհաղթ արու, Որպես հրաշք՝ ելած հայ ցեղի արգանդից

Քայլ առ քայլ, տող առ տող բացվում են նոր երանգներ, նոր կողմեր, արտաքինը վերաճում է ներքինի, և բանասակածքը կերտում է Շավարշի մի տափնապալի օրվա հոգեկան դրաման։ Խմբապետը կանգնած է ճակատագրական հարցի առջև։ Գրու նրա խռումը կանչել է առավոտվա զեցին՝ հա- տազեւ Գրու նրա խռումը կանչել է առավոտվա զեցին՝ հա- տազեւ Գրու նրա խռումը կանչել է առավոտվա զեցին՝ հա- տազեւ Գրու նրա խռումը կանչել է առավոտվա զեցին՝ հա-

Ո՞վ զիտե Դրոյին։ Այս Ո՞վ զիտե։
Կարող է ասրբել Հազար դափ։ Դրոն։
Գծաքը է կոչել Հետը։
Չուզեց խաթրավ անի—կանի զոռով,
Կհանի իր վրեժը։— Երեկ չէ՞ր միթե,
Որ Եսկարշն սպանաց շտարը քանդել։
Ինչո՞ւ— Որովհետեւ
Ֆրուսահայ սպաներն են իշխում այնտեղ

Այսպես, ակնհայտ է ներքին անվտահությունը խմբապետների մի մասի և գաշնակցական կառավարության միջև և նմբապետները ձգում էին պահել իրենց իշխանությունը և ինքնուրույնությունը՝ երկու զատճապով: Դաշնակցական կառավարության մեջ աեղ էին գրավել «ուսացած սպաները» ուլայած տղերքը», որոնք իշխանությունը գրավել էին առանց վաստակի ու արյան: Երկրորդ՝ խմբապետները որոշ ֆաստով զեկավարում ու հսկում էին հայրենիքը կորցրած գաղթականությանը, որը գտնվում էր անասելի թշվառության մեջ և գրեթե ոչ մի օգնություն չէր ստանում անճարակ կառավարության կողմից: Կառավարությունը իր հերթին, շումե-

նալով ուժ, դառնալով իմպերիալիստների գիշանագիտության խաղալիք, չէր կարողանում ստեղծել կայուն բաղաքական մթնոլորտ և համերաշխության հասնել կենտրոնախույս ուժերի միջև։

Շավարշի խոհերի միջոցով Զարենցն արտակարգ վարպետությամբ, անուղղակիորեն ստեղծում է դաշնակցական Հայաստանի բաղաքական մթնոլորտի պատկերը և կոլորիտը։ Սպանություններ, ինտրիգներ ու հակառակություններ, կատարյալ անշխանություն։ Զինվորները թքում են մինհստրի երեսին՝ կառքից իջեցնում։ Դրոն կոնակից խփում է զինվորներին։ Քաղաքում աղմուկ, անարիխա, հրացանաձրգություններ ու խրախճանքներ։ Եվ այս ամենի հետ՝ սովահար երեխաններ, մեռնող ժողովուրդ։

Շավարշը մտածում է, նրա մեջ արթնացել է մարդը, երեկով հերոսը, որ երեկէ երազել է մի լավ օր, բայց չի հասել այդ օրվան և դարձել է դաժան ու անհոգի մարդ։ Երգում է դաշաղը մի տիսուր երգ, և ինչպես միշտ, դառը տագնապի պահին, նրա աշքի առջև հառնում են կյանքի գլխավոր դեպքերը։ Ամբողջ պոեմի մեջ տարբեր տպավլորություններ ու հուշեր շաղկապում են հիմնական տագնապի ու կասկածանքի հետ՝ ի՞նչ է սպասվում իրենց վաղը առավոտյան, կատարի։ թե՞ շաբարի դրոյի հրամանը։ Այս ընդհանուր տրամադրությանն են ձուլվում Շավարշի մոայլ խոհերը՝ անցած կյանքի մասին։

Ո՞վ է այդ մարդը, որի մասունքը առավոտվա մեզի մեջ երգում է արյան, մուժի, մահի և ասպատակի երգ, որի հոգին առավանում է զառնացող բաղաքի վրայով։ Զարենցը բացում է արևմտահայ ժողովրդի պատմության մոայլ էջերը։ Շավարշը իր հնատ բերել է ծննդավայրն ու հողը կորցրած աշիրաթը։ Դառն է եղել այդ ուղին, սարսափներով, զրկանքներով լի։ Մարդիկ փախել են պատերազմի թաթից, խարված երկրից, թուրքական սրից, մինչև վերջ, անգամ Հայրենիքը կորցնելուց հետո, դարձյալ Հույսով քայլել են զեպի հյուսիս, զեպի Ռուսաստան, որի համար ռայնքան արյուն են թափել։

Ճոճուում են սալերը. ձիերը դոփում։
Մայլերին—երեխեք, կնանիք, բեռ...»

Դոմանը շոյող է, ինչպես զեփյուռ,
Զիերի դոփյունը, ինչպես երգ...

Ինչպես լավ երեսում է, այս տողերը արտահայտում են ոչ միայն Շավարշի զգացումները։ Այստեղ խոսում է և ինք՝ բանաստեղծը, այստեղ երեսում է նրա անհատական վերաբերմունքը դեպի երեսույթն ու մարդիկ։ Բանաստեղծը հաճախ է խառնվում պատկերին, քանի որ Շավարշը բնավ էլ չէր կարող դառը պահին խոսել խիստ բանաստեղծական նըրքերանգով։

Դոմանը շոյող է, ինչպես զեփյուռ,
Զիերի դոփյունը, ինչպես երգ...

Զուգորդվում են հերոսի վերջուշը և հեղինակային միշամտությունը, ստեղծվում է հայ մարդու ողբերգական կյանքի պատկերը։

Առջնից—տավարը, հետեւից—աշխաթը՝
Շավարշի աշխաթը.՝ խնուսցինը,
Որոնց տեղահան էր արել—
Պատերազմի թաթը—
Ու աշխարհում ցրել:

Պոեմում կան հատվածներ, ուր, ինչպես ասացինք, հեղինակն արդեն հեռվից չի նայում իր հերոսին, նրա ապրուներին տալիս է իր հեղինակային զգացմունքի շաղախը, և ընթերցողի աշքի առաջ բացվում է արևմտահայերի տառապանքի ուղին։

Հատերը՝ կորցրած տուն, տեղ,
Ընտանիք, երեխեք, հայր, մայր,—
Այժմ պատրաստ էին ամեն ինչ բանզել
Մի լավ ձեռ կամ մի բեռ ալյուրի համար։

Ազգային իդեալներն ու հայրենասիրությունը տեղի են տալիս մի ուրիշ զգացման, շմեռնելու, ֆիզիկական գոյությունը մի կերպ պահպաննուու զգացման առաջ Այսպես կարող էին մտածել Ձեկ Լոնդոնի հերոսները՝ մահվան ու քաղցի սարսափի առաջ Կյանքի սերը, դաժան կոփից շմեռնելու համար սպանում են շատ զգացմունքներ, երազներ ու տեն-

շեր, պատճառ գառնում մարդու պայծառ պատկերի աղաւ վաղմանը.

Ավ էլ հանդիպեր, ումն էլ լիներ.
Թոփ, թուրքի, հայի—մինույնը չէ՞
Միայն թե բաղցից շոռնար կինը.
Միայն թե երեխն շոնչը լփշեր։

Երբ Շավարշը մտածում է Դրոյի մասին ու կասկած-ներով պատրաւտվում վաղվան, երբ Շավարշը իրեն ներկայացնում է անձնական բաջության ու հերոսության հանգերձի մեջ, հսկայական հեռավորություն է բացվում բանաստեղծի և հերոսի միջև։ Այստեղ նա դիտում է և հաճախ երգիծում, բայց երբ մոռայլ տրամադրությունների մեջ նա վերիշում է անցյալը, և նրա թանձր ու միգոտ ուղեղում լայնանիստ բացվում է խնուսցիների անցած ուղին, ներքին կապ է ստեղծվում հեղինակի և հերոսի զգացմունքների միջև։ Ովքե՞ր են այդ մարդիկ, որոնց առաջնորդում է Շավարշը, և ո՞վ է եղել ինքը՝ Շավարշը։ Նրանք մեծ ճանապարհ ավագակներ չեն, որոնք ապրում են ուրիշի արյան հաշվին։ Նրանք ո՞ղի աշխատավորներ են, կազմում են բում ժողովուրդը, որն անարդար դատապարտված է զեգերումների, ստիպված թողել է ծննդավայրը, նախնիների հողը, շնչած արտը, տեսել է արյան ծով, որի աշքի առաջ մորթել են իր վաղվա օրը։ սերունդներին, և նա լայն ու մեծ աշխարհում չի լսել կարեկցանքի խոսք, չի տեսել օգնող մի ձեռք։ Եվ իր արյունուտ աշխարհում հայ ժողովուրդը ցանկացել է միայն ապրել։

Միայն թե բաղցից շոռնար կինը.
Միայն թե երեխն շոնչը լփշեր։

Ահ ս մի ողբերգություն, որ չէր կարող մոռայլ կնիք շդնել անգամ ամենաազնիվ հոգիների՝ երեկվա աշխատավորի, քաշարի պինվորի, բնքուշ աղջկա և մինչև իսկ անշահահաս երեխայի վրա, շաղվաղել նրա հոգին, գեմքը, ֆիզիկականը։ Ապրելու հուսահատ ճիգը որոշում է նրանց ուղին ու վարքը։

Խնուսից—Ալաշկերտ։ Հետո Ղարս։
Թուրտ, մերկ, սով, տիֆ։
Խնչքա՞ն, ինչքա՞ն մեռան,
Քաղցից, կամ ետ շեկան ֆրոնտից։

Ամբողջ ճանապարհը—գիտեներ, մահ։
Ավ որ մնաց՝ մնաց, Հասան վերշտափս
Այն ոսի երկիրը, որի համար
Այնքան արյուն էին իրենք թափել...

Ով որ մնաց՝ մնաց... Այս է ժողովրդի անցած ճանապարհը, որ խոր դաժանություն է ծնել Շավարշի հոգում։ Այսպես է դիտում այդ ճանապարհը և ինքը Զարենցը. փոքր ժողովրդի տառապանքը բացատրելով թուրքական բռնակալության հայաշինջ բաղաքականությամբ և պատերազմող երկների դիվանագիտությամբ։ Շավարշի ապրումները դառնում են պոեմի ամուր ողնաշարը, քանի որ բերում են պատմություն, արյան օրերի պատկեր, ժողովրդական տառապանքը։ Դրանք Շավարշին բացում են մարդկային տեսակետից, քանի որ նոր հում ընկած խմբապետը, այնուամենայնիվ, չի կարող մի օր ինքն իր հետ շխոսել, մարդկայնորեն շբացվել ինքն իր դեմ։ Քննադատության ստեղծած խրավիլակը դառնում է ինքնանար մի բան, քանի որ պոեմի մեջ իսկապես ընդգծվում է ինքը՝ Շավարշը, դառնությունների մեջ մեծացած, մաքառած, կոշտացած, կոփվներում թրծված ու վառողի մեջ խանձված մարդը՝ ներքին տառապանքով և արտաքին էպիկական գծերով։ Զարենցը կանգ չի առնում այս կետի վրա։ Մուժով լցված Շավարշի միտքն առաջ է գնում։ Ով որ մնաց՝ մնաց... Բայց հետո՞... Գաղթականությունը, աշխարհները, խմբապետները հասան Ռուսահայաստան։ Բանաստեղծը հավատարիմ է մնում պատմական իրողությանը և տալիս է նոր հակասությունների պատկերը։ Գառնությանը հետևեց դառնությունը։ Շավարշը հիշում է այդ օրերը, Շավարշը քննում է երեխն ու այսօրը։

Հասան Քափեցին կիսամերկի եղ ի՞նչ։
Մնացին երկնիք տակ բաց,
Ծուրտը հեակից, քաղցն աղչեց—
Ոչ օգնություն, ոչ բան,
Եփուսահայ եզրայրեն՝ բը... հա՞-հա՞...

Ընդունեցին թյուրքից էլ վատ, այս՝
«Ընուածաւ եղբայրները... Հայրենիք», «Հայոց
Կոյս, ականջները զինը. ապահովէ:
Բայց ինչո՞ւ ընդունեցին այդքան վատ, վատ,
Օտարի, թշնամու, գրողի պես.
Դե, Հայեր են լիրը, մուխաննաթ.—
Մտածում էր Շավարշը—Հայեր են գեց,
Այլասերված Հայեր, ոսացած.— ոչ
Կովի երիս տեսած, ոչ կովի աճ.
Եվ դա չէ՞ր պատճառը, որ
Ոչիւարների նման սարսափահար,
Նրանք փախան ֆրոնտից, տվին էրգումը,
Հետո Ղարսն, Ալեքպութ... վաշ-ձեզ, Հայերը...

Հերոսի կենդանի մտածողության մեջ դրսենորվում են շատ կենսական ճշմարտություններ ու զարմանալի մակերես-վույթային բացատրություններու Այո, հարազատ երկրում շարունակվեցին սարսափները, Յուրաքար, սովոր, համաձարակը նոսրացնում էին հազարավոր գաղղականների շարքերը, էջմիածնի պատերի տակ մեռնում էր մի ամբողջ ժողովուրդ, «ոչ օգնություն, ոչ բան»: «Խսի երկիրը» վատ ընդունեց նրանց, պատերազմող «Հարազատ Ռուսիան» բոլորովին անտարբեր եղավ ժողովրդի ցավին, ուսւահայ կապիտալիստը ամուր կապեց քսակի բերանը, հայ դաշնակցությունը ճակատագրական օրերին գուրս եկավ մի ողորմելի բանւ Բայց այս ամենը Շավարշը միամտորեն տարածում է բոլորի վրա: Նա զենքի մարդ է, ոչ թե քաղաքական մտածող, չունի խոր մտածողություն, ճկուն միտք: Նա չի էլ ուզում տեսնել տեղական հարստահարված ժողովրդի, ճիշտ է, փոքրիկ, բայց, այնուամենայնիվ, օգնությունը, նա չի տեսնում հայ առաջավոր մտավորականների հերոսական զանքերը եղբայրներին փրկելու համար: Նա չէր կարող կարդալ Հ. Թումանյանի «Հոգեհանգիստը»: Բայց նա տեսնում էր նոսրացող շարքեր, մեռնող երեխաներ, համաձարակ... նա տեսնում էր, թե ինչպես է դաշնակցությունը իրար ետքից հանձնում քաղաքներն ու գյուղերը, տեսնում էր մորթապաշտություն, վախկոտություն, արկածախնդրություն, նրա աշքի առաջ ծածկված գնդակի պես փոքրանում էր ու սեղմվում հայրենական հողը և հեռանում ծննդավայրը: Ահա թե ինչու նա չի

կարող ճակ լզգալ, չտառապել, չհուզվել, չտանջվել: Սեղանի
շուրջը հերոսը մոռայլ խորհում է օրերի մասին, իսկ բա-
նաստեղծը զարմանալի գունեղ կենդանացնում է այդ մթնո-
լորտը.

Շավարշի գլուխը մտքերից եռում էր

Շավարշը դառը ծիծաղեց

Խամեց. ու Հոսեղին կրկին մտքերը—

Խառըից ավելի պղտոր ու ծանր,-

Իսկ զաշաղը երգում էր, զեռ երգում էր

Հոսում էր դառնությունը համբ...

Քեֆի սեղանը, հարբող մարդիկ, տխուր երզն ու հայրեա-
նիքի կարոտը, մռայլ վերհուշերն ու դառը խոհերը, մտքերից
եռացող Շավարշը, անթիվ կասկածները և խորապես էպի-
կական համր լոռությունը, — այս ամենը ձուլվում են իրար,
ստեղծելով միջավայրի, մարդկանց հին ու նոր կյանքի,
մտածողության զարմանալի ամբողջական, լիարժեք պատ-
կեր:

Զարենցը ստեղծել է քաղաքական դրամա բասարակութական ձևի մեջ։ Այստեղ նա անհամեմատ բարձրանում է իր ժամանակից, քանի որ քաղաքական թեմայի մեջ ամբողջովին հրաժարվում է հռետորական ներշնչանքից, լոգունքից ու մակերեսայնությունից։ Շավարշի խոհերը Արևմտահայաստանի, մարդկանց բախտի, անցած ուղու, ուղևահայ եղբայրների մասին, ծննդում են եռացող ուղեղից, շիկացած մտքից ու հոգուց, կենսափորձից, ապրած տառապանքներից։

Հենց դրա շնորհիվ էլ «Խմբապետ Շավարշը» ըստամբա-
պես նորագույն էջ էր հայ պոեզիայի պատմության մեջ, զա-
մեր առաջին հաղաքական-արդիական պոեմն էր՝ գրված
իրապաշտական շեշտված ոնով։ Կարելի է ափելացնել՝ կեն-
սական հարստորյամբ և առնական, փոքր-ինչ կոչա, նոր
լիցերով, կրտերի բափով և հաղաքական եւենոյրեների ձո-
գեբանական ընկալումով այդ պոեմը նմանը չունի հայ պոե-
զիայի մեջ։ Լիրո-էպիկական լայն կտավի վյա Զարենցն
առաջ է մղում թե կենցաղային և թե քաղաքական կյանքի
պատկերներ, անշուշտ հերոսների շուրջը ստեղծելով նաև
համապատասխան կոլորիտ, կենցաղ և սոցիալական միջա-
մայր։

Այս պոեմը շատ ակնառու երևութ էր սովետահայ գրականության և սովետական ողջ պոեզիայի զարգացման ճանապարհին։ Սխեմատիզմի և տեխնիցիզմի դեմ մղվող պայքարում, գոեհիկ սոցիլուգիզմի ճնշող մթնոլորտում, Զարենցը մեկն էր այն հազվագյուտ արվեստագետներից, որոնք մըրթակցության գնալով դասական արվեստի հետ, ստեղծում էին նոր ժամանակների ոեալիստական պատմությունը, գեղարվեստական մարմին տալով կենդանի, բնական մարդուն, հայտնաբերելով կյանքի շարժման բարդությունը։ Այս գլուխգործոցը նոր շրջափուկ էր բացում հայ գեղարվեստական ժարքի պատմության մեջ, նոր որակով և առանձնահատուկ ուժով բարձրացնում թանձր իրապաշտությունը։ Դա անողոք ճշմարտության, կենսական հարստության, բուռն հակասությունների և դրամատիկ անցքերի արտասովոր ուժեղ արտացոլք էր, որը մի կողմից հաշիվ էր մաքրում ձախ մոլորությունների հետ, մյուս կողմից՝ ամուր պատվանդան գնում «Էպիկական լուսաբացի» և «Գիրք ճանապարհի»։ Կյանքի և իմացության մեծ պոեզիայի համար, ինքն էլ մնալով որպես հավերժական բարձունք թողորովին պատահական չէր այն շերմ, ընդունելությունը, որ պոեմը գտավ ուսու գրական շրջաններում՝ և մասսայականացվեց Կաչալովի արտասանությամբ։ Պոեմի չությունը խոր էր մեկնաբանում նաև Սուրեն Քոչարյանը, նրա ընթերցումը մեծ հաջողություն ուներ մեզանում և առանձնանում էր պոեմի գեղարվեստական արժանիքների խոր ընդգծմամբ։

Հերոսի ապրումների ու վերհուջերի միջոցով նա ստեղծում է գոնեղ պատկերներ, որի շնորհիվ ոչ միայն տեսանելի է դառնում բաղաբական կյանքը, այլև հսկայական շափով մեծանում են կենսական ընդգրկման հնարավորություններն ու բացվում նոր հորիզոններ։ Եվ այս ամենին զարմանալի հարմար են տաղաշափությունը, աղատ ձեր, այսպես կոշված խորապես բանաստեղծական արձակայնությունը, առձայնութը, որոնք ազատություն են տալիս հեղինակին՝ ստեղծելու բանաստեղծական լայն, հարուստ պատկեր, ազատ մտածողություն։ Աշ մի կերպ այս պոեմի բովանդակությանը շես կարող գնել «Անուշի» հստակ ու զուլաբ ձեր մեջ, քանի որ նյութը ուրիշ է, հարուստ կնճիռներով, մարդ-

կային խիստ հակասական, թվում է, թե եռացած վիճակներով, ամենածանր ապրումներից մինչև ամենադաժան գործը Ասելիքը միասնության մեջ խիստ բազմազան է, որ, հարկավ, պահանջում էր բազմազանություն և ձեր մեջ։

Առհասարակ զարմանք է պատճառում այս պոեմի տարողունակությունը, կենսական նյութի, երեսությների, ապրումների, երանգների, մանրամասների հարստությունը և ներքին կենտրոնացումը։ Պոեմը փոքրածավալ մի երկ է։ Բայց այդ ծավալի մեջ հանճարի մագնիսական ուժը մի է բերել մեծ հարստություն։ Այնտեղ երեսում է գլխավոր հերոսի արտաքինը, տարազը, ծառու եղած ձին, անցած ճանապարհի մանրինը, աշիրաթը, թալանված նախիրը, այնտեղ երեսամասները, աշիրաթի սարսափները, ընկնող բաղաքներն ու գյուղերը, սալերը, երեխանները, կանայք, սովոր, տիֆը, համարակը, քաղցից ուռած երեխանները, այնտեղ գծված երեխանները, սերքին կոկները, լսվում են մառագերների համազարկերը։ Երեսում են մինիստրներն ու անհետանդամները, ուսւածած գիններները, ուսւածած սպանները։ Այնտեղ սեղանի շուրջ լսվում է անհայրենիք մարդկանց թախծություն երգը, եռում են մտքերը, ծավալվում է բնավեր մարդու երգը, եռում են մտքերը, ծաղախվում են կականց անսահման, անեղը կարուտը... Ծաղախվում են կարուտը, կոկիծը, գառնությունը, տագնապը, կորստյան ցավը, ծավալվում են կյանքի բնական հունից դուրս նետված մարդկանց տառապանքն ու գառնությունը։

Բայց այս բոլորը, կենսական այս հարստությունը ենթարկվում է հանճարի կազմակերպող ուժին, դառնում է գեղեցիկ, ուժեղ, ամբողջական համածուլվածք։ ցայտում ընդգծվում է հերոսի հոգեկան դրաման, որն իր հերթին արդու արդու արդու է շնչահեղ, արյունաքամ Հայաստանի բաղաբական դրամայի, համաժողովրդական աղետի գեղարվեստական պատմությունը։ Ամենազոր ոեալիզմը, հանճարի բուռն շիկացման և կենտրոնացման շնորհիվ, հաղթանակ է տանում։ Մնկում է գլուխսործոցը... գարաշրջանի դրաման, որին գեղելության գեղեցիկությունը պարզեցված է հավերժ շաղարվեստական ճշմարտությունը պարզեցված է հավերժ շաղարվեստական լայն, հարուստ պատկեր, ազատ մտածողություն։ Աշ մի կերպ այս պոեմի բովանդակությանը շես կարող գնել «Անուշի» հստակ ու զուլաբ ձեր մեջ, քանի որ նյութը ուրիշ է, հարուստ կնճիռներով, մարդ-

Բայց դարձաւ դառնանք գլխավոր հերոսի հոգեբանական գարգացման ընթացքին, որն իր հերթին արտացոլում է նաև

մեր քաղաքական կյանքի հակասությունները և ողբերգական բնույթը: Այս հերոսը ի ծնե չի եղել դաժան ու բիրտ մարդ, նա անցել է տառապանքի ու հոգեկան հակասությունների միջով, իր ժողովրդի համար ելք է որոնել, բայց արյան ծովի ու դիակների շարքերի մեջ նրա մթնած ուղեղը չի գտել շուտափույթ հուսալի մի ելք: Նա ոտք է դրել մի անհյուրընկալ ու անտարբեր երկիր, տեսել մի ողորմելի կառավարություն, մի էջմիածին, որի շուրջը սրբազն խոննկի փոխարեն տարածվում էր մեռելահոտը: Զարենցը հավատարիմ է մնում պատմական ճշմարտությանը: Նրա հերոսը ստեղծագործական մեթոդի տեսանկյունից ինչ-որ հարազատություն ունի Շոլոխովի Գրիգորի Մելեխովի և Բագրիցկու Աֆանասիի հետ, այսինքն՝ իր գործի և ապրումների մեջ կրում է դարաշրջանի բարդ երեւությունների դրամատիկ շեշտերը: Պատմական կյանքի տեղատվություններն ու քաղաքական վիճակը դրական մարդուն մղում են մի ուրիշ ուղի, նա չունենալով ուժ, շտեսնելով հեռանկար հայրենի հողի վրա, կորցնում է մարդկային գեղեցկությունները և ազգային, համաժողովրդական տեսները: Նրան այժմ հետաքրքրում է միայն մի փոքրիկ հարց՝ իր աշիրաթի, խոնուցիների, իր գավառի մարդկանց ֆիզիկական գոյությունը: Նա պատրաստ է ավերել ամեն ինչ՝ հայկական, ուստական, թուրքական, «միայն թե քաղցից շունա կինը, միայն թե երեխան շունչը շվչի»:

Քաղաքական-տնտեսական ծանր պայմաններն ազդում են մարդկանց վրա, խեղում նրանց: Այդ մարդիկ իրենք զոհ լինելով պատմական հանգամանքների, զոհեր են խլում կյանքից, դառնում խոց նույն այդ կյանքի համար: Եվ երեւմներեմն հոգեբանական բռնկման ու տագնապի պահին նրանց մեջ կրկն արթնանում է անցած օրերի, կորցրած հողի ու կործանված տենչերի կորստի մորմոքը: Այսպես է մտածում Զարենցը, այսպես է կերտում իր հերոսին՝ առանց գունագարդելու և առանց պարզունակացնելու: Այսպիսով նա կերտում է ոչ թե սատիրական կերպար, այլ ցույց է տալիս պատմական հանգամանքների պատճառով դեպի բացասականը ու մերժելին տանող ուղին: Այդ հերոսը, վերջ ի վերջո, պատեպատ խփելով ու որոնելով, շտեսնելով հենարան և ուժ, դառնում է մի շարիք, տարածելով մահի, մուժի և ասպատա-

կի երգը՝ թալանելով հայկական ու թուրքական գյուղերը: Ազգեցիկ է թուրքական թալինի ավերման նկարագիրը: Աշխաթթը ավերում է գյուղը, վառում խրճիթները, աշիրաթը վրեժ է լուծում մարդկությունից՝ աշխարհում իրեն հասած դառն ու լեղի բախտի համար, բայց այդ վրեժն ուղղված է անմեղ մարդկանց դեմ: Քաղաքական ծրագրերից, հայրենասիրական ուսմանտիկայից ու երազանքից մինչև մոլեգին, անբանական, մինչև անգամ բնագդական մի կոփի գոյության համար, — ահա ճանապարհը, որ նշված էր Սրբամտյան Հայաստանի համար Թուրքիայի, եվրոպական դիվանագիտության և ցարական գուսական կուսակցությունը՝ իր վրա վերցնելով Հայաստանի պաշտպանության գործը, անճարակորեն ծնկի գալով ուստարների առաջ: Շավարշի մեջ երբեմն-երբեմն արթնանում օտար է Շավարշի մասին կողմից, Կերպարը ստանում է Հոգեբանական բազմերանգություն, իր հետ բերելով նաև կյանքի բազմանիստ պատկերը:

Աննման է թթուհու կերպարը, որ Զարենցը կերտում է Թալինի գրավման տեսարանում: Այս դրվագում Զարենցի տաղանդը, որ ընդունակ է երգելու բոլոր լարերի վրա, բոլոր ելեկչներով և այս իմաստով նա թերևս ամենաբազմերանգ և բազմաձիրք հայ բանաստեղծն է, շողարձակում է մի նոր փայլով: Էպիկական հզոր խոսքին ձուլվում է քնարական փայլով: Էպիկական հզոր խոսքին նոր խոսքին ձուլվում է քնարական տրամադրությունը, արտակարգ փայլով մարմին է առնում տրամադրությունը, արտակարգ փայլով մարմին է առնում կանացի գեղեցկության տիպարը: Ավելիված գյուղում, ծխի կողմանի միջից դուրս է թռչում շբնաղ կինը: Առնական ուժն ու մշուշի միջից դուրս է թռչում շբնաղ կինը: Առնական ուժն ու քնքանը, վայրենի զորությունը և գեղեցկության տեսիլքը գեմառղեմ են:

Սարսափած աշքերով կինը նայեց շուրջը—

Աշքերը սև էին, սև ու շինչ:

Սև մագերը թափված ուսերին, կործքը բաց:

Աւարաստրե, ճերմակ ձյուների նման

Շողշողում էր կործքը, ինչպես լուսաբացին

Աւազյազը, երբ ցնում է գումանը:

Պատկերը գրեթե միփական շափազանցություն է ընդունում: Զին ծառ է լինում հրաշքի առաջ, Շավարշը ցնորքի մեջ է: Բայց նա միփ ու տեսիլք, գարնանային մշուշ ու ցող,

ճերմակ փրփուր ու ալիք չէ, նա կին է՝ մահվան սարսափն աշքերի մեջ։ Դաշույնից փախած կինը փլվում է իգիթի առաջ՝ օգնություն հայցնուու Արտակարգ ազդեցիկ է պատկերը։ Կինը զոհ է գնում զինվորի դաշույնին, կործանվում է գեղեցկությունը, բայց հավերժ շիկացած հետք թողնում Շավարշի ուղեղի մեջ։

Այո՞ւ, Շավարշի մեջ երբեմն-երբեմն արթնանում է երեկվա մարդը, նա ընդունակ է տառապելու և խորհելու, բայց, այսուամենայնիվ, Շավարշը և նրա խմբապետների մի մասը գործի ու վարքի մեջ արգեն դարձել են ինքնիշխան, մոլեգին, արյունառու և ոչ կարող էին ուղի ցույց տալ, ոչ էլ նոր ուղու վրա կանգնել։ Նրանք ապրում են արյան ու ավերի մեջ, աշքերում արյուն, մահի, տագնապի նախճիրներ... մոռացած աշխարհն ու ազգը։ Այսպես է Զարենցն ամբողջացնում խմբապետի կերպարը, գարաշրջանի լուսի տակ արտացոլելով մեր ազգային շարժման էվոլյուցիայի որոշ կողմերի ճշմարիտ պատկերը և որոշ ուժերի հոգեբանությունը։ Այսպես է ավարտվում շափածո վեպի ֆրագմենտը, որն ամբողջական երկի տպագրություն է թողնում իր հարուստ բռվանդակությամբ և սյուժեով։ Ամենայն հավանականությամբ, գեղագիտական ինքնուրույն նշանակությամբ հանդերձ, «երմբապետ Շավարշը» պետք է գառնար «Ապստամբություն» էպոպեայի հիմնական մասերից մեկը։

Բայց շափածո վեպը լգրվեց, մնացել են միայն ֆրագմենտներ։ Ինչո՞ւ Զարենցը շշարունակեց այն երկը, որ լայն ճանապարհ էր հանում սովետահայ գրականությունը, նշելով դասական ուղին և լինելով նրա դասական օրինակը։ Ինչո՞ւ լգրեց։ Դժվար է ասել, թե Զարենցը դեռ լավ չէր ուսումնասիրել նյութը, քանի որ, թերևս, ոչ մեկը այնքան խոր ու բազմակողմանի շգիտեր 10-ական թվականների Հայաստանը, ինչպես նաև Զէ՞ որ նա ինքը քաղաքական այդ իրադարձությունների մեջ էր եղել որպես կամավոր, շարժային զինվոր, որպես բանաստեղծ, կոմունիստ, նղել էր ամենուր, ողջ Արևմտյան Հայաստանում, Կովկասյան ճակատում, Հարսում, աշխատել էր որբանոցներում, կովել էր կարմիր զորքերի հետ։ Թերևս զեր քավականաշաշափ ատեզծագործական ցիտոգություններ և ուժ չէր կուտակել էպոպեայի համար։

Քայլց դա ավելի քան ծիծաղելի է, քանի որ հենց «Խմբապետ Շավարշի» մեջ Հորդում են կենսական ճշմարտությունը, փորձն ու դիտողականությունը։ Եվ այստեղ, ամենից ավելի այստեղ էր դրսեռորդում Զարենցի բազմակողմանի, հարուստ ու բազմաձև ստեղծագործական տարերքը՝ ընդունակ պոեզիայի բոլոր բնագավառներում հրաշքներ կերտելու, կյանքը բոլոր երանգների մեջ ընդգրկելու ու արտացոլելու Ամենայն հավանականությամբ բանաստեղծին զգալիորեն խանգարում էր ժամանակին անհեթեթ ձեեր ընդունած և տարածում գտած վուլգար-սոցիոլոգիզմը, որ հնարավորություն չէր տալիս ամբողջ ճշմարտությամբ խոսելու մեր ազգային շարժման ուղիների, անցման շրջանի ողբերգական անցքերի և ընթացքի մասին։

Այդ հայացքներն ու պատմական իրականությունը իսկապես խոր հակասության մեջ էին, իսկ Զարենցը չէր կարող ճշմարտությունը զոհ բերել ստին, բավականաշափ ուժեղ ու մեծ էր զիշումներ շանելու համար։

ԷՊԻԿԱԿԱՆ ՀՈՒՍՈՒՑՈՒՅԹ

ԱՆՁՅԱԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՐՁԵ

Պայծառ եմ նայում աշխարհին հիմա,
Խմաստովիյոն է իմ սրտին իջել.
Հնձի եմ ելել հնձվորի նման—
Եվ ո՞չ մի ցողուն չե՞մ ուզում զիշել
(«Խոհ»)

Տասնամյակի երկրորդ կեսին ստեղծագործական նոր մեթոդի արմատավորման խնդիրը գրավում է սովորական գրականության հատուկ ուշադրությունը։ Շատ բնական երեւյթ, Կյանքը էպիկական հզոր ընթացքի մեջ օր-օրի հարստանում էր և խոր նստվածքներ տալիս, ձևավորվում էին տնտեսական, քաղաքական ու բարոյական նոր հատկանիշներ։

Փոխվում էին երկրի ներքինն ու արտաքինը, բարձրանում էին արդյունաբերական հսկաներ, քաղաքներ ու գյուղեր, բացվում էին ճանապարհներ, երկաթուղիներ, ծաղկում էր կրթությունը, դպրոցը, կուլտուրական շինարարությունը։ Հեղափոխությունը իմաստավորվում էր աշխատանքի, ստեղծման, մաքառումների ընթացքի մեջ, սոցիալիստական ազգերի զորացումն ու տեղաշարժերը նոր հորիզոն էին բացում գրականության առջև, հատուկ խնդիր զնում՝ խորությամբ թափանցել կյանքի խորհուրդների մեջ և որոնել գրական աշխատանքի նոր միջոցներն ու հնարավորությունները։

Ինչպես միշտ նման դեպքերում, ծագում է անցյալի գնահատության և ուղիների հարցը։ Գրական կյանքը կրկին ծփում է բուն վեճերով, հակասություններով, խմբավորումների պայքարով։ Առավել ուժեղ տաղանդները, բնականարար, ընտրում էին ստեղծագործական հիմնավոր փորձի ճանապարհը։ Նրանց հայացքն ուղղվում է դեպի աշխատանքի մաքառումների տարերքը, որի հզոր լիցքերի ներքո է ծնվում էին խորերը, ընկալումները, դիտումները, ամբողջանում էին պատկերները և ծրագրային բանաստեղծությունների փիլիսոփայական տարերքը։

Այս մթնոլորտում ծնվեց եղիշե Զարենցի հերթական գիրքը՝ «Էպիկական լուսաբացը»։ Դա սոսկ հերթական հաջողություն չէր, այլ այն հաղվագյուտ գրքերից, որոնք հանգուցային դեր են խաղում, հաջորդականության մեջ դառնում սկիզբ, բայցում նոր հորիզոն։ Ճիշտ են հկատել Հ. Սալախյանը, Է. Աղաբերյանը, Է. Ջրբաշյանը, որ այս գիրքը գեղարվեստական մի ծրագիր է, ուր ծավալուն ու խոր առաջադրված են արդիականության և գրականության նորագույն առնչությունների հարցերը։ Բայց եթե միայն այդքանը լիներ և միայն այդքանով սահմանափակվեր գիրքը, ապա տեսության ոլորտից չէր կարող բարձրանալ գեղարվեստական բարձունքի։

«Էպիկական լուսաբացը» հստակ և դուշակ, թվում է, միանգամից և ամբողջապես ընթերցողին հանձնվող գիրք է։ Բայց «գժվար վարժությամբ» նվաճված այդ պարզության ներքին խորքերում թաքնված է մեծ հարստություն։ «Տոկում պարզությամբ» գրված այս գրքում նորովի երեան են գալիս Զարենցի վերլուծական, խոհական ուժը, կյանքի և հոգու շարժման մեջ թափանցելու ձիրքը։ Մրագրային բանաստեղծություններում ստեղծվում է նաև բանաստեղծ քաղաքացու, գեղեցկության ստեղծման ճանապարհին անկումներ ու վերելքներ ապրած մարդու կերպարը։

* * *

Զարենցը ամենից առաջ նկատի ուներ իր որոնումների փորձը, ճանապարհը և հոգեկան լարումները։ Նրա ծրագրային երգը բանաստեղծ անհատի հոգու տեսական շարժման պատճեկըն է և ազգային նորագույն պոեզիայի բախտի պատմությունը։ Խոր ապրած, անկեղծ հույզերով և ներշնչանքով նա ամփոփում էր հեռավոր օրերի բանաստեղծական փորձը, ուրույն գունավորմամբ ներկայացնելով իր քնարը, իր մուսային, իր հերոսին («Մուսայիս»)։

Գունատ էիր դու, ինչպես մահամերձ,
Եվ շգիտեին շրթերդ խնդաւ-
Եվ ախուր էին գգվանքները մեր,
Եվ սերդ, ինչպես լուսահարի սեր,
Անկիրը էր այնպես ու ասնտիմենտար

Նա դառնում է երդին մահ բերող երեւյթներին, կյանքի բնույթին, դժնի օրերին, դաժան ժամանակներին.

Անձրև էր մաղում իմ գլխին բարակ,
Ու շկար կյանքում սրբազն կրակ..

Իր բանաստեղծական ոգու՝ մուսայի կերպարանափոխության ընթացքը, այսինքն՝ ապրումների հինվածքի ու հոգեբանության բնույթը նա բացատրում է ազգային կյանքի էռթյամբ, ոիթմերով ու լիցքերով։ Երգը մեռնում էր, բանի որ կյանքին սպառնում էր դադարը, երգն անարյուն էր, բանի որ շոներ կենսական լիցքեր, եղագ բորբոքվում է ու վերածնվում, բանի որ քաղաքական հողմերը, պայքարի փոթորկը, հասարակական ոիթմերը ցնցում և փոխում են կյանքի ընթացքը։

Եվ դու մեռնեիր երկի ինձ հետ՝
Անձրէից հյուծված ու հրակարուտ։
Այս փոխորիկը եթե լցնցեր
Եվ մրրիկը այն եթե շխանձեր
Թու դեմքը իր շինչ, կանսատու հրավ։
Հառնեցիր հանկարծ վիթխարի թափող
Դու շննդալից այդին ընդառաջ,
Լցված հողմային օրերի տապով՝
Կանգնեցիր՝ ձեռքիդ պայքարի շեփոր,
Եվ դարձար այնքան նոր ու անճանալ։

Մուսան որպես կարմիր ամագոնուհի, զահել, գեղեցիկ և զարհուրելի՝ որպես կովի երթ, — այսպես է նա բնութագրում հեղափոխության և քաղաքացիական կոհվների շրջանում ստեղծված իր բոցավառ երգերի ոգին։ «Մուսայիս» և ծրագրային մյուս ոտանակորներում վառ են արտահայտվում բանաստեղծի հատուկ սգեռորությունը, ներշնչանքի պահերը և մտերմիկ ապրումները։

Չարենցը իր կյանքի ողջ իմաստն ու գեղեցկությունը տեսել է ներշնչանքի խորհրդավոր, ստեղծարար պահի մեջ նույնիսկ ամենավերջին պահերին, 1937 թ. գրած «Իմ մուսային» ոռնդոյի մեջ նա իր հոգու բովանդակ էռթյունը, հավատը, սերը, վերքը, վիշտը, միխթարությունը, «հույսը զվարթ», մաքուր սերը, միակ զենքը համարել է բանաստեղծական

ներշնչանքը։ Ռոնդոն ստեղծագործ ոգու պայման արտաշուլքն է.

Մաքուր իմ սեր, միակ իմ զեն,
Միակ իմ հոգը, իմ սուր, իմ զարդ,
Հույս իմ լուսե, քույր իմ հպարտ,—
Իմ անազարտ սիրո հույզեր,—
Լույս իմ կյանքի, հույս իմ զվարթ...
Անձն վայրկյան ու ակիրարթ
Դու ես միայն ինձ հետ կիսել
Թե՛ վիշտ, թե՛ վերք, թե՛ երգ, թե՛ վարդ,—
Մաքուր իմ սեր—
Խնչպես անգետ մանկան համար
Թոփչի ու վագք, ու կարուսել,—
Խնչպես երգին—քնքուշ քնար,
Զորավարին—անկոր սուսեր,—
Իմ զե՞ն, իմ սո՞ւր, իմ հո՞ւր անմար,—
Անհուն իմ սեր...

Շոայի ծիրքը և մշտապես բորբոքուն ներշնչանքը Չարենցին պարզեցել են գերագույն երջանկության այն արարշական պահերը, որոնք անմատչելի էին մշտապես ձախորդություններից մաղձոտվող միջակություններին, հայկական առլիերիներին, դրամփյաններին։ Չարենցի ողին հաղթանակ էր տանում բոլոր պահերին, նույնիսկ ամենածանր մթնոլորտում, դառնությունների մեջ։ Բանաստեղծության մեջ մըշտապես վառվում է սրբազն կրակը, որը բորբոքվում է օրերից և լույս տարածում նույն օրերի և գալիք համփաների վրա։

Գիշերային պահերը այս քո,
Երբ լապտերի նման վառ
Հուրհուրում է քո մեջ ողին
ստեղծագործ ու պայման—
Չարենցն արդյոք տառապանքին
ու արտունշին այս անվերջ
եվ մարգկացն հերյուրանքին՝
անժարելի ու անժար...

Այսպես ահա քայլել են միասին հանճարն ու միջակությունը, այսպես հանճարի բորբոքուն ոգու առջև ծուղակներ են զրկել մարգկացն շարուրյամբ, ողորմելի, լնչին, բայց կե-

գերիշ ու սարսափելի հերյուրանք, որոնք ամեն անգամ թե՛ս տապալվել են հանճարի ոգու ուժից, բայց մշտապես մնացել կենսունակի եվ, այնուամենայնիվ, հանճարը նույնպես իր մեծ ներշնչանքի, մուսայի և ստեղծագործ ոգու առջև ունեցալ է անկման պահեր, ուրույն բարդություն, կարճատես մեղքեր: «Էպիկական լուսարացի» մեջ արտացոլված է նաև մեղքի՝ գեղեցկության կործանման պատմությունը: Նույն «Առուսալիս» բանաստեղծության մեջ (1930 թ.) անողոք շեշտերով բացված է անցյալի վարագույրը:

Իմ ե՞րգ, իմ քնա՞ր, որերի միգում
Ինձ անշարժ տրված արևոտ իմ կին,—
Դու անկեղծ էիր ինձ հետ, ինչպես բույր,
Դու պայծառ էիր ու անշափ մաքուր—
Քեզի սակայն ես մի օր դեմքիդ...

«Ծրագրային» բանաստեղծությունների մեջ ստեղծվում է մի ուշագրավ դրամա, ուրույն բարդություն՝ կապված նահանջների, «Պավաճանության», ուղիների կորստյան հետ: Խոսքը վերաբերում է ձախ դիրքավորմանը, «Ծրեքի» դեկլարացիային, «Ստանդարտի» կուրսին, կոմֆուտի անճարակ փորձերին, անցյալի ավանդների ժխտմանը, այն դալտոնիզմին, որ կյանքի ընթացքի և պահանջների նկատմամբ դրսելորում էին հեղափոխական արվեստի ներկայացուցիչները:

Դեռևս 1925 թ. բանաստեղծը բաժանվում է ոլեֆյան թմբուկից, թողնում ձախ արվեստի և փորձը, և տեսությունը: Բայց եթե 1925 թ. նա այդ փորձերը համարում էր անցած կյանքի պահանջների արտահայտություն, այսինքն՝ պատմական անհրաժեշտություն, այժմ արդեն անվերապահ ժխտում է ձախ արվեստի տեսությունը և փորձը, ցավով ու դառնությամբ նայում կորած տարիներին:

Չկարողացա՞ ես կրել կյանքում
Պայծառ անոնք քո, որպես դրոշ,—
Եվ գլխի իշավ խավարը անդուռ,
Եվ ես հասկաց, որ դո՞ւ ես, այդ դո՞ւ
Ինձ հետապետոս հասուցման սրով:
Եվ ես ոռնացի, ինչպես մահամերձ
Գաղանն է ոռնում մահվան սարսափից,

Զեռքերս ահո՞վ կարկանցիք քեզ,
Կարոսով անհուն կարոսեցի ևս
Կենդանի շնչիդ, ձրիդ ու տապիգ...

Ի՞նչ էր պատահել: Ինչո՞ւ էր Զարենցը սոսկումով նայում երեկվա սխալներին: Զափազանցություն չէ՞ր արդյոք մեղանշման ծանր խոսքը: Զարենցը անկեղծ էր: Տեղի էր ունեցել իսկական աղետ: Մի որոշ ժամանակ պուղիայից վտարվել էր բուն հերոսը, մարդը՝ իր հոգեւոր աշխարհով ու միշտայրով, այսինքն՝ վտարվել էր ժամանակակից կյանքն իր շաբախով, այսինքն՝ վտարվել էր ժամանակակից կյանքն իր բուն հարստությամբ, հոգեկան, զգացմունքային բարդ շարժմամբ, պուղիան զրկվել էր գեղեցկությունից և բովանդակությունից: Ավելի ճիշտ, առանց կենսական ակունքների, պուղիան շունենալով ներշնչման տարեքը, դուրս էր մնացել կյանքի ոլորտից, կորցնելով ներգործության ուժը:

Այս բոլորի փոխարեն նրանք, այդ թվում նաև Զարենցը, ներշնչման կենդանի շունչը փոխել էին բետոնի, երկարի, իրերի հետ, սիրազ կարելով «մարդուց ու նողից»: Հարց կարող է ծագել. չէ՞ր որ Զարենցն արդեն հաղթահարել էր այդ ամենը, էլ ինչո՞ւ էր անցյալի տիսուր հուշը նրան այդքան կենեքում: Բարդությունն այն էր, որ սխեմատիզմն ու տեխնիզմը շարունակում էին կեղեքել հայ բանաստեղծությունը: Խսկ պոեմների և տեսաբանների մի ամբողջ խումբ պրոլետարողների ասոցիացիայից բազմազան եղանակներով հարձակում էին սկսել Զարենցի գեմ, որը փորձում էր նոր ճանապարհ բացել սոցիալիստական գրականության մայրուղու՝ ուեալիզմի համար:

Անողոք շեշտով, անկեղծ տառապանքով խոսելով անցյալի մասին, նա ըստ էության կովում էր ձախ տեսության ու փորձի հարատեսող երեսությների գեմ և հող նախապատրաստում նոր վերելքի համար: Այստեղ էլ պետք է տեսնել ծրագրային բանաստեղծությունների հասարակական գեղագիտական շեշտված նպատակը: Զարենցը մշակում է նոր երգի տեսությունը, հարթում ճանապարհը, խոհուն հայացքով, սթափի ու հավասարակշիռ նայում: Երեսությներին: Ամենուր երգի մեջ ձևավորվում է բանաստեղծի կերպարը, որին մտահոգում է երգի բախտը, ուղին, կյանքի ստեղծագործ տարրերը:

«Երգ մաքառումի» բանաստեղծությունը՝ գրված 1928 թ., շատ արտահայտիլ է Ներկայացնում ժամանակի մթնոլորտը՝ Զարենցի Հոգեվիճակը, նրա անձնավորության ու գործի շուրջ ծավալվող անբարենպաստ այն վիճակը, որ ստեղծում էին պրոլետ գրականության ասոցիացիայի զեկավարները, ին ու նոր ձախերը, այդ թվում Ազատ Վշտունին, Նաիրի Զարյանը, Նորայր Դաբաղյանը, Հարություն Մկրտչյանը և արիշները:

Կարելի է հեշտությամբ տեսնել, որ Ժրագրային կոչվող բանաստեղծությունն ունի կենսագրական հիմք, Հոգեկան լիցք և գեղագիտական նպատակասալացություն։ Ընթերցողը առնչվում է ոգու անդուզ մաքառման, գժվար վերելքի ու անկումների պատմությանը, բարձրությունների՝ ձգտող բանաստեղծի Հոգեկան ապրումներին և փիլիսոփայական ընդհանրացումներին։

Դու բարձրացե՞ ես մաքառումով
Դեպի անելի բարձրություններ,
Եղել ես հաճախ արեկի մոտ,
Տեսել զագաթներ լուսաձյունե,—
Եվ ճանապարհն ինչքա՞ն ես դու
Քո բորիկ ոտեկեր արյունոտել,
Բայց քայլե՞լ ես միշտ, քայլե՞լ անդուզ,
Տքնել անդադար ո կարուտել:
Եվ երբ հոգնած ես եղել դու թիւ,
Երբ ճնշել է քեզ ուղիղ անհաս,
Եվ ճանապարհի բարերին ցից
Նստել ես, որ քիչ հանգստանա—
Քեզ մեռած են միշտ կարծել նրանց,
Այս մարդիկ, որոնք իրենց օրում
Ու մաքառել են, որ բարձրանան,
Թէ տեսել սարսափ ու հոգնություն։

Բանաստեղծություններն ավելի ակնառու, քան ամեն տեսակ վավերաթուղթ, պատմում են տաղանդի դժվար ճանապարհի մասին։ Դուքս գալով մոլորությունների շրջանից, նա այժմ անդուզ պայքար է մղում հին ու նոր ձախերի համար բազմության դիմ, որը բանաստեղծությունը քաշում էր դեպի ստորոտ, կտրում դարից, ժամանակի շնչից, հասարակության վերելքից։

Առանձին ուշագրություն է գրավում դարձյալ կենսագրական հիմք ունեցող մի ուրիշ բանաստեղծություն՝ «Ես այն շեմ այլևս (Պատասխան թշնամիներիս)» խորագրով։ Նա կծուխոսքը է նետում իր թշնամիներին, «Նշյին դավերի ասպետներին», որոնք քշիչում են ճանկերը պրած, կամ սպասում արյունոտելու մեծ երթի մեջ մտած բանաստեղծին։ Զարենցը կրկին խոսում է իր մոլոր տարիների և ձախ որոնումների մասին։

Խեշա՞ն եմ վատել ես անգին ժամեր,
Եվ ինչտա՞ն ենուներ ցըլ եմ ծրի, —
Եվ ինչտա՞ն պիտի նիմա աշխատեմ,
Ար քանեմ ես այս, ինչ զա՞յ կորցրի...»

Չուր կորած տարիներ, ծրի ցրած նունդեր, վատանձ անզին ժամեր, — այսպիս է ընութագրում նա 1922—24 թ. շրջանը, մոլեգին հարձակումների և անպատուղ որոնումների տարիները։ Եթե այսօր գրականագետը փորձում է ինչ-որ ձևով վերագնահատել այս շրջանի ստեղծագործությունը, շնչտված դրական գենր տեսնել այստեղ, ապա պարտավոր է փոքր-ինչ հաշվի նստել ամենից առաջ իր՝ Զարենցի մեկնությունների, կրքով գրած ժխտական տողերի և անողոք ինքնադատության հետ։ Այլապիս ստվերի տակ կմնան անկումները, վերելքները, ճանապարհի բարձրությունները, գրողի ստեղծագործական հոգեբանության ներքին շարժումը, նոր մեթոդի նվաճման լարումները։

Խեշպես միշտ, Զարենցը չի մոռանում իր կյանքի գլխավոր ուեպերը, նշանակալից հոգեկան մերձեցումները, որոնք դեր են խաղացել գրական ճանապարհին։ Այսպիս նա հիշում է իր 1924 թ. հանդիպումը և երկարատև զրայցը Ալեքսանդր Մյասնիկյանի հետ, մոսկովյան մի գիշեր, «Ստանդարտի» առիթով։ Խոհուն, հավասարակշռված, տեսական ամուր սկզբունքների տեր մարքսիստ քննադատը մեծ հարգ աներ Զարենցի աշքում։ Խեշպես նշել ենք վերը, նա համոզաւ է Զարենցին, մտերմորեն, բայց խիստ բացառություն է նորու պսեղիայի էպիթյունը, ապա՝ մտահաված մեծ տապանդի զարգացման հարցով, նույն տարգա վերջին գործուղուած եվրոպա՝ տառմնափիելու համաշխարհային արվեստը։ Ճանոթանալու եվրոպական երկրների կյանքին։ Այդ պրճեկ ժամանակու հարաբեկան երկրների կյանքին։

ռական պահի և ստեղծագործական շրջադարձի մասին է գրում Զարենցը.

Էլ չի՝ Հոնդում սիրոս վայրենի,
Խնչես դաշտերում նժույգ սանձարձակ.—
Գվաց ինձ սիրով մի ձեռք հայրենի,
Եվ ես մի գիշեր իմաստուն դարձաւ

Մենք շատ ենք խոսում ծրագրային բանաստեղծություններում ուրվագծող կենսագրական փաստերի ու պահերի մասին, որոնում ստեղծագործական խմբումների և հեղինակային հոգեբանության դրսերումները։ Դա բնավ ավելորդ շանք չէ, քանի որ հաճախ անտեսվում են այս շարքի հոգեբանական հարստությունը, անհատական ապրումների շաղախը, դրամատիկ շեշտը, խոների ուշագրավ զուգորդումները, որոնք նոր երևոյթ էին հայ երգի ստեղծագործական հոգեբանության և փիլիսոփայության ճանապարհին։

Ծրագրային բանաստեղծության մեջ հսկայական չափով մեծանում էր անհատի և հասարակության ներքին աղերսը, բանաստեղծի արտասովոր զգայուն և առողջ վերաբերմունքը դեպի դարաշրջանը, դասակարգը և մարդը, հեռանկարների ուժեղ զգացողությունը, բանաստեղծի պարտքի զգացումը՝ ներկայի և գալիքի առջև։

Այս ամենը, իհարկն, գալիս էին կյանքի մշտապես բացվող ու լայնացող հորիզոններից, բայց այստեղ չափազանց կարևոր էր տաղանդի իմաստությունը և ներքին տեսողությունը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՆՈՐ ՀԵՌԱՊԱՏԿԵՐԻ ՎՐԱ

Արվեստի այս նոր փիլիսոփայությունը հատուկ հնչեղություն և խորհուրդ է ստանում գեղարվեստական հյուսվածքների ու մտահղացումների մեջ։ «Էպիկական լուսաբացում» անսովոր ուժով բացվում և լայնանում է բանաստեղծի տեսողության հորիզոնը, որի շնորհիվ մեծանում է նաև հայ պոեզիայի ընդգրկման և ընդհանրացման ուժը։ Եղիշե Զարենցը անդուզ ձգտում է ամենից առաջ ընկալել և արտացոլել ճամասովետական կանոնի ներքին շարժումը, բարդ կա-

պերը, հոգեբանական ազգեցիկ լիցքերը, հայտնաբերել մեծ առօրյայի բանաստեղծությունը։ Գրական այս շահագրգությունը ինքնին նրան մղում է բարդ աշխատանքի ոլորտը, ստիպում ընտրել նյութի կառուցման և դիմադրության հաղթահարման մի նոր եղանակ, որոնել պատմական և քաղաքական այն կարեւոր առնչությունները, որոնք պատվանդան են եղել նոր կյանքի և մեծ առօրյայի համար։ Այս հիմքի վրա էլ, ահա, ծնվում է էպիկական հյուսվածքը, որպես քաղաքական ու հոգեբանական տեղաշարժերի պատմություն։ Ծրագրային ոտանավորներում և լենինգրադյան ձուներում Զարենցը դիտում է նոր առօրյայի էպիկական ընթացքը, աշխատանքի ու ստեղծման հերոսական բնույթը, չըշախում մարդկանց մաքառման գեղեցկությունը։ Աշխարհի կառուցման մեծ հոգով, խստագեմ մարդկանց աշխատանքը, այսինքն՝ նոր կյանքի ստեղծման իրողությունը և խորհուրդը նրան մղում են զուգորդումների. ծնվում է անցյալի իմաստալից զուգահեռությունը։ Զարենցը ստեղծում է պատկերների մի շարք, որի մեջ կրկին արտացոլվում է հեղափոխության դժվար ճանապարհի պատմությունը՝ սկսած դեկարիստներից մինչև 1917 թ., մինչև նորագույն ստեղծագործ մաքառման նորագույն օրրանը՝ լենինգրադը, ոչ միայն նոր մաքառումներով ու աշխատանքով, այլ նաև հեղափոխական անցյալով, արյունով, նահատակներով, ազատության մարտիրոսներով լարում է բանաստեղծի երեկակայությունը։ Տեղի է ունենում անցյալի և ներկայի հոգեբանական մերձեցում։ «Ձմեռային պալատի ներքնահարկում», «Ալեակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»—ահա բանաստեղծություններ, որոնց մեջ հարազատ շնորհում է պատմության ասպետների պատկերն ու պատմությունը։ Մի նենդ արքա-արլեկին ձմեռային պալատի ներքնահարկում, սառը ժամանությունը ինտիմ» հարցաքննել է դեկարիստներին, բացել է անգամ իր սիրտը նրանց...»

Աշքերու պահած ամենի հուրեր՝
Օրհնել է նրանց ժպիտով խաղաղ,—
Եվ ճանապարհ է այստեղից դրել
Դեպի բակտ, Սիրի՛ր, զեպի կախաղ'».

Հավաքելով անցյալի ամուր թելերը, Զարենցը շարունակում է իր մեծ թեման, նոր դրվագներ հյուսում հեղափոխության էպոսին, կրկին դառնում Մեծ Հոկտեմբերին և Լենինի կերպարին։ Գեղարվեստական մեծ հյուսվածքի մեջ առանձին խորհուրդ է ստանում «Հոկտեմբերի 25—26, 1917 թ.» ֆրագմենտը։ Այստեղ ավելի է շեշտվում ոճական փոխակերպությունը, այսինքն՝ հակումը դեպի ուսալիստական մանրամասներն ու հոգեվիճակները։ Երբեմնի հզոր պաթուր և կիրքը նահանջում են հողեղեն, շոշափելի պատկերների, մանրամասների և դրամատիկ լարումների առջև։ Հենց այս հայացքով է նա դիտել Ավրորայի համազարկին նախորդող ճակատագրական պահը, այսինքն՝ ձգտել է հայտնաբերել, ընդգծել երևույթների և գործերի ներքին խորհուրդն ու վեհությունը։

Երկինքը գորշ է։— Այստեղ, հեռուն,
Ուր գորշ նեան է տարուրերում
Իր լայն իրանը ալիք-ալիք, —
Նստել է ծանր ու անառիկ
«Ավրորա» նավը։— Զմեռային
Անթով պալատն է ահա այնտեղ,
Որպես մի գամփու, իր գեմ նստելու—
Անում է ահր։— Սարսափն անդեմ
Դառնում է ծանր ու գննադեմ
Ու թանձանում է հետզհետե։—

Քաղաքն ալեկոծված է, երերում են արքաների արձանները, բարձրանում է մարդկային հորձանքը, սկսվում է նոր աշխարհի երկունքը։ Իսկ մի փոքրիկ տան մեջ աշխույժ, կարճահասակ մի մարդ ձեռքը դրած պատմության գարկերակին, իշխում է մեծ պահի վրա։

«Ավրորա... թ՞նչ է... լե՞ն հանձնվում...
Արգեն ուզում եք... թ՞նչ... կրակե՞լ...»—
Վայրկյանը գար է արցեն թվում։
Նա մտածում է։ Անկթարթ մի
Մնում է համր։— Հետո հանկարծ
Հպում է փողը շրթունքներին,
Ծնչում է ծանր—ու կամացուկ
Հրամայում է։—
«Կրակեցե՞ք...»

• • • • • • • • • •

Անում է ահր։

Այս հյուսվածքի մեջ Զարենցը հավատարիմ է մնում իր ստեղծած պավանդին, շարունակում է հեղափոխության և ազգային կյանքի աղերսների գեղարվեստական պատմությունը։ Նա մեծ պատմության, համասովետական կյանքի և հեղափոխության տարեգրության մեջ մտցնում է ինքնուրույն զուտ շարենցական և ազգային շեշտեր։

«Էպիկական լուսաբացում» նոր հեռապատկերի վրա կը ըկն մարմին է ստանում Հայաստանի կերպարը։ Նա խորքով ու իմաստությամբ պատկերում է սովետական հանրապետության կյանքի ու բախտի ուրույն աղերսները երկրի էպիկական ընթացքի ու գալիքի հետ։ Էպիկական հյուսվածքը սկիզբ է առնում խորքից։ «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», նույն ժամանակում գրած, բայց առանձին լույս տեսած «Խմբապետ Շավարշը», մայիսյան գեպերի, նոյեմբերի և փետրվարյան խոռվության թեմաներով հյուսված «Էպիկական ֆրագմենտները», «Մեծ առօրյան», «Չուգունե մարդը» և «Գանգրահեր տղան» երկերում ձևավորվում է Հայաստանի հեղափոխական պալանդերի, քաղաքացիական կոփների, կառուցման ու երազների պատմությունը։ Ժամանակները շաղկապվում են ներքին խորհրդով, հարազատ գեմքերով ու գեպերով, տարբեր երկերից ստեղծվում է էպիկական մեծ հյուսվածք, ուր պահպանվում են մասերի ինքնուրույն գեղեցկությունը և գեղարվեստական հատկանիշները։ Զարենցը ձգտում է ստեղծել պատմական, քաղաքական ու հոգեբանական միաձույլ և բազմաշերտ մի պատմություն, ուսալիստական ոճի հետ միասին օգտագործելով նաև ուրիշ ոճավորումներ։ Էպիկական ոճին և իրապատում պատկերներին հյուսվում են նաև ոսմանտիկական երազները և իմաստալից սիմվոլիկան։ Այս հարստացուցիչների աշակցությամբ ուսալիզմը դառնում է ավելի հարուստ ու բազմաբովանդակ։

Շատ ուշագրավ են նաև բանաստեղծական ձեի որոշ փոխությունները, մասնավորապես հակումը դեպի այուժետային բանաստեղծությունը կամ շափած նովելը։ Դա հնարավորություն էր տալիս բացելու մեծ պատմության այս կամ այն անցքի, դրվագի, փաստի ներքին շարժումը, դրամատիկ ընթացքը, հերոսին կերպավորել միջավայրի ու կամ

պերի մեջ, Այս ամենը նպաստում էին էպիկական հյուսվածքի ստեղծմանը:

Հայաստանի էպիկական կերպավորման մեջ այդպիսի մի տեղ է գրավում «Անակնկալ հանդիպում Պետրոպավոլովյան ամրոցում» շափածո նովել-տեսիլը, որը անցյալի ու ներկայի պատմական և հոգեբանական մերձեցման մի ազդեցիկ նմուշ է: Այդ շափածո նովելը նաև մի տեսիլ է, որը երևակայության ուժով և պատրանքով ժամանակակից սերնդին յոտեցնում է հեղափոխության ասպետ Միքայել Նալբանդյանի կերպարը, նրա կյանքի ու գործի գեղեցկությունն ու դրամանուանատեղծը իմաստուն հայացք նետելով պատմությանը, ազատագրական պայքարի մեջ տեսնում է հայ մարդու, նահատակի և հերոսի տեղն ու գերը:

Պետրոպավոլովյան ամրոց... Ազատության ասպետների մոռայլ «կամերաներ», անուններ՝ հերոսական, տառապած մարդիկ...

Խ ուղեղի միջով հիմա նրանք
Ահա անցնում են լուս, խստարարո,
Կարազանի հետքեր մարմինների վրա,
Բայց աչքերում վճիռ մի շմարող:
Մտաքերում եմ ես նրանց մեկ-մեկ,
Ռիլեկից մինչև պայծառատես
Այս մտածող վեհ ու հանճարեղ,
Որին Մարքսն է մի օր անվանել մեծ:

Զերմաշունչ քաղաքական ներքողը հանկարծ ստանում է շատ մտերիմ երանգ, շափածո նովելին հաղորդվում է յուրահատուկ շերմություն, տեսիլի մեջ ուրվագծվում է հայ ժողովրդի զավակը, մեկը մարդկության քաջարի և իմաստուն նահատակներից:

Հրածեշտ եմ տալիս արդեն նրանց,
Ծուռ եմ գալիս արդեն, որ զնամ ետ—
Երբ իշնում է հանկարծ ուսիս վրա,
Անակնկայ՝ իշնում է մի ծանր ձեռքի—
Ետ եմ նայոմ, վերևս թերված ուսիս՝
Մի մարդ՝ ղեմքով հռու, անիրական,—
Մտերմական ձայնով ասում է ինձ,
— Դուք ինձ մոռացե՞լ եք, բարեկա՞մ...

Ընդհանուր խոսքի փոխարեն կանգնում է կենդանի կերպարը՝ բնորոշ մանրամասներով, բանաստեղծության մեջ ալիք է տալիս ազգային հպարտության զգացումը:

Բարձրահասակ է, զղուտ, աչքերը սև,
Բակնեբարդներ ունի, փոքրիկ մորուս
Ես որտե՞ղ եմ նրան արդյոք տեսել.
Կյանքո՞ւմ արդյոք, տենդո՞ւմ, թե գրքերո՞ւմ:
— Ի՞նչ է, — ասում է, — չե՞թ մտարերում.
Տարիներում այն մութ իմ բարբառած
Շողղալից երգիրն ըմբոստության մասին—
Մաքառելով անցա ուղին ևս իմ,
Գայքարելով այն սև բռնության գե՞մ, —
Եվ պարծանքո՞վ կասեմ, որ բարեկամ էի
Ես Հերցենի, պոետ Օզարեի հետ...

Կերպարը ստանում է խոր պատմականություն, իր հետ բերելով ազգային պատմության և խառնվածքի գծերը, բանի որ հայկական ոգուն ևս հարազատ են եղել ըմբոստության ոգին, շնորհալից երգը, ազատության երազը, պայքարը սև բռնության գեմ, այսինքն՝ համամարդկային զգացումները, նահատակության ասպետական գեղեցկությունը: Եվ դրա հետ միասին մնում են նաև անհատական շեշտը, մարդկային հմայքը, անձնավորման կախարդանքը, թանաստեղծության միջով անցնում է մտերմիկ, թախծոտ երանգը, ալիք է տալիս եղբայրական սիրո զգացումը:

— Ա՛, — զարմանում եմ ես, ճանաչելով նրան,
• Պարզում թեերս, որ նրան գրկեմ.—
Ն ոզունում է ինձ ու հեռանում արագ—
Ամայի բակն է լոկ լուս իմ գեմ...

Կա ինչ-որ սրտառուշ բան այդ տեսիլ-նովելում, որը հատուկ իմաստ էր ստանում ծայր առնող մոլորությունների և նիշիլիստական տրամադրությունների մթնոլորտում: Նոր սերունդը իրավունք չունի մոռանալու նահատակների վաստակն ու արյունը, որը օրինական հպարտություն է բերում մեծ ճանապարհ բռնած ազգին: Այս թեման՝ ազատագրական պայքարի, ժողովուրդների արյան ու գաղափարի եղբայրակարության պատմությունը նրան մղում է մեծ կտավի ստեղծման: Դա շատ պարզ երեսում է «էպիկական ֆրազմենտների»

ԱԵԶ: Մնացել են պրոլոգը և որոշ հատվածներ՝ առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ գլուխներից: Հստ երեսույթին Զարենցն ուզում էր ստեղծել մի ընդարձակ վիպերգ: Առաջին գլխի հատվածներում խոսք է զնում քաղաքական խառը մթնոլորտի, մայիսյան գեպերի, Ալավերդյանի արտասանած ճառի մասին: Երկրորդ գլխի հատվածներում պարզ ակնարկներ կան թուրքերի հարձակման և դաշնակցական կառավարության անճարակության մասին: Երրորդ գլուխը նվիրված է փետրվարյան գեպերին, քանի որ նկարագրված են մերոնց նահանջը և կարմիր զինկումի քաջարի արարքը: Հստ երեսույթին, այս էպիկական ֆրագմենտները ծրագրված «Ապստամբություն» պեմի կամ շափածո վեպի մասերն են: Թերևս երրորդ գլխի մի ամբողջացած հատվածն էր նաև «Խմբապետ Շավարշը»: Բանաստեղծը տենդագին աշխատում էր էպիկական մեծ պեմի վրա, որի մի հատվածը՝ «Խմբապետ Շավարշը» գրվել է 1928 թ.: Եվ վերջապես, չորրորդ գլխից մնացել է մի հատված՝ «Լիրիկական շեղում»: Կապրի կղզու հաղթանամ նավաստին շերմորեն պատմում է տարագրության մեջ գտնված լենինի մարդկային գեղեցկության մասին: Զարենցը հղացել էր բազմապլան մի պոեմ հայկական ու համառուսական մեծ անցքերի շուրջ:

Էպիկական մտահղացման և հյուսվածքի մեջ, բնականաբար, կենտրոնական տեղ են գրավում մեծ առօյյան, հեղափոխության ուժով ծնված սոցիալիստական իրականությունը, հոգուր, մաքառումը, մարդկանց հուզական-հոգեոր շարժումը, որը հետզհետե զորանում է կյանքի բովում: Զարենցը ստեղծում է նոր կյանքի պատմությունը, երկրի տնտեսության վերելքի ու պեյզաժի փոփոխության («Չուգունե մարդը»), քաղքենու և բարձրացող դասակարգի մաքառումների ու երազների պատկերները («Մեծ առօյյան»): Նոր նյութը հեղինակին մղում է զեպի ձեւի որոնումները:

«Մեծ առօյյան» շափածո նովելում բանվորության և քաղքենու հակադրությամբ Զարենցը բացահայտում է առօյյայի բանաստեղծականությունը: Հաշվետարը ապրել է խիսունքի պես, փոքրիկ հոգսերի մեջ, ինքն իր համար, ինքն իր մեջ: Այդ մանր մարդու կյանքը եղել է լոկ ռիոնձիկից ոռնիկ ընթացող մի տաղտկալի երթ: Կարգեր են փոխվել, բանակ-

ներ են եկել, բանակներ անցել, նա մնացել է անտարբեր, դգուն իրենից և բոլորից, սարսափահար նոր կարգերից ու ընկերներից: Զարենցը պատկերում է այդ փոքրիկ մարդու մի օրը, հոգեկան ապրումների մի պահը, երեկոն ու տանշալի գիշերը: Առաջին անգամ նա դիտում է իրենից դուրս գոյություն ունեցող աշխարհը և մի փոքրիկ պահ զգում կյանքի հրապույրը: Նա մասնակցում է բանվորական ժողովին: Փոքրիկ մարդը զարմանքով լուս է «հասարակ բանվորների գրուցը՝ երկրի գալիքի, մեծ ծրագրերի մասին: Դեռ երեկ քաղքենին նրանց անվանում էր «տկլոր սրունքներ», «սանքույլուտներ», «քարե դարից մնացած արարածներ», որոնք ընդունակ են միայն ուտելու, և սատանայական մի հեգնանք էր համարում նրանց կողմից կոմունիստական հասարակարգ էր համարում նրանց անդմիտը կոմունիստական հասարակարգ կառուցելու ծրագրիրը: Եվ ահա մի ժամի, մի պահի մեջ նա փլվում է, պարտվում: Մեծ առօյյան, բանվորական միջավայրը նրան երևում են իսկական տեսքով, բանականության լուսի տակ: Աշխատավորների պարզ խոսքերի մեջ բացվում է գալիքի պատկերը, դահլիճի խոր լարվածությանը ձուվելով, փոքրիկ մարդը մարդկայնանում է:

Տեսնում էր նա բիլ մշուշի միջից
Դաշտեր, հովիտներ, լիներ ամենի,
Քաղաքներ հսկա ու գործարաններ...

Առաջին անգամ նա զգում է իր դատապարտվածությունը և կյանքի գորշ ու աննպատակ ընթացքը: Աշխարհը նրա համար մնացել է սոսկ անմատչելի, չգիտակցված հրաշալիքների մի գանձարան:

... Առաջին անգամ
Այդ հաշվետարը, այդ մարդը փոքրիկ,
Որ ապրել է միշտ իր փոքրիկ, ճղճիմ,
Զնշն հոգսերով, — առաջին անգամ,
Իր անսատդ կյանքում զգաց նա կյանքի
Աճումն, ահուի ընթացքը, — նրա
Երկաթ քայլերի դոփյունն անհողողգ:

Փոքրիկ մարդու աշբին արդեն ուրիշ իմաստ են ստանում երեկված հասկացված մարդիկ, շենքերը, ծրագրերը, կյանքը, ուրիշ փայլով են երևում անգամ ընությունը, երկինքն ու սատղերը:

... Աշխարհը նրա
Աշքերին հանկարծ լայնացա՞վ, ձգվե՞ց,
Թարձավ անսամբեն, անծի՞ր, անեզե՞րք,
Երկնքի՛, հոգու և տիեզերքի՛
Նման անեզերք...

Սակայն Զարենցը խուսափում է հերոսի պատկերման պարզունակ եղանակներից, հրաժարվում է հերոսների վերափոխման տարածված «հրաշագործ» սխեմայից, նա բնավ իր առջև խնդիր չի դնում վերափոխել փոքրիկ մարդու հոգեկան աշխարհը, զնել նրան մի նոր ճանապարհի վրա։ Այս դեպքում նա որսում է միայն հոգեկան ցնցման պահը, մեծ առօրյայի ազդեցության ուժը։ Մարդը վերադառնում է տուն, իր զորշ, աղքատիկ ու անհրապույր անկյունը և կրկին մտնում ոլատյանի մեջ։ Զարենցը ստեղծում է փոքրիկ մարդու տաղակալի շրջապատի մանրամասները՝ տունը, իրերը, դժոն կնոջը, անկողինը, կապարի ծանրությամբ իշնող գիշերվա երազը՝ որպես նոր աշխարհի ու մարդկանց տպավորության ազդեցություն։ Ահա և առավոտը իխունչը կրկին իր պատյանի մեջ է, երազն անցել է, աշխարհը քաղքենուն կրկին թփում է մթին զառանցանք։ Նա նույնն է, մաղձից ու ատելությունից կանաչած նույն քաղքենին։ Հարատև փնթիվոցով։ Բանաստեղծը զծագրելով քաղքենու կերպարը, նրա հոգեկան կարճատև դրամայի միջոցով բացում է մեծ առօրյայի գեղեցկությունը, պատկերում նոր մարդկանց, որոնք իրենց հոգում կրում են անձնազոհության սրբադան հուրը։ Մի փոքրիկ դեպքի, հոգերանորեն նուրբ դիտված փաստի միջոցով բանաստեղծը ընդգծում է աշխատավոր մարդկանց ստեղծարար ուժը, մեծ առօրյայի էպիկական ընթացքը։

* * *

Այս մթնոլորտում է ծնվում նաև մի շքնաղ տեսիլ, Զարենցի ամենապայծառ երազը՝ «Գանդրահեր տղան»։ Այս մշտադար բանաստեղծությունը անջնջելի հետք է թողել գրական նորագույն մտածողության վրա՝ որպես Հայաստանի գալիք օրերի, տարիների ու դարերի երգ։ Տասական թվագիրներին նա տեսնում էր ուրիշ տեսիլներ, մահվան ու սար-

սակի պատկերներ, գծում էր հարդագողի ճամփորդների մոլոր ուղիների, ոմութ, անհեթեթ, տարօրինակ» կյանքի պատկերներ։

Այժմ արդեն պատկերները ծնվում են նոր իրականությունից, աշխատանքի, ստեղծման, հավատի ու հպարտության մթնոլորտից, որի մեջ ապրում էր վերածնված Հայաստանը։ Ուշագրավ մի երեսույթ։ Հայաստանի նոր օրերը Զարենցին մղում են իմաստալից զուգորդումների ուրութ։ Մի դեպքում կյանքի ծաղկման փաստը շիկացնում է նրա տիշուղությունը, և բանաստեղծության մեջ ծնվում է անցյալի ու ներկայի զուգահեռը, մյուս կողմից ծաղկում է երազ տեսիլը և ներկայի ու գալիքի թեման, ուրիշ խոսքով՝ Հայաստանը երեսում է լայն հեռանկարի վրա և հոգերանական բագմաշերա հյուսվածքով։ Թվում է՝ «Գանգրահեր տղանի» համար ինչ-որ շափով մի նախապատրաստություն է եւել «Գարուն» բանաստեղծությունը (1927)։ Մի էարև միջոց։ Մի յոթ տարի հետո, «Ճեռու սրից, ահից, մահից», բորբոքվում է Հայաստանի գարունը։ Երկիրը շնչում է գարունով, հրով, վարդերով, առավելորդիկ խնդրությամբ։ Զարենցն ապրում է մի խոր ներշնչանք, հրճվում խաղաղ օրով, ծաղկուն ծառերով, պիուն կանգնեցին շարքերով։ Եվ շի մոռանում տիտոր անցյալը, տանձտական շարքերով։ Էին Երեանը, կարաւանները, մահվան շունչը։

Հիշում ես, սի՞րտ, գարուն մի այլ,
Երբ տնկեցին ծառերն այս նոր,
Երբ մեր բորիկ մանկանց նման
Նրանք գեռ մերկ, նրանք տկնոր.—
Երբ մեր լուսն մանկանց նման
Այնպես վտիտ, այնպես բարակ—
Գեռ շուրջը սով, գեռ շուրջը մահ—
Շարք կանգնեցին այստեղ նրանք...
Մեր մանկանց պես, տկնոր, վտիտ
Մառերն այս երբ կեցան հերթի՝
Շատե՞րն արդյոք հավատացին
Նրանց պայծառ առավոտին,—
Տե՛ս, ինչպէ՞ս են փրթել հիմա
Հասակ առել ու կանչել—
Տե՛ս, ինչպէ՞ս են նրանք անել
Մեր լուսնին մանկանց նման...

«Գարունը» կյանքի վերածնության, բախտի ու ճանապարհի երգն է, ուր, ինչպես միշտ, խառնվում է անձնական ապրումի շեշտը, հին մորմոքը: Բայց այս վերհուշն արդեն փայլ է տալիս բանաստեղծությանը, ավելի ճիշտ՝ ուժ է տալիս նոր կյանքի գեղեցկության պատկերին: Ներքին հարուստ գրւորդումների ընթացքում ներշնչանքի հիմքը, վերհուշի ակունքը դառնում է նոր բախտը: Նույն այդ երկույթը դառնում է նաև երազանքի ներքին դրդիչը, լիցքավորող ուժը: Բանաստեղծի ներքին տեսողությունը այս անգամ տարածվում է Հայաստանի գալիք ուղիների վրա: Առաջին տողերից գծագրվում է երկար ուղի անցած, տառապալի տեսիլներից հոգնած բանաստեղծը, առաջին տողերում լուսե ծվեններից հյուսվում է գալիք Հայաստանի և Երևանի պատկերը: Նոր Երևան, գործարաններ, փողոցներ— Ոչ ծուխ, ոչ փոշի, գեղեցկության շքնաղ մի աշխարհ... ուրախություն, լույս, ծիծաղ, ժիր մարդիկ, կանաչ պարտեզներ, առատ ծաղիկներ.

Զնդում է օրը ինչպես երգեհոն—

Ու կապո՞ւտ, կապո՞ւտ, կապո՞ւտ երկնքից
Թափում է կարծես երգ ու խնդություն:—

Ահա մայրուղին: «Ուրախապույտ ձգվում է շուսեն նոր Երևանից մինչև Արարատ»: Այս խնդությունը, հարստությունը, գեղեցկությունը, այս նվիրական շուսեն, սերունդների հավերժական շարժումը հայկական երազների այն ամբողջացումն ու խտացումն է, որը պայմանավորված էր սոցիալիստական կեցությամբ:

Քայլում է վաշտը, հնչում են պիոներների վստահ ոտնաձայները: Առուցք, ուժեղ, հստակ ու թովիլ դեմքերով մանուկները: Հարազատ Զանգվի եղերքով քայլում են գալիքի տղաները: Ինքնին վերցրած հենց միայն այս նկարագրությունը ունի գեղարվեստական փայլ ու գրավչություն: Բայց Զարենցը սիրում է գնալ խորքը, իր նվիրական երազներին տալ դրամատիկ լարում, գեղաքերին՝ հոգերանական հարստություն: Երազանքն ստանում է խորհրդավոր մարմնավորում: Տեղի է ունենում մի սրտառու մերձեցում: Զանգվի ափին ձգվում է մի հին ցանկապատ, կանաչի մեջ երեսում են վաղուց մոռացված հին քարերը: Գերեզմանատունն է, հեռավոր

մարդկանց հուշն ու հիշատակը, որ բերում է մի ազդեցիկ շունչ:

Անանուն, անգիր, ննջում են այնտեղ,
Ուր լուսիլունն է իշխում ահասաստ
Ու հուշն է թռչում՝ հավիտյան անթև:

Սա նուրբ դիտված հոգերանական պահ է, որ ծնվում է գերեզմանատանը: Պատկերից ծնվում է մի հասկանալի իշխանից, ուիծ, որը խառնվում էր երշանիկ օրերի երազանքին:

•
Պիռներական փողկապը վզին,
Ռոտերը մինչեւ ծունկները բորբկի,
Ճակատը բարձր, աշերը լուսե,
Հագին սպիտակ, կապտերից շապիկ...

Որքան հեռավորություն կա հարդագողի ճամփարդների, վտիտ, բարակ, մերկ ու տկլոր մանուկների և գալիքի գանգրահեր տղաների միջև:

Հարդագողի ճամփարդներ չնք մենք երկու...
Երկու ճամփորդ պատառությած շորերով...

Պայմանական պատկերը շարունակվում է, ծնվում է հոգեկան մի առնջություն տարրեր սերունդների հայ մարդկանց միջև: Դանգրահաներ տղան բաժանվում ու մոտ է զայիս և ացգած շիրմիներին, փոշոտ քարերին, քերում է հին գրերը: Ահա և մեծ երազողի շիրմը. «Նղիշն Զարենց—բանաւոեղծ Մակու քաղաքում»: Հիշո՞ւմ է պատանին գայիք: Հածնված Մարտ տառապած իր մեծ նախորդին: Հիշում է ինչ-որ բան. մարտ տառապած իր մեծ նախորդին:

Կարդում է նա իր աշքերով ծավի,
Ժպտում է, հրշում կարծես ինչ-ու բան,
Քաղում է ապա մի կանաչ բաղեղ-
Ու շարունակում իմ թողած ճամփան:

Իսկ հանդում հավիտյան հուշի պես մնում է երազողի կորած շիրմը.

Եվ, հուշի նման հավիտյան անցած,
Մնում է հանդում մի կորած շիրմ...

Լուսավոր թախիծով օծուն տեսիլը դառնում է փիլիսոփայական խոր ընդհանրացում, միտքն աշխատում է անսավոր թուիչքով: Մնվում է անձնազոհության գգացումը և յուրեզ-

յա խոհը, որն այնքան շատ էր բոցավառվել Զարենցի երկերում, իսկ այս անդամ արդեն շողում է պայծառ երանգներով և առանձնանում հորիզոնների խոր զգացողությամբ.

Լո՞ւմ ես՝ այստեղ իմ սիրուն է թաղած,—
Կոխոտի՛ր նրան քայլերով քո լուս,
Օ, դո՞ւ զալիքի զանգրահե՛ր տղա,
Մեր լավ զալիքի ոսկեհե՛ր մանուկ...

Այս բյուրեղյա կերտվածքով, իմաստուն ու պայծառ խոհերով, ոոմանտիկ պատկերով ամփոփում են բարձրացող հայ կյանքի էպիկական հյուսվածքը և ժողովրդական բախտի փիլիսոփայությունը:

* * *

Նոր պոեմները, բալլագները, «Խմբապետ Շավարշ», «Էպիկական լուսաբացը» և այս շրնաղ բանաստեղծությունը թուում էին բեմից բեմ, նվաճում հազարավոր մարդկանց, իշխում գրական միջնորդության վրա։ Զարենցի հետեղորդությամբ ծնվում էին բանաստեղծական շարքեր ու գրքեր։ Բայց նույն շրջանում ձախ քննադատությունն արգեն սոլում էր հակայական ծառի կեղևից ներս։ «Էպիկական լուսաբացը—դեկլարատիվ է», «զինաթափում է բուրժուական արքեստի առջև», «Զարենցը խաչ է բաշում մեր ողջ պոեզիայի ու գրականության վրա, նսեմացնում այն կլասիկների մեծության առջև, իրապես առաջ է հրում դասակարգային թըշ-նամու առջև զինաթափելու պարտվողականության օպորտունիտական տեսությունը...», նա «Հակադրում է մարդկայինն ու հասարակականը»։ Ահա նաև պուշկինյան ավանդների նկատմամբ Զարենցի վերաբերմունքի բաղաքական չնահատականը։ «Զարենցը քարոզելով պուշկինյան էպիկական լուսաբացը, նրա զինց ու վճիռ պոեզիայի պարզությունը, յուրացնում է նաև նրա ստեղծագործական մեթոդն ու ըմբռունողությունը, իսկ դա շափականց վանագավոր է, որովհետև Պուշկինի աշխարհայացքի հենակետը սուրբյեկտիվ իդեալականը է»¹։

1 «Նոր ուղի», գիրք երկրորդ, 1932 թ., «Եղորհդային Հայաստանի առօրյան»։

Նա օքաժանում է մարդուն դասակարգից, կղզիացնում է նրան, դարձնում մարդուն ֆիզիոլոգիական մեծություն, ստեղծում է խոշոր երկվություն, անջատում է անհատին հասարակությունից և հանգում է մետաֆիզիկայի»¹։ Այդ օրերին, Զարենցի տաղանդի բուռն ծաղկման շրջանում, քննադատության մեջ վեճ էր բացվել նաև մի հարցի շուրջ։ ճնաժամ է ապրում արդյոք մեր պոեզիան, — գրում էին շատերը, անուշադիր անցնելով գրական գոհարների կողքով։

Այնինչ ե. Զարենցն արդեն գալիքի հետ էր նա բեռնավորված էր նոր խոհերով ու հույզերով. ծնվում էր նոր զիրքը, որը մի ուրիշ հորիզոն էր բացում հայ գեղարվեստական մտքի առջև։

ԷՊԻԿԱԿԱՆ ՈՃԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Սթափ հայացքով նայելով իր ուղուն, պոեզիայի անցած օրվան, ինչու նոր բան է բերում իմաստուն դարձած բանաստեղծը, նորովի առաջ քաշում մի հարց, որն ուներ նաև հազարամյա «Հնություն»։ Ինչու են հավերժ շահել մնում անցյալ վարպետները, ինչու է Ալեքսանդր Պուշկինի անդրին «Սերունդների սրտում կեցած» և զարերի հորիզոնում անվերջ շշողում ու բարձրանում։ Նա տալիս է այդ «Հին» հարցի «Հին» բանաստեղծական պատասխանը, դրսորելով նաև փիլսոփայական խորաթափանցություն, ներհուն հայացք։

Թե ուզում ես երգդ լսեն
Ժամանակիդ շունը դարձիր։—
Նապիկի՛ր նյարդով յորբանշուր
Փո օրերին ու քո զարին,
Այսերը սիրեր լիսնչյուն
Ու մի՛ դապիք ես նեարին։—

Այս միտքը, իհարկե, երևում էր նաև ուրիշ բանաստեղծների ու քննադատների գրվածքներում։ Պրոլետգրողների ասոցիացիայում անվերջ աղմկում էին դարի, ժամանակին և օրերի, դասակարգային պայծառի ու կառուցման մասին։ Ո՞րն էր Զարենցի նոր մեկնությունը և ընդգծումը, ո՞ւր էր

գնում և ի՞նչ երևոյթների խորքը թափանցում նրա միտքը։
Չարենցն անմիջապես բացում է երևոյթի երկու կողմը, եռ-
կու երեսը։

Հարկավոր է ձուլվել դարին,
Ասում եմ ես... բայց կա՞ արդյոք
Այդքան անհուն ու դժվարի՞ն,
Այդքան թե՞ պարզ, թե բարդ մի գործ։

Իրեն հատուկ անկեղծությամբ Չարենցը դառնում է աղմբ-
կարարներին, որոնք ընտրում են պարզունակ ու սպեկուլյա-
տիվ ուղին, շարաշահում դասակարգի անունը, ընշագրկելով
նույն դասակարգի հոգեոր հարստությունը։

Մարդիկ կան, որ կարծում են, թե
Ով ավելի բարձր է գոռում՝
Նա՛ է միայն դարի տեղով,
Դասակարգի խանդով եռում։

Չարենցը չի խնայում նաև իրեն՝ խոստովանելով, թե «մի
ժամանակ, գԺրախտաբար, ես էլ էի այդպես կարծում»։ Նա
չի մոռանում ավելացնել, որ այդ ուղին հեշտ է ու պարզ, ան-
վնաս է ու շահավետ, և ինչը քերես ապագայում ցավի, որ
քածանվել է այդ մարմաշից, այդ սուս ու խաբութիկ նանա-
պարհից։ Բանաստեղծը բացում է գրականության և արդիա-
կանության կապերի բարդուրյունը, ընդհուպ մոտենալով սո-
ցիալիստական ռեալիզմի էությանը։ Նա իրավացիորեն գրտ-
նում է, որ նոր հասարակության կյանքը, դասակարգի
պայքարն ու աշխատանքը՝ զարգացման ընթացքի մեջ, ան-
սահման հարուստ են, բազմաշերտ, բարդ ու ալեկոծ, որ մեր
վիթխարի դարում մարդիկ էլի մնում են մարդ՝ կենսական
հուզումներով, կրքերով, բազմազան ապրումներով։

Չարենցն առաջ է գնում։ Պետք է կասեցնել կենդանի մար-
դու գեմ սկսված ձախ հարձակումը, մերժել միաշքանի, մի-
տառանի հերոսին, այն ձայնափողին, որը չունի բնական
զգացումների ամբողջություն, պետք է մշտապես մեծացնել
մարդու հոգեկան աշխարհի և ապրումների տեսակարար կշի-
ռը։

Սակայն դու չե՞ս գտնում արդյոք,
Որ վիթխարի այս մեր դարում

Իր ճակարով ու կրեերով
Ավելի՝ է մարդը հարուստ
Ինչե՞ր է նա այսօր տեսել,
Ինչե՞ր ապրել ու զգացել,
Եվ ի՞նչն է նա համարել սեր,
Եվ ինչո՞վ է ուրախացել...

Այս ծրագրի մեջ խորանալով, նա մոտենում է կյանքի և
առօրյայի բանաստեղծական էությանը, բարդությանը, մար-
դու և հասարակության կերպավորման և սոցիալիստական
աշխատանքի արտացոլման խնդրին։ Այսօր միայն կարող
են զարմացնել «էպիկական լուսաբացի» հակառակորդների
զանազան որակավորումներն ու պիտակները։ Նրանք ասում
էին, որ Չարենցը բուրժուական անհատապաշտ է, որ նա որո-
շակի փախուստի ժեստ է կատարում զեպի բուրժուական գա-
ղափարախոսությունն ու օրիեկտիվիզմը, մարդուն կտրում դա-
սակարգից, զինաթափ անում սոցիալիստական արվեստը,
գլուխ խոնարհում բուրժուական արվեստի առջև։

«Քո էպիկական լուսաբացով» դու նահանջի մի ուժգին
ժեստ կատարեցիր... Քո նահանջի և լության հիմնական
պատճառն այն է, սիրելի Եղիշե, որ դու նույնպես, մի շարք
ուրիշ գրողների հետ միասին, մասսաների հետ թույլ ես
կապված»։ Իր բաց նամակում (1932 թ. «Գրական թերթ»
№ 2) այսպես էր գնահատում Չարենցի նոր գիրքը Ն. Զարյա-
նը։ Նա Չարենցի փորձը համարում էր «նեղ զերմոցային»,
թեև հենց իր պոեզիան գտնվում էր մեծ բանականգիծի բա-
րեբեր անձրկի տակ։ Նույն թվականին Մկրտչյանը «Խորհր-
դային Հայաստանի պոեզիան վերակառուցման որանում» ծա-
վալուն հոդվածի մեջ «էպիկական լուսաբացի» գլխին թափում
է ահա այսպիսի «գոհարներ»։ — Դեկլարատիվ է, դասակար-
գային կովի բարձունքից իշնում է անհատապաշտության ո-
ղորմելի մակարդակին, ինքը հենց մտնում է քաղքենիական
տաք ճաշիների մեջ։ Պարզ էպիգրություն։ Փոչկինյան օր-
իեկտիվիզմ ընդդեմ դասակարգային սուրյեկտիվիզմի։ Չա-
րենցը իւալ է քաշում մեր ողջ պոեզիայի և գրականության
մրա, նսեմացնում այն կլասիկների մեծության առջև, իրա-

պես առաջ է հրում դասակարգային թշնամու առջև զինաբափվելու պարտվողականության օպորտունիստական տեսակետը և կանգնում վորոնսկիական դրոշակի տակ։ Զարենցը հակադրում է մարդկայինն ու հասարակականը»։¹

Գրում էին այսպես, իսկ գիշերները խնամքով սեփականացնում նրա խոհերը, սկզբունքները։ Այսպես էր վիճակը։ Այնինչ մեծ բանաստեղծը պատկերի լեզվով, հուզումներով, ապրումներով, երբեմն ինքնամերժումով, անողոք դատաստանով ճանապարհ էր հարթում կյանքի երգի, առօրյայի, աշխատանքի ու ստեղծման համար։

Երգը հնչում է որպես մեծ ճանապարհի հավերժական խորհուրդ։ Այդ իմաստով ուշադրություն է գրավում նրա բանաստեղծական «Թուղթը» Ակսել Բակունցին, գրական մերձավոր ընկերոջը, որը նույնպես ընդգծված արհամարհանքով՝ դեպի գրական ձախերի տեսությունն ու փորձը, ստեղծում էր իր խոհուն, նուրբ ու կենսական լիցքերով հարուստ արձակը։ Մտերիմ շեշտերով խստաշունչ հեռվից՝ լենինգրադից, Զարենցը Ակսելի հետ բաժանում է իր բազում տպավորությունները՝ եռացող կյանքի ու հասարակ մարդկանց աշխատանքի մասին, իր մտորումները էպիկական մաքանան, բանվորական պարզ, հասարակ, խստադիմ և լուրջ դեմքերի, աշխատանքի մասին։ Նոր կյանքի սիթմը հաղորդվում է բանաստեղծությանը, օրերի շունչը ծավալվում է պատկերներում, բանաստեղծը զգում է համասովետական կյանքի լայն շնչառությունը՝ երևանից մինչև Խաղաղ օվկիանոս և հենց այդ զգացողությամբ էլ որոշում գրականության ուղին, առաջադրում էպիկական ոճի պահանջը։ Երգի մեջ, — գտնում է Զարենցը, — պետք է արտացոլվի կյանքի խստությունը, խորությունը, վեհությունը և լրջությունը։

Այս հիմքի վրա նա հակադրում է անհոգ և անփույթ քնարական գեղումներին, փոշեպատ, մաշված ուզիներին ու արաֆարետին, առաջ բաշելով ոճի ու ստեղծագործ տքնանքի հարցը։

Մտածե՞լ ենք արդյոք, որ խոսքը—թո՛ւզն է նույն՝ Դիմադրող, համառ, — և եթե մենք Զըրկիկենք նրան մեր խոհերի հոնում, Աշխատանքով անդուկ թե շնուրենք— նա կիսամրի, հանգած, կանոսրանք...»

Նա մերժում է տրորված ճանապարհները, տարերային ոգևորության հեղեղը, խոսքի էժանացումը, մակերեսային այն եղանակը, որի պատճառով փետրաթափ են լինում անգամ հանճարեղ խոհերը։

Այդպես կարող է լոկ ստրուկն հոգով Անմատության, անշունչ հնչախաղի փոխել Հանձարեղ խոհն անգամ։ — Այդպես ահա՝ Արծիվների թե՛րն են մարդկեկ կտրում մեկ-մեկ նվ վանդակում պահում նրանց կմախքը լոկ Փետրահանած ու մերկ։ — Հիմա խոհե՛ր կան՝ այդ արծիվների նման։ — Ու պոետներ բազում, որոնց համար Հիմնականը փետո՞ւրն է—մի ամենի խանդով Փետրաթափ են անում նրանց անդուլ։ — Այդ խոհերից վսիմը—աշխատանքն է գուցե...

Զարենցը պահանջում էր բարձրացնել խոսքի կշիռը, իմաստավորել ամեն բառ, տող, հարստացնել մարդուն և աշխատանքին վայել խոհական տարերքը, պահանջում էր «սեր, խատանքին վայել խոհական տարերքը, պահանջում լարում», բառի նկատմամբ՝ տքնություն, զանք ու գերագույն լարում», բառի նկատմամբ՝ տքնություն։ «Խոսքը թուշն է նույն՝ դիմադրող, հապնիվ խստություն։ «Խոսքը թուշն է նույն՝ դիմադրող, հապնիվ խստություն։ Նույն նյութը, որ կոփում են բանվոր մարդիկ։

Հասել ենք մենք արդեն այն սահմանին, որից Սկսվում է մի նոր ու դժվարին վերել, Սին տէնչերի փոյին մեր խոհերից քերենք Ու ճանապարհ ընկնենք, մե՛ծ ճանապարհ, նորից։

Նորից ճանապարհ, նորից դժվարին վերելու Բանաստեղծական ամեն գիրք և ամփոփում պետք է լինի, և սկիզբ, կյանքի հարածուն ընթացքը պահանջում է ժամանակի ընկյանքի հայտնագործությունների մշտական ուղի։

Դասական արվեստի պալանդների խնդիրը ևս ստանում է Հասական արվեստի պալանդների խնդիրը ևս մյուսները Հասուկ իմաստ։ Եթե մի ժամանակ Զարենցն ու մյուսները գտնում էին, թե գասական գրականությունը գտադափարախություն

սությամբ և հին ձեերով խանգարում է նոր արվեստի ստեղծմանը, ապա այս շրջանում դրությունը արմատապես փոխվում է: Այժմ գրեթե բոլորը գտնում էին, որ պետք է օգտագործել համաշխարհային և ազգային դեմոկրատական գրականության ինչ-որ կողմերը: Խոսքը գնում էր այն մասին, թե ումից սովորել, ում ձեռք մեենել և ինչ ընդունել:

Նոր գրուցի մեջ Զարենցը մի գլուխ բարձր էր կանգնած բոլորից, քանի որ հեռու մնալով մյուսների շփոթ կարծիքներից, որոշակի գիտեր ումից պետք է սովորել, զգում էր ժամանակի բուն պահանջը: Այս գրքում և մի փոքր հետո նա անվերջ արծարծում է Պուշկինի, Թումանյանի, Գյոթեի, Հայնեի և Տերյանի խնդիրը: Դա սոսկ ճաշակի և նախասիրության հարց չէր: Էպիկական պոեզիա, խոհական տարերք, կենդանի, բնական, հարուստ ներաշխարհ ստեղծելու ճանապարհին, ի՞նչ խոսք, շատ բան կարող էին տալ պուշկինյան խոհով ժանրացած, խստաշունչ խոսքը, երկրի գույներով վառվող, գեղջուկի բրտինքով ողողված թումանյանական պոեզիան, Գյոթեի փիլիսոփայական տարերքը, Հայնեի և Տերյանի նրբին հայտնագործումները: Այդ պոետները ստեղծել էին ոչ միայն դարի պահանջմունքների համարժեքը, այլ նաև առաջ անցել, քանի որ երգը «Երկրից ու դարից միշտ երկար է տևում»:

Հենց «Էպիկական լուսաբացի» մեջ զգացվում են պուշկինյան շեշտերը և ոճական ընկալումները, այստեղ նա մորմորով վերադարձի շերմագին, սրտամոտ հրավեր է կարդում մեռած պոետին՝ Վահան Տերյանին, մի փոքր հետո, տարված թումանյանական կախարդանքով, մտորում է նրա անհասանելի իմաստության, հոգու խաղաղության և խոր արմատների մասին, զրուց է բացում Հայնեի հետ, դիմում նրանց մոտիկներին, մտնում նրանց խոսքի տարերքը:

Այս բոլորի մեջ շիկանում է մի կարեւոր միտք՝ կապված բանաստեղծական ծրագրի հետ: Շատ աղքատ մի բան կիներ կարծել, թե Զարենցը մտածում էր սոսկ աղերսների վերականգնման և սոսկական ուսումնառության մասին: Նա մտարում էր մեծ արվեստի ստեղծման, նոր որակի և ոճի հայտնագործման ջուրը, ուսումնասիրության հետ միասին դեռևս էր դարաշրջանի գեղարվեստական համարժեքը ստեղ-

ծելու և դասական արվեստի հետ ստեղծագործական մրցման գնալու խնդիրը:

«Էպիկական լուսաբացում», ուիրիկական անտրակտում» և հետո, 1934 թ. ՍՍՀՄ գրողների առաջին համագումարում արտասանած ճառի մեջ նա խոսում է բարդ կյանքի, բարդ արվեստի մասին, անվերջ մերժելով պարզուակությունը, մյուս կողմից՝ նա պահանջում է հասնել համագրության, խուսափել արհեստական մթամածությունից, այսինքն՝ բանաստեղծական խոսքին տալ բնական երանգներ, զուլալ, անմիշական հաղորդականություն:

«Վերջ ի վերջո չնշին արժեք ունի այն բարդ արվեստը, որը նպատակահարմարության և այժմեականության իմաստով տարակուսանք է առաջացնում նույնիսկ այդ արվեստը ստեղծող հեղինակի մեջ»: Զարենցը կարծում էր, որ թեմայի բարդության և այժմեականության համագրության անհրաժեշտությունը շատ լավ էր զգում Մայակովսկին, սակայն շկարողացավ մինչև վերջ, որպես գեղագետ, հաղթահարել շկարողացավ մինչև վերջ, որպես ընդգծեց մի շարք գրողների «անիրեն»: Նա համագումարում ընդգծեց մի շարք գրողների «անհաճո պարզությունը», գտնելով, որ սկսած Գեմյանից, Բեգիմենսկուց մինչև Ժարովի և Ուտկին, շատերը նրանց հետ չնայած թեմայի այժմեականությանը, ետ են մնում որպես գեղագետներ: Նույնքան ցավալի է, որ խոշոր գեղագետներից շատերն էլ գեռևս չեն կարողանում նվաճել այժմեական թեման: Մասնավորապես նա հերգում է էրենբուրգի միտք՝ «մասսաների անկուլտուրականության» մասին:

Ո՞րն է ելքը:— Կարևոր հարց է առաջ քաշում Զարենցը: «Ելքն այն է, որ խորհրդային բոլոր բանաստեղծները, կազմելով գաղափարապես միաձույլ, անբաժան մի բանակ, ձըգտեն միահամուռ ուժերով ստեղծել այն մեծ արվեստը, որը, որպես այդպիսին, լինի և բարդ, և համապատասխանի սոցիալիզմ կառուցող մարդկության հոգևոր հոյակապ կառուցվածքին»:

Այդ առումով շատ բնորոշ էին նաև «Ուիրիկական անտրակտի» շատ հատվածներ, գրված 1928—29 թվերին.

... Լենին, այո՞ւ, — Լենին, — Բայց ո՞ւ միտինգային,
Բայց ո՞ւ թյորուկ թերև, բայց ո՞ւ պակատ:

Անիքին—այսօր արդեն ասել է՝ գասպաթ,
Ասել է՝ ներքին կառուցում քո նոր թեմայի:
Այդ թեման ուռանանում է այսօր քո մեջ,
Անում է, բայց ո՞վ այսպիս, ինչպես խոտը.
Նա աճում է կամքով, երկաթով, — նա կյանքի առավոտ է
Մտցի, խորքի, կառուցման անհուն երեկո...»

Զարենցի բոլոր շափանիշները հենված էին մեծ արվեստի փորձի և արդիականության վրա, այստեղից էին ծագում և հայացքները, և՝ նյութը, և գաղափարը, և՝ հերոսը, և այն լիցքերը, որոնք առաջ էին շարժում գեղարվեստական միտքը: Ուրիշ խոսքով՝ բանաստեղծը իր ժամանակից քաղռւմ էր արվեստի փիլիսոփայությունը, որը և՝ հարազատ էր անցյալի հետ, և բոլորովին նոր, և շարունակլությունն էր գեղարվեստական մտքի, և նոր սկիզբ էր այդ մտքի ճանապարհին:

Մրագրային բանաստեղծության այս հատկանիշները և
այս փիլիսոփայությունը, իհարկե, սոսկ Զարենցի սեփակա-
նությունը չէին, դրանք սովետական ողջ դրականության բազ-
մազան և միասնական զարգացման օբյանական ծնունդն
էին, բնորոշ նաև մյուս ականավոր գրողների, ասենք՝ Ս.
Գորկու, Վլ. Մայակովսկու, Մ. Շոլոխովի, Ալ. Ֆադեևի, Մ.
Սվետլովի, Ն. Տիխոնովի հայացքներին ու ստեղծագործա-
կան փորձին:

Այդ հարուստ փորձի ամփոփումը եղավ սովետական գրողների առաջին համագումարը, որը մշակեց և ավարտուն տեսք տվեց սոցիալիստական ռեալիզմի տեսությանը և գնահատեց անցած գրական նվաճումները։ Այստեղ կարեորն այն է, որ Սլիշն Զարենցը գտնվում էր իրադարձությունների կենտրոնում, խոր էր բմբոնում համասնիտական գրական շինարարության և տեսուրյան հարցերը։ Նրա գրեթեր, շարժերը, վերը շարադրված հայացքները ոչ քե պրովինցիալի գրողի ուշացած արձազանքներ էին, այլ պատկանում էին սկզբնավորող եւելույթների բվին, ծնվել էին կյանքի ոիբմերին համարակալ, տեղագին աշխատանքի ու որոնումների աարեթից։

Կարեռ է և այն, որ Զարենցը բերում, գեղարվեստական մեծ հոսանքին էր միացնում ազգային կյանքի արձագանք-ները, ազգային առաջավոր ավանդների և սովետահայ գրա-

կանության խաչաձեռամբների փորձը ու զարգացման ժամանակակից առողջ միտումները։ Այս հարցում, Բակումցի հետ միասին, նա դրսերում է խորաթափանցություն, առաջ քաշելով համասովետական նշանակություն ունեցող ուրիշ կարևոր հարցեր։ Խոր ըմբռնելով պատմության և կենդանի իրականության զարգացման յուրահատկությունները, նա ընդունում է ազգային և համասովետական կյանքի զորացող աղերսները։

Այդ հիմքի վրա էլ նա մշտապես առաջ է քաշում գրական խաչաձևումների խնդիրը՝ ակսած հեղափոխության առաջին օրերից մինչև սոցիալիստական հասարակության ծաղկումը, յուրաքանչյուր անգամ, սակայն, նկատի ունենալով կյանքի տվյալ շրջանի ներքին պահանջը:

Նա միակողմանի է համարում այն վերաբերմունքը, որ հաճախ ազգային գրողը անցյալի ժառանգության տակ հասկանում է սոսկ ելքոպականը և իր իսկ գրականության անցյալ փորձը: Այնինչ շատ արդասավոր կլինի նաև բոլոր եղբայրական ազգերի փորձի և ժառանգության ուսումնասիրությունը: «Սակայն ինչքան կհարստանա մեր ստեղծագործական փորձը, եթե մենք, Խորհրդային Միության բազմալեզու գրողներս, սովորենիք նաև միմյանցից: Որքան էլ փոքր լինեն մեր ժողովուրդը և նրա գրականությունը, վերջինս վեհարող չունենալ իր ինքնատիպ, եզակի և անկրկնելի նրբերանգը, այն, որ հատուկ է միմիայն տվյալ գրականությանը և նոու լավագույն գրողներին»,— ասում էր Զարենցը:

Նա բերում է հայ միջնադարյան պոեզիայի օրինակը,
խոսում հանճարեղ բանաստեղծների մեծ փորձի մասին, որը
գույշներով, երանգներով, ձեռի և նյութի մշակմամբ ամբողջո-
վին ինչնատիպ երևույթ է և մեծապես օգնում է իրեն ստեղ-

ծելու այնպիսի ձևեր, որոնք արմատապես տարբեր են սովետական մյուս գրողների օգտագործած ձևերից: Դրա հետ միասին նա խոսում է սովետական գրականության վարպետների՝ ոռու, ուկրաինացի, վրացի և հայ ժամանակակից բանաստեղծների ստեղծագործական փորձի մերժեցման ու գրացման մասին:

Զարենցը կենսական է համարում ժամանակակից գրողի հորիզոնի ընդլայնումը, հոգևոր տեսողության սրումը, որն այնքան անհրաժեշտ է ընդհանուր սոցիալիստական կյանքի արտացոլման, համասովետական և ազգային գրականության ժաղկման համար:

Նա արտասովոր զգայուն էր գրական նոր փորձի նկատմամբ: «Հպիկական լուսաբացում» բանաստեղծը դիմում էր ոչ միայն նեկրասովին, Պուշկինին, Տերյանին, այլ բնաբան էր ընտրում նաև ոռու երիտասարդ տաղանդավոր բանաստեղծ Մ. Սվետլովի տողերը, շերմությամբ արձագանքում բանվոր բանաստեղծ Վահան Դրիգորյանի պատի թերթում տպագրած «Անիվ իմ, գարձիր» բանաստեղծությանը, այդ տողն էլ ընտրում իբրև բնաբան՝ ընդգծելու համար իր կարեռ խոհը նոր բանաստեղծության մասին:

Քո երգերը՝ բոց, քո երգերն՝ հրե,—
Բայց այդ կոմերիտ Վահանի նման
Դու ե՞րբ ես, դու ե՞րբ ես, զու ե՞րբ ես գրել:—
Մասներով քո թույլ, մատներով բարակ,
Դու ե՞րբ ես գրել այդքա՞ն հասարակ,
Այդքան պարզ այդքան շինչ ու համոզիլ,
Ինչպես երգեցիկ անիվն է արագ
Պատվում ահա Վահանի ուժից:—
Հիմա լծկելով քո դժվար գործին,—
Այդպէ՛ս դու, ե՛րգ իմ, անի՞վ իմ, գարձի՞ր...

Ժամանակակիցները տարակուսում էին: Ի՞նչ է գտել մեծ բանաստեղծը այդ պատանու տողերի մեջ: Բայց դա մեծության նշան էր: Հանճարը հենց նրանով է հանճար, որ գեղեցկությունը տեսնում է ամենուր, զգայուն է կյանքի ու գեղեցիկի առաջին նշանների ու երեսլիթների նկատմամբ, մի կողմից քամում է գեղեցկության բոլոր հյութերը իր աշխարհը կառուցելու համար, մյուս կողմից՝ ամենուր սերմանում է

այդ գեղեցկությունը, ազդեցություն գործելով ժամանակա-կիցների ու հետնորդների վրա:

Զարենցը իր ծրագրային բանաստեղծություններում, մշակելով նոր արվեստի ուղիների հարցը, թանձրացնելով կյանքի ու գրականության զորացող ներքին աղերսների փիլիսոփայությունը, իր հետ նոր վերելքի ու մաքառման էր տանում գրական սերնդին:

ՎԵՐՁԻՆ ՄԱՏՅԱՆԸ. «ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ»

Մինչդեռ շարումակվում էին փոթորկոտ վեճերը «Հպիկական լուսաբացի» շուրջը, մամուլը հեղեղվում էր թեր ու դեմ հոգվածներով, մինչդեռ որոշ բանաստեղծներ մի կողմից կրկնում էին Զարենցի նոր մոտիվները և ծրագրերը, մյուս կողմից՝ կասկածելի խորհուրդ ու խրատ տալիս նրան՝ մեծ բանաստեղծն արդեն գտնվում էր ուրիշ ափերում։ Հավասարիմ իր խառնվածքին, «խուսափելով ընդմիշտ երգերից դյուրածին», նա հյուսում էր իր ամենաբարդ, դժվար ու իմաստուն Մատյանը՝ «Գիրք ճանապարհին»։

Այո՛, Զարենցի ամեն նոր գիրք, որպես կենսական, հոգեկան և ոճական ակնառու հայտնագործություն, ուրույն պատուհան էր բացում աշխարհի վրա, բայց նույնիսկ այս զեպքում «Գիրք ճանապարհին» իր տեսակարար կշռով տարրերվում էր բոլորից։ Ուրիշ էին այս գրքի բաղադրությունը, մթնոլորտը, շիկացումների բնույթը, աղերսները, ներքին խորհուրդը։ Այդպիսի գիրք չէր ստեղծվել անցյալում։ Գիրքը բացառիկ երևույթ էր 30-ական թվականներին և այսօր էլ մնամ է անկրկնելի ու անհասաւ։

Այդ վերջին Մատյանը հայ ժողովրդի պատմության, հոգեկան կերտվածքի, անցած դժվար ճանապարհի, բարդ ու դրամատիկ ներկայի և գալիք դարերի կեցության բանաստեղծական փիլիսոփայությունն էր, որը մեծացնում էր իմացության և խոհերի տեսակարար կշիռը, հայտնաբերում ժողովրդի և մարդու հոգեսոր, ստորջրյա շարժման պատկերը։

Թանի որ գիրքն ուներ բարդ հյուսվածք, անսովոր ոճ ու տարերք, ժամանակակիցներից շատերը, շթափանցելով երեւութիւ խորքը, դա հաստատում էին ոճական ու գաղափա-

րական շեղում, խոսքը «Համեմակով» բազմապիսի հայեցանքներով։ Զարենցը ձգտում էր բացատրել այդ գրքի նշանակությունը սոցիալիստական ուսալիզմի զարգացման ճանապարհին։ «...Մի շարք ընկերներ միանգամայն սխալվուեն, կարծելով որ սոցիալիստական ուսալիզմ նշանակում է միայն առօրյա խնդիրների մասին գրելը։ Սոցիալիստական ուսալիզմն ընդգրկելու է նաև մեր ժամանակի փիլիսոփայական խնդիրների վերարտադրումը, ինչպես իր ժամանակին արել է Գյորեն»¹։

Ահա այսպիսի մեծ խնդիր էր լուծում Եղիշե Զարենցը, նոր երակ բացելով հայերգի համար, այստեղ էլ աշքի առաջ ունենալով համաշխարհային արվեստի շափանիշները։ Այնինչ 1932 թ., կանգնած երկու նշանակուր գրքերի՝ «Հպիկական լուսաբացի» և «Գիրք ճանապարհին» սահմանագծում, տալով դալտոնիզմի ապշեցուցիչ օրինակ, ժամանակի եռանդուն և օժտված մարդկանցից մեկը՝ Ն. Զարյանը, դրում է «Բաց նամակ Եղիշե Զարենցին» հոդվածը։ Խնդիւս տեսանք, նա Զարենցին մեղադրում է իր «մեծ ձիրքի հետ վատ վարվելու մեջ և մշակում իրականությունից փախչելու տիսուր ու անարդար վարկածը»։

Իսկ «Գիրք ճանապարհից» հետո... Այս անգամ արդեն մեղադրանքներ էին նյութվում անգամ առանձին բառերի ու ածականների շուրջը... Բայց այս ծանր մթնոլորտի մեջ Զարենցը շատ խոր էր զգում իր ստեղծածի և գործի բացառիկ նշանակությունը, գրում էր, հպարտության հատուկ շեշտերով։

Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալում—լուսավոր ու վեհ,
ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ—
Ուզը հավաքել և քեզ է տվել—
Տվիլ է, որ զու այդ ամենը այս
Օրերին խառնած, խոր հավատով լի
Պարզեն զալիքի ցնորքին անհաս—
Եղ ընդմիշտ մնաս մեծ ու սիրելի։

Գիրքը ստեղծելիս, տեղի է ունեցել մի յուրահատուկ, ժամանակակիցներից շանձարեղ անհատը, իր օրերի քաղաքարդ փոխանցում։ Հանձարեղ անհատը, իր օրերի քաղաքա-

¹ Ե. Զարենց, Երկ. Ժող., Ը. 6, 1967 թ., էջ 549։

ցին, արտասովոր ուժով ընկալելով, ժառանգելով ժողովրդի հոգեր հարստությունը՝ լուսավոր խոներն ու երազները, այդ բոլորին թերել է նաև ապրած օրերի հոգեբանական կարեռագույն բաղադրիչը, նոր ժամանակների ոգին ու շունչը:

Բարդ աշխատանքի, տիտանական լարումների բովում, շիկացման մթնոլորտում ծնվել է «Գիրք ճանապարհին», խիզախ գյուտը՝ որպես յուրօրինակ հոգեր ժառանգություն գալիքին. Կարելի է ասել, որ դա հայ ժողովրդի անցած ճանապարհի, քաղաքական բարդ անցումների և հոգեր անդար շարժման գիրքն է, բայց դա նաև Զարենցի անդուլ սրունումների, քաղաքացիական և ստեղծագործական նշանակալից անցումների, ժողովրդական բախտի անհատական ընկալումների գիրքն է:

«ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀԻՒ» ԾՆԴՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Վերջին Մատյանը ստեղծվել է արտասովոր ոգեսրությամբ, զարմանալի արագությամբ: Գրքի մեծ մասը նա գրել է 1933 թ. հոնվարից մինչև հունիս, մոտ վեց ամսվա ընթացքում: Փաստերը շատ խոսուն են: 1933 թ. հոնվարին նա գրել է «Պատմության քառուղիներով» և «Նորք» պոեմները, «Մեր լեզուն», «Տաղ ձոնված մանրանկարիչներին» բանաստեղծությունները: Փետրվարին նա ստեղծել է «Դեպի լուսը Մասիս» պոեմը և տաղերի ու խորհուրդների մեծ մասը, պատահել է՝ որոշ օրերի նա գրել է երկուական տաղ, օրինակ՝ փետրվարի 27-ին և 28-ին: Մայիս ամսին «Մահվան տեսիլ» պոեմի հետ միասին գրել է Հայնրիխ Հայնեին նվիրված երկու բանաստեղծությունը, «Պատգամը», ակրոստիքունները և մի շարք թարգմանություններ՝ Գյոթեից, Ստեղծագործական այս շիկացումը կարելի է, թերևս, համեմատել միայն Խաչատուր Աբրույանի այն հրեհված ոգեսրության հետ, որից ծնվել է «Վերք Հայաստանին»: Ես ինձ թույլ եմ տալիս ենթադրելու, որ այդպիսի հոգեկան հրդեհից է արագորեն ձևագործվել ու կենտրոնացել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի բուն տարերքը: Զարմանալի է նաև Զարենցի՝ բաղմաբեղուն գրողի հետաքրքրությունների բաղմազանությունը և ներշնչման ուժը: Այսպիս՝ մայիս

ամին նա գրել է հայ քաղաքական հոսանքների և կուսակցությունների գործի ու հայկական զարդերի մասին («Մահվան տեսիլ»), մտորել է հայ ժողովրդի հավաքական ամբողջության և բախտի շուրջ («Պատգամ»), դրամատիկ շեշտերով ստեղծել է դասակարգի երգիչների՝ իր և Հայնեի բախտի զուգահեռու նույն ծանր ու բարդ ապրումների մեջ հանկարծ լույսի ճառագայթ է նետել հայրական սիրո նվազը, վերջապես նա թարգմանել է Գյոթեին՝ ընտրելով հարազատ նմուշներ՝ նվիրված բանաստեղծական աշխատանքին, ներշնչման, մեղանչումներին ու բախտին:

Այս լայն շառավիղը վկայում է ոգու լարման և տենդագին որոնումների մասին, որը հատուկ է մեծերին, մեծերից էլ հատկապես նրանց, որոնց վիճակված է մայրուղիների բացման և գրական ընդհանուր ճանապարհի ճշտման ծանր այլարտքը:

Նյութի լայնության, տարածության և շահագրգոռությունների այս շրջանակը գրականության պատմության մեջ տալիս է նաև հակառակ օրինակը: Կարելի է նշել նաև այնպիսի հեղինակների, թույլ հեղինակների, որոնք սակառնում են մակերեսին, նյութից նյութ, աշխարհից աշխարհ՝ հենց այն պատճառով, որ չեն կարողանում կանգ առնել մի տեղ, նյութից իմաստ քաղել, ծաղկից՝ մեղք, աշխարհում ստոգել սեփական աշխարհ: Նրանք հետին ընկնում են որիշների հետևից, ինչպես այն թոշուններն ու փոքրիկ կենդանիները, որոնք ապրում են մեծ որսերի մնացուկների հաշվին: Չի կարելի ասել, թե Հսկային ուղեկցող այդ թափորը առաջարակ օգտակար չէր: Հսկառակը, Փոքրիկ թոշունների հեջ կան այնպիսիները, որոնք ինչ-որ բան են հուշում հսկային: Մինչև իսկ ցույց տալիս վտանգը, շատեղը վերացնում են մնացորդները, մաքրում բնությունը: Բայց, այնուամենայնիվ, բուն գործը մնում է Հսկային: Համեմատությունը թող կոպիտ շնչի... Ամեն դեպքում Զարենցը դուրս էր գալիս մեծ որսի, իսկ նրան հետևում էին խմբերով, ոմանք էլ սնվում մեծ որսի հաշվին, ստեղծում իրենց փոքրիկ ուրախությունը, իրենց բավարարությունը: Այս զարմանալի մարդը զանազանում էր մտքի խիզախությամբ, գալիք ուղիների զգացողությամբ ուսուցիչ էր իրենից մեծերի և փոքրերի համար:

Նա պատմություն էր ստեղծում, հետեւ տանելով մայրենի գրականությունը:

Բայց առաջնորդի հանգամանքն ինքնին նրան կանգնեցնում էր բարդ հանգույցի առաջ նոր ճանապարհի համար բանաստեղծը ստիպված էր երկարորեն խորհնել նաև ակունքների մասին, հայտնարերել նորագույն արվեստին անհրաժեշտ այն կենսական, գաղտնի թե՛քը, որոնք գալիս են անցյալից՝ իր ժողովրդի հոգուր արժեքների հետ: Նա պարտավոր էր ուշադիր լինել նաև համաշխարհային հին ու նոր մշակույթի նկատմամբ:

Խնդրի այս երկու կողմը, իհարկե, միշտ չէ, որ զյուրությամբ է հանձնվում գրականագետին: Մինչև այսօր գրականագետները որոնում են Զարենցի սանդագործության ակունքներն ու առնչությունները, բուռն վեճեր մղում: Առաջ են գալիս նոր-նոր ևնթադրություններ՝ հունական, իտալական, ֆրանսիական, ոռուսական, չինական հին ու նոր աղբյուրների ու ակունքների շուրջը: Ես միտք շունեմ անտեսելու նման կարգի հիպոթեզները կամ զբաղվելու ենթադրյալ աղերսների հերքումով: Անբնական կլիներ հերքել Զարենցի համաշխարհային առնչությունները, քանի որ նա պատահի հասակից մինչև վերջին օրերը անվերջ հետաքրքրվել է համաշխարհային գրական-փիլիսոփայական կյանքով ու հարաբերություններով: Ուրիշ խոսքով՝ այս գրողի հոգու դուռն ու պատուհանները բաց են եղել մեծ աշխարհի առջև... Բայց ամեն դեպքում պետք է մոտ լինել փաստերին, իրողություններին, կատարել փիլիսոփայության և ոգու զուգահեռ, նկատի ունենալով ազգային կյանքը և արտաքին այն հանգամանքները, որոնք անջնջելի հետք են թողնում ստեղծող անհատի վրա, որոշում նրա որոնումների ու մտահոգությունների ուղղությունը:

Ազգային բանաստեղծությունը, մինչև իսկ ողջ մշակույթը մի ամբողջ հոսանք է, մի վարար գետ, որ անցնում է հազարամյա հոմնվ, գետաձորով, ինչպես կասեին հայ 60-ականները: Այդ գետը երթեք չի կարող «շրջել հոսանքը դեպի ետ», դեպի ակունքները, բայց և չի կարող կտրվել իր աղբյուրներից, գարձալ հազարամյա վտակներից, էապես չի կարող շնչվել նաև հինավորց հոմից, եթե, իհարկե, չի անցնում

անսապատի միջով: Մշակույթի մեծ գետը մի շատ էական բանով տարբերվում է բուն գետերից: Նա մշտապես, ամեն մի նշանավոր ժամանակ, իր մեջ է ընդունում նոր վտակներ ու հոսանքներ: Մշակույթի ակունքները անսպառ են, հարստացուցիչ հոսանքները՝ մշտապես նորացող և հավերժական:

Չարենցի պոեզիան իր ժամանակի գրական մտածողության հետ միասին մեր ազգային մշակույթի, հոգնոր կյանքի և գրական հազարամյա մեծ հոսանքի հարստացուցիչներից մեկն է:

Ես դարձյալ դիմում եմ բնական երևույթների օգնությանը, խնդիրն ավելի տեսանելի դարձնելու նպատակով:

Դուք տեսե՞լ եք լեռնային հզոր վտակներ, որոնք իշնում են զարմանալի թափով, գետի խառնարանում ստեղծում բռւն ալեկոծություն ու շրջապտույտ, թվում է՝ կանգնեցնում են մայր գետի ընթացքը: Այդ վտակը, այնուամենայնիվ, խաղաղովում է, մի փոքր, միայն մի փոքր փոխում հունը Բայց ներբուստ վտակը ավելացնում է մայր գետի թափը: բարձրացնում արագությունը և հորձանքի ուժը: Այսպիսին է նաև Զարենցի բանաստեղծության և մայրենի հազարամյա գրականության փոխհարաբերությունը: Ի դեպ այդպիսի փոխհարաբերության մեջ էին նաև նարեկացու բանաստեղծությունները, ամբողջության մեջ Աբովյանի ստեղծագործական երեկոյթը, Թումանյանի պոեմները: Այդ հզոր վտակները թափ են առնում հայրենի սարերից, անտառներից, մոլհին մրրիկներից ու խաղաղ տեղումներից, ինչ-որ ձեռվ իրենց հետ խառնելով նաև ընդհանուր մինոլորտի տարրերը, հոսանք և ուժ են ձեռք բերում բնական տարրերի մեջ:

Բանաստեղծությունը, ինքնին վերցրած, մշտապես հավատարիմ է եղել այս սկզբունքին, քանի որ նա ոչ միայն մշակութային շփումների և առնչությունների ծնունդ է, այլ ամենից առաջ և ամենից շատ ազգային կյանքի, առավել ևս ազգային խառնվածքի անխուսափելի, բայց և աննկատելի, զրեթե անորսալի, շատ հաճախ դժվար բացատրելի մի արդյունք կրո՞ւմ է, արդյոք, ազգային խառնվածքը որոշակի ազգեցություն հարևաններից, համատեղ կյանքից, համաշխարհային առնչություններից, Անպայման: Բայց անտեսանելի, բաքուն, տեսական փոխազդեցությունների ճանապար-

Հով, պատմության երկար ընթացքում, բյուռեղանալով, ըստանալով որակական ամբողջություն... թանաստեղծն էլ հենց նրանով է տարբերվում փիլիսոփայից, տիսաբանից ու գրականագետից, որ ամեն անգամ արտասովոր նուրբ զգացողությամբ ընկալում է այդ փոփոխությունները, ազգային հոգեբանության թագուն տեղաշարժները, նորագույն երանգներն ու պահանջները, որոնք, անշուշտ, մի զգալի շափով բերում են նաև համաշխարհային կյանքի ու հոգեբանության արձագանքը:

Ահա այս առումով բացառիկ երկույթ է «Գիրք ճանապարհն», թերևս ամենանորարարական երկույթը՝ 20-րդ դարի հայ գրականության մեջ, միաժամանակ ամենահայկականը և ազգայինը:

Այս խնդրի շուրջ հարկադրված ենք մի փոքրիկ վեճ բացել Ս. Աղաբարյանի հետ: Ինձ այնպես է թվում, թե նա երեմն շափականցնում է օտար գործոնների ազդեցությունն այս գրքի վրա, Զարենցի առնչությունների շառավղի մի կետը գտնելով Զինաստանում, մյուս՝ իտալիայում, ժամանակակից հայ գրքի փիլիսոփայությունը և կոնցեպցիան կապելով Լառ-Ցղիի «Դառ Ցղի» (Գիրք ճանապարհի մասին) գրքի հետ (մ. թ. ա. 6-րդ դար), իսկ «Մահվան տեսիլ» պիեմի ոճական յուրահատկությունները, շարշարանքի ծանր ու մոռայլ պատկերներն էր Դանտեի և Ֆոսկոլոյի հետ... Հնդ սրում՝ առաջին դեպքում նա հենվում է մի տեղեկության վրա, թե Զարենցը 30-ական թվականներին կարդացել է լին հնագույն փիլիսոփայի գիրքը, մյուս դեպքում՝ որպես փաստարկ մեջ է բերում Դանտեի «Աստվածային կատակերգության» հարգարժան թարգմանիչ Արքուն Տայանի բանավոր կարծիքը: Աղաբարյանն առաջ է գնում, շատ կարևոր նշանակություն տալով առնչություններին, Լառ Ցղին ստեղծել է ուսմունք հանապարհի, այսինքն՝ զարգացման ընթացքի մասին, մի ուսմունք, որ հետագայում ստացել է բազում և հակադիր նյութավորություններ: Դրանցից մեկն այն է, որ զարգացման հանապարհի ընթացքում երկույթները սպառվում կամ փոխվում են իրենց հակադրությանը:

Ըստ երկույթին Ս. Աղաբարյանը ուզում է տեսնել նմանություն հայ ազգային շարժման ներքին ընթացքի մեկնա-

բանության և այս փիլիսոփայության միջև թայց նշենք, որ ամեն ինչից անկախ, Զարենցը այս դիալեկտիկան վաղուց սովորել էր Հերակլիտից ու Հեգելից կավագույն ապացույցը ուուրայաթներն են: Մյուս կողմից, ըստ էության «Գիրք ճանապարհին» լի ենթարկվում նման կարգի որևէ սխեմայի և կոնցեպցիայի: Մեր ազգային շարժման քննությունը նաև սկսել է մինչև այդ գիրքը կարդալը, պատանի հասակից («Դանթեական առասպեկտ», «Վահագն», «Ազգային երազ», «Երկիր նաիրի» և այլն):

Բացի այդ, ինչպես հայտնի է, այդ ճանապարհը տենդագին քննվում և գնահատակում էր գրեթե բոլոր հայ հոսանքների, քաղաքական մտածողների և գրական մաշղկաների կողմից: Խոսքը վերաբերում է և լիբերալներին, և պահանջականներին, և մարքսիստներին, և Թումանյանին, Վ. Տերյանին, Փաղաքական գործիչներ Ս. Շահումյանին, Ա. Հովհաննիսյանին, Ա. Կարբնյանին, Հ. Ազատյանին, բազմաթիվ-բազմաթիվ մարդկանց:

Ուրիշ խոսքով՝ Յ. Զարենցը մեր ազգային շարժման մասին կոնցեպցիաներ որոնելու կարիք շուներ, քանի որ կանգնած էր արյունալի անցքերի առջև և շատ լավ գիտեր նաև այդ շարժումների շուրջ ստեղծված հսկայական գրականությունն ու գաղափարաբանությունը: Ինչ մնում է «Մահվան տեսիլ» արտասովոր պատկերներին ու մոայլ ոճավորումներին, ապա դժվար չէ տեսնել նրա ամենահեռավոր ակոնքները՝ հայ միջնադարյան պատմագրությունը և ամենամոտը՝ Սիամանթոյի խորապես ողբերգական շարշարանքի տեսիլները:

Ինչո՞ւ ենք մենք այսպես վճռականորեն առարկում Աղաբարյանին: Բանն այն է, որ այդ անհիմն զուգահեռների պատճառով ընթերցողի ուշադրությունից դուրս են մնում ուրիշ երկու կարևոր հատկանիշները: Խոսքը վերաբերում է ւեղարկեստական հատկանիշներին և գրքի արյունատար համակարգին, ժամանակակից բաղադրությանը:

«Գիրք ճանապարհին» տառապած կյանքի, շիկացած մտքի և արյան գիրք է»:

Բարդ են այս գրքի ստեղծման հասարակական շարժառիթները և հոգեբանական ազդակները: Ամենից առաջ,

շումը դեպի փիլիսոփայական պոեզիայի տարերքը, իմացության ու խոհերի աշխարհը միանգամայն օրինաշափ էր՝ սուրբեկարիվ առումով։ Սկզբից էլ այս բանաստեղծի մեջ շափականց ուժեղ էին դրանորվում ստեղծագործական միտքը, քննախույզ ոգին, հոգևոր տեսողությունը, հակումը դեպի կենսական ու պատմական երեսությունը, ինչպես նաև ինքնավերլուծությունը։ Դա վառ երեսում է նրա քաղաքական պոեմներում, տեսիլներում, «Երկիր նախրի» վեպում, «Էպիկական լուսաբացում»։ Բայց այդ հատկանիշը առանձնապես ուժեղանում է 30-ական թվականներին, կապված բանաստեղծական հասակի, կեսօրի նետ։

Այդք բացվեց աշխարհում, երբ դու քերթող էիր լոկ, —
Այժմ կեսօր է արդեն—ժամ է դառնաս իմաստուն։

Դա, իհարկե, որոշումով չի լինում, բանաստեղծի ոգին հարստանում ու ծավալվում է ամեն օր, ամեն ժամ, առուներով, գետակներով, վտակներով՝ կապված և հասակի, և ճանապարհի հետ։

Ո՞վ իմանա, երբ է մարդ դառնում այսպես իմաստուն։
Հասակի՞ց է արդյոք այդ, թե ճանապարհո՞ւն է ազդում,
Այդպես ցողո՞ւն է լցվում հատիկներով ոսկեհատ, —
Օ՛, ճանձարե՞ղ ակնթարթ, դու ընթացք ես—ու սատում։

Հասակից ու ճանապարհից։ Հոգեկան հաշտությունից ու կենսափործից։ Սեփական և ծողովշաղական հանապարհի մեծ փորձից։ Այս լիցքերից է ծեավորվում իմաստության պոեզիան։ Չարենցն այստեղ մեզ կրկին օգնում է բացեւու իր մեծ գրքի ծննդյան գաղտնիքները։

Այո՛, շատ բաղմազան էին Չարենցի հետաքրքրությունները, խոհերը, աղերսները։ Դա երեսում է անգամ մեկ ամսը՝ վա, նոյնիսկ մեկ օրվա աշխատանքի մեջ։ Ողջ բազմազանության հետ միասին գիրքը մեզ տալիս է նաև ստեղծագործական կենտրոնացման և նպատակասլացության արտասովոր օրինակ, որի հետ կապված էին և ոգնորությունը, և շիկացումը, և ստեղծման արագ որթմը։

Եվ ոչ մի խոհ չի գալիս, երբ տարածամ ես կանչում։

Ահա առաջ է մղվում ժամանակը, առանձին եշտակություն են ստանում ապրած օրերը, ժամանակի անցերեն ու նազերանությունը, այս գրի ամենահզոր լիցքերն ու ազդակները։

Ինչ որ գտնես այս գրքում, ինչ մտածունք ու խորհուրդ—
Ոչը հանած համարիր—բռ օրերի ժամանից։

Ժամանակը՝ որոշ դրամատիկ կողմերով, անջնջելի կնիք է դրել գրքի վրա, հեղինակին մղել մեծ աղերսների և խորհրդածությունների ուղին, և նա, հակառակ իր օրերի անհեռատես մարդկանց, ստեղծել է իր օրերի իմաստուն Մատյանը։ Հավատարիմ պատմական և քաղաքական ճշմարտությանը, նա տեսնում է իր ժողովրդի բազմակողմանի վերելքը անցած կարճ միջոցում, սոցիալիստական հեղափոխությունից հետո։ Չարենցը ստեղծում է սոցիալիստական հեղափոխության և ազգային կյանքի էական առնությունների գեղարվեստական պատմությունը, քաղաքական, հոգևոր վերելքի, ոգու թոփշքի, մարդու ներաշխարհի լուսավորման և պայծառացման պատկերը («Նորք», «Զրահապատ», «Վարդապան զորավար», «Համայնական դաշտերի սերմնացանները»)։

Այս առումով, նյութի վերստեղծման ուժով և մտքի խորովյամբ, Չարենցի ստեղծագործությունը և այս նոր Մատյանը առանձնահատուկ տեղ են գրավում սոցիալիստական ողջ գրականության մեջ։ Հենց նույն այս բարձունքից բանաստեղծը դիտում է և անցյալը, և գալիքը, հավաքում անցյալի փորձը և գալիքի երազները, ստեղծելով մի բազմանիստ և զոր կենսափոխություն, ուր հնչում է նոր ժամանակի մարդու հավատի ու խղճի ճայնը։ Ահա այստեղ երեան են գալիս նաև հակասություններ՝ կապված ժամանակի որոշ ծանր երեսությունների հետ։ Գրքի ստեղծման ժամանակ մեր կյանքում ծագել էին մի շարք գժվարություններ։

Այդ օրերին մեր գրական կյանքում և պատմագիտության ասպարեզում տարածված էր մի նիհիլիստական հայացք՝ պատմության ու անցյալի նկատմամբ։ Ընդամենը մեկ-երկու տարի առաջ «Էպիկական լուսաբացը» հոլակվեց որպես

պուշկինյան օրյեկտիվիզմ, ապագասակարգացին անհատապաշտություն։ Մի քանի տարի հետո Ակսել Բակոնցը կանգնեց մի յուրօրինակ դատաստանի առջև... Նա ստիպված էր զեկուցում կարդալ ազգային սահմանափակության և տեղական նացիոնալիզմի դրսորումների դեմ, այսինքն՝ պարավանքի խոսք ասել իր իսկ նովելի՝ «Ծիրանի փողի», Զարենցի «Երկիր Նախրի» վեպի, Մահարու «Մանկություն» և Թոթովենցի «Կյանքը հին հոռմեական ճանապարհի վրա» վիպակների մասին, ստիպված էր ինքն իրեն ծեծել՝ ձախերին հանգստացնելու համար, իսկ ձախերը չէին հանգստանում։ Նրանք յոլեզին տրորում էին ծաղիկները և հիշատակները, հերքում ազգ, ժողովուրդ, անցյալ հասկացությունները։

Այսօր կարող են զարմանքով ասել, թե ի՞նչ կա որ... դա մոլորություն էր, անցյալի այդ ժմտումը, թերեւ, պիտի ոգևորության արդյունք։ Քայլ ինդիրը բնավ անցյալի հետ չէր կապված։ Անցյալն ավարտված էր և անխոցելի։ Խոսքը վերաբերում էր գաղիքին և հեռանկարներին, այսինքն՝ ժողովրդի հետագա ուղիներին և դա չէր կարող անհանգություն շառաչացնել մտածող մարդկանց մեջ։

Ժամանակն աննշպաստ էր... Մեծ անհատների հակառակիր՝ անորոշ, նրանց հետևից այնև չէր քայլում գրահան մարդկանց բազմաբետ թափորը, նրանք հաճախ ստեղծում էին միայնակ, խոր գիշերվա մենության մեջ։ Այնինչ այդ օրերին ոմանց կողմից հյուսվում էր դասակարգային խորթության առասպելը, գունչիկ առցիւլուգներն ու ձախ ջարդարարները յուրաքանչյուր բնական հատկանիշ՝ պատմական ուղղարվեստական առումով, դիտում էին որպես գաղափարական նահանջ մարքսիզմից։

ՊԼԵՄՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲՈՒՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

«Դիրք ճանապարհին» հյուսվել է այն օրերին, երբ Զարենցը՝ հեղափոխության նրգիլը և լենինյան զինվորը, ծանր ապրումների մեջ էր. նրան խօսում էին և աշխից, և ձախից, մեղադրում էին և նացիոնալիզմի, և նիհիլիզմի մեջ։ Հենց այդ օրերին, այդ տարիներին ծնվում էր ճանապարհի խընդիրը, պատմության ինդիրը։ Զարենցը՝ դառնացած և իմաստագանք, պիտում է մեծ գրուց գաղիքի քաղաքացու հետ,

ծնվում են «Մահվան տեսիլն» ու «Պատմության քառուղիներով», «Դեպի լյառը Մասիսն» ու «Նորքը», Բնավ էլ գժվար չէր գտնել այս երկերի հեռավոր ու մոտիկ ակունքները։ Զարենցն ուներ իր հարազատները, բախտի և արյան մերձավորները։ Ահա նրանք՝ Խորենացի, Արովյան, Միհամանթո, Կոմիտաս, Թումանյան, Հայնե։ Եթե առաջինները Գարենցին մերձենում են ազգային հակառակորդի ողբերգական ընկալումով, ապա Հայնեն՝ իրեն հեղափոխական, Մարքսի բարեկամ, դասակարգի և գալիքի երգիւ, ստեղծագործական և անձնական բախտի որոշ ընդհանուր գծերով։ Ի՞նչն է ամենակարևորը։ Բոլոր այս առնչությունները Զարենցի համար ստանում են չափազանց ծամանակակից, գաղափարական ու հոգեբանական արժեք։ Ամենից առաջ երան սեռուն է տալիս ապրած ժամանակը, ազգի և մարդու հակառակը, ապրում է անհնարինությունը։ Մնական պատմական մեջ էր կարգավոր առաջնորդը և անողոք բացահայտված է զրպարտչի էությունը։ Մնական մեջում կարգի առնչությունները։ Զարենցը հիշում է մեծ Խորենացուն, դառնում մեր պատմական ճանապարհի առաջին խոշոր մեկնաբանին, հինավորց հսկայի տառապանքին։ Մի ներքին կապ է ստեղծվում «Մեր առաջին իշխանների անհիմաստաներ բարփի մասին» գլխի, հոչակավոր «Ողբի» և «Պատմության քառուղիներով» պոեմի միջև։ Սիամանթոյի ոգին որոշ կողմերով հարություն է առնում «Մահվան տեսիլի» մեջ։ Բարձրանում է Արովյանի դրամատիկ կերպարը («Դեպի լյառը Մասիս»), ընդգծվում է պատմական Վարդանի և նորագույն հեղափոխական հերոսի զուգահեռը, հակադրվում են առասպելն ու իրողությունը, բոլորովին անսպասելի Զարենցը մոտենում է նաև հայ ժողովրդի ծագման ու հերոսության էպոսին։ Բոլոր գեպերում խորաթափանց գրողը, տագնապով լի, վերահաս աղետի զգացողությամբ, փորձում է ձգել պատմության ներքին խորհուրդների և փորձի թեկուրը, թանձրացնելով ժողովրդի պատմական բախտի փիլիսոփայությունը։

Այս իմաստով շատ բնորոշ են «Նորք» խռահական-փիլիսոփայական պոեմը և «Դեպի լյառը Մասիս» պոեմը՝ նվիր-

ված հաշատուր Աբովյանին: «Նորքը» գրված է նուրբ երանգ։ Ներով, սիմվոլիկայով, իմաստուն ու «խաղաղ» խոհականությամբ։ Այդ ամենի միջով, քնարական-վերլուծական նրբին անցումներով Զարենցը հյուսում է հայոց բախտի երգը, ավելի ճիշտ՝ 20-րդ դարի գրամատիկ անցումների երգը։ Հայոց հինավորց ավանում՝ նորքում, բարձրաբերձ բլուրի վրա բարձրացել է նաիրյան բարդին, հնօրյա սիմվոլը։ Այդ բարդին երգել է Տերյանը՝ «մեղմախոս ու խեղճա պոետը։ Եվ երգը՝ հայոց ոգու նվազը, կառչել է երկրի հնավանդ ժառին, աշխարհից կտրված, «նաիրյան վերջին պոետին տափնապի ու ահի երգը։ Հետո եկել է սամումը, պատերազմի ուրագանը, որ անապատ է շինել երկիրը։

Մանգաղի նման մահաբեր
Նա հնձեց օրերում այն սե
Բարձրաբերձ այգեստանը մեր,
Մեր երգի պարտեզը լուսե. —
Շարժելով մահու գերանդին
Նա հնձեց բերքի նման սուրբ —
Նաիրյան գուսաններ անթիվ,
Եվ ամբո՞ղջ մի անմահ ժողովուրց...»

Այսպես է ընթացել հայոց երկրի և երգի բախտը։ Դարձալ ասենք, որ այն տեսակետը, թե հեղափոխական Զարենցը բաժանվեց հայոց վշտից, նաիրյան ողբերգությունից, ոչ մի առումով քննության շի դիմանում։ Մեծ բանաստեղծը չէր կարող իր հոգուց քերել-հանել «հնձված մի ամբողջ ժողովուրդը» և «նաիրյան գուսաններ անթիվ»։ Դա հավերժորեն մտել էր արդեն նրա արյան և խառնվածքի մեջ։ Բայց Զարենցը ոգու տիրական ուժով զգում էր ժողովրդի պատմական բախտի փոփոխությունը, առավելագույն շափով կապվում ժողովրդի նորագույն վերելքի հետ, հայտնաբերում նոր ժամանակների հատկանիշներն ու գեղեցկությունը։ Այս հին ու տառապած հողի վրա նա տեսնում էր ժողովրդական ոգու բոցավառումը, մահամերձ բարդու և ժողովրդի վերածնունդը՝ կապված սոցիալիստական հեղափոխության հետ։ Անշուշտ մյուս պոետները ևս գիտակցում էին այդ մեծ անցան նշանակությունը, բայց Զարենցը այդ բոլորը պատկե-

րում է խոր և անկեղծ զգացումով, գեղեցիկ սիմվոլներով, դրամատիկ խորքով և մտքի թոփշքով։

Եվ արդեն մոտենում էր մանգաղը։ Մեր երկրի սրբազն բարդուն, Որ կանգուն էր դեռ ցուրտ ու պաղ Արարատյան դաշտում, — երբ մրրիկ մի ուրիշ, փրկարար Շառաւեց Հյուսիսից կենսաբեր— եվ գարնան գետի պես վարար Ողողեց լեռնաշխարհը մեր—

Զարենցը երգում է երկրի նոր բախտի երգը, ազգային հապարտությունը, ոգեկան վերածնունդը և թոփշքը, լսում է նոր կյանքի մեղեղիները, տեսնում մահվան կացնից ազատված սրբազն բարդին, նոր վարարած գետերն ու հասուն արտերը։

Մեր ոգին, ոգին նաիրյան,
Ով գիտեր լոկ մորմոք ու լաց—
Առաջին անգամ թեարաց
Սավառնեց աշխարհում համայն,—
Մռացած իր մորմոքը ունայն,
Իր բույնը թողած այն խեղճ—
Սավառնեց ճիգով մի ահեղ
Փեպի աշխարհը լայնի—

Այս պոեմը, որի մեջ այնքան պայծառ զգացում և խոհ կա երկրի առօրյայի մասին, նույն ժամանակ Հայաստանի, հայ երգի, ոգու, բարբառի և ինքնության, գալիքի ուղիների բանաստեղծական-փիլիսոփայական իմաստավորումներից մեկն է։

Եվ կառչի թող հիմա մեր երգը
Մեր բարդու բարձրաբերձ ընին,
Որ կենող աշխարհի համերգում
Խնքնահուն նվազներ ծնի, —
Որ հավելա ապրի աշխարհում
Օ՛, նո՞րք, քո ցնորքը բուրյան, —
Այս թոն' լը մեր լայնահուն
Եվ բարբառը այս նաիրյան...

Բայց այս բոլորի հետ միասին, մի բանի պոեմների մեջ կան նաև հակասություններ, վիճելի հայացքներ, բարդ էշեր, որոնք կարոտ են ներհում մեկնաբանության։ 30-ական թվա-

կաներին, բոլորովին ուրիշ դիրքից, այդ պոեմները անվերապահ խարազանվել են ձախերի կողմից՝ խմբակալին նկատառումներով։ Այսօր էլ, ահա, նույն պոեմները անվերապահ գովերգվում են։ Ընդ որում, երկու գեղքում էլ, առաջին դեպքում շարամտորեն, երկրորդ գեղքում՝ պարզապես հանճարի նկատմամբ տածած սիրուց և ոգևորությունից, անտեսվում են երկերի բուն արժանիքները, ներքին շերտերը և գաղափարական որոշ նրբությունները։

Բնավ շպետք է ծայրահեղության մեջ ընկնել. սոսկ ոգեգորությունը լավ խորհրդատու չէ։ Զարենցի ոչ բոլոր մտքերը, ոչ բոլոր դատողությունները կարելի է համարել վերջնական ջշմարտություն։ Թրքան էլ ջանքեր թափվեն «Գիրք ճանապարհին» անվերտապահորեն անսփառ համարելու ուղղությամբ, այսօր ոչ չկ կարող բաժանել Զարենցի որոշ գարձիքները՝ Հայոց հեռու և մոտիկ անցյալի մասին։ Չի եղել մեր քայլը պղնձյա, մեր գայլը՝ նիհար, կողերը քրի, խորշակյալ, անդուռ Արարատյան դաշտում ոռնացել է անձուկ իր տառապանքը, անասնական իր քաղցը, և ոռնոցը նրա դարձել է հիմնը մեր անարձագանք—ու դարերով հնչել մեր պատմության վրա։ Արքաները եղել են անժողովուրդ ու գահազուրկ, առասպելյալ հայկեր ու տրդատներ բազում, իշխաններ անփառունակ, ֆեոդալներ շվայտ, բոլորը՝ առասպելից մինչև նաբագույն գար, մինչև Մինաս վարդապետ, Խորայել Օրի, օտար խաբույններից հայցել են ոգու կրակ, իսկ պատմական տղջ ճանապարհը անխոհ է ու անզազափար։ Ահա՝ հայոց ճանապարհի մասին հյուսված շարենցյան տեսակետներից մեկը։

Ապա առաջնորդել են մեզ տարիներ երկար Արքաներ անժողովուրդ և գահազուրկ,
Որոնց գամբը՝ մեր հին մատյաններում երգած՝
ծղել է եղիություն ու քննություն քսու—
Օ, դուք, մեր վազեմի առաջնորդներ,
Առասպելյալ Հայկեր ու Տրդատներ բազում,
Իշխաններ անփառունակ, մին բզենքի ճորտեր,
Արքաներ անժողովուրդ ու գահազուրկի,—
Դուք, որ դարեր երկար, հազարամյակներ,
Նորուների պես անկերպարաներ
Ապրել եք ու կանգնել օդի ապարանքներ,
Թաւար խարույներից հայցել ոգու կրակ։

Այսպիսի դառնությամբ է նա խոսում ողջ անցյալի մասին, հերքելով ողջ ճանապարհը։

Բայց ուղին մեր եղել է միշտ մթին,
ծղել է անսպուտ ու անփառնակ,
Տարածվել է անբոց ու անծպիռ՝
Ուրիշների փայլով շարունակ
Շառագունված—որքան, որքան աղետափոր...

Այսօր ո՞վ կարող է համաձայնվել այս տեսակետին, ինքը՝ Զարենցը, խաղաղ պահին կարո՞ղ էր պնդել կամ հյուսել այս տողերը և կամ՝ այնքան ուցիոնալիստական եղանակով վերածել ու տեսակետների վերածել հայոց հարուստ, մեծ, հյութեղի պառսը Ժիտումն ակնհայտ է։ Եղիշե Զարենցը շափազանց հստակ, շափազանց կրուտ, իրոք հերքում է մեր փազանց հստակ, շափազանց կրուտ, իրոք հոգուր ու մշակութային նվաճումները։ Ընդ որում՝ Ժիտումն կիրքը երբեմն բարձրակում է արտակարգ լարման ու ներքին զորության, Բայց այս դեպքում ինչպես բացատրել այս տեսակետների ծնունդը չէ՝ որ հենց Զարենցը, ամենից առաջ Զարենցը այնքան խոր էր զգում մեր պատմության ներքին տրամարանությունը...

Մեծ բանաստեղծը քաղցրավուն շնորհների կարիք մի զգում։ Պատմության դատաստանի առջև նա կանգնած է հզոր կերպարանքով և բարդ աշխարհով, լույսով ու ստվերով։ Ավելի շուտ նա մեծ դրամայի բանաստեղծ էր, բարդ անհատականություն՝ դրամատիկ խոր մտածողությամբ, որի վրա, անտարակույս, ժամանակի հակասությունները թողել են որոշ անխոսափելի հետքեր։

Ինչպես հայտնի է, բանաստեղծությունը բաղկացած է ոչ թե մերկ տեսակետներից, այլ ներքին թաքուն իմաստներից, ունի յոթ հատակ, յոթ շերտ։ Ամենից առաջ ասենք, որ մի շարք երկերում Զարենցն ստեղծում էր հայ ժողովրդի տառապանքի, քաղաքական անկումների պատմությունը, որը ինքնին ժամանակի համար շատ համարձակ երևությ էր։ Օրինակ, «Մահվան տեսիլը» սկզբից մինչև վերջ հայ ազգային իղեալների կործանման և համաժողովրդական ողբերգության պատմությունն է, սոսկումների, զարհուրանքների պատմությունը, որն ինքնին կամ թե ակամա ժողովրդին կապում էր մոտիկ

անցյալի հետ. նույնը կարելի է տեսնել նաև «Պատմության քառութիներով» պոեմի մեջ:

Երկրորդ կարևոր հատկանիշը պետք է Փինտրել երկերի ներքին պաթոսի, մտքի ուղղվածության և աստիճանի մեջ, այսինքն՝ Հոգեբանական-գեղարվեստական ողջ տարերքի ոլորտում: Այնուամենայնիվ, ժխտական ողջ պաթոսի և մեղանշումների հետ միասին այս երկերը գերում են ընթերցողին: Իսկ թե ինչո՞ւ պետք է նայել գեղարվեստական երկի ներքին շերտերին:

Ե. Զարենցի արտահայտած տեսակետների մասին մենք արդեն խոսեցինք: Դրանք շատ մերկ են և շատ հստակ: Իսկ մնացածը, որը, ինչպես հայտնի է, արվեստի համար ունի գերագույն արժեք, իր բուն նշանակությամբ և իմաստով շատ էլ շուտ չի հանձնվում ընթերցողին: Ամբողջ հարցն այն է, որ Զարենցի այդ երեսի մեջ վառվում է մի ահույի ցավ, ողբերգական մի երգեհ՝ մեր ժողովրդի մեծազույն կորուստների, ծախողութեանի, սայրակումների, նույսերի ու պատրանների կործանման համար: Այս մեծ ցավի, ինենաժրխտման եռանդի, ողբերգական շեշտերի տակ բարենված է զարմանալի սեր, որը ուղիղ գծով կապվում է Մովսես Խորենացու, Աբովյանի, Սիհամանքոյի հետ: Գէ՞ որ այդ ժխտման բացառիկ կրքի և զառնության տակ ծվարում էր մի ուրիշ միտք. ինչո՞ւ ենք մենք եղել խեղճ, ինչի՞ց են զալիս անկումները, ինչո՞ւ հզոր, ուժեղ և զորեղ շենք անցել մեր դարավոր ուղին: Այս հարցադրման հոգեբանական հիմքերը հասկանալի են: Զարենցին ոզերելու հիշ բան էր տալիս մոտիկ անցյալը: Զարելու, կոտորած, բգկաված երեխաներ, կանայք, ծերութիներ, ամայացած ծենդավայր և հայրենիք: Իսկ եռ օտերին, բուն ծաղկման և խաղաղ աշխատանի մքնոյթում, լենինան հեղափոխական բարձր սկզբունքներին հակառակ, սկսվել էր հալածանքը ազգային ավանդների, սոցիալիստական նվաճումների, հեղափոխական երգիշների դեմ: Դա որոշ մոայլ շեշտեր էր հաղորդում պատմության մասին գրած մի ժանի երկերի: Զարենցին խոր ցավ են պատճառում ծանր ճանապարհին տված մեր ժողովրդի բարոյական ու ֆիզիկական կորուստները:

Ժխտելով միշնադարյան «Հանձարեղ», բայց «Ժամատարա-

րո դպիրների» վաստակը («Գովք խաղողի, զինու և գեղեցիկ դպրության»), նա հենց մի տողով բացում է իր ցավի բուն պատճառը: Նրանք «Մառ բարբառով դպրության մութ» կոփել են «սարուկ մի ժողովուրդ»: «Պատմության քառութիներով» պոեմի մեջ Զարենցը գարձյալ հիշում է այդ խեղճությունն ու ստրկությունը.

Փոքրիկ, ողորմեկի խեղճ—
Երենց մութ պատերում մի բուռ ոսկի պահած,
Եվ ո՞չ մի, ո՞չ մի մեխ,—
Ո՞չ մի կտոր երկաթ, կամ անագի շաղախ,
Կամ մարմարյա մի սյուն, կամ թևկուզ գիր,
Որ փորձության պահին անձրեներից մխոր
Եվ իր ծուխը խառներ ըմբռստության երգին...

Ահա գաղտնիքը, Հոգեկան այրման բուն պատճառը: Զարենցի ստեղծագործության մեջ պետք է գնահատվի այս հիմքը, այս ներքին տառապանքը, երբեմն մխացող, երբեմն հրդեհվող սիրտը:

Այստեղից ծագում է նաև մյուս կարևոր հատկանիշը: Զարենցը գալիք ընթերցողի հետ զրուց էր բացում ազգային արժանապատվության, ուժի, հզորության մասին, հուշում ու պատգամում էր ինչ-որ կարևոր բան: Որոշ տուրք տալով ժամանակին իշխող մոլոր տեսակետներին, ավելի ճիշտ՝ սրամքնապես ինչ-որ տեղ նահանջելով պատմական նշմարագրագունդը, ներքնապես Զարենցը անդադրում մաքառում էր անցյալի տիպու ժառանգության, անընդեղ անկումների դեմ: Ինչպես ուղիուպեմներում, «Երկիր նահիրի» վեպում, «Գանգրահեր տղայում», այնպես էլ նոր գրքի պոեմներում, տաղերում և խորհուրդներում բարձրանում է հայկական նոր սերունդների, սոցիալիստական դարաշրջանի հայ մարդու հապարտության և արժանապատվության, հավատի և լուսավոր հույսերի, կենսական լիցքերի ալիքը: Ուժեւ արտահայտված Հոգեբանական ապահովությունը մեջ պետք է տեսնել կյանքի արձագանքը, որը խոր պատմականություն է տալիս ստեղծագործությանը, արտացոլում է պատմական-քաղաքական անցքերի ուղղակի և խոր ագդեցությունը՝ սերունդների ներաշխարհի վրա:

Որոշ հակասություններով և մեղանշումներով հանդերձ,

ահա այսպիսի հարստություն և թանկագին նստվածքներ ունի Զարենցի ստեղծագործությունը։ Հեղինակային այս դրաման, խառն ու շիկացած ապրումները, դառնությունն ու կոկիծը անհամեմատ ավելի ուժեղ, հարուստ, բարդ և ազնիվ, գրեթե տիտանական ներքինով են ներկայացնում Զարենցին, քան գրականագիտության ստեղծած բարեհոգի ու հեշտին սիեման՝ սկի և ճերմակի հայտնի հակադրությամբ։ Գեղարվեստական այս ներքին ճշմարտության մեջ երևում է նաև գրողի բարոյական նկարագիրը և խորհրդավոր տեսողությունը։

ՏԱՂԵՐԻ ԵՎ ԽՈՐՃՈՒՐՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Շատ երկերում, «Գիրք իմացության», «Ալրվեստ քերթության», «Տաղեր և խորհուրդներ» շարքերում և զանազան բանաստեղծությունների մեջ Զարենցը զրոյց է բացում ընթերցողի հետ, դրսմորելով ոգու պայծառության, գեղեցիկի։ արվեստի, կյանքի ու հեռանկարների զգացողություն և իմացության ուժ, փիլիսոփայական խորք։ «Գիրք ճանապարհին» գրական-պատմական բացառիկ երևույթ է, որը հայ բանաստեղծությանը բերում է վերլուծական խորք, իմացության և բանականության զորություն, բացում նոր հորիզոն։ Այս առումով նրա համար աղբյուր և օրինակ են եղել հայոց միշտադարյան բանաստեղծությունը և Թումանյանը։

Ե. Զարենցը բանաստեղծական լեզվով բազմիցս խոսում է ոգու այդ սրբազան ու ոսկյա ակունքների մասին՝ ընդգծելով հայոց անցյալի ժառանգորդը դառնալու խնդիրը։ «Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին» պայծառ և իմաստուն երգի մեջ նա մի կողմից խոսում է հայոց մշակույթի մեծ թոփչի մասին, մյուս կողմից՝ հատուկ թանձրացնում իր տենչը՝ դառնալու աշխարհում անջինչ հետք թողած այդ արվեստի ժառանգորդը։

ԲՌԺ ներշնչեք իմ երդին, որ ընթացքը եր լւեզի։

Ար ժառանգորդ դառնամ հանճարեղ արվեստի ձեր ոսկյա։

Ուրիշ խոսքով, նա խոյք է զգում հայոց ճարտարապետության, շինարար ծիրքի և քննթության համամարդկային բնույթը։ Եոր օրերի բանաստեղծը երկյուղածությամբ, որպես աշա-

կերտ և ժառանգորդ դիմում է անցյալի վարպետներին; իր գրքի համար էական համարելով նրանց հոգու լույսի ցոլքը, նրանց կնիքը և շանքը։

Մի թի իմ մեջ է այսօր արթնացել հանճարը ձեր մեգ։ Ե՞ս ու մաշտավիղն արդյոք ձեր, ո՞վ հանճարներ մեր մեռած։ Թո՞ղ հուրհա իմ գրքում ձեր ոգու ցոլքը լուսե, թո՞ղ երգերում իմ այսօր, խոսքերում իմ—ձեր շանքը եռա՛— Ո՞վ մեր մեռած վարպետներ, իմ թախանձանքը լս՛ք։— Ձեր անմահ կնիքը դրե՛ք—իմ անմար երգերի վրա...»

Վերջապես, միջնադարյան հումանիստական արվեստի և միասին նրան հիացմունք, մինչև իսկ որոշ տագնապ էր պատմառում թումանյանի կյանքն ու պոեզիան, անարատ, իմաստում շառայլությունը։

Թումանյանի երգերը
Կարողալիս՝ միշտ ես
Միտք եմ անում, թե արդյոք
Կարո՞ղ եմ ան էլ
Կնել այդքան իմաստուն,
Երբ լինեմ ձեր...»

Կարողանա՞մ պիտի ես
Արդյոք, ինչպես նա,
Այդքան հանգիստ ընդունել
Թե՛ անկում, թե՛ մահ։—
Եա՞ղ սալ ձեռքով լիառատ
Երգեր ու գանձեր,
Իմաստությամբ անարատ
Երբ լինեմ Փեր...»

Հայ ժողովրդի պատմական ճանապարհի և հոգեկան աշխարհի փիլիսոփայությունը ստեղծելիս, ավելի ճիշտ՝ իր ոգու, տագնապների ու երազների պատկերը ստեղծելիս, նրա մտքին, թեերին, բանականության ճախրին էապես զորություն ու լիցքեր են տվել այն մեծերը, որոնց վիճակվել է դառնալ ազգացին հոգեոր հասակի և բախտի տարեգիրներ։ Դա միանգամայն օրինաշախ երևույթ էր, կապված ազգացին և անհատական խառնվածքների անխուսափելի և անհրաժեշտ փոխանցումների ու հոգերանության տիրական ընթացքի հետո եվ սակայն զա բնավ չի ժխտում օտար աղերսների նպաստ-

ների նշանակությունը՝ նոր գրքի և հեղինակային նոր ներշնուռմների համար Միայն թե անհրաժեշտ է էականը զանազան երկրորդականից, տեսնել ազգային արվեստի զարգացման հաջորդականությունը:

Մեր խնդրից գուրս է այս հարցի մանրամասն քննությունը: Ասենք միայն, որ նոր գրքում ակնհայտ են Խորենացու և Նարեկացու հետ ոճական, անգամ իմաստային որոշ նմանություններ: Բացի այդ՝ միջնադարյան բանաստեղծությունը, եթե կարելի է այսպես ասել, ամբողջության մեջ մի զարմանալի կենդանի գրուց է բնության, գարնան, վարդի ու սոխակի, կյանքի ու մահվան, սիրո ու մերժման մասին: Այդ բանաստեղծությունը երբեմն զարմանալի վճիռ ու անազարտ, երբեմն խորոնկ ու բարդ խոսակցություն է, հոգեշահ բան՝ աստծու աշխարհի շուրջը, սիրո տարփագին զգացում, խորհուրդ ու խրատ, կենսական ու հոգեսոր պատգամ՝ ուղղված մարդկանց: Միջնադարի բանաստեղծության մեջ շատ բան կարելի է տեսնել... Նարեկացու խոռվյալ ոգին, Ֆրիկի դառը բողոքն ու մոռայլ խրատականը՝ ճակատագրի մասին, Երզնկացու կենսական պատգամները, խենթացած թլկուրանցու սանձազերծ բացատրությունը սիրո և երջանկության մասին: Ուրիշ խոսքով՝ զարաշրջանի կրոնական կապանքներից ազատագրված մարդը բազմաթիվ տաղեր է հյուսել, խրատներ ու պատգամներ թողել հետնորդներին, հատկապես եկվորներին: Հիշենք տասնյակ բանաստեղծություններ՝ լավ ու վատի, տգեղի ու գեղեցիկի, ապրողների ու մեռյալների, հոգու և մարմնի, բախտի ու դժբախտության, ճամփորդների ու պանդիտների մասին, որոնք ունեն նաև կրթիչ նպատակ:

Գրիգոր Նարեկացու «Մատայանը...», հուզական զիթիսարի հարստության հետ միասին, աստծու հետ ունեցած գրուցի և հոգեմարտի մեջ, ի վերջո, հետապնդում է մի մեծ նպատակ՝ ազատագրել մարդուն արատներից, մեղքերից, ճակատագրի և գործի սե հետքերից, բացել նրա առջև կատարելության և գեղեցկության հավերժական ուղին: Դա մարդու հոգևոր շարժման, զգացումների, բարոյախոսության, իմացական աշխարհի ու երազների մի քննություն էր՝ հանճարեղ կուռօւմներով, որը հսկայական գրգիռներ էր տալիս երիտասարդ սերնդի հետ:

Քայլակներում և բանաստեղծություններում անվերջ խոսք բացում մարդու նանապարհի, աշխարհի, մարդու բարոյական և իմացական շնորհների շուրջ, եղբայրներին, նամիտողներին, երիտասարդներին ու մանուկներին նշում բարոյական գեղեցկության, իմաստուն գործի ու վարքի, իմացական հարստության ուղին: «Աշխարհ է կանալ մարդեր, մենք ի մէջն ենք կաբուծագեր», — գեղեցիկ բնութագրից հետո նա ստիպում է ճամփորդ-ընթերցողին մտածել ճանապարհի մասին, խորհել, թե որտեղից է եկել աշխարհ և ո՞ւր է գնում: Նա, ի խրատ աշխարհականաց, տալիս է խորհուրդներ, տարածում հոգեսոր «սերմ բարի», բացում զիտուրյան և ուսման բացառիկ նշանակությունը՝ պատանի հոգու ձևավորման ճանապարհին.

Բայց կամին ես խոռնել բանի մի բանի,
Լսեցեք եղբայրք և որդիք սիրելի,
Տզայց միտք զերթ մոմ կակուղ կու լինի,
Մատէնահար դիր զուսումն, որ շուտով նըստի:
Զերթ զուփի է մատզաշ, որ հեշտ ոլորի,
Հայելի է պայծառ, որ ժանգ նա շունի,
Զերթ ուսի է խալսս, որ այս շերեի,
Զերթ շուհար ակն է լալ, որ լույ կու ցաթի...

Միջնադարում ծաղկում է այս իմաստուն խորհուրդն ու խրատը՝ զիտության և իմացության ուժի մասին, ցայտուն ընդգծվում է բանականության դերը՝ մարդկային բարոյականության ասպարեզում, որը ուրույն արձագանք է գտնում հասարակության մեջ, «եղբայրների» շրջանում:

Կոստանդին Երզնկացին իր խորհուրդներին տալիս է շատ գեղեցիկ տարագ, բայց նա էլ ունի իր նպատակը, իր խորհուրդը, նա էլ է աշխարհի, բնության, գարնան, արեգական լույսի մասին խոսք բացում երիտասարդ սերնդի հետ:

Եկայր մանկութի պաղանձին
Շաղկտուքըն ի մէջ վըրան զարնունք,
Ղումըն երգ մեզ եղանակ
Թ' այսօր եղի պայծառ գարուն:

Ահա այս պայծառ խորհրդի հետ միասին, անշուշտ, այլաբանորեն նա առանձին պայծառությամբ գրուց է բացում

Հոգիոր լույսի, աստվածային արեգական լույսի մասին,
որ շնորհանում ոմանք՝ իրենց երազ քնի մեջ.

Ոմանք են անողի աշքերով կուր և անիմայ,
Որ շնորհանում ոմանք՝ իրենց երազ քնի մեջ,
եւար կենօթ կենան ու զմբաղին յերազ քնոյ,
Չունքն մասն լուսոյ լարեգականն ի մեծ բուռյեա

Հոգիաննես թլկուրանցուն էլ հուզում է ծերության և շա-
հելության, աշնան և գարնան հավիտյան հաջորդականու-
թյան խնդիրը.

Աշուն նրանք է ծերութեան,
Մերք մեռանին և անցնին գնան,
Պարտ է մեզ սպասել անանցն,
Որ հավիտեան է անվախճան,
Ձև հանապազ օրն է գարնան

Աշխարհիկ խենթությամբ բռնված այս բանաստեղծը
նույնպես ունեցել է իր խաղաղ մտորումների ու տանչող խո-
հերի պահերը: Նրան հուզել է և կյանքի, և մահվան խնդի-
րը. գեղեցիկ պատկերով նա ժամանակակից ու գալիք ըն-
թերցողին պարզել է հավերժականի ցավագին գաղտնիքը,
մահվան ուժը.

... Արծիւ ես, յերագ թըռչիս,
Լայնափոք զթեզդ տարածեա,
Զինչ աշխարհ ըրզոր մանուկ
Ե թեկի ծայրն ծրարես...

Խորհուրդների ու խրատների, պատգամների ու կենսա-
միջիուրիայության այս թանձր մթնոլորտում, բազում ձայ-
ների մեջ առանձնանում է մեծ տառապյալ Ֆրիկի մոռալ
կասկածներով տոգորված ձայնը աշխարհի մասին: Շատ խոր
և գեղեցիկ է նա բնութագրում արատներով բեռնավոր աշ-
խարհը և նրա մեջ դեգերող մարդուն.

Այս կյանքը գուր է և խաւար,
Եւ ի ծեսինքդ լապտեր շունիս...

Սա հանճարեղ միտք է ու պատկեր, անարդար կյանքի և
տառապյալ ու որոնող մարդու ուժեղ հակադրություն:
Թղթերգական խտացմանը հետևում է նաև Ֆրիկի խոր-

ձուդդք՝ գուրս գալ այդ աշխարհից, որն ունի ճարտար և
զարդարում դարաններ ու թափստոցներ, փախչել խավար,
դերեզմանային կյանքից.

Եւ ելանես դու հանց գնա,
Որ յետ յաշխարհս այլ չի նայիս...

Մի աւրիշ տեղ, գարձյալ աշխարհը բնութագրելիս նա
անուամ է շատ իմաստալից համեմատություն.

Այս կեանքս է ժանդու պղինձ, որ ներքէ հողին կու փրափ...

Եվ անվերջ իր «հոգեշահ» խրատներում ու տազերում նա
զիմում է երիտասարդ սերնդին, ապրող և ճանապարհ գնա-
ցող մարդկանց, ռանօրին և անառակ երիտասարդներին,
մանուկներին, եղբայրներին, նշելով նրանց իմաստության
ճանապարհ.

Հաղար թե մանուի ես գեա,
Ես կամեմ դու քեզ ճար արա,

• • • • •
Թե դու ի սրտանց քննես,
Այս կենցաղս իրաւ խարող է,
Պահի մը խնդրալ կու տայ,
Քայց ես ի լաց կու պահէ:

Կյանքի ու մարդու այսպիսի ողբերգական հակադրություն
էին նաև Սայաթ-Նովայի տառապանքից ծնված տաղերը.

Աշխարհս մը ժանշարա է, թաղերումն բեկարիլ իմ.
Վետիկ արվողըն կու խոսցմի, — գաղերումն բեկարիլ իմ.

Զպետք է, իհարկե, կարծել, թե միջնադարյան պողեղա-
յում այս մոռալ շեշտերը, կյանքի վերլուծման և ժիտման
ծանր խոհերը միակն են: Այստեղ ծաղկում է նաև կենսամի-
րության, առաքինությունների և գեղեցկության փիլիսոփայա-
կան իմաստավորումը: Այսպես են մտածում, այս պատգամն
են բերում Կոստանդին Երզնկացին, Գրիգորիս Աղթամարցին,
Նաղաջ Հովնաթանը: Դիմելով նորահաս «հանճարեղ» մա-
նուկներին, Հովնաթանը աշխարհը համարում է «նոր բուրտա-
տան» և խնդրում է այդ բուրտատանը մտնողներին՝ հիշել
իրեն: Կյանքը նա համարում է մի ուրախ խրախճանք և հոր-
իրեն:

դորում է. «Բարձր ճայնով բարբառեցեք, ճաշակեցեք կաքավ ուլորու»:

Ուրիշ խոսքով՝ միջնադարյան տաղերի ու խորհուրդների մեջ կյանքը գնահատվում է տարբեր կողմերից, աշխարհի բնութագիրը ստանում է բազմակերպություն:

Այսպես, ահա, շեղվելով կրոնական-բարոյագիտական դոգմաներից, միջնադարի հայ բանաստեղծերը մի լայն ուլի են բացել կենսափիլիստիվայրյան, իմացուրյան, կյանքի ժննաւրյան համար: Անմիջապես նկատի ունենալով ներկա և զայիք սերունդներին, ավելի ճիշտ, անմիջապես գրուց բացելով նրանց հետ, խոսել են մարդու բարոյական կեցվածքի, գիտուրյան, իմացուրյան, ուաման, հոգու լույսի, կյանքի գեղիքի ու մոռայլ կողմերի, նակատագրի հարավոփախ բնույթի, մանֆան, ծերուրյան, աշնան ու գարնան, սիրո ու ցավի մասին: Նրանք ամեն դեպքում հիշել են հասցեատիրոջը, եղբայրներին, մանուկներին, երիտասարդներին ու պատանիներին:

Իմացության այս պոեզիայի մեջ լսվում է հեռավոր դարերի հումանիստների տառապանքի և խղճի ազնիվ ճայնը, կյանքի ցավերի արձագանքը, որն իր ժամանակին պատկանելու հետ միասին, իհարկե, այսօր էլ պահպանում է հարազատ, մտերիմ շեշտեր, նրբորեն բերում է հոգեռու կատարելության, լույսի, գեղեցկուրյան, մարդու վերելի և արատներից ձերբագատվելու երազները:

Զարենցը կանգնած էր այսպիսի անբավ հարստության առջև, ավելի ճիշտ, կյանքի վերջին շրջանում նա բնական մղումով և ստեղծագործական բարդ հղացումների թելադրանքով որոնում էր հաջունի հոգեռոր գանձարանները, «առեղծվածները», դարերի պատգամներն ու խորհուրդները: Եվ ի՞նչ խոսք, որպես ակունք, պետք էր տեսնել հայկական երկու մեծ դարաշրջանների միջև անտես ու բարուն ձեւավորված այս դարաշրջանների աղերսը: Դա ինչ-որ կարեռ լիցքեր էր տակի բամանակակից մեծ բանաստեղծին, որը հյուսում էր իր ժողովրդի և իր իսկ ճանապարհի ամենաբարդ պատմությունը, մասնավոր շեշտ զնելով նաև գալիքի վրա:

Բայց այս բաղադրիչը, այս ազգակը առանձին իմաստ է ստանում և երանգավորվում միայն գլխավոր լիցքերի, հայկական նորագույն կյանքի և նորագույն բանաստեղծի այրվող ներաշխարհի շնորհիվ: Զարենցը պատասխանում էր իր հրացան գլխավոր հարցերին: բանաստեղծը հոգեբանական ուրույն վիճակի մեջ էր, որը ստիպում էր նրան կամուշ նետել դեպի հայոց անցյալն ու հայոց գալիքը:

Եվ, ահա, հենց այս հանգամանքի շնորհիվ, ժառանգելով անցյալի մեծերին հուզող մի շարք հարցեր ու թեմաներ, նայուրովի շարունակում է ավանդները՝ առաջ մղելով հայ ժողովրդի հազարամյա պոեզիայի կենսափիլիստիվայությունը, մագլիքի մարդկանց հետ խոսելով իր ապրած կյանքի, մագալիքի գարգանց հասկանական արարտքի, ազգային-զաքացիական խնդիրը, հասարակական պարտքի, ազգային-քաղաքական շահագրգոռությունների տեսակարար կշիռը:

Զարենցը ինչ-որ կողմերով դառնում է դեպի անցյալի ավանդները, բայց միշտ մնում է իր օրերի հետ և միշտ առաջ այսում: Երբեմն «շեղվելով» իր գրքի կենտրոնական մտական հայություն է մարզու բնույթի, կենացացումից, նա տենդագին խոսում է մարզու բնույթի, կենացացինից, բարոյական նկարագրի, հիվանդության ու երազների, ցաղի, բարոյական նկարագրի, հիվանդության ու երազների, մարդու և բնության առնչության, հիշատակի և գործի, խիզախության և բարու շուրջ, հյուսում տաղեր մարդկային հոգու, կյանքի և գալիքի մասին: Նա իր սրբազն պարտքն է համարում հոգեշահ զրուց բացել, նվիրական խոսք ասել գանգրահեր տղաներին, ապագայի պատասխաներին, եկվորդական ներին, խիզախ ճանապարհորդին: Նա բացում է կյանքի, երազների ու կարուտների մի անծայր հորիզոն, իր բախտի դժվար պահին սիրո, ուժի և գեղեցկության զգացումներ սերմանելով գալիք սերունդների համար:

ԹԵԵ զալիս եք գուրք ափքների և մատն և աստղերի՝
Զեր ճանապարհին, ձեր կոչումին, ձեր ընթացքին անգետ—
Բայց լինելու է ձեր երթը այս զժին ու լուրջ ափերին
Արևներից, աստղերից ց ավելի տրուխ ու բարձրականնեղ...

Նկվորների հետ խոսելիս, հավատարիմ իր բանաստեղծական և քաղաքական սկզբունքին, Զարենցը շատ անկեղծ է, նա բաց սրտով գալիքին ներկայացնում է իր դարի պատկերը, չմոռանալով կյանքի ծանրանիստ ընթացքը, հակամությունները, բարգավաճանները, մարդկանց անկարելի խոյանքը և տքնությանը հինավորց աշխարհը երջանիկ գարձնելու համար։ «Մեր տունը», «մեր հինավորց պարտեզը», ուր ամեն վայրկյան մտնում են նորերը, գեռ բազմաթիվ անբերք ճյուղեր ունի։ Այս պարտեզին բնավ էլ երկնային ցողը չի իշնում իբրև խնդություն, նա գեռ խառն է ու ցրիվ, ամեն բարիք և գեղեցկություն ստեղծվում է աշխատանքով ու լարաւմավ։

Արյամիք ու գնութեամբ է, որ դուրսանշյառ ճցութքը
Հանում է խափարից և նայամ լուսարցին՝
Ընծայելով կաթիլ առ կաթիլ իր գառնացին հանուլը,

Զարենցը գալիքի զեմ-դիմաց դում է ներկայի պատկերը, ընդգծում անցնող սերունդների գործի պատմական նշանակությունը, էպիկականությունը, հասարակության հոգեբանական-բարոյական լարումը գալիք սերնդի երշանկության համար։ Գործի այս տիտանական ընկալման շնորհիվ էլ նա պայծառ է նայում առաջ և անեզրական երշանկություն գուշակում երկրի գալիքի համար։ Ուշադրություն դարձրեք էլությանը. Եղիշե Զարենցն առհասարակ մարդկային գեղեցկությունը տեսնում է գալիքի նկատմամբ դրսեսորդ անձնազոհության, գործի և հիշտատակի մեջ, մի տեսակ հոգեբանական զգիա ստեղծում անցնայի, ներկայի և գալիքի միջև

Ահա հենց այս ամենի մեջ շափազանց վառ է գրւեաբ-
վում բանաստեղծի հոգեկան հարստությունը և պայծառա-
տեսությունը: Նա չոր խրատ ու խորհուրդ շի տալիս: Բնավէ
Ամենուր երեսում են բանաստեղծի հոգին, սերը, տաֆնապը,
լայն սիրտը, իմաստուն, թափանցող միտքը, ամենուր պատ-
կերին խառնվում է օրերի հոգեբանական բազադրիչը: Դա

լայն առումով հոգեբանական և հոգեշահ զրուցյ է՝ ուղղված գալիք դարերին։ Նա զգում է ապագայի պարմանիների կյանքի գեղեցկությունը, մեղսական սերը, համամարդկային իմաստ դնում իր խորհրդի մեջ, այսինքն՝ հայտնաբերում կյանքի առեղծվածները։ Եվ թեև թախիծ էր բարդել կյանքը նրա հոգոն, բայց տաղերին ցոչք են տալիս արևային տրամադրությունները։

**Մեզ բոլորին համար սահմանված է վերուստ
Մի քննչառույր գարուն անվերադարձ,
Երբ յուրաքանչյուր զայրէյան և գուա է, և կարուտ,
Եվ դաշտ է արեանիստ, և խավարով հղի մի անտառ.
Եթ դու, որ մտնելու ես արեային քո դաշտը՝
Քաղելու վարդեր ու մանուշակներ—
Փառք քեզ, եթե լինես օրերի հետ դաշն
Եթ օրերիդ հանգեց երկաթյա քղանցք շագնես:**

Նուրբ և խոր է նա խոսում նաև հիվանդների ժամանակ:
Տարրեր են ոգու հիվանդությունը և անեղության ու հրզի
կարությունը Մեռնողները պետք է մեռնեն, որպեսզի սուզգող-
ների նման շկախվեն ապրողների ու մաքառողների ոտքերից
և քաշեն դեպի անդունք: Բայց նա ներբռող է կարդում ըմբռուտ-
ոգիներին, կարությ տիրություն ելիվանդությանը բռնված-
եւը:

Եվ թեկուզ լինում եք դոք հրբեմն ծանրաբեռնված
Կարուսով, որ նման է հրիվանդության, —
Այս տողերով, վսեմ այս գեղով կազդորված՝
Դիմեցեց ք դափի անհայտ հեռուները — և հեռուները
Ճեղ անմահությունն կտան...

Մնալու են ռտիեզերքի զարկին անհաղորդ, չեն ճաշակելու բույրեր, չեն լսելու ձայներ: Անշուշտ, նույնն է մարդկանց բախտը, հավերժ է այս տիրությունը: Բայց այս թախծոտ տողերից կրկին հառնում է հիշատակը, գործը, որը տարբեր է բոլորի մոտ: Բանաստեղծական ազդեցիկ տողերից հյուսվում է տիեզերական օրենքն ու կորուստների տիրությունը.

Այս, մոխրանում են օրե՛րը, մոխրանում են աստղե՛րը, արևնե՛րն են Կապոյս երկնում հանգուած հավերժաբար և մոխրանում,—
Մոխրանում է զարո՞նց, մոխրանում են կանաչ տիրենե՛րը,
Մոխրանում են ծիլե՛րը շժած և զարդե՛րը զաման,
և ծաղիկնե՞րն անզամ տիրանուն...

Զարենցն ստեղծում է թախծի և կորստյան ցավի հոգեբանական մթնոլորտ, որի մեջ զգում ես նաև անձնական տիրության շունչը... Եվ այս մթնոլորտում նա առաջ է մղում անձնական և համամարդկային իր խոհը՝ հիշատակի մասին: Որտեղի՞ց է սերում հիշատակը. արդյոք լույսերից, հուրերից անշեղ.

Հիշատակը սերում է գործերից.— Հիշատակը մշուշ է.
Որ բարձրանում է էփող շրերից, բայց մնում է ինքը—անմեռ:

Բայց այդ հիշատակը, այդ անցյալը, մարդու գործն ու տքնությունը կապված են գալիքի հետ.

Հիշատակը ձեր անցած օրերի արձագանքն է ու ցոլքը,
ո՞վ հեռացողներ,
Նա ծրում է համախ ձեր անցած ճանապարհի փոշոտ եզրերին,
ծինելով ձեր շոգ կեսօրին՝ նա իշում է հնոտ, ինչպես ցուզը,
բայց ուրիշ վարդերի վրա, իբրև պարզ վերին...

Այս իմաստուն, թախծոտ և պայծառ զրույցի մեջ բարձրանում է դարի բաղաբացին՝ իր գործի գեղեցկությամբ և անձնական երշանկության զգացումով, բացվում է Զարենցի հոգին՝ վերջին տարիների տագնապալի խոհերով, բայց և այլասիրության պայծառ լույսով.

Հիշատակը ձեզ չի պատկանում, ինչպես որ տողերն իմ հանդուզն,
0°, ինձ շեն պատկանում, թեև եկեստ են ահա իմ գրից...
Այսպիս է շոզն է արկի ու ցոլքը մեռած աստղերի.—
Հասնում է լույսը նրանց մեզ, բայց վաղո՞ւց մոխրացած են նրանք,

Այսպես, ահա, Զարենցը ամփոփում է իր խոհերը՝ ապրած կյանքի, դարաշրջանի բաղաբացու և գալիքի մարդու մասին, ստեղծում իր սերնդի գործի, հոգու և երազների պատմությունը, իր հոգու պատմությունը՝ ցող զնելով ուրիշ վարդերի, հեռավոր ժամանակների վրա:

Ոչ մի մոայլ խոսք, դառնության ոչ մի կաթիլ: Բոլոր տաղերը ողողված են արևով, լուսավոր զգացումով և լավատեսությամբ: Թեև ինքը դառնության մեջ էր, թեև անվերջարվածներ էր կրում: Զէ՞ որ նա վերջին, գրեթե վերջին խոսքըն էր ասում հայրենի սերունդներին, բաժանման խոսքը, իսկ այդ հանգամանքը ինքնին բանաստեղծին տալիս էր անխսկ այդ հանգամանքը ինքնին բանաստեղծին տալիս էր անձնական վսեմություն, այլասիրության բացառիկ ուժ:

ՅՈՒ ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆ

Այս պահին, բոլոր տաղերի ու խորհուրդների մեջ մեզ հետաքրքրում է հատկապես մեկը՝ «Յոթ խորհուրդ գալիքի սերմնացաններին» բանաստեղծությունը: Ինչո՞ւ թվում է այս բանաստեղծության մեջ Զարենցը երևում է բուն հայությամբ, բովանդակ էությամբ, բաղաբական ըմբռյացքներով, ոգու բովանդակ էությամբ, բաղաբացին ծիրքով: Այստեղ նումներով և գալիքի հետ խոսելու բացառիկ ծիրքով: Այստեղ երևում է մարզը, բաղաբացին, երազողը, հեղափոխականն ու հայը, այստեղ երես են բարձրանում բոլոր ներքին ալեռ կոծումները: Յոթ խորհուրդը մի իմաստալի զրույց է, խորին խորհուրդդ...

Սերմնացանների կերպարին, ինչպես տեսանք որոշ սիմվոլիկ երանգավորումներով, Զարենցը անդրադարձել է դեռ 1915 թ. «Կապուտաշյա հայրենիքում»: Պոեմի այդ պատկերը մի տագնապալի սպասում է հնձի գնացած, բայց գեռ հեռուներում գտնվող սերմնացանների՝ երկրի տերերի և ստեղծողների համար: Եվ ահա նա նորից դառնում է սերմնացաններին, գրում է «Յոթ խորհուրդը»..., չորս ամիս հետո նաև գրում է «Համայնական դաշտի սերմնացանները» քնարական ընդարձակ ներողը՝ ուղղված երկրի նորագույն մշակներին, հողի աշխատավորներին:

Զարենցն անմիջապես դիմում է ժողովրդի մտածողության օգնությանը... Յոթ խորհուրդ, յոթ բուռ ցորեն և ուրիշ թյան

Նրանքներ... Քիչ հանդիպող երևույթ, հազվագեց ջարենցի ստեղծագործության մեջ: Ըստ երևույթին, դա շատ հարմար էր նյութին և հավաքական հերոսին, սերմնացանին, հողի աշխատավորին: Բայց ժողովրդական ոճավորմամբ Հանդերձ բանաստեղծությունը անհատական և հասարակական բնույթի ամենաաթանձր խտացումներից մեկն է: Բանաստեղծության մուտքը մի ներբող է «կարմիր մեր օրերին» և դիմում՝ հացեագրված գալիքի սերմնացաններին, հեռու եղբոր զիմումը՝ գալիքի ընթացքի մասին: Իսկ ըստ էության ամբողջ բանաստեղծությունը՝ յոթ խորհուրդներով, մի ծանր, լուրջ, բարդ գրույց է անցյալի, ներկայի և գալիքի մասին: Այս հանգամանքը մեզ ստիպում է քննել բոլոր յոթ խորհուրդները:

Առաջին խորհրդի մեջ Զարենցը, ժողովրդական ոճի ու ձևի հետ միասին, ժամանակակից շեցտ է Հաղորդում տողերին։ Անեղբական սերմի առաջին բուռը պետք է փռել Հայրենի գաղտերի վրա։ Թբրն ցնողը, իբրն քարիք՝ կրկնի թքաշուներին ու Տովերին...

Փոե՞ք իրեն բարիք, որ անհատնում է,
Մեր ճրկիք թոշուններին ու Հովերին,—
Թող անսահման լինի ՚նրանց խնդությունը,
Անսահման է՛ք ինչպատ տառապանքը մեր հինգ

Կարմիր օրերի քաղաքացին հանկարծ մի տողի մեջ խտացնում է երկրի պատմությունը. «Անսահման էր ինչպես տառապանքը մեր հին»: Ճողն իր վրա է վերցնում հասարակական ու հոգեբանական ծանրություն։ Եղիշե Զարենցը գրեթե բոլոր դեպքերում, մինչև անգամ ամենաբոցաշունչ հեղափոխական բանաստեղծության մեջ, չի մոռանում երկրի անսահման տառապանքը։ Դարձյալ հիշենք «Ողջակիզվագ կրակի» մի շարք բանաստեղծություններ, հիշենք «Մագիստրոպոեմները», ուր իր արտակարգ լարվածությունը, թափը և խանդը որոշ իմաստով Զարենցը կապում է նաև Նահիր երկրի մեծ տառապանքի հետ, ուրիշ խոսքով՝ Հայ ժողովրդական ողբերգությունը նա համարում է հեղափոխական ոգեսրության հոգեբանական մեծ ազդակներից մեկը։ Իր խորհուրդների մեջ էլ Զարենցը հավատարիմ է մնում պատմական

առողջ հայացքին, Նա անմիջապես անցնում է Հեղափոխության և ազգային բախտի խնդրին, տալով իր երկրորդ խորհուրդը՝

Գեպի Հյուսի՞ն հղեք ձեր շնորհը երկրորդ-
Գեպի տափաստաններն ընդարձակ.
Ուր բրնձկած Կարմիր Ուրագանը մի օր
Այս հերձեցլաւ երկրում և ամենուր
Գարնան անձրին զարձավ:

Այսպես նա իրար հետ է միացնում անցյալն ու ներկան, ազգայինն ու համամարդկայինը, ողբերգությունը և քաղաքական-սոցիալական մեծագույն շրջադարձը, որ ծավալվեց ուստական հողի վրա, ուստական տափաստաններում և, ինչպես գեղեցիկ պատկերն է իմաստավորում, մեր հերձեցյալ երկրի և ամենքի համար եղավ գարնան անձրև:

Զարենցը ժավալվում է, սերունդների հետ զրույց բացուանակ ուղարկած երևությունների և նվիրական անունների նաև ուրիշ սրբազան երևությունների գործադրության համար անշուրջը՝ փորձելով ընդգծել դարերի գոյության համար անհրաժեշտ գործոնները: Այս և երրորդ խորհուրդը: Ո՞ւր պետք է նետել երրորդ բուօք, այսինքն՝ ի՞նչ հիշել, ի՞նչ պահպանել: Ազգային խառնվածքը գրեթե չի բաժանվում այն երեսություններից, որոնք ուղեկցել են ժողովրդին, չի բաժանվում դաշտում ձևավորված սիմվոլներից, մինչև անգամ դարերում ձևավորված Մաստիկան: Այդպիսի խորին խորհուրդներից է Մասիսը, որը հառնում է որպես բնական, աշխարհագրական և քաղաքական սիմվոլ: Զարենցի ստեղծագործության մեջ Մասիսը երևան է եկել շատ զուգահեռներում, որպես անհամար փառքի ճամփա, որպես լյառ վսիմ, որ ժողովուրդը համարել է հավետ իր գոյության խորհուրդը: Մինչև իսկ «Գանգրահեր տղայի» մեջ՝ անցնում է Մասիսին նվիրված իմաստալից տղայի մեջ՝ անցնում է Մասիսին գոյության խորհուրդը: Ուրիշ սուսան նոր երևանից դեպի Արարատ: Որքան են արդյոք տարիներ հոսել, մինչ գարնանային այս օրը զվարթ»: Ուրույն

երագ, տանշաղին և նվիրական երագ, որ այստեղ հնչում է շերմին, մտերմական, հարազատ շեշտով...

Խեկ երրորդ բուռը ձեր անհատնելի սերմի
Թեսիք լյառը Մասիս սերմանեցե՛ք, —
Թող թանձրացյալ թոշի, երբ ցնորք չերմին
Դեպի Կործքը նրա ծյունածեծ,

Ահա սրբազն ավանդներից, նվիրական խորհուրդներից մեկը, որը իմաստ ունի ժողովրդի համար, հավերժ նստած է նրա ներաշխարհում: Այս տողերը գրվել են այն ժամանակ, երբ դեմ-դիմաց նստած էր կարմիր հագած ֆիլիստերը, որը սիրում էր թաթը զնել Զարենցի գրքերի վրա: Բանաստեղծը շի վարանում, նրա գրիչը ընդունակ է վերցնելու կեղծ երանգներ ու խորթ հնչյուններ, մանավանդ հասուն շրջանում, մանավանդ գալիք սերունդների հետ խոսելու պահին: Մասիսին միանում է նորքը, հայոց հինավուրց ավանը, ուր ձեավորվել է հայ կյանքը, ուր ծլարձակել են երգի բողոքները, հայրենի ավանը, քաղաքամայրը, հայրենի օջախներից մեկը և արդեն ամենանշանավորը.

Ապա մի բուռ ցորյան կամ ցնորք,
Զեր խոների նման լուսափայլ ու ազնիվ
Սերմանեցեք դեպի այս հին ավանը նորք,
Որ այստեղ նո՞ր երգի մի նո՞ր բողոք հասնի:

Այս պահին Զարենցը անցնում է ոդու և երգի խնդրին: Գալիքի երազանքով բոնկված բանաստեղծը իր տողերի մեջ զառնում է հենց երազանքի ակունքներին, ազգային ոդուն, հավատին, ներշնչմանը, լավատեսությանը, որի շնորհիվ էլ ծնվում է վեհ երազանքը, անծիր երգը.

Հինգերորդ բուռը ձեր անհատնելի գանձի
Սերմանեցեք ոդուն մեր ի նվեր,
Որ օրերու հեռու երկնեց այս երգն անծիր;
Այս երազանքը վեհ:

Թվում է ամեն ինչ-ասպած-է: Հայրենի տարեքը, գաղտերն ու բնությունը, հայրենի տառապանքը, սոցիալիստական հեղափոխությունը՝ որպես բարերեր անձրեւ, հարազատ ու ծյունածեծ Մասիսը, հայրենի հինավուրց օջախը՝ նորքը, հայրենի ոդին ու երգը՝ այն սրբությունները, որոնք պետք է

հիշի հեռավոր սերունդը, իր հոգաւ և հերկի բաժինը հանի ապրող երկույթների ու հիշատակների համար: Այս ամենը միանում են իրար մի զարմանալի մտերմի ձայնի, ապրումի և սիրո շնորհիվ, որ տածում է բանաստեղծը դեպի իր երկրի գալիքը, լուսավոր սերունդները, հեռավոր եղբայրների զվարթ գալիքը, թայունը, ինչ-որ բան զեռ մնում է, էական բան: Ո՞րն է մյուս հիշատակը, սրբազն և հավիտենական հուշը, որ պետք է հազորդել հայոց գալիքին: Թափակած արյունը, նահատակների հիշատակը, զոհերով և շարշարնքի տեսիլներով հարուստ անցյալը, հերձեցյալ երկրի զավակների ոսկորները: Եվ ահա լավատեսությամբ շնչող բանաստեղծական խորհրդին ու գալիքի երազին խառնվելու է գալիս անցյալ կյանքի ողբերգական երանգը.

Խեկ զեցերորդ ձեր բուռը, ո՞վ սերմանցաններ,
Հղեցե՛ք անցյալի՝ ոսկորներին, —
Եվ կըսեք հանկարծ հառաջնորդի ձայներ
Մեր երկրի բոլո՞ր խորքերից:

Անցյալի այս ընկալումը, տառապանքի և կորուսների իմաստավորումը բնավ էլ ետ շեն հրում պատկերը և շեն շրջում բանաստեղծի տեսողությունը: Պատկերը՝ մտքի և ժողովրդական ոգու ընկալման համապարփակ բնույթի շնորհիվ, շատ ավելի մեծ հույս ու հավատ է ծնում գալիքի բաղաքացու, գալիքի սերմանցանների, աշխատանքի, խղճի և ոգու նկատմամբ: Զարենցը անկեղծ էր և անցյալի, և գալիքի առջև:

Բայց մենք կարծես մոռանում ենք ներկան: Զէ՞ որ բանաստեղծությունը ծնվում է ներկայի հոգերանական խառնարանում, բնականաբար ինչ-որ կարևոր բան է պահում հենց ներկայի համար: Ի՞նչ խոսք, Զարենցը նախ նկատի է ունեցել ներկան, ապրած օրերը, ժամանակակից մարդուն: Նա բարոյական բացառիկ պատասխանատվություն էր զգում իր ապրած ժամանակի և սերնդի համար, հատուկ խիզախությամբ մարդկանց հուշում այն ամենը, ինչ ժամանակավորապես մոռացվել էր, իսկ ոմանց կողմից դիտվում էր, որպես աղանդավորության պես մի բան: Ազգային ոգու, ժողովրդի պատմության, խառնվածքի, երազների ու սիրմանդությունը, հայությունը և այլ պահանջանական գործությունները:

կողների, անցյալի ոսկորների, երկրի բոլոր կողմերից լսվող հառաջանքների մասին հիշեցումները, խոր հավատը հայոց ապագայի նկատմամբ, հեղափոխության և ազգային բախսի ըմբռնումները,— այս ամենը ուղղված էր նիհիլիզմի և չարդարաների գեմ, պատմության արժեքավոր ավանդների, ազգային հաղարամյա հոգեբանության և գեղեցկության այդ համառ թշնամիների գեմ: Ը գեպ, Զարենցը գրել է երեք խորհուրդ՝ ուղղված սերմնացաններին, բաղաք կառուցողներին և երգասաններին, ուրիշ խոսքով՝ նա զրոյց է բացել Հողի, բաղաքի և հոգեար արժեքի՝ երգի ստեղծման շուրջ, խոսքն ուղղել Հողի աշխատավորին, շինարարին, բանաստեղծին՝ ազգային ամբողջությանը, ժամանակակիցներին և եկվորներին թողնելով ամենակարևորը՝ ժողովրդական հիշողությունը:

«Յոթը խորհուրդ գալիքի երգասաններին» բանաստեղծության մեջ Զարենցը ընդգծում է մի էական միտք. երգը երկրից է աճում, ոչ թե ձայներից կամ բառերից: Գրա շնորհիվ էլ դառնում է երկարակյաց ու հավերժական, թեկուզ դարն է ծնում և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի, բայց երգը երկրից ու դարից միշտ երկար է տեսում:

Զարենցը միշտ էլ խորշել է սնամեջ գեղեցկությունից, այսինքն՝ խոսքերի պաճուճանքից, զրալի ոգերության փուլ սերմներից, որոննելով կյանքի և դարի, մարդու և հասարակության հոգեբանության, ներքին մղումների զսպանակներն ու դաշտերիները:

Բառերն առանց մտքի երկինք չեն թւշում,— ասում է Շեքսպիրի հերոսը: Ահա Զարենցի տաղերի մեջ, զգացումների բնական մթնոլորտում միշտ էլ հյութավորվել է միտքը, հասունացել ու ծագալվել խոհը, որը, ինչ խոսք, ընկերածում է և ներկայի, և գալիքի հետ, որպես բարերեր անձրե իշնելով մարդկանց հոգուն, դառնալով և բարիք, և շնորհ անձնական, թռչելով ժամանակի և տարածության վրայով: Բայց այս ամենը կարող է ստեղծել միայն այն անհատը, որ ճաշակել է «իմաստության դառնապատիր պատուղը» և, ներքին բարձր հասակի շնորհիվ, ամուր կանգեած ներկայի հողին՝ «աշքերը հառել է անցյալին, ապագայի նժույգը նըստած», հոգեոր հարստությամբ, տառապանքի ու երջանկու-

թյան արտասովոր զգացողությամբ բարձրանում է նաև ժամանակակիցներից ու ժամանակից:

Այսպես, ահա, Զարենցը հայ ժողովրդի հազարամյա հիշողության արգասիքները շերմությամբ ու խնամքով հանձնում է ժամանակակիցներին և գալիք սերունդներին, կամուրջ նետելով գարերի միջն, կենդանի շոմլ ու թարմություն հաղորդելով այդ հարստությանը, դառնալով թարգման և միջնորդ, բայց միշտ մնալով նույն հոգեոր հարստությունը ստեղծողի գերում:

ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼՆԵՐԸ

Հայ գրականության մեջ տեսիլները երևան են եկել հեռավոր ժամանակներում, մեր հին պատմագրության և միջնադարյան բանաստեղծության մեջ՝ հարկավ, կրոնական երանգավորումներով ու տարազով։ Նրանց մեջ դժվար չէ նշմարել նաև այնպիսի տեսիլներ, որոնք կապված են եղել հայ կյանքի ցավու հարցերի ու հեռանկարների հետ։

Հետազայում ևս շարունակվել է տեսիլը՝ պտտվելով մեծ իդձերի շուրջ, երևան գալով մեր քաղաքական զարթոնքի շրջանում։ XIX դարի սկզբին Ալամդարյանի, Թաղիադյանի և Աբովյանի բանաստեղծություն-տեսիլները պատկերավոր ձեռի մեջ պարունակում էին ուրույն խոհեր՝ Հայաստանի վերածնության մասին։ Նույն դարում՝ զանազան դրսերումներով, այդ հինավորց տեսակը երևում է այս կամ այն բանաստեղծի մոտ, ստանալով նոր հատկանիշներ։

Բայց հանկարծ XX դարի սկզբին գրական այդ տեսակը սկսում է ծավալվել ու զորանալ, ինչ-որ հիշեցնելով՝ «մեր պատմության և գրական մտածողության վաղնջական շրջանը»։ Ի՞նչ պատահեց, ի՞նչ հողի վրա աճեց տեսիլ-մարգարեռությունը։ Դա արդյոք մի յուրօրինակ դարձ չէ՞ր գեպի միստիկան։ Բնա՛վ, նորագույն տեսիլը ներքին բովանդակությամբ առնչություն չուներ հինավորց կրոնական գաղափարախոսության հետ, ավելին՝ խիստ ժամանակակից երեւույթ էր, կապված հայ կյանքի ու հոգեբանության հետ։ Կարելի է ասել, որ նորագույն տեսիլը, հանգամանքների բերումով և որոշ նմանությամբ, ինչ-որ շափով օգտագործում և իր մեջ բերում է հեռավոր դարերի առողջ ավանդները։

Այս երևույթը, անտարակույս, շեր կարող լինել ինքնարավ և ինքնանպատակ։ Դարասկզբին ազգային իրականությունը ստիպում է մարդկանց տագնապով մտածել հեռանկարների մասին։ Գրականության մեջ ընդգծվում է մահվան և հարության թեման, բայց ոչ բնավ կրոնական-միստիկական նախապաշտումների ճնշման տակ, այլ կենսական երեւույթների խոր ազդեցությամբ, քանի որ կյանքում դաժանորեն ծառացել էր լինելու և լինելու հարցը, է. Զրբաշյանը Գարենցի «Անակնակալ հանդիպում» շափածո նովելին նվիրված ուշագրավ հոդվածում գրում է. «Ուրիշ ոչ մի հայ բանաստեղծ, բացի, թերևս, Սիամանթոյից, այդքան հաճախ չի դիմել այդ հնարանքին»։ Համաձայն ենք, թայց թերևս մի փոքր լայնացնենք շրջանակը։ Տեսիլը առհասարակ դարի սկզբին ընդարձակվեց, հսկայական տեղ գրավելով նորագույն բանաստեղծության մեջ։ Սիամանթոյի ողջ ստեղծագործությունը տառապանքի և հույսի տեսիլների շարք է, քաղաքական-հասարակական շեշտված բովանդակությամբ։ Իսկ վ. Տերյանը, չէ՞ որ «Երկիր նարին» նույնական կործանված կյանքի և հեռավոր արշալույսների, մաշվան և հարության տեսիլ-շարք է։ Նրանց հետքով է գնացել նաև աշակերտը, եթե բացառություն անենք սիմվոլիստական բանաստեղծության հետևությամբ գրված որոշ տեսիլների համար, ապա քաղաքական և հասարակական այդ նույն ուղիներով էր անցնում երիտասարդ Զարենցը։

Այս բանաստեղծների փորձը շատ պերճախոս ցույց է տալիս, թե ինչ եղանակով է վերապրում գրական հինավորց ավանդը, ինչպես է դարերի հեռավորությունից հարություն առնում ձեռ, եթե արյուն և իմաստ է առնում բանաստեղծության բուն ակունքից, նորագույն տառապանքից ու երազներից։ Ինչպես, ասենք, Դանտեն կրոնական գրականության հնագույն տեսակին տվեց գեղարվեստական նոր փայլ և քաղաքական մեծ բովանդակություն, նույնն արեցին նաև մեր կարելի է ասել, որ ներքին զարգացման և օրինաշափությունների մի բնորոշ օրինակ է, որ մեզ ստիպում է խորել արվեստի գաղտնիքների շուրջը։

* * *

Դարաշրջանի բոլոր տէսիլներից մեզ հետաքրքրում է մեզ՝ մահվան տեսիլը, քանի որ նրա մեջ պատացովել են մեր կյանքի յուրօրինակ ընթացքը և պատմությունը, մեր հոգեբանության ելնէջները և, ես կասեի, զուգահեռաբար նաև մեր գեղարվեստական մտածողության ելնէջները: Անտարակույս, այստեղ առաջ է մղվում Սիամանթոյի ողբերգական կերպարը և այնքան ողբերգական բնույթ ունեցող բանաստեղծությունը: Մահվան տեսիլները նրա ստեղծագործության մեջ գրավում են կենտրոնական տեղունչությունը: Նրան հուզել է միայն մեր քաղաքական կյանքը: Այս ոլորտից է առել իր տրամադրություններն ու գույները: Իսկ այս ակունքը նրա ստեղծագործությանը կարող էր տալ գերազանցացած ողբերգական հոսանք: Այդպես էին մեր իրականությունը, նորօրյա պատմությունը, կյանքը: «Աշվիրներու արյուն, արյուն, արյուն է, որ կը տեսնեն» տողը բանաստեղծի հիսութիկ ճիշ չէր, ոչ էլ ճարտասանական աղմուկը: Սա կյանքի բուն հատկանիշն էր, թելադրված ժողովրդի բախտի նորագույն ընթացքով: Հետևաբար, այստեղ պատմությունն ու բանաստեղծությունը, ժողովրդական բախտն ու ստեղծագործական հոգեբանությունը ընթանում են միաձույլ ու հարազատ...

Սիայն, մեր կարծիքով, Սիամանթոյի մահվան տեսիլները ինչոր շափով առաջ են գնում՝ իրենց մեջ շաղախելով նաև վերահաս գալիքի տագնապալի զգացողությունը: Այստեղ, թերևս, տեղին ու նուրբ է հնչում Բլոկի խոսքը. «Եթք մինոլորտի մեջ համարվում է ամպրոպը, մեծ բանաստեղծները զգում են այդ ամպրոպը, բանաստեղծի հոգին նման է ընդունիլի, որը մինոլորտից հավաքում և կենտրոնացնում է իր մեջ էլեկտրականության ողջ ուժը»: Դարասկզբին մեր խոշոր բանաստեղծները ևս դրսեռում էին քաղաքական տագնապները և վերահաս աղետները տեսանողի հազարյուտ հատկանիշները: Սիամանթոյի «Մահվան տեսիլը», օրինակ, կատավում էր հենց այդ վերահաս աղետի հետ... Այս հանգամանքը նրա երևակայությանը և զգացմութքին տալիս է մեծ թուիչը:

Գիշերին մեջն արյուններուն ալիքը կը քարձրանա Մառերուն հետ շատրվաններ ուրվագծելով, Ու ամեն կողմէ սոսկումով կը սուրան հալածված՝ նախիրները հրդեհվող ցորյաններուն մեջն... Փողցներուն մեջ մորթված սերունդներ կը տեսնեմ, եզր ամբոխներ անպատճեցի սրածութենեն զարձոց, Արևադարձային տաքություն մը կը բարձրանա շրդիչ տրված ազնվական բազագներեն...

Քաղաքական աղետալի անցքերի, առավել ևս գալիքում պայառվածների զգացողությանը գառնում է անգրշիրմայն պատկերների, հոգեվարքների ու մահերքների, շարշարանքի երազների, ավերումի, գիշերային տեսիլների շաղախը:

Բանաստեղծական ուգիշ երանցով, խառնվածքի ուրիշ գծերով, բայց նույն ներքնատեսությամբ՝ բազում տեսիլների մեջ վահան Տերյանը ևս նյութ էր առնում արյունութ իրավանությանից: Նրա պատկերների մեջ ևս գծագրվում են կործանվող եղերքը, հայրենի պրովություններն ու հիշատակները, հայրենական տունը, նա մերթ տեսնում է արնոտ միզում; Հայրենական պատկերներ, մերթ նախնական գնդեցկության դյութական պատկերներ, մերթ նախնական գնդեցկության դյութական տեսիլներ: Տեղ-տեղ Սիամանթոյի և Տերյանի պատկերները մոտենում են, բերելով նույն գծերն ու գույները, նույն կը սկսի ծննդն ու դառնությունը, գիշերային նույն սպասումներն ու շարշարանքի տեսիլները, միայն թէ՝ մեկը գա արտահայտում է բացառիկ ուժով, մյուսը՝ բացառիկ նրբությամբ, երկու զեպքում էլ նրանք խորանում են տառապանքի մեջ.

Հայրենիքում իմ արևաների աչ
Գիշերն իշավ անլույս ու լուս,
Այստեղ, այ կար այնքան սիրեք
Եվ վարդի բույր, և սրտի հուր:
Ամեն մի միտք հիմա մի վերք,
Ամեն հայաց՝ հատու մի սուր,
Արնոտ դիմերն են համը ու մերկ
Նայում երկինք անզոր ու զոր:

Նույն ցավուտ տեսիլը, նույն արնոտ պատկերը մի ուրիշ բանաստեղծության մեջ.

Ինչպես կարուտն արտն անարատ Վար է թափվում այնպես առատ,

Այնպես անգութ երկրում իմ որբ,
Նայի՞ր թափված քանի կորյում—
Որքա՞ն, որքա՞ն, որքա՞ն արյուն—
Վերքեր-վարդեր արնոտ ու բորբ

Մահվան թեման՝ տեսիլի կերպարանքով, չի սպառվում
միայն այս բանաստեղծների երկրում։ Տեսիլներ կան Վա-
րուժանի և Սեակի մոտ։ Հիշենք «Առկայծ ճրագը», «Հայա-
տանը» և «Զանգակները»։

Բնավ չենք կարող շրջանցել դարի բանաստեղծություն-
ներից մեկը՝ Հովհ։ Թումանյանի «Հոգեհանգիստը», որ և
տեսիլ է, և ներքին տանջալի խորհուրդ մեր բախտի, մեր
որբերի, մեր ժողովրդի օրվա ու գալիքի մասին։ Նրա մեջ
ևս ներքնապես խտանում էր անհատական և համաժողովր-
դական տագնապը՝ ծնունդ առած անցյալից, ներկայից և
գալիքից։ Արտաքնապես զարմանալի հանգիստ հնչող այդ
բանաստեղծությունը մի իսկական պատրանք է և իսկական
տեսիլ՝ հին ու նոր առումով։

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝
Վերշին հանգիստը կարգամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարտած են, մեռած, փրոված ու ցրոված հազար հազարով...
Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասին և Արան, Սիհանն ու Սըմանց, Նեմրոթ, Թանգուրեք,
Հայոց աշխարհի մեծ կերպները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,
Անհաս, աննրվազ, միշտ վառ ու պայծառ, իմ զլիի վերև...

Եվ այսպես, հնագույն երազ-տեսիլում, հնօրյա ձևով ու
տարագով թումանյանը հյուսում է տառապանքի երգը, ժո-
ղովրդի մահվան ու հավիտենական հանգստի երգը, տողերի
տակ ներքնապես կուտակելով մեռնող ժողովրդի կսկիծն ու
ատելությունը։ Համատարած վշտին մասնակցում են երկրի
բնությունը, ամպերը, գետերը, երկրի մարդը։

Աշիցը՝ Եփրատ, ձախիցը՝ Տիգրիս, ահեղ ձեռներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գընացին խոր-խոր ձորերով,
Ամպերն էլ եկան Զիրավի ձորից, հըսկա բուրվապից,
Ճանապարհ ընկան Սաղկանց սարերից, Հայկական պարից,

Բուլլ-բուլլ, բուրավիւտ շարժվեցին գեպի կողմէնը Շնուռ,
Գոհար ցողեւու, ծաղկունք բուրելու, բուրմունք ինկելու
Մինչև Միշագետք, մինչև Ասորիք, մինչև ծովն Հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պանտոսի ափերն ալեկոծ...

Այս յուրօրինակ հոգեհանգիստը, թաղման տեսիլը, որին
մասնակցում է ողջ Հայոց աշխարհ՝ բոլոր ձայներով ու ձե-
զերով, որքան պայմանական է, այնքան էլ՝ իրական, ձեռվ
տեսիլ է, բուլանդակությամբ՝ սարսափելի իրականություն,
որն ավարտվում է ցավերի մեջ հոգնած ու խոժոռ՝ մարդու
կորստի վշտից սնված դառն պատգամով և թանձր ատելու-
թյամբ։

— Հանգե՞ք, իմ որբե՞ր... իզո՞ւր են հուզմունք, իզո՞ւր և անշահ,
Մարդակեր զազան մարդ՝ զեռ երկար էսպես կը մնա...»

Այսպես, ահա, մենք մոտենում ենք նորագույն տեսիլնե-
րի բուն հատկությանը, մոտենում ենք նաև մահվան տեսիլ-
ների բնույթին։ Չպետք է բնավ ամեն մտապատրանք և
երազ-պատկեր, երևակայության ամեն խաղ խառնել այս
տեսիլների հետ, չէ՞ որ, ի վերջո, եթե այդպես անենք, ապա
բանաստեղծությունների կեսից ավելին, իր բնույթի պատ-
ճառով ստիպված կլինենք դասել տեսիլների շարքը։ Այստեղ
հարմար կլինի նկատի ունենալ և պատկերի ձևն ու բովա-
գակությունը, որը որոշ շափով գալիս է նաև հեռավոր դարե-
րից։ Ինչ-որ եղանակով, պայմանական, իրական թե երազա-
յին շղարշի տակ պետք է ստեղծվի որոշակի տեսիլ, պատ-
կեր, շղափելի, սիմվոլիկ կամ ալեգորիկ կերպարներով ու
տեսարաններով։ Մահվան տեսիլները նույնպես, բնականա-
բար, մենք պետք է բաժանենք մահվան մասին գրված բազ-
մաթիվ բանաստեղծություններից, նկատի առնելով նույն այդ
հատկանիշները։

Համենայն դեպս այս տեսիլները բաժանվում են երկու
մասի, երկու խմբագրման, այսպես կոչված՝ անհատական
հիմքի վրա հյուսված և ընդհանուր, մեծ, հասարակական-
քաղաքական նյութի վրա խարսխված տեսիլներ։ Ավելի
քաղաքական նյութի վրա խարսխված տեսիլներ։ Ավելի
արժեքավորը, սկսած հնադարից, երկրորդն է, որ եկել հա-
սել է մեր օրերը։ Մեր նորագույն տեսիլների մեջ, մասնա-
շել է բուրքը։ Մեր նորագույն տեսիլների մեջ, ընդգծվում է ժողովրդի

թեման, ավելի ճիշտ՝ ժողովրդի կյանքի ու մահվան թեման։ Հնում, անգամ Աստվածաշնչում և, ասենք, կրոնական ու պատմագրական երկերում արծարծվում էին հրեա ու հայ ժողովորդների անցյալի, ներկայի և գալիքի հարցերը (հիշենք Երեմիայի, Եղեկիելի ողբերն ու մարգարեալիյունները, Սահակ Պարթևի երազը և այլն)։ Դարերի հեռավորությունից հետո, դարձյալ աննպաստ պայմաններում, դարձյալ քաղաքական հանգամանքների թելադրանքով ծնվում է մահվան տեսիլը, պատրանքը՝ քաղաքական ենթատեքստերով և երազանքներով։

Այս առանձնահատկությանը միանալու է գալիս հայկական տեսիլների մի ուրիշ էական հատկանիշ: Եթե կարելի է այսպիս ասել, նրանց մեջ գերազանցապես ընդգծվում է այն անբնականը, որը խախտում է բնության մեծ ներդաշնակությունը՝ կյանքի հավերժ ընթացքը: Մեր իրականության մեջ իրականն ու երևակայականը փոխում են իրենց տեղերը, բնականը դուրս է մղվում, ավելի ճիշտ՝ բնականը երևում է երազի մեջ, անբնականը՝ կյանքում: Հայ ողբերգությունն իր բնույթով խորապես անբնական, անհեթեթ, տանջալի ու տևական երևույթ էր, քանի որ, ինչպես Սիամանթոն կասեր՝ սպանվում էր կյանքը, անհետանում ժողովուրդը ամբողջապես՝ իր ստեղծածով և գալիքով, տեղի էր ոսենում համաշխարհային շարագրություն: Դա չէր կարող իր կնիքը շդնել և ընդհանուր հոգեբանության վրա: Եվ ահա, հայ բանաստեղծի մտապատկերների մեջ հյուսվում էր նոր դարի տեսիլը՝ մահվան տեսիլը, որ մեծագույն բարումով պատկերում է հենց այդ անբնականը, անհեթեթը, գեղեցկության ու կյանքի սպանությունը: «Մեր տեսիլքները սառն ու ահավոր»: Տերյանը այսպես է բնութագրում նորագույն երազները... Ավերումի գիշերների պատկերներից հալածական Սիամանթոն մտրում է: «Բայց ավա՞զ, երազները կը մեռնին, երազները կը մոխրանան»:

Մահվան մասին հյուսված մեր արտակարգ հոգիշ, սբուտամոտ, համամարդկային բանաստեղծությունների մթնոլորտում, սիրո և պայծառ վշտի մթնոլորտում, դարասկզբին ընդգծվում, բարձրանում և իր լայն ստվերն է նետում մահվան նոր տեսիլը, բաղախական անավոր տեսիլը՝ իր զուա

հայկական, ազգային ջեշտով և համաշխահացին Ծերտին
ուղղվածությամբ։ Երևան է գալիս նաև մի ուրիշ փոփոխու-
թյուն՝ մահվան տեսլիների մեջ այլաբանուրյանը և սիմվոլ-
Ները զգալիորեն տեղի են տալիս, առաջ է մղվում իրական
կամ փոխաբերական պատկերը, քանի որ իրականությունը
արդեն տալիս էր սարսափներին, անդրշիրիմյան տառա-
պանեներին ու շարշարանեներին զերազանցող դժոխային
երևոյթներ, փաստեր, գրվագներ։ Կարելի է ասել՝ մահվան
ավանդական ընկալումը մեր կյանքում և հոգեբանության
մեջ հաճախ փոխվում է. մեր կյանքը, մեր բախտը, — ինչ-
պես առաջինը բնորոշում է Սիամանթոն, — «մոխիրներու և
մահերու դանթեական ճանապարհ» է, որի ընթացքում,
անհուն շարշարանեների մեջ մարդկի երազում են բնական
մահվան համար։ Նույն Սիամանթոն դարձյալ լավ է բնորո-
շում այդ բարդ զգացումները. «Հոգիս այն երկինքն է, ուրկե
հույսի բոլոր աստղերը թափեցան, ու այն մարմարակերտ
տաճարը, ուր կյանքը ծովակի եկած խելահնեղորեն ամենա-
գութ մահը կը պաղատի»։ Ուրիշ խոսքով՝ հակառակ Դան-
գութ մահը կը պաղատի։ Ուրիշ խոսքով՝ հակառակ Դան-
գութ մահը կը պաղատի։ Ուրիշ խոսքով՝ հակառակ Դան-
գութ մահը կը պաղատի։ Ուրիշ խոսքով՝ հակառակ Դան-

Երիտասարդ Գարենցի ներաշխարհը ձևավորվեց դան-թեական ճանապարհի, կյանքի և գրական՝ մտածողության մթնոլորտում, ուր գրեթե ամեն ինչի վրա կար սղբերգական շնչառ։ Հենց կյանքի տրամաբանությունը նրան աիրականութեն մղում է դեպի մահվան թեման, և նա բազում թելերով կապվում է ողբերգական իրականության ու նորագույն բանաստեղծության այն հոսանքի հետ, որը բերում էր մոխիրների և մահերի ճանապարհի պատմությունը։ Բարեբախտաբար բանաստեղծի հզոր ձիրքը չի մնում գրքային մթնոլորտում, շուտով նա մտնում է այն մեծ, բազմազան կյանքի մեջ, որը, ինչպես Գյորեն էր ասում՝ սնունդ է մարդու աճի հա-

մար, միաժամանակ այդ աճի չափանիշը ջարենցը հանգամանքների և տաղանդի բերումով դառնում է նորագույն գրականության ամենհասարակական մարդը։ Կարճ միջոցում նա անցավ տառապանքների ու արյան ճանապարհով և իր ուսերին վերցրեց ողբերգության ծանրությունը։

10-ական թվականներին զանազան աղբյուրներից, զանազան երանգներով նրա աշխարհն է ներխուժում մահվան թեման։ «Երեք երգ», «Տիսիլաժամեր», «Ծիածան»՝ առաջարքերը, որոնց մեջ այս կամ այն շափով արծարծվում է կյանքի ու մահվան խնդիրը։ Անշուշտ, նրանց մեջ գրքային շատ բան կա, թերևս որոշ բան նաև պատանեկան հասակին բնորոշ ոչ այնքան խորաթափանց կենսափիլիսոփայությունից։ Պատանի հսահակյանը ևս գրական գործի սկզբին երրեմն հառաջում էր կյանքից հոգնած մարդու պես, իսկ Դեմիրճյանը հոգնած ծերունու պես գրական գործն սկսեց ուղղակի կյանքի ունայնությունից։ Ջարենցին էլ հուզում են մահն ու կորուստը, դագաղն ու մեռելոցը։ Նրան գրավում է մահվան առասպելը՝ իր սիրտ կեղեքող տեսիլներով։ Բայց այդ վհատ տրամադրությունները ինչ-որ շափով գալիս էին նաև մեծ մահի, մեծ պատմության ճնշող պատկերներից, ընդհանուր հոգեբանությունից։

Մահը, գիտե՞ս, մի լուսավոր առասպել է, բույր։
Կյանքը այնքան մեղք ու անգույք ու անբեր է, բույր։
Մահը անուշ, անքաղլուս տրամություն ունի։
Կյանքը սակայն շաշող, փախչող, անհամբեր է, բույր...
Կյանքի կանչը սակումների ազգարար է լոկ։
Մահը սակայն Կապուտ երկրի մի բանբեր է, բույր...»

Ջարենցի ստեղծագործության մեջ գնալով կենտրոնական տեղ է գրավում մեծ մահվան թեման, քանի որ նրա խոհերի ու մտորումների, նրա երկակայության մեջ տիրաբար սկսում է իշխել հայրենիքը։ Իսկ հայրենիքը կանգնած էր ճակատագրի հարվածի առաջ, մահվան տագնապների մեջ, իսկ հայրենիքը տալիս էր իր հնձվորներին, իր զավակներին։ Մեծ ողբերգության թեման ծավալվում է նրա ստեղծագործության մեջ, ունենալով գրական և հատկապես կենսական ակունքներ։

«Կապուտալյա հայրենիքը» տեսիլների մի յուրօրինակ շարք է, ուր գծադրում է ժողովրդի կերպարը, հեռացող հայրենիքի պատկերը մնում է բանաստեղծության պայմանական խորհրդավոր տեսիլների մեջ։ Հանաստեղծներն ապրում են լուսե տեսիլներով, մոտիկ ու հեռավոր երազներով, երկարող ու անտես ճամփաների կարոտով, ապրում հոգեկան անհունության այս վաղանցիկ պահերով, երբ գեղեցկան անհունության մեջ է ամեն ինչ։ Այս լուսավոր երազի ուղիներով պատանի բանաստեղծը գառնում է արդեն կապուտ երազ թվացող հայրենի եղերքներին։ Պոեմը հյուսված է նըրբին երազներից, կարոտի սրտամոտ երանգներից, քնքաներից ու տագնապներից։ Մայրական օրոր ասող գետակը, հայրական այգին, գետեղերքի տիրամած երազները, հնամյատնակը, ծեր քայլերով ղեպի շրափ քայլող մայրը, հին օրերի թախիծը բուրող թթենին. այս է հայրենիքը, կապուտալյա եղերքը, որի հմայիլ գեղեցկությունը զարթնում է տանը կարոտով։

Այդ մթնոլորտում Զարենցը օգնության է կանչում իր հարազատներին՝ նորենացուն, Արովյանին, Կոմիտասին, Թուշարազատներին՝ հորենացուն, Արովյանին, որոնելով բախտի նմանություն նրանց մանյանին, Հայնեին, որոնելով բախտի հայտագիրը հենց այս հետո Ընտրությունը պատահական էր, քանի որ հենց այս մեծերի ճակատագիրը հարազատ էր իրեն, գրամատիկ կողմերով հուզում էր մի շարք ճշմարտություններ։

Կորենացուն՝ այդ մեծ տառապայալի և մտածողի պատմության արձագանքն է լսվում «Պատմության քառուղիներով» մեջն է գրավել նրան կորենացու կյանքից Պապումուն։ Ի՞նչն է գրավել նրան կորենացու կյանքից Պապումուն։ Ենթակա հայությունից բանաստեղծը զգացել է հետարյան ընկածից տակի խորությունը։

Սակայն հազիվ թե բանաստեղծին գրավեր սոսկ հարատե-

տառապանքը, նրան գրավում էին հզոր ոգին, դիմադրական ուժը, գործն ու հիշատակը: Ինչո՞վ է հորենացին ապրել դարերի մեջ, առհասարակ ինչի՞ մեջ պետք է փնտրել մեծերի անմահության գաղտնիքը: Այս ներքին հարցին բանաստեղծը հուգի պատասխան է տվել մեռյալներին նվիրված տաղում: Մոխրանում են օրերը, աստղերը, արևները, մոխրանում են գարունը, դեռ չծաղկած ծիլերը, բայց չի մոխրանում հիշատակը, որ սերում է գործից. «Հիշատակը մշուշ է, որ բարձրանում է եփվող շրերից, բայց մնում է ինքը անմեռ».

Հիշատակը ձեր անցած օրերի արձագանքն է ու
ցուլը, ո՞վ հւացողներ,
Նա ծլում է հաճախ ձեր անցած ճանապարհի
փոշու եղբերին,
Ենելով ձեր շոգ կեսօրին՝ նա իշնում է հետո,
ինչպես ցողը,
Բայց ուրիշ վարդերի վրա, իրք պարզ վերին...

Արդյոք այդպիսի հիշատակ չի թողել նաև ե. Արովյանը, հորենացու պես տառապելով, բայց և նրա պես թողնելով ժողովրդի կյանքը երկարացնող և հոգին մեծացնող «Վերը...»:

«Դեպի լառը Մասիս պոեմը գեղարվեստական ակնառու երևոյթ է, ինքնատիպ բոլոր առումներով, կառուցվածքով, կերպավորման եղանակով և դրամատիկ խորքով: Ամենից առաջ բանաստեղծին հուզել են մեծ նախորդի հոգեկան աշխարհը, կյանքի վերջին դրամատիկ պահը, վերջին խոհերը, տանջող մտքերը: Դա պահանջում էր հուզական և մտավոր բացառիկ լարում, քանի որ նրա առջև կանգնած էր մի հանճարեղ անհատ, որը բացառիկ գծվարությունների մեջ ազգային հոգեւոր կյանքում կատարել էր սիրանք, կյանքը անմիշցորդ նվիրել ժողովրդին: Այստեղ էլ ծագում է երկու գորդների ներքին հարազատությունը, քանի որ եղիշե Զարենցը ևս քայլում էր նույն ճանապարհով և ապրում նույն դրաման:

Խոհերով բեռնավորված բանաստեղծը գրում է հարազամարդու վերջին գիշերված մասին, մի քանի էջի վրա խտացնում նրա կյանքի և հոգու դրաման: Միա՞լ է եղել արդյոք ճանապարհը, ճիշտ ուղի է նշել արդյոք նա գալիք սե-

րունդներին: Այսո, դժվար չէ նկատել ծանր օրեր ապրող բանաստեղծի հոգեհարազատությունը մեծ նախորդին, որի կյանքը անձնագործության ու նվիրաբերման բացառիկ օրինակ էր: Բայց ի՞նչն, և հոգիլուր: Բոլոր գեպքերում նման ճնշող թախծի և տարակույսների միջով անցնում է լուսի շողը: Հավատը իր վաստակի, իր ժողովրդի գալիքի նկատմամբ թացառիկ արիություն և զորեղ միտք է հարկավոր անձնական ու հասարակական վշտի մեջ հաղթահարելու հուսալքության և ներքին խավարման պահերը, անցկացնելու հույսի ու լավատեսության այդ պայծառ գաղափարախոսությունը Անօրինակ ուժ:

Մեծ նահատակի կյանքի վերջին գիշերը՝ իր անձնական և հասարակական ցնցող դրամայով և տագնապներով դարձել է երկի ողնաշարը: Պոեմի գեղարվեստական ուժը ամենից առաջ երևում է հոգեբանական հարստության մեջ, քանի որ Զարենցը անվերջ, բազում ելեւչներով ցույց է տալիս հանճարի հոգեկան հարստությունները, անձնական ու ստեղծագործական բարդությունները, միին կասկածները իր վաստակի և տարակուսանքը՝ ընտրած ճանապարհի նկատմամբ...

Եվ ինչպես «Խմբապետ Շավարշը», այստեղ՝ ևս նա դրսեւում է ստեղծագործական կենտրոնացման, նյութի ամբողջացման արտասովոր ուժ: Մի ճակատագրական պահի հոգեբանական տրոհման միջոցով նա ոչ միայն բացում է հանճարի տառապանքը, որը նրան մղել է մահվան ուղին, այլ նաև բռն կյանքը՝ բռնոր մանրամասներով: Մի քանի էջի վրա երևում է Արովյանի ողջ ուղին՝ Քանաքեռից մինչեւ էջմիածնից՝ Մասիս, ապա՝ Գորպատ: Մանրամասներ, մանրամասներ, մայրը՝ արխալուղով, Պարուտը՝ խստահայց վարքով, գրքի մեջ շորացած ծաղկից՝ գործադրության սիրո նշանը... Դիշերված մենության մեջ ծավալպատյան է Արովյանի ներքին մենախոսությունը՝ իր վաստակի դառը կյանքի, ժանր ուղու մասին:

Թեև «Խմբապետ Շավարշը» և «Դեպի լառը Մասիսը» ստեղծված են նույն սկզբունքով ու եղանակով, երկու հերոսն էլ կանգնում են ճակատագրական պահի առջև, երկուսն էլ կանգնում են իրենց կյանքի ուղին, որն աղերսվում է նաև հիշում են իրենց կյանքի ուղին, երկուսի միջոցով էլ կենդանի շոմաժողովրդական ուղուն, երկուսի միջոցով էլ կենդանի շոմա-

ու ձեւ է առնում դարաշրջանը, սակայն նրանց միշեւ կամքի էսկան տարբերություն՝ մեկը գենքի մարդ է, մյուսը՝ գրքի, մեկը մինչև իսկ շունի վերլուծական ուժ և հաճախ խոսում է միայն բնազդի ուժով և դաժան փաստերի լեզվով, մյուսը՝ յանական վիթխարի ուժ ունեցող հանճար է, կանգնած պատմության և խղճի առջև Զարենցը բացում է հանճարի տագնապների և հուզումների աշխարհը, մտավոր շիկացման ամբողջ խորքը։ Արովյանը մտածում է, անվերջ մտածում իր գործի, իր ճանապարհի և հայրենի սերունդների մասին, գործի և հիշատակի մասին։ Արթնանում են մթին կասկածները։

Գիտակցության տակից, իր էության
Մութ խորերից, որը միտքը վախում էր թափանցեւ—
Տագնապալից աճում էր ահանման մի բան՝
Կասկածի պես անորոշ ու անձնա...

Սա ամենադժվարն է, տառապող մտքի շարժման, հոգեվոր առեղջվածների, անսպասելի անակնկալների այս գտացողությունը, դրամայի թանձրացման այս ընթացքը։ Զարենցը ամբողջացնում է հակասություններից ծնվող միտքը, որը պտտվում է կյանքի իմաստի, գործի ու գալիքի շուրջը։

... Եվ հանկարծ
Տագնապալից այն միտքը անհնար
Բարձրացավ, ցցվեց ուղեղում՝ զարմանալի ուսուցիչ ու
պայծառու—
Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է քարբառում։
Չուր չէ արյոյօք վասնել անհատնեիլի իր ծիրեցը։
Եվ չէ արյոյօք եղելի իր ողջունած նեռուն։
Մի թիարան վատրար, — և այդ գիրքը՝
Եր արյունով, սրտի յուրաքանչյուր եյարդով։
Եր վերջին նիզով նորինած—
Չէ՝ արյոյօք խեղնորյան ու սխալի արդյուն։
Սերունդների երբեն ի վեաս...

Հանճարը մոտենում է հանճարի ցավին, տառապանքին, շարաշուք խոհերին, տագնապներին ու տարակույններին, գործի ու երազների գլխավոր խորհրդին։

Այս բոլորի միշով անցնում է մի պայծառ հայացք՝ գրողի անմահության և ժողովրդական սիրուց կարձրացած պատ-

մանդանի մասին, այնքան հարազատ Զարենցի այդ օրերի հոգերանությանը։

Եվ նա քայլեց հաստատ, բայլով սովորական, ինչպես զնում են գործի, որ կարևոր է հույժի Դեմք—դաշտն էր անձայր, իսկ հնավում—Մասիսը կյան այն զնում, որի ճանապարհով մի օր Բարձրացի էր ինքը և սաղանեան Գեղցկությամբ գերզել։— Եվ այժմ, մենակոր նա զնում էր կրկին զեպի հեռուն այն լուրի, Դեպի լյառը անհան ու վեհանիստ, — Դեպի զագարը բարձր, որ իր ժողովուրդը Համարել է հավետ իր գոյության խորհուրդը, — Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ...

* * *

Նույն իմաստով բացառիկ երեւոյթ է նաև «Հայնրիխ Հայն» բանաստեղծությունը՝ 30-ական թվականների անցքերի դրամատիկ արտացոլքը։ Հայնրիխ Հայնն հարազատ էր Զարենցին որպես բարդ ճանապարհ անցած, հակասություններ ունեցող մի բանաստեղծ, հեղափոխական մեծ իդեալների ու պայքարի երգի։ Զարենցը մի զուգահեռ է ստեղծում Հայնեի և իր կյանքի միշեւ, անսքող խոսում բանաստեղծի և քաղենիության հակասության, բանաստեղծի և դասակարգի հարաբերությունների շուրջ, կերտելով ուժգին երկ բանաստեղծի բախտի մասին։ Սիրել է Հայնեի բնքուզ նվազները ու նրին երազները, սիրել է պայքարի երգերը, հասում օրերին տարվել նրա երկմիտ շշումներով ու հեգնանքով։ Հայնեի պես նա էլ, ծնվելով հողմաշունչ զարում, ապրել է հեռանկարով, գալիքով, բարձրացի բաղդենի գորշ շրջանից և առաջնացել իր հպարտ ու հզոր երգերով։ Բայց հենց բարձրությունն ու հպարտությունը գալիքով ապրող և հեռու հորիզոններ նշամարող մարդուն բերում են դժվարություններ։ Ոլխն աշխարհում հեշտ լի տրվում, նորագույն խոսքն ու միտքը հաճախ են ստեղծում հակառակորդների ու շկամների բազմություն։

Բայց էլի՛ ուզին իմ զմակը է
Եվ նաև է ուզուն բո վերին...

Ինձ հետ է թեկուզ իմ դարձ,
Բայց իմ դեռ է մարդը զեռ հին—
Նա դեռ կա— Այսօր էլ նա նստել է
Թիրնազո՞ն, կառած իր բույնին,—
Եվ նա նո՞ւյն է, նո՞ւյն ֆիլմատերը՝
Չնայած գիմակի գույնին:

Զարենցը պատում է քաղքենու դիմակը, նրան համեմատելով դահճի հետ: Ստեղծագործ մեծության համար դժվար է հաշիվ մաքրել քաղքենիության հետ, հաղթահարել փարիսեցիությունը և երեսապաշտությունը. քաղքենին գոռում է բարձր գաղափարի անոնից և ոտնատակի անում բարձր գաղափարը: Մեր մտավոր կյանքի այդ դժվար ժամանակներում բացառիկ խիզախություն էր Զարենցի խոսքը՝ ուղղված այդ արատի դեմ.

Գեռ նա կա այսօր, դեռ նա կա,
Եվ Հորդած կամ ոեցենց գրելիս
Նա սիրում է բար և հակա
Զափի՛ց ավելի...

Ավելի անսփող ու համարձակ լինել, խիզախ ակնարկներ անել զամակարգային գիտակցության ու սկզբունքների ոտնահարման, մտածող անհատների հոգեկան տառապանքների մասին՝ անհնար էր: Զարենցը չի մոռանում իր մեղքերն ու սայթաքումները, եղանակի նման փոփոխական անկումները, որոնք բնավ չեն ունեցել գաղափարական-բաղաքական բովանդակություն.

Իւարկե, ունեմ մեղքեր ես,
Ուրանաւի այդ—անշուշտ անհեթեթ է,—
Բայց գտեմ, որ թերեւ են մեղքերս,
Թանդի ես—պոհած եմ:
Եվ ինչպես ուսուցիլ մեր մեծ
Ներում էր քո բոլոր մեղքերը,—
Գիտեմ, որ ինձ էլ կներե
Չասակարզը—իմ փոքրիկ հանցաները:

Նա թերեւ դեռ զգիտեր, կամ գուցե չէր կարող ասել, որ այդ օրերին բանաստեղծի գատաստանք դասակարգի ձեռքին չէր: Բայց զգում էր դահճի ներկայությունն ու շունչը, ողի

մեջ կախված մահվան սպառնալիքը, զգում էր, որ միայն դասակարգի հեղինակությունն ու իր հոշակն են դեռ կանխում վտանգը.

Զիներ թե նրա հաղթությունը—
Իմ դահճն ինձ գաղո՞ւց էր կերեւ,
Եվ դարձել էր արդեն իմ անունը
Առնակոս արված մի տերեւ

Իսկական ցավի էջ, արդար բողոքի ու անկեղծ տառապանքի էջ, որ ծանրորեն ճնշում է մարդուն, ողբերգության մի էջ, որ տարածվում է անհատի պաշտամունքի շրջանում ընկած հերոսների ու ազնիվ հոգիների վրա: Եվ դարձյալ մեծությանը վայել հույսի մի շող, հիշատակի ու գործի մի պայծառ ինքնավստահություն լուսավորում է հոգու մթնած երկինքը, բերելով անեղորական աշխարհի կարուղ և կյանքի զարկերակը բանաստեղծության մեջ: Կրկին, ինչպես «Դեպի լուսը Մասիսի» մեջ, ժողովրդի, ժամանակի ու անմահության գաղափարը եզրափակում է մեծագույն ողբերգություններից մեկը.

Իսկ խխունը այն, որ նստել է
Տզրուկի նման մեր քթին,—
Նա կանցնի, ինչպես ստվերը,
Երբ արեց համին զենիթին:
Այս արեց, որ գար բարձրանում է,
Կրանձե նրան իր հրով—
Բայց նրա ցոլգերում մեր անունը
Կչիշն գգվանքով ու սիրով...

Մրանով չի ավարտվում Զարենցի ցավատանց դրամանն Օր-օրի, ժամ-ժամի նա թղթին է հանձնում իր մտորումները տեղի ունեցող իրադարձությունների, բանաստեղծության ու երկրի մասին: Ուժեղ ապրումների ծնունդ էր «Կոմիտասը», շիկանում են բանաստեղծի վերջին խոհերն ու զգացուր շիկանումները ժողովրդի բախտի մասին:

Աղդեցիկ տողերով նա հյուսում է իր ժողովրդի, նրա երգի ու երգի արյունոտ բախտի պատմությունը, բացում կոմիտասի կյանքի ու երգի խորհուրդը, ցավոտ էջեր թող-կոմիտասի պատմական ապարիների նում անհայրենիք կոմիտասի ամստանդական ապարիների մասին: Տեղի էր ունեցել մեծ աղետ, երգը կտրվել էր հողից,

նա այլես չէր կարող հնչել, քանի որ հոգու մերմն աճում է
միայն հայրենիքում.

Որքան էլ պիրկ նա լիներ՝
Ստեղծագործ քո ոգին—
Ո՞ր դաշտերում նա հիներ
Երգն իր անմահ մորմորի...
Ախ, ծաղկի սերմն՝ հայրենի
Հող չի հաճախ հանաշում,—
Բայց սերմն հոգու—միայն իր
Հայրենիքում է աճում...

Սա խոր միտք էր, իմաստուն ավանդ, որը հոգեոր ոլոր-
տից փոխանցվում է նաև մյուս ոլորտներին, տարածվում
Հայ ժողովրդի գոյության և կեցության ուղիների վրա.

Վերաղառնա՞ն պիտի դեռ
Հազա՞ր սրտեր տարագիր
Թողած օտար հեռուներ,
Ցրված հողմով հարաբիրու—
Իրրե սրտե՞ր կենդանի,
Իրրե ամյուն կամ մասունք—
Սրտեր քանի՛, դեռ քանի՛
Հողն են իրենց երազում...

Եվ դարձյալ այս ամենին ձուլվում է հավատի և հույսի
ելեջը! Տառապած մարդու մասին տառապած բանաստեղծի
հյուսած պոեմը ստանում է լուսավոր երանգներ, պայծառ
վերջաբան՝ հայոց հողի և երգի ծաղկման, գալիք հայոց գա-
րունների մասին.

Եվ հայրենի այդ հողից
Չանցած զարոն մի քանի՛—
Կենեն շքե՞զ և ողիդ
Երգի շյուղե՞ր կենդանի...
Եվ շշունչում երգեցի,
Հնեղ երգում նրանց խոր—
Կապրի հանճարը քո շինչ՝
Անմահ Երթի՛ ելած նոր...

Այստեղ էլ Զարենցի ապրումները, տառապանքը և հա-
վատը ստեղծում են ամուր շաղախ երգի համար: Բանա-
ստեղծը, մոռացած իր անձնական ցավը, ամբողջ հավատով

նվիրվում է գալիքին, բռնվում խորունկ երազներով: Սա,
հիրավի, ոգու անեղության, երկրի և հողի նկատմամբ
ունեցած անսովոր սիրո և հավատի արտահայտություն է,
որ կարող է ծնվել միայն բացառիկ մեծություն և բարոյա-
կան ուժ ունեցող ստեղծողի հոգում:

Սնվում էին նոր բանաստեղծություններ ու գրառում-
ներ, խոհեր, անավարտ էշեր, թազում մտահղացումների և
խոհերի տարերային հոսքը ճնշում էր բանաստեղծին, իսկ
ժամանակը քիչ էր, հուսահատվելու շափ քիչ, իսկ ընթեր-
ցողն այդ պահին հեռու էր բանաստեղծից: Միայնությունը,
գիշերային կիսախավարը, ընկերների ծանր ճակատագիրը,
հեռացող մարդկանց ձայները խեղդում էին զգայուն հոգին:
Նա հանգիստ էր փնտրում միայն բանաստեղծության մեջ
Այնտեղ բանաստեղծը խոսում էր հեռավոր բարեկամի հետ,
բացում սիրտը, այնտեղ նա զրուց էր բացում հինավորց
դարերի մարդու և գալիքի պատանու հետ, թողնելով ցավի
էշեր, ավանդներ, պատգամներ:

Ժամանակակիցները պատմում են, որ Զարենցը վտիտ էր,
փոքրամարմին: Բայց տեսեք, թե հոգու ինչպիսի՞ արիու-
թյուն էր դրսնորվում նրա երգերում ու վարքի մեջ՝ հա-
կառակ իր հոգեպիս վախկոտ, բայց զլապինդ հակառա-
կորդնեցի, որոնք ընտրում էին պայքարի ամենակեղոտու
ձևը՝ զրպարտությունը: Այդ խունացած, դեղնած ու փոշոտ
թերթիկները, սրբազն պատարիկները, սևագրությունները
իրենց մեջ պահում են ժամանակի մեծագույն մարդկանցից:
Մեկի ապրումները, կյանքի կարուն ու մահվան տագնապը,
մարդկանցից, բնությունից ու հասարակությունից բաժան-
վելու ցավը և, վերջապես, ոգու բովանդակ մեծությունը,
ասպետական վեհությունը.

Այսքան մաղձ կա իմ սրտում, այնքա՞ն զառենթյուն,
ես միայն վիշտ եմ տեսեմ, և թախի, և թույն...

Այս կապարե վշտին ավելանում են ուրիշ փաստեր, անց-
քեր, տրամադրություններ. «Ընտելացած արդեն կիսարթմնի-
կյանքի...», «Օ», մորքիի տված երանության ժամերի...»—
սրանք ինքնակենսագրական տողեր են, «որոնք խոսում են
նրա վերջին օրերի ցավերի ու հիվանդության մասին»:

Լրանում էր Զարենցի կյանքի և ստեղծագործության կըրկընակի հորելյանը, կյանքի 40 տարին և ստեղծագործության 25 տարին։ Դա մեր մշակույթի ամենալուսավոր օրերից մեկն էր, որ նշանավորում էր բացառիկ ձիրքի տեր մարդու ծնունդն ու վաստակը։ 1937 թվական, մարտի 28, գիշեր։ Զարենցը հիշում է իր առաջին բանաստեղծությունը՝ «Սաղիկները հեզ թիքում են», տպագրված 1912 թվականին, 25 տարի առաջ Սակայն հորելյանը «մոռացվեց»... Տեղի ունեցավ վատագույնը. մեծարման փոխարեն ուժեղացավ հալածանքը, որը ալիք տվեց սև գրպարտությունը։ Տնային կալանքի մեջ գտնվող դառնացած բանաստեղծը սեագրություններին ավելացնում էր և մի տաք պատառիկ, որը գաղափար է տալիս նրան վիճակված սև օրերի մասին. «Եվ այսպիս ահա ես 25 տարի ստեղծագործական աշխատանքով, Հայրենի հերկը խոփով ոգեկան հերկելուց հետո, ահա տոնում եմ կրկնակի հորելյանը—մենակ ու հալածական պոետ՝ աքսորյալ սեփական հայրենիքում՝ հերկի եղերքին հայրենական երգի՝ ամայացած դաժանագույն եռանդով սեփական նախարարների և պետերի՝ հայրենի երգակիցների դեռ մնացած մի քանի խեղճերի հախուռն ցնծության ներքո...»։

Կյանքից ու դասակարգից, մարդուց ու հայրենիքից հեռանալու ցավը թափանցում են պատկերների, հատվածների, պատառիկների մեջ։

Հոկտեմբերն է գալիս,
Ցուրտ հոկտեմբերն է գուլիս,
Բանաստեղծ, հավաքիր
Գիրք, և հոչեր, և խոհեր,—
Ո՞ւր ես գնում և ինչո՞ւ,
Ո՞վ է կանչում քեզ, պոետ

Բայց այս տառապալից պատմության մեջ ամենացնցողն ու հուզիլն այն է, որ «Հուսահատական սև ժամերին» զուգընթաց նա դրսեռիկ է բացառիկ արիություն, ոգու կորով, կարողացել լինել անանձնական, խիզախորեն պաշտպան կանգնել ազնիվ մարդկանց, մեծ նահատակներին, որոնք դարձել էին ստոր խարդավանքների զոհ։ Ամեն դեպում նրա մեջ միանում էին իմաստուն բնագըր և մաքուր խիզն, քաղաքացիական և բանաստեղծական խիզախությունը։ Այդ

մասին են խոսում արգար ու խորունկ բանաստեղծությունները։ Աղասի Խանջյանի սպանության (9. VII. 1936) առթիվը նա գրել է արյունով, արցունքով, խիզախությամբ՝ գեմ ու դեմ գնալով մահվան... Մինչեւ հակառակորդներն ուրախ աղմուկով ծնծղաներ էին խփում և հայհոյում նահատակին, Զարենցը բարձրացնում էր հարազատ հոգուն, տառապյալ հոգուն, որը «չըհորդ լնկած աստեղային զահի պես սուզվել է եղերական միզում»։ Նա բացում է գաղտնիքը, շատ թափանցիկ խոսում թերիայի շարագործության մասին («Սոնետ քստմնելի», 1936, 18—19, VII. գիշեր)։

Ընկած ես գու, Հոգի՛ս, զրոսանքի համար
«Բարեկամի» կանչով անտառ տարված—
Եվ—լկվելուց հետո—դաշունահար արված
Մի մոլորված մանկան մեռած մարմնի նժանե...

Ա՛խ, ի՞նչ անտառ, Հոգի՛ս, ի՞նչ զրոսանք հիմա,—
Ո՞վ էր տեխում արդյոք քո տուզուրին բերած...
Զկա՞ր արդյոք ուրիշ հրապուրիշ երազ.—
Եվ ի՞նչ նայիվ հավատ՝ գեպի անտառն հիմա...»

Ես շիհտեմ՝ հիմա՝ ինչն է խոցում այսպիս՝
Քո վերքերի նման՝ իմ ուզեղում բացված..
Քո զարհուրիշ անկման կոշմա՞րն այս սե,

Զարշարանքից ուզեմն, — մանկություններ խոցված,—
Թե—լկանքից պուրա՞կն անգանելի, —
Ուր ո՞չ ոք չի հասնի, — ուր ո՞չ ոք չի մտնի...»

Եվ հենց մեծ ցավի պահի տպագործության տակ (11. XI 1936 թ.) Զարենցը ներբողում է իր վսեմ ու սուրբ բարեկամին՝ գուշակելով նրան հավերժական կյանք ժողովրդական հիշուղության մեջ։

Իբրև լքնաղ մարդու, լքնաղ բարեկամի՝
Քո զոֆինյան պրոֆիլը լուսագանգուր—
Զեմ մռահեա իմ այս երկրային կյանքում,
Օ՛, Աղասի, կյանքում ես ապրում եմ քանի՛:

Եվ զրուցի նման նախրական, կամ մի Առասպեկտ նման ժաղովրդի հոգում.

Կապրի աղետը քո, իբրև թագուն
Կամ գողացված, կեղծած նախրական միֆ...

Իմաստուն է միայն քառուզիներ հարթող
Վաղվահաջորդը քո այն երշանիկ, —
Որ պիտի գա, գիտե՞մ — և աճյունի հետ քո
Մեր հաղթության լեզենդը մահվան եալից հանի...

Որքան իշխեն՝ թող նոր նախրարներն այսօր
Շամիրամի մահման, գանակոծեն իր դին, —
Նա կհառնի կրկին՝ իր պարտությամբ հզրու...

Այս զարմանալի ոգեկան ուժն են հաստատում նաև նրա
Ժանր տագնապները և հայ գրականության, և ընկերների բախ-
տի համար... Բազում անգամ նա կեսպիշերային մենության
մեջ, մոռացած իր աննախանձելի վիճակը, սարսափով մտա-
ծում էր արդեն հեռացած ազնիվ մարդկանց, իսկական գրող-
ների վաղվա օրվա մասին։ Ոչ մի երկիմաստ խոսք, վեհե-
րոտության և քաղաքական միամտության ոչ մի արտահայ-
տություն։ Ասում է պարզ, որոշ, զուլալ խոսքով, քաղաքացիա-
կան արիությամբ և հանդնությամբ, մոռացած իր կյանքին
սպառնացող վտանգը։

... Եվ տալիս ենք ահա, քեզ հետ միասին. —
Մեր Հելիկան ամբողջ և իբրև հուշ՝
Ողբերգում է ահա ձեզ զիֆերամբն այս ուշ,
Բանաստեղծի ողբերգն այս անբասիր...

Այս ողբերգական տրամադրությունների մեջ նա մերժում
է հոգու կեղար, զրապարտությունն ու ամբաստանությունը,
պաշտպանում երգի Հելիկոնը, տառապող գրչակիցներին,
պաշտպանում է ժողովրդի, կուսակցության և լնինյան գա-
ղափարախոսության տեսանկյունից։ Թվում է, բանաստեղծն
ապրում է անհարմարության մի ծանր զգացում, գտնվելով
ազնիվ ընկերներից, ամբաստանված գրողներից ու մտա-
ծողներից հեռու, ազատության մեջ, թվում է, նա ամեն շանք
գործ է զնում՝ իրեն վիճակված բախտի հանգուցալուծումը
արագացնելու համար։ Փասները բազմաթիվ են, նրանց կա-
րելի է ավելացնել նաև անհատի պաշտամունքի կամ ուղ-

գակի նշանավոր անհատի դեմ գրված բանաստեղծություն-
ների։

Մեզ մնացել է մի սեազիր բանաստեղծություն, որը հայ
գրականության ամենաաղնիվ, ամենաբարոյական էջերից
մեկն է, Զարենցի անեզր ոգու, ասպետական կեցվածքի և
անաղարտ էության հաստատումը։ Այդ բանաստեղծությունը
նա գրել է տնային կալանքի մեջ, 1936 թ. սեպտեմբեր-Հոկտեմբեր
ամիսներին։ Զարենցը գտեր, որ իր գլխին ևս կախ-
ված է «արեգնացյալ կացինը», բայց նա ժողովրդի բանաս-
տեղծն էր, խիզճը, ձայնը, նա հեղափոխական վսեմ իդեալ-
ների երգիչն էր, լենինյան թեմայի մեծ երգիչը, նա չէր կա-
րող հանգիստ ու լուս տանել հայոց երգի ողբերգությունը,
ազնիվ տաղանդների գլխին կախված վտանգը։ Նա մոռանում
է իր եսը, իր ընտանիքը, կյանքը, գալիքը։

Անհուն հավատով, բացառիկ սիրով, նվիրվածությամբ է
տոգորված արվեստակից ընկերներին ծոնված բանաստեղծ-
ությունը։

Կեսպիշերային միայնության մեջ վիրավոր ու ծվատված
հոգին ճշում է մեծ անարդարության դեմ, պաշտպանելով
ստեղծագործ միտքը և խորհրդային արվեստը, ժողովրդային
գրականությունը և զրապարտությունից, բաժանում ընկեր-
ների տանջանքն ու բախտը, թեև, ըստ երևույթին, հնարա-
վորություն ուներ ինչ-որ զիշումներով փրկել իր անձը։

Բայց սև փորձության այս ճանապարհին
եվ ոչ մի վայրկյան ես չեմ բաժանվի
եվ չեմ բաժանի իմ բախտը դնեմի
Ոչ տանշանեքներից նրանց այսօրվան,
եվ ոչ պատմության նժարին դրված
Գործից նրանց վեհ և խոսքից ազնիվ։

Ավելի բարձր ու վսեմ չի կարող լինել ասպետական ոգու
ճախրը։ Սև փորձության պահին Զարենցը պաշտպանում է
ընկերների արվեստը, գործը, հիշատակը, խոսքի ազնվու-
թյունը։ Ուրեմն հարցին մոտենում է զաղափարական տե-
սանկյունից՝ հակադրվելով բարձրացած աղմուկին։

Ուշ— Գեմ հավատում, որ նախրական
Աշխարհում ամբողջ գտնիվ գեր մի.

Պռեա, որ այսօր իր բախտը գտնել
իր ժողովրդի վեմ, տիրական
երթը խափանող ուղիների մեջ...

Նա պաշտպան է կանգնում Ակսելի շքեղ և հանճարափայլ Հոգուն, վերին շնորհով օծաված բանաստեղծների նախրական ոսկե քնարին, հավատում է մարդուն, բանաստեղծին և Հայոց երգին:

Նույն օրերին անհուն ցավով նա հյուսում է իր շքնաղ երգից մեկը՝ նվիրված արդեն բանտային մենակության դատապարտված Ակսել թակունցի անձնավորությանը, նրբագեղ արվեստին և ներքին խորհուրդների ազնիվ բնույթին:

Նա տեսնում է Ակսելի ստեղծագործության նախրական ոգին և խորը հարազատությունը հայրենի հնադարյան արվեստի հետ, բացում նրա երկերի մշտահմա խորհուրդները, բարձրացնում հավերժական «Միրհավը», «Ալպիական մանուշակը», «Սև ցելերի սերմնացանը»: Նա ներբողսմ է այնքան կեղեքված «Միրանի փողը» ցրելով նացիոնալիզմի մասին հյուսված շարամիտ պատմությունը, ընդգծելով հատկապես նրա բուն էությունը՝ ինտերնացիոնալիզմը, հայ ժողովրդի եղբայրասիրական և «դարեցով տենչած խաղաղության» զգացումները: Նա ծառու է լինում սև զրպարտության դեմ՝ պաշտպան կանգնելով «աստվածային տաղանդով» և «շքեղ ոգով իր հանճարափայլ» ընկերոջը, որը ճանապարհ էր բացում ազգային նոր արվեստի համար: Եվ դարձավ շարագործության զոհ... Այս ամենի մեջ դարձյալ զարմացնում է Զարենցի ոգու անհամեմատելի բարձրությունը, խոր մարդկայնությունը և անանձնական էությունը, քանի որ՝ հալածանքի և տառապանքի օրերին, «սև փորձության» պահին բանաստեղծը եղբայրական ձեռք է մեկնում Ակսելին՝ բաժանելով նրա «եղերական տառապանքը».

Այս ամենի համար,— և քո եղերական Տառապանքի համար, որ արդ կրկին Վեհություն է խառնում քո անձարա երթին, եւ քեզ պարզում եմ ձեռք եղբայրական... Եվ ներքողում եմ քեզ ահա կրկին անեղծ Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ,— երբ դու այր էիր մի աներատ, Եվ կա ընկերն էի քո բանաստեղծի...

Մարդու սիրտն ուշազում է հապարտությունից, որ հայոց երգի տերը դժվար ժամանակներում դրսեորել է այդքան վեհություն, անմնացորդ հավատ ու անձնազո՞ւ սեր դեպի մարդու ու ժողովուրդը, մարդու սիրտ սեղմվում է ցավից՝ այդ անկրկնելի մեծության կորսույան համար:

Ավելորդ է կրկին խոսել Զարենցի ստեղծագործության նշանակության, գրական-պատմական զերի մասին, քանի որ պատառիկներն անգամ այսօր հոգեբանական և պատմական առանձին արժեք են ձեռք բերում: Ավելորդ է խոսել և այն մասին, թե ինչպիսի վիճ բացվեց նրա ողբերգական անկումից հետո: Մեր դարաշշրջանի մեծագույն հայ գրական անհատականությունը, որի անունը շատ վաղուց է անցել ազգային գրականության սահմաններից անդին, ազդեցության և ներգործության զարմանալի ուժ է պահում նաև իր մեծ դրամայով, մարդկության և ազգային ճակատագրի նկատմամբ ներքին հավատով, բարոյական կշռով:

Անցել են տասնամյակներ նրա կորսույան օրից: Իսկ նրա գործն ու հիշատակը, ցավով ու հավատով ստեղծածը արդեն ցող են զնում ուրիշ վարդերի վրա, ժամանակը ճշշտում է մարդկանց տեղն ու վաստակի նշանակությունը.

Դարը մեզ մուրհակ է տալիս,— բայց այդ փակ
մուրհակի հատուցումը
Սերունդներ են ճշառու ապագա—և շատե՞րն են
Սնանկ հռչակվում:

Զարենցը մարգարեացավ: Արդարադատ պատմությունը և ժամանակը ճշտում են տեղերը: Խամրում են շատ գույներ, նվազում շատ ձայներ:

Զարենցը անգամ վերջին ամիսներին ուներ իր անձի ու գործի հավերժական մեծության արդար ըմբռնումը, արհամարհանքով էր գրում իր չնշին հակառակուրդների, գավաղիր, ևս մարդուկների գեմ, որոնք կորչելու են առհավետ...

Չեզին, ինչպես Արարատին նետած քար՝
Դավերը սև մարդուկների այդ անկար՝
Օ՛, ըշհասած քանցքներին անզամ քո՝
Վայր են թափում համայնացած քո կամքով՝
Եվ առհավետ կորդում անզոր ու անկար,
Ինչպես անհան Արարատին նետած քար...

ԶԱՐԵՆՑԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԱԶՄԱՆՔԸ

Չարենցի անվան ու գործի շուրջ, հայտնի լուսթյունից հետո, շատ է խոսվում, ստեղծվել է հարուստ գրականություն: Սակայն, ահա, չի սպառվում նյութը, շատ անգամ էլ ամեն ինչ սկսվում է նորից, բացվում են անհայտ առեղծվածներ ու շերտեր, ընթերցողը կանգնում է անակնակաների առջև: Հանճարի հարստությունը, ամեն առնչության հետ, նոր սերնդի առջև երևում է նոր գույներով ու հմայքներով, հոգեբանական նոր արժեքներով... Այսուհանդերձ թվում է, զեռ բաց է մնում Չարենցի երկերի քննությունն՝ ստեղծագործական հոգեբանության տեսանկյունից, մնում են նրա տեսիւները և յուրօրինակ երազները: Մանավանդ՝ վերջին տարիների...

Գրականության պատմության մեջ Հազվագյուտ անհատ-ներ են այդքան տևականորեն ու ծանր զգացել իրենց մայրա-մուտը, ինչպես զա զգացել է Զարենցը: Նրա վիճակն ուրիշ էր և բացառիկ: Մի քանի տարի շարունակ՝ 1934, 1935, 1936, 1937 թվականներին, բանաստեղծն ապրում էր ծանր օրեր, հատկապես վերջին երկու տարում ավելի ու ավելի էր զգում, որ իր հետ տեղի է ունենալու մեծ աղետ: Այդ մասին են խոսում շատ երկեր, բեկորներ, թղթեր:— «Հոկտեմբերն է գալիս, ցուրտ հոկտեմբերն է գալիս», «Մթնում է, մոտ է մայրամուտը», «Իմ լերան աղոթքը», «Ի խորոց սրտի»:

Բայց հոգեբանական առումով շափազանց ուշագրավ է նաև մի ուրիշ երևույթ: Ողբերգական զգացողությունների մինու լորտում տեղի էր ունենում ոչ թե հոգեկան անկում, ինչպես դա հաճախ է լինում, այլ ծնունդ էր առնում մի անսովոր ու արտասովոր վերելք: Սկսվել էր հայտնագործումների նոր շրջանը, տեղի էր ունենում տանջված մտքի ու սրտի բացառիկ լարում: Այս վերելքը շատ երկար կհուզի գրական մարդկանց, հոգեբաններին, գալիքի մտածողներին: Եվ հենց Զարենցը յուրովի գաղափար է տալիս այդ օրերի հոգեկան խմբումների ու այրման բնույթի մասին.

Թոշում ես, մի՛տք իմ, առաջ,
Դու հիմա շատ սրբնիաց,
Եմ ես է՛ պրոյու իմ թաց

Զեմ կարող (Հոյմերում այս),
Թո թափին հասնել հիմա,
Ոչ միայն հանգով անազարտ,
Այլ անդամ բառով արձակ,
Նշելու միտք ու իմաստ,
Պատկերներ իրար հրոպ, —
Դու հիմա շատ ես կարող
Իմ գեղ հին գրի համար...

Ի՞նչն է ուշագրավը: Այս տողերը գրվել են 1937 թ. սիմ լեռան աղոթքի» էջերից մեկի հակառակ երեսին, «Երկու տրիումատի», այսինքն՝ «Մայրամուտը» շարքի կողքին: Իսկ այդ «Մայրամուտը» ծանր տառապանքից ծնված մի դրամատիկ պատկեր է, որը բացում է բանաստեղծի մոռայլ մտումների աշխարհը... օրհասից առաջ.

Սառ մորմոքում է մայրամուռ,
Սահման մոխիր է մովից մաղում,—
Մեռնում է մութը միջազգում,—
Սառ մորմոքում է մայրամուռը—
Մտորումներս մահ են, մութ են,
Մարիս մտքեր, են միայն մխում,—
Եվ մորմոքում է մայրամուռը,
Սահման մրուր է մովից մաղում:

Այս «մութ» ու «մահ» մտորումների բռվում ծնվել են համանման տեսիլներ։ Նրա հոգեկան աշխարհը ուրույն գունավորում է ստանում անհեթեթ գալիքի առջև։ Նա տեսնում է փանը ու միստիկ երազներ...

Զարմանալի շփոթ ու անհերթ ու մութ
ծս մի երազ տեսա այս երեկո հանկարծ:—
... Արդեն վախոց է, որ ևս մատնված եմ այ
Զառանցածիք նման անիրական կյանքին:—
Եվ իսպի նման ժաւապատիկ նստած
Վարժենոսմ Էմ ողիս հայցումի անկիրը...

Տեսիլներն ու երազները նորություն չէին երա կյանքում, գալիս էին հենց սկզբից։ Մահվան թեման էլ հաճախ էր խառ- պալիս այդ ամենին։ Բայց տարբեր էին նախորդ տարիների նըլվել այդ ամենին։ Բայց տարբեր էին նախորդ տարիների երազներն ու տեսիլները, բազմազան՝ բնույթով ու երանգ- երազներն անսովոր պայծառ, օծված գերող թախիծով,

բռնված կյանքի կարուներով։ Դեռ 18 տարին Ալբացած, նա գրել է մի պայծառ երգ՝ բնական ու հավերժական մահվան, հուշ ու հիշատակի մասին։

Գիտեմ, որ մի օր կմեծնեմ ես էլ
Ու կվերջանա իմ կյանքի ուզին:
Մոռացած բոլոր երգեր լուսե՛
Կանանեն ինձ էլ արգավանդ հողին:
Արկը նորից անհոգ կիսնա՝
Փաելով շորս զին լուսավար գաճաճը:
Եզ մայրս անզամ էլ լի հավատա,
Որ եղել եմ ես, ապրել ու անցել:
Եզ գերեզմանս երբ փակի ինձ հետ—
Մեղք կմոռանան, սիրո խոսք կասեն,—
Եզ անցած կյանքս կդառնա լեզնե՞
Օսերի նման անշարժ ու վսեմ...

Պայծառ թախիծով են բռնված նաև հւտո եկած երկերը «Գանգրահեր տղան», «Դեպի լլառը Մասիս», Թամանյանին Նվիրված «Մահվան տեսիլը», «Տաղ ձոնված մեռյալներին» և մեծ ու փոքր ուրիշ հյուսվածքներ։ Նրանց մեջ անհանդիսաբանաստեղծը անվերջ ոլորում է մահվան, հուշի և հիշատակի, անձնականի և անանձնականի թեման։ Եվ նրբորեն ծավալվում է գալիք ներդաշն աշխարհի պատկերն ու մեղեդին։

Նման մի տեսիլ, պայծառ մի երազ է ծաղկում նոր
«Մահվան տեսիլի» մեջ Վերջին պահին արտասովոր գե-
ղեցիկ է երևում թամանյանի երազած երևանյան գալիքը:
Այսպես էր ամեն դեպքում, երբ նա խորհում էր բնական
բաժանման, բնական մահի ու նրա հետ կապված տեսիլների
մասին:

Սակայն Հայտնի է, որ մահվան թեման Զարենցի մոտ ունի լայն ընդգրկում և մի շարք լարեր, ուր առանձին տեղ են գրավել անհատականն ու հայրենականը, անձնականն ու անանձնականը, բնականն ու անբնականը, մահը զիտվել է բազում կողմերից: Այդ մասին վերն արդեն խոսվել է: Բայց այս անգամ խոսքը վերաբերում է նույն թեմայի վերջին արծարծումներին, որոնք բնականաբար, մեծ առել են գրավում, ունեն հոգեբանական բացառիկ արժեք և ինչ-որ հատկանիշով՝ նաև ազգային ուրույն շեշտ: Մեզ այս անգամ հուզում է մի պոեմ կամ շափածու նովիկ՝ «Անվերնագիրը», իսկ մյուսնե-

ըլ՝ «Կոմիտասի հիշատակին», «Իմ լերան աղոթքը»; «Հերոսի հարսանիքը», շատ բանաստեղծություններ դեռ սպասում են ուղադիր վերուժության:

Այս «սևագիր» պեմ-տեսիլը իր բնույթի մեջ շատ ինքնատիպ է: Դա մեկն է այն երկերից, որոնք ծնվել են զերշին երկու տարվա ծանր երազների մեջ; Թեև արտաքնապես թվում են ինչ-որ հեռավոր ու անհարիր բան, բայց ներփանապես բացում են Զարենցի հոգեկան տվյալտանքները:

«Անվերնագիրը», որից պակասում են որոշ տողեր, բառեր, ամբողջության մեջ մի տիտուր տեսիլ է՝ մի տարօրինակ թաղման պատկեր.

... Ես գեռ շէի տեսել կյանքում իմ
Այսքան տրտմաթախիծ թաղում...

իր արձակին բնորոշ սուր գիտողականությամբ, անակընկալներով և հուզական լիցքերով Զարենցը ստեղծում է մի տպավորիչ, գունեղ, շարժում պատկեր՝ թաղման թափորի նկարագրություն։ Առօնից գնում է Հաղթամարմին մշակը՝ աներեւույթ գլխին երկարավուն, բարակ մի կափարիչ, «մի փայտաշեն դժվար հանելուկ»։ Նկարագրությանը նրբորեն խառնուրդում են նաև մահվան պահին բնորոշ մանրամասները։ Թվում է՝ նա տանում է հեղուկ լցված մի աման և գնում է մարմնի յուրաքանչյուր ճիգով, գնում է անկշխո քայլքով, լարված ու զգաստությամբ ու անբացատրելի, միւտիկ պահեր, որոնք ազդում են մտքի, շարժման, քայլքի, մարմնի վրա։ Կափարիչը բռնած մարդու հետեւց քայլում է մանկահասակ մի քուռակ կամ մի շոտլանդական ծիծառին առաջանակ բան երեանյան անդուռն փողոցում։ Զին լծված է դարձյալ փոքրիկ՝ թիթեղաձայն մի սայլակի, որի վրա կողեկող ընկնելով՝ ցնցվում է դարձյալ փոքրիկ մի դագաղություն։ Այդ է նա, պատանին, աղջիկ, թե՛ տարիքով ու մանրակազմ մի կին։ Դժվար է ասել, բայց մի բան հասկանալի է. այդ խելօն ծաղիկների ու կանաչների տակ, այդ փոքրիկ դագաղում, թիթեղաձայն սայլակի վրա ծածկված է՝

Ինչ-որ մեռած մի կյանք, մի գոյություն
Որ տիտուր է, փոքրիկ, մանրամարմիկ. —

Ամեն տողից տիրություն ու թախիծ է ծորում, խեղճ ու տիրուր թաղման, արևելյան դանդաղ այդ երթի ամեն մանրամասնից Սայլակից հետո մի քանի քայլ հեռու գնում է խառնիխուռն արևելյան նվազախումբը, ուր ամեն մի գործիք փշում է մի ուղղությամբ, փակուղի է փնտրում, ունի իր տիրությունը, այդ դհոլը, այդ նայը, այդ տիրուր գուռնան Անհարի են նրանք, այդ գործիքները, բայց հնչում են նրան տիրությամբ:

Թե հենց այդպես է ժահը-անհերեթ,
Անմիտ մի դիսունանս,— արևելյան
Այդ նայերի նման տիրուր և ինքնուրույն.
Այդ գոյնի նման՝ այդ նայերին
Եվ երազին նրանց—անհարիր...

Զարմանք են պատճառում մահվան թաքուն, անհեթեթ բնույթի, դիսունանսի դիտումը, այդ անծիր տիրության ծավալում՝ ները, բազմազան մանրամասների բնկալումը: Միայն հանձարեղ մարդը կարող է այդպես անմիջական, ամբողջական և այդպիս մանրամասն ընդունել կենսական պատկերը, միայն նա կարող է որսալ ամենասովորական և խեղճ թվացող շարժման հոգերանական երանգները, խեղճությունը և տիրությունը ունեն նաև ինչ-որ անբացարելի գեղեցկություն: Գուցե նրանից է, որ այդ խառնիխուռն երթը, անհարիր, աններդաշն, բայց նույնպես տիրուր նվազը, տարօրինակ այդ թաղումը հենց չափազանց բնական են.

Ամենախոր, սակայն, գեղեցկությունը այդ
Տարօրինակ թաղման թափերի—
Այն մի քանի մարդիկ և մի երկու
Ծնցոտիներ հազած կանայք էին,
Որ ընթառում էին արևելյան
Նվազախումբ կազմող մարդկանց
Խառնիխուռն իմբի հտեսից—
Եվ զժվար էր չոկել կամ հասկանալ,
Թե արդյոք ո՞ր կնոշ, ո՞ր մարդու
Հարազատ է տարվում հանգստարան...
Գորշ հեամազ շորեր հագած...

... Դեմքով արհեստավորներ
Ընդամենը մի յոթ կամ ութ հոգի՝
Իրենց կանանց խմբի հետ միասին...

Տարօրինակ թաղում...

Այս ամենը ազգեցիկ է ինքնատիպ բնույթով, խեղճության, արևելյան որթմի ու կոլորիտի արտասովոր զգացողությամբ... Սակայն այս բոլոր շատ զարմանալի արժանավորությունների հետ միասին, պոեմի մեջ՝ հուշերի խորհից արքանում և քանձրանում է ինչ-որ ժամանակակից ապրում, անհատական մի զգացում՝ այնքան բնորոշ իր կյանքի վերջին տարուն, ամիսներին: Խեղճ թաղումը բերում է նաև թովություն, լոին անդորր, ինչ-որ գերող բան և անել դառնություն: Գուցե զա գալիս է արհեստավոր մարդկանց փոքրագանակ խմբի, յոթ-ութ մարդու ողորմելի, անօգ, ինքնամփոփ «մենակուրյունից».

Մենակուրյունը չե՞ր, այդ չեր արցյա՞—
Ու ինձ բռվե՞ց այնքան և ստիպեց,
Ու ես զեմ տողեմ այդ դառնարախիծ...

Մանավանդ որ այս երթը՝ անեղբական տիրությամբ, մի դիսունանս է մեծ քաղաքների և փողոցի բազմահազար մարդկանց շարժման ու շքեղ թաղումների մեջ:

Ողորմելի մարդկանց այս գորշագույն
Այդ տիրագույն մարդկանց ողորմելի այդ երթը—
Անհարիր էր այնքան և փողոցին,
Եվ քաղաքին ամրող—կարծես շքեղ
Պողոտայով անցնում է մի մուրացիկ,
Որ հրաշքով՝ կյանքում միակ անկամ
Իրավունք է հանկարծ ստացել
Անցնել երթով շքեղ և ընթանալ այս մեծ...

Անշուշտ ամեն ինչից անկախ այս տեղ-տեղ կիսատ, անավարտ տներ ու տողեր ունեցող, բացթողումներով գըրված պոեմն ինքն ունի մեծ արժեք, քանի որ ցուցը է տալիս գրողի ընկալումները՝ կյանքի մանր ու մեծ լիցքերի, աիթմերի ու երկույթների ոլորտում, նրա անեզը տեսողությունն ու լսողությունը, այդ ամենի հոգերանական արձագանքները,

որոնք իրենց խորությամբ և անսովոր բնույթով՝ նույնիսկ միստիկ դող են առաջացնում մարդու մեջ նման պատկերները հանճարի թաքուն ուժի նորանոր հաստատումներն են և ի ինչքան սխալ է այն կարծիքը, թե Ե. Չարենցը օրհասից առաջ իր հիմնական խոսքն արդին ասել էր: Խո՞ր մոլորություն: Այն, ինչ ասել էր Չարենցը, դա անշուշտ հիմնական էր Հայ գրականության համար, սակայն ավելի, շատ ավելի մեծ հարստություն ու գաղտնիքներ Չարենցը տարել է իր հետ: Նրա ներշնչարանն անսպառ էր:

Այսուհանդերձ, Չարենցը վերջին շրջանում գրում էր ամենաէկանի մասին. նա ժամանակ ունպատակ շուներ թղթին հանձնելու այսպիս կոչված հանգիստ նկարագրությունները նա գրում էր նոր օրերի տագնապների ճնշման տակ, խոսում էր մահվան ու ճակատագրի թելադրանքով: Այս թաղման թափորի պատկերն էլ հանկարծ նրա մտքում փայլատակել, երեվագել է ողջ տիրությամբ ու զարմանալի պարզ, երբ ապրել է մահի ու մութի տագնապների մեջ: Նա գիտեր իր ծանր վախճանը, նա զգում էր դա կյանքի ութմերից, մթնոլորտից, շըրշապատից, նա ապրում էր ծանր մենության մեջ, որի զեմ պայքարում էր տիտանական աշխատանքով: Սարսափելի մենության մեջ հանկարծ արթնացել է ներքին տեսողությունը և ծնվել է Հոգեբանական զուգահեռը: Մենակ ու խեղճ այդ թաղումը՝ բազմամարդ քաղաքի փողոցով անցնող տիրուք այդ երթն ունի ինչ-որ դյութական բան: Ավելին. Չարենցն այս թաղումը համարում է նախանձելի:

Կյանքի վերջին շրջանում, հալածանքների ու ողբերգական ապրումների մեջ ուրույն իմաստ ու գույն են ստանում սպասումներն ու երազանքները, արտասովոր, տարօրինակի, մի ուրիշ ժամանակի համար թերևս շատ փոքրիկ, գուցեկ անհասկանալի:

Նախանձելի թաղում... Այդպիս, օ, սիրո իմ,
ես կուգիք, որ քեզ մի իրեկուն տանեն
Այս հարազատ, ժանոթ այս փողոցով,
Այս տների միջով, ուր կատուններն անզամ
Քեզ ճանաչո՞ւմ են... օ՛, երշանկություն

Արժանանալ ամբո՞ղջ, ամբողջ կյանքում քո ողջ
Աշխարհային երթում անիմաց...

Կիսատ է մնացել այս նախադասությունը, բայց միտքը հասկանալի է. բաց թողնված տողից հետո գրված է դեպի հանգստարան, դրանից հետո՝ դարձյալ երկու տող լի գրվել, բայց այս վիճակում էլ տանջող խորհ և ծանր երազանքը արտահայտված են ցայտուն: Նա երազում է մի բնական թաղում, երազում է հարազատ, ծանոթ փողոցով, ուր կատուններն անգամ իրեն ճանաշում են, գնալ դեպի հանգստարան: Թեկուզ խեղճ, անհարիր երթով, թեկուզ արևելյան անդուռ նվագախմբով, թեկուզ մի քանի հոգուց բաղկացած թափորով: Մանր, արտասովոր մի ցանկություն, որը, սակայն, հասկանալի էր: Նա գիտեր իր օրհասը, զգում էր իր անբնական վախճանը և թաքուն, գողումի թաղումը: Եվ ահա գրեթե բոլոր ժամանակների համար ծանր, արտասովոր, ցնցող տողերը, ահա ողբերգական երազանքը, դրված կիսատ, անավարտ, կտրտված տողերի մեջ...

Տո՞ւ ինձ, երկինք..
Այդպիսի մահ.....
Եվ այդպիսի թաղում.....

Տողերի մեջ ծավալվում է անեզր ցավը, արտահայտվում են ժամանակի հոգեբանությունը և անցած սերնդի ողբերգությունը: Այս ամենը անհատական ցավ էր, որի մեջ, սակայն, բեկվել էին ժամանակի ծանր երկությունները: Բայց լոռուանքների մի ուրիշ բան. այս պոեմի և վերջին բանաստեղծությունների մեջ արտահայտված ցավն ու երազանքը՝ ժամանակի արձագանքը և անհատի հոգեկան դրաման լինելով հանդերձ, ունեին նաև մի ուրիշ հատկանիշ, ես կասեի, ինչ-որ զուտ հայկական հատկանիշ, բնորոշ դարասկզբի քաղաքական խմբումների հետևանքով ձևավորված հոգեբանական թաքուն շերտերին: Ներհուն լինելու դեպքում կարելի է բանաստեղծատերին: Կան մի շարք երկերի մեջ տեսնել բնականի այդ տենչը, կան մի շարք երկերի մեջ տեսնել բնականի առօրյայի արտասովոր իրերի, առարկաների, սովորականի, առօրյայի արտասովոր

տարփանքը, բնական ժամկանու թաղումի այդ ցաված երաւագանքը: Դա երևան է եկել հողի, աշխատանքի, ծառի ու ծաղկի, առօրյայի երգերում, քանի որ մեր խաթարված երթի մեջ կործանվում էին բնականի բոլոր ավանդսկան ձևերը, ամեն ինչ ենթարկվում էր անբնականի հարգածներին, ամեն ինչ աղավաղվում: Հենց բնականի, սովորականի, անամպ գիշերվա և անուրջների, ապրելու, զրերի շշունչի, աստղերի ու լույսերի, քարի, վտակի, բույսերի, իրերի երշանկության մասին է գրել իր վերջին երգերից մեկը Ռուբեն Սեակը.

Գիշերն եկավ անամպ, անհուն,
Բյուր բյուրեղի ի՞նչ նուրբ անուն
Տալ անուրջի ալս սուրբ պահուն,
— Ա՞խ, ապրելո՞ւ երշանկություն...
Կանէանա նավին հեռակա,
Լիճն երազ մը է, կա ու շիա,
Ջուրին շշունչն է լոկ վկա,
— Եշչելո՞ւ երշանկություն
Վերն հազար աստղ, վարն հազար լույս,
Կիսաստղերին մեջ հոգինույզ
Կը խոսակցին քար, վտակ, բույս,
— Ա՞խ, իրեւու երշանկություն...

Կարծես փոքր բաներ են այս երևույթները ու իրերը, աննշան բաներ, որոնցով շրջապատված են մարդիկ: Բայց հենց այդ աննշաններից ու սովորականներից են բաղկացած կյանքն ու բնությունը, որոնք, ավազ, իմաստ ու կարևորություն են ստանում այն դեպքում, երբ պակասում են մարդուն և ժողովրդին: Խսկ մա՞ր... Ի՞նչ է ասում շարունակությունը: Բանաստեղծության ունի պայծառ վերջավորություն, մա՞ր կարծես զանում է ցնծություն, քանի որ մարդը ծովվում է բնությանը:

Ու կը ձայնե մատուուն հստակ,
— Սա ծերունի ծառերուն տակ,
Այս քաղցրության մեջ բովանդակ
Թարանալու երշանկություն...

Երշանկության այս երազանքը, սովորականի և բնականի տարփանքն առանձին իմաստ են ստանում հենց այն բանի շնորհիք, որ շրջապատված են անբնական կյանքի ու շարշ-

րանքի մթնոլորտով: Դա ավելի ուժեղ է արտահայտված մի ուրիշ բանաստեղծի՝ Սիամանթոյի մի շարք բանաստեղծությունների, մասնավորապես «Մահերգի» մեջ: Նա մահից դեռ շատ առաջ ծանր էր ապրում իր վախճանը, մի ներքին միստիկ ուժով զգում էր, որ ինքը աշխարհից հեռանալու է անդագաղ, իր հետ տանելու է դագաղի մը հիշատակ, «որուն վրան արծաթի մուրճեր շնչեցին»: Անգերեզման, աքսորված հոգիների ցավին խառնված՝ իր հոգին պիտի շրջի գերեզմանից գերեզման՝ գիշակեր թոշունների հետ:

Ու մահագույծ զանգակներու
Ոսկեհնչուն հսկա քայլերը ցնորարեր՝
Ոգեկողող ու դիվական,
Ու քարայրին պարապը՝ քայլող ուրվական՝
Մարմնաց վրա ահազնապես փոթորկեցան,
Թերես դագաղի մը հիշատակեն՝
Որուն վրա արծաթ մուրճերը լը հնչեցին,
Վերշապես զամելու համար
Վրդովված ամենզությունը մոռացումին:
Ու ալ շեմ գիտեր ո՞ւր տարին,
Անբիծ մարմինս անիրավորեն լըված,
Հողին բոլոր ապարդյուն փառքերեն վիրավոր,
Ու իմ արյունի բոլոր ճամփաներեն դժգուհած:
Հետո հոգիս թռչուններուն հետ գիշակը,
Խելահեղորնն գերեզմանն զերեզման,
Ամեն գիշեր,
Մութեն արյունած իրենց ծավով հապրա
Խենթոթյան մահերգներն աքսորեցին
Հորիզոնն հորիզոն,
Զեր արեններն ու հողեն հուսահատ,
Հողիներուն կյանքին...

Այս տրամադրություններն ու խոհերն առաջին հայացքից կարող են թվական միստիկայի և սիմվոլիզմի ազդեցության ծնունդ: Բայց ոչ: Մի փոքր հետո քաղաքական կյանքը, Հայաստանի և նրա որդիների ճակատագիրը հաստատեցին ամեն անբնականը՝ որպես իրողություն, որպես անբնական շարշարանքի և մահվան արտասովոր երևույթ:

Զարենցը դեռ չահել՝ զգացել էր այս ամենը: «Դանթեական առասպելում» հանճարեղորն պարզ պատկերել էր բնական առասպելում: Հակադրությունը՝ հայկանի և անբնականի այս աղետավոր հակադրությունը՝ հայկանի անբնականի այս աղետավոր հակադրությունը՝ հայ-

կական գյուղերում ու քաղաքներում, գրել էր «Վահագնը» (1916), «Մահվան տեսիլը» (1920), մյուս «Մահվան տեսիլը» պոեմը (1933): Հազար նյարդերով զգացել էր հայ հայրենիքի, հայ երգի և բանաստեղծի անքնական վախճանը: Եվ ահա ինքն էլ ապրում էր նույն տագնապը, սպասում էր վախճանին շուրջ երկու տարի... Այդ ժանր տագնապը զորանում է Աղա-սի Խանջյանի եղերական մահից, Ակսելի և մյուս ընկերների բանտարկություններից հետո, երբ տնային կալանքի տակ ապրում էր Հոգեկան ցավերի երկար ժամեր...»

«Անվերնագիրը» սոսկ բանաստեղծություն չէ, դա պատմություն է, հոգի, արյուն։ Դա անքնական կորուստների ու ողբերգական ցնցումների մի խորունակ է չէ, բանաստեղծի ցաված երազանքը՝ անհունորեն թանկ այսօրվա և գալիքի համար։

Բայց տեղի է ունենում ամենածանրը և ցավագինը, գալիս է մեծագույն աղետը, հայ գրականության ամենասև օրերից մեկը: Բանաստեղծին չի վիճակվում նույնիսկ այս ցավագին երազանքը՝ անշուր, բնական թաղման մասին: Նա մնամ է բանտում մոտ երեք ու կես ամիս: Տառապած մարմինը չի դիմանում հրեշավոր «Հարցաքննություններին» և հոգեկան-ֆիզիկական ծանր ճնշաժամին: 1937 թ. նոյեմբերի 27-ին տառապանքների մեջ ավարտվում է հանճարի խոռովահույզ կյանքը: Զարենցն աշխարհում ապրում է սուսկ 40 գարուն: 1937 թ. նոյեմբերի 28-ի լուս 29-ի գիշերը խավարագեմ մարդիկ գողունի ձիափուրգունով նրա դին տանում: Են անհայտ ուղղությամբ: Խննում է «ըրություն մի անստվեր, անդուռ, և անդող»: Հանճարի մարմնական մահը ցնցում է ժողովրդին: Զարենցը գուշակել էր իր մոտալուս մահվան խորարձագանքը ժողովրդի մեջ.

ԽԵ ԺԱՀԸՆ օրը Կիշնի լուսիցուն,
Սանր կնստի քաղաքի վրա,
ԽՆՁպես ամպ մթին կամ հին տրտություն,
Կամ լուր ազտսի՞ թերթեռում գրած:
Սանր կնոր պետք այրի կամ զգախտա,

Քաբեկամուռու նման տիրատեսաթ,
Լուր կը գողի փողոցները նախ,
Ապա կմտնի դուռ-զարպասից ներս...
... Այդ բուրու մարդիկ իմ մահվան բոթից,
Արպես ընդհանուր ազետից սարսած՝
Զարմացած կզգան ինձ այնքա՞ն մոտիկ
Եվ հանկարծ այնքա՞ն թանկ ու հարազատ..

Զարենցի հիշատակը և պայքարի ու տառապանքի մեջ բյուրեղացած երգերը անխզելիորեն միացել են մարդկության մեջ երթին, ընթանում են դեպի գալիք աշխարհի լուսակերը Եվկլիդ է լինելու կյանքի ու երգի այդ երթը...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմէց

Խրիտասարդ Զարենցը

Բանաստեղծի մանկությունը	5
Դանիել Շահնշահին	24
Աստղային եղբայրության ուղիներում	41
Աղջային բանաստեղծության ակունքների մոտ	62

Վահագնի նորագույն առասպելը

Առաջին գլուխգործոցը («Թանթեական առասպել»)	106
Առասպել և հրականություն («Վահագն-Աթիլա»)	123
Որոնումների և երազների դրաման («Հարդագողի ճամփորդները»)	130

Հեղափոխությունը և ազգային երգը

Հեղափոխական կորվների էպոսը («Սոմա», «Ամբոխները խեղագարված»)	152
Գալիքի ծայնով («Բաղիոպեմներ»)	166
Նոր բարդություններ, նոր առավոտ	175

Աշխարհի, ժամանակի և Հայաստանը

(«Չարենց-Նամե», «Ամենապօմ»)	182
-----------------------------	-----

Եղբայրներ և խաչաձևումներ

Վերածնության մեղեղիներ	199
Մեծ կյանքի երգը («Տաղարան», «Ութեակներ արեին»)	212
Բանաստեղծի կերպարը և երգի «Հոգեղին կարթը»	214
Հայաստանի հավերժության երգը («Ես իմ անուշ Հայաստանի...»)	219

«Երկիր նախրի» վեպը

Երկու նախրի, երկու հայացք	230
Մտահղացումը, բովանդակությունը և ոճը	243
Ապօտիթիհամոյականությունը որպիս քաղաքական և հոգերանականը	260
Պատմությունը՝ հանճարեղ բժիշկ	266

Զախ ֆուտուրիզմի հայկական արձագանքը և Զարենցը

«Երեքի գեկլարացիան», դասական արվեստի և նոր ճանապարհի խնդիրը	273
Դրական փորձի ձախողումը	284
«Ասպետականի» բացառիկ բնույթը	291
Վերջին մոլորությունը («Մտանդարտիկ կուրսը»)	297

Մեծ կյանքի էպիկական հյուսվածքը

Ռեալիստական ոճի հայտնագործման ուղին	303
«Եմբարական» նախարարական դարաշրջանի լույսի տակ	315

Էպիկական լուսաբաց

Անցյալի դատաստանը և Հոգեկան մեծ դարձ	344
Հայաստանի կերպարը նոր հեռապատճերների վրա	352
Էպիկական ոճի գեղագիտությունը	365

Վերջին մատյանը. «Գիրք նախապարհի»

«Գիրք նախապարհի» ձննդյան հանգամաներները	378
Պումաների հակառակությունները և բուն արժանիքները	386
Ցաղերի և խորհուրդների հայկական ակունքները	394
Հավատի և խզմի ծայնը գալիք սերունդներին	401
Օթի խորհուրդը	405

Մահվան տեսիլները	412
Բանաստեղծի դրաման և բարոյական կերպարը	444
Զարենցի վերջին երազանքը	462

ՀՐԱՏՎԱԿԻ ԹԱՄՐԱՎՅԱՆ

ԵՊԻԾԵ ԶԱՐԵՒՑ

Ուսումնասիրություն

ГРАНТ СМБАТОВИЧ ТАМРАЗЯН

ЕГИШЕ ЧАРЕНЦ

Исследование

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван, 1987

Խմբագիր՝ Ա. Ա. Ղակասյան

Նկարիչներ՝ Հ. Ա. Մամյան, Լ. Հ. Մամյան

Գեղ. խմբագիր՝ Գ. Բ. Խամակյան

Տեխ. խմբագիր՝ Ա. Գ. Սաֆյան

Վերստուգություններ՝ Ա. Ա. Աւայրյան, Ե. Զ. Գալոյան

ИБ № 73

Հանձնված է շարվածքի 10. 04. 87 թ.: Ստորագրված է տպագրության
18. 06. 87 թ.: Վֆ 00672: Ֆորմատ 84×108¹/32: Թուղթ՝ տպագր. № 1:
Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 25,3 պայմ. տպ.
մամ., 21,74 հրատ. մամ.: Գալոյան՝ 1089, Գինը՝ 90 կուգ.: Տպաց. 12000:

«Արևիկ» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91,
Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտորի գործերի
պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան-10, Ալավերդյան փող. № 65:

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии
и книжной торговли Арм. ССР, Ереван-10, ул. Алавердяна, 65,